

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄՅԱՆ

ԴԵՂՔԵՐԸ

ԼԵՈՆՄԱՅԻՆ

ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

1917-1920



ԳԻՐԺԸ ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ»  
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՏՊԱԳՐՎՈՒՄ  
Է «ԱՆՏԱՐԵՍ» ՄԵԴԻԱ ՀՈՒՂԻՆԳԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ





«MATENADARAN»  
MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

HARUTIUN TUMYAN

# Events in Nagorno-Karabakh

in 1917-1920

HISTORICAL COMMENTS



YEREVAN  
«ANTARES»  
2008

9(47.925)  
P-95



«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»  
ՄԱՇՏՈՏԻ ԱՆՈՒԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄՅԱՆ

# ԴԵՊՔԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

1917-1920թթ.

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ



ԵՐԵՎԱՆ  
«ԱՆՏԱՐԵՍ»  
2008

ՆՏԴ 325  
ԳՄԴ 66.3 (2Ն)  
Թ 959

Հրապարակության պատրաստեց և  
խմբագրեց՝ Ա. Բ. Սարգսյան

Թումյան Հարություն  
Թ 959 Դեպքերը Լեռնային Ղարաբաղում: Պատմական ակնարկ - Եր.:  
«Անտարես», 2008. – 336 էջ:

Գիրքը ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի պատմության 1917-1920 թթ. ճակատագրական և չուսումնասիրված շրջանի իրադարձությունները: Իր պարունակած եզակի և արժանահավատ տեղեկություններով այն կարևոր սկզբնաղբյուր է պատմաբանների, իսկ շարադրանքի գեղեցկությամբ և դինամիզմով՝ հեղինակի լայն ընթերցողի համար:

ԳՄԴ 66.3 (2Ն)

ISBN 978-9939-51-096-5

© «Մարենադարան», 2008 թ.  
© ՄԲԲՀ, 2008 թ.  
© «Անտարես», 2008 թ.

Ը իբրոս եմ—

իմ բացարձակ կաշիքի ճաշիկի  
Բաժնի (Կաշիքի) և Գրքի,  
Հայ ժողովրդի ապագայի ճաշիկի  
թանկ արժեքի (Գրքի) (Բաժնի)  
և Հոգիի:  
Կրթի՝ Կրթի,  
Հայր՝ Կրթի,  
Հայր՝ Կրթի (Կրթի) և Կրթի:  
Կրթի (Կրթի) և Կրթի:  
Կրթի

Ընթերցողի համար 1918 թ. Բաժնի և Կրթի ճաշիկի, Կրթի և Կրթի:

## ԽՄԲԱԳՐԻ ԱՌԱՋԱԲԱՆ

### Հեղինակը

Հրապարակվող աշխատության հեղինակ Հարություն Գրիգորի Թումյանի մասին տեղեկությունները փառում ենք նրա թողած «Համառոտ ինֆնակենսագրությունից», որ նա թողել է սույն աշխատությանը կից: Նա ծնվել է 1889թ. Լեռնային Ղարաբաղի կենտրոն Շուշի փողոցում, Գրիգոր եւ Բահար Թումյանների բազմանդամ ընտանիքում, ունեցել է երեւէ եղբայր եւ երկու քույր: Նրա ավագ եղբայր Քրիստափորը ապրել է Թիֆլիսում, աշխատակցել «Մշակ» թերթին: Մյուս եղբայրը՝ հայտնի հայդուկ Թումանը 1902թ. 27 հեծյալ հայդուկների հետ լազերի հագուստով ծալված անցել է Սասուն՝ մասնակցելու սասունցիների ազատագրական պայքարին: Նույնը նա փորձում է անել նաեւ 1904 թվականին, այս անգամ 60 հոգիանոց ջոկատով, սակայն զոհվում է ռուս-թուրքական սահմանն անցնելիս: Հարությունի կրտսեր եղբայր Հովսէփը զոհվել է 1918թ. Բաֆվում օսմանյան թուրքերի դեմ մղված կռիվների ժամանակ: Հարություն Թումյանն ունեցել է մի որդի՝ Թորգոմը, որը զոհվել է պատերազմում, 1943 թվականին:

Թումյանը սովորել է Շուշիի թեմական դպրոցում, ապա փոխադրվել Թիֆլիս եւ ավարտել Ներսիսյան դպրոցը: Բարձրագույն կրթությունն ստացել է Ս. Պետերբուրգում ավարտելով «Բարձրագույն առեւտրական գիտելիքների ինստիտուտը»: Դրանից հետո մի ֆանի տարի սովորել է նաեւ Կիեւի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետում: Լեռնային Ղարաբաղ է վերադարձել 1917 թվականին եւ անմիջապէս նետվել ֆաղափական գործունեության հորձանուտը, ինչին եւ նվիրված է նրա սույն աշխատությունը:



Հայաստանի խոհրդայնացումից անմիջապես հետո Հարություն Թումյանը տեղափոխվել է Երևան եւ զբաղեցրել «Կոմունիստ» հայերեն թերթի պատասխանատու ֆարտուղարի պաշտոնը, ապա աշխատակցել նույնանուն ռուսերեն թերթին։ Ալեքսանդր Մյասնիկյանի օրոք աշխատել է ժողկոմխորհի օրենսդրական հանձնաժողովում։ 1922 թվականին գործուղվել է Գյումրի՝ աշխատակցելու «Բանվոր» թերթին, ապա նորից հետ է կանչվել Երևան։ Այս տարիներին նա զբաղվել է նաեւ թարգմանչական գործունեությամբ։ Այնուհետեւ տարբեր պաշտոններ է վարել Լուսավորության ժողկոմատում։ 1933 թվականից հետո Թումյանն աշխատանքի է անցել «Հուշարձանների պահպանության կոմիտեում»՝ գիտնական-ֆարտուղարի պաշտոնով։ Նա սիրով է ներկայացնում այս բնագավառում իր կատարած բեղմնավոր աշխատանքը, հպարտությամբ հիշում այդ աշխատանքին նշանավոր գիտնականների տված գնահատականը։ Այդ մասին նա հաղորդում է հետևյալը.

«Այդ շրջանում ձեռնարկվեց հրատարակելու Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանների վերաբերյալ ուղեցույցներ՝ ըստ շրջանների... Այդ կարգի հրատարակությունների առաջին գործը դարձավ իմ կազմած ուղեցույցը՝ «Դիլիջանի շրջանի պատմական հուշարձանները» խորագրով։ Այն հրատարակվել է 1937 թվականին՝ շրջանի հնագիտական ֆարտեզով եւ հուշարձանների նկարների ալբոմով։ Դրանից հետո լույս են տեսել կոմիտեի մի շարք գիտնականների՝ Սեդրակ Բարխուդարյանի, Կարապետ Ղաֆադարյանի եւ այլոց հանրամատչելի աշխատանքները՝ նվիրված Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանների պահպանության մասսայական պրոպագանդին։

Իմ նախաձեռնությամբ, կազմած նախագծով եւ անմիջական հսկողությամբ կառուցվել է Զվարթնոցի թանգարանի շենքը, որով իրագործվեց Նիկողայոս Մառի եւ Թորոս Թորամանյանի վաղեմի իղծը։ Թանգարանների ցուցանմուշների (էֆսպոնատների) գիտական դասավորությունը կատարել է Կարո Ղաֆադարյանը։ Անկարելի է չնշել, որ իմ ժամանակ Հուշարձանների կոմիտեի կատարած աշխատանքները բարձր գնահատվեցին միութենական գիտական հիմնարկների եւ միութենական հանրապետությունների համապատասխան հիմնարկների կողմից (տե՛ս Բ. Բ. Պիոտրովսկու, Հովսեփ Օրբելու, Ն. Մ. Տոկարսկու զեկուցումները Լենինգրադի Մառի անվան ինստիտուտի գիտական խորհրդի 1938թ. փե-

տրվարի 28-ի նիստի արձանագրության մեջ)։ Այդ նիստում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ներկայիս անդամ Բորիս Պիոտրովսկին, խոսելով Հուշարձանների պահպանության կոմիտեի աշխատանքների մասին, ասել է. «Կոմիտեի, եւ մասնավորապես նրա ֆարտուղար Հ. Թումյանի կողմից մեծ աշխատանք է կատարված, որին մասնակից են դարձված լավագույն մասնագետներ...»։ Իսկ Հովսեփ Օրբելին «Պահպանության կոմիտեի աշխատանքների ամբողջ ուղղությանը համարել է նիշտ»։ Նույն ոգով արտահայտվեցին նաեւ մյուս մասնագետները, որոնց մեջ առանձնապես աչքի ընկավ Կոմիտեի աշխատանքների մանրակրկիտ վերլուծությամբ եւ բարձր գնահատությամբ հայ հին հարտա-րապետության լավագույն գիտակ Նիկոլայ Միխայլովիչ Տոկարսկին»։

1938 թվականից ի վեր, շուրջ 17 տարի անընդհատ, Հարություն Թումյանը զբաղվել է մանկավարժական գործունեությամբ՝ ղեկավարելով Հայկական հեռակա մանկավարժական ինստիտուտի լեզվագիտական ֆակուլտետը։

«Իմ երկարատեւ գործունեության ընթացքում ես շատ անգամ եմ ենթարկվել մոբիլիզացիայի Հայկոմկուսի կենտկոմի կողմից՝ այս կամ այն կարեւոր աշխատանքները կատարելու համար՝ հաճախ գլխավորելով առանձին բրիգադներ», - այսպես է ամփոփում մի ֆանի էջանոց իր «Համառոտ ինֆնակենսագրությունը» Հ. Թումյանը։ Սակայն պարզ զգացվում է, որ իրականում դա չէ, որ նա համարել է իր անցած կյանքի իմաստը, նպատակն ու վաստակը։ Ղարաբաղի ժողովրդական կառավարության զինվորական գործերի նախկին կոմիսարը դեռ չէր ավարտել իր պայքարը, պարզապես այդ տասնամյակներում այլ բան անել հնարավոր չէր։ Եւ ահա, արդեն 1950-ական թվականների կեսերին նա դադարեցնում է իր աշխատանքային գործունեությունը եւ ձեռնարկում 1917-1920 թթ. Արցախի հերոսական ազատագրական պայքարի պատմության շարադրմանը՝ դրամատիկ մի ժամանակաշրջանի, որի ականատեսը, գործուն մասնակիցը եւ ղեկավար գործիչներից մեկն է եղել իմքը։

## Ժամանակը

1917թ. հոկտեմբերին Ռուսաստանում տեղի ունեցած բոլշևիկյան հեղաշրջմանը հետեւած իրադարձությունների ընթացքում Անդրկովկասը



փաստորեն անջատվեց Ռուսաստանից: Նոր ձեւավորված իշխանության մարմինները՝ Անդրկովկասյան Կոմիսարիատն ու Սեյմը չկարողացան այստեղ վերջ տալ ծայր առած անիշխանությանը: Այս պայմաններում Լեոնային Ղարաբաղի մոտ 200 հազարանոց հայությունն սկզբից եւեթ ձեռնարկեց ինքնուրույն տնօրինել իր երկրամասի նակատագիրը: Իշխանությունն իրականացնելու համար ստեղծվեցին տարբեր մարմիններ՝ Ազգային խորհուրդ, կուսակցությունների ներկայացուցիչներից կազմված «Միջկուսակցական բյուրո», ապա՝ «Ղարաբաղի Ժողովրդական կառավարությունը»: Բարձրագույն օրգանը Լեոնային Ղարաբաղի հայության պարբերաբար հրավիրվող համագումարներն էին, որի պատգամավորներն ընտրվում էին Ժողովրդի կողմից:

Խոսքը վերաբերում է, ըստ Ռուսական կայսրության վարչական բաժանման, Գանձակի նահանգի մեջ մտնող Շուշու, Զիվանջիի եւ Զեբրայիի գավառների Լեոնային մասերին, որտեղ բնակչության 90%-ը հայեր էին (Դիզակը, Վարանդան, Խաչենը եւ Զրաբերդը): Երբեմն Ղարաբաղի կառավարությունը փորձում էր իր իշխանությունն ու հովանավորությունը հաստատել նաեւ հարակից այլ հայկական շրջանների վրա: Կենտրոնը Շուշին էր, որ այդ ժամանակ համարվում էր Անդրկովկասի ամենածաղկուն ֆաղափներից ու մշակութային կենտրոններից մեկը: Քաղաքի բնակչությունը, ըստ Թումյանի, կազմում էր 42 հազար մարդ, որից 22 հազարը հայեր էին:

Լեոնային Ղարաբաղում գործող ֆաղափական ուժերն ու կազմակերպությունները, բարեբախտաբար, կարողացան տագնապներով ու անորոշությամբ լի այդ ժամանակներում ի մի գալ հիմնական խնդրի գիտակցման, նպատակի եւ գործելակերպի կարեւոր հարցերի շուրջ: Իսկ նպատակը, Թումյանի ձեռնարկով, հետեւյալն էր. «կազմակերպել Ժողովրդին, վերջ տալ գլուխ բարձրացրած անիշխանությանը եւ բոլոր միջոցներով պահպանել խաղաղությունը եւ համերաշխությունը երկու հարեւան ժողովուրդների՝ հայերի եւ մուսուլմանների միջեւ»: Այս կերպ միայն հնարավոր պետք է լիներ ապահովել բնակչության անվտանգությունը, չենթարկվել Ադրբեջանին, կարողանալ պահպանել փաստական անկախ կարգավիճակ եւ սպասել հարմար իրավիճակում Հայաստանին միանալու (Առաջին համաշխարհային պատերազմում Անտանտի հաղթանակից հետո սպասվում էր, որ այդ հարցը կլուծվի խաղաղարար

կոնֆերանսներում»): Շուշիում ստեղծվեց «Ազգային խորհուրդ», քիչ անց կազմվեց նաեւ Լեոնային Ղարաբաղի կառավարություն, եւ երկրամասը փաստորեն անկախ հայտարարվեց: Հայաստանից կտրված «Քուրդիստանի» մուսուլմանաբնակ տարածքով, չունենալով արտաքին որեւէ օժանդակություն՝ ի սկզբանե այն չորս կողմից հայտնվեց խուլ շրջափակման մեջ:

Զափազանց բարդ իրավիճակում, փոքրաթիվ ուժերով, սուղ զինամթերքով, արտաքին աշխարհի հետ կապի բացարձակ չգոյության պայմաններում, տասնյակ անգամ իրեն գերազանցող հակառակորդի դեմ արցախահայության պայքարի հիմնական ռեսուրսը մնում էր իր ֆաշությունը, համարձակությունը, անձնագոհությունը: Ժողովրդի այս հատկանիշների պակասը երբեւէ չզգացվեց: Մակայն միայն դա որեւէ արդյունք չէր տա, եթե չգտնվեր այդ ներուժը ճիշտ հունի մեջ դնող, շատ կարեւոր այդ բաղադրիչին նաեւ իրատեսության, խոհեմության ու սթափ հաշվարկի բաղադրիչն ավելացնող ֆաղափական ղեկավարություն: Այդ տարիներին Լեոնային Ղարաբաղում Ժողովրդի նակատագիրն իրենց ձեռքը վերցրած գործիչները հիմնականում կարողացան ապահովել այս որակները, կարողացան ճիշտ գնահատել սեփական ուժերն ու հնարավորությունները եւ վարել դրան համապատասխան իրատեսական ֆաղափականություն: Սեփական ուժերի գիտակցման եւ դրան համապատասխան ֆաղափականության ներդաշնակումը հնարավորություն տվեց նվազագույն կորուստներով դիմագրավել տարաբնույթ մարտահրավերները, լուծել արցախահայության՝ իր բնօրրանում գոյատևելու, ապրելու իրավունքի ապահովման կենսական խնդիրը: Լեոնային Ղարաբաղի հայությունը կարողացավ դիմակայել Ադրբեջանի ագրեսիային, կարողացավ դիմակայել Օսմանյան Թուրքիայի, ապա նաեւ Անգլիական ճնշումներին, շարունակել ապրել իր հայրենիքում եւ շրջաններ Ադրբեջանի գերիշխանությունը:

Լեոնային Ղարաբաղի այս երեք տարվա փոքրկահույզ պատմությունը լավագույն օրինակն է՝ ցույց տալու համար արկածախնդրության մերժման, իրատես ֆաղափական մտքի եւ ֆաղափական հաշվարկի կարեւորությունն ու վնասական նշանակությունը: Մի հատկանիշ, որ նախորդած 3-4 տասնամյակներում ցավալիորեն իսպառ բացակայեց արեւմտահայության, ապա՝ 1918-20թթ. Հայաստանի հանրապետության



նակատագիրը տնօրինող ուժերի ու գործիչների մոտ: Դժբախտաբար, միշտ չէ, որ նաեւ Լեոնային Ղարաբաղում այս սկզբունքը գործեց անխաբար: Եւ եթե այս տարիներին եղան նաեւ անհաջողություններ, ձախողումներ, եթե հնարավոր չեղավ անել ավելին, ապա դա էլ արդյունք էր հենց հիշյալ ներդաշնակության խախտումների՝ ֆաղափական իրատեսության տեղատվության, կամ՝ երբ անհնար եղավ դեմ կանգնել ոմանց արկածախնդիր ֆայլերին ու ձեռնարկներին:

Հարություն Գրիգորի Թումյանը բախտորոշ այս տարիներին եղել է Լեոնային Ղարաբաղի զինվորական գործի կազմակերպիչն ու ղեկավարը: Եթե նաեւ նկատի ունենանք նրա երիտասարդ տարիքը (28-29 տարեկան), ապա ավելի բնական կլինեք, նրան, պաշտոնի եւ տարիքի բերումով, տեսնել ավելի «ձախ» դիրքերում: Մինչդեռ եղել է ճիշտ հակառակը. շունենալով վնասակարության պակաս, լինելով նույն՝ Լեոնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու գաղափարի ու խնդրի համոզված պաշտպան, նա միեւնույն ժամանակ սկզբից եւեթ եղել է նույն այդ իրատես ֆաղափականության ու գործելակերպի ամենաջերմ ջատագովը: Սա ոչ միայն զինվորական, այլ նաեւ ֆաղափական գործչի այն կարեւոր հատկանիշն էր, որ այդ շրջանում, ցավոք, ֆշերն ունեին: Եւ եթե Լեոնային Ղարաբաղի կառավարությունը կարողացավ հիմնականում պահպանել ֆաղափական իրատեսությունը եւ լայնախոհությունը, ապա դրանում, ուրիշների հետ, իր կարեւոր դերն է ունեցել նաեւ նրա զինվորական գործերի կոմիսարը:

Սկզբից եւեթ փաստորեն խուլ շրջափակման մեջ հայտնված Արցախի զինված ուժերի խնդիրը ոչ միայն պայքարն էր արտաքին վտանգի դեմ, այլեւ ներքին կարգուկանոնի պահպանումը, մասնավորապես՝ ազգամիջյան հողի վրա մանր ընդհարումները կանխելը, մահմեդական բնակչության հետ հնարավորին չափ բարիդրացիական հարաբերությունները պահպանելը: Այս դեպքերում որեւէ խտրականություն չէր դրվում, իսկ մեղավորները կառավարության կողմից պատժվում էին նույն խստությամբ՝ անկախ ազգային պատկանելությունից:

Ամբողջ ընթացքում Ղարաբաղի կառավարության ֆաղափականության հիմնական գիծն այն էր, որ ընդհարումներ չառաջանան հարեւան մուսուլմանների եւ Ադրբեջանի հետ: Սակայն դա միշտ չէ, որ հնարավոր էր լինում: Առաջին դեպքում Արցախի զինված ուժերը դրսևորում էին



Թումյանների ընտանիքը. ձախից աջ՝ Քրիստափոր՝ ավագ որդին, մայրը՝ Բանար, հայրը՝ Գրիգոր. կանգնած են՝ Թումյան, Մաշա (Մարիամ)՝ զավակները: Նստած են. ձախից՝ Հովսեփ եւ Արտեմ (Հարություն)՝ զավակները:





Բահար և Գրիգոր Թումյանների զավակներից՝ Աննա, Թուման և Քրիստափոր.  
լուսանկարված՝ 1893թ.:



Բահար և Հովսեփ Թումյաններ





Հարություն Թումյանի եղբայր՝ Թումանը սասունցու տարագով.  
լուսանկարված Բաֆվում՝ 1904թ.

նախանձելի զսպվածություն եւ սառնասրտություն, երկրորդ դեպքում՝ նույնքան նախանձելի փառությամբ եւ հստակությամբ իրականացնում այս կամ այն գործողությունն այնպես, որ դա չմոռացվող դաս էր լինում հակառակորդի համար, բայց նաեւ այնպես, որ այն չվերածվեր լայնածավալ ռազմական գործողությունների: Կառավարության նման մոտեցումը եւ դրա հստակ իրականացումը նույնպես զգալի չափով պայմանավորված է եղել զինվորական կոմիսարի նաեւ ֆաղափական հմտությամբ:

## Աշխատանք

Սովաբաժավալ այս գործը հեղինակն ավարտել է 1964 թվականին եւ հաջորդ տարի հանձնել հրատարակչություն: «Ափսոսում եմ, - ցավով գրում է հեղինակը, - որ այդ աշխատանքը չտպագրվեց, թեեւ Մամուլի պետական կոմիտեի ղեկավար Ութմազյանի կողմից այն ուղարկվեց «Հայաստան» հրատարակչություն տպագրելու, բայց ընկավ այնտեղ տգետ եւ անվստահելի մարդկանց ձեռք, որ ես ստիպված եղա ետ վերցնել (1969թ.)»: Թե ում նկատի ունի հեղինակը, դժվար է ասել: Հրատարակչություն ներկայացրած մեքենագիր օրինակը հեղինակը 1973 թվականի մայիսի 27-ին նվիրել է Մաշտոցյան Մատենադարանին<sup>1</sup>: Նրանից կտրված հանված է «Վերջաբանը», որ Լեոնային Ղարաբաղի մտավորականության անունից Նիկիտա Խրուշչովին ուղղված ժամանակին հայտնի ընդարձակ նամակն է: Այն լրացրել ենք դարձյալ Մատենադարանում պահվող այլ օրինակից:

Լեոնային Ղարաբաղի պատմության դրամատիկ ու ճակատագրական շրջանին վերաբերող իր գործը հեղինակը բողել է խնամքով մեքենագրված, հրատարակության պատրաստ վիճակում, ընդհուպ՝ ձեռավորած տիտղոսաքերթով. «Հ. Թումյան, Դեպքերը Լեոնային Ղարաբաղում 1917-1920թթ. (պատմական ակնարկ), Երևան, 1965):

Աշխատանքը տեւել է մոտ ութ տարի: Հիմնական աղբյուրների մասին հեղինակը խոսում է իր «Առաջաբանում»: Աշխատության միջոցով բացահայտվում է նաեւ հեղինակի կենսագրության այս երեք տարիների

<sup>1</sup> Մատենադարան, անհատական արխիվների ֆոնդ, այլեայլ հեղինակների արխիվ (նոր ձեռք բերված), քղթ. 240-12, վավ. 29:



մանրամասները, որի մասին իր «Համառոտ ինֆնակենսագրության» մեջ նա թողել է միայն կարճատև մի գրառում այն մասին, որ 1919 թվականին անգլիացիներն իրեն Շուշիից արտաքսել են նախ Թիֆլիս, ապա՝ Երևան:

Աշխատության արդեն իսկ վերնագիրն ուշադրություն է գրավում, քանզի Լեոնային Ղարաբաղի այս շրջանի պատմությունը մնում է թերի ուսումնասիրված: Խորհրդային տարիներին դա, մեղմ ասած, չխրախուսվող թեմա էր: Իսկ եթե այդ մասին գրվում էր, ապա միայն «սովետական ժողովուրդների եղբայրության» եւ բոլշեւիզմի «պատմական դերի» հայեցակետով: Շարժման եւ անկախության տարիներին, Լեոնային Ղարաբաղի խնդիրը թիվ մեկ ֆաղափական հարցը լինելով, նրա հետ կապված ամեն ինչ, այդ թվում նաեւ այդ շրջանի պատմությունը, հասկանալի պատճառով չէր կարող անաչառ գիտական ուսումնասիրման տրվել: Ուրեմն՝ ներկայացվող աշխատանքն այսօր էլ կարող է հավակնել այս բնագավառում առաջին լուրջ պատմագիտական ուսումնասիրությունը համարվելու:

Հ. Թումյանի աշխատանքը, զգալի չափով հեղինակի հիշողություններին հենվելով հանդերձ՝ հուշագրության ժանրին չի պատկանում: Աղբյուրագիտական բացառիկ արժեքի կողքին այն ունի ոչ պակաս մի երկրորդ արժանիք: Փայլուն կրթություն ստացած, հարուստ կենսափորձով, համապատասխան ունակություններով ու հմտություններով օժտված զինվորական գործերի նախկին կոմիսարը 3-4 տասնամյակի հեռավորությունից նորից ու նորից իմաստավորել է հիշյալ տարիների բոլոր իրադարձությունները, լայնորեն օգտվել դրանց վերաբերող հարուստ արխիվային նյութերից եւ ժամանակակից այլ գործիչների ու ականատեսների վկայություններից: Այսինքն՝ աշխատությունը նաեւ որպես գիտական ուսումնասիրություն լիովի բավարարում է պատմագիտության այսօրվա պահանջները: Աշխատությանը կից պահպանվել է նշանավոր պատմաբան Աշոտ Հովհաննիսյանի դրվատական կարծիքը: Հայ ազատագրական շարժումների պատմությանը ֆաջատեղյակ գիտնականը դրանում մասնավորապես նշում է.

«Ենթավերնագրում հեղինակը բնորոշել է իր գործը «պատմական ակնարկ» բառերով: Փաստորեն աշխատությունը ավելին է, քան «պատմական ակնարկը»: Այն հանդիսանում է Լեոնային Ղարաբաղում կա-

տարված իրադարձությունների պատմական ուշագրավ ուսումնասիրություն: Թեպետեւ հեղինակն ինքն իսկ ղեկավար մասնակցություն է ունեցել կատարված ղեպերին, դրանց շարադրանքը նա տալիս է հիմնականում ոչ թե անձնական հուշագրության, այլ արխիվային փաստաթղթերի վրա հիմնված ուսումնասիրության եղանակով: Կատարված անցքերն այս աշխատության մեջ ներկայացված են ժամանակաշրջանի պատմական ետնախորքի վրա՝ կենտրոնացնելով ընթերցողի ուշադրությունը ծանր այն կացության վրա, որ Առաջին համաշխարհային պատերազմի վերջերին եւ Վերսալի պայմանադրության ժամանակաշրջանում ու դրանից հետո Լեոնային Ղարաբաղի հայ բնակչության համար ստեղծվել էր իմպերիալիստական դրսեկ ուժերի եւ ադրբեջանական մուսավաթականների վարած ֆաղափականության հետեւանով: Կասկած չկա, որ հեղինակի աշխատանքը պետք է դիտել որպես Ղարաբաղի ղեպերն արձանագրող պատմագրական ուշագրավ աղբյուրներից եւ ուսումնասիրություններից մեկը»:

Թումյանի գործը գրվել է խրուշչովյան «ձնհալի» տարիներին: Սակայն դա չի նշանակում, թե այն ժամանակ պատմական գիտությունն արդեն ազատվել էր խորհրդային պատմագիտության «լավագույն» ավանդներից: Գաղափարախոսական կապանքները եւ պարտադրանքները, ըստ որի՝ պետք է գովերգվեր «սովետական ժողովուրդների եղբայրությունը», որպես պատմության շարժիչ ուժ պետք է ներկայացվեր դասակարգային պայքարը, իսկ բոլշեւիզմը պետք է դուրս լիներ ամեն տեսակ ֆննադատությունից, շարունակում էր գործել ամբողջ թափով: Մարքսիստական եւ սովետական գաղափարաբանական կապանքների հետքերը Թումյանի աշխատության վրա զարմանալիորեն սակավ են: Սակավ են այնքան, որ այդ հիմքի վրա կարելի է խոսել հեղինակի գիտական ու ֆաղափացիական աննախադեպ համարձակության ու խիզախումի մասին: Անշուշտ, նաեւ դրանով պետք է բացատրել այն փաստը, որ այդ տարիներին հրատարակության հանձնած այսպիսի մի աշխատանք աչալուրջ գրաֆնությունը, բնականաբար, չէր կարող թույլատրել հրապարակել:

Հեղինակը նեղ մասնագիտությամբ պատմաբան չէ, սակայն սովորածավալ այս աշխատության մեջ դա չի զգացվում: Հումանիտար կրթությունը, պատմական գիտությանն անմիջապես առնչվող բնագա-



վառներում նրա երկարամյա աշխատանքը, բազմակողմանի գիտելիքները, առողջ ինտուիցիան, փառափառական բնատուր մտածողությունը, բժախնդրությունը, իր կողմից ներկայացվող իրադարձություններին ժամանակակից, մասնակից եւ դրանցում ղեկավար դեր ունեցած լինելու հանգամանքները դարձել են այն իդեալական հիմքը, որի վրա կարող էր ստեղծվել իրոք գիտական մի աշխատանք: Սակայն այս ամենից բացի հեղինակն ունեցել է նաեւ այլ հատկանիշներ, որոնք եւս մի աստիճանով բարձրացնում են նրա գործի արժեքը: Թումյանը դուրս է գալիս ոչ միայն խորհրդային պատմագիտության վերոհիշյալ նախանշված գաղափարաբանական շրջանակներից, նա հաճախ շեղվում է նաեւ հայ պատմագիտական մտքի ավանդական չափորոշիչներից ու սովորություններից: Դույզն-ինչ չմեղանշելով պատմական իրականության առաջ՝ նա չի փորձում արհեստականորեն հերոսապատում էջեր ստեղծել: Ու եթե նրա գրքում կան այդպիսի էջեր, ապա դրանք մեծի մասամբ իրական են, վավերական: Նույն կերպ նա չի աշխատում նաեւ ողբերգական էջերը թանձրացնել, եթե այդպիսի կան, ապա դրանք նույնպես իրականության վավերագրումն են: Այսինքն՝ նա առավելագույնս գերծ է մեր պատմագիտությանն առ այսօր խեղդող ու նրա զարգացումը կասեցնող՝ հերոսն անպայման դավանանքի ֆոնին ստեղծելու, հայրենասիրություն դաստիարակելու համար՝ հաղթանակները, վրեժխնդրություն բորբոքելու համար՝ ողբերգություններն անպայման ուռնացնելու, պարտությունների համար առաջին հերթին անպայման արտաքին պատճառներ որոնելու սովորությունից: Գործնական փառափառության նախագծողի, մասնակցի եւ իրականացնողի հանգամանքը նրա աշխատությանն ավելացրել է շատ կարեւոր որակներ, որոնք հաճախ այդպես էլ անհասանելի են մնում նման պատեհություններ չունեցած, նույնիսկ բարձրակարգ պատմաբանների գործերին:

Հասկանալի է, որ այդ տարիների դարաբաղյան անցուդարձի մասին ոչ բոլոր փաստաթղթերն են պահպանվել: Ավելին՝ շատ կարեւոր դեպքեր ու եղելություններ ժամանակին իրենց փաստաթղթային արտահայտությունը չեն էլ գտել: Եթե ժամանակակիցները հուշեր են գրել, դրանք միայն խիստ մասնակի են լրացնում աղբյուրագիտական բացը, փանդի հուշերը սովորաբար տառապում են այդ ժանրին հատուկ հայտնի թերություններով: Թումյանը հիանալի հիշում է դեպքերի մանրամասները:

Սակայն նա դրանով չի բավարարվել: Նա բավականին մանրամասն պրպտել է արխիվային նյութերը: Զրուցել է ժամանակակից այլ գործիչների հետ, օգտագործել նրանց մոտ պահպանված փաստաթղթերը: Դրանով իսկ նրա գործը դարձել է Լեոնային Ղարաբաղի հիշյալ տարիների պատմության մի ամբողջական, արժեքավոր, «առաջին ձեռնից» ավանդված եզակի սկզբնաղբյուրի արժեք ունեցող փաստաթուղթ-վավերագրություն: Եւ իրոք, Հ. Թումյանի աշխատանքը շատ կարեւոր սրբագրումներ է մտցնում 1917-1920 թթ. պատմության, մասնավորապես Լեոնային Ղարաբաղին վերաբերող իրողություններում:

Մյուս կողմից, սակայն, Թումյանը նպատակ չի դրել գրել այդ 3-4 տարվա ամբողջական գիտական պատմությունը: Ուստի նրա շարադրանքը համեմատաբար անկաշկանդ է: Եւ եթե որոշ էջերում այն երբեմն մոտ է հուշագրության ժանրին, երբեմն՝ դրամատիզմով լի գեղեցիկ գրականության, սակայն միշտ պահպանելով անաչառությունը, ձգտելով հավաստիության ու բավարարելով գիտականության չափանիշները: Բոլոր դեպքերում՝ այն կարդացվում է մեկ շնչով, հավասար հետաքրքրությամբ ու հափշտակվածությամբ:

### Հավաստիությունը եւ գաղափարական անկաշկանդությունը

Թումյանի աշխատությունը գերծ է գաղափարախոսական կապանքներից: Նրա աշխատության մեջ ընդհանրապես որեւէ խոսք չկա ո՛չ դասակարգային պայքարի, ո՛չ խորհրդային իշխանության ու բոլշեվիզմի փրկարար դերի, ո՛չ էլ «ժողովուրդների եղբայրության» մասին: Նա մեղադրանքով է խոսում Ռուսաստանի խորհրդային իշխանության առաջին իսկ ֆայլերի՝ Թուրքիայի հետ ցարական կառավարության կնքած պայմանագրերը վերացնելու, հաղթանակների արդյունքներից հրաժարվելու, «խաղաղություն առանց անեֆսիաների եւ կոնտրիբյուցիաների» կարգախոսի, դրա հիման վրա Կովկասյան նակատը ֆայլելու եւ կես միլիոնանոց բանակը Թուրքիայից հետ կանչելու, 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստի ստորագրուից պայմանագրի մասին եւ այլն: Բաժվի Կոմունայի ու Ստեփան Շահումյանի նկատմամբ դրական վերաբերմունքն ավելի շատ պայմանավորված է նրանով, որ այդ իշխանությունը կարող



էր պատնէշ լինել թուրքական զորքերի դէմ, քանզի դրանք Բաբուն գրավելուց հետո պետք է ուղղվէին դեպի Ղարաբաղ:

Լեոնային Ղարաբաղում գործող բոլշեիկների մասին նրա հաղորդումները սառն են, նույնիսկ հանդիմանական ու հեզմական: Միայն մի քանի փոքր դրվագներում են հիշատակվում Լեոնային Ղարաբաղի բոլշեիկյան կազմակերպությունը և նրա գործիչները՝ միշտ էլ ի ցույց դնելու համար նրանց նեղմիտ, մյուս ուժերի հետ համագործակցությունից խուսափող, ժողովրդի և երկրամասի նակատագրին անհաղորդ ու անտարբեր էությունը: Իսկ բոլշեիկ գործիչներին տված ընդհանուր գնահատականն այսպիսին է. «Ի դեպ է ասել, որ կոալիցիա կազմած հայ մտավորականության ֆաղափական կողմնորոշումը երբեք չգնահատվեց Շուշու բոլշեիկյան խմբակի ղեկավարների կողմից: Թե՛ Ալեքսանդր Ռուբենին, թե՛ Սաֆո Համբարձումյանը և թե՛ Արմենակ Ղարաբաղյանը եւ՛ Միջկուսակցական բյուրոյի, եւ՛ Կոմիսարների խորհրդի նկատմամբ շարունակում էին պահպանել իրենց աղանդավորական, դոգմատիկ դիրքը: Նրանք մինչեւ վերջ չկամեցան այդ ծանր ժամանակներում որեւէ բանում աջակցել Ղարաբաղի ղեկավարությանը: Նրանց չափազանց նեղմիտ, կասեինք եսամոլ ընթացքը դատապարտվեց ժամանակին եւ՛ մտավորականության լավագույն մասի, եւ՛ ժողովրդական խավերի կողմից»: Իր վերաբերմունքում հեղինակը կանխակալ չէ, և եթե բոլշեիկ գործիչների մեջ գտնվել է մեկը, որ այլ կերպ է վարվել, ապա նա չի զլանում դա հիշատակել ու գնահատել. «Այդ մարդկանց անվայել դիրքը չհանդուրժեց նրանց ընկերներից միայն մեկը՝ Մելիքսեթ Եսայանը: Այդ ֆաղափաստական մեծ արիության տեր, անկեղծ, ուղղամիտ և հայրենասեր անձը դատապարտեց իր նեղահայաց գաղափարակիցների դիրքը, եկավ Կոմիսարների խորհուրդ և առաջարկեց իր ծառայությունները: Եսայանը ամենի կողմից ընդունվեց գրկաբաց: Նա բաժանեց մինչեւ վերջ այն բոլոր դժվարություններն ու դառնությունները, որ վիճակվեց Կոմիսարների խորհրդի, իսկ հետագայում «Ժողովրդական կառավարության» անդամներին»:

Թումյանը ծանր մեղադրանք է հարուցում Շուշուում գործող հայ բոլշեիկներին (նաեւ Էսէներին), որոնք՝ «իրենց շատ լավ էին զգում նահանգապետ Սուլթանովի իշխանության ստեղծած կոշտարային մթնոլորտում»: Նրանք թույլ չտվեցին Շուշուում հավաքված պատգամավորների մի

խմբի գնալ Շուշու գյուղը՝ մասնակցելու Ղարաբաղի հայության 8-րդ համագումարին, պահանջում էին, որ համագումարը տեղի ունենա Շուշուում և նպատակ ունենան՝ «համագումարի վզին փաթաթել իրենց կապիտալիստական նկրտումները և այդպիսով, պառակտում առաջ բերելով ժողովրդի մեջ, իրագործել Ղարաբաղը Սուլթանովի ռոմերի տակ փռելու իրենց հանցավոր մտադրությունը»:

Ինչ վերաբերում է «ազատարար» Կարմիր բանակին ու Անդրկովկաս նրա մոտեփին, ապա խորհրդային պատմագրության մեջ հազիվ թե որեւէ մեկը դրան ավելի խիստ գնահատական է տվել, քան գտնում ենք Թումյանի գրքում. «Ինչպես տեսնում ենք, Անդրկովկաս ոտ դնելու հենց առաջին օրերից, բոլշեիկների ընդգրկած ֆաղափականությունը Լեոնային Ղարաբաղի նկատմամբ, ըստ էության, ոչնչով չէր տարբերվում անգլիական գաղութարարների, թմսոնների ու շատելվորտների ֆաղափականությունից: Ինչպես էլ տֆեն արդարացնել ազգերի ինֆորոշման սրբազան իրավունքի այդ ակնհայտ ոտնահարումը, այնուամենայնիվ, պատմությունը չի կարող չնշավակել նրա հեղինակներին՝ այդ կարճամիտ, ռիսակալ և խտրական ֆաղափականության համար»: Ընդ որում Լեոնային Ղարաբաղը Ադրբեյջանին ենթարկելու խնդիրը լուծելու համար բոլշեիկները չգնացին ուժային ճանապարհով, ինչպես Ադրբեյջանը, թուրքերը, անգլիացիները: Նրանք գործի դրեցին իրենց ամենահզոր միջոցը. «Այդ գործուն գեներ ֆաղափական ազիտացիան էր: Եւ դժվար չէր, իհարկե, ֆաղցից, անվերջ գրկամներից, թշնամիների անընդհատ հարձակումներից երեք տարի շարունակ տառապող հոգնած ժողովրդին գրավել ապագայի հանգիստ և կուշտ կյանքի վարդագույն խոստումներով և հեռանկարներով, մանավանդ, երբ Ղարաբաղի սահմաններում վերստին կանգնած էր «ապահովության» և «խաղաղ կյանքի» խորհրդանիշը՝ ռուս զինվորը»: Եւ գորահավաքի նոր կոչին շուտով ընդդիմացավ հայ բնակչությունը՝ հայտարարելով, որ «իրենք բոլշեիկներ են», դառնությամբ գրում է հեղինակը, ավելացնելով, որ բոլշեիկներն այդ կերպ թափանցել էին նաեւ Ղարաբաղի հայկական գորամասերի շարքերը և ֆայֆայել դրանք:

Բնական են երեք տարի շարունակ գեներ ձեռքին որպես զինվոր և որպես ֆաղափական գործիչ Լեոնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու համար պայքարած գործիչ՝ բոլշեիկներին տված այս գնահատա-



կանները: Եւ կասկածից դուրս է, որ հենց սա էր իրականությունը: Պարզապես այդ տարիներին խիզախություն էր պետք այս ամենը թղթին հանձնելու եւ հրատարակության ներկայացնելու համար:

\* \* \*

Կուսակցական նեղմտության ու անհանդուրժողականության առումով Թումյանի բննադատությանն արժանացած մյուս ֆաղափական ուժը **Դաշնակցական կուսակցությունն** է: Եւ դա ոչ մի կերպ չի կապվում ժամանակի խորհրդային պատմագիտության պարտադրանքի հետ: 1917թ. վերջին, երբ օրակարգում դրվեց հայկական Ղարաբաղի համար իշխանության ինչ-որ մարմին ստեղծելու խնդիրը, տեղի դաշնակցական կազմակերպությունն իսկույն հանդես եկավ իր հայտնի հիվանդության դրսևորմամբ. «Դաշնակցությանը հարող մտավորականության եւ ղեկավարների մի մասը, հիմնվելով այդ կուսակցության իրական ուժի եւ հեղինակության վրա, պահանջում էր իշխանություն ստեղծել՝ բաղկացած բացառապես դաշնակցականներից»: Բարեբախտաբար, գոյություն ունեցող օբյեկտիվ հանգամանքները, այդ թվում նաեւ Շուշիի հայ մտավորականության՝ այլ կուսակցությունների հարող, «ոչ դաշնակցական մասի» ֆաղափական ու հասարակական կշիռը, ինչպես նաեւ այս կուսակցության տեղական գործիչների մեծ մասի լայնախոհությունը, ստիպեցին ետ կանգնել այդ մտադրությունից եւ գնալ համագործակցության ճանապարհով (այն, ինչը չհաջողվեց անել Հայաստանում եւ հաստատվեց կուսակցական դիկտատուրա՝ հայտնի վերջաբանով): Եւ այնուամենայնիվ, այստեղ էլ մնաց «դաշնակցություն կուսակցությանը հարող մի փոքրիկ խմբակ, որը երբեք չնահանջեց իր նեղմիտ դիրքերից եւ շարունակում էր պահանջել, որ իշխանությունը կազմվի բացառապես դաշնակցականներից»: Հետագայում նրանց անգամ հաջողվեց «հեղաշրջում» կազմակերպել, կազմել նոր կառավարություն... եւ «նորաթուխ «կառավարության» գլուխ կարգել ֆաղափում տխուր համբավ ունեցող մի ոչնչության», - բռնուն զայրույթով գրում է հեղինակը: Բարեբախտաբար դա տեւեց միայն 5 օր, խռովությունը հաղթահարվեց եւ նախկին վիճակը վերականգնվեց:

Դաշնակցական գործիչների նկատմամբ ամենախիստ գնահատականը հնչում է 1918թ. Բաֆվի դեպքերի առիթով, երբ Բաֆվի խորհուրդը

որոշում էր անգլիացիներին Բափու հրավիրել-չհրավիրելու, այլ կերպ ասած՝ Շահումյանի գլխավորությամբ գործող կառավարության նկատմամբ վստահության հարցը: Բաֆվի խորհուրդում խնդիրը, հօգուտ անգլիացիներին հրավիրելու, լուծվեց ձայների չնչին տարբերությամբ, եւ դաշնակցության ձայները լիովին բավարար կլինեին հակառակ որոշում կայացնելու, դրանով իսկ նաեւ թուրքերի մոտեւր Բափու կանխելու համար: Ցավով դա տեղի չունեցավ. «Նրանք իրենց անհեռատես, կարճամիտ գործողություններով, իրենց հախուռն, անմիտ որոշումներով ֆայ-ֆայեցին ու տապալեցին Բաֆվի պաշտպանության գործը եւ այդպիսով դյուրացրին ու արագացրին թուրք-թաթարական արյունոտ թանդանների հաղթանակը, որոնք Բաֆվի փողոցները ներկեցին տասնյակ հազարավոր անմեղ հայերի արյունով: Դաշնակցության Բաֆվի ղեկավարությունը պարտավոր էր չհետեւել էսեռների եւ մենշեիկների խոտելի ֆաղափականությանը: Շահումյանը միանգամայն իրավացի էր, երբ առանձնապես դատապարտելի եւ նույնիսկ դավաճանական էր համարում Բաֆվի դաշնակցական ղեկավարության դիրքը: Ով մոռանար-չմոռանար, բայց այդ ղեկավարությունը երբեք մոռանալու չէր պատմության դասերը: Ծանր եւ տագնապալի իրադրության պայմաններում, երբ Բաֆվի հարյուր հազարից ավելի հայության գլխին դամոկլան սրի պես կախված էր կոտորածների վտանգը, երբ թուրք-թաթարական արյունակալ ռմակների բացահայտ սպառնալիքները հայերի հասցեին միանգամայն ակներեւ էին դարձնում նրանց գազանային մտադրությունները Բաֆվի եւ ընդհանրապես Անդրկովկասի հայության նկատմամբ, այդ մահացու վտանգներով հղի օրերին ուղղակի հանցանք էր եւ անմտություն՝ Բաֆվի փրկության հույսերը կապել օսմանյան թուրքերի հայաջինջ ֆաղափականության ավանդական հովանավորողների նենգ խոստումների հետ»: Հեղինակը համոզված է, որ եթե պահպանվեր միասնական ժողովրդական ճակատը եւս մի երեք ամիս, ապա Բափուն կփրկվեր: Դրանով կփրկվեր նաեւ հայությունը, իսկ Անդրկովկասը կազատվեր թուրքական օկուպացիայից: Կրկին հիշեցնենք, որ այս ամենը տուրք չէ սովետահայ պատմագրության «հակադաշնակցական» ուղղվածության. ինչպես տեսանք հեղինակը հեռու է կոմունիստական գաղափարաբանության պարտադրանքին ենթարկվելուց: Այս ամենը ժամանակակցի, իրողություններին ֆաշտեղյակ գործի անաչառ գնահատական



է հենված անառակելի փաստերի վրա:

Հեղինակին որպես անաչառ պատմաբան՝ ու իրատես ֆաղափական գործիչ լավագույնս բնութագրում է նրա վերաբերմունքը ժողովրդական հերոս **Անդրանիկի** նկատմամբ: Նա պատշանն է մատուցում Անդրանիկին, նրան անվանելով «հայ ժողովրդի մեծահռչակ հերոս», «Գարահիսարի արծիվ», «առասպելական հերոս» եւ այլն: Արդարացնում է նրա գործունեության շատ դրվագներ: Սակայն Անդրանիկը նրա համար **տաբու** չէ, եւ այս ամենը չեն կաշկանդում նրան համարելու, որ Անդրանիկը նաեւ սխալներ է թույլ տվել: Մասնավորապես սխալ է համարում թուրքական օկուպացիայի շրջանում նրա «կրավորական դիրքը» Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, այն է՝ Զանգեզուրում գտնվող, մեծաքանակ զինամթերք ունեցող «Շուշիի գնդին» չօժանդակելը Ղարաբաղ անցնելու հարցում: Իսկ նրա ճակատագրական սխալը համարում է այն, որ Զաբուղը (Լաչինը) գրավելուց հետո եւ Ղարաբաղ մտնելու ճանապարհին ենթարկվեց անգլիացիների պահանջին ու վերադարձավ Գորիս: Ընդհանրապես նա համոզված է, որ Անդրանիկը, եթե ուզենար, կարող էր Զանգեզուրից եւ Լեռնային Ղարաբաղից միասին թուրքերի դեմ դուրս բերել 30-40 հազար «կոփված ռազմիկներից» բաղկացած մի ուժ, ինչից հետո թուրքերի պարտությունը Բաֆլի ճակատում կդառնար անխուսափելի, իսկ դրան կհետեւեր նաեւ նրանց «Անդրկովկասյան ավանտյուրայի կրախը»:

## Հիմնական պատկերացումներն

### ու սկզբունքները

Թումյանը խաղաղության ջերմ կողմնակից է եւ գտնում է, որ **հարեւան ժողովրդի հետ պետք է համակեցության եզրեր գտնել**: Նրա այս պատկերացումները եւս ոչ մի կապ չունեն կոմունիստական գաղափարախոսության «ժողովուրդների եղբայրության» պարտադիր դրույթի հետ: Ընդհակառակը՝ նա առիթը բաց չի թողնում նշավակելու այն պատմաբաններին, որոնք դա անում էին արհեստական հիմքերի վրա, գաղափարախոսական պարտադրանքով. «Պատմության կարեւոր փաստերը անտեսել «բարի» կամ «չար» նպատակներով, կամ թեկուզ հենց փառաբանելու համար «Ադրբեջանական, Հայկական, Վրացական եղ-

բայրական սովետական ռեսպուբլիկաների փառապանծ ֆառասմամյակը», վայել չէ լուրջ պատմաբանին, այդ հակադիտական, անազնիվ, հակալենինյան գործ է»: Նրա պատկերացումները հարեւան ժողովուրդների խաղաղ գոյակցության մասին առարկայական են՝ հենված իրական հողի վրա: Ադրբեջանցին (որի ազգային պատկանելության համար նա հետեւողականորեն օգտագործում է ընդհանրական «թյուրք» բառը, ի տարբերություն օսմանցիների, որոնց կոչում է «թուրք»), նրա համար առաջին հերթին հարեւան է, որի հետ պետք է խաղաղ գոյակցել: Այդ ժողովրդի մեծագույն՝ աշխատավոր մասը հակված է նման խաղաղ գոյակցության. «Ինչ վերաբերում է թյուրք աշխատավոր գյուղացիությանը, նա իր առողջ բնագրի թելադրանքով, իհարկե, կողմնակից էր համերաշխության հարեւան հայ աշխատավորության հետ»: Եւ մեկ անգամ չէ, որ հիշատակում է այս խավի վերաբերմունքի, ընդհուպ նրա ներկայացուցիչների անձնվեր արարքների մասին. «Զնայելով վտանգին, հարեւան հայ գյուղին օգնելու համար թյուրք գյուղացիները զիջեցին, զաղտնաբար, հաճախ բեռներով հացահատիկ էին բերում հայերին, առանց որեւէ հատուցում ակնկալելու»: Սակայն ժողովրդի այս մասի դժբախտությունն է համարում նրա ճնշվածությունն ու տգիտությունը, ինչի պատճառով հեշտությամբ դառնում էր «իր բեկերի, խաների, մոլլաների եւ սեփական «ղոչիների» գերին, որոնց ակամա լսում էր ու հնազանդվում»: Խաղաղ գոյակցության շատագույններ կային նաեւ ադրբեջանական մտավորականության մեջ. «Բարեբախտաբար, համերաշխությունը եւ խաղաղությունը պահպանելու ազնիվ պայքարում հայերի հետ էր մուսուլման մտավորականության լավագույն, թեպետեւ փոքրաթիվ մասը՝ Լյուֆտալի-բեկ Բեհբուդովի գլխավորությամբ»: Վերջինիս նա ներկայացնում է մեծագույն սիրով՝ կերտելով իր պայծառ կերպարներից մեկը: Թումյանը համոզված է, որ՝ «Եթե օսմանցիները մուտք չգործեին Ադրբեջան, եւ երկու ժողովուրդների միջեւ հաստատված բարիդրացիական կապերը շարունակվեին առաջվա պես պահպանվել եւ զարգանալ, ապա երկու կողմերի մտավորականության եւ ժողովրդական լայն զանգվածների միջեւ պիտի ստեղծվեին շատ ավելի սերտ բարեկամական հարաբերություններ»:

Այսինքն՝ Թումյանը համոզված է, որ երկու հարեւան ժողովուրդների խաղաղ գոյակցությունը եւ բարի-դրացիական հարաբերությունները



նրանցից յուրաքանչյուրի բնական պահանջն ու ցանկությունն է: Դա ձեռնառնող չէ միայն այն գաղափարախոսությունների կրողներին, որոնք թշնամանք ու անհանդուրժողականություն փարձելով, դրանով իսկ ապահովում են իրենց հասարակական դիրքն ու իշխանությունը: Տվյալ դեպքում նա դա առաջին հերթին վերագրում է պանթուրֆական ու պանիսլամական գաղափարախոսության ադրբեջանցի ջատագովներին. «Մուսուլման կալվածատերերի դասակարգային ինֆնապահպանության բնագործը, նրանց համար մահացու վտանգներով հղի այդ խառը ժամանակներում, մղել էր նրանց օսմանյան թուրքերի գիրկը՝ վամպիրների այդ ռհմակին դարձնելով պանթուրֆական, պանիսլամական գաղափարախոսության կատաղի հետետորդներ»: Եթե ֆաղաֆական բանաձեռի վերածննդն հեղինակի այսօրինակ դիտարկումները, ապա կստացվի հետևյալը. կրոնական հավատալիքի կամ աղանդի վերածված գաղափարախոսությունները (որոնք սովորաբար բնորոշվում են որպես «ազգային») այլ բան չեն, քան այս կամ այն խավի կամ մարդկանց խմբի համար իշխանություն ունենալու եւ պահպանելու միջոց եւ ոչ մի կապ չունեն տվյալ ժողովրդի իրական շահերի հետ:

Թուրքիայի ու թուրքերի նկատմամբ իր վերաբերմունքում հեղինակն ավելի շատ մնում է հայ պատմագրության ավանդական պատկերացումների ու գնահատականների շրջանակներում: Համենայնդեպս՝ այս դեպքում բացակայում է սովորական խաղաղասեր ժողովուրդ եւ նրա իշխող ֆաղաֆական վերնախավ բաժանումը, ինչն այնքան հստակ արտահայտված է ադրբեջանցիների դեպքում: Պատճառն, անշուշտ, այն է, որ իր նյութի բերումով առնչվում է միայն Թուրքիայի ֆաղաֆական ու ռազմական շրջանակներին: Նա (այդ շրջանի համար՝ գուցե իրավացիորեն) համոզված է, որ Թուրքիայի նպատակը պանթուրֆական գաղափարախոսության իրականացումն է, եւ այդ նախապահին հայությունը խոչընդոտ է նրա համար. «Նրանք երազում էին իրենց պանթուրֆական, պանիսլամական, գուցե եւ պանթուրանական զառանցաբներն իրագործել՝ ոչնչացնելով այս անգամ հայ ժողովրդի անդրկովկասյան հատվածը եւս: Զէ՛՛՛ որ «արիական» հայերը ճեղքվածք են ստեղծում մեկ լեզվով խոսող թուրք-թաթարական ցեղերի միջեւ՝ բաժանելով նրանց երկու հատվածի ու այդպիսով անջրպետ ստեղծում այդ ռեակցիոն, հետամնաց ցեղերի կոնսոլիդացիայի համար...»: Համապատասխան գլխի համար որ-

պես բնաբան նա մեջբերում Դավիթ Լյոյդ Ջորջի սպանիչ գնահատականը թուրքերի մասին: Եւ այնուամենայնիվ, հեղինակի խիստ բացասական վերաբերմունքը չի խանգարում, որպեսզի որոշ իրողություններ էլ ներկայացնի այնպես, ինչպես դա եղել է (անշուշտ, դրա համար տալով համապատասխան բացատրություն): Այսպես՝ Շուշի մտած թուրքական զորքերի մասին նա ասում է. «Պիտի խոստովանել, որ թուրք սպաների եւ ասկերների վերաբերմունքը հայ բնակչության եւ առանձնապես կանանց նկատմամբ զուսպ էր եւ նույնիսկ ֆաղաֆալարի: Թուրքերը ֆաղաֆ էին բերել իրենց զորքերի համեմատաբար կարգապահ եւ կիրք ստորաբաժանումներից: Նրանք ֆաղաֆ չմտցրին ադրբեջանական զինվորների, որովհետեւ նրանց վրա նայում էին արհամարհանով»:

\* \* \*

Կարելի է ասել, որ ավելի վատ է հեղինակի վերաբերմունքը անգլիացիների նկատմամբ: Դա, անշուշտ, պայմանավորված է վերջիններիս այն վարագծով, որ նրանք դրսեւորեցին Լեռնային Ղարաբաղի նկատմամբ: «Դաշնակից» անգլիացիներից Լեռնային Ղարաբաղում աներկբա սպասում էին իրենց մղումներին նպաստող եւ Ադրբեջանին զսպող ֆաղաֆականություն: Մինչդեռ ստացվեց ճիշտ հակառակը. Բաֆու մտնելուց հետո նրանց առաջին գործն այն եղավ, որ արգելեցին Անդրանիկին մտնել Ղարաբաղ: Նրանք հիմնական՝ հայկական Ղարաբաղի կարգավիճակի հարցում կանգնեցին նույն՝ թուրքական դիրքերի վրա՝ պահանջելով, որ Լեռնային Ղարաբաղն ընդունի Ադրբեջանի գերիշխանությունը: Ավելին՝ նրանք ավելի գործուն միջոցներով ու բացահայտ օժանդակում ու նպաստում էին ադրբեջանցիներին՝ թույլ տալով, որ Ադրբեջանն այդ հարցը կարողանա լուծել ընդհուպ հայկական կոտորածներ կազմակերպելու միջոցով: Եւ եթե թուրքերի դեմ, որպես թշնամու ու հակառակորդի, կարելի էր նաեւ անհրաժեշտության դեպքում դիմել զենքի, ապա «դաշնակից» անգլիացիների դեմ դա դժվար էր: Ուստի եւ անգլիական օկուպացիայի շրջանում Լեռնային Ղարաբաղն ու նրա բնակչությունն ավելի վտանգված էր, քան թուրքական օկուպացիայի օրերին: Եւ պատահական չէ Թումյանի խիստ բացասական վերաբերմունքը անգլիացիների նկատմամբ: Նա փորձում է նաեւ պատմական էֆսկուրսներով ցույց տալ, որ նրանցից այլ բան պետք էլ չէր սպասել: Անդրկովկասում նշանակված



անգլիացի գեներալներին ու այլ պատասխանատուների նա որակում է որպես «անգլիական գաղութային գամփոներ», «Ալբիոնի նենգ գավակ», «սալդաֆոն», «կատաղած բուդոգ», իսկ նրանց ֆաղափականությունը՝ «նողկալի»: Նա համոզված է, որ՝ «1918 թվի սեպտեմբերյան հայկական կոտորածները Բաֆում, հայության կրած անլուր տառապանքներն ամբողջ 1919 թվի ընթացքում՝ Ղարաբաղում, Նախիջևանում եւ այլուր՝ անգլիացիների վարած հայահալած ֆաղափականության արդյունքն էին»:

Եթե անգլիացիների դեպքում նրանց վերաբերմունքն ու գործողությունները հեղինակը բացատրում է Մեծ Բրիտանիայի վարած ավանդական ֆաղափականությամբ, ապա ռուսների դեպքում նա նման ընդհանրացում չի անում, եւ համարում է, որ Ադրբեջանին ծառայող ռուս սպաներն ավելի շատ դա անում էին զուտ անձնական շահադիտական նպատակներով: Եւ այնուամենայնիվ խստորեն դատապարտում է նրանց այդ վարքագիծը. «Չի կարելի մոռացության տալ նաեւ Ադրբեջանի բանակում ծառայության մտած եւ զգալի թիվ կազմող ռուս սպաների՝ հայությանը վնասելու նողկալի արարքները, որոնց նպատակն էր՝ այլեւայլ շահատենչ ակնկալություններով ձեռք բերել թյուրֆ իշխանավորների համակրանքն ու վստահությունը»:

Բազմաթիվ տեղերում հեղինակն իր դատողություններում ընդհուպ մոտենում է այն եզրահանգման, որ ֆաղափական գործելակերպի կարեւոր սկզբունքը **սեփական ուժերին ապավինելն** է եւ դրանց համապատասխան ֆաղափական խնդիրներ հետապնդելը: Նրա դատողություններն ու գնահատականներն ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ Թումյանը դեմ է հայ ֆաղափական մտքի այն սկզբունքին, ինչը մեր պատմագրության մեջ կոչվում է **ֆաղափական կողմնորոշում**՝ ինչպես եւրոպական, այնպես էլ՝ ռուսական: Նա մերժում է օտար ուժի ապավինելու, դրա վրա հաշվարկներ անելու, իսկ չիրականանալու դեպքում ուրիշներին մեղադրելու հայ ֆաղափական մտքի եւ պատմագրության մեջ տարածված վնասաբեր սկզբունքը: Դրա պերճախոս վկայություններից է անգլիացիների օկուպացիայի առիթով Ղարաբաղյան գործիչների մի մասի մոտ նույն այս ավանդական, հեղինակի բնութագրմամբ՝ «ստրկամիտ վստահության» մտածողության ֆենադատությունը. «...կույր հավատը եւ վստահությունն անգլիական օկուպանտների նկատմամբ դարձել էին մարդ-

կանց թուլամորթ, անհեռատես եւ անվճռական, ջլատել էին իրադրությունը նիշտ հասկանալու եւ գնահատելու կարողությունը»: Անգամ այն բանից հետո, երբ ավելի ֆան ակնհայտ էր, որ «դաշնակից» անգլիացիները նույն հետեւողականությամբ, ինչ թուրքերը հետապնդում են Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի իշխանությանը ենթարկելու ուղեգիծը եւ դա փորձում են անել նույն բռնի մեթոդներով, այս մարդիկ չհրաժարվեցին այս արատավոր սկզբունքից. «Դժբախտաբար, այդ «վստահության» կորստաբեր լինելու բավականաչափ ուշ արթնացած գիտակցությունը փոխանակ խթանելու Ազգային խորհրդին՝ հրաժարվելու իր թուլամորթ, երկրի համար կործանարար, Ղարաբաղի հնօրյա պայծառ համբավն արատավորող գործողության դատապարտելի եղանակից եւ կտրուկ շրջադարձ կատարելու իր ֆաղափականության մեջ անգլիացիների նկատմամբ, նա չշեղվեց մի անգամ ընտրած կորստաբեր ուղուց՝ շարունակելով «վստահության» իր ստրկամիտ ֆաղափականությունը»: Նույն վնասաբեր «վստահության» մասին նա բացահայտ ակնարկ ունի նաեւ Ռուսաստանի համար. եռամյա համառ պայքարից հետո ժողովուրդը հանգստացավ, երբ տեսավ, որ «Ղարաբաղի սահմաններում վերստին կանգնած էր «ապահովության» եւ «խաղաղ կյանքի» խորհրդանիշը՝ **ռուս զինվորը**», իմանալով հանդերձ, որ վերջինս եկել է լուծելու նույն՝ Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանին հանձնելու խնդիրը:

\* \* \*

Թե՛ որպես ֆաղափական գործիչ, թե՛ որպես պատմաբան Թումյանը **իրատեսության** ֆաղափական սկզբունքի ջերմ պաշտպան է: Նա շատ լավ գիտի հերոսության ու ֆաջության արժեքն ու գինը: Բայց գիտի նաեւ, որ դրանք արդյունք են տալիս միայն այն դեպքում, երբ զուգորդվում են սրբափ ֆաղափական հաշվարկով ու դիվանագիտությամբ: Եւ Բաֆոնց որպես բնաբան մեջբերված՝ «Ֆաջությունը առանց դիպլոմատիայի կորցնում է իր գործության նշանավոր մասը» խոսքը վկայում է նրա հենց այդ համոզմունքի մասին:

Ի սկզբանե ամենամեծ վտանգը Ղարաբաղի հայությունը համարում էր թուրքական զորքերի Ղարաբաղ մտնելու վտանգը, եւ դա հասկանալի էր: Պատահական չէ, որ դեռ դեպի Բաֆու թուրքական արշավանքի ժամանակ Ղարաբաղի ղեկավարությունը փորձեց կապ հաստատել Ստե-



փան Շահումյանի հետ՝ առաջարկելով համատեղ գործողություններ թուրքերի դեմ: Դա չհաջողվեց, եւ Բաֆուն գրավելուց հետո թուրքական զորքերն, ահա, Ղարաբաղի դռների մոտ են: Նրանք 1918թ. սեպտեմբերի վերջին վերջնագիր են ներկայացնում՝ անվերապահ ենթարկվել Ադրբեջանին եւ թույլ տալ թուրքական զորքերի մուտքը Լեռնային Ղարաբաղ:

Ունեցած տեղեկությունների հիման վրա միջազգային իրավիճակի ճիշտ գնահատումը՝ մասնավորապես գերմանա-թուրքական խմբավորման մասին ստացված տեղեկություններն օգնում են սթափ գնահատել իրավիճակը եւ մշակել թուրքերի հետ վերաբերմունքի ճշգրիտ տակտիկա, որը Թումյանը ձեռակերպում է այսպես. «... այդ անցողիկ ժամանակաշրջանում անհրաժեշտ էր գործել մեծ հետադարձությամբ, չսթել իրադրությունը, խուսափել տանկական ուժերի հետ ընդհարվելուց, ձգտելով ամեն կերպ բոլոր հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով: Բայց միաժամանակ լինել միշտ պատրաստ՝ հարվածին հարվածին պատասխանելու համար»: Սա էր ֆաղակական ղեկավարության որոշումը, որպես ոչ թե զգացումների, այլ իրատեսության եւ պատասխանատվության բնական դրսեւորում: Մինչդեռ բոլորովին այլ կերպ էին տրամադրված նույն՝ թուրքերի վերջնագրին պատասխանելու առիթով հավաքված Ղարաբաղի հայության 3-րդ համագումարի շուրջ 300 պատգամավորները, որ միաձայն ու անգիշխում պահանջում էին՝ «Թուրքերի հետ հաշտվել չենք ուզում, այլ կռիվ, կռիվ...»: Սա էր սովորական ժողովրդի ձգտումն էր՝ որպես առաջին հերթին զգացումներով առաջնորդվող, նույնքան բնական, դիրքորոշում: Եւ համագումարի ֆառօրյա նիստերն այլ բան չէին, քան մի կողմից՝ ֆաղակական իրատեսության ու սթափ հաշվարկի, մյուս կողմից՝ առանց նման հաշվարկի արկածախնդրության վերածվող անձնագոհության պատրաստ մարդկանց բնական հայրենասիրության անգիշխում պայքար: Եւ պետք էր ոչ թե դրանց մեջ ընտրություն կատարել, այլ գտնել դրանց զուգորդման, համատեղման ձևեր: Եւ զինվորական գործերի կառավարիչ Թումյանն էր այն մարդը, որ վերջապես կարողանում էր կոտրել շուրս օր «հուզմունքից ու զայրույթից եռացող դանիկի» դիմադրությունը: Համագումարը վերջիվերջո համաձայնում է թույլ տալ թուրքական սահմանափակ ուժերի մուտքը Շուշի:

Հաշվարկը ճշգրիտ էր կատարված. Ղարաբաղի կառավարության թույլտվությամբ Շուշի մտած թուրքական սահմանափակ զորաբանակը

չկարողացավ դուրս գալ ֆաղակից, իսկ նման փորձերն ավարտվեցին կտրուկ հակահարվածով: Թուրքական օկուպացիան, որ տեւեց 22 օր, եւ ըստ էության սահմանափակվում էր Շուշի ֆաղակով, այն լավագույն տարբերակն էր, որով հնարավոր եղավ ժողովրդին հեռու պահել մեծամեծ արհավիրներից, որ կարող էր բերել բացահատ առնակատումը: Դա հնարավոր եղավ դիվանագիտության, ֆաշության ու իրատեսական հաշվարկի զուգակցմամբ:

Քաղաքական իրատեսությունը հաղթանակեց նաեւ դրանից մոտ մեկ տարի անց, երբ 1919թ. օգոստոսի կեսերին, Ղարաբաղի հայության 7-րդ համագումարում: Նախորդ համագումարները միշտ արձանագրել էին, որ անընդունելի է Ադրբեջանի գերիշխանությունը՝ «ինչ ձեռով էլ նա արտահայտված լինի»: Բայց ահա լայնամասշտաբ առնակատման իրական վտանգի դեմ հանդիման, երբ ռազմական ու տնտեսական ռեսուրսների հաշվարկները ցույց տվեցին, որ նման առնակատումն անիմաստ է եւ միայն կորուստների է հանգեցնելու, համագումարը որոշեց «ժամանակավոր համաձայնությամբ» ճանաչել Ադրբեջանի գերիշխանությունը՝ սպասելով Փարիզի խաղաղության կոնֆերանսի վերջնական վճիռին:

\*\*\*

Իրատեսության սկզբունքի ջատագով ֆաղակական գործիչն ու պատմաբանը, բնականաբար, պետք է մերժեւ արկածախնդրությունը, ինչպիսի հայրենասիրական պանդանոսով էլ այն հանդես գալու լինեւ:

Թումյանն այդպիսի արկածախնդրական նախաձեռնություն է համարում այն գործողությունները, որի հետեւանով Լեռնային Ղարաբաղում 1920թ. մարտ-ապրիլ ամիսներին տեղի ունեցավ ծավալուն արյունալի պատերազմ՝ անդառնալի հետեւանքներով: Խոսքը վերաբերում է Հայաստանի հանրապետության դրդմամբ մարտի 23-ից Ադրբեջանի դեմ սկսված ապստամբությանը:

Ընդհանուր առմամբ զուսպ է հեղինակի վերաբերմունքը Հայաստանի հանրապետության կառավարության նկատմամբ, չնայած վերջինս այդ ամբողջ ընթացքում չկարողացավ էական որեւէ օգնություն ցույց տալ Լեռնային Ղարաբաղին: Եւ դա պայմանավորված էր ոչ միայն միջոցների բացակայությամբ: Հանրապետության կառավարությունն ան-



գամ զգուշանում էր Լեոնային Ղարաբաղից իր համար քիչ թե շատ հավաստի տեղեկատվության հնարավորություն ստանալու միջոցներ ստեղծելուց. «Հայաստանի հանրապետական կառավարությունը տագնապով հետեւում էր Ղարաբաղի շուրջը տեղի ունեցող իրադարձություններին: Նա հնարավորություն չունեւ կամ վախենում էր օսմանյան հրամանատարությունից՝ անմիջական կապ ստեղծել Ղարաբաղի հետ եւ այնտեղից ստանալ անհրաժեշտ ինֆորմացիա, ուստի ստիպված էր բավականանալ իր դիվանագիտական ներկայացուցիչներից կամ կողմնակի աղբյուրներից ստացած հատուկտոր եւ հանախ հակասական տեղեկություններով»:

Թումյանը Լեոնային Ղարաբաղը Հայաստանի անբաժան մասն է համարում եւ այլ կերպ չի պատկերացնում նրա նակատագիրը: Նա գոհունակությամբ է արձանագրում, որ Հայաստանի կառավարությունը վերջապես, 1919թ. վերջին որոշում է՝ «գործնական ֆայլեր անել հոծ հայությամբ բնակեցված եւ իր անկապտելի սեփականությունը կազմող երկրամասի փրկության համար»: Նա համոզված է, որ դրա համար գոյություն է ունեցել կառավարական լուրջ մի ծրագիր, որով Զանգեզուրում ամրանալուց հետո նախատեսվել է Լեոնային Ղարաբաղում անհրաժեշտ նախապատրաստություններ իրականացնել եւ ապստամբություն սկսել: Իսկ դրանից հետո Զանգեզուրից ստացված օգնությամբ Ղարաբաղը պետք է միացվեր Հայաստանին: Այս ծրագրի իրականացումը հանձնարարվել է ռազմական մինիստր Ռուբեն Տեր-Մինասյանին: Մինչդեռ վերջինս, մի կողմ թողնելով դա, որոշել էր իրականացնել «իր կործանահար ծրագիրը»: Ըստ Թումյանի՝ Տեր-Մինասյանի առաջնահերթ նպատակը ոչ թե Ղարաբաղի միացումն էր Հայաստանին, ինչ նրան հանձնարարված էր, այլ՝ Ղարաբաղը կրակի մեջ նետելու գնով Նախիջևանը գրավելը. «Եւ, Նախիջևանի ուղղությամբ իր առաջիկա գործողությունների ազատությունը Ադրբեջանի անխուսափելի ռազմական միջամտությունից ապահովելու համար, Հայաստանի ռազմական մինիստրը մտածեց օգտագործել Ադրբեջանի եւ Հայկական Ղարաբաղի միջեւ ստեղծված լարված հարաբերությունները եւ Ղարաբաղի հայության զինված ուժերը նետել Ադրբեջանի դեմ առանց նախապես ապահովելու այդ ուժերը զինամթերքով եւ պարենով»: Թումյանը դեմ է ոչ թե Ադրբեջանի դեմ ապստամբելուն (որ այդ օրերին ինքն էր տենդագին նախա-

պատրաստվում Ղարաբաղը գրավելու), այլ՝ որ դա իրականացվում էր առանց անհրաժեշտ նախապատրաստության, որպես «հախուռն, լրջորեն չկշռադատված ծրագիր»: Ընդ որում՝ Հայաստանի ռազմական մինիստրը ոչ միայն չէր փորձել խորհրդակցել Ղարաբաղի վիճակին ֆաշատեղյակ եւ այնտեղից արտաքսված, երեսնում գտնվող գործիչների հետ (որոնցից մեկն էր նաեւ Թումյանը), այլեւ արգելքներ էր հարուցել նրանց՝ Ղարաբաղ վերադառնալուն՝ «լավ գիտենալով, որ նրանք պիտի վճռականորեն դեմ կանգնեին իր գործակալների արկածախնդրական ձեռնարկումներին»: Իսկ այդ արկածախնդրական ձեռնարկումների գազաբնակետ նա համարում է 1920թ. մարտի լույս 23-ի գիշերը Շուշի եւ Խանիկենդի (Ստեփանակերտ) ֆաղափներում տեղակայված ադրբեջանական կայազորների վրա կատարված անակնկալ հարձակումները, որ անդառնալի հետեւանքներ ունեցավ հատկապես Շուշիի հայության համար:

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ



## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Մինչեւ օրս, որքան մեզ հայտնի է, չկա գրական հրապարակի վրա որեւէ լուրջ ուսումնասիրություն կամ պարբերական մամուլում լույս տեսած թեկուզ մի հոդված՝ նվիրված Ղարաբաղի 1917-20 թվերի դեպքերին: Այդ հանգամանքն ինքնին լայն ասպարեզ է բացում հերյուրելու զանազան մտացածին եւ հաճախ միտումնավոր առասպելներ հիշյալ տարիների դեպքերի շուրջը:

Ընդառաջելով մտերիմ բարեկամների եւ ընկերների ցանկությանը, հեղինակը ձեռնարկեց գրելու ներկա ակնարկը՝ նվիրված Լեոնային Ղարաբաղի հայության վերապրած պատմական ամենածանր ժամանակաշրջաններից մեկի՝ 1917-20թթ. դեպքերին:

Այդ տարիների իրողություններն, ըստ էության, այն տանջալից, երեսական դրվագներով հարուստ ազատագրական պայքարն է, որ հայկական Ղարաբաղը 1918թ. սկզբից մինչեւ 1920թ. ապրիլ ամիսը, մինչեւ երկրի խորհրդայնացումը, մղել է մուսավաթական-բեկական Ադրբեջանի եւ նրա հովանավորողների դեմ՝ պաշտպանելով իր ինքնորոշման իրավունքը, վերամիավորվելու իր մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ:

Հայկական Ղարաբաղը եւ նրա հետ միասին ամբողջ հայությունն, իր մտավորականության լավագույն մասի գլխավորությամբ, ստիպված է շարունակել այդ պայքարը նաեւ ներկայումս՝ հարմարեցնելով իր ջանքերը եւ պայքարի միջոցները (դժբախտաբար՝ առայժմ միայն ապարդյուն կերպով) ժամանակակից պայմաններին ու պահանջներին:

Իբրեւ Ղարաբաղի հիշյալ տարիների իրադարձությունների ականատես եւ հաճախ գործուն մասնակից, հեղինակը, դեպքերը նկարագրելիս, բնականաբար, պիտի աշխատեր հենվել գլխավորապես իր հիշողու-



թյունների վրա՝ ձգտելով լինել ըստ ամենայնի օբյեկտիվ, խուսափելով ավելորդ կամ անհետաքրքիր մանրամասնություններից եւ, մանավանդ, տեղի ունեցած անցքերի մեջ իր համեստ դերը ընդգծելու կամ ցուցադրելու տգեղ ձգտումներից:

Սակայն հեղինակի համար անհնարին էր, ֆառասունից ավելի տարիներ անցնելուց հետո, վերհիշել բոլոր դեպքերն իրենց մանրամասնություններով, հաջորդականությամբ եւ ժամանակներով: Այդ պատճառով նա ստիպված է եղել շատ բան ստուգել, նշտել եւ լրացնել Հայաստանի Պետական պատմական կենտրոնական արխիվի ֆոնդերում գտնված համապատասխան նյութերով եւ առանձին հայրենակիցների մոտ եղած փաստաթղթերով:

Աշխատության առաջին մասը նվիրված է այն դեպքերի նկարագրությանը, որոնք տեղի են ունեցել մասամբ 1917թ. եւ գլխավորապես 1918թ. սկզբից մինչեւ նույն տարվա հոկտեմբեր ամսվա վերջը, այսինքն՝ մինչեւ օսմանյան թուրքերի Ղարաբաղից ֆաշիզմը:

Այդ մասը շարադրելու համար հեղինակին մեծապես օգնել է Ղարաբաղի նախկին գործիչներից մեկի՝ Արամ Միֆայեյանի, Թիֆլիսի հայոց ազգային խորհրդին ներկայացրած զեկուցագիրը, որ վերաբերում է 1917թ. եւ գլխավորապես 1918թ. Ղարաբաղի դեպքերին: Միֆայեյանն այդ զեկուցագիրը գրել եւ ներկայացրել է Թիֆլիսում 1918թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին<sup>2</sup>:

Նույն ժամանակում է գրված մի ուրիշ զեկուցագիր, ծավալով անհամեմատ փոքր (4 էջ), որոշ աննշտություններով: Այդ զեկուցագիրը, որ կազմված եւ ստորագրված է Ղարաբաղի երեք հայ սպաների կողմից, իր ժամանակագրությամբ եւ պարունակած տեղեկություններով կազմում է Միֆայեյանի զեկուցագրի շարունակությունը եւ դրա հետ միասին ներկայացված է Թիֆլիսի ազգային խորհրդին<sup>3</sup>:

Միֆայեյանի հապենպ գրված զեկուցագիրը, իր որոշ թերություններով հանդերձ<sup>4</sup>, շարադրված լինելով զեկուցագրի նյութը կազմող դեպքերից շատ շանցած, այսինքն՝ նկարագրված դեպքերի տակավին թարմ

<sup>2</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 221, գ. 40, ք. 19-30:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Ամսաթվերի եւ մի շարք կարեւոր դեպքերի ու մանրամասնությունների բացակայություն, որոշ փաստերի սխալ բացատրություններ եւ այլն:

տպավորությունների տակ, օգնել է հեղինակին նշտելու մի շարք դեպքերի հաջորդականությունը, որոշելու նրանց մոտավոր ժամանակը եւ վերհիշելու մոռացված կարեւոր իրողություններ:

Երկրորդ փաստաթուղթը եւս օգնել է վերհիշելու եւ արձանագրելու մի քանի փաստեր, որոնք վերաբերում են օսմանյան թուրքերի ձեռքով Շուշում կատարված հայերի բանտարկություններին, ֆաղափի տնտեսական վիճակին եւ այլն:

Աշխատության երկրորդ մասը վերաբերում է հիմնականում 1918 թվի վերջին երկու ամիսներում եւ 1919թ. ընթացքում անգլիական իշխանությունների՝ Ղարաբաղում վարած հայահալած ֆաղափականությանը: Այդ մասը շարադրված է գլխավորապես արխիվային տվյալների եւ մասամբ հեղինակի հիշողությունների ու առանձին փաստաթղթերի հիման վրա:

Անդրանիկի՝ դեպի Ղարաբաղ ձեռնարկած արշավի ժամանակ կատարված մի քանի փաստերը (Ստեփան Սարգսյանի (Ստեսար) սպանությունը, ֆրդերի անձնատուր լինելու մանրամասնությունները) հաղորդել են հեղինակին նույն օրերին Շուշի այցելելու եկած՝ Անդրանիկի մի քանի զինակից ընկերները եւ Ղարաբաղի սպաները: Իսկ կոզակների այցը Անդրանիկին Արմավիր ֆաղափում հաղորդել է դեպքին ականատես ընկ. Արամ Տոնյանը:

Երրորդ մասը նվիրված է Ղարաբաղի 1920 թ. մարտ-ապրիլյան ապստամբության համառոտ նկարագրությանը:

Այդ մասը հեղինակը շարադրել է հոգեկան ծանր ապրումներով: Չէ՞ որ այդ ապստամբության ժամանակ էր, որ հայությունը կորցրեց անմահ Շուշին, հիմնիվեր կործանվեց նրա ամենածաղկուն, հարուստ, չճանաչված մասը՝ հայկական ֆաղափամասը: Այդ արյունահեղ մարտերի օրերին էր, որ Ղարաբաղը տվեց մարդկային մեծ զոհեր, ավերվեցին բազմաթիվ բարեշեն գյուղեր, բայց եւ այդպես նա ձեռք չբերեց այն, ինչի համար լարված պայքար էր մղել դեռես անցած երկու տարիներում: 1920թ. «մահացու թռիչքով» Ղարաբաղը ականա կատարեց վերջին հուսահատական փորձը, բայց ավա՛ղ, դարձյալ ապարդյուն:

Երրորդ մասը շարադրելու համար հեղինակը մասամբ օգտագործել է Հայաստանի Պետական արխիվից ֆաղած նյութերը: Նա օգտվել է գլխա-



վորապես իր հիշողություններից՝ ըստ կարելիության հրապարակ հանելու  
ապիկար գործիչների կորստաբեր խաղերը և ապստամբության օրերին  
կատարված հակատագրական սխալները:

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ



## 1. ՌՈՒՍԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՐԱՏԻ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ. ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ

1917 թ. փետրվարյան հեղափոխությունն ալեկոծեց նաև Շուշի քաղաքի հայ հասարակության քաղքենիական խաղաղ, միալար կյանքը: Սկզբի օրերի մասսայական հախուռն միտինգներին փոխարինեց քաղաքական հոսանքների գաղափարական բուռն պայքարը, դիսպուտները, այս կամ այն կուսակցության մտավոր ուժերի հրապարակային դասախոսությունները, զեկուցումները, որ իբրեւ կանոն վերջանում էին փոթորկալից բանավեճերով, որոնք այնուհետեւ տեղափոխվում էին փողոցները, հրապարակները, զբոսայգիները, ակումբները, ընտանիքները:

Նոր ծնունդ առած քաղաքական այլեւայլ ուղղությունների արտահայտիչ թերթերը մեծ աշխույժով արձագանքում էին գաղափարական բանավոր պայքարին իրենց սուր պոլեմիկական հոգվածներով<sup>5</sup>:

<sup>5</sup> Փետրվարյան հեղափոխությունից հետո Շուշում սկսեցին լույս տեսնել տարբեր քաղաքական հոսանքների արտահայտիչ մի շարք թերթեր: Իրավարան Լեւոն Վարդապետյանի նախաձեռնությամբ հիմնվեց «Փայլակ» շաբաթաթերթը, որի խմբագիր դարձավ, հետագայում բանասեր, Խաչիկ Սամվելյանը: Այդ թերթին հավասարապես աշխատակցում էին սոցիալ-դեմոկրատիայի երկու թեւերը՝ բոլշևիկները եւ մենշևիկները: Բոլշևիկները հետագայում ունեցան իրենց առանձին թերթը «Նեցուկ» անունով, որ հիմնել ու խմբագրում էր պատմաբան Աշոտ Գ. Հովհաննիսյանը: Էսեռներն էլ ունեին իրենց թերթը, թեւ նրանք չէին պատմաբան Աշոտ Գ. Հովհաննիսյանը: Կադետներն էւս ետ չմնացին. նրանք էլ սկսեցին հրատարակել ռուսերեն «Шушакский листок» շաբաթաթերթը: Բոլոր թերթերը գաղափարեցին լույս տեսնել 1917 թ. նոյեմբեր ամսից սկսած: «Ապառաժը» միայն վերսկսեց լույս տեսնել 1919 թվի մարտից, բայց շուտով դադարեց:



Ուժեղ թափով սկսվեց եւ ծավալվեց արհեստակցական շարժումը: Քաղաքում կազմակերպվեցին հայկական ազգային եւ ռուսական պետական դպրոցների ուսուցիչների, արհեստավորների, պետական այլեւայլ հիմնարկների ծառայողների միություններ: Գավառում գործող մետաքսաթելի մի շարք գործարանների բանվորները եւս միացան եւ կազմակերպվեցին իրենց արհեստակցական միությունը:

Ռուսաստանի այլ քաղաքների պես Շուշում նույնպես կազմակերպվեց Գործադիր կոմիտե: Քաղաքում գտնվող 532-րդ հետեւակային Սիմֆերոպոլի գործամասը եւ ճակատից վերադարձած զինվորները կազմեցին զինվորական դեպուտատների խորհուրդ, որի միակ գործն այն եղավ, որ կազմակերպեց մի քանի միտինգներ, ուր հանդես եկան իրենց կրքոտ ճառերով նաեւ քաղաքական խմբակցությունների ներկայացուցիչները:

Բացի Գործադիր կոմիտեից, ստեղծվեց նաեւ Գավառական կոմիսարիատ, որը փոխարինում էր ցարական օրերի գավառական վարչությունը: Շուշու քաղաքային վարչությունը լուծարվի չենթարկվեց: Նա շարունակեց պահպանել իր գոյությունը քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ: Դատական մարմիններից շարունակում էր գործել Շուշու հաշտարար բաժինը: Թե՛ Գավառական կոմիսարիատում եւ թե՛ հաշտարար բաժնում շարունակում էին պաշտոնավարել նախկին չինովնիկները՝ պոկելով գլխարկներից ցարական կոկարդները:

Վարչական եւ դատական մարմիններն առաջվա նման սպասարկում էին Զարաբաղի բնակչությանն անխտիր՝ թե՛ հայերին եւ թե՛ մուսուլմաններին:

Քաղաքում թյուրքական վերնախավը, բաղկացած գլխավորապես վաճառականներից, բեկերից եւ մեծ մասամբ բեկական դասին պատկանող ինտելիգենցիայից, կազմել էր, այսպես կոչված, «Ազգային կոմիտե», որը հավակնություն ուներ իրեն նաեւ գավառի մուսուլմանության ներկայացուցիչը համարելու, թեպետեւ քաղաքի պատերից դուրս նա չէր օգտվում որեւէ հեղինակությունից:

Ինչ վերաբերում է հայ բնակչությանը, մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը նրանում այդպիսի ազգային հատուկ կոմիտե ստեղծելու կարիք չգգացվեց:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասի կառավարման համար ժամանակավոր Կառավարության ստեղծած Հատուկ անդրկովկասյան կոմիտեն կարճ ժամանակից հետո վրաց մենշևիկների եւ թյուրք մու-

սլավականների բլոկի նախաձեռնությամբ վերածվեց Անդրկովկասյան Կոմիսարիատի (կառավարության): Կառավարական այդ նորաստեղծ մարմինը թեպետեւ չհայտարարեց Անդրկովկասն անկախ, քաղաքականապես բաժանված Ռուսաստանից, բայց եւ չճանաչեց Ռուսաստանի խորհրդային կենտրոնական իշխանությունը եւ որոշեց թե՛ ներքին եւ թե՛ արտաքին քաղաքականության ոլորտներում լինել միանգամայն անկախ:

Կոմիսարիատի գոյությունը, սակայն, իբրեւ Անդրկովկասի կենտրոնական միասնական իշխանություն, լոկ անվանական էր: Բաղկացած լինելով իր մեծամասնությամբ բեկական-ազնվականական տարրերից՝ նա անդրկովկասյան ժողովրդական զանգվածների մեջ չկարողացավ ստեղծել որեւէ հեղինակություն եւ հենարան ու այդ պատճառով չկարողացավ դառնալ Անդրկովկասի ժողովուրդների համար գործունակ, իրական, միասնական իշխանություն: Էսեռ Ներուշեի մշակած հողային օրենքը Կոմիսարիատը չկարողացավ իրագործել թյուրք բեկերի եւ խաների կատաղի ընդդիմության եւ սպառնալիքների պատճառով: Այդ դեռ բավական չէր, գյուղացիներից պահանջվեց հարկերը վճարել 1916 թվի դրույքներով:

Այնուհետեւ նույն ազնվականական-կալվածատիրական տարրերի ստեղծած Անդրկովկասյան սեյմը, որ Կոմիսարիատին կից մի տեսակ պառլամենտի դեր պիտի կատարեր, նույնիսկ որեւէ լուրջ փորձ չարեց կազմակերպելու տեղերում իշխանության գործունակ մարմիններ: Նրկրում գլուխ բարձրացրեց անիշխանությունը: Խզվեց երկաթուղային կապը Թիֆլիսի եւ Բաքվի միջեւ:

\* \* \*

Լեռնային Զարաբաղն այդ ժամանակվանից կտրվեց արտաքին աշխարհից եւ բոլորովին մեկուսացավ: Շուտով խզվեց նաեւ փոստ-հեռագրական կապը դրսի հետ: 1917 թ. դեկտեմբերին ճակատից վերադարձող զարաբաղցի հայ զինվորները եվլախ-Շուշի խճուղու վրա ենթարկվեցին բեկական բանդաների հարձակման եւ զինաթափ արվեցին, տեղի ունեցան զինվորների սպանություններ:

Քաղաքային եւ գավառական վարչական եւ դատական մարմիններն սկսեցին արագորեն կազմալուծվել: Շուշու Գործադիր կոմիտեն մատնվեց անգործության: Անգործության մատնվեց նույնպես Գավառական կոմիսարիատը:



Դատական եւ վարչական մարմինների քայքայման հետեւանքով փողոցներով եղող քաղցած շինությունների մի ստվար բազմություն:

Կազմավորվեց նաեւ Ղարաբաղի հայ բնակչության պարենավորման գործը: Դեռեւս հին կարգերի պայմաններում Լեռնային Ղարաբաղի հայ գյուղացին տառապում էր սակավահողությունից ավելի, քան Անդրկովկասի որեւէ մի այլ վայրի գյուղացի:

Խորհրդային Ադրբեջանի 1921 թվի գյուղատնտեսական վիճակագրության տվյալներով Լեռնային Ղարաբաղի 426.249 հեկտար ընդհանուր տարածություն 37 տոկոսը ծածկված էր անտառներով ու մացառներով, 37 տոկոսն անօգտագործելի հողեր էին, 10 տոկոսը՝ արոտատեղիներ, եւ միայն 16 տոկոսը՝ ցանքսերի համար պիտանի հողեր: Այդ 16 տոկոս կազմող հողերից ամբողջ Ղարաբաղում ջրովի էր ընդամենը 17 տոկոսը, մնացած 83 տոկոսը անջրդի հողեր էին: Եւ զարմանալի չէ, որ այդ պայմաններում հացահատիկի ընդհանուր բերքը հազիվ կարողանում էր 200 հազարից ավելի հայ գյուղական բնակչության բացարձակ մեծամասնության կարիքը բավարարել 3, կամ, ամենաշատը, 4 ամիս միայն<sup>6</sup>: Ամենասակավահողը երկու շրջաններն էին՝ Խաչենը եւ մանավանդ Դիզակը: Դրանով պիտի բացատրել, որ Հայկական Ղարաբաղում մինչեւ Առաջին համաշխարհային պատերազմը գործող մի շարք մետաքսաթելի գործարաններից Խաչենում եւ Դիզակում տեղավորված են եղել գրեթե բոլորը՝ այդ շրջաններում գոյություն ունեցող բանվորական ազատ ձեռքերի առատության պատճառով:

Բացի սակավահողությունից, հողագործական կուլտուրայի մակարդակն էլ ցածր էր: Օգտագործվող հողերի 60 տոկոսը ցել էր: Կանոնավոր ցանքաշրջանառության սխառմին անծանոթ էր Ղարաբաղի հողագործը: Հողի քանակի եւ որակի տեսակետից բացառություն էին կազմում նախալեռնային գոտու եւ հատկապես Զրաբերդի հայկական գյուղերից շատերը, որոնք վարելահողեր ունեին դաշտային մասում եւ վատ չէին ապահովված հացով: Զրաբերդի շրջանն էր, որ Լեռնային Ղարաբաղում ամենից շատ վարելահողեր եւ այգիներ ուներ, իսկ այդ հողերի եւ այգիների մի զգալի մասն էլ ջրովի էր: Ղարաբաղի հայ գյուղական բնակչության սակավահողության մասին խոսելով ընդհանրապես, մենք, իհարկե, աչքաթող չենք անում յու-

<sup>6</sup> Սեյրանյան Գ., Ղարաբաղի տնտեսական կյանքը եւ նրա հեռանկարները, Թիֆլիս, 1928թ., էջ 16: Ղարաբաղի հողային ընդհանուր տարածությունը հեղինակը ցույց է տվել դեպատիսներով (ըստ վիճակագրության), մեզ մոտ դեպատիսները վերածված են հեկտարների:

բաժանչուր գյուղի մեջ գոյություն ունեցող, այսպես կոչված, «ունեւոր» ընտանիքներին, որոնք սեփական վարելահողերի որակի եւ քանակի տեսակետից համեմատաբար լավ պայմանների մեջ էին գտնվում: Այդպիսի գյուղական ընտանիքները տարվա ընթացքում ընդհանուր առմամբ ապահովված էին լինում հացով, հաճախ նույնիսկ օգնում էին իրենց կարիքավոր համագյուղացիներին եւ երբեմն ցորեն տանում Շուշի վաճառելու<sup>7</sup>:

Հացով ապահովված լինելու տեսակետից խոսք չէր կարող լինել, իհարկե, հայ կալվածատերերի՝ Դոլուխանովների, Հասան-Ջալալյանների, Մելիք-Քեզլարովների, Ավան-Յուզբաշյանների, այլեւ Ղարաբաղի հայ բազմաթիվ հողագործի հաշվին ռուս իշխանության կողմից լավորակ հողերով առատորեն պարգևատրված մուսուլման կալվածատերերի՝ Ադիգյուզարեկովների, Վելիբեկովների, Ահմեդ աղաների մասին: Դրանց շտեմարանները միշտ էլ լիքն են եղել հացով: Կարիքի անողորմ ճիւղաններում հեծողը գյուղի բացարձակ մեծամասնությունն էր՝ հայ աշխատավոր գյուղացիությունը:

Մինչեւ 1917-20 թվերի ծանր եւ տագնապալի ժամանակները, հայ շինականը ստիպված էր պակասորդ հացը ձեռք բերել իր այգու, բանջարանոցի, մեղվանոցի եւ այլ հասույթներից հայթայթված միջոցներով Շուշու, Ադդամի, Թարթարի, Ջեբրայիլի շուկաներում կամ հարեւան մուսուլման գյուղացիներից: Հաճախ նաեւ ուշ աշնանը կամ ձմեռը՝ բանվորություն անելով կամ գիտցած արհեստը բանեցնելով, եւ կամ ամառը, երբ դեռ հասունացած չէին Ղարաբաղի լեռնալանջերի արտերը, մինչդեռ եռում էր բերքահավաքը դաշտային մասում, իջնելով մուսուլման գյուղերը՝ օգնելու հունձին կամ խոտհարքին<sup>8</sup>:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Շուշու քաղաքային

<sup>7</sup> Հայ հողագործների այդ փոքրաթիվ կատեգորիան, պիտի ասել, որ իր տնտեսական դրությունը եւ հողերի քանակի ու որակի տեսակետից շատ եւ շատ ետ էր մնում անգամ ռուս միջակ գյուղացիներից: Չնայելով դրան, այդ կատեգորիայի հայ գյուղացիների մեծ մասին ռուս «կուլակներին» հավասարեցնելով, ստալինյան ժամանակաշրջանում ենթարկվեցին ամեն տեսակի զրկանքների, բռնությունների եւ հալածանքների:

<sup>8</sup> Դիզակի, Խաչենի, Վարանդայի եւ մյուս շրջանների գրեթե բոլոր գյուղերում կային բազմաթիվ քարտաշներ, որմնադիրներ, ատաղձագործներ եւ այլ արհեստ իմացողներ, որոնք գյուղատնտեսական տարին վերջանալուց հետո իրենց արհեստն էին բանեցնում գյուղերում կամ քաղաքներում: Ամառային ամիսների ընթացքում հայ գյուղական ընտանիքներից շատերը ժամանակ էին գտնում զբաղվելու նաեւ շերամապահությամբ:







Քաղաքում հասարակական կարգի հսկողությունը, քաղաքացիների կյանքի եւ գույքի ապահովությունը մատնվեց բախտի քմահաճույթին: Կամաց-կամաց սկսեցին գլուխ բարձրացնել հանցագործ, բախտախնդիր տարրերը: Քաղաքում օր-ցերեկով տեղի էին ունենում սպանություններ՝ վրեժխնդրության, կողոպուտի եւ այլ շարժառիթներով:

Դրությունն ավելի սրվեց եւ տագնապը սաստկացավ, երբ քաղաքի հայկական մասում տեղավորված կայազորը՝ ռուսական 532-րդ հետեւակային Սիմերիայան զորամասը՝ բաղկացած մոտ 500 զինվորներից, որին միացել էր նաեւ ռուս-պարսկական սահմանից եկած 6-րդ սահմանապահ գնդի մի զորամաս, դուրս եկավ Շուշուց՝ Ռուսաստան մեկնելու մտադրությամբ:

\* \* \*

Ուշագրավ են ռուսական այդ զորամասի՝ Շուշուց հայրենիք մեկնելու հետեւյալ մանրամասնությունները:

Զորամասի մեկնելուց առաջ քաղաքի հայ մտավորականության ներկայացուցիչները մի քանի օր շարունակ ամեն կերպ հորդորում եւ աշխատում էին համոզել ռուս զինվորներին եւ սպաներին՝ հրաժարվել քաղաքը լքելու իրենց մտադրությունից, այլ մնալ այնտեղ, մինչեւ Ռուսաստանում եւ Անդրկովկասում կխաղաղվի եւ կնորմալանա քաղաքական իրադրությունը, եւ ճանապարհներն անվտանգ կդառնան: Ռուս զինվորներին նախազգուշացրին, որ Աղդամ-Եվլախ խճուղու վրա վխտում են բեկական զինված հորդաները, որոնք ոչ միայն կզինաթափեն նրանց, այլեւ կենդանի բաց չեն թողնի, ինչպես այդ շարունակ տեղի էր ունենում Թիֆլիս-Բաքու երկաթգծի վրա՝ Կովկասյան ճակատից անկարգ երթով հայրենիք վերադարձող ռուս զինվորների հետ: Զորամասին խոստացվեց մնալու դեպքում սննդի եւ այլ կարիքների հնարավորության չափ ապահովություն: Ռուս զինվորները, սակայն, մնացին իրենց որոշման մեջ անդրգվելի: Նրանց ոչ մի կերպ հնարավոր չեղավ համոզել հրաժարվելու իրենց ճակատագրական վճռից: Նրանք կտրականապես եւ վիրավորական արտահայտություններով մերժեցին Շուշու հայ բնակչության ներկայացուցիչների վերջին առաջարկությունը եւ՝ հանձնել սպառազինության գեթ մի մասը՝ քաղաքի հայկական մասում տեղական ուժերով պահակազոր կազմակերպելու համար: Ռուս զինվորները չկամեցան համոզվել, որ մուսուլմանների հոծ բնակչության միջով զինված անցնելն ինքնին խիստ վտանգավոր էր:

Այդ բոլորից հետո, քաղաքի հայ հասարակությունն, այնուամենայնիվ, առանց ատելության, թշնամանքի կամ դժգոհության որեւէ արտահայտություն թույլ տալու ռուս զինվորների նկատմամբ, անշափ մեծահոգի գտնվեց եւ տնտեսական սուղ պայմաններում, երբ քաղաքը պարենավորման սուր նշանակեցին էր ապրում, ճոխ եւ սիրալիր հյուրասիրություն ցույց տվեց բոլոր զինվորներին եւ սպաներին, ու ապա մարդիկ նշանակվեցին, որոնք զորամասն անվտանգ մինչեւ Ասկերան հասցրին, որտեղից ռուս զինվորները շարունակեցին իրենց ճանապարհը դեպի Աղդամ-Եվլախ:

Այնուհետեւ այդ զորամասի ճակատագրի մասին սկսեցին շրջել հակառակ լուրեր: Ամիսներ հետո միայն վիճակվեց տեղեկանալ, որ Աղդամով անցնելու ժամանակ ռուս զինվորները ենթարկվել էին մուսուլմանական «Դիկայա դիվիզիայի» զինվորների եւ բեկական հորդաների հարձակմանը եւ զինաթափ արվել մինչեւ վերջին փամփուշտը՝ տալով շատ սպանվածներ: Իսկ մի քանի տասնյակ կենդանի մնացածներից կողոպտել էին նրանց հագուստներն ու կոշիկներն անգամ: Եւ ռուս զինվորները մերկ, արյունոտած ոտքերով, ցրտահար մարմիններով ու քաղցած, հազիվ կարողացել էին հասնել Եվլախ: Նույն բախտին էին արժանացել նաեւ Կարիազի ու Ջերբալիից Մուղանի դաշտով դեպի Եվլախ գնացող ռուսական զորամասերը:

\* \* \*

Օրը օրին սրվում էր իրադրությունը նաեւ շրջաններում: Հայկական Ղարաբաղը Գանձակի հետ կապող լեռնային միակ ճանապարհը Ջրաբերդով անցնող ուղեմասում դարձավ հայ բանդիտական խմբերի շահատակությունների ասպարեզ:

Կովկասյան ռազմաճակատի կազմալուծման հետեւանքով ռուսական զորամասերի հետ տուն վերադարձող ղարաբաղցի հայ զինվորներն էին գլխավորապես, որ դառնում էին այդ ավազակախմբերի գոհը: Կուսապատ գյուղացի Զախարբեկով Կոլյան, Նեսանը, մեծշենցի վամպիր Բախշի-Բեկը եւ ուրիշներ, արդեն մեծ հռչակ էին ձեռք բերել իրենց ոճրագործություններով: Համախմբելով իրենց շուրջը արյունարբու բախտախնդիրների մի քանի ստվար խմբեր՝ նրանք օր-ցերեկով սպանում էին ճակատից Գանձակի վրայով Ղարաբաղ վերադարձող հայ զինվորներին, կողոպտում նրանց զենքն ու հագուստը եւ վաճառում թյուրքերին Թարթար ավանում:

Համեմատաբար հանգիստ էր Ղարաբաղի մյուս շրջաններում՝ Վարան-



դայում, խաշնում եւ Դիզակում: Բայց այդ շրջաններում էլ, հացի պակասութեան պատճառով, սկսում էին ուժեղանալ հակամուսուլմանական տրամադրութիւնները: Պարենավորման սուր ճգնաժամն աշխատում էին օգտագործել գյուղերի ագրեսիւ եւ արկածախնդիր տարրերը՝ բորբոքելու համար ազգային կրքերը եւ զինված հարձակումներ հրահրելու թյուրքական գյուղերի վրա: Այդպիսով արդեն գլուխ բարձրացրած եւ օր-ավուր սաստկացող ու տարածվող անիշխանութիւնը խեղդելու համար պահանջում էին արագ եւ վճռական միջոցներ: Այլապես ուշ կլինէր, երբ անիշխանութեան ստեղծած քառոր ծալիւկներ եւ խորանար՝ իր կորստաբեր հորձանուտի մէջ ընդգրկելով հայկական Ղարաբաղի բոլոր շրջանները:

## 2. «ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲՆՈՎ» . «ՄԻՋԿՈՒՍԱԿՅԱԿԱՆ ԲՅՈՒՐՈ»

Ստեղծված ծանր կացութիւնից դուրս գալու եւ վերահաս աղետները կանխելու համար Շուշու հայ մտավորականութեան շրջանում գտնվեցին մարդիկ, որոնք երբեմն անհեթեթութեան հասնելու չափ տարօրինակ ռեցեպտներ էին առաջարկում: Օրինակ, եղան այնպիսիները, որոնք ժամանակը հասած համարեցին վերականգնելու... Խամսայի մեխիքութիւնները: Այո, դա առասպել չէ, առաջարկում էին վերականգնել Ղարաբաղի հինգ գավառների վաղուց պատմութեան գիրկն անցած մեխիքութիւնները: Եւ այդ առաջարկութիւն անողներն էլ տխմար մարդիկ չէին: Այդ փաստն ինքնին, իր անեկդոտային բնույթով, որչափ ծիծաղելի, նույնքան բնորոշ էր մտավորականութեան որոշ մասի խուճապային, հուսահատական տրամադրութիւնները պատկերացնելու, ստեղծված իրադրութեան ամբողջ դրամատիզմը հասկանալու համար:

Դաշնակցութեան հարող մտավորականութեան եւ ղեկավարների մի մասը, հիմնվելով այդ կուսակցութեան իրական ուժի եւ հեղինակութեան վրա, պահանջում էր իշխանութիւն ստեղծել՝ բաղկացած բացառապէս դաշնակցականներից: Իրավ է, դաշնակցութիւնը չունէր Լեռնային Ղարաբաղում իր լուրջ քաղաքական մրցակիցը, չկար հասարակական ուժեղ բազա ունեցող մի այլ քաղաքական հակակշիռ ուժ: Բայց 40 հազարից ավելի բնակչութիւն

ունեցող Շուշում, որից հայերի թիւը հասնում էր առնվազն 22 հազարի<sup>10</sup>, կային մեծաթիւ հայ մտավորականներ, որոնք պաշտոնավարում էին այդ հարուստ, ծաղկած քաղաքի դպրոցներում, պետական եւ հասարակական հիմնարկներում: Դրանց մեծ մասը գաղափարական կապերով կապված էր այլ կուսակցութիւնների հետ: Կային Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան մենշեւիկյան եւ բոլշեւիկյան ֆրակցիաներին հարողներ, կային սոցիալիստ-հեղափոխականներ (էսեռներ), կադետներ եւ այլն:

Փետրվարյան հեղափոխութիւնից հետո, ինչպէս ասացինք, Շուշու հայ հասարակական-մտավոր կյանքը միանգամից կենդանութիւն ստացավ քաղաքական խմբակցութիւնների աշխույժ գաղափարական պայքարով, որ տեղի էր ունենում դիսպուտների, մամուլի միջոցով:

Շուշու հայ մտավորականութեան ոչ-դաշնակցական մասի մեծամասնութիւնն այդ պայքարի ընթացքում շատ ջերմ հետաքրքրութիւն էր հանդես բերում հայ հասարակական կյանքը հուզող բազմապիսի հարցերի նկատմամբ: Իսկ 1917 թ. հոկտեմբերից հետո, երբ սկսեց ուժգնորեն փոթորկվել հասարակական-քաղաքական կյանքը նաեւ ամբողջ Անդրկովկասում, Շուշու հայ մտավորականութեան այդ մասը գործուն շահագրգռվածութիւն ցույց տվեց հարազատ երկրի վիճակի նորմալացման հարցերում: Նա անկեղծ սեր էր տածում դեպի իր հերոսական ժողովուրդը եւ խորապէս մտահոգվում նրա ճակատագրով: Ժողովրդին նվիրված նման տարրերի առկայութեան պայմաններում, երբ քաղաքական հորիզոնում հետզհետե բարդվող մռայլ ամպերը ժողովրդի ապագայի նկատմամբ լուրջ կասկածների եւ մտահոգութեան տխուր զգացմունքներ էին հարուցում, երբ երկրում օրեցօր լրջացող իրադրութիւնը թելադրում էր վարել խիստ զգուշավոր, հեռատես, շրջահայաց քաղաքականութիւն, այդ պայմաններում տասնյակ եւ տասնյակ հազարավոր մարդկանց գոյութեան, նրանց կյանքի եւ գույքի ապահովութեան պատասխանատվութիւնը, բնականաբար, չէր կարող իր ուսերին առնելու հավակնութիւն ունենալ թեկուզ ժողովրդի ընդհանուր վստահութիւնը վայելող մեն-մենակ մի կուսակցութիւն իր համեմատաբար փոքրաթիւ գործիչներով: Սեփական ժողովրդի կենսական շահերը, ազգամիջյան համերաշխութիւնն ու խաղաղութիւնն ապահովելու հրամայական անհրաժեշտութիւնը պահանջում էին ընդհանուր գործի շուրջը համախմբել հասա-

<sup>10</sup> Տե՛ս «Кавказский календарь» 1915 թ.:



դայում, խաչենում եւ Դիզակում: Բայց այդ շրջաններում էլ, հացի պակասության պատճառով, սկսում էին ուժեղանալ հակամուսուլմանական տրամադրությունները: Պարենավորման սուր ճգնաժամն աշխատում էին օգտագործել գյուղերի ագրեսիվ եւ արկածախնդիր տարրերը՝ բորբոքելու համար ազգային կրքերը եւ զինված հարձակումներ հրահրելու թյուրքական գյուղերի վրա: Այդպիսով արդեն գլուխ բարձրացրած եւ օր-ավուր սաստկացող ու տարածվող անիշխանությունը խեղդելու համար պահանջվում էին արագ եւ վճռական միջոցներ: Այլապես ուշ կլինեք, երբ անիշխանության ստեղծած քաոսը ծավալվեր եւ խորանար՝ իր կորստաբեր հորձանուտի մեջ ընդգրկելով հայկական Ղարաբաղի բոլոր շրջանները:

## 2. «ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲՆՈՎ» . «ՄԻՋԿՈՒՍԱԿՅԱՆ ԲՅՈՒՐՈ»

Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու եւ վերահաս աղետները կանխելու համար Շուշու հայ մտավորականության շրջանում գտնվեցին մարդիկ, որոնք երբեմն անհեթեթության հասնելու չափ տարօրինակ ռեցեպտներ էին առաջարկում: Օրինակ, եղան այնպիսիները, որոնք ժամանակը հասած համարեցին վերականգնելու... Խամսայի մեկիքությունները: Այո, դա առասպել չէ, առաջարկում էին վերականգնել Ղարաբաղի հինգ գավառների վաղուց պատմության գիրկն անցած մեկիքությունները: Եւ այդ առաջարկություն անողներն էլ տխմար մարդիկ չէին: Այդ փաստն ինքնին, իր անեկդոտային բնույթով, որչափ ծիծաղելի, նույնքան բնորոշ էր մտավորականության որոշ մասի խուճապային, հուսահատական տրամադրությունները պատկերացնելու, ստեղծված իրադրության ամբողջ դրամատիզմը հասկանալու համար:

Դաշնակցության հարող մտավորականության եւ ղեկավարների մի մասը, հիմնվելով այդ կուսակցության իրական ուժի եւ հեղինակության վրա, պահանջում էր իշխանություն ստեղծել՝ բաղկացած բացառապես դաշնակցականներից: Իրավ է, դաշնակցությունը չունեւ Լեռնային Ղարաբաղում իր լուրջ քաղաքական մրցակիցը, չկար հասարակական ուժեղ բազա ունեցող մի այլ քաղաքական հակակշիռ ուժ: Բայց 40 հազարից ավելի բնակչություն

ունեցող Շուշում, որից հայերի թիվը հասնում էր առնվազն 22 հազարի<sup>10</sup>, կային մեծաթիվ հայ մտավորականներ, որոնք պաշտոնավարում էին այդ հարուստ, ծաղկած քաղաքի դպրոցներում, պետական եւ հասարակական հիմնարկներում: Դրանց մեծ մասը գաղափարական կապերով կապված էր այլ կուսակցությունների հետ: Կային Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության մենշեւիկյան եւ բոլշեւիկյան ֆրակցիաներին հարողներ, կային սոցիալիստ-հեղափոխականներ (էսեռներ), կադետներ եւ այլն:

Փետրվարյան հեղափոխությունից հետո, ինչպես ասացինք, Շուշու հայ հասարակական-մտավոր կյանքը միանգամից կենդանություն ստացավ քաղաքական խմբակցությունների աշխույժ գաղափարական պայքարով, որ տեղի էր ունենում դիսպուտների, մամուլի միջոցով:

Շուշու հայ մտավորականության ոչ-դաշնակցական մասի մեծամասնությունն այդ պայքարի ընթացքում շատ ջերմ հետաքրքրություն էր հանդես բերում հայ հասարակական կյանքը հուզող բազմապիսի հարցերի նկատմամբ: Իսկ 1917 թ. հոկտեմբերից հետո, երբ սկսեց ուժգնորեն փոթորկվել հասարակական-քաղաքական կյանքը նաեւ ամբողջ Անդրկովկասում, Շուշու հայ մտավորականության այդ մասը գործունե շահագրգռվածություն ցույց տվեց հարազատ երկրի վիճակի նորմալացման հարցերում: Նա անկեղծ սեր էր տածում դեպի իր հերոսական ժողովուրդը եւ խորապես մտահոգվում նրա ճակատագրով: Ժողովրդին նվիրված նման տարրերի առկայության պայմաններում, երբ քաղաքական հորիզոնում հետզհետե բարդվող մռայլ ամպերը ժողովրդի ապագայի նկատմամբ լուրջ կասկածների եւ մտահոգության տխուր զգացմունքներ էին հարուցում, երբ երկրում օրեցօր լրջացող իրադրությունը թեւադրում էր վարել խիստ զգուշավոր, հեռտես, շրջահայաց քաղաքականություն, այդ պայմաններում տասնյակ եւ տասնյակ հազարավոր մարդկանց գոյության, նրանց կյանքի եւ գույքի ապահովության պատասխանատվությունը, բնականաբար, չէր կարող իր ուսերին առնելու հավակնություն ունենալ թեկուզ ժողովրդի ընդհանուր վստահությունը վայելող մեն-մենակ մի կուսակցություն՝ իր համեմատաբար փոքրաթիվ գործիչներով: Սեփական ժողովրդի կենսական շահերը, ազգամիջյան համերաշխությունն ու խաղաղությունն ապահովելու հրամայական անհրաժեշտությունը պահանջում էին ընդհանուր գործի շուրջը համախմբել հասա-

<sup>10</sup> Տե՛ս «Кавказский календарь» 1915 Շ.:



րակության բոլոր ազնիվ, կարող, ձեռներեց, անձնվեր ու գործուն ուժերը՝ անկախ նրանց քաղաքական հայացքներից, եւ նրանց մասնակցութեամբ ստեղծել մի կոալիցիոն հեղինակավոր մարմին՝ երկրի կառավարման համար: Իսկ երբ հանգամանքները թույլ կտային, հետագայում հրավիրել ժողովրդական համագումար եւ նրա ընտրութեամբ կազմել օրինական կառավարություն: Քաղաքական լուրջ անհրաժեշտություն էր նույնպես, որ Ղարաբաղի հայության կառավարող օրգանն իր կազմով լիներ այնպիսին, որ կարողանար հավատ եւ վստահություն ներշնչել նաեւ հարեւան մուսուլմանությանը:

Իրադրության հրամայական պահանջներից բխող այդ տեսակետն ի վերջո հաղթանակեց դաշնակցության Ղարաբաղի կոմիտեի անդամների եւ ակտիվի շրջանում: Այդ հանգամանքը լայն արձագանք եւ ընդհանուր հավանություն գտավ նաեւ մյուս կուսակցություններին հարող մտավորականության կողմից: Այդպիսով հող ստեղծվեց ընդհանուր ուժերով կազմակերպելու Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կոալիցիոն իշխանություն՝ բաղկացած քաղաքական կուսակցական խմբակների եւ դաշնակցության ներկայացուցիչներից:

Կարճատեւ նախապատրաստական աշխատանքներից եւ բանակցություններից հետո, 1917 թ. դեկտեմբերի կեսերին, Շուշում, իրավաբան Լեւոն Վարդապետյանի<sup>11</sup> բնակարանում ժողովվեցին քաղաքի կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչները, բացի կադետներից: Ժողովը հանգամանորեն քննության առավ Ղարաբաղում ստեղծված ընդհանուր կացությունը եւ ընդունեց միասնական գործողությունների պլանֆորմ, որով կանխորոշվում էր Ղարաբաղի առաջիկա ղեկավար օրգանի քաղաքականության ընդհանուր ուղղությունը:

Ժողովը, նկատի առնելով, որ մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը գոյություն ունեցող բոլոր տեղական՝ վարչական, դատական, քաղաքային եւ այլ մարմինները կա՛մ կազմալուծվել են, կա՛մ մատնվել անգործության, որի հետեւանքով երկրում օրեցօր սկսում էր ուժեղանալ անիշխանությունը, եկավ միահամուռ եզրակացության, որ կենսականորեն անհրաժեշտ է Լեռ-

<sup>11</sup> Հայաստանի խորհրդայնացումից հետո Լեւոն Վարդապետյանը տեղափոխվելով Երեւան՝ Հայաստանում վարեց մի շարք պատասխանատու պաշտոններ: Նդավ արդարադատության կոմիսար, Դիլիջանի գավգործկոմի նախագահ եւ այլն: Վախճանվեց վաղաժամ, 1945թ., Երեւանում:

նային Ղարաբաղի 200 հազարից ավելի հայության կյանքի եւ խաղաղ աշխատանքի ապահովության համար բոլոր հեղափոխական կազմակերպությունների ջանքերի միացումը նրանց ներկայացուցիչներից կազմված մի միասնական մարմնի շուրջը, որ գործելու է իբրեւ Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանություն եւ որի հիմնական նպատակը լինելու է՝ կազմակերպել ժողովուրդին, վերջ տալ գլուխ բարձրացրած անիշխանությունը եւ բոլոր միջոցներով պահպանել խաղաղությունը եւ համերաշխությունը երկու հարեւան ժողովուրդների՝ հայերի եւ մուսուլմանների միջեւ:

Անդրկովկասյան Կոմիսարիատի նկատմամբ ժողովն արտահայտեց միաձայն ժխտողական վերաբերմունք, գտնելով, որ երկրում ծայր առած անիշխանությունն արդյունք է հենց այդ կառավարության ապիկարության եւ հանցավոր քաղաքականության, մի քաղաքականություն, որ չէր բխում անդրկովկասյան ժողովուրդների համերաշխության, խաղաղ կյանքի եւ կենսական կարիքների բավարարման պահանջներից, այլ, ընդհակառակը, նպաստում էր աշխատավորական մասսաների շահագործման եւ ստրկացման, ժողովուրդների փոխադարձ անվստահության եւ նրանց ազգային մեկուսացման:

Ժողովը երկրում ստեղծված ծանր քաղաքական իրադրությունը համարեց անցումային՝ կապված Ռուսաստանում տիրող ընդհանուր քաղաքական կացության եւ միջազգային իրադրության փոփոխության հետ:

Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր տեղական իշխանությունը ընտրության համար ընդունվեց կուսակցությունների մասնակցության պրոպոզիցիոնալ սկզբունքը: Դաշնակցությունը պիտի տար հինգ, իսկ մնացած կուսակցությունները՝ երեքական անդամներ: Փոխադարձ համաձայնությամբ ընտրվեցին՝ Հայրապետ Մուսայելյան, Անուշավան Միքայելյան, Եղիշե Իշխանյան, Հարություն Թումյան, Ասծատուր Ավետիսյան, Աշոտ Մելիք-Հովսեփյան, Լեւոն Վարդապետյան, Նիկոլայ Իսախանյան, Հովհաննիս Մելիք-Հովսեփյան, Արամ Միքայելյան, Ալեքսանդր Մելքումյան, Ալեքսանդր Մատուրյան, Արմենակ Ղարազյոզյան եւ Մելիքսեթ Նսայան: Այդպիսով, Ղարաբաղի կառավարման այդ մարմինը, որը պաշտոնապես անվանվեց «Հայ հեղափոխական կուսակցությունների եւ կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ», սկզբում բաղկացած էր 14 հոգուց, բայց մի երկու օրից հետո, ինչ-ինչ պատճառներով, բոլշևիկ անդամները հրաժարվեցին մասնակցել: Այդպիսով, խորհրդի մեջ մնացին մյուս երեք կուսակցությունների ներ-



կայացուցիչները, թվով 11 հոգի: Խորհրդի նախագահը ընտրվեց Հայրապետ Մուսայելյան եւ քարտուղար՝ Նիկոլայ Իսախանյան:

Ժողովը հրահանգեց նորակազմ խորհրդին՝ բանակցել Շուշու մուսուլմանական Ազգային կոմիտեի հետ՝ ազգամիջյան մի մարմին ստեղծելու համար, որը պիտի վճռեր երկու ժողովուրդների ընդհանուր շահերի հետ կապված հարցերը, լուծեր երկու կողմերի միջեւ ծագած վեճերը, կոնֆլիկտները, պայքարեր անիշխանության դեմ եւ այլն: Խորհրդին առաջարկվեց աշախտեցնել հետեւել ոչ միայն ներքին (անդրկովկասյան), այլեւ արտաքին քաղաքական իրադարձություններին եւ վարել այնպիսի քաղաքականություն, որն ապահովի քաղաքի եւ շրջանների հայ բնակչության անվտանգությունը, խաղաղ աշխատանքը եւ ընդհանուր անդորրությունը անցողիկ ժամանակաշրջանում:

Երկրում անիշխանության վերջ տալու եւ կարգն ու հանգստությունը վերականգնելու գործը ժողովը համարեց առաջնակարգ եւ անհետաձգելի: Անհետաձգելի համարվեց նույնպես՝ կազմակերպել տեղերում վարչական եւ դատական մարմիններ, բնակչության ընտրություններ եւ գործուն մասնակցություններ:

Նպատակահարմար համարվեց պարենավորման գործը շրջաններում կազմակերպել ներքին գնումների ու գյուղացիության մեջ եղած պաշարների ավելցուկի հայտնաբերման եւ ռացիոնալ բաշխման միջոցով, իսկ քաղաքի բնակչության պարենավորման հարցը քննել եւ լուծել մուսուլմանական Ազգային կոմիտեի հետ: Խորհրդին կից որոշվեց ունենալ մշտական պարենավորման մարմին, իսկ խորհրդի բյուջեով նախատեսված ծախքերը առաջարկվեց հոգալ ի հաշիվ քաղաքի ունեւոր մասից գանձված միջոցների:

«Հայ հեղափոխական կուսակցությունների եւ կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդը» հետագայում սկսեց կոչվել «Միջկուսակցական բյուրո», եւ այդ անունով էլ հայտնի դարձավ Ղարաբաղում:

Շուշու մուսուլմանական Ազգային կոմիտեն հավանություն տվեց Բյուրոյի՝ ազգամիջյան մարմին ստեղծելու առաջարկությանը: Որոշվեց կազմել մի կոմիտե՝ բաղկացած 13 անդամներից, որոնցից 6 հայ, 6 թյուրք եւ 1 չեզոք անձ, որ միաժամանակ պիտի լիներ կոմիտեի նախագահը: Երկու կողմերի միաձայն հավանությամբ նախագահը ընտրվեց Շուշու նախկին հաշտարար դատավորը՝ Յոսիֆ Իլարիոնովիչ Կոբիեւը, ազգությամբ վրացի, միշտ բարեկիրթ, անաչառ ու ամենքից հարգված անձ: Հայերից Ազգամի-

չյան կոմիտեի անդամներ ընտրվեցին Հայրապետ Մուսայելյան, Լեւոն Վարդապետյան, Նիկոլե Իշխանյան, Նիկոլայ Իսախանյան, Աշոտ Մելիք-Հովսեփյան եւ Արամ Միքայելյան, իսկ թյուրքերից՝ բժիշկ Թադի Քերիմով, Խոսրով-բեկ Ֆոլատով, Հուսեյն-բեկ Միրզա Ջամալով, Մահմեդ-Հասան-բեկ Միրզա Ջամալով, Քերիմ-բեկ Բեհբուդով եւ Ազատ Ամիրով, բոլորն էլ, գրեթե առանց բացառության, բեկեր կամ բեկական ծագում ունեցողներ:

Ազգամիջյան կոմիտեի առաջին գործն այն եղավ, որ հրավիրեց Ղարաբաղի Գործադիր կոմիտեի նիստ եւ պահանջեց, որ նա հրաժարական տա մեքոջ կազմով, որ եւ կատարվեց առանց ընդդիմության: Այնուհետեւ որոշվեց անիշխանության դեմ միացյալ ուժերով պայքարելու համար Շուշու հայ եւ մուսուլման ունեւորներից ժողովել 50 հազարական ռուբլի: Հայ վաճառականությունը այդ գումարն իր շրջանում հավաքելու համար պահանջում էր, որ իր ներկայացուցիչները եւս լինեն Միջկուսակցական բյուրոյում: Բյուրոն սկզբում որոշեց մերժել այդ պահանջը, բայց հետո ստիպված եղավ կոմպրոմիսային այսպիսի որոշում ընդունել. այն բոլոր դեպքերում, երբ Միջկուսակցական բյուրոն բյուջեի հետ կապված հարցերը լուծելու համար կարիք կզգա հայ վաճառականության աջակցության, այդպիսի դեպքերում միայն բյուրոյի նիստերին կհրավիրվեն կադետական կուսակցության Շուշու կազմակերպությունից ներկայացուցիչներ: Դրանից հետո 50 հազար ռուբլու բաշխումը արդարացի կերպով ու արագորեն կատարելու եւ անիշխանության դեմ պայքարելու հարցերը քննարկելու համար կադետական կազմակերպությանն առաջարկվեց ուղարկել իր երեք ներկայացուցիչներին: Բյուրոյի նիստին եկան Մելքում Խաչատրյան, Գրիգոր-բեկ Մինասեկով եւ Ասծատուր Ստեփանյան՝ երեքն էլ կադետական կուսակցության պատկանողներ: Որոշվեց դրամի բաշխման եւ հավաքման գործը հայկական մասում հանձնարարել իրենց՝ վաճառականներին, կազմելով նրանցից այդ նպատակով մի հատուկ հանձնաժողով: Իսկ որպեսզի Շուշու հայ ունեւորները, որոնք, գրեթե առանց բացառության, բաղկացած էին խոշոր վաճառականներից, վստահ լինեն, որ իրենցից հավաքված գումարները Բյուրոն գործադրելու է բացառապես երկրի կառավարման կարիքներին, որոշվեց սուլիդ աշխատավարձով Բյուրոյի հաշվապահ հրավիրել Ասծատուր Ստեփանյանին, մինչդեռ, Բյուրոն իր անդամների համար աշխատավարձ չսահմանեց, եւ նրանցից ոչ մեկը մինչեւ վերջ այդպիսի պահանջ չներկայացրեց: Դրամի հավաքման գործը, սակայն, առաջ չգնաց: Վաճառականներն սկսել



էին ձգձգել այն ու հասցրին մինչեւ 1918թ. հունվարի կեսերը: Նրանց կազմած բաշխման ցուցակի քննությունը երեւան հանեց բազմաթիվ անարդարություններ: Գործն ուշանում էր, մինչդեռ շրջաններում եւ խճուղիների վրա անիշխանությունն օրեցօր խորանում, սպառնական շափեր էր ընդունում: Երկրում սրվում էր նաեւ պարենային եւ ֆինանսական ճգնաժամը: Վերջապես, դրամի բաշխման եւ հավաքման գործը Միջկուսակցական բյուրոն ստիպված եղավ առնել իր ձեռքը: Կազմվեց մի ցուցակ՝ 135 վաճառականների եւ այլ հարուստների անունով, որոնցից պիտի հավաքվեր, ըստ բաշխման ցուցակի, շուրջ 400 հազար ռուբլի: Բայց մեծ ջանքերից հետո հազիվ հաջողվեց ժողովել 210-215 հազար: Այդ գումարից իսկույն Ազգամիջյան կոմիտեի դրամարկղը մուծվեց 50 հազար ռուբլի, սակայն կոմիտեի մուսուլման անդամների թուլության շնորհիվ անիշխանության դեմ ձեռնարկված միջոցառումները հաջողությամբ չպսակվեցին, եւ Շուշի-Եւլիսի, Շուշի-Գորիս խճուղիները շարունակեցին մնալ զինված բանդաների հսկողության տակ:

### 3. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՏԵՂԵՐՈՒՄ: ՊԱՅՔԱՐ ԱՆԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԲԱՆԴԻՏԻԶՄԻ ԴԵՄ

Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը, թե՛ քաղաքում եւ թե՛ շրջաններում, մեծ գոհունակությամբ ընդունեց իշխանության կազմակերպումը Շուշում: Նրիտասարդության եւ մտավորականության լավագույն մասը, արհեստավորությունը պատրաստակամություն հայտնեցին ամեն աջակցություն ցույց տալ Բյուրոյի աշխատանքներին: Եւ, հիրավի, եթե երիտասարդության լավագույն մասի անձնվեր օգնությունը չլիներ, շատ դժվար կլիներ հաջողությամբ պայքարել մինչեւ ատամները զինված հանցագործ եւ արկածախնդիր տարրերի շահատակությունների, հակահասարակական գործողությունների դեմ, քաղաքում եւ գյուղերում կազմակերպել կարգի եւ հանգստյան վրա հսկող մարմիններ, վերականգնել երթեւեկության ապահովությունը ներքին ճանապարհների վրա:

Քաղաքի անհանգիստ եւ բախտախնդիր տարրերի դեմ վճռական միջոցներ ձեռք առնվեցին Բյուրոյի գործունեության առաջին իսկ օրերից: Նրանցից ոմանք գնդակահարվեցին, իսկ մի մասն էլ փախավ քաղաքից

կամ բարվոք համարեց խաղաղ ապրել, զբաղվելով որեւէ հանրօգուտ աշխատանքով:

Քաղաքի հայկական մասում կարգի պահպանության համար, կամավոր հիմունքներով, հիմնվեց միլիցիական վարչություն: Շրջաններում, գրեթե յուրաքանչյուր գյուղում, նշանակվեցին քաղաքացիական եւ զինվորական լիազորներ: Դրանցից առաջինների վրա պարտականություն դրվեց համախմբելու իրենց շուրջը գյուղերի գիտակից ու գործուն տարրերին՝ պահպանելու կարգն ու հանգստությունը գյուղերում, հսկելու երթեւեկության ապահովության վրա եւ կարգավորելու բնակչության կարիքավոր մասի պարենավորման խնդիրը: Իսկ զինվորական լիազորները պարտավոր էին տեղերում կազմակերպել զինվորական մարմիններ, գլխավորել այդ մարմինները, հաշվառում կատարել գյուղի զինված ուժերի, զենք կրելու ընդունակ տղամարդկանց, հրազենների, զինամթերքի եւ այլն, ջոկատներ կազմակերպել բանակում ծառայած նախկին զինվորներից, կատարել սիստեմատիկ վարժություններ՝ ներգրավելով նաեւ գյուղի զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդկանց:

Այդ ամենը պիտի կատարվեր անաղմուկ:

Քաղաքի բնակչության հացի մատակարարման գործը կարգավորելու համար Ազգամիջյան կոմիտեի որոշմամբ Ասկերան ուղարկվեց ազդեցիկ հայ գործիչներից մեկը, որի պարտականությունն էր վերջ տալ Շուշի-Ասկերան ճանապարհի վրա տեղի ունեցող հարձակումներին ու կողոպուտներին եւ ապահովել Աղդամից Շուշի ուղարկվող ալյուրի եւ այլ կենսամթերքների տեղափոխության անվտանգությունը:

Գանձակի վրայով ռուսական էշերունների հետ վերադարձող հայ զինվորների վրա շարունակվում էին հարձակումները եւ բռնությունները Ջրաբերդի ուղեմասում: Բանդիտների ձեռքից մի կերպ ճողոպրած հայ ճանապարհորդների բողոքներն օրը օրին բազմանում էին: Բանդիտիզմի լիկվիդացիան եւ հանգստության վերականգնումը Ջրաբերդի շրջանում դարձավ նորակազմ իշխանության պատվի գործը: Բյուրոն իր գործունեության առաջին օրերի նիստերից մեկն ամբողջովին նվիրեց դրան: Որոշվեց բանդիտական խմբերը ոչնչացնելու եւ ճանապարհների անվտանգությունը վերականգնելու համար ամենաարագ կերպով Ջրաբերդի շրջան ուղարկել պատժիչ արշավախումբ՝ հանձնարարելով այդ գործի կազմակերպումը եւ



ղեկավարությունը զինվորական կոմիսարին<sup>12</sup>: Միաժամանակ նրան առաջարկվեց, կարգը Ջրաբերդում վերականգնելուց հետո, մեկնել Գանձակ եւ աշխատել տեղի հայ ազգային խորհրդի միջոցով զենք եւ զինամթերք ձեռք բերել Շուշում կայազոր կազմակերպելու համար:

Որոշվեց Ջրաբերդի շրջանի Թալիշ գյուղը հանձնախումբ ուղարկել Արշավիր Քամալյանի գլխավորությամբ՝ տեղում ծանոթանալու հացի պաշարներին ու փոխադրության հնարավորություններին: Զինվորական կոմիսարի հետ պիտի մեկնեին նաեւ ճարտարապետներից բաղկացած մի խումբ, որի վրա պարտականություն դրվեց հետազոտելու 1905 թվին սկսված, բայց չավարտված՝ Շուշի-Գանձակ լեռնային ճանապարհի տրասսան, որը ծայրից-ծայր անցնում էր հայերով բնակված տերիտորիայով, եւ կազմելու նախահաշիվ՝ այդ ճանապարհը շտապ ավարտելու եւ բարեկարգելու համար:

1918թ. հունվարի մեկին, երբ հայկական Ղարաբաղը թեւակոխում էր մի ահավոր թվական, որ նոր աղետներ պիտի բերեր մեր դժբախտ ժողովրդին, մի թվական, որի ընթացքում Ղարաբաղի հայությունը պիտի ապրեր մահացու վտանգներով հղի տագնապալի ամիսներ, այդ օրը զինվորական կոմիսարը մի քանի զինված ձիավորների հետ եւ երկու հանձնաժողովների ուղեկցությամբ գիշերը Շուշուց մեկնեց խաչեն: Հաջորդ օրը հացամթերման գործով գնացողները շարունակեցին իրենց ճանապարհը դեպի Թալիշ, իսկ զինվորական կոմիսարին միայն հունվարի 6-ին հաջողվեց 300-ի չափ լավ սպառազինված եւ կռիվների մեջ կոփված այրուծիի հետ մեկնել Ջրաբերդ:

Ճանապարհի հետազոտության հանձնախումբը պիտի մի քանի օր սպասեր խաչենում, մինչեւ ճանապարհները մաքրվեն ավազակախմբերից:

\* \* \*

Արշավախմբի գործողությունները Ջրաբերդի շրջանում տեւեցին ութ օր: Այդ ժամանակամիջոցում Արջաձոր, Զանյաթաղ, Կուսապատ, Հուռու-թաղ, Մարդակերտ, Մոխրաթաղ, Մեծշեն եւ այլ գյուղերի մոտակայքում անտառների մեջ վիտացող ավազակային խմբերը գլխովին ջախջախվեցին: Նրանց մի մասը ոչնչացվեց, իսկ մի մասն էլ փախուստի դիմելով թաքնվեց լեռնային անմատչելի տեղերում, մի մասին էլ հաջողվեց կալանավորել:

Ջրաբերդի գյուղացիությունը գործուն աջակցություն էր ցույց տալիս

<sup>12</sup> Բյուրոյի որոշմամբ կոմիսարներ սկսեցին անվանվել աշխատանքի տարբեր բնագավառների ղեկավարները:

արշավախմբին՝ պայքարելու բանդիտների դեմ: Այսպես, օրինակ, արջա-ձորցիները, առնելով արշավախմբի մոտեցման լուրը, նախապես բռնել էին իրենց համագյուղացի երկու բանդիտների, եւ երբ արշավախմբի առաջապահը մոտեցավ, նրան դիմավորեցին գյուղի ծերունիները եւ հանձնեցին ձերբակալվածներին՝ եղոյին եւ իր ընկերոջը, որոնց մոտ գտնվել էին ապանված հայ զինվորների արյունոտ համազգեստներ:

Արշավախմբի գործողությունների ընթացքում ոչ մի գյուղ, իհարկե, չտուժեց եւ չէր կարող տուժել, բայց բանդիտական խմբերն անխնա ոչնչացվեցին կամ ցաքուցրիվ արվեցին, ու այդպիսով կարգը վերականգնվեց Ջրաբերդի ճանապարհների վրա:

Արշավախմբին, դժբախտաբար, չհաջողվեց պատժել միայն Մեծշեն գյուղացի Բախշի-բեկին, որի խոզարածներն ահ ու սարսափ էին տարածել ճանապարհների վրա, եւ ոչ ոք չէր համարձակվում անցնել Մեծշենի սահմաններով: Բախշի-բեկը կարողացավ փրկվել հատուցումից ո՛չ արշավախմբի ղեկավարության մեղքով, այլ, որքան էլ այդ տարօրինակ թվա, շնորհիվ գյուղատնտես, Շուշու ռեալական եւ թեմական դպրոցների նախկին դասատու, ամենքից հարգված Լեւոն Թախթաջյանի միջնորդությամբ, որն այդ խառը ժամանակներում ստիպված էր եղել ժամանակավորապես տեղափոխվել եւ ընտանիքով հաստատվել Մեծշեն գյուղում, ուր աշխատում էր ամեն կերպ օգնություն ցույց տալ ամբողջ գյուղին նրա գյուղատնտեսական աշխատանքներում իր խիստ շահեկան խորհուրդներով, զրույցներով ու զեկուցումներով: Թախթաջյանի կնոջ նկատմամբ իր կեղտոտ մտադրություններն իրագործելու համար, Բախշի-բեկի սադրանքով, անտառում, որսի ժամանակ (Թախթաջյանը սիրում էր որսը) նրա մարդիկ փորձել էին սպանել Լեւոնին, բայց վերջինս կարողացել էր խույս տալ եւ մի կերպ իրեն նետել գյուղը: Երբ արշավախումբը մտավ Մեծշեն Բախշի-բեկին պատժելու, այդ ժամանակ Թախթաջյանը հիվանդ պառկած էր: Արշավախմբի ղեկավարին Թախթաջյանի մոտ հրավիրվեց, հոր կամքով, նրա փոքրահասակ տղան՝ Արմենը: Զինվորական կոմիսարը հայտնեց Լեւոնին իր զարմանքը, որ նա, այնուամենայնիվ, ամեն կերպ աշխատում է ազատել Բախշի-բեկին իր մահացու թշնամուն, գյուղի ցեղին ու բանդիտին: Բանից դուրս եկավ, որ դրա պատճառը Լեւոնի վախն էր Բախշի-բեկի ազգականների հետագա վրեժխնդրությունից: Կոմիսարն ստիպված էր տեղի տալ Թախթաջյանի համառ թախանձանքներին եւ բավականանալ Բախշի-բեկին խստորեն նախազգու-



շացում անելով՝ ճանապարհների անվտանգության, Թախթաշյանի ու նրա ընտանիքի ապահովության ամբողջ պատասխանատվությունը ձգելով նրա եւ նրա մարդկանց ու ազգականների վրա:

Այն գյուղերում, որտեղ անհրաժեշտաբար լինում էր արշավախումբը, գումարվում էին գյուղացիական միտինգներ ու ժողովներ:

\* \* \*

Բանդիտիզմը Ջրաբերդի շրջանում վերացնելու եւ կարգն ու հանգստությունը վերականգնելու իր միսիան վերջացած համարելով, զինվորական կոմիսարը տուն արձակեց արշավախմբի զինվորներին եւ, վերցնելով իր հետ միայն երկու տասնյակ մարտիկներ, 1918 թվի հունվարի 16-ի երեկոյան հասավ Գանձակ: Շամխորում տեղի ունեցած իրադարձությունների մասին նրանք շժմեցուցիչ լուրեր էին լսել Գանձակից եկող հայ ճանապարհորդներից: Սակայն քաղաքի քաջատեղյակ մարդկանց պատմածներից պարզվեց, որ այն ամենը, ինչ լսել էին նրանք ճանապարհին, չէին տալիս թեկուզ մոտավոր պատկերն այն ահելի դեպքերի, որ իրապես կատարվել էին Աղստաֆա-Շամխոր երկաթգծի վրա մի 5-6 օր առաջ: Մի երեւույթ, որ առաջին իսկ հայացքից աչքի էր ընկնում Գանձակում, դա մոտ օրերում տեղի ունեցած այդ դեպքերի ազդեցության տակ հայ բնակիչների շրջանում տիրող ընդհանուր շփոթվածությունն ու տագնապն էր:

Ի՞նչ էր տեղի ունեցել:

Կես միլիոնանոց Կովկասյան բանակը, որ դեռեւ 1917 թ. հունիսին հրաժարվել էր կատարել ժամանակավոր կառավարության հրամանը՝ «հարձակման անցնելու բոլոր ճակատներում» եւ ընդունել էր բոլշևիկյան լոզունգը՝ «խաղաղություն առանց անեքսիայի եւ կոնտրիբուցիայի», չճանաչեց Հոկտեմբերից հետո Անդրկովկասյան Կոմիսարիատի իշխանությունը, եւ 1917 թ. նոյեմբեր ամսից սկսեց կազմալուծվել ու լքել ռազմաճակատը, սկզբում մանր խմբերով եւ ապա՝ հետզհետե խտացող մասսաներով հորդելով դեպի հյուսիս, ինչպես հեղեղ:

Ռազմաճակատի այդ մերկացումը, որի առաջն առնելու համար Ստեփան Շահումյանի ջանքերն անցել էին ապարդյուն, Անդրկովկասի հայության համար մահացու աղետների դուռ էր բաց անում: Կովկասյան ճակատում գործող թուրքական բանակը, որ ռուսական բանակի ուժգին հարվածների տակ ջախջախված, հազիվ կենդանության նշաններ էր ցույց տալիս,

հավաքում էր իր վերջին ուժերը, կազդուրվում, զորանում ռուս զորքի թողած մեծամեծ պաշարներով եւ, հայրենիք վերադարձող ռուս զինվորների բազմության ետեւից վախելախ, արյունոտ թորենու պես քայլ առ քայլ մոտենում Անդրկովկասի սահմաններին՝ դուրս մղելով տեղում մնացած հայկական պաշտպանական փոքրաթիվ ջոկատները: Կոտորածների վտանգն այս անգամ դամոկլյան սրի պես կախվում էր Անդրկովկասի հայության գլխին: Կոտորածներից մի կերպ ճողպարած Արեւմտյան Հայաստանի արյունաքամ, ծվատված հայության վերջին բեկորները, որոնք կամավորական ջոկատների պաշտպանության տակ իրենց ավերակներում մի կերպ ծվարել էին, լքում են վերջնականապես հայրենի հողը եւ ծանր կորուստներով խուճապահար փախչում ու ապաստանում Անդրկովկաս:

Ռուսաստան մեկնող էջելոնները, որոնք տոգորված բոլշևիկյան իդեալներով հայտարարում էին, որ իրենք ճանաչում են միայն Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի եւ Բաքվի հեղափոխական կոմիտեի իշխանությունը, երկյուղ առաջ բերին վրաց մենշևիկների մեջ: Վտանգավոր համարելով դեպի Ռուսաստան բաց թողնել բոլշևիկոսներն տրամադրված զինված զինվորների այդ խոշոր զանգվածները, այլեւ կարիք ունենալով զինելու անդրկովկասյան ազգային զորամասերը՝ ժորդանիան եւ իր ընկերները որոշում են կազմակերպել Ռուսաստանի դիմող էջելոնների զինաթափումը: Երբ անհնարին է համարվում կազմակերպել զինաթափումը Կարսի եւ Սանահինի գծերի վրա, այդ ժամանակ ժորդանիան հեռագրում է Գանձակի մուսավաթական կոմիտեին՝ առաջարկելով զինաթափ անել Աղստաֆա-Շամխոր գծի վրա կուտակված էջելոնները՝ բաղկացած մինչեւ 20 հազար մարդուց: Զինաթափմանն օգնելու նպատակով Թիֆլիսից դեպի Աղստաֆա-Գանձակ է ուղարկվում զրահապատ գնացք:

1918 թ. հունվարի 9-ից սկսվում են գործողությունները ռուսական էջելոնների դեմ: Մուսուլմանական-բեկական տասնյակ հազարավոր արյունկեղակ հորդաները «Դիկայա դիվիզիայի» հրոսակների առաջնորդությամբ գիշերը շրջապատում են զինվորներով լեցուն վագոնները: Սկսվում է կատաղի գնդակոծություն: Ռուս զինվորները, որոնք անվրդով քնած էին վագոններում, իրենց դեմ նախապատրաստված դավադիր հարձակման անտեղյակ, հանկարծակիի գալով, ենթարկվում են խուճապի: Ստեղծված սոսկալի շփոթն ու իրարանցումը զրկում են ռուս զինվորներին հակահարված կազմակերպելու հնարավորությունից: Սկսվում է մի կատարյալ արյունալի կոտո-



րած: Վիրավորներին մեռցնում կամ կենդանի-կենդանի թաղում էին: Այդպիսով ոչնչացնում են Աղստաֆա-Շամխոր գծի վրա եղած էշելոնների մեծ մասը: Մուսուլմանական բանդաներին հաջողվում է խլել հազարավոր հրացաններ, շատ թնդանոթներ, գնդացիրներ եւ մեծ քանակության փամփուշտ:

Այդ խժոժություններից մոտ մեկ ամիս առաջ, 1917 թ. դեկտեմբերի 14-ին, մուսավաթական կոմիտեի նախաձեռնությամբ տեղի էր ունեցել Գանձակում գտնվող 219-րդ գնդի զինաթափումը: Ինչպես պատմում էին գանձակցիները, այդ գունդը չէր կազմալուծվել, նա պահպանում էր քաղաքը եւ աչքի էր ընկնում իր կարգապահությամբ: Չնայելով դրան՝ նա ենթարկվեց թյուրք հորդանների գրոհներին, զինաթափ արվեց եւ մինչեւ վերջին թելը կողոպտվեց մուսուլմանական խուժանի կողմից:

Այդպես էին երախտահատույց լինում ռուսներին Անդրկովկասի մուսուլման բեկերն ու խաները՝ այն բազմաթիվ արտոնությունների, բարձր աստիճանների, պարգևատրությունների համար, որ նրանք առատորեն ստացել էին ցարական իշխանությունից՝ տակավին ռուսական տիրապետության առաջին օրերում, եւ հաճախ ի հաշիվ «ռուս ժողովրդի հավատարիմ բարեկամ» հայ մելիքների ու հայ շարքաշ գյուղացիության:

\* \* \*

Գանձակ հասնելու հաջորդ օրվա առավոտյան, Ազգային խորհրդի նախագահ Արշակ Մալխասյանի հետ ունեցած տեսակցությունը զինվորական կոմիսարին համոզեց, որ զուր է մեծ հույսեր կապել խորհրդի օգնության հետ: Ռուս զինվորներից կողոպտված զենքից եւ զինամթերքից Գանձակի հայության ձեռքը բան չէր ընկել, եւ չէր էլ կարող ընկնել, քանի որ Գանձակի եւ նրա շրջանի հայերն այդ տմարդի, ավազակային, արյունոտ կողոպուտին անմասնակից էին:

Ազգային խորհուրդն, այնուամենայնիվ, նույն օրվա երեկոյան իր հատուկ նիստում լսեց զինվորական կոմիսարի զեկուցումը Ղարաբաղի ընդհանուր վիճակի մասին եւ որոշեց իր տրամադրության տակ եղած սուղ միջոցներից տալ որոշ քանակությամբ զենք, գլխավորապես «բերդան» սիստեմի հրացաններ, եւ տասը հազար ռուբլի՝ փոխարինաբար: Որքան էլ անշնան լինեք այդ օգնությունը Ղարաբաղի համար, զինվորական կոմիսարն ստիպված էր բավականանալ դրանով: Այստեղ ավելորդ չենք համարում հիշել Գանձակի ազգային խորհրդի մի առաջարկությունը, որ նրա անկարո-

ղության մի ակնառու ապացույց էր իբրեւ քաղաքի եւ նրա շրջանի հայության ղեկավար մարմնի: Ազգային խորհրդի հիշյալ նիստում տեղի ունեցած խոսակցություններից պարզվեց, որ Գանձակի շրջանի հայկական գյուղերի ահմաններում եւս երեւան էին եկել բանդիտական խմբեր, որոնք շարիք էին դարձել տեղի հայ գյուղացիության գլխին: Ազգային խորհուրդն այդ անիշխանության վերջ տալու համար փոխանակ կազմակերպելու ժողովրդին, որ ավելի քան անհրաժեշտ էր այդ վտանգավոր ժամանակներում, եւ բանդիտիզմի վերացման համար օգտագործելու քաղաքի հայկական մասում իր տրամադրության տակ գտնվող զորամասը՝ բաղկացած 800 հոգուց, չամաչեց իր նախագահի բերանով խնդրել Ղարաբաղից հատուկ միսիայով Գանձակ եկած փոքրաթիվ ջոկատին՝ վերացնել բանդիտիզմը նաեւ իրենց շրջանում: Զինվորական կոմիսարն իր զարմանքը հայտնեց այդ առաջարկության առթիվ՝ մատնանշելով այն մեծ հնարավորությունները, որ ունեն Գանձակի ազգային խորհուրդը՝ սեփական միջոցներով եւ ուժերով կատարելու այդ աշխատանքը: Բարեբախտաբար, Գանձակի եւ նրա շրջանի հայության ղեկավարությունը շուտ ըմբռնեց իր առաջարկության անհեթեթությունը եւ հրաժարվեց դրանից:

Երկու օր հետո, ազգային խորհրդից ստացած զենքը բարձելով տեղում գնված մի քանի ջորիների վրա, զինվորական կոմիսարն իր մարդկանցով ճանապարհվեց Ղարաբաղ:

#### 4. ՀԱՄԵՐԱՇԵՈՒԹՅԱՆ ՄԻՏԻՆԳՆԵՐ. ՕԿՐՈՒԳԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Զինվորական կոմիսարն իր միսիայի կատարման մասին Միջկուսակցական բյուրոյում զեկուցելուց հետո՝ ձեռնարկեց մի շարք անհետաձգելի աշխատանքների: Շուտով կազմակերպվեց կամավոր հիմունքներով մոտ 100 հոգուց բաղկացած կայազոր՝ կապիտան Արտաշես Վարդապետյանի գլխավորությամբ: Կայազորը տեղավորվեց քաղաքի հայկական մասում գտնվող նախկին ռուսական զորանոցի շենքերում: Վարդապետյանի եռանդուն ջանքերի շնորհիվ այդ փոքրաթիվ, բայց ընտիր մարտիկներից բաղկացած ջոկատն իր օրինակելի կարգապահությամբ եւ լավ մարզվածությամբ դարձել էր Շուշու հայ բնակչության փափայանքի առարկան: Ժողովուրդը լավ գի-



տակցում էր պատմական մոմենտի լրջությունը եւ իր ուժերն ու միջոցները չէր խնայում ընդառաջելու այն բոլոր հրատապ խնդիրների լուծմանը, որոնք բխում էին երկրի հանգստության եւ պաշտպանության պահանջներից: Յուրաքանչյուրը կատարում էր իր հանձնառությունը՝ հոժարակամ ու բարեխղճորեն:

Քաղաքի պարենավորման գործով Թալիշ գյուղն ուղարկված հանձնաժողովը, ինչպես եւ Շուշի-Գանձակ լեռնային ճանապարհի հետազոտության տեխնիկական հանձնաժողովն իրենց միասին կատարել էին հաջող: Թալիշցիները եւ սարովիները խոստացել էին տալ հարյուր հազար փթի չափ ցորեն՝ չափավոր գներով: Քաղաքի հայ բնակչության համար կենսական նշանակություն ունեցող այդ գործարքը, սակայն, գլուխ չեկավ՝ գլխավորապես դրամի եւ փոխադրական միջոցների հետ կապված դժվարությունների պատճառով: Այնուամենայնիվ, թե՛ քաղաքում եւ թե՛ շրջաններում միջոցներ ձեռք առնվեցին մեղմելու հացի կարիքը: Դյուղական լիազորների եւ գյուղացիության ընդհանուր ջանքերով գյուղում եղած հացի պաշարները հաշվի առնվեցին, եւ ավելցուկը վաճառքի ու փոխատվության եղանակով բաշխվեց գյուղի ու քաղաքի կարիք ունեցող բնակչության մեջ: Այդպիսի ձեռնարկումներով հնարավոր եղավ քիչ-շատ մեղմել հացի ճգնաժամը: Պահանջվում էր միայն ամեն կերպ ձգտել պահպանելու խաղաղություն, որպեսզի հայ գյուղացին կարողանար հաջողությամբ անցկացնել 1918 թվականի վեգետացիոն շրջանը: Խաղաղություն պահպանելու գաղափարն էր, որ ոգեշնչում ու ղեկավարում էր Միջկուսակցական բյուրոյի շուրջը համախմբված առաջավոր մտավորականությանը: Խաղաղության եւ համերաշխության նշանաբանով 1918 թ. մարտ եւ ապրիլ ամիսներին Ազգամիջյան կոմիտեի նախաձեռնությամբ քաղաքում գումարվեցին մի քանի բազմամարդ միտինգներ՝ հայերի եւ մուսուլմանների մասնակցությամբ:

\* \* \*

Ապրիլ ամսի սկզբներում Շուշի էր եկել Անդրկովկասյան Կոմիսարիատի նախկին փոստ-հեռագրական կապի մինիստր ինժեներ Լյուֆտալի-բեկ Բեհ-բուդովը: Նա իր հետ Թիֆլիսից բերել էր 500 հազար ռուբլի, որից 300 հազարը՝ երկրի պարենավորման կարիքների, իսկ 200 հազարը՝ անիշխանության դեմ պայքարելու համար: Պարենավորման հատկացրած 300 հազար ռուբլին գոյություն ունեցող անբավ կարիքների ծովում շատ աննշան ար-

ժեք ուներ: Այդ գումարը մուծվեց քաղաքի ընդհանուր գանձարանը, որը դեռ անուանով պահպանում էր իր գոյությունը: Կարիքի մեջ գտնվող քաղաքացիներին, անխտիր, թե՛ հայերին եւ թե՛ թյուրքերին, բաց էր թողնվում 50-ական ռուբլի, որով մի քանի ֆունտ հաց հաղիվ կարելի էր ձեռք բերել: Կոմիսարիատի կողմից հանձնարարված էր 200 հազար ռուբլին օգտագործել դաշտային եւ լեռնային Ղարաբաղի բնակչության ընդհանուր վիճակին ծանոթանալու, անիշխանության դեմ պայքարելու եւ տեղական բնույթի մի շարք խնդիրներ լուծելու համար: Այդ աշխատանքը պիտի կատարեին Լյուֆտալի-բեկը՝ իբրեւ մուսուլմանների ներկայացուցիչ, եւ Հայրապետ Մուսայեւյանը՝ հայերի կողմից: Հարցերը նախապես քննության առնվեցին Միջկուսակցական բյուրոյում եւ մուսուլմանական Ազգային կոմիտեում, որից հետո տեղափոխվեցին Ազգամիջյան կոմիտե: Այստեղ հարցերի քննությանը մասնակցում էր նաեւ Բեհբուդովը՝ իբրեւ Անդրկովկասիայի ներկայացուցիչ: Ազգամիջյան կոմիտեն որոշեց հրավիրել օկրուգային համագումար՝ բաղկացած Շուշու, Ջիվանշիրի, Կարիագինոյի եւ Զանգեզուրի նախկին գավառների մեջ մտնող բոլոր շրջանների ներկայացուցիչներից: Համագումարը տեղի ունեցավ 1918 թվի ապրիլի երկրորդ կեսում եւ տեւեց չորս օր: Այդտեղ որոշվեց պարենավորման գործը հանձնել հատուկ մարմնի՝ ղեկավար նրա տրամադրության տակ Թիֆլիսից բերված 200 հազար ռուբլին, ցորենի եւ ալյուրի գնումներ կատարելու համար: Քոչը պիտի բարձրանար սար՝ նախապես որոշված ճանապարհներով: Քոչվորները պարտավոր էին տալու քոչի տուրքը, որով պիտի վարձատրվեին քոչի անցման ապահովության համար նշանակված հսկիչները եւ հատուցվեին հայ գյուղացիներին հասցված վնասները: Տուրք չտվողներին որոշվեց բաց չթողնել յայլաները:

Համագումարն ընտրեց օկրուգային խորհուրդ՝ բաղկացած հայ եւ մուսուլման անդամներից:

Խորհրդի պարտականությունն էր ստեղծել ուժեղ վարչական ապարատ՝ անիշխանության դեմ պայքարելու եւ հարկերը հավաքելու համար: Դա Անդրկովկասյան Կոմիսարիատի միակ եւ անհաջող փորձն էր՝ կազմակերպելու տեղերում իշխանություն: Օկրուգային խորհուրդը, որը բնականաբար պիտի լինեի ավելի հեղինակավոր, քան, ասենք, Շուշու Ազգամիջյան կոմիտեն, Միջկուսակցական բյուրոն կամ մուսուլմանական Ազգային կոմիտեն, անընդունակ գտնվեց դառնալու Ղարաբաղի երկու զոնաների համար տե-



դական գործունակ միասնական իշխանություն: Նա բավականացավ միայն նրանով, որ կազմակերպեց գրասենյակ, ընտրեց նախագահ եւ քարտուղար ու ապա, առանց որեւէ շոշափելի գործ կատարելու, քայքայվեց ու անհետացավ Ղարաբաղի հորիզոնից: Այդ կազմալուծման պատճառը նույն այն ցեցն էր, որ կրծում էր նաեւ իրեն՝ Անդրկովկասի Կոմիսարիատին՝ ներսից: Դա թե՛ մեկի եւ թե՛ մյուսի մեջ գերիշխող բեկական-կալվածատիրական-ազնվականական տարրն էր, որ իր տնտեսական-սոցիալական ձգտումներով եւ քաղաքական ռեակցիոն իդեոլոգիայով ստեղծել էր ներքին անհաղթահարելի հակասություններ: Նա իր հակաժողովրդական քաղաքականությունը ոչ մի համակրանք եւ ազդեցություն չկարողացավ ձեռք բերել տեղական ժողովուրդների շրջանում: Թյուրք աշխատավոր ժողովուրդը թեեւ ակամայից իր ճակատագրի տնօրինությունը հանձնել էր իրեն կեղեքող բռնակալ բեկերի եւ խաների ձեռքը, բայց նա շարունակում էր ատել նրանց իր ամբողջ հոգով:

Օկրուգային համագումարի ընթացքում տեղի ունեցավ մի անհաճո միջադեպ, որը քիչ էր մնում ոչ միայն խափաներ համագումարի ամբողջ աշխատանքը, այլեւ դառնար արյունահեղության պատճառ՝ ի չիք դարձնելով Ղարաբաղի հայ եւ մուսուլման լավագույն մարդկանց ջանքերը՝ պահպանելու խաղաղությունը եւ համերաշխությունը երկու հարեւան ժողովուրդների միջեւ:

Համագումարի նիստերը տեղի էին ունենում Շուշու մուսուլմանական քաղաքամասում, «խանի տուն» կոչված հին բնակելի շենքում, որի սյունազարդ պատշգամբից դիտողի առաջ բացվում է տեղանքի մի ընդարձակ, սքանչելի տեսարան, որ ընդգրկում է հայկական Ղարաբաղի արեւելյան կողմում Ասկերանից դեպի հյուսիս եւ հարավ ձգվող լեռնային զանգվածները եւ դաշտային Ղարաբաղի անծայրածիր հարթությունը, որ երիզվում է մշուշապատ հորիզոնում Կովկասյան լեռների բարձրաբերձ գագաթների ձյունապատ շղթայով: Համագումարի 4-րդ եւ կարծեմ վերջին նիստում, հայ պատգամավորներից Մելիքսեթ Նսայանն իր ելույթի վերջում, խոսքն ուղղելով համագումարի պատգամավոր թյուրք կալվածատերերին՝ զայրալից եւ սպառնական ժեստերով հայտարարում է. «Բեկեր, խաներ եւ աղալարներ, դուք, որ այսօր այս հինավուրց տան մեծ պատշգամբից հիանում էիք նրա առաջ բացվող հոյակապ տեսարանը դիտելով, դուք այդ ժամանակ իսկի մտածո՞ւմ էիք, որ երբ բոլշևիկները մտնեն Ղարաբաղ, ձեր անհաշիվ շարա-

գործությունների համար ձեզ մեկ-մեկ պիտի կախեն հենց այդ պատշգամբի սյուներից»: Հայ պատգամավորներից մեկ ուրիշը՝ Հակոբ Բալասանյան, թյուրքերեն է թարգմանում Նսայանի հայերեն ճառը, բայց մեղմելով նրա սուր արտահայտությունները եւ առանց մի բառ անգամ թարգմանելու թյուրք բեկերին ուղղված վերջին սպառնական խոսքերից: Սակայն բեկերից մեկը, որ լավ հասկանում էր հայերեն, պահանջում է ամբողջությամբ եւ ճիշտ թարգմանել Նսայանի ասածները: Այդ պահանջին աղմուկով միանում են մյուսները: Բալասանյանն ընկնում է անհարմար կացության մեջ: Այդ ժամանակ Նսայանը համարձակ բարձրանում է տեղից եւ իր ամբողջ ճառը նույն տոնով կրկնում բառ առ բառ մաքուր թյուրքերեն լեզվով<sup>13</sup>: Բեկերի շրջանում վայրկենապես բռնկվում է մեծ իրարանցում եւ վրդովմունք: Միջոցորտն արագորեն սկսում է էլեկտրականանալ: Առաջանում է խիստ վտանգավոր լարվածություն: Բեկերից ոմանք բռնելով դաշույնների կամ սրերի դաստակներից, բարձրագույն աղաղակներով պատրաստվում են հարձակվելու Նսայանի եւ հավանորեն նաեւ մյուս հայ պատգամավորների վրա: Մինչդեռ Նսայանը, բոլորովին անվրդով բազմած իր տեղում, ժպիտը դեմքին անտարբեր նայում էր տեղի ունեցող իրարանցմանը: Հայ եւ մուսուլման ինտելիգենցիայի ջանքերով հաջողվում է վերջապես հանգստացնել բորբոքված կրքերը եւ, բարեբախտաբար, միջադեպը հարթվում է առանց բարդությունների:

Նսայանի այդ ելույթը քաղաքի հայ հասարակայնության կողմից գնահատվեց իբրեւ անխոհեմ, անհեռատես եւ իր բնույթով գրգռիչ գործողություն, որ կարող էր պատճառ դառնալ արյունահեղության: Միջադեպը ցույց տվեց, թե որչափ լարված էին ազգայնական կրքերը, եւ ինչպես մի անզգույշ խոսք կամ գործողություն կարող էր նետել Ղարաբաղը ազգամիջյան արյունալի բախումների վիճակ: Բարեբախտաբար, համերաշխությունը եւ խաղաղությունը պահպանելու ազնիվ պայքարում հայերի հետ էր մուսուլման մտավորականության լավագույն, թեպետեւ փոքրաթիվ մասը՝ Լյուֆտալի-բեկ Բեհբուդովի գլխավորությամբ: Վերջինս մեծ աշխույժով եւ անկեղծությամբ աշխատում էր պահպանել բարի հարեւանական հարաբերությունները հայ եւ մուսուլման ժողովուրդների միջեւ: Այդ վեհ նպատակի

<sup>13</sup> Նսայանը երկար աշխատել էր Բաքվում հայ եւ թյուրք բանվորների շրջանում եւ լավ գիտեր թյուրքերեն:



համար Բեհրուդովը շինայեց մինչև իսկ իր կյանքը:

Կուֆտալիի շուրջը խմբված թյուրք առաջագետ ինտելիգենցիան, թեև փոքրամասնություն էր կազմում բոլիշկ Մեհմանդարովի ռեակցիոն եւ հայատյաց համախոհների թվի համեմատությամբ, այնուամենայնիվ, այդ փոքրամասնությունը վայելում էր քաղաքի մուսուլման բնակչության աշխատավոր մեծամասնության համակրանքը:

Հայտնի էր նաեւ, որ մուսուլմանության ղեկավար մասի՝ բեկերի եւ խաների քաղաքական օրիենտացիան թուրքական էր: Մուսուլման կալվածատերերի դասակարգային ինքնապահպանության բնագոյը, նրանց համար մահացու վտանգներով հղի այդ խառը ժամանակներում, մղել էր նրանց օսմանյան թուրքերի գիրկը՝ վամպիրների այդ ոհմակին դարձնելով պանթուրքական, պանիսլամական գաղափարախոսության կատաղի հետեւորդներ:

Ինչ վերաբերում է թյուրք աշխատավոր գյուղացիության, նա իր առողջ բնագոյի թելադրանքով, իհարկե, կողմնակից էր համերաշխության հարեւան հայ աշխատավորության հետ: Բայց նա էլ ճնշված էր, տգետ, մոլեռանդ, իր բեկերի, խաների, մուլաների եւ սեփական «ղոշիների» գերին, որոնց ակամա լսում էր ու հնազանդվում:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո մուսուլման գյուղացիության շրջանում ծայր առած ագրարային շարժումները, դժբախտաբար, անհաջող վախճան ունեցան: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ռեակցիոն ուժերի գերիշխանության հաստատումն Անդրկովկասում հնարավորություն տվեց մուսուլման կալվածատերերին օգտվելու երկրում ստեղծված իրադրությունից եւ բնում խեղդելու հողային շարժումները: Հինդարխի գյուղացիական ապստամբության ղեկավար հերոս Սալմանը կարողացավ առժամանակ խուսափել բեկերի վրեժխնդրությունից եւ ապաստանել Շուշում հայերի մոտ: Նա այնուհետեւ հայերի օգնությամբ անցավ Գանձակ եւ այնտեղ, շատ չանցած, դավաճանաբար սպանվեց թյուրք բեկերի վարձկանների ձեռքով: Ժողովրդի ծոցից ելած այդպիսի հատ ու կենտ անձնվեր հեղափոխական գործիչները Անդրկովկասյան Կոմիսարիատի հողային ռեակցիոն քաղաքականության շնորհիվ հալածվեցին կամ ոչնչացան մուսուլման կալվածատերերի ձեռքով, եւ թյուրք աշխատավոր գյուղացիության վրա շարունակեցին իշխել նրա նախկին արշունածուծ կեղեքիչները:

Ղարաբաղի հայ ղեկավարներն այդ ամենը տեսնում եւ նախագգում էին գալիք վտանգները: Նրանք չզապարեցին եւ չթուլացրին երկու ժողովուրդ-

ների միջեւ համերաշխությունը պրոպագանդելու ու պահպանելու համառ եւ անձնվեր աշխատանքը, երկու կողմերի միջեւ տեղի ունեցած լուրջ կամ նույնիսկ աննշան միջադեպը խաղաղությամբ հարթելու գործունե ձեռնարկումները:

Հիշենք մանր ու խոշոր դեպքերից միայն մեկը:

1918 թվի ապրիլի սկզբներին խաչենցիները, հացի կարիքից դրդված, գաշբուլաղցի տաքգլուխ երիտասարդների առաջնորդությամբ հարձակվում են հայկական Ղարաբաղի սահմաններում գտնվող մուսուլմանական Խոջալու գյուղի վրա, հափշտակում գյուղացիների հացահատիկը, ինչքան կարողանում են, եւ քշում գյուղի մանր ու խոշոր եղջերավոր անասունները: Խոջալեցիները հարձակման հենց սկզբում սարսափահար փախչում են գյուղից եւ ապաստանում խճուղու մոտիկ մուսուլմանական Մալիբեկլի գյուղում:

Շուշու թյուրքական Ազգային կոմիտեն այդ դեպքի առթիվ նույն օրը եւեթ հայտնում է իր բողոքը Միջկուսակցական բյուրոյին: Վերջինիս կողմից զինվորական կոմիսարն անհապաղ մեկնում է Խաչեն՝ քննելու տեղի ունեցած հարձակման եւ կողոպուտի հանգամանքները, երեւան հանելու այդ գործի հանցավորներին եւ ամեն կերպ աշխատելու հարթել վտանգավոր միջադեպը, որ կարող էր լուրջ բարդությունների առիթ դառնալ: Միջադեպը խաղաղությամբ հարթելու համար անհրաժեշտ էր առաջին հերթին թալանված խոշոր եւ մանր անասուններն իսկույն ժողովել եւ վերադարձնել խոջալեցիներին: Այդ միջոցառման հաջողության համար պահանջվում էր գործել արագորեն եւ եռանդով՝ հաշվի առնելով յուրաքանչյուր րոպեն անգամ, այսպես՝ թալանված անասունները կարող էին մեջ-մեջ արվել եւ մորթվել ավարառուների կողմից:

Երեկոյան Բալուջա գյուղը հասնելով, զինվորական կոմիսարը կանգ չառավ այնտեղ եւ շարունակեց ճանապարհը դեպի Դաշբուլաղ, ուր, ըստ լուրերի, գտնվում էր ավարի մեծ մասը: Բայց մի անսպասելի դիպված խանգարեց նրան գիշերը հասնելու Դաշբուլաղ: Բալուջա գյուղով անցնելիս, հենց գյուղի մեջ սալթաքում ընկնում է նրա ձին եւ տակով անում նրան՝ սաստիկ վնասելով աջ ոտի ծունկը: Քանի դեռ ցավերը չէին սաստկացել, կոմիսարը կարողանում է շարունակել ճանապարհը: Բայց երբ ոտքի ցավերն ուժեղացան, եւ այն սաստիկ ուռավ, նա ստիպված եղավ իր ուղեկիցներով գիշերել ճանապարհի վրա գտնվող Մեհտիշեն գյուղում: Չնայելով տանտիրոջ եւ նրա տնեցիների բոլոր հոգատար ջանքերին՝ ցավերը չմեղմա-



ցան ամբողջ գիշեր: Այնուամենայնիվ, վաղ առավոտյան, տակավին լույսը չբացված, կոմիսարը կարգադրեց իր մարդկանց շտապ պատրաստել ձիաները՝ ճանապարհվելու Դաշբուլաղ: Տանտիրոջ հորդորները եւ թախանձանքները՝ չբարձրանալ անկողնից, շնորհակալությամբ մերժեցին: Կոմիսարը տանտիրոջ եւ իր ուղեկիցների օգնությամբ նստելով ձին, ուղեւորվեց Դաշբուլաղ: Դաշբուլաղում գյուղի լիազորներին առաջարկվեց անմիջապես միջոցներ ձեռք առնել հավաքելու խոջալեցիներից խլված անասունները եւ մատնանշել ավարառության պարագլուխներին: Վերջիններս, սակայն, ժամանակ էին գտել ծլկելու գյուղից: Հաստատվեց, որ, հիրավի, թալանված անասունների առյուծի բաժինը զավթել էին դաշբուլաղցիները: Գոմերում թաքցրած եւ գյուղի ապրանքի հետ հանդ ուղարկված անասունները հայտնաբերվեցին: Հաջորդ առավոտյան բերին նաեւ մյուս գյուղերում եղածները:

Թալանված ապրանքը բոլոր գյուղերից Դաշբուլաղ հավաքելուց հետո, փոխադրվեց մուսուլմանական Ազգային կոմիտեի հետ պայմանավորված վայրը՝ «Խանի-բաղ»՝ խոջալեցիներին վերադարձնելու համար: Վերջիններս, իհարկե, շատ ուրախ եղան, որ ետ են ստանում գրեթե ամբողջ խլված անասունները: Թյուրքական Ազգային կոմիտեի ներկայացուցիչ Աբուլֆատբեկը, ըստ երեւոյթին, այնքան էլ գոհ չէր, որ հայերի եւ խոջալեցիների միջեւ տեղի ունեցած միջադեպը լուծվում է այդպես խաղաղ. նա գրգռում էր նրանց պահանջել հայերից նաեւ կողոպտված հացահատիկը: Բայց տուժած կողմը ավելի խոհեմ գտնվեց եւ հրաժարվեց այդպիսի պահանջից: Խոջալեցիները, հաջորդ օրը, ինչպես խոստացել էին, իրենց ընտանիքներով վերադարձան Խոջալու: Նրանց խոստացված էր լիակատար ապահովություն: Կոմիսարը, այնուհետեւ, վերջացած համարելով իր միսիան, վերադարձավ քաղաք եւ, ոտքի ջարդվածքի բարդացման հետեւանքով երկար ժամանակ չկարողացավ բարձրանալ անկողնից՝ թողնելով դաշբուլաղցի «քյալլագլուղների» գործի քննությունը իր օգնականին:

Խաղաղասիրական այդպիսի անձնուրաց քաղաքականություն վարելով հանդերձ, հարազատ ժողովրդի կյանքի եւ հանգստության համար ծանր պատասխանատվություն ստանձնած գործիչներն իրենց գործունեության հենց սկզբից չէին տարվում ավելորդ լավատեսությամբ, չէին կլանվում խաբուսիկ եւ վտանգավոր պատրանքներով: Տասնյակ հազարավոր ռուս զինվորների բռնի զինաթափումները եւ բեկական բազմահազար հորդանների

ապառազինումը Զարաբաղի սահմանակից մուսուլմանական շրջաններում, օսմանյան թուրքերի արագ առաջխաղացությունը դեպի Անդրկովկասի սահմանները - այդ ամենն ահազանգում էին լինել շրջահայաց եւ, զգաստութեն գնահատելով հետզհետե բարդացող իրադրությունը՝ պատրաստ լինել զինագրավելու գալիք փորձությունները: Պատմությունը հայ ժողովրդի մի բազմամարդ, կորովի, կենսունակ հատվածի գոյության, նրա լինել-չլինելու հարցն էր հրապարակ քաշում, եւ հավասարազոր կլինե՞ր դավաճանության, եթե աչքաթող արվեին ժողովրդի պաշտպանության խնդիրները:

Զարաբաղը զինված էր տակավին 1905-1906 թվականներից, այն դժբախտ տարիներից, երբ ցարական իշխանությունները, անմասնակից դարձնելու համար Անդրկովկասը Ռուսաստանում բռնկված հեղափոխական շարժումներին, սուր թշնամություն էին առաջ բերել հայ եւ թյուրք ժողովուրդների միջեւ եւ ազգամիջյան արյունահեղ մարտերի ասպարեզ դարձրել ամբողջ Անդրկովկասը:

Երկրում եղած զենքի մոտավոր հաշվառումը ցույց տվեց, որ գրեթե չկա մի ընտանիք, որ չունենա մեկ կամ ավելի հրացան եւ այլ զենքեր: Զենք կրելու ընդունակ գրեթե բոլոր տղամարդիկ զինված էին: Բացի հրացաններից շատերը ունեին նաեւ սրեր եւ այլեւայլ սիստեմի ատրճանակներ: Բայց հայկական Զարաբաղի ամբողջ դժբախտությունն այն էր, որ խիստ սակավ էր զինամթերքը, մարտական փամփուշտը՝ գլխավորապես ռուսական երեք գծանի հրացանների համար: Իսկ այն որեւէ տեղից ձեռք բերելու հնարավորություն Զարաբաղը չունեւ: Ժողովրդի մեջ եղած փամփուշտը հազիվ կարող էր բավականանալ երկու-երեք օրվա տաք կռիվների: Գանձակը, որտեղից միայն կարելի էր որեւէ բան հուսալ, գրեթե ոչինչ չտվեց, բացի վարժական փամփուշտներից եւ մի քանի տասնյակ հին սիստեմի հրացաններից, որոնք գործածական էին միայն 19-րդ դարի 70-ական թվականներին: Պիտի խոստովանել, որ Գանձակի եւ նրա շրջանի հայությունը ինքը մեծ կարիք ուներ զենքի եւ զինամթերքի: Նա գտնվում էր անապահով եւ չափազանց վտանգավոր պայմաններում: Գանձակում էր գործում մուսավաթականների ռազմակայանը, եթե կարելի է այդպես կոչել արյունարբու ելուզակների այդ գլխավոր կենտրոնը, ուր յուրաքանչյուր օր ներս ու դուր էին անում մուսուլմանների լավ սպառազինված հազարավոր բանդաներ, որոնք ամեն րոպե կարող էին առիթ ստեղծել թալանի եւ մասսայական կոտորածների համար: Գանձակում բռնությունները, խուզարկությունները եւ ձեռքա-



կալույթյունները հայերի շրջանում դարձել էին սովորական երեւոյթ:

Գանձակի հայոց ազգային խորհրդի նախագահը 1918 թ. հուլիս ամսին Ադրբեջանի կառավարության նախագահին ուղղված «մեմորանդումի» մեջ, բողոքելով Գանձակի եւ շրջանի հայույթյան դեմ գործադրվող բռնությունների առթիվ, նշում էր հետեւյալ կոնկրետ փաստերը.

«... 1. Գանձակ քաղաքում եւ շրջանում հայերի համար բացակայում է անձի եւ գույքի անձեռնմխելիությունը: Ընդհանուր խուզարկությունները եւ ձերբակալությունները, որոնք կատարվում են ստորին վարչական անձանց եւ հաճախ նույնիսկ սովորական, առանց համազգեստի, զինված մարդկանց կողմից՝ դարձել են առօրյա երեւոյթ: 2. Քաղաքում իշխում է ոստիկանության քմահաճույքը եւ կամայականությունը, մասնավորապես՝ ծեծը: Մի որեւէ ոստիկան կարող է ամեն տեսակի անարդարացի եւ բռնության գործողություններ կատարել հայերի նկատմամբ: 3. Համատարած են վարչական պատիժներն առանց դատի եւ դատաստանի: 4. Կատարվում են տնտեսական ճնշումներ. հայերը հնարավորություն չունեն իրենց գործածության համար գնելու թեկուզ փոքր քանակությամբ ցորեն: Իշխանությունների մի շարք ձեռնարկումները, որոնք կապված են բնակիչների պարտավորությունների կամ ծախքերի հետ, գործադրվում են միայն հայերի նկատմամբ: 5. Հայերի նկատմամբ տեղի են ունենում գույքի եւ դրամի բռնի կորզումներ: 6. Ամենուրեք գոյություն ունի անբարյացակամ վերաբերմունք դեպի հայերը, նրանք մոռացվածների կողմից ենթարկվում են բռնությունների եւ ծաղր ու ծանակի...»<sup>14</sup>:

1918 թ. հուլիսին Ադրբեջանի կառավարությունը Գանձակի լեռնային մասի հայ գյուղացիությունից պահանջում էր հանձնել զենքերը<sup>15</sup>: Եւ ոչ միայն Գանձակի եւ նրա շրջանի, այլեւ ընդհանրապես Ադրբեջանի տերիտորիայում ցրված բազմաթիվ հայաշատ վայրերի բնակչությունը գտնվում էր կոշմարային կացության մեջ՝ մշտապես ենթակա ադրբեջանական իշխանությունների անվերջ բռնություններին եւ կամայականություններին:

1918 թ. հունիսին Զանգեզուրի վրայով ճակատից վերադարձած հայ զինվորների մի խումբ՝ բաղկացած վեց հոգուց, կարողացել էր մեծ դժվարություններով Շուշի հասցնել եւ հանձնել Միջկուսակցական բյուրոյին եր-

կու գնդացիը՝ «ձեռքի» եւ «Մաքսիմ» սիստեմի, բայց, դժբախտաբար, մեկական ժապավենով եւ համարյա առանց փամփուշտի: Զինվորները հայտնեցին, որ Ղարաբաղի համար Թիֆլիսում կազմակերպված Շուշու գունդը՝ բաղկացած մի քանի հարյուր ղարաբաղցի եւ նուխեցի զինվորներից ու սպաններից, գնդապետ Միքայել Մելիք-Շահնազարյանի գլխավորությամբ հասել է արդեն Սիսիան եւ շուտով կլինի Գորիսում, որտեղից նա շարժվելու է դեպի Ղարաբաղ՝ իր հետ բերելով երկու դաշտային թնդանոթ, մեծ քանակությամբ հրացաններ եւ զինամթերք<sup>16</sup>:

Այդ տեղեկությունը Ղարաբաղի ղեկավարությունը մեծ հույսեր ներշնչեց: Երբ գնդապետը հաջողությամբ տեղ հասներ, Ղարաբաղի հայության զինվորական կազմակերպությունը ոչ միայն թնդանոթներ եւ առատ զինամթերք կունենար իր տրամադրության տակ, այլեւ կկարողանար լավագույն կերպով կազմակերպել երկրի զինված ուժերը՝ կարող, փորձված զինվորականներից ստեղծելով գլխավոր շտաբ եւ հրամանատարություն, որոնք իրենց ձեռքը կառնեին երկրի ուժերի ղեկավարությունը, զինվորական անհրաժեշտ կազմակերպվածություն եւ կարգ կմտցնեին քաղաքի ու գյուղերի մարտական ուժերի մեջ, կմշակեին զորակոչի եւ երկրի պաշտպանության որոշակի պլան, մի խոսքով՝ կվճռեին ռազմական գործողությունների հետ կապված նախապատրաստական աշխատանքների բոլոր հիմնական հարցերը:

Սակայն այդ բոլոր հույսերը եւ ակնկալումները, դժբախտաբար, չիրականացան:

\* \* \*

Անդրկովկասի թուրքական սահմանի երկարությամբ եւ Բաքվում դեպքերը զարգանում էին մեծ թափով:

Ապրիլ ամսի կեսերին Գանձակից ստացված լուրերի համաձայն՝ մարտ ամսի 30-ից մինչեւ ապրիլ ամսի սկզբները Բաքվում տեղի էին ունեցել կա-

<sup>14</sup> ՀՊՊԱ, ֆ. 223, գ. 86, թ. 37-39:

<sup>15</sup> ՀՊՊԱ, ֆ. 200, գ. 104, թ. 1-3:

<sup>16</sup> Շուշու գնդի մասին Ղարաբաղում տեղյակ էին վաղուց: 1917 թ. նոյեմբերին Թիֆլիս էր գործուղվել Հայրապետ Մուսայելյանը՝ հատուկ հանձնարարություններով: Գորիսի վրայով վերադառնալով Շուշի, նա Միջկուսակցական բյուրոյի նիստում իր ներկայացրած զեկուցման մեջ հիշատակել էր նաեւ Շուշու գնդի մասին, որը 1917 թ. նոյեմբերի սկզբներից կազմակերպվել եւ մեծաքանակ զինամթերքով դուրս էր եկել Թիֆլիսից՝ Ղարաբաղ անցնելու մտադրությամբ:



տաղի քաղաքացիական մարտեր՝ մուսավաթական ռեակցիոն զինված հորդանների եւ հեղափոխական ուժերի միջեւ: Մի քանի օրվա արյունահեղ ճակատամարտերից հետո մուսավաթական- բեկական զինված ուժերը, որոնք գործում էին մուսուլմանական «Դիկայա դիվիզիայի» ընդհանուր ղեկավարությամբ, գլխավորն ջախջախվել եւ դուրս էին շարտվել Բաքվից:

Հեղափոխական ուժերի այդ հաղթանակից հետո, որի մեջ հայկական զորամասերի մասնակցությունը ունեցել էր վճռական նշանակություն, Բաքվում ստեղծվել էր խորհրդային իշխանություն՝ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ: Այդ լուրերը Ղարաբաղում ընդունվեցին ուրախությամբ: Ապագայի նկատմամբ խրախուսիչ հեռանկարներ էին բացվում:

Մուսավաթական ռեակցիոն ուժերը Բաքվում վճռական պարտություն կրելուց հետո նահանջել ու ամրացել էին Գանձակում եւ ժամ առ ժամ սպասում էին օսմանյան թուրքերին՝ միացյալ ուժերով Բաքվի վրա գրոհելու համար: Անցյալի գրեթե նույնական պատմական փաստերից կարելի էր եզրակացնել, որ թուրքերը Բաքվի վրա արշավելուց առաջ կարող են հաշիվ տեսնել Գանձակի շրջանի լեռնաբնակ հայության եւ հատկապես Ղարաբաղի հետ՝ իրենց թիկունքն ապահովելու նպատակով: Այդ հանգամանքն սկսեց լուրջ անհանգստություն պատճառել Ղարաբաղի ղեկավարությանը՝ երկրի մոտալուտ ճակատագրի համար:

Հաշիվներ էր արվում, թե երբ կհասնի Ղարաբաղ զնդապետ Մելիք-Շահնազարյանը Շուշու գնդով, իսկ այդ հաշիվները միխթարական ոչինչ չէին ասում: Գնդի Գորիս եւ ապա Ղարաբաղ անցնելը կապված էր մեծ դժվարությունների ու վտանգների հետ: Այդ բոլոր հաշիվները եւ կասկածները թելադրում էին արտաքին արագ օգնության հետ մեծ հույսեր չկապել, այլ երկրի պաշտպանական միջոցներն ուժեղացնելու համար տեղում որեւէ բանի ձեռնարկել, թեեւ այդ ասպարեզում շոշափելի արդյունքների հասնելու առանձին հույսեր չկային:

Կարճ ժամանակամիջոցում Շուշում հիմնվեց արհեստանոց՝ ինժեներ Սուրեն Օհանյանի ղեկավարությամբ: Մեծ դժվարություններով հարմարություններ ստեղծվեցին ձուլարանի համար: Այդտեղ պղնձից ձուլվեցին 150 միլիմետրանոց երկու հին սիստեմի ուժանետներ, իրենց ռումբերով: Փորձերը ցույց տվին, որ դրանք կարող են գործել 1000-1500 մետր հեռավորության վրա: Արհեստանոցում կարգի բերվեցին Շուշու գաղտնի պահեստներում անցյալից պահպանված զենքերը: Գանձակից բերված տասը հազա-

րից ավելի վարժական փամփուշտների համար պատրաստվեցին պղնձից զնդակներ: Դա փամփուշտ ձեռք բերելու հուսահատական միջոց էր: Հետագայում փորձը ցույց տվեց, որ այդ կարգի փամփուշտները լուրջ կոխիների համար անօգտագործելի են: Երեխայություն կլինեք, իհարկե, հույս դնել տնայնագործական հնարներով ստեղծված նման միջոցների վրա, երբ հանեիքալը կանգներ Ղարաբաղի դռների առաջ՝ իր լավ սպառազինված կանոնավոր զորամասերով:

Արհեստանոցի իրական օգուտն այն եղավ, որ քաղաքացիներից եւ գյուղացիներից շատերի մոտ եղած նորոգության կարիք ունեցող զենքերը կարգի բերվեցին:

Ռազմամթերքի պակասն, այնուամենայնիվ, շարունակում էր մնալ Բյուրոյի մշտական մտահոգության առարկան: Ժողովուրդը եւ նրա գործիչները հայացքները շարունակում էին ուղղել դեպի արեւմուտք, սպասելով, թե երբ վերջապես Զանգեզուրից Ղարաբաղ կգա «Շուշու գունդը»՝ իր մեծ պաշարով:

## 5. ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՐԻԲՈՒՆԱԼ

1918 թ. ապրիլ ամսի վերջերին Շուշում տեղի ունեցավ մի անախորժ զեպք, որը թեեւ շուտ լուծվեց, բայց, այնուամենայնիվ, պատճառ դարձավ Միջկուսակցական բյուրոյի աշխատանքների առժամանակյա խանգարման:

Դաշնակցություն կուսակցությանը հարող մի փոքրիկ խմբակ, որը երբեք չնահանջեց իր նեղմիտ դիրքերից եւ շարունակում էր պահանջել, որ իշխանությունը կազմվի բացառապես դաշնակցականներից, այդ խմբակը Բաքվի նախկին բանվոր Մուշեղ Զաքարյանի գլխավորությամբ կարողացավ մոլորեցնել կուսակցության քաղաքային կազմակերպության անդամների մի մասին եւ ստեղծել իր համակիրներից նոր կոմիտե: Այդ կոմիտեն որոշեց ցրված հայտարարել Միջկուսակցական բյուրոն՝ թողնելով հին կազմից միայն զինվորական կոմիսարին: Բյուրոյի փոխարեն կոմիտեն իր համակիրներից նշանակեց նոր կառավարություն: Այդ յուրատեսակ ուզուրպատորները չքաշվեցին նույնիսկ Բյուրոյի նախագահ Հայրապետ Մուսայելյանի փոխարեն, որ վախելում էր բոլորի սերն ու վստահությունը, նորաթուխ «կառավարության» գլուխ կարգել քաղաքում տխուր համբավ ունեցող մի ոչնչության:



Մուշեղ Զաքարյանի<sup>17</sup> սարքած այդ «խռովությունը» հաջողություն չունեցավ: Այն տեւեց ոչ ավելի, քան 5 օր: Զինվորական կոմիսարը եւ Շուշու զինված ուժերը հայտարարեցին, որ իրենք հավատարիմ են մնում հեղափոխական կուսակցությունների խորհրդին (Միջկուսակցական բյուրոյին) եւ չեն ճանաչում Զաքարյանի ստեղծած «կառավարությունը»: Այդքանը բավական էր, որ «խռովությունը» համարվեր լիկվիդացված: Դրանից հետո հրավիրված՝ դաշնակցության քաղաքային կոնֆերանսը, գավառի ներկայացուցիչների մասնակցությամբ, դատապարտեց Մուշեղ Զաքարյանի պառակտիչ գործունեությունը, վերականգնեց եւ ընդունեց ճիշտ նախկին կոմիտեի իրավունքները ու առաջարկեց այնուհետեւ եւս հետեւողականորեն կիրառել կռաւիցիայի սկզբունքը Ղարաբաղի կառավարական մարմին ստեղծելու ժամանակ:

«Խռովության» ընթացքում Միջկուսակցական բյուրոյի ոչ-դաշնակցական անդամների եւ ընդհանրապես ինտելիգենցիայի շրջանում առաջ եկած տարակուսանքը, շփոթությունն ու երկյուղը՝ ազգային միասնական հեղափոխական ճակատի հետագա բախտի նկատմամբ, հնարավոր եղավ փարատել այդ կոնֆերանսի որոշումներից հետո:

Զաքարյանի կարճատեւ ավանտյուրայի ընթացքում ծագել էին մի շարք նոր հրատապ հարցեր, որոնք շտապ լուծում էին պահանջում: Մուսայեյլանը հրավիրեց Բյուրոյի ընդլայնած նիստ: Այդտեղ քննության ենթարկվեցին Բյուրոյի գործունեության մեջ նկատված բացերը՝ դիմազրկությունը եւ պատասխանատվության բացակայությունը, որ հաճախ հանդես էր գալիս Բյուրոյի որոշումների կատարման մեջ, նրա անդամների մի մասի հոսունության պատճառով: Ժողովը որոշեց Բյուրոյի կազմի համար այս անգամ կատարել կուսակցություններից եւ խմբակներից պերսոնալ ընտրություններ՝ մեծացնելով Բյուրոյի յուրաքանչյուր անդամի պատասխանատվությունը:

Բաքվի հաջողությունները շարունակում էին ոգեւորել Ղարաբաղի հայությանը եւ նրա գործիչներին: Ապրիլի 25-ին այնտեղ վերջնականապես

<sup>17</sup> Այդ այն Մուշեղ Զաքարյանն է, որը 1920 թ. մայիսին, Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, երբ Դրոն իր զորամասով Ղարաբաղից քաշվել էր Զանգեզուր, Բոնակոթ գյուղի զինված համազրուղացիներով դիրքեր էր գրավել դեպի Վայոց Ձոր եւ Երեւան տանող ճանապարհը եզերող բլուրների եւ լեռների վրա ու այնտեղից «վերջնագիր» ներկայացրել Դրոյին՝ անմիջապես հեռանալ Զանգեզուրից, որովհետեւ «իրենք պատրաստվում են ընդունելու Կարմիր Բանակին»:

ձեւավորվել էր իշխանությունը: Կազմվել էր Ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ Ստեփան Շահումյանի գլխավորությամբ: Ոգեշնչված դրանով, որոշվեց Միջկուսակցական բյուրոն վերանվանել «Կոմիսարների խորհուրդ»: «Ժողովրդական» մակդիրից ժողովը հրաժարվեց, որովհետեւ խորհուրդը չէր ընտրվում ժողովրդից, նրա ներկայացուցչական ժողովից: Այդպիսի ընտրություն տեղի ունեցավ միայն հուլիս ամսին, երբ Ղարաբաղի առաջին պատգամավորական ժողովի (համագումարի) կողմից ընտրվեց «Ժողովրդական կառավարությունը»:

Փաղտնի քվեարկությամբ «Կոմիսարների խորհրդի» անդամներ ընտրվեցին. 1. Հայրապետ Մուսայեյլան՝ նախագահ, 2. Աշոտ Մելիք-Հովսեփյան՝ արդարադատության կոմիսար, 3. Արսեն Բակունց՝ արտաքին գործերի կոմիսար, 4. Արամ Միքայելյան՝ ֆինանսների կոմիսար, 5. Հարություն Թումյան՝ զինվորական կոմիսար, 6. Ասծատուր Ավետիսյան՝ պարենավորման կոմիսար, 7. Արտաշես Պետրոսյան՝ ներքին գործերի կոմիսար: Վճռական ձայնի իրավունքով Կոմիսարների խորհրդի քարտուղար ընտրվեց՝ Ռուբեն Տեր-Փասպարյան (էսեռ):

Ամբողջ Լեռնային Ղարաբաղը բաժանվեց վարչական երկու մեծ շրջանների, որոնց համար նշանակվեցին գլխավոր լիազորներ՝ Եղիշե Իշխանյան՝ Խաչեն - Զիվանշիրի (Ջրաբերդ, Գյուլիստան) շրջանի համար եւ Արստ Հովհաննիսյան՝ Վարանդա - Դիզակի շրջանի համար: Ազգամիջյան կոմիտեի անդամներ նշանակվեցին՝ Հայրապետ Մուսայեյլան, Աշոտ Մելիք-Հովսեփյան, Լեւոն Վարդապետյան, Արամ Միքայելյան, Նիկոլայ Իսախանյան եւ Արտաշես Պետրոսյան:

Ղարաբաղում այդ ժամանակ բոլոր քաղաքական հոսանքների համակրանքը Հոկտեմբերյան հեղափոխության կողմն էր, բացի, իհարկե, կադետներից:

Արդարեւ, Ղարաբաղի ակտիվ մտավորականությունը չէր կարող վրաց մենշեւիկների պես նեղ, դոգմատիկ, հակաժողովրդական կոնցեպցիայի հետեւող լինել, լավ հասկանալով, որ ռուսական ռեակցիոն ուժերի հաղթանակը ոչինչ զրավան բան չէր կարող բերել Ռուսաստանի բազմատանջ ժողովուրդներին, որոնք վաղուց ծանոթ էին ռուսական ռեակցիայի զազրելի կերպարանքին: Բացի սկզբունքային կողմնորոշումից, Ղարաբաղի հայ առաջավոր մտավորականությունը հավատացած էր, որ միայն Բաքվի խորհրդային իշխանությունը կարող է ի վիճակի լինել պահելու Անգրկով-



կասում գեպի հյուսիս շարժվող ռուսական էշելոնների գեթ մի մասը՝ օգտագործելու համար անդրկովկասյան հակահեղափոխության դեմ: Եւ, վերջապես, ո՞ր հայը կարող էր մոռանալ հայկական հեկատոմբները Թուրքիայում: Իսկ այժմ կոտորածների ահավոր վտանգը կախվում էր արդեն հյուսիսարեւելյան Հայաստանի հայ բնակչության գլխին: Այդ հանգամանքը, բնականաբար, պիտի ստիպեր Ղարաբաղի գործիչներին իրենց հայացքներն ուղղելու գեպի Բաքու եւ գեպի հյուսիս՝ օգնություն ակնկալելով այնտեղից:

Ի դեպ է ասել, որ կոալիցիա կազմած հայ մտավորականության քաղաքական կողմնորոշումը երբեք չգնահատվեց Շուշու բոլշեւիկյան խմբակի ղեկավարների կողմից: Թե՛ Ալեքսանդր Ռուբենին, թե՛ Սաքո Համբարձումյանը եւ թե՛ Արմենակ Ղարաբյոզյանը եւ՝ Միջկուսակցական բյուրոյի, եւ՝ Կոմիսարների խորհրդի նկատմամբ շարունակում էին պահպանել իրենց աղանդավորական, դոգմատիկ դիրքը: Նրանք մինչեւ վերջ չկամեցան այդ ծանր ժամանակներում որեւէ բանում աջակցել Ղարաբաղի ղեկավարությանը: Նրանց չափազանց նեղմիտ, կասեինք եսամոլ ընթացքը դատապարտվեց ժամանակին եւ՝ մտավորականության լավագույն մասի, եւ՝ ժողովրդական խավերի կողմից: Այդ մարդկանց անվայել դիրքը չհանդուրժեց նրանց ընկերներից միայն մեկը՝ Մելիքսեթ Եսայանը: Այդ քաղաքացիական մեծ արիության տեր, անկեղծ, ուղղամիտ եւ հայրենասեր անձը դատապարտեց իր նեղահայաց գաղափարակիցների դիրքը, եկավ Կոմիսարների խորհուրդ եւ առաջարկեց իր ծառայությունները: Եսայանը ամենքի կողմից ընդունվեց գրկաբաց: Նա բաժանեց մինչեւ վերջ այն բոլոր դժվարություններն ու դառնությունները, որ վիճակվեց Կոմիսարների խորհրդի, իսկ հետագայում «Ժողովրդական կառավարության» անդամներին:

Կոմիսարների խորհուրդը հիմնեց ժամանակավոր հեղափոխական տրիբունալ, որի առաջին գործը եղավ սպանությունների մեջ մեղադրվող մի քանի մարդկանց գործերի քննությունը: Նրկու հոգի դրանցից դատապարտվեցին մահվան, իսկ մի քանի հոգի, որոնց հանցանքը չապացուցվեց, անպարտ ճանաչվելով, ազատվեցին: Ի զգուշացումն բոլոր արկածախնդիր եւ անհանգիստ տարրերի, որոնք սովորաբար սկսում էին աշխուժանալ գարնանը, եւ առանձնապես գյուղական շրջաններում, մահվան դատավճիռը, դատարանի նիստից անմիջապես հետո, գիշերվա ուշ ժամին, մեծ պլակատի ձեւով տպագրել տրվեց Բաբաջանյանի տպարանում 1500 օրինակ, որի մի մասը հենց նույն գիշերը փակցվեց քաղաքի պատերին, իսկ մնացած օրի-

նակները հաջորդ օրը ցրեցին շրջաններում: Այդ լայնորեն հրապարակված գատավճռի թողած տպավորությունը ամենուրեք սպասածից շատ ավելի խորն էր: Հանցագործ եւ արկածների սիրահար տարրերը, որոնք հայկական շրջաններում անհանգստություն էին մտցնում, մի ավելորդ անգամ եւս համոզվեցին, որ Ղարաբաղի կառավարությունն այնքան ուժ, միջոցներ եւ վճռականություն ունի, որ առանց տատանման կարող է խստորեն պատժել բոլոր հակահասարակական գործողությունների հեղինակներին:

Դատարանի վճռի լայնորեն հրապարակումը առանձնապես կարեւոր էր հենց այդ ժամանակ, երբ քոչի խնդիրն արդեն ծառացել էր Կոմիսարների խորհրդի առաջ եւ արագ լուծում էր պահանջում, իսկ մեր թալանի սիրահարները քոչի բարձրանալուն էին սպասում իրենց շահատակություններն սկսելու համար:

### Քոչը բարձրանում է արոտավայրերը

Արդեն մայիս ամիսն էր: Թյուրք քոչվորներն սկսել էին անհանգստանալ: Նրանք իրենց բազմահազար մանր եւ խոշոր եղջերավոր անասուններով ամեն տարի բարձրանում էին Լեռնային Ղարաբաղի եւ Զանգեզուրի հովասուն արոտատեղիները: Տարվա այդ ժամանակ քոչը դառնում է ամենակենսական, հրատապ հարցը դաշտաբնակ մուսուլմանների համար: Նախորդ ամիսն օկրուգային համագումարն արդեն սահմանել էր քոչը բաց թողնելու պայմանները: Ազգամիջյան կոմիտեին մնում էր քննելու այն կոնկրետ միջոցառումները, որոնցով պիտի ապահովվեր քոչի անվտանգ անցուրետ միջոցառումները, որոնցով պիտի ապահովվեր քոչի անվտանգ անցումը սովորական ուղիներով: Եւ քոչվորները հավաքված այդ ուղիների մատուցներում, անհամբեր սպասում էին, թե երբ պիտի Ազգամիջյան կոմիտեն ավարտի այդ աշխատանքը: Հարցի արագ լուծման դժվարություններն ավարտի այդ աշխատանքը: Հարցի արագ լուծման դժվարություններից մեկը կայանում էր նրանում, որ քոչի ճանապարհին ընկած հայ գյուղացիության արյուն-քրտինքով մշակած արտերը ոտնակոխ էին լինում ամեն տարի, իսկ վնասների հատուցում սովորաբար խոստացվում էր, բայց չէր կատարվում: Այդ հողի վրա էլ ծագում էին բազմաթիվ անախորժություններ, տեղի էին ունենում բախումներ եւ նույնիսկ սպանություններ: Այժմ հարկավոր էր լուրջ միջոցներ ձեռք առնել, որ նման դեպքեր տեղի չունենան: Նրկար ջանքերից հետո վերջապես հաջողվում է հարթել դժվարությունները: Քոչին ուղեկցելու համար կազմակերպվում է ուժեղ պահպանու-



թյուն եւ հսկողություն: Ազգամիջյան կոմիտեի հայ անդամների առաջարկությամբ որոշվում է Գորիս ուղարկել մի խառը ներկայացուցչություն՝ քոչի մասին տեղեկացնելու եւ հեռագրական հաղորդակցությունը Շուշու եւ Գորիսի միջեւ վերականգնելու համար: Այդ գեղեգացիայի մեջ էր մտնում նաեւ ֆինանսների կոմիտար Արամ Միքայելյանը, որին իմիջիայլոց հանձնարարված էր Գորիսում տեղեկանալ, թե ինչ է մտածում գնդապետ Մելիք-Շահնազարյանը Շուշու գունդը Ղարաբաղ բերելու համար: Դեղեգացիան շուտով վերադարձավ Շուշի: Զանգեզուրցիները, իհարկե, չէին մերժել ընդունել քոչը, բայց պահանջել էին հատուցել վնասները: Փոստ-հեռագրական կապը, որ խզված էր Զարբուղի գծամասում մուսուլմաններից, խոստացվել էր վերականգնել, բայց օսմանյան թուրքերի ագենտուրայի դրդմամբ չկատարվեց: Գնդապետ Մելիք-Շահնազարյանի եւ նրա գնդի մասին Միքայելյանը պատմեց հետեւյալը. գնդապետը մեծ դժվարություններով հասել էր արդեն Սիսիան: Այնտեղից Գորիս էր ուղարկվել ջոկատի զինվորներից ոմն Մալինցյան՝ փոխադրական միջոցներ գտնելու համար: Զանգեզուրցիները (հատկապես Գորիսի շրջանը), սակայն, ոչ մի կերպ չէին համաձայնվել ձիաներ եւ սայլեր տրամադրել զինամթերքը Գորիս փոխադրելուն: Այդ հանգամանքն էլ շարունակում էր խանգարել գնդապետին Գորիս եւ ապա Շուշի տեղափոխվելու:

Քոչն արդեն սկսել էր շարժվել դեպի լեռները: Ղարաբաղի հայ գյուղացիությունն իր 40 հազար հեկտարից ավելի տարածություն ընդգրկող ամառային արոտավայրերից շատ քիչ էր օգտվում: Օգտվողը գրեթե բացառապես մուսուլման քոչվորներն էին: Զմեռը նրանց միլիոնից ավելի անասունների առաջ կեր էին գտնում Քռի եւ Արաքսի միջեւ ընկած հին Ուտիքի ընդարձակ, բարեբեր, տաք եւ խոտառատ տափաստաններում<sup>18</sup>, իսկ գարունը թեւակոխելուն պես, երբ շոգը սկսում էր նեղել տափաստանում, քոչվորներն իրենց անասուններով եւ սարք ու կարգով հորդում էին դեպի Լեռնային Ղարաբաղի արոտավայրերը, Զանգեզուրի խոտավետ ու ջրառատ լեռնահովիտները:

Քոչը ոչ միայն ոտնակոխ էր անում ու արածեցնում լեռնցու արտերը, այլեւ հաճախ իր հետ բերում եւ տարածում էր անասունների ժանտախտ ու

<sup>18</sup> 6 դար շարունակ Աղվանքի այդ ընդարձակ հողամասերը կազմել են Հայաստանի վաղեմի թագավորության սեփականությունը (սկսած 2-րդ դ. մ. թ. առաջ մինչեւ 4-րդ դ. մ. թ.):

այդպիսով մեծ կորուստներ պատճառում հայ շարքաշ գյուղացու համեստ տնտեսությունը: Այնուամենայնիվ, արգելել քոչը չէր կարելի: Դա բացահայտ մարտահրավեր կլիներ՝ ուղղված դաշտաբնակ մուսուլմանությանը: Դրա համար էր թույլատրվել էր քոչվորներին բարձրանալ յայլաները նախկին ճանապարհներով, այն է՝ Ասկերան-Շուշի-Թթու ջուր, Խոնաշեն-Աղոդյան-Շուշի, Ասկերան-Բալուջա, Գանձասարի վանքի մոտով, Տողի ձորակով եւ Թարթար-Սաղսաղանի կամրջով: Այդ բոլոր ուղիների վրա քոչին ուղեկցում էին Կոմիսարների խորհրդի եւ թյուրքական Ազգային կոմիտեի ներկայացուցիչները, որոնց պարտականությունն էր հսկել, որ քոչն անցնի անվտանգ եւ նրա ճանապարհների վրա ընկած արտերը վնասներ չկրեն, հաշվի առնել հայ գյուղացիներին պատճառած վնասները եւ երկու կողմերի ներկայացուցիչների փոխադարձ համաձայնությամբ որոշել նրանց չափը եւ հատուցել բնաբերքով կամ քոչվորներից հավաքած տուրքի միջոցներից<sup>19</sup>: Կոմիսարների խորհրդի կողմից քոչի հարցերով զբաղվելու համար նշանակվել էր Աշոտ Մելիք-Հովսեփյանը: Նա ամենայն եռանդով եւ բարեխղճությամբ կատարեց իր վրա դրված պարտականությունները: Նրա ջանքերի շնորհիվ քոչը բոլոր ուղիներով անցավ ընդհանուր առմամբ կազմակերպված եւ առանց լուրջ բախումների: Ծանապարհների վրա ընկած ցանքսերը վնասներ կրեցին, իհարկե, բայց ոչ մեծ չափերով: Վնասները տեղում որոշվում եւ անմիջապես հատուցվում էին:

\* \* \*

Քոչի անցման եռուն շրջանում էր, երբ Լյուֆտալի-բեկ Բեհբուդովը հայտնեց, թե դոկտոր Խոսրով-բեկ Սուլթանովը<sup>20</sup>, որը եկել էր Գանձակից եւ գտնվում էր Աղդամում, խնդրում է Կոմիսարների խորհրդին թույլատրել իրեն գալ Շուշի, այնտեղից իր ծննդավայրը («Քուրդիստան») մեկնելու՝ «ամառային հանգստի համար»: Խորհուրդը այդ դիմումի լուծումը հանձնարարեց զինվորական կոմիսարին: Վերջինս կտրականապես մերժեց Սուլթան-

<sup>19</sup> Արոտատեղիների օգտագործման վերաբերյալ 1884 թ. հունիսի 29-ի օրենքի համաձայն՝ խաշնարածության հատկացրած արոտատեղիները համարվում էին պետական հողային ֆոնդ, որի օգտագործման համար տուրք էր առնվում:

<sup>20</sup> «Քուրդիստանի» տեր ու տիրական Սուլթան-բեկ Սուլթանովի ավագ եղբայրը, հետագայում թուրքերի եւ ապա անգլիացիների օգնությամբ Ղարաբաղ բերված մուսավաթական զենեքավ-նահանգապետը, Շուշու 1920 թվականի ավերման եւ կոտորածի հեղինակը:



նովի դիմումը՝ նկատի ունենալով, որ նա մուսավաթական կուսակցության ականավոր ղեկավարներից է, ակտիվ քաղաքական գործիչ, թուրքոֆիլ, համիսլամական եւ հայատյաց: Հետեւապես չէր կարելի այդպիսի մեկին թույլ տալ այդ ժամանակներում մուսթ գործել Շուշի՝ առանց լրջորեն կասկածելու, որ այդ վերին աստիճանի խորամանկ եւ վտանգավոր ռեակցիոները լուրջ քաղաքական հանձնառություններ չունի մուսավաթական կուսակցությունից կամ հենց թուրքական հրամանատարությունից՝ իրագործելու Շուշում, ուղղված Ղարաբաղի հայության դեմ:

## 6. ԹՈՒՐԿԵՐԸ ՄՏՆՈՒՄ ԵՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍ, ՍԱՍՏԿԱՆՈՒՄ ԵՆ ԿՈՒՎՆԵՐԸ ԲԱՔՎԻ ՃԱԿԱՏՈՒՄ

«Պղտոր ջրում ձուկ որսալու մեծ վարպետներ են թուրքերը: Եթե նրանք կառավարեին նույնքան լավ, որքան կարողանում են լավ որսալ, նրանց կայսրությունը կլիներ ամենահզորն աշխարհում: Դժբախտաբար, չկան ավելի վատ կառավարողներ, քան թուրքերը, եւ այստեղից էլ հենց բխում են ամեն տեսակ աղետները, ինչպես թուրքերի, այնպես էլ այն ժողովուրդների համար, որոնց վիճակվել է հպատակ լինել թուրքերին... Թուրքը խոց է եւ անեծք այն բոլոր վայրերի համար, որտեղ նա խփում է իր վրանը»:

Այդ դառն խոսքերն օսմանյան թուրքերի հասցեին պատկանում են Դավիթ Լոյդ Ջորջին<sup>21</sup>, այն տերության ղեկավարներից մեկին, որն սկսած դեռեւս 18-րդ դարից շարունակ հենարան է ծառայել «հիվանդ մարդուն» եւ հովանավորել, հաճախ պաշտպանել կամ խրախուսել նրա բոլոր շարագործություններն այն ժողովուրդների նկատմամբ՝ «որոնց վիճակվել էր հպատակ լինել թուրքերին»:

Խոսք չկա, խորամանկ Ալբիոնի պետական գործիչները շատ լավ էին ուսումնասիրել իրենց դարավոր հովանավորյալին:

Եւ ահա այդ «խոցը եւ անեծքը», պղտոր ջրում ձուկ որսալու այդ հմուտ վարպետները իրենց ջախջախված բանակի մնացորդներից կարողացան արագորեն ժողովել, վերակազմել եւ լրացնել մի քանի մարտունակ դիվիզիաներ՝ հագցնելով ու պարենավորելով նրանց ռուսական բանակի թողած մեծաքանակ պարենով, զգեստով, ամունիցիայով եւ 1918 թ. փետրվարի

կեսերից սկսել առաջխաղացությունը Արեւմտյան Հայաստանում:

Ռուսաստանի խորհրդային իշխանությունը 1917 թվին վերացրել էր Թուրքիայի հետ ցարական կառավարությունների կնքած պայմանագրերը, որոնք աննպաստ էին թուրքերի համար: Բացի դրանից, «խաղաղություն առանց անեքսիաների եւ կոնտրիբուցիաների» լոգունգի հիման վրա կարգադրվել էր Կովկասյան ճակատի կես միլիոնանոց բանակին ազատել «թուրքական տերիտորիան» եւ ամենակարճ ժամկետում վերադառնալ Ռուսաստան: Խորհրդային իշխանության այդ ակտը եւ 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստի խաղաղության պայմանագիրն թուրքերին ավետում էին ոչ միայն նոր կորցրած տերիտորիաների անարյուն վերագրավման լիակատար հնարավորություն, այլեւ անարգել նվաճումներ՝ ի հաշիվ Անդրկովկասի: Օսմանյիք մի բոլոր կարծեցին, որ Թուրքիայի դարավոր մահացությունամին՝ «սարը գյավուրը» կանգնած է քայքայման եւ կործանման անդունդի եզրին եւ պիտի ուրեմն ամեն կերպ շտապել «պղտոր ջրում ձուկ որսալ»: Թուրքերն այդպես մտածելու լիակատար հիմք ունեին. պատմության մեջ եզակի իրողություն էր, երբ հաղթողը ծունկ էր խոնարհում գլխովին ջախջախված թշնամու առաջ՝ զիջելով նրան ոչ միայն նոր, այլեւ 40 տարի առաջ մեծ զոհերի գնով ձեռք բերված տերիտորիալ նվաճումները:

Թուրքական զինված ուժերը 1918 թ. փետրվարի 13-ին վերագրավեցին երզնկան, փետրվարի 26-ին՝ Բայբուրդը, Մամախաթունը, իսկ մարտի 12-ին՝ Էրզրումը:

Անդրանիկի եւ Կովկասյան բանակի հայազգի զինվորականների բոլոր ջանքերը՝ կազմակերպելու գեթ Էրզրումի պաշտպանությունը հայկական զինված ուժերի միջոցով անցան ապարդյուն: Դրան մեծապես նպաստում էր քայքայիչ ագիտացիան, որը տակավին շարունակվում էր ռուսական էջելոնների հեռանալուց հետո եւս, հայկական զորամասերում եւ Կարսի հայկական բնակավայրերում:

Բրեստի պայմանագրով Թուրքիային էին անցնում Արեւմտյան Հայաստանի բոլոր գրավված շրջանները, իսկ Անդրկովկասում՝ Բաթումի եւ Կարսի մարզերը: Գեներալ Պոտտոն Կարսը համարում էր «Անդրկովկասի բանալին»: Թուրքերն այդ շատ լավ հասկանում էին: Դրա համար էլ Կարսի անարյուն զիջումը Ռուսաստանի կողմից նրանց համար մի աներեւակայելի դյուրին հաղթանակ էր, որ նրանք ձեռք էին բերել Բրեստում դիվանագի-

<sup>21</sup> Д. Ллойд Джордж, Правда о мирных договорах. II, стр. 461-464.



տական ճանապարհով, գերմանական պարտնյորի պաշտպանությամբ<sup>22</sup>: Թուրքերն ամուր հիմքեր ունեին չկասկածելու, որ այլևս իրենց առաջ բաց են անպաշտպան Անդրկովկասի բոլոր ճանապարհները, բոլոր ուղղություններով: Նրանք երազում էին իրենց պանթուրքական, պանիսլամական, գուցե եւ պանթուրանական զառանցաքններն իրագործել՝ ոչնչացնելով այս անգամ հայ ժողովրդի անդրկովկասյան հատվածը եւս: Չէ՞ որ «արիական» հայերը ճեղքվածք են ստեղծում մեկ լեզվով խոսող Թուրք-թաթարական ցեղերի միջեւ՝ բաժանելով նրանց երկու հատվածի ու այդպիսով անջրպետ ստեղծում այդ ռեակցիոն, հետամնաց ցեղերի կոնսոլիդացիայի համար...

Անդրկովկասի քաղաքական իրադրության մասին Թուրքերն ունեին ամենահավաստի եւ մանրամասն ինֆորմացիա: Նրանց հավատարիմ դաշնակիցները՝ Անդրկովկասի մուսուլմանները, սիստեմատիկ կապ էին պահպանում Թուրքական հրամանատարության հետ՝ իրազեկ պահելով նրան երկրում տեղի ունեցող բոլոր իրադարձություններին, պարբերաբար հաղորդելով լրտեսության եւ այլ ճանապարհներով ձեռք բերված տեղեկություններ հայերի զինված ուժերի, այդ ուժերի տեղադրության եւ տեղաբաշխման մասին: Օրինակ՝ Անդրկովկասյան Սեյմի անդամ Սեիդովը, Թուրքական հրամանատարությանը հաղորդելու համար, 1918 թ. մայիսի 19-ին Թիֆլիսից հեռագրական ուղղակի խոսակցությամբ հարցնում էր Երեւանի մուսուլմանական ազգային խորհրդի նախագահ Աղաեւին, թե Երեւանում եւ նրանից դուրս գտնվող զիրքերում հայկական որքա՞ն գործառններ կան<sup>23</sup>: Անդրկովկասյան Կոմիսարիատի եւ Սեյմի Թուրք անդամներն առհասարակ չէին թաքցնում հայերից եւ վրացիներից իրենց հավատարմությունը եւ համակրանքը օսմանյան Թուրքերի նկատմամբ: Ուսուրբեկովը Սեյմում արտա-

<sup>22</sup> Մոսկվայի հայոց ազգային խորհուրդը բողոքեց Բրեստի խաղաղության պայմանագրի դեմ եւ ցանկացավ այդ բողոքը հայտարարել գյուղացիների եւ բանվորների պատգամավորների համագումարում, բայց մերժում ստացավ (տես՝ ՀՊՊԿԱ, ֆ. 222, գ. 13, թերթ 115):

Թեւ հետագայում Բրեստի պայմանագիրը չեղյալ հայտարարվեց (15 նոյեմբեր, 1918թ.), բայց եւ այնպես Հայաստանը չվերստացավ իր քաղաքները՝ Կարսը եւ Արդահանը: Իսկ 1921թ. Կարսի պայմանագրով հաստատվեց Հայաստանի հաշվին կատարված այդ զիջումը, մի շարք նոր զիջումների հետ: Մոտ 15 հազար քառակուսի կիլոմետր Հայաստանին պատկանող տերիտորիայից, բնակեցված գլխավորապես հայերով, տրվեց Թուրքիային իր բեւ անվերադարձ սեփականություն:

<sup>23</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 222, գ. 1<sup>ա</sup>, թ. 396:

անած իր ճառում ասում էր. «... Դրությունն Անդրկովկասում սրվում է նրանով, որ արեւելքից (այսինքն՝ Բաքվից - Հ. Թ.) արշավում են բոլշեւիկները՝ դաշնակցած մեր դարավոր թշնամիների (այսինքն հայերի - Հ. Թ.) հետ՝ տարածելով ավերածություն եւ բերելով վերջնական կործանում Թուրք ժողովրդին: Այսպիսի անպաշտպան վիճակում մենք այլ ելք չունենք, քան դիմել օտար միջամտության. դա Թուրքիան է, մեր բարեկամ եւ եղբայրական ուժը...»<sup>24</sup>:

Ուսուրբեկովը եւ մյուս մուսուլման ռեակցիոներները, դիմելով Թուրքերի օգնության, ուրեմն, մի ցանկություն ունեին՝ օսմանցիների միջոցով ոչնչացնել Բաքվի Կոմունան եւ ապա «բոլշեւիկների դաշնակից» հայերին: Դրանից հետո նրանց համար դժվար չէր լինի, իհարկե, միանալով օսմանյան Թուրքերին, մաքրել հաշիվները նաեւ վրացիների հետ, թեեւ վրաց ղեկավարները հույս ունեին իրենց երկիրը փրկել՝ ողջ հյուսիս-արեւելյան Հայաստանը մատնելով Թուրքերի ձեռքը:

Ինչպես տեսնում ենք, անդրկովկասյան մուսուլմանների շեֆերը «պղտոր ջրում ձուկ որսալու» համար իրենց ցեղակից օսմանցիներից պակաս վարպետներ չէին:

\*\*\*

Էրզրումը մարտի 12-ին վերագրավելուց եւ մեծ քանակությամբ ռազմավար ձեռք բերելուց հետո, Թուրքական 1-ին կովկասյան կորպուսի գործասերը սրարշավ առաջ շարժվեցին եւ մտան Անդրկովկասի սահմանները:

Այն «մահաշունչ համաճարակը, որ բազմաթիվ սերունդների ընթացքում անապատի էր վերածել երկրագնդի չքնաղ անկյունները» (Ասկվիտ)<sup>25</sup>, այժմ մուտք էր գործում Անդրկովկաս եւ ահռելի դժբախտության սպառնալիք ստեղծում հայության վերջին բեկորի համար:

Թուրքերի այդ լկտի համարձակությունը պետք է բացատրել ոչ միայն Բրեստում ձեռք բերված էժանագին տերիտորիալ զիջումներով, Անդրկովկասյան Կոմիսարիատի սեպարատիստական քաղաքականությամբ, Անդրկովկասում նապրող ժողովուրդների մեջ գոյություն ունեցող սուր պառակտ-

<sup>24</sup> Ставровскиий, Закавказье после Октября, 1925 г., стр. 50-51:

<sup>25</sup> Д. Л.-Джорджие, ibid, стр. 462. Ասկվիտ Հերբերտ Հենրի, անգլիական խոշոր պետական գործիչ, լիբերալ կուսակցության ղեկավար, մեռել է 1928թ.: Ասկվիտը նկատի ունի օսմանյան Թուրքերին՝ անվանելով նրանց «մահաշունչ համաճարակ»:



մամբ, այլեւ այն միամիտ հավատով, որ թուրքերը տակավին տաժում էին կենտրոնական պետութիւնների ուժի «անհաղթահարելիութիւն» նկատմամբ: Եւ այդ այն ժամանակ, երբ Անտանտի ուժերը անընդհատ եւ արագորեն աճում էին, իսկ Գերմանիայի եւ նրա դաշնակիցների ուժերը հետզհետե սպառվում, այն ժամանակ, երբ Միջագետքի անգլո-ֆրանսիական 600 հազարանոց բանակն արդեն սկսել էր լրջորեն սպառնալ հենց իր Օսմանյան կայսրութիւն կենսական նշանակութիւն ունեցող կենտրոններին, ջրային եւ ցամաքային կարեւոր կոմունիկացիաներին:

Ապրիլի 25-ին թուրքերը վերցրին Կարսը, իսկ մայիսի 15-ին, խախտելով Բրեստի պայմանագիրը, մտան Ալեքսանդրապոլ (Գյումրի), որտեղից նրանք սկսեցին առաջ խաղալ երկու ուղղութիւնով՝ դեպի Երեւան եւ դեպի Ղարաքիլիսա-Թիֆլիս՝ մտադիր լինելով Ղարաքիլիսան գրավելուց հետո իրենց ուժերի մի մասը շարժել դեպի Դիլիջան-Ղազախ-Բաքու:

\*\*\*

Երեւանում, Ղարաքիլիսայում, Ջալալօղլիում եւ շրջակա հայկական գյուղերում հավաքվել էին ճակատից վերդարձած բազմաթիւ հայ զինվորներ՝ ղարաբաղցի, զանգեզուրցի, նուխեցի, գանձակեցի եւ այլ վայրերից, որոնք պատրաստութիւն էին տեսնում լեռնային ճանապարհներով վերադառնալ իրենց ծննդավայրը, որովհետեւ դեպի Թիֆլիս, Բաքու, Գանձակ եւ Նախիջեւան տանող խճուղիներն ու երկաթուղիները գտնվում էին տեղական մուսուլմանական զինված ավազակախմբերի հսկողութիւն տակ:

Այդ մարդիկ, երբ դեռեւս գտնվում էին Արեւմտյան Հայաստանի տերիտորիայում, չունկնդրեցին եւ չհետեւեցին հայ հրամանատարների եւ առանձին գործիչների հորդորներին, կոչերին ու հրամաններին եւ չհասկացան, որ անհրաժեշտ էր հենց Արեւմտյան Հայաստանի բնագծերում ամրանալ եւ կազմակերպված դիմադրութիւն ցույց տալ թուրքերին, իսկ նահանջի դեպքում նահանջել՝ խստորեն հետեւելով ռազմական կանոնների պահանջներին, արգելելով թշնամուն սրարշալ նետվելու առաջ:

Հայ զինվորների ամբոխն այժմ տեսնում էր ու համոզվում, որ թշնամին Կարսը եւ Ալեքսանդրապոլը գրավելուց հետո իսկ մտադիր չէ կանգ առնել, որ նա ծավալում է իր ուժերը լայն ճակատի վրա եւ շարժվում առաջ մեծ թռիչքներով: Եւ թերեւս հեռու չէ այն օրը, երբ թուրքական հորդանների արյունոտ յաթաղանները կսկսեն ճոճել իրենց իսկ ծնողների, կանանց եւ

երեխաների գլխին: Այդ վերահաս ահարկու վտանգը Երեւանում ու Ղարաքիլիսայում կուտակված հայ զինվորութիւնը վերջապէս սկսեց գիտակցել: Հարկավոր էին միայն անձնվեր եւ կարող ղեկավարներ, որոնք արագորեն ժողովին եւ կազմակերպին ցրված ուժերը, վառեին հայ մարտիկների սրտերը հայրենասիրական բոցաշունչ խոսքերով եւ տեղական զինված ուժերի հետ ի մարտ նետեին թուրքերի դէմ: Իսկ այդպիսի ղեկավարներ շատ էր կոփել հայ ժողովուրդն իր ազգային-ազատագրական հերոսական պայքարի հնոցում:

\*\*\*

1918 թ. մայիսի 22-ից սկսվեցին կատաղի մարտեր, մի կողմից՝ հայկական զորամասերի եւ աշխարհագորի, իսկ մյուս կողմից՝ թուրքական հարձակվող ուժերի միջեւ, Արարատյան դաշտում, Սարգարապատի տակ, Արագածի բարձունքներում, Ապարանում եւ Ղարաքիլիսայի ու Ջալալօղլու լեռնային մատույցներում:

Պատերազմը հետզհետե բորբոքվում, ստանում էր արյունահեղ բնույթ: Թուրքերը կրում էին մեծ կորուստներ: Վերջապէս, հնգօրյա համառ մարտերից հետո, չդիմանալով հայերի ուժգին եւ սրարշալ գրոհներին, Շեֆքի փաշայի 30 հազարանոց բանակը ջախջախվելով՝ խուճապահար նահանջեց մինչեւ Լենինական: Մայիսի 25-ից մինչեւ 28-ը հայկական զորամասերին եւ աշխարհագորին հաջողվեց հերոսական արյունահեղ մարտերի միջոցով կասեցնել թուրքերի հարձակումը նաեւ Ղարաքիլիսայի տակ: Ղարաքիլիսայի կռիվներում հայ մարտիկների ցուցաբերած մի շարք հերոսական սխրագործութիւններից ուշագրավ է հետեւյալ դեպքը, որ մենք բերում ենք ականատեսի պատմածից.

«Ճակատամարտն սկսվեց թնդանոթների մենամարտով: Հայերի կողմից կռիվը ղեկավարում էր գնդապետ Բեյ-Մամիկոնյանը՝ օգնական ունենալով գնդապետ Ղորղանյանին: Հրետանու հրամանատարն էր ղարաբաղցի կապիտան Տեր-Մովսիսյանը, որն իր հայրենակից հրետանավորների հետ հերոսական ջանքերով աշխատում էր թշնամու զորամասերի առաջխաղացումը կանգնեցնել՝ պատճառելով նրանց մեծ կորուստներ: Ի վերջո հայկական մարտկոցները հաջողեցան լուծիւթյան մատնել թուրքերի թնդանոթները: Սա թշնամու համար պարտութիւն էր:

Ինչ-ինչ պատճառներով Դիլիջանից եկող հայկական հեծելազունը



ուշանում էր: Թշնամին նկատելով մեր հրետանու անպաշտպան վիճակը, որոշեց իր հեծելազորը բաց թողնել հայկական հրետանու վրա՝ ազատվելու համար նրա կործանարար կրակից: Բուպեն շափազանց տագնապալի էր եւ ճակատագրական. դանդաղումը մահացու վտանգ էր սպառնում մեր հերոս հրետանավորներին: Հրամանատարությունը տեսնելով այդ կապիտան Տեր-Մովսիսյանին հրամայեց իր ունեցած հեծյալներով անցնել հակազորին: «Տղերք, ձեր նամուսին մեռնեմ,- գոչում է Մովսիսյանը,- մեռնել կա, ետ նահանջել չկա, մեկը պիտի կռվի տասի դեմ... առաջ... Կեցցե՛ ազատ Հայաստանը...»: Այս խոսքերի հետ կապիտանը իր սակավամթիվ այրուծիով, որն անցել էր ռուսական հեծելազորի շկոլան, մորիկի պես նետվում է թշնամու վրա: Ղարաբաղյի զինվորների այդ թրամարտը պատերազմի տարեգրության մեջ մի դյուցազնական աննախընթաց գոտեմարտ էր, որի ժամանակ թրի ամեն հարվածը բաժանում էր թշնամու գլուխը մարմնից... Մարտի ընթացքի վրա վճռական նշանակություն ունեցավ այն, որ թրամարտն առաջինը սկսեց ինքը՝ կապիտան Մովսիսյանը, որը սուսերամբերկ սլացավ թուրքական հեծելազորի հրամանատարի վրա եւ մի հարվածով գետին տապալեց նրան: Տաճկական հեծելազորը, կորցնելով իր հրամանատարին եւ տալով զգալի կորուստներ, մատնվեց շփոթության: Հենց այդ ժամանակ վրա հասավ Դիլիջանից եկող այրուծին: Թուրքերն այլեւս չդիմացան եւ դիմեցին փախուստի՝ զիջելով կռվի դաշտը հայ մարտիկներին»<sup>26</sup>:

Դժբախտաբար, զինամթերքի պակասությունը զրկեց հայկական զինված ուժերին թուրքերին վերջնականապես ջախջախելու եւ նրանց Անդրկովկասի սահմաններից դուրս քշելու հնարավորությունից:

Հայ ժողովրդի ազատագրական դարավոր պայքարի արյունալի պատմության մեջ շրջադարձային մոմենտ հանդիսացավ 1918 թվի մայիսին Սարգարապատի տակ եւ Ղարաբաղիսայի ու Զալալօղլու լեռնային բնագծերում հայկական զորմասերի եւ ժողովրդական զինված ուժերի թուրքերի դեմ տարած պատմական փայլուն հաղթանակը, որը սկիզբ դարձավ հայ ժողովրդի քաղաքական անկախ կյանքի վերածնության:

Բաթումի բանակցությունների ժամանակ Վեհիբ-փաշան Սարգարապատի եւ Ղարաբաղիսայի տակ տեղի ունեցած ճակատամարտերի մասին ասել էր. «Բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմության մեջ...

<sup>26</sup> Թ. Բաբայան, Տերտերյան, Հայկական գոյամարտ, Թեհրան, էջ 307-309:

Սարգարապատի եւ Ղարաբաղիսայի տակ հայերը ցույց տվին, որ նրանք կարող են լավագույն զինվորները լինել աշխարհում»<sup>27</sup>:

Հայկական զինված ուժերի հերոսական դիմադրությունն ստիպեց թուրքական հրամանատարությունը հրաժարվել նրեւանը գրավելու մտադրությունից եւ ժամանակավորապես դադարեցնել զորքերի տեղաշարժը Ալեքսանդրապոլ-Դիլիջան-Ղազախ գծով դեպի Բաքու:

Սարգարապատի ճակատամարտը ստիպեց թուրքերին Հայաստանի նկատմամբ վարել ավելի զգուշավոր քաղաքականություն<sup>28</sup>:

Անդրկովկասը դեռեւս 1918 թ. ապրիլի 22-ին Թուրքիայի ճնշման տակ իրեն հայտարարել էր անկախ ֆեդերատիվ տերություն: Դա արվեց այն հույսով, թե հնարավոր կլինի Թուրքիայի հետ խաղաղության համաձայնագիր կնքել թեկուզ Բրեստի պայմանագրով գծած սահմաններում: Այդ նպատակով Թուրքիայի հետ 1918թ. մայիսին սկսված բանակցությունները Բաթումում երկարեցին այնքան, մինչեւ թուրքերը Կարսից օգնական ուժեր բերելով՝ Անդրկովկասում զավթեցին նոր շրջաններ, Բրեստում գծված սահմաններից դուրս: Դրանից հետո քայքայվեց Անդրկովկասի ֆեդերացիան: Վրաստանն իրեն անկախ հայտարարեց 1918 թ. մայիսի 26-ին, Հայաստանը 28-ին, իսկ Ադրբեջանը՝ մայիսի 27-ին<sup>29</sup>:

1918 թ. հունիսի 4-ին Բաթումում հաշտություն կնքվեց Թուրքիայի եւ Հայաստանի հանրապետական կառավարության միջեւ: Այդ հաշտության պայմանագրի համաձայն Թուրքիան տեր էր դառնում Սուրմալուի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի գավառներին եւ նրեւանի ու էջմիածնի գավառների մի մասին<sup>30</sup>:

Օսմանյանները հնարավորություն ստացան արագորեն վերախմբավորելու իրենց զինված ուժերը, տեղական զինված մուսուլմաններից կազմակերպելու «խալամի բանակ» կոչված «պարտիզանների» ջոկատներ եւ արշավելու Բաքվի վրա:

<sup>27</sup> E. K. Саркисян, Экспанс. политика осм. империи в Закавказье, 1963. стр. 401. (Տես նաեւ ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 11, թ. 63):

<sup>28</sup> Նույն տեղում:

<sup>29</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 222, գ. I, թ. 398:

<sup>30</sup> Նույն տեղում:



\*\*\*

Բաքվի զինված ուժերը 1918 թ. հունիսի 10-ից անցել էին ընդհանուր հարձակման: Կարճ ժամանակամիջոցում նրանք գրավել էին Ղուբան, Սալանը, Շամախին, Քերարը, Աղսուն, Կարամարյանը եւ Քյուրդամիրը: Քյուրդամիրի ճակատում տեղն ունեցող հրետանային հրաձգության ձայները պարզորոշ լսվում էին Ղարաբաղում: Քա հույսեր էր ներշնչում ժողովրդին, որ շուտով Բաքվի հեղափոխական բանակը կհասնի Եվլախ եւ կապ կհաստատի Ղարաբաղի հետ: Բայց այդ, դժբախտաբար, չկատարվեց: Բաքվի մարտական ուժերի ղեկավարությունը, սկզբնական հաջողություններից խրախուսված, հույս ուներ, որ շուտով կհաջողվի գրավել նաեւ Եվլախը, որը հնարավորություն կտաք բռնելու Քուռ գետի պաշտպանական գիծը: Սակայն մարդկային կորուստների մեծությունը, ջրի եւ պարենի հայթայթման դժվարությունները, հիվանդությունները մարտիկների շրջանում ստեղծել էին այնպիսի ծանր իրադրություն, որ Բաքվի ճակատի զորամասերն ստիպված եղան ետ քաշվել: Իսկ երբ թուրքական ուժերը մտան կովի մեջ՝ միացած «խալամի բանակի» բազմահզար ջոկատներին, Բաքվի զորամասերը նրանց ճնշման տակ նահանջեցին ընդհուպ մինչեւ Շամախի: Միայն երբ Բիշերախովի զորամասը երեւաց ճակատում, Շամախու գծի վրա դիրքեր գրաված ուժերը, քաջաբերված գրանով, կրկին անցան հարձակման եւ ջարդեցին թշնամուն Կյուրջեւանի եւ Քյուլուջայի մոտ:

Այնուհետեւ կռիվները շարունակվեցին երկու կողմերի համար փոփոխակի հաջողություններով:

## 7. ՂԱՐԱԲԱՂԸ ՓՈՐՁՈՒՄ Է ԿԱՊ ՀԱՍՏԱՏԵԼ ԲԱՔՎԻ ՀԵՏ

Բաքվի ուժերի առաջին նահանջը ծանր տպավորություն գործեց Ղարաբաղի հայության վրա: Տագնապն ավելի սաստկացավ, երբ թուրքերը մտան Գանձակ եւ իրենց հիմնական ուժերը նետեցին Բաքվի դեմ: Օսմանցիների կողմից Ղարաբաղի դեմ ագրեսիվ գործողություններ ձեռնարկելու նշաններ տակավին չկային: Հայաստանի հանրապետական կառավարությունը Բաթումի հաշտությունից հետո խնդրել էր թուրքական հրամանատարությանը ձեռք չտալ Ղարաբաղի, Գանձակի եւ նրա շրջանի հայությանը, իսկ Բաքուն գրավելուց հետո՝ թույլ չտալ քաղաքում հայերի ջարդ: Թուրքերը խոստացել էին այդպես վարվել, եթե լեռնաբնակ հայերն իրենց հանգիստ պահեն, իսկ

Բաքվի հայությունը դադարի ակտիվորեն օգնել բոլշևիկներին: Բաթումի խաղաղության պայմանագրի մեջ թուրքերը հատուկ կետ էին մտցրել, որը պարտավորեցնում էր Հայաստանի կառավարությանը էվակուացիայի ենթարկել Բաքվի հայկական զինված ուժերը<sup>31</sup>: Այդ նպատակով Հայաստանի կառավարությունը նշանակել էր Բաքվի ազգային խորհրդի նախկին անգամներ Միքայել Արզումանյանին եւ Մարտիրոս Հարությունյանին, որոնք պիտի աշխատեին թուրքական հրամանատարության օգնությամբ կապվել Բաքվի հայ զորամասերի հրամանատարության հետ եւ իրագործել այդ պարտավորությունները: Սակայն Բաքվի հետ ճակատի միջոցով կապվելու փորձերն անհաջող էին անցել:

Ղարաբաղում չէր կատարվում որեւէ մի այնպիսի գործողություն, որը կարողանար կասկած առաջ բերել տեղի հայության նկատմամբ, նրա հակաթուրքական ակտիվ դիտավորությունների վերաբերյալ: Այնուամենայնիվ, օսմանցիները, իրենց թիկունքը Ղարաբաղի կողմից ապահով չզգալով, աշխատում էին Գանձակի հայության միջոցով ազդել Ղարաբաղի վրա՝ հորդորելով հանգիստ մնալ եւ դրա հետ միաժամանակ «շոշափել» Ղարաբաղի տրամադրությունները:

Թուրքերի պահանջով Գանձակի հայոց ազգային խորհուրդն այդ նպատակով Շուշի ուղարկեց երկու մարզու՝ կապիտան Խորեն Համասփյուռլին եւ Գեւորգ Մելիք-Շահնազարյանին (Շահեն), որոնք Ղարաբաղ եկան թուրքերի աջակցությամբ, Աղդամի վրայով, այսինքն՝ Եվլախ-Շուշի խճուղով, որն այդ ժամանակներում փակ էր հայերի երթեւեկության համար ընդհանրապես: Այդ հանգամանքը կասկած առաջ բերեց ժողովրդի մեջ, որ Գանձակից եկածներն ուղարկված են թուրքերից ոչ բարի նպատակներով: Ժողովրդի մեջ այդ առթիվ ծայր առած հուզումը փարատելու համար Գանձակից եկածների վրա նշանակվեց հսկողություն, որ նպատակ ուներ նաեւ ապահովելու նրանց կյանքը գրգռված ժողովրդի ինքնադատաստանից:

Գանձակից եկած պատվիրակներն իրենց առաքելության նպատակը համարում էին այն, որ Ղարաբաղի հայության եւ նրա ղեկավարներին իրա-

<sup>31</sup> Բաթումում կնքված հայ-թուրքական խաղաղության պայմանագրի 11-րդ կետում ասված է. «Հայաստանի Հանրապետության կառավարությունը պարտավորվում է սույն պայմանագիրն ստորագրելուց անմիջապես հետո գործադրել իր բոլոր ջանքերը՝ Բաքու քաղաքում գտնվող հայկական զորքերը էվակուացիայի ենթարկելու համար, ապահովելով, որ այդ էվակուացիան կատարվի առանց բախումների» (ՀՊՊԿԱ, ֆ. 222, գ. 13, էջ 124):



գեկ անեն, թե «որչափ սիրալիր վերաբերմունք ունեն թուրքերը Գանձակի եւ նրա շրջանի հայության նկատմամբ», որ՝ «թուրքական մեծաքանակ ուժեր են նետված Բաքվի ճակատը, որոնց ճնշման տակ Բաքվի զինված ուժերն ստիպված են եղել նահանջել վերջին շրջանում գրաված կարելուր դիրքերից», որ՝ «թուրքերն անընդհատ նորանոր զորքեր են ստանում Կարսից եւ, նայելով երկու կողմերի ուժերի թվական փոխհարաբերության, Բաքվի անկումը պիտի համարել անխուսափելի» եւ այլն: Վերջում նրանք խնդրում էին Գանձակի ազգային խորհրդի անունից՝ «խուսափել օսմանյան թուրքերի նկատմամբ գրգռեցուցիչ գործողություններից»: Կոմիսարների խորհրդի երկու ներկայացուցիչները, որոնց հանձնարարված էր տեսակցել պատվիրակության հետ, այդ խոսքերը գտան բոլորովին անտեղի եւ անհիմն, որովհետեւ Ղարաբաղի հայությունը չէր կատարել մի այնպիսի քայլ, որ կասկած հարուցեր ժողովրդի խաղաղասիրական տրամադրությունների վերաբերյալ:

Գանձակի հայերի խուճապային տրամադրությունը բոլորովին բնական էր: Հայերն այնտեղ գտնվում էին մի տեսակ պատանդների վիճակում: Այդ պատճառով Ղարաբաղի ղեկավարության ներկայացուցիչներն ամեն կերպ աշխատեցին հանգստացնել պատվիրակներին, որ Ղարաբաղը որեւէ ազդեցիկ նպատակ չունի ուղղված թուրքերի դեմ, նախազգուշացնելով միաժամանակ, որ թուրքերին երբեք չպետք է հավատալ, չպետք է վստահել նրանց նենգ, կեղծավոր խոսքերին, հրապուրվել հայ ժողովրդի անողորմ թշնամիների շողոքորթ, խարդախ, խաբուսիկ ժպիտներով: Քանի դեռ կանգուն է Բաքուն, եւ չեն հաղթահարված նրա պաշտպանները, թուրքերը, գառան մորթի հագած, հայերի առաջ կարող են ռեւերանսներ անել: Բայց եթե նրանց հաջողվի գրավել Բաքուն, այն ժամանակ նրանք հանդես կգան լեռնաբնակ հայության առաջ իրենց իսկական բորենիական գարշելի մոլովներով: Գանձակի եւ նրա շրջանի հայությունը, եզրակացրին խորհրդի ներկայացուցիչները, պիտի չթուլացնի իր զգոնությունը, լինի չափազանց զգույշ եւ լրջորեն խորհի ինքնապաշտպանության մասին: Ապա առաջարկվեց պատվիրակներին պատրաստվել վերադառնալու Գանձակ, որովհետեւ Աղդամից հայտնել էին Ասկերանի հայ սահմանապահների միջոցով, թե «Գանձակի օսմանյան շտաբը անհանգստացած է Շուշի ուղարկված երկու հայերի վիճակով»:

Հատուկ պահակախմբի ուղեկցությամբ «երկու հայերը» կառքով

ուղարկվեցին Ասկերան, որտեղից նրանք թուրքական մեքենայով ուղեւորվեցին Գանձակ:

Դա 1918 թ. հուլիս ամսի սկիզբն էր՝ 2-ին կամ 3-ին:

\* \* \*

Պատվիրակության մեկնելու հաջորդ օրը գումարվեց Կոմիսարների խորհրդի նիստ, որտեղ նախագահ Հայրապետ Մուսայելյանը եւ զինվորական կոմիսարը ծանոթացրին խորհրդին պատվիրակության գալու նպատակին եւ տեղի ունեցած խոսակցությանը: Խորհրդին լուրջ մտահոգություն պատճառեց թուրքերի մուտքը Գանձակ, նրանց մասնակցությունը Բաքվի կռիվներին եւ դրա հետեւանքով հեղափոխական ուժերի համար ճակատում ստեղծված ծանր իրադրությունը: Ժիշտ է՝ Գանձակի հայ պատվիրակները, եկած լինելով թուրքերի ազդեցության անմիջական ենթակա շրջանից, եւ ապրելով այդ ազդեցության ոլորտում, կարող էին չափազանցնել վտանգը, որ ճակատում ստեղծվել էր թուրքական զինված ուժերի մասնակցությամբ, բայց արդեն Ղարաբաղին հայտնի էր Բաքվի ուժերի նահանջը այն կարելուր դիրքերից, որ նրանք գրավել էին հունիսի սկզբներին:

Այսպես թե այնպես, իրերի դրությունը չէր կարելի մխիթարական համարել, եւ խորհուրդը սկզբունքորեն ընդունեց Բաքվին զինված օգնություն ցույց տալու անհրաժեշտությունը, թողնելով սակայն այդ օգնության ձեւը եւ կոնկրետ կիրառությունը որոշելու Շուշու գնդի Ղարաբաղ գալուց հետո, որ սպասվում էր անհամբեր: Իսկ մինչ այդ, զինվորական կոմիսարին առաջարկվեց բոլոր միջոցները ձեռք առնել Բաքվի հետ կապ հաստատելու եւ հաղորդելու Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդին Ղարաբաղի պատրաստակամությունը՝ զինված օգնություն ցույց տալու ռազմական տին թիկունքային դիվերսիոն գործողություններով կամ մի այլ ձեւով: Եթե հաջողվեր ստեղծել այդ կապը կարճ ժամանակամիջոցում, եւ պահանջվեր սկսել գործողությունները օսմանցիների դեմ նախատեսված ժամանակից շուտ, այսինքն՝ մինչեւ Շուշու գնդի մուտքը Ղարաբաղ, այդ դեպքում հարցը պիտի շտապ ներկայացվեր խորհրդի քննության:

Նույն նիստում Կոմիսարների խորհուրդը որոշեց կարճ ժամանակամիջոցում հրավիրել Ղարաբաղի ժողովրդական համագումար՝ նոր կառավարություն կազմելու համար, մի այնպիսի կառավարություն, որը, հենարան ունենալով լայն ժողովրդական զանգվածների վստահությունը, այդ տագ-



նապալի եւ փոթորկահույզ պատմական ժամանակաշրջանում, շատ զգույշ եւ հեռատես քաղաքականություն վարելով հանդերձ, միաժամանակ ընդունակ լինեք, հարկ եղած դեպքում, երկրի փրկության համար դիմելու վճռական գործողությունների:

\* \* \*

Բաքվի հետ կապ հաստատելու համար, բացի սուրհանդակային կապից, այլ միջոց չգտնվեց: Ղարաբաղը շունք ռազիոկապի միջոցներ, իսկ փոստային կամ սովորական հեռագրական կապի մասին խոսք լինել չէր կարող, որովհետեւ այդպիսի հնարավորություններից Ղարաբաղի հայությունը զրկված էր դեռեւս 1917 թ. նոյեմբեր ամսից:

Այդպիսով մնում էր միայն մի ելք՝ գտնել մի հարմար մարդ եւ իբրեւ սուրհանդակ գործուղել Բաքու, թեեւ, պետք էր ենթադրել, որ այդ էլ այնքան հեշտ գլուխ գալու բան չէր, որովհետեւ նման պատասխանատու հանձնարարության կատարումը կապված էր մեծ ռիսկի եւ անհաշիվ դժվարությունների հետ:

Բայց անսպասելի կերպով այդպիսի մարդ գտնվեց, եւ գտնվեց խիստ կարճ ժամանակամիջոցում:

Այդ մարդը ջուլամներիցի ասորի Սիմոնն էր, մոտ հիսուն տարեկան, կարճահասակ, թիկնեղ, ջլապինդ, թխադեմ, սեւ, վառվռուն աչքերով, միշտ ժպտերես, կենսուրախ մի տղամարդ: Տաքինեք առաջ ինչ-ինչ պատճառներով նա թողել էր ազատասեր Ջուլամներից եւ Պարսկաստանի վրայով անցել Անդրկովկաս ու բնակություն հաստատել հայկական Ղարաբաղում, Վարանդայի գյուղերից մեկում: Շահախնդրությունը չէր, որ խթանել էր Սիմոնին իր ծառայություններն առաջարկելու Ղարաբաղի ղեկավարությանը՝ այնպիսի մի վտանգավոր հանձնարարություն կատարելու համար, որը պահանջում էր նրանից շրջահայեցություն, խիզախություն, տոկունություն, աննկուն կամք, իսկ այդ ամենի հետ, ու ամենից առաջ ամենաէականը՝ պատրաստակամություն զոհաբերելու կյանքը: Այո, Սիմոնը նյութական վարձատրության ոչ մի պահանջ չարեց: Նա միայն խորապես ատում էր թուրքերին, ատում իր հոգու ամբողջ էությունը: Նրբ իր միսիան հաջողությամբ ավարտեր, նա մտադիր էր Բաքվից վերադառնալուց հետո գործուն մասնակցություն ցույց տալ Ղարաբաղի զինված ուժերի հետ թուրքերի դեմ ուղղված գործողություններին: Սիմոնին Շուշի բերող շրջանային պատաս-

խանատու աշխատողը մեծ գովեստով էր խոսում նրա մասին: Նա բնութագրեց Սիմոնին իբրեւ հավատարիմ, քաջ եւ խելոք մարդու: Սիմոնը գրագետ էր: Նա, ինչպես ինքն էր ասում, իր մայրենի լեզվի չափ գիտեր հայերեն եւ թուրքերեն, կարող էր խոսել պարսկերեն, իսկ արաբերեն ոչ միայն խոսել, այլեւ գրել ու կարդալ, որ նա սովորել էր Բաղդադում, փոքր հասակում, իր հորեղբոր հետ այնտեղ մշակություն անելիս: Նա մինչեւ իսկ իր գրպանում պահում էր արաբերեն Ղուրանը: Այդ հետաքրքիր անձը, դժբախտաբար, Շուշուց դուրս գալուց հետո այնտեղ այլեւս չվերադարձավ: Սիմոնը զինվորական կոմիսարի մոտ մնաց միայն մի ամբողջ օր: Այդ ժամանակամիջոցում նա դուրս եկավ պատելու քաղաքը մեկ-երկու ժամով եւ տեսակցելու իր ծանոթ մի երկու հայերի հետ: Սիմոնին խստորեն պատվիրվեց լինել գաղտնապահ եւ ոչ ոքի բան չասել իր առաջիկա առաքելության մասին, առանձնապես զգույշ լինել Շուշում, ուր բացառված չէր թուրքական գաղտնի լրտեսների գոյությունը: Նա խոստացավ այդպես վարվել: Բայց հետագայում միայն, երբ ամեն ինչ արդեն վերջացած էր, պարզվեց, որ Սիմոնը անզգուշություն էր ունեցել դրժելու իր խոստումը, որը եւ պատճառ էր դարձել ոչ միայն իր միսիայի անհաջողության, այլեւ իր կորստյան:

Բաքու տանելու համար Սիմոնին հանձնվեց երկու նամակ: Մեկն ուղղված էր Բաքվի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ստեփան Շահումյանին՝ հետեւյալ բովանդակությամբ. «Թանկագին ընկեր Ստեփան Շահումյան, հայկական Ղարաբաղը պատրաստ է օգնելու ձեր կովող ուժերին թիկունքային շեշտակի գործողություններով: Թշնամու դեմ կարող ենք հանել մինչեւ քսան հազար լավ սպառազինված եւ ամեն ինչով ապահովված փորձված մարտիկներ: Մեզ ներկայումս անհրաժեշտ են տվյալներ թշնամու ուժերի քանակի եւ դասավորության մասին: Հարվածի ուղղության եւ ժամանակի մասին տեղեկացրեք: Զին. կոմիսար (ստորագրություն)»:

Ղարաբաղի զինված ուժերի սպառազինության եւ «ամեն ինչով ապահովված» լինելու վերաբերյալ մասամբ ուղեցրած տեղեկությունները մտցվել էին նամակի մեջ նախամտածված: Մեծ անզգուշություն կլինեք, հարկավ, եթե չնախատեսվեր, որ սուրհանդակը կարող էր անհաջողության հանդիպել եւ նույնիսկ բռնվել թշնամու կողմից, ինչպես եւ, դժբախտաբար, տեղի ունեցավ: Ուստի պետք էր այնպես ձեւակերպել նամակը, որ այն թուրքերի ձեռքն ընկնելու դեպքում, ամենից առաջ նրանց մեջ որեւէ կասկած չծագեր, թե Ղարաբաղի ռազմական պոտենցիալը որեւէ բանով թույլ է: Բացի դրա-



նից, բացառված չէր, որ թշնամին, նամակից համապատասխան եզրակացություններ անելով Ղարաբաղի տրամադրությունների, զինված ուժերի եւ նրանց պատրաստության մասին, ստիպված լինեք ցրելու իր ուժերը, որոնք առանց այն էլ շատ մեծ չէին, որով կթուլանար նրա ճնշումը Բաքվի ճակատում: Դեպքերի հետագա ընթացքն ապացուցեց, որ այդ նախատեսումը ճիշտ է եղել ըստ ամենայնի: 1918 թ. հուլիսի վերջերից մինչեւ օգոստոս ամսի կեսերը թուրքերն ստիպված էին իրենց ուժերից առանձնացնել որոշ մասեր՝ դնելով հատուկ սպաների («կոմենդանտների») հրամանատարության տակ, եւ պահել ոչ միայն Գանձակի պաշտպանության համար, այլեւ ուղարկել Աղդամ, Թարթար, Կարիագինո եւ մի քանի այլ կարեւոր ստրատեգիական կետեր, որոնք գտնվում էին Ղարաբաղի սահմանների վրա: Իսկ երբ թուրքերին հայտնի դարձավ, որ Անդրանիկը մտել է Զանգեզուր իր «Հայկական հատուկ հարվածող զորամասով», նրանք մի քանի վաշտ ուղարկեցին Կարիագինոյի վրայով Զաբուղ եւ Ագարա գետի հովտի մի քանի կետերը՝ հավաքագրելով նաեւ տեղական մուսուլմանների զինված ուժերը: Նրկորոգ նամակը, գրեթե նույն բովանդակությամբ, հասցեագրված էր դաշնակցության Բաքվի կենտրոնական կոմիտեին:

Նամակները Սիմոնը փակեց դուրանի կազմի մեջ եւ ամրացրեց սոսինձով: Ճանապարհի մարշրուտը որոշվեց՝ Շուշի-Մարդակերտ-Չայու-Բարդա (Պարտավ) - Եվլախ, իսկ այնուհետեւ՝ Քուռ գետի ձախ ափի ուղղությամբ դեպի Բաքու: Սիմոնը պիտի աշխատեր ճանապարհ գնալ գիշերները, իսկ ցերեկը՝ թաքնվել: Մարդկանց հանդիպելիս նա պիտի ձեւացներ իրեն մուսուլման քարոզիչ, որ շրջում է գյուղերը եւ մուսուլմաններին քարոզում «իսլամի սրբազան պատվիրանները»:

Հուլիսի 8-ի երեկոյան էր, երբ մութը կոխելուց հետո Սիմոնը մեկնեց Շուշուց:

## 8. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴԱՎԵՐԸ ԵՒ ՍՏԵՓԱՆ ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Լենինի կառավարությունն, անկասկած, շահագրգռված էր Բաքվի ճակատագրով: Ստեփան Շահումյանը սխտեմատիկ տեղեկություններ էր հաղորդում Լենինին՝ Բաքվի ընդհանուր վիճակի մասին եւ օգնություն խնդրում: Աստրախանից, Կասպից ծովի վրայով, հաճախակի ստացվում էին

զենք, զինամթերք, հագուստ եւ պարեն, որոնց մի մասն էլ երբեմն տեղ չէր հասնում: Ռուսաստանից ստացված այդ օգնությունն, անշուշտ, խիստ արժեքավոր էր: Բայց եւ այնպես, այն անկարող էր լիովին բավարարել ճակատում օր-ավուր սաստկացող մարտերի հարաճուն պահանջներին: Բացի այդ նյութական օգնությունից, Ռուսաստանի խորհրդային իշխանությունը Բաքուն փրկելու համար դիմում էր նաեւ դիվանագիտական միջոցների օգնության: Դա երեւում է 1918 թ. հունիսի 30-ին Ստալինի անունով Յարիցին ուղարկված Լենինի հետեւյալ հեռագրական հաղորդումից.

«1918 թ. հունիսի 30-ին. գաղտնի. հեռագիր ժողկոմ Ստալինին, Յարիցին.

Այսօր, հունիսի 30-ին, Բեռլինից հաղորդում ստացվեց Յոֆֆեից, որ Կյուլմանը (Գերմանիայի արտաքին գործերի ստատս-սեկրետար) Յոֆֆեի հետ ունեցել է նախնական խոսակցություն: Այդ խոսակցությունից երեւում է, որ գերմանացիները համաձայն են ստիպելու թուրքերին՝<sup>32</sup> դադարեցնելու ռազմական գործողությունները Բրեստի սահմանից դուրս, ուր սահմանված է մեզ համար ճշտորոշ դեմարկացիոն գիծ: Խոստանում են թույլ շտալ թուրքերին մտնելու Բաքու, բայց ցանկանում են նալթ ստանալ: Յոֆֆեն պատասխանել է, որ մենք պետք է խստորեն հետեւենք Բրեստին, բայց լիովին համաձայնենք տալու սկզբունքին, որպեսզի ստանանք: Հատուկ ուշադրություն դարձրեք այս հաղորդման եւ աշխատեցեք որքան կարելի է շուտ հայտնել այն Շահումյանին, որովհետեւ այժմ շատ լուրջ շանսեր կան՝<sup>33</sup> պահելու Բաքուն: Նալթի մի մասը մենք իհարկե կտանք: Լենին»<sup>34</sup>

Դժբախտաբար, Լենինի այդ հույսերը փրկելու Բաքուն գերմանացիների միջոցով, ինչպես հայտնի է, չիրականացան: Գերմանացիներն, իրոք, համաձայն էին ստիպելու թուրքերին դադարեցնելու ռազմական գործողությունները «Բրեստի սահմանից դուրս», ուր հաստատված էր ճշտորոշ դեմարկացիոն գիծ, բայց «ոչ թե նրա համար, - ինչպես ասում էր Շահումյանը մի այլ առիթով, - որ գերմանացիները մտածեցին հարգել Բրեստի պայմանագիրը»<sup>35</sup>, այլ որովհետեւ Գերմանիան դեմ էր թուրքական էքսպանսիային Անդրկովկասում: Թուրքերն իրենց գործողություններով մեծապես վնասում

<sup>32</sup> Ընդգծումը տեքստին է:

<sup>33</sup> Ընդգծումը մերն է:

<sup>34</sup> Ленинский сборник, XXXVI, 1959 г., էջ 53:

<sup>35</sup> Ստ. Շահումյան, հոգվածներ եւ ճառեր, էջ 382:



էին գերմանական բլոկի ընդհանուր ռազմագիտական պլանին՝ ցրելով իրենց ռազմական ուժերն այն ժամանակ, երբ Անտանտի 600 հազարանոց բանակը Միջագետքում սպառնում էր Թուրքիայի կենսական կենտրոններին, իսկ մյուս կողմից, ինչպես հայտնի է, գերմանացիները կամենում էին մասնատել Ռուսաստանը եւ Անդրկովկասում եւս Ուկրաինայի, Բելոռուսիայի եւ Լեհաստանի օրինակով ստեղծել առանձին հանրապետություններ՝ Հայաստանից, Վրաստանից եւ Ադրբեջանից, մինչդեռ օսմանցիների նվաճողական ագրեսիան Անդրկովկասում հակասում էր Գերմանիայի այդ քաղաքականությանը։ Եւ որովհետեւ Թուրքիան շուրջն էնթարկվել գերմանական կառավարության եւ զլխավոր հրամանատարության պահանջներին՝ ետ քաշելու զորքերը մինչեւ Բրեստում գծված սահմանները, այդ պատճառով կենտրոնական պետությունների բլոկի երկու խոշոր պարտնյորները՝ Գերմանիան եւ Ավստրիան որոշեցին Կ. Պոլսում կոնֆերանս հրավիրել Բրեստի պայմանագիրը ստորագրած պետությունների մասնակցությամբ<sup>36</sup>, որտեղ պիտի վերանայվեր նաեւ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Թուրքիայի կողմից Անդրկովկասյան հանրապետությունների վզին բռնությամբ փաթաթված պայմանագրերը եւ որոշվեր ստիպել Թուրքիային դադարեցնել ռազմական գործողությունները Բրեստի սահմաններից դուրս, այլ կերպ ասած՝ քաշելու թուրքական զինված ուժերը նաեւ Բաքվի ճակատից։ Սակայն նախատեսված կոնֆերանսը տեղի չունեցավ, հավանորեն, գերմանական բլոկի ռազմական դրություն վատթարացման պատճառով։ Կոնֆերանսի հետ մեծ հույսեր էր կապել առանձնապես Հայաստանի հանրապետությունը՝ իր տերիտորիայի վերամիավորման հարցի դրական լուծումը սպասելով նրանից։ Դրա համար Հայաստանի կառավարությունը խնդրել էր Ուկրաինային՝ այդ կոնֆերանսում պաշտպանել Հայաստանի շահերը։ Ավելի ուշ, Բաքվի Կոմունայի անկումից ավելի քան մեկ ամիս հետո, 1918 թ. սեպտեմբերի սկզբին, Բաքվի ընկնելուց մի 10 օր առաջ, Գերմանիան, օգտվելով նրանից, որ Թուրքիան դիմել էր իրեն եւ 45 միլիոն լիրայի սահմանում դրամական վարկ խնդրել, փորձեց պայմանագրի մեջ մտցնել մի կետ, որի համաձայն Թուրքիան պիտի ճանաչեր Բաքուն իբրեւ Ռուսաստանի սեփականություն եւ ուրեմն հրաժարվեր իր զորքերը մտցնել այնտեղ<sup>37</sup>։ Բայց դրանից էլ բան

<sup>36</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 222, գ. 1<sup>ր</sup>, թ. 399:

<sup>37</sup> Նույն տեղում, թ. 404:

դուրս չեկավ։ Թալեսթ հայաստանն այդ առթիվ Պոլսից շտապ մեկնեց Բեռլին, եւ այնուհետեւ փոխառության խնդիրը լուծվեց այնպես, ինչպես Թուրքիայի մինիստրն էր ցանկացել։

Վերոհիշյալ փաստերը թույլ են տալիս մակաբերել, որ իսկապես «լուրջ շանսեր» չկային պահելու Բաքուն նման դիվանագիտական բանակցությունների միջոցով, երբ, մանավանդ, արեւմտյան ճակատում Գերմանիայի համար այդ ժամանակ ստեղծված ռազմականի վտանգավոր իրադրությունն, անկասկած, լուրջ կերպով զբաղեցնում էր նրան։

Երբ Թուրքերը մտան կովի մեջ Բաքվի դեմ միացած տեղական մուսուլմաններից կազմված բազմահազար զինված հորդաներին, այն ժամանակ թարմ զորամասեր կովի մեջ նետելու պահանջը Բաքվի զինված ուժերի ղեկավարության համար դարձել էր հրամայական։ Հուլիսի 27-ին Շահումյանը հեռագրով խնդրում էր Լենինին եւ Յարիցին՝ Ստալինին՝ արագ օգնություն ուղարկել կանոնավոր զորամասերով։ Նա հայտնում էր. «Մեր դեմ կռվում են Թուրքական կանոնավոր զորքերը։ Սպասում եմ Ձեր շտապ կարգադրություններին զորքեր ուղարկելու վերաբերյալ»<sup>38</sup>։

Դրությունը թիկունքում եւ ճակատում ավելի էր բարդանում անգլիացիներին Բաքու «հրավիրելու» ծավալուն ագիտացիայի շնորհիվ։ Այդ հանգամանքը քայքայում, կազմալուծում էր պաշտպանության գործը։ Ագիտացիան խթանողը եւ ղեկավարողը հենց իրենք՝ անգլիական ագենտներն էին։ Անգլիացիները նպատակ ունեին զավթելու Անդրկովկասը՝ Միջին Ասիան կլանելու եւ բոլշևիզմի դեմ պայքարելու համար։ Զէ՞ որ Անդրկովկասի վրայով էին անցնում Եւրոպայից դեպի Միջին Ասիա, Հյուսիսային Կովկաս եւ Պարսկաստան տանող կարճ ճանապարհները։ Իսկ Բաքվի առատ նավթն իր հերթին հանգիստ չէր տալիս անգլիական ծովահեններին։ Անգլիայի խոշոր կապիտալիստներից մեկն ասել էր. «Ռուսական նավթային արդյունաբերությունը բրիտանական իշխանության հսկողության տակ լայնորեն ֆիրանսավորվելու եւ ճիշտ կազմակերպվելու դեպքում կդառնա կայսրության (Բրիտանական. - Ն. Թ.) ամենաարժեքավոր նվաճումը»<sup>39</sup>։

Ահա այդպիսի նկրտումներով դեռեւս 1918թ. սկզբին անգլիական զորքերի մի զորամաս գեներալ Դենստերվիլի հրամանատարությամբ Բաղդա-

<sup>38</sup> Ստ. Շահումյան, հոդվածներ եւ ճառեր, էջ 397:

<sup>39</sup> Проф. И. Л. Рубинштейн, Ближний и Средний Восток после первой мировой войны, 1952, стр. 8.



դից անցնում է Պարսկաստան եւ տեղավորվում Կասպից ծովի հարավային եզրում գտնվող Էնզելի քաղաքում: Անգլիական մի ուրիշ զորամաս՝ Մալեսոնի հրամանատարությամբ, Բելուջիստանից գալիս է Մեշեդ եւ այնտեղից 1918 թվի հուլիսի սկզբներին, շարժվելով դեպի հյուսիս, գրավում է Աշխաբադը, Կրասնովոդսկը եւ մի քանի այլ կարեւոր կետեր Միջին Ասիայի ռուսական մարզերում:

Շահումյանի կառավարության դեմ մղվող ագիտացիայի եւ լարվող բոլոր ինտրիգների անմիջական սադրիչը հենց Էնզելիում եւ Կրասնովոդսկում բանակած անգլիական զինված ուժերի ղեկավարությունն էր: Անգլիացիները շատ լավ հասկանում էին Բաքվի տնտեսական ու ստրատեգիական հսկայական նշանակությունը Ռուսաստանի խորհրդային իշխանության համար: Նրանք գիտեին, որ Բաքուն Անդրկովկասում մնացել է ռուսական վերջին բաստիոնը, բայց թուրքերի պարտության դեպքում նա կարող էր դառնալ Անդրկովկասը վերանվաճելու կռվան ռուսների համար, ուստի ձգտում էին ամեն կերպ տապալել Շահումյանի կառավարությունը, քայքայել ժողովրդական ուժերի միասնական ճակատը:

Բաքվի ագենտուրայի միջոցով անգլիացիներին ի վերջո հաջողվեց խաբուսիկ խոստումներով մոլորեցնել նույնիսկ Բաքվի Խորհրդի անդամների մեծամասնությանը: Պարսկաստանում եւ Միջին Ասիայում ունենալով միայն փոքրաթիվ ջոկատներ, անգլիացիները խոստանում էին Շահումյանի կառավարությունը տապալելու դեպքում արագորեն Բաքվի ճակատը փոխադրել «պատկառելի» ուժեր:

Շահումյանն ամեն կերպ, թե՛ գրավոր եւ թե՛ բանավոր, մամուլում, Բաքվի Խորհրդում եւ առանձին ժողովներում ու միտինգներում, պայքարում էր անգլիական ագենտուրայի դավերի դեմ՝ հորդորելով չհավատալ անգլիացիների խոստումներին. «Բոլորն իբրեւ թե ջանում են մեզ աջակցություն ցույց տալ, - ասում էր նա, - իսկ մենք, փոխանակ մեր հայացքները դեպի Ռուսաստան դարձնելու, քաղքենիների նման անգլիացիների մասին ենք բղավում»<sup>40</sup>: Նա ասում էր, որ Ռուսաստանը Բաքվի տրամադրության տակ է դրել «հսկայական քանակությամբ տեխնիկական միջոցներ», որ՝ ստացված են մեծ քանակությամբ խոշոր թնդանոթներ, որ՝ Սարատովում 300 վագոն ռազմամթերք է բարձված Բաքվի համար, որ՝ արդեն Բաքու է եկել նախկին

գեղապետ Պետրովի շտաբը՝ բաղկացած 39 հոգուց, որ՝ նրա ետեւից գալիս է հեծելագործը, որը գտնվում է արդեն Աստրախանում, եւ որից 300 մարդ արդեն Բաքու է հասել եւ այլն: Շահումյանը պնդում էր, որ թուրքերը մեծ ուժեր չունեն, եւ կարելի է նրանց ջարդել, եթե, բացի Ռուսաստանի օգնությունից, տեղում եղած բոլոր հնարավորությունները եւ օգտագործվեն: Նա շատ լավ տեղյակ էր իրերի վիճակին եւ միանգամայն իրավացի էր, երբ ասում էր. «եթե նույնիսկ հնարավոր չլինի ճակատ թարմ ուժեր ուղարկել, եղած ուժերը բավական են Ապշերոնյան թերակղզին պաշտպանելու համար»:

Բաքվի փրկությունը, հիրավի, նրանում չէր, որ գաղութային գիշատիչների ագենտուրայի ինտրիգներին զոհ բերեին ժողովրդական միասնական ճակատը, որի հաջողությունները մինչ այդ ակներեւ էին: Բաքուն կփրկվեր, եթե, հրաժարվելով անգլիացիների սուտ օգնությունից՝ տեղական բոլոր ռեսուրսները, մարդկային եւ նյութական բոլոր միջոցները, որոնք դեռեւս չէին սպառված, մոբիլիզացվեին եւ օգտագործվեին թշնամու դեմ, որի ուժերն իրոք մեծ չէին եւ կարելի էր նրա դեմ ոչ միայն հաջողությամբ պաշտպանվել, այլեւ համաձայնեցված միասնական եռանդուն գործողություններով ջախջախել նրան: Բաքվի Խորհուրդը, եւ մանավանդ հայերի ղեկավարությունը, ճակատագրական սխալ կատարեցին՝ հավատ ընծայելով անգլիացիների նենգամիտ խոստումներին: Նրանք իրենց անհեռատես, կարճամիտ գործողություններով, իրենց հախուռն, անմիտ որոշումներով քայքայեցին ու տապալեցին Բաքվի պաշտպանության գործը եւ այդպիսով դյուրացրին ու արագացրին թուրք-թաթարական արյունոտ լուծման գործը: Բաքվի փողոցները ներկեցին տասնյակ հազարավոր անմեղ հայերի արյունով: Դաշնակցության Բաքվի ղեկավարությունը պարտավոր էր չհետեւել էսեռների եւ մենշեիկների խոսքի քաղաքականությանը: Շահումյանը միանգամայն իրավացի էր, երբ առանձնապես դատապարտելի եւ նույնիսկ դավաճանական էր համարում Բաքվի դաշնակցական ղեկավարության դիրքը: Ով մոռանար-չմոռանար, բայց այդ ղեկավարությունը երբեք մոռանալու չէր պատմության դասերը: Ծանր եւ տագնապալի իրադրության պայմաններում, երբ Բաքվի հարյուր հազարից ավելի հայության գլխին դամոկլան սրի պես կախված էր կոտորածների վտանգը, երբ թուրք-թաթարական արյունղեղով ոհմակների բացահայտ սպառնալիքները հայերի հասցեին միանգամայն ակներեւ էին դարձնում նրանց գազանային մտադրու-

<sup>40</sup> Ստ. Շահումյան, հոդվածներ եւ ճառեր, էջ 392:



թյունները Բաքվի եւ ընդհանրապես Անդրկովկասի հայության նկատմամբ, այդ մահացու վտանգներով հղի օրերին ուղղակի հանցանք էր եւ անմտություն Բաքվի փրկության հույսերը կապել օսմանյան թուրքերի հայաջինջ քաղաքականության ավանդական հովանավորողների նենդ խոստումների հետ: 1918 թվի սեպտեմբերյան հայկական կոտորածները Բաքվում, հայության կրած անլուր տառապանքներն ամբողջ 1919 թվի ընթացքում Ղարաբաղում, Նախիջևանում եւ այլուր՝ անգլիացիների վարած հայահալած քաղաքականության արդյունքն էին:

Բավական էր պահպանել միասնական ժողովրդական ճակատը եւս մի երեք ամիս, եւ Բաքուն կփրկվեր: Կփրկվեր նաեւ հայությունը ահռելի կոտորածից, կմաքրվեր ամբողջ Անդրկովկասը թուրքական եւ այլ ռեակցիոն ադտեղություններից:

1918 թ. հուլիսի 25-ին Բաքվի ընդլայնված խորհրդում կրկին քննության դրվեց անգլիացիներին «հրավիրելու» խնդիրը: Խորհուրդը, հակառակ Շահումյանի հորդորներին՝ ձայների աննշան մեծամասնությամբ՝ 259 ձայնով ընդդեմ 236-ի, որոշում է անգլիացիներին Բաքու «հրավիրել» եւ խորհրդում ներկայացված բոլոր կուսակցություններից նոր կառավարություն կազմել: Հուլիսի 31-ին ընկնում է այդպիսով Շահումյանի կառավարությունը, եւ իշխանության գլուխ է անցնում, այսպես կոչված, «Յենտրոկասպի դիկտատուրան»՝ բաղկացած երեք կուսակցությունների՝ մենշևիկների, էսեռների դաշնակցության ներկայացուցիչներից:

Ինչպես եւ պետք էր սպասել, այդ նոր կառավարությանը չհաջողվեց անգլիացիներից ստանալ խոստացած օգնությունը, եւ Բաքուն կարճատեւ հուսահատական պաշտպանությունից հետո ընկավ թուրքերի ձեռքը:

## 9. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ<sup>41</sup>, «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ». ԲԱՔՎԻ ՀԵՏ ԿԱՊ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՓՈՐՁԻ ԱՆՀԱՋՈՂ ՎԱԽՃԱՆԸ

Ղարաբաղի հայության ժողովրդական առաջին համագումարը տեղի ունեցավ այն օրերին, երբ Գանձակի օսմանյան հրամանատարությունը՝

<sup>41</sup> Սա առաջին համագումարն էր մինչեւ 1920 թ. փետրվար-մարտ ամիսը հաջորդաբար գումարված Ղարաբաղի հայության ժողովրդական ութ համագումարներից (պատգամավորական ժողովներից):

Նուրի-փաշայի գլխավորությամբ, Ղարաբաղի զանազան ռազմագիտական կետերում՝ Աղդամում, Թարթարում, Կարիագինոյում, Ջաբուղում եւ այլ վայրերում սկսել էր կենտրոնացնել կանոնավոր զինվորական մասեր, այսպես կոչված «կոմենդանտների» հրամանատարության տակ, իբրեւ թե տեղեւորում «ապահովության եւ կարգի վրա հսկելու», բայց իրականում՝ Ղարաբաղի եւ Սյունիքի հայության շարժումներին հետեւելու եւ տեղական մուսուլմանական զինված ուժերը կազմակերպելու համար:

Համագումարը բացվեց 1918 թ. հուլիսի 22-ին Շուշում, թեմական դպրոցի դահլիճում: Երկրի բոլոր շրջաններից հավաքվել էին մոտ 180 պատգամավորներ<sup>42</sup>: Պատգամավորների մանդատները ստուգվելուց հետո նախագահ է ընտրվում Ալեքսանդր Ռուբենին (Մատուրյան), իսկ քարտուղար՝ Թեոդորոս Տեր Հովհաննիսյանը: Առաջին նիստից հետո Ռուբենին, առանց լուրջ պատճառաբանության, հրաժարվեց նախագահել՝ տարակուսանք եւ դժգոհություն առաջ բերելով պատգամավորների շրջանում:

Ռուբենին փոխարինում է Արսո Հովհաննիսյանը (էսեռ):

Միջկուսակցական բյուրոյի եւ ապա Կոմիսարների խորհրդի նախագահ Հայրապետ Մուսայելյանը տալիս է ընդարձակ հաշվետու զեկուցում՝ երկու ղեկավար օրգանների անցյալ գործունեության վերաբերյալ եւ ապա ժողովին ծանոթացնում Ռուսաստանում եւ Անդրկովկասում տիրող ընդհանուր քաղաքական իրադրության, համաշխարհային պատերազմի եւ Բաքվի ճակատում տեղի ունեցող կռիվների ընթացքին, որքան այդ, իհարկե, թույլ էին տալիս ձեռքի տակ եղած հատ ու կտոր տեղեկությունները: Մուսայելյանն առանձնապես կանգ է առնում Անդրկովկասի հայության գոյությանն սպառնացող թուրքական վտանգի վրա եւ կոչ անում Ղարաբաղի հայությանը՝ լինել միշտ զգաստ եւ պատրաստ: «Բոլոր միջոցներով պիտի աշխատենք համոզել մուսուլման աշխատավորությանը, - ասում է Մուսայելյանը, - որ մենք նրա բարեկամներն ենք, եւ երբեք չենք շփոթում նրան իր վամպիրների՝ բեկերի, խաների, աղալարների եւ այլ ճնշողների ու շահագործողների հետ, որոնք թշնամի են նաեւ հայ աշխատավորությանը»: Մուսայելյանը երկար խոսում է նաեւ երկրի կարիքների, նոր ընտրվելիք կառավարության

<sup>42</sup> Ըստ ընտրական հրահանգի՝ յուրաքանչյուր գյուղախմբային հասարակություն ուղարկել էր 2-ական պատգամավոր, ընտրված գյուղացիների ընդհանուր ժողովներում: Շուշի քաղաքի պատգամավորներն ընտրվել էին «Քառանդամ սիստեմով» ութ ընտրական տեղամասերում:



անելիքների մասին եւ հորդորում պատգամավորներին ընթացիկ ծանր եւ վտանգներով հղի ժամանակաշրջանում պայքարել անիշխանություն ղեմ կազմակերպելով ժողովրդին, հենվելով նրա գործուն ուժերի վրա եւ ամեն կերպ ամրացնելով կարգապահությունը շրջաններում: Ժողովը լսեց նաեւ զինվորական կոմիսարի հաշվետու զեկուցումը եւ մի քանի այլ զեկուցումներ՝ պարենավորման, ֆինանսական, ճանապարհների կանոնավորման ու այլ հարցերի շուրջը: Ժողովում ելույթներ ունեցան պատգամավորներից շատերը: Նրանք դրականորեն էին գնահատում Միջկուսակցական բյուրոյի եւ նրա հաջորդ Կոմիսարների հորհրդի գործունեությունը, նրա անդամների մշտական, կենդանի կապը ժողովրդի հետ եւ հատկապես այն խոշոր եւ անձնվեր աշխատանքը, որ Բյուրոն եւ խորհուրդը կատարել էին երկիրը անիշխանության քառսից դուրս բերելու, ընդհանուր խաղաղությունն ու ապահովությունը վերականգնելու եւ երկու հարեւան ժողովուրդների համերաշխությունը պահպանելու եւ ամրապնդելու գործում: Նկարագրելով ժողովրդի ծանր տնտեսական կացությունը, նրա հողագուրկ վիճակը՝ պատգամավորներն նորընտիր կառավարությանն առաջարկում էին ձեռք առնել բոլոր միջոցները՝ թեթեւացնելու ժողովրդի դրությունը: «Թեպետեւ տարին բերքառատ է,- ասում էին պատգամավորները,- բայց չպիտի մոռանալ, որ հայ գյուղացիության հազիվ հիսուն տոկոսը սերմացու է ունեցել ժամանակին ցանքս կատարելու: Առաջիկա ձմեռը սովի ուրվականը դարձյալ պիտի ծառանա ընչազուրկ հայ գեղջուկի բազմամեծ ընտանիքի առաջ»: Պատգամավորները գանգատվում էին մուսուլման քոչվորների կողմից ճանապարհներին եւ յայլաններում հայ գյուղացիների եւ ճանապարհորդների նկատմամբ կատարվող բռնությունների եւ սպանությունների առթիվ: Իսկ բեկական զինված բանդաների հարձակումները սահմանամերձ հայկական գյուղերի վրա համարում էին առօրյա երեւոյթ:

Գետաշենից եկած ներկայացուցիչները, նկարագրելով Գյուլիստանի շրջանի հայ բնակչության տագնապալի դրությունը, խնդրում էին Ղարաբաղի նոր ընտրվելիք կառավարությանը՝ իր տեսադաշտից դուրս չթողնել նախկին Գյուլիստանի գավառը, որը կազմում էր պատմական Ղարաբաղի անբաժան մասը, մոռացության չտալ այնտեղ ապրող եւ պայքարող հայ գյուղացիության կարիքները, նրա թշվառ եւ անապահով վիճակը: Օսմանյան զինված ուժերի ներկայությունը Ղարաբաղի սահմանակից վայրերում եւ Բաքվի ծանր վիճակը խոր մտահոգություն էին պատճառում ժողովրդին,

բայց առանց խուճապ կամ երկյուղ առաջ բերելու նրա մեջ: Պատգամավորները միաբերան հայտարարում էին, որ երբ հնչի ահազանգը, ժողովուրդը պատրաստ է եւ լի վճռականությամբ մի մարդու պես ելնելու թուրքերի դեմ պաշտպանելու իր երկրի անկախությունը, իր կյանքն ու պատիվը: Նկատի ունենալով պատմական մոմենտի հրամայական պահանջը՝ համախմբելու նորընտիր կառավարության շուրջը ժողովրդի բոլոր կենսունակ, գործուն ուժերին, ժողովը որոշում է ղեկավարվել անցյալում կիրառված կռաւիցիայի միակ ճիշտ սկզբունքով՝ կառավարություն կազմելով անխտիր այն բոլոր քաղաքական հոսանքների ներկայացուցիչներից, որոնք կենսականորեն շահագրգռված են հայ ժողովրդի ճակատագրով եւ պատրաստ են այդ լուրջ պատմական մոմենտին միացնելու իրենց ջանքերը՝ երկիրը վերահաս աղետներից փրկելու համար:

Պատգամավորներից մեկն առաջարկում է ընտրվելիք կառավարությունն անվանել «Ղարաբաղի ժողովրդական կառավարություն», իսկ կառավարության անդամներին՝ «կառավարիչներ»: Կարճ վիճաբանությունից հետո ընդունվում է այդ առաջարկությունը:

Մուսայելյանը ներկայացնում է համագումարին Կոմիսարների խորհրդի հրաժարականը:

Որոշվում է կառավարությունը կազմել յոթ անդամից եւ ընտրությունները կատարել գաղտնի քվեարկությամբ:

Ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է թեկնածուների ցուցակը:

Ընտրվում է կառավարություն՝ բաղկացած հետեւյալ յոթ անձերից.

1. Եղիշե Իշխանյան՝ նախագահ եւ կառավարիչ ներքին եւ արտաքին գործերի.
2. Արշավիր Քամալյան՝ կառավարիչ հողային եւ արդարագատության գործերի.
3. Արսո Հովհաննիսյան՝ կառավարիչ պարենավորման գործերի.
4. Մարկոս Տեր-Աստվածատրյան՝ կառավարիչ ֆինանսների.
5. Հարություն Թումյան՝ կառավարիչ զինվորական գործերի.
6. Մարտիրոս Այվազյան՝ կառավարիչ հաղորդակցության.
7. Մելիքսեթ Եսայան՝ կառավարության քարտուղար, վճռական ձայնի իրավունքով:

Հանձնարարվում է կազմակերպել կառավարության կից երկու հանձ-



նաժողովը բժշկա-սանիտարական եւ ժողովրդական կրթության: Համագումարը որոշում է՝ ա) թույլ տալ գյուղական հասարակություններին՝ կատարել բեկական հողերի բռնագրավում: բ) երկրորդ համագումարը (պատգամավորական ժողովը) հրավիրել օգոստոսի 15-ին:

Իր վերջին նիստում ժողովը լսում եւ միաձայն հաստատում է կառավարության հետեւյալ դեկլարացիան (բերում ենք կրճատումներով).

**«ԴԵԿԼԱՐԱՑԻԱ  
ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

1918 թ. հուլիսի 24

Ռուսական Մեծ հեղափոխությունը ոչնչացրեց ցարական բռնակալությունը եւ նրա՝ դարերի ընթացքում ստեղծած կառավարական ձեւերը: Արմատախիլ արվեց այն ամենը, ինչ ժառանգություն էր մնացել անցյալից:

Ամբողջ Ռուսաստանում սկսվեց նոր կյանքի կառուցումը:

Հեղափոխության ալիքը հեղեղեց նաեւ Կովկասը: Նոր կյանքի ստեղծագործության պահանջը հրամայականորեն կանգնեց մեր առաջ: Սակայն շնորհիվ մեր իրականության առանձնահատուկ պայմանների, այդ խնդիրը հանդիպեց բազմաթիվ խոչընդոտների: Մեզ մոտ սկսվեց եռանդուն աշխատանք Հեղափոխության առաջին օրերից: Սակայն պատերազմի հետեւանքով ստեղծված ծանր վիճակը, զուգորդվելով տեղական աննախընթաց պայմանների հետ, դժվարացնում, գրեթե ի չիք էր դարձնում այդ աշխատանքը: Ռուսական զորքերի հեռանալուց հետո Անդրկովկասի քաղաքական կյանքը կորցրեց իր ծանրության կենտրոնը: Հեղափոխությունը կորցրեց իր պատվարը, մեր՝ Ռուսաստանից փաստապես բաժանվելուց հետո: Կովկասյան Կոմիսարիատը՝ այդ անհուսալի տաշեղը քաղաքական կյանքի ալեկոծվող ծովի վրա եւ կովկասյան ռեակցիայի այդ առաջին կազմակերպված արտահայտությունը, եկավ էլ ավելի ծանրացնելու ստեղծված քաղաքական կացությունը:

Դրությունը չփրկվեց նաեւ, երբ Կովկասում ստեղծվեցին երեք ազգային հանրապետություններ:

Քաղաքական վերիվայրումներից առանձնացած, կղզիացած մնաց Ղարաբաղը: Կտրված աշխարհից՝ նա ամբողջ ութ ամիս դեզերում էր միեւնույն մեռյալ կետում: Սակայն մահացու կլինեի իր վիճակը կապել իրերի քմահաճ ընթացքին: Ղարաբաղը գիտակցեց մոմենտի լրջությունը: Ժողովրդին հատուկ առողջ բնազդով Ղարաբաղի հայ բնակչությունը վճռեց չսպասել մինչեւ կգա եղբայրական ուժը, որը պիտի ազատեր նրան շղթաներից: Այդ ընթացքը

վտանգի կենթարկեի բոլոր արժեքները: Եւ ահա հավաքվել են Լեռնային Ղարաբաղի հայության ժողովրդական ներկայացուցիչները՝ տնօրինելու երկրի ճակատագիրը:

Համագումարը մի անգամ եւս ընդգծեց իր բարեկամական վերաբերմունքը դեպի մյուս աղգությունների դեմոկրատիան: Այդ ճանապարհով մենք կարող ենք հասնել Ռուսական Հեղափոխության հայտարարած վսեմ գաղափարներից մեկին՝ ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացմանը: Եւ դա է լինելու Ղարաբաղի կառավարության գործունեության ելակետը: Համագումարից ընտրված կառավարությունը կոչված է իրագործելու առաջին հերթին ժողովրդի կամքի այդ արտահայտությունը:

Ուշադրության չառնելով մեր կյանքի հեղհեղուկ պայմանները, քաղաքական հորիզոնի անորոշությունը՝ կառավարությունը անհրաժեշտ է գտնում դիմելու օրգանական, սիստեմատիկ աշխատանքի:

Իրեն առաջադրված ամենագլխավոր խնդիրներից մեկը կառավարությունը համարում է լայն մասսաների կազմակերպման գործը:

Պետք է հնարավորություններ ստեղծել վճռելու այն անհետաձգելի խնդիրները, որոնք այսօր ծառացած են մեր առաջ եւ կապ ունեն ժողովրդի անմիջական ապահովության հետ: Կառավարությունը վճռական պայքար է մղելու գոյություն ունեցող անիշխանական երեւոյթների դեմ: Իսկ հանցագործ տարրերի չեղքացումը, անհրաժեշտությունը՝ զավառը ենթարկելու իշխանության պահանջներին, պահանջում են վարչական մարմինների ուժեղ կազմակերպություն:

Քաղաքացիական վիճելի խնդիրների արգարացի լուծումը, ճնշվողների, հարստահարվողների պաշտպանությունը, ինքնադատաստան գործողությունների վերացումը, այդ ամենը պահանջում են դատական գործի անհապաղ կազմակերպում:

Համագումարի ընդունած որոշումը՝ «Թույլ տալ գյուղական հասարակություններին կատարելու բեկական հողերի բռնագրավում», պիտի կարգավորել եւ կանոնավորել: Պահանջվում է դրա համար կազմակերպել հատուկ հանձնաժողովներ, որպեսզի այդ հեղափոխական ձեռնարկումը կատարվի պլանաչափ եւ գծադրությունների ու բախումների պատճառ չդառնա առանձին հասարակությունների միջեւ:

Անցյալի փորձը հրամայականորեն կառավարության առաջ է դնում պարենավորման գործի շուտափույթ կազմակերպումը: Այս, ինչպես եւ մյուս խնդիրների հաջողությամբ լուծելու գլխավոր արգելադիր կառավարության համար հանգիստնալու է երկրի ֆինանսական ծանր դրությունը: Այստեղ է



ահա, որ հանդես պիտի գա ժողովուրդը՝ իր լիակատար պատրաստակամությամբ օժանդակելու կառավարությանը:

Ընտրական սկզբունքը կառավարությունը ընդունում է իբրեւ հիմք բոլոր տեսակի կազմակերպչական աշխատանքների: Սակայն գոյություն ունեցող պայմանները, քաղաքական սխառացիայի արագ փոփոխությունները, որոնք պահանջում են շուտափույթ վճիռ եւ գործողություն, կարող են հարկադրել կառավարությանը, հակառակ իր ցանկություն, ժամանակավորապես շեղվելու այդ սկզբունքներից:

Կառավարությունը խոստանում է գործադրել իր բոլոր ջանքերը՝ հաջողությամբ իրագործելու այստեղ հայտարարված եւ հրապարակման անենթա կա աշխատանքների իր ծրագիրը:

Ոչինչ չի կարող արգելք հանդիսանալ կառավարության այդ ծրագրի լիակատար իրագործման, եթե միայն ժողովուրդը գիտակցի ներկա մոմենտի լրջությունը, գիտակցի եւ ուժեղ թափով ասպարեզ նետել կարողանա իր կենդանի ուժերը՝ պաշտպանելու կառավարությանը եւ օժանդակելու նրա բոլոր ձեռնարկումներին:

Ղարաբաղի ժողովրդական կառավարություն<sup>43</sup>:

1918 թ. հուլիսի 24-ի երեկոյան նիստից հետո հայկական Ղարաբաղի պատգամավորական ժողովը ավարտված հայտարարեց իր աշխատանքները:

Այդպիսով, հեղափոխական ուժերի ստեղծած ազգային ճակատի խորհուրդը այդ օրվանից փոխարինվեց ժողովրդից ընտրված օրինական կառավարությամբ:

\* \* \*

1918 թ. հուլիսի 23-ն էր, համագումարի աշխատանքների երկրորդ օրը: Հայտնեցին զինվորական կոմիսարին, որ Գանձակից եկած մեկը շատ կարեւոր եւ շտապ գործով կամենում է տեսնվել նրա հետ: Միքայել Արզումանյանից ուղարկված սուրհանդակ էր, նամակ էր բերել նրանից: Արզումանյանը հայտնում էր.

«Թանկագին Թումյան, շտապում եմ հատուկ նամակների միջոցով հայտ-

<sup>43</sup> «Ղարաբաղի սուրհանդակ» (Ղր. ժող. կառ. պաշտոնական օրգան), շաբաթաթերթ, 1918 թ. օգոստոս, նո. 1 (ույս է տեսել միայն այդ համարը: Հեղինակի ձեռքի տակ չի եղել բնագիրը, նա օգտվել է մեքենագրած պատճենից):

նքու քեզ հետեւյալը: Շուշուց ուղարկված ձեր սուրհանդակը բռնված է եվլախում գիշերը, Քնի վրայի կամուրջը անցնելու պահին: Բռնված է թուրք պահապառի կողմից: Մանրամասնությունները կպատմի քեզ նամակաբերը, որին կարող ես ըստ ամենայնի վստահել: Բաքու գրված երկու նամակները երեւան են հանված եւ սուրհանդակի բռնվելու գիշերը ուղարկված նուրի-փաշային: Նա կանչեց ինձ, ցույց տվեց ձեր նամակները եւ անզուսպ զայրույթով ասաց. «Գուց խնդրում եք Ղարաբաղին ձեռք չտալ. ահա, տեսեք, թե ինչ է նախապատրաստում ձեր Ղարաբաղը մեր դեմ: Ես առանց այլեւայլության հայտարարում եմ, որ երբ ժամանակը գա, եւ մեր բանակները շարժենք դեպի Ղարաբաղ, մենք ժողովրդին ձեռք չենք տալու, բայց այս նամակների հեղինակին կախելու ենք անողորմաբար»: Այնուհետեւ փաշան մի քանի խոսքերով ծանոթացրեց ինձ, թե ինչ հանգամանքներում է ձերբակալվել ձեր սուրհանդակը:

Այս չափազանց անհաճ տեղեկությունը ես իմ ընկերական պարտքը համարեցի անհապաղ հաղորդելու քեզ:

Մ. Արզումանյան

Հ. Գ. Քեզ անշուշտ կհետաքրքրի սուրհանդակի հետագա ճակատագիրը: Նա հաջորդ օրը ձերբակալության վայրում կրկին հարցաքննվելուց հետո նուրի-փաշայի հրամանով ուղարկվել է Աղդամ եւ այնտեղ կախաղան է հանվել: Մ. Ա.»<sup>44</sup>:

Սուրհանդակի բռնվելու հանգամանքների վերաբերյալ նամակաբերի պատմածից պարզվեց հետեւյալը:

Սիմոնը հաջողությամբ անցել էր ճանապարհը մինչեւ եվլախ: Գիշերը նա փորձում է անցնել Քնի ձախ ափը՝ օգտվելով գետի վրայի մեծ կամուրջից, բայց նկատվում է կամուրջի վրա հսկող թուրք պահակներից եւ ձերբակալվում: Խուզարկելիս սկզբում գտնում են Սիմոնի մոտ Շուշու հայ քաղաքացիներից մի երկուսի նամակները՝ հասցեագրված Բաքվի ազգականներին:

Այդ «իրային ապացույցները» բավական էին թուրքերին՝ գլխի ընկնելու, որ հիանալի տաճկերեն խոսող եւ իրեն իսլամ կրոնավոր ձեւացնող այդ մարդը ուղարկված է Շուշու հայերի կողմից եւ գնում է Բաքու հատուկ միսիայով: Գործ դնելով այդպիսի գեպքերում իրենց սովորական փորձված թուրքական մեթոդները՝ նրանց հաջողվում է ստիպել Սիմոնին խոստովանելու ամեն բան եւ դուրս բերելու Ղուրանի կազմում ներփակյալ երկու նա-

<sup>44</sup> Նամակի բնագիրը ոչնչացել է բազմաթիվ այլ փաստաթղթերի հետ Շուշում, 1920 թ. հրդեհի ժամանակ, բայց այն իմ հիշողության մեջ պահպանվել է գրեթե բառացի:



մակաները: Այդ մանրամասնությունը կասկածել չտվեց, որ դժբախտությունը Սիմոնի հետ տեղի է ունեցել իր անխոհեմության պատճառով: Հակառակ զինվորական կոմիսարի նախազգուշացման՝ չհայտնել ոչ ոքի իր առաքելության մասին, նա, այնուամենայնիվ, հանցավոր անզգուշություն է հանդես բերել ոչ միայն հայտնելով իր առաջիկա ուղեւորության, ու թերեւս նաեւ նպատակի մասին, շուշեցի ծանոթներին, այլեւ նամականներ է վերցրել նրանցից: Եթե խուզարկության ժամանակ նրա մոտ չհայտնաբերվեին կողմնակի անձանց նամականները, որ, ինչպես երեւում է, Սիմոնը լավ թաքցրած չի եղել, ապա շատ հավանական է, որ նա չբռնվեր եւ կարողանար հաջողությամբ իրագործել իր միսիան:

Խեղճ Սիմոն... Ինչպիսի վառ հույսերով նրան ճանապարհեցին Բաքու, եւ ի՞նչ դժբախտ վախճան ունեցավ նա, այդ տակավին ջահել, կենսուրախ եւ եռանդով լի մարդը...

Այդ անհաջողությունը Ղարաբաղի ղեկավարներին չհուսահատեցրեց: Նրանք պատրաստվեցին երկրորդ անգամ փորձել սուրհանդակ ուղարկելու Բաքու՝ այս անգամ կենքորանի վրայով, որը թեեւ շատ ժամանակ կպահանջեր, բայց ավելի հուսալի ճանապարհ էր: Իսկ կգտնվե՞ր Սիմոնի պես հարմար անձ՝ դժվար թե: Բացի գրանից, դեպքերը Բաքվում շուտով այնպիսի ընթացք ընդունեցին, որ կառավարությունն ստիպված եղավ առժամանակ հետաձգել Բաքու սուրհանդակ ուղարկելու մտադրությունը:

Արգումանյանին գրած պատասխան նամակում խնդրվում էր պարբերաբար տեղեկություններ հաղորդել Բաքվի եւ համաշխարհային պատերազմի ճակատներում տեղի ունեցող կռիվների ընթացքի մասին:

Այդ ցանկությունը հասկանալի էր. յուրաքանչյուր հայ այդ մղձավանջային օրերին մի իդձ միայն ուներ՝ Թուրքիայի արագ պարտությունը:

## 10. ՂԱՐԱԲԱՂԻ ՆՈՐԸՆՏԻՐ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Կառավարությունն իր ընտրվելու հաջորդ օրվանից ձեռնարկեց եռանդուն աշխատանքների: Նա հոգ տարավ արագ միջոցառումներով կազմակերպելու երկրի ներքին կյանքը, վերականգնելու կարգն ու օրինականությունը ժողովրդի մեջ, կարգավորելու հացի դժվարագույն խնդիրը, լուծելու հողային եւ այլ վեճերը, կազմակերպելու ժողովրդի առողջապահության

գործը եւ այլն: Կառավարությունը բոլոր հնարավոր միջոցներով շարունակում էր պայքարը՝ հայ եւ թյուրք ժողովուրդների միջեւ համերաշխությունն ու խաղաղություն ամեն կերպ պահպանելու եւ ամրապնդելու համար: Պետք է ասել, սակայն, որ երկու ժողովուրդների սերտ հարեւանական հարաբերությունների մեջ սկսեցին սառնության նշաններ նկատվել հենց այն օրվանից, երբ օսմանյան թուրքերը ոտ դրին Անդրկովկաս: Իսկ երբ նրանք անարգել հասան Գանձակ եւ սկսեցին միջամտել Բաքվի կռիվներին, մեր հարեւանները, թուրքերի եւ նրանց ագենտուրայի անմիջական ազդեցության տակ, դարձան արդեն գոռոզ, բծախնդիր, չզիջող, անհաշտ եւ նույնիսկ՝ ագրեսիվ: Այդ հանգամանքն ստիպեց Ղարաբաղի ղեկավարությանը, հակառակ իր կամքի, ուշադրությունը շեղել ներքին կյանքի այժմեական եւ շտապ կարգավորում պահանջող հրատապ հարցերի մի զգալի մասից եւ կենտրոնացնել երկրի պաշտպանության խնդիրների վրա:

Համապատասխան կառավարիչների նախագահությամբ սկսել էին գործել մի շարք հանձնաժողովներ՝ հողային, արդարադատության, ֆինանսական, պարենավորման, բժշկա-սանիտարական, ժողովրդական կրթության եւ այլն: Երկրի զինված ուժերի կազմակերպման եւ օպերատիվ ղեկավարման համար ստեղծվեց կենտրոնական շտաբ՝ քաղաքում եղած հատ ու կենտ զինվորականներից, կապիտան Արտաշես Վարդապետյանի գլխավորությամբ: Վերացվեց նախկին գյուղական լիազորների պաշտոնը եւ փոխարենը հիմնվեցին կոմիսարիատներ հինգ գավառամասերում: Իսկ Շուշում կազմակերպվեցին գավառական եւ քաղաքային կոմիսարիատներ: Գավառամասերի կոմիսարները զգալի աշխատանք կատարեցին՝ վերջ տալու բոլոր տեսակի անիշխանական երեւույթներին եւ ամրացնելու կարգն ու հանգստությունը շրջաններում:

Հաստատուն օրինական կարգ ստեղծելու համար շրջաններում հիմնվեցին հաշտարար դատարաններ: «Այսուհետեւ, - հայտարարվում էր արդարադատության կառավարչի շրջաբերականում, - ոչ մի գործ չպետք է վճռվի ինքնադատաստանով եւ բռնությամբ: Բոլոր արդարացի պահանջները պաշտպանություն կգտնեն հաշտարար դատարաններում... եւ թող ոչ ոք չհանդգնի ինքնազուլիս վճռելու իր վեճը կամ վերականգնելու իր կորցրած իրավունքը»:

Հաշտարար դատարաններ հիմնվեցին Ջրաբերդ-Գյուլիստանում (Ջիվանշիրում), Խաչենում, Վարանդայում, Դիզակում եւ Շուշում: Իբրեւ երկ-



րորդ՝ վճռաչինք ինստանցիա, հիմնվեց Շուշում շրջանային դատարան, իսկ նրան կից՝ հատուկ գործերի քննիչ հանձնաժողով:

Հաշտարար դատարաններն նստավայրեր ընտրվեցին. Ջրաբերդի համար՝ Մեծշեն գյուղը, Խաչենի համար՝ Խանքենդի ավանը, Վարանդայի համար՝ Ներքին Թաղավարդ գյուղը, իսկ Դիզակի շրջանի համար՝ Հադրութ ավանը:

Մանր բնույթի հանցագործությունների գործերը ենթակա էին զինվորական տրիբունալի քննության: Ապահովելու համար դատարանների նորմալ աշխատանքը, հատուկ պրոպագանդիստներ ուղարկվեցին գավառամասերը՝ կազմակերպելու ժողովրդին:

Կոմիսարները ապահովում էին դատարանների վճիռների անշեղ կատարումը:

Դատարանները կարճ ժամանակամիջոցում, իրենց բարեխիղճ եւ աշխույժ աշխատանքով, իրենց անաշառ, արդարացի վճիռներով ձեռք բերին ժողովրդի համակրանքը եւ վստահությունը: Ժողովուրդն սկսեց ազատ շունչ քաշել: Դյուղի ամեն կարգի բախտախնդիր տարրերը չէին կարող այլեւս ժողովրդին անպատիժ կերպով նեղել, բռնության ենթարկել, ապօրինի պահանջներ ներկայացնել նրան: Անիշխանական եւ ինքնադատաստանի երեւույթները հայկական շրջաններում միանգամից թուլացան, հանգստությունը եւ կարգը վերականգնվեց, ժողովրդի կյանքի եւ գույքի պաշտպանությունն ապահովվեց<sup>45</sup>:

Քաղաքի հայկական մասում հիմնվեց կոմենդանտություն:

Ֆինանսների գծով եւս կառավարությունը որոշ միջոցառումներով աշխատեց թեթեւացնել ժողովրդի ծանր վիճակը: Ժողովրդի մեջ մուտք էին գործել եւ շրջանառության մեջ էին գտնվում այլեւայլ դրամանիշեր: Զանազան սպեկուլյանտներ գյուղերում եւ քաղաքում շահադիտական նպատակներով սկսել էին դժվարություններ ստեղծել դրամանիշերի շրջանառության գործում, որից մեծապես տուժողն, իհարկե, բնակչության չքավոր մասն էր: Դրա դեմ պայքարելու համար հայտարարվեց, որ երկրում շրջանառության մեջ գտնվող բոլոր տեսակի նոր դրամանիշերն, ըստ իրենց համապատասխան միավորների, ունեն հավասար արժեք եւ այդպես էլ պիտի

ընդունվեն ամենքի կողմից եւ ամենուրեք՝ թե՛ գյուղերում եւ թե՛ քաղաքում: Խստորեն արգելվեց դրամանիշերի մեջ տարբերություններ դնել, պակաս արժեքով վերցնել կամ դրամանիշը բոլորովին չընդունել: Քաղաքի կոմենդանտը, գավառամասերի կոմիսարները եւ այլ աշխատողները խստորեն հետեւում էին, որ դրամանիշերի շարաշահումներ չկատարվեն, որ սպեկուլյանտները «խարդախ միջոցներով չծծեն ժողովրդի արյունը»:

Քաղաքի հայկական եւ մուսուլմանական մասերի մատակարարումը թեթեւացնելու համար բաց հայտարարվեց Շուշի-Աղդամ խճուղին, որը մինչ այդ ենթակա էր մոլթ տարրերի կողմից անընդհատ հարձակումների՝ այդ ճանապարհով Շուշի գնացող տրանսպորտի վրա, որով այլուր, ցորեն եւ այլ կենսամթերքներ էին տեղափոխվում քաղաքի համար: Արգելվեց խճուղու եւ նրա մոտակա տարածությունների վրա զինված երթեւեկությունը, իսկ խճուղուն մոտիկ գտնվող գյուղերը ենթարկվում էին պատասխանատվության, եթե նրանց որեւէ մեկի սահմաններում հարձակումներ էին կատարվում խճուղով անցնող տրանսպորտի վրա: Ծանապարհի ապահովության համար պարբերաբար դեպի Զարսու եւ Ասկերան էին ուղարկվում խառը հանձնաժողովներ՝ բաղկացած հայերից եւ թյուրքերից:

Քոչվորները եւ լեռնաբնակ մի քանի մանր-մունր մուսուլմանական գյուղերի ավազակաբարո տարրերը հայերի սպանություններ եւ կողոպուտներ էին կատարում Զանախու, Թավգագուկի, Մուլա-Նասրեդինի եւ Զարսու գյուղերի մոտակայքում, իսկ Կարիագինոյում հաստատված Նուրի-փաշայի «կոմենդանտը», որին տեղացի մուսուլմանները «փաշա» էին կոչում, եւ ոմն «պրիստավ» Մահմուդբեկով սիստեմատիկ հարձակումներ էին կազմակերպում Դիզակի հայկական գյուղերի վրա՝ նպատակ ունենալով շեղելու Ղաբաբաղի հայության զինված ուժերի ուշադրությունը Բաքվի ճակատից: Նման հարձակումներ կատարվում էին նաեւ Թարթարի, Գետաշենի եւ այլ ուղղություններով: Բոլոր հարձակումները թեեւ ետ էին մղվում թշնամու համար մեծ կորուստներով, բայց հայ գյուղացիները եւս կրում էին զգալի կորուստներ: Կառավարությունն այդ սպանությունների եւ հարձակումների առթիվ իր ներկայացուցիչների միջոցով բողոքում էր Շուշու Ազգամիջյան կոմիտեի մուսուլման անդամներին եւ պահանջում վերջ դնել հայերի դեմ կատարվող թշնամական գործողություններին, միջոցներ ձեռք առնել Կարիագինոյի եւ մյուս վայրերի «փաշաների» գրգռիչ պրոպագանդայի դեմ եւ վերացնել տնտեսական բոյկոտը շրջաններում:

<sup>45</sup> Հայ-մուսուլմանական քաղաքացիական պահանջների եւ վեճերի քննությունը կատարվում էր Ազգամիջյան կոմիտեի դատական ատյանում:



Բայց այդ բողոքները եւ պահանջներն անցնում էին ապարդյուն:

Եթե օսմանցիները մուտք չգործեին Ադրբեջան, եւ երկու ժողովուրդների միջեւ հաստատված բարի դրացիական կապերը շարունակվեին առաջվա պես պահպանվել եւ զարգանալ, ապա երկու կողմերի մտավորականության եւ ժողովրդական լայն զանգվածների միջեւ պիտի ստեղծվեին շատ ավելի սերտ բարեկամական հարաբերություններ: Սակայն թուրք հրամանատարների կամ այսպես կոչված «կոմենդանտների» նշանակումներով Ղարաբաղի մի շարք սահմանամերձ կետերում պանթուրքական եւ համիսլամական պրոպագանդն արդեն ծավալուն բնույթ էր ընդունել: Այդ պրոպագանդը օսմանցիները մղում էին ոչ միայն «կոմենդանտների», այլեւ տեղական մուսուլմաններից հավաքագրված գործակալների միջոցով:

Բայց Շուշի քաղաքի մուսուլման բնակչությունը, բարեբախտաբար, շարունակում էր մնալ ավելի խաղաղասեր: Խաղաղության ջերմ կողմնակից էր աշխատավորական խավը՝ հանձինս արհեստավորական եւ մանր առեւտրական տարրերի: Խաղաղասեր էր նաեւ թյուրք հասարակության մեջ զգալի ազդեցություն վայելող խոշոր վաճառականների դասը՝ ոչ միայն ըստ իր զբաղմունքի բնույթի, այլեւ շնորհիվ այն ընդարձակ առեւտրական գործարքային հարաբերությունների, որ վաղուց ի վեր հաստատված էին Շուշի քաղաքի թյուրք եւ հայ վաճառականության միջեւ:

Պիտի նկատել, որ իր տեղագրությամբ առանձնահատուկ վիճակում էր գտնվում քաղաքի մուսուլմանական մասը: Նա հայաբնակ լայն շերտով կտրված էր հայկական Ղարաբաղի սահմանակից թյուրքաբնակ շրջաններից: Եւ այդ ծանր օրերին հացի հայթայթման խնդրում փոխադարձաբար կախման մեջ էին գտնվում հայ եւ թյուրք քաղաքացիները միմյանցից: Այսպես՝ հայերն ապահովում էին Աղդամից եւ Դաշտային Ղարաբաղի այլ վայրերից ուղարկվող հացամթերումների անխափան ստացումը քաղաքի մուսուլմանական մասի համար, իսկ մուսուլմանական մասն էլ իր հերթին քաղաքի հայկական մասն անբաժին չէր թողնում վաճառքի հանելով այնտեղ ստացված մթերքների որոշ մասը: Զի կարելի անտեսել նաեւ այն հսկայական դրական նշանակությունը, որ երկու ժողովուրդների խաղաղ դրացիական հարաբերությունների պահպանության գործում ուներ Բեհբուզովի գլխավորած թյուրք առաջավոր ինտելիգենցիայի խաղաղասիրական պրոպագանդը, որ մեծապես թուլացնում, չեղոքացնում էր Շուշու օսմանյան գործակալների՝ բժիշկ Մեհմանդարովի եւ նրա համախոհների պանթուրքա-

կան գրգռիչ քարոզների վտանգավոր ազդեցությունը: Օսմանյան թուրքերի կազմակերպած պանթուրքական եւ համիսլամական պրոպագանդի արդյունք պիտի համարել հայերի անվերջ սպանությունները շրջաններում եւ տնտեսական բոյկոտը հայ գյուղացիների դեմ: Այդ տեսակետից շատ բնորոշ էր, որ հենց սկզբից հայերի դեմ տնտեսական բոյկոտի եւ խժոժությունների օջախներ դարձան Ղարաբաղի սահմանակից այն մուսուլմանական վայրերը, ուր օսմանյան զորքերի հրամանատարությունը նշանակել էր զինվորական «կոմենդանտներ»՝ իբրեւ թե տեղերում «կարգ ու խաղաղություն պահպանելու համար», ինչպես հավատացրել էր Նուրի-փաշան Անդրկովկասի գերմանական կայսերական ներկայացուցիչ Ֆոն Կրեսին<sup>46</sup>:

<sup>46</sup> Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում, տեղեկանալով, որ թուրքերը զինվորական «կոմենդանտություններ» են կամենում հիմնել Ղարաբաղի զանազան կետերում, ներկայանում է Կովկասի գերմանական կայսերական պատվիրակության ղեկավար Ֆոն Կրեսին եւ հայտնում իր երկյուղը օսմանցիների մտադրության մասին: Ֆոն Կրեսը խոստանում է այդ մասին հաստատապես տեղեկանալ թուրքական հրամանատարությունից եւ Հայաստանի ներկայացուցչին իրազեկ դարձնել: 1918 թ. օգոստոսի 10-ին Ֆոն Կրեսը իր նո. 396 գրությամբ հայտնում է Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչին հետեւյալը.

«Պարոն դիվանագիտական ներկայացուցիչ.

Պատիվ ունեմ Ձեզ հայտնելու, որ համաձայն թուրքական զլխավոր հրամանատար Նուրի-փաշայի ինձ ուղարկած հաղորդագրության՝ օսմանյան զինվորական հրամանատարներ պիտի հաստատվեն Ղարաբաղի զանազան մասերում՝ նույն տեղերում կարգ ու ապահովություն պահպանելու համար: Իմանալուն պես այդ զինվորական հրամանատարների կեցած վայրերը, չպիտի թերանամ Ձեզ հաղորդելու:

Հաղորդելով վերոհիշյալը, պ. դիվանագիտական ներկայացուցիչ, կհուսամ, որ Ձեր կառավարությունը պետք եղածը պիտի կատարի, որպեսզի արգելն հայ զինվորների եւ հիշյալ զինվորական հրամանատարների միջեւ որեւէ բախում:

Ընդունեցեք եւ այլն: (ՀՊՊԱ, ֆոնդ 200, գ. 70):

Այդ առթիվ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը 1918 թ. օգոստոսի 14-ին իր նո. 357 գրությամբ հաղորդում է Հայաստանի կառավարության արտաքին գործերի մինիստրին, որ «Թուրքերը ոտնձգություններ են սկսել Ղարաբաղի նկատմամբ. նրանք արդեն զանազան վայրերում նշանակել են իրենց զինվորական կոմենդանտները...» (նույն տեղում):

Նուրի-փաշան, սակայն, երբեք Ֆոն Կրեսին չհայտնեց, թե Ղարաբաղի որ կետերում է նա «զինվորական հրամանատարներ» նշանակել, դա երեւի ռազմական գաղտնիք էր: Բայց Ղարաբաղցիներին այդ «գաղտնիքը» լավ հայտնի էր, եւ հայտնի էր հատկապես նշանակված հրամանատարների եռանդուն պրոպագանդիստական գործունեությունից եւ մանա-



Պարենավորման գործը քաղաքի հայ եւ մուսուլման բնակչության համար սկսեց քիչ-շատ բարելավվել, երբ փոխադրական կապը Ադդամի եւ Շուշու միջեւ ապահովվեց Ղարաբաղի կառավարության կողմից:

Կառավարությունը որոշեց Գանձակի գավառի ամբողջ լեռնային շրջանը, որ ընդգրկում է Փոքր Կովկասյան լեռնաշղթայի հյուսիսակողմի ճյուղավորությունները եւ որի բնակչության 90 տոկոսից ավելի հայեր են, հայտարարել հայկական Ղարաբաղի տերիտորիայի մի անբաժան մասը:

Ինչպես Գյուլիստանի, նույնպես եւ այդ լեռնամասի հայ բնակչության ընթացիկ կյանքին մոտիկից ծանոթանալու եւ անհրաժեշտ տնօրինելու համար, այնտեղ ուղարկվեց կառավարության անդամ Մարկոս Տեր-Աստվածատրյանը՝ արտակարգ լիազորություններով:

Կառավարության ու նրա վարչական եւ դատական մարմինների համար ամենածանր, հոգեմաշ աշխատանքը շարունակում էր մնալ քաղցի եւ վրիժառուության հոգի վրա կատարվող հանցագործությունների դեմ ուղղված պայքարը: Կառավարությունն ամեն կերպ ճգնում էր ապահովել հայ բնակչության հանգիստը, նրա խաղաղ աշխատանքը, հոգալ նրա անհրաժեշտ կարիքները: Բայց այդ կարող էր իրագործվել իրերի նորմալ վիճակի պայմաններում, երբ բաց լինեին ճանապարհները, ապահովված՝ ազատ երթևեկությունը, երբ տնտեսական ազատ գործառնությունների համար պատշաճ պայմաններ գոյություն ունենային եւ, վերջապես, երբ երկու դարավոր հարեան ժողովուրդների փոխհարաբերությունները ամեն ժամ չթունավորվեին ազգային ատելության շարամիտ հրահրումներով:

Հաղորթի եւ Թաղավարդի հայ գյուղացիները վրեժխնդրության համար հարձակվել էին քոչվոր մուսուլմանների վրա եւ քշել նրանց անասունների մի մասը: Կառավարության վարչական մարմինները կտրուկ միջոցներ ձեռք առան եւ վերադարձրին քոչվորներին թալանված ապրանքը, ձերբակալվեցին եւ դատի տրվեցին հարձակման սադրիչները:

Ճակատից վերադարձած հայ զինվորներն սկսել էին վրդովել Խանքենդի ավանի եւ նրա մոտակա հայ եւ մուսուլման գյուղերի հանգիստը: Քննությունը պարզեց, որ հարձակումների եւ առանձին հանցագործությունների շարժառիթը շարունակում էր մնալ հացի կարիքը: Զինվորը վերադարձել էր ճակատից եւ գտել իր ընտանիքը քաղցի ճիրաններում: Նա ստիպված, իր

վանդ՝ այդ պրոպագանդի քայքայիչ հետեւանքներից:

ճակակից համագյուղացի երիտասարդներին միանալով, գիշերային արշավներ էր կատարում մի կտոր հաց ձեռք բերելու համար:

Կառավարությունը զինվորական մարմինների միջոցով վերջ դրեց այդ արշավանքներին: Նա կարգադրեց Խանքենդի ավանի պարենավորման մարմինն՝ հացով ապահովել ճակատից վերադարձած զինվորների ընտանիքները:

Պատգամավորական ժողովի երկրորդ սեսիան (երկրորդ համագումարը), որ պիտի կայանար 1918 թ. օգոստոսի 15-ին, հետաձգվեց հաջորդ՝ սեպտեմբեր ամսի 5-ին:

## 11. ԱՆԴՐԱՆԻԿԸ ԶԱՆԳԵԶՈՒՐՈՒՄ

Դժգոհ Հայաստանի հանրապետական կառավարության եւ թուրքերի միջեւ 1918 թ. հունիսի 4-ին կնքված հաշտության ստրկացուցիչ պայմանագրից, Շապին-Գարահիսարի արժիվը իր զորամասով դուրս եկավ Դիլիջանից հունիս ամսի սկզբներին եւ Դարալագյազի վրայով շարժվեց դեպի Նախիջևան՝ իր հետ տանելով մեծաթիվ արեւմտահայ գաղթականություն: 1918 թ. հուլիս 14-ին Նախիջևանի շրջանի Ապրակունիս գյուղից ռազիո-հեռագրով հաղորդեց Բաքո՝ Ստեփան Շահումյանին, որ Նախիջևանի գավառը նա հայտարարում է Ռուսաստանի հանրապետության անբաժան մասը: Ապա թշնամի ուժերի ճնշման տակ, մտադրվելով անցնել Պարսկաստան՝ Ուրմիայի ասորիներին օգնելու եւ նրանց հետ միանալու մտադրությամբ, նա իր թիկունքը թուրքերի հարվածից ապահովելու համար քանդեց երկաթգիծը Նախիջևանից մինչեւ Զուլֆա ու ապա անցնելով Արաքսը, պաշարեց Խոյը, որ գտնվում էր օսմանցիների ձեռքում: Երկօրյա կատաղի կռիվներից հետո, անհաջողություն կրելով Խոյի տակ, ստիպված եղավ նահանջել ու կրկին վերադառնալ Զուլֆա: Այդտեղ ոչնչացրեց բոլոր պահեստները եւ ապա Արաքսի հոսանքի ուղղությամբ շարժվեց դեպի արեւելք: Ընդհարվեց Զուլֆայից 12 կիլոմետր հեռավորության վրա մուսուլմանական Յաջի գյուղի զինված ուժերի հետ եւ 1918 թ. հուլիս ամսի երկրորդ տասնօրյակի վերջում մտավ Ղափան, իսկ այնտեղից անցավ Գորիս՝ իր հետ տանելով 15 հազարից ավելի գաղթականություն: Հայ ժողովրդի մեծահույս հերոսը Զանգեզուրի հայության կողմից ընդունվեց գրկաբաց: Գաղթականությունը մի կերպ տեղավորվեց գյուղերում: Հարկավ, խիստ ծանր էր Գորիսի փոքր



շրջանի կիսաքաղց գյուղացիության համար կերակրել այդպիսի մեծաքանակ գաղթականություն:

Անդրանիկի մուտքը Զանգեզուր մեծ շփոթ ու տազնապ առաջ բերեց թուրքական հրամանատարության եւ մուսավաթական ղեկավարության շրջանում: Ղարաբաղի զինվորական կոմիսարի նամակը բռնվելուց հետո, մի ամսվա ընթացքում, սա արդեն երկրորդ եւ միանգամայն լուրջ դեպքն էր, որ ցույց էր տալիս, թե Բաքվի դեմ կրվող թուրք-մուսավաթական ուժերի թիկունքը իսկապես չի կարելի ապահովված համարել հայերի անսպասելի հարվածից, եթե, մանավանդ, այդ հարվածը գլխավորեւ այնպիսի քաջամարտիկ, թուրքերի հետ տեղի ունեցած հերոսական մարտերում հմտացած, նրանց նկատմամբ վրեժխնդրությամբ եւ բուռն ատելությամբ լեցուն մի անձ, ինչպիսին Անդրանիկն էր: Հիրավի, թուրքական բանակը շատ հարվածներ էր կրել նրանից տակավին նրա հայդուկային երկարամյա կռիվների ժամանակաշրջանում, ապա՝ Բալկանյան պատերազմում (1912 թ. հոկտեմբերից մինչեւ 1913 թ. մայիս) եւ համաշխարհային առաջին պատերազմի սկզբի տարիներում Կովկասյան ճակատում: Սակայն այդ ժամանակ Անդրանիկի հրամանատարության տակ եղած ուժերը խիստ սահմանափակ էին:

Իսկ այժմ հանգամանքներն այլ են: Անդրանիկն այժմ գտնվում էր իր երեք հազար մարտիկներից բաղկացած «Հայկական առանձին հարվածող զորամասով» մի այնպիսի լեռնաստանում, ինչպիսին Զանգեզուրն է՝ բաղկացած բացառապես հայերով բնակված լեռնային մի քանի անառիկ շրջաններից եւ գրեթե կից Լեռնային Ղարաբաղին: Գյուլիս-արեւելյան Հայաստանի ծայրամասի այդ անմատչելի, իր պատմական հերոսական անցյալով հանրահայտ լեռնաշխարհից, Անդրանիկը, եթե ուզենար, կարող էր դուրս բերել թուրքերի դեմ մի սովորաթիվ բանակ՝ բաղկացած ավելի քան 30-40 հազար կռիված ռազմիկներից: Եւ, իհարկե, անհավանական չէր, որ այդպիսի մի պատկառելի բռնուցքի լավ նախապատրաստված հարվածի դեպքում կարող էր թուրքերի պարտությունը Բաքվի ճակատում դառնալ անխուսափելի, որին կարող էր հետեւել նաեւ օսմանցիների ամբողջ Անդրկովկասյան ավանտյուրայի կրախը<sup>47</sup>: Բայց, զժբախտաբար, այդ չկատարվեց: Արեւ-

<sup>47</sup> Թե ինչպիսի տազնապ էին ապրում թուրքերն Անդրանիկի՝ Սյունիք մուտք գործելուց հետո, ցույց է տալիս հետեւյալ դեպքը, որ հեղինակին պատմել է ականատես Միքայել Արզումանյանը:

ժայան Հայաստանում տեղի ունեցած սարսափները, երկու միլիոնի հասնող հայության կոտորածն ու արտաքսումը Արեւմտյան Հայաստանից, վախկոտության հասնելու շափ զգույշ էր դարձրել մարդկանց: Եւ դա հասկանալի է: Մեր ժողովրդից Անդրկովկասում մնացել էր միայն մի բուռն, քաղցից եւ հիվանդություններից մահացող հայություն՝ չորս կողմից շրջապատված լավագույն կերպով կազմակերպված, սպառազեն թշնամիներով: Մենք զուրկ էինք ամեն տեսակ պաշարներից, անկազմակերպ, հետեւապես՝ երկար դիմադրելու անընդունակ:

Թուրքերը հավատացած էին, կամ այդպես էին ձեւացնում, որ Անդրանիկի, եւ ընդհանրապես Ղարաբաղի ու Սյունիքի հայերի, բոլոր շարժումները կատարվում են Հայաստանի կառավարության գիտություններով ու նույնիսկ նրա գաղտնի հրահանգներով եւ ուղղված են իրենց Անդրկովկասյան պլանների դեմ: Բայց դա, իհարկե, չէր համապատասխանում իրականությանը: Փաստերը ցույց են տալիս, որ Հայաստանի հանրապետության կառավարությունը դժգոհ էր Անդրանիկի գործողություններից, հավանորեն վախենալով, որ թուրքերը կարող են այն, հունիսի 4-ի պայմանագրի խախտում պատրվակելով, առիթ ծառայեցնել նորանոր նախճիրներ սարքելու հայերի դեմ: Հայաստանի կառավարությունը ամեն կերպ ձգտում էր ապացուցել թուրքերին, որ Անդրանիկը գործում է ինքնակամ, կառավարությունից անկախ, եւ հետեւապես վերջինս նրա գործողությունների համար պատասխանատու լինել չէր կարող:

1918 թ. օգոստոսի 15-ին Ադրբեջանի դիպլոմատական ներկայացուցիչը Վրաստանում Ջաֆարովը, իր կառավարության (ավելի ճիշտ՝ թուրքական հրամանատարության) հանձնարարությամբ «վճռական» բողոք է հայտնում Հայաստանի գործերի հավատարմատարին Թիֆլիսում պատճառաբանելով, որ գեներալ Անդրանիկի զորամասը մտել է «Ադրբեջանի սահմանները՝ գրավելով Շուշի տանող ճանապարհը եւ Զանգեզուրի գավառի մի

Գանձակում տեղավորված օսմանյան զլխավոր շտաբը լուր առնելով, որ հայկական մեծաթիվ այրուձին Անդրանիկի հրամանատարությամբ Ղարաբաղի կողմից սրարշավ մոտենում է Գանձակ քաղաքին, մատնվում է խուճապի եւ գիշերը, Բաքվի ճակատի զլխավոր հրամանատար Նուրի-փաշայի հետ միասին, ձգելով ամեն ինչ, դիմում փախուստի՝ ընդհուպ մինչեւ Աղստաֆա կայարանը: Շտաբը Գանձակ է վերադառնում միայն այն ժամանակ, երբ հավաստի տեղեկություններ են ստացվում, որ Անդրանիկի հարձակման մասին տարածված լուրերը սուտ են:



մասը Գորիս քաղաքի հետ»։ Նա պահանջում էր ետ կանչել Անդրանիկին իր զորամասի հետ Զանգեզուրից<sup>48</sup>։ Իսկ թուրքական «Արեւելյան բանակի» հրամանատարությունը խալիլ փաշայի միջոցով իր հերթին բողոքում էր Հայաստանի կառավարությանը, որ իբրեւ թե Անդրանիկը Զանգեզուրում ավերում է մուսուլմանական գյուղերը, եւ նույնպես պահանջում էր ետ կանչել Անդրանիկին<sup>49</sup>։

Հայաստանի կառավարությունն այդ բողոքներին ու պահանջներին ստիպված էր պատասխանել, որ գնե՞րալ Անդրանիկը վաղուց իր զորամասով հանված է «Հայկական կորպուսի» կազմից, որ՝ Հայաստանի կառավարությունը ոչ մի ուղղակի կամ անուղղակի կապ չունի Անդրանիկի հետ, որ՝ Զանգեզուրն առայժմ չի մտնում Հայաստանի սահմանների մեջ եւ այնտեղ Հայաստանի կառավարությունը չունի վարչություն, զինված ուժեր, հետեւապես եւ՝ որեւէ ազդեցություն եւ այլն։

Այդ բացատրագրերից մեկի մեջ, որ իբրեւ պատասխան ուղարկված էր խալիլ փաշային նրա բողոքների առթիվ, ասվում էր ի միջի այլոց հետեւյալը. «... Ձեզ լավ հայտնի է, որ Լեռնային Ղարաբաղը եւ Զանգեզուրի հյուսիսային մասը բնակված են հայերով, որոնք իրենց թվով գերազանցում են մուսուլմանական բնակչությանը եւ մեր տեսակետից եւ տերիտորիաների բաժանման մեր ծրագրով պիտի պատկանեն Հայաստանին...»<sup>50</sup>։ Մուսավաթական կառավարությանն ուղարկված պատասխանների մեջ եւս վճռականորեն մերժվում էին Ադրբեջանի ղեկավարների անհեթեթ եւ հավակնոտ ակնարկները Ղարաբաղի եւ Զանգեզուրի նկատմամբ<sup>51</sup>։

Անդրանիկին հայտնի էր, իհարկե, Հայաստանի կառավարության վրա իր պատճառով թուրքերի կողմից գործադրվող ճնշումը եւ այն վտանգը, որ

<sup>48</sup> ՀՊՊԿԱ, ֆոնդ 200, գ. 612, թ. 10։

<sup>49</sup> Անդրանիկը երբեք թույլ չի տվել ձեռք տալ մուսուլմանական խաղաղ շինականներին։ Նա եղել է անողորմ միմիայն այն մուսուլմանական բնակավայրերի նկատմամբ, որոնք զինված հարձակումներ են կատարել հայ գյուղերի վրա կամ արգելքներ ստեղծել նրա զորմասի տեղաշարժերի ժամանակ։ Այդ անհերքելիորեն հաստատող մի շարք խիստ հետաքրքրական եւ արժեքավոր փաստեր կարելի է գտնել Անդրանիկի ուղեկից սպաներից մեկի՝ Իշենմեջյանի «Հիշողությունների» մեջ (ՀՊՊԿԱ, ֆոնդ 314, գ. 1)։

<sup>50</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612։

<sup>51</sup> Այդ փաստերը ցույց են տալիս, որ սահմանային վեճը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ առաջին անգամ դրսևորվել է Անդրանիկի շուրջը տեղի ունեցած գրագրությունների ընթացքում։

ստեղծվում էր Հայաստանի մի բուռ հայության համար իր՝ Զանգեզուրում գտնվելու պատճառով։ Այդ սպառնալիքը վերացնելու ակներեւ մտադրությամբ նա Գորիսի տպարանում տպագրել տվեց եւ բազմաթիվ օրինակներով տարածեց մի հայտարարություն, որի մեջ իր հեռանալը Հայաստանի հանրապետության տերիտորիայից բացատրում էր Հայաստանի քաղաքական եւ տնտեսական աննպաստ դրությամբ, այլեւ նրանով, որ տաճկական եւ հայկական կառավարությունների միջեւ կնքված հաշտության պայմանագրի համաձայն Հայաստանն իրավունք չունեւ մեկ դիվիզիայից ավելի զորք պահելու, եւ թուրքական զինվորական հրամանատարության պահանջով իր զորմասը պիտի զինաթափ արվեր, որից կարող էր վտանգվել իրեն հետեւող գաղթականության եւ զորամասի մարտիկների ֆիզիկական գոյությունը։ Հայտարարության մեջ ասվում էր, որ եթե «Եւրոպական պետական անձնավորություններով եւ ներկայացուցիչներով երաշխավորվի իր զորամասի մարտիկների եւ իրեն հետեւող արեւմտահայ գաղթականության ֆիզիկական ապահովությունը», ապա միայն այդ պայմանով ինքը (Անդրանիկը) կհամաձայնի հեռանալ Զանգեզուրից եւ «շարժվել իրենց ցույց տրված վայրը»։ Հակառակ դեպքում նա պատրաստ է «զենքը վայր չդնել մինչեւ վերջին շունչը»։

Այդ հայտարարությամբ Անդրանիկը կամենում էր հաստատել, որ իր մուտքը Զանգեզուր հիրավի կատարվել է իր կամքով, եւ միանգամայն անկախ Հայաստանի կառավարությունից, որ՝ նա չի շարժվում եւ գործում Հայաստանի կառավարության թելադրությամբ, այլ իր գործողություններում առաջնորդվում է սեփական դատողությամբ եւ նկատառումներով, որ՝ նա Զանգեզուր գալով, որեւէ ազդեցիկ նպատակ չի հետամտում օսմանյան թուրքերի նկատմամբ, եւ նրա այնտեղ գտնվելը միայն իր զորամասի եւ գաղթականության ապահովության ու պաշտպանության համար է...

Միանգամայն ակներեւ է, որ թուրքերի կողմից գործադրվող ճնշումը Հայաստանի կառավարության վրա բարոյապես կաշկանդել էր Անդրանիկին, եւ նա, մինչեւ թուրքերի Անդրկովկասից հեռանալը, չհրաժարվեց իր կրավորական դիրքից, անգամ Ղարաբաղի համար կենսական նշանակություն ունեցող այնպիսի մի հարցում, ինչպիսին Զանգեզուրում գտնված Ղարաբաղին պատկանող զենքի եւ զինամթերքի տեղափոխության գործն



էր, որ զանգեզուրցիների<sup>52</sup> դատապարտելի վերաբերմունքի եւ Անդրանիկի անտարբերության պատճառով վերջացավ Ղարաղլլաղի աղետով, իսկ այնուհետեւ նաեւ օսմանյան թուրքերի Շուշի մտնելու իրողությամբ, որ սպառնում էր աղետաբեր լինել բուն իսկ Սյունիքի համար:

Անդրանիկի հայտարարությունը Վրաստանի հայկական դիվանագիտական ներկայացուցիչն ուղարկեց Վրաստանի թուրքական դիվանագիտական ներկայացուցիչ Աբդուլ-Քերիմ փաշային, ընդհանուր հրամանատար Խալիլ փաշային, Գերմանիայի ներկայացուցիչ Ֆոն Կրեսին՝ «իբրեւ իլյուստացիա Հայաստանի հանրապետական կառավարության եւ Անդրանիկի միջեւ գոյություն ունեցող փոխհարաբերությունների»: Բայց թուրքական բարձր հրամանատարությունը չհավատաց, կամ ավելի ճիշտ, ձեւացրեց, որ չի հավատում Անդրանիկի հայտարարությանը:

Խալիլ փաշան եւ մի քանի ուրիշ բարձրաստիճան թուրք զինվորականներ եկան Նրեւան եւ առաջարկեցին Հայաստանի կառավարության մի-նիստր-նախագահ Հովհաննես Քաջազնունուն՝ սկսել Անդրանիկի դեմ... հայկական, թուրքական եւ ադրբեջանական զինված ուժերի համատեղ գործողություններ: Դիպլոմատիայի համաշխարհային պատմության մեջ աննախադեպ, իր ցինիզմով ու թեթեւամիտությամբ չգերազանցված մի օրինակ էր դա, որպիսին վիժելու ընդունակ էին միայն թուրք փաշաները:

Քաջազնունին պատասխանեց, որ նման գործողությունները մեծ ռիսկի հետ են կապված եւ կարող են մեծամեծ արյունահեղությունների պատճառ դառնալ: Նրան վերջապես հաջողվեց թուրքերին հասկացնել, որ Անդրանիկը մեծ հեղինակություն, սեր եւ հարգանք է վայելում Սյունիքի եւ Ղարաբաղի հայ լեռնականների մեջ, եւ, հարձակման դեպքում, այդ անառիկ շրջանների զինված ուժերը մի մարդու պես կկանգնեն Անդրանիկի թիկունքում<sup>53</sup>: Խալիլ փաշան եւ մյուս թուրք զինվորականները Քաջազնունու առարկությունը գտան լուրջ եւ հրաժարվեցին իրենց լկտի առաջարկությունից: Այնուամենայնիվ, Բաքվի ճակատի գլխավոր հրամանատար Նուրի փաշան, անկասկած, բարձր հրամանատարության թելադրանքով, 1918 թվի օգոստոսի ընթացքում Կարիազինոյից Ղափանի ուղղությամբ ձեռնարկեց մի քանի հետախուզական արշավանքների՝ թուրքական «կոմենդանտների» հա-

վաքազրած եւ վարժեցրած տեղական մուսուլմանների զգալի ուժերի եւ թուրքական վաշտերի միջոցով: Այդ հարձակումները վերջանում էին նրանով, որ տեղացի մուսուլման բնակչությունը, որը օսմանյան թուրքերի համար թնդանոթի միս էր ծառայում, տալիս էր անհաշիվ զոհեր եւ ավերվում կամ հրդեհվում էին ադրբեջանական գյուղեր:

\* \* \*

Գաղթականության ներկայությունը հենց սկզբից համատարած սովի սպառնալիք ստեղծեց ամբողջ Գորիսի շրջանի համար: Թեպետեւ տարին վատ չէր, եւ արտերը առատ բերք էին խոստանում, բայց Ղարաբաղի պես այդտեղ էլ սերմացվի պակասի պատճառով ցանքս քիչ էր կատարվել: Այդ դեռ բավական չէր, քաղցը ստիպում էր ոչ միայն գաղթականներին, այլեւ տեղական բնակիչներից շատերին արտերի զգալի մասը քաղել եւ ուտել տակավին կիսահաս վիճակում: Ստեղծված ծանր կացությունը ստիպեց Անդրանիկին մի նամակով խնդրել Ղարաբաղի կառավարությանը՝ տեղավորել գաղթականության որոշ մասը Ղարաբաղում: Կառավարությունը մեր առասպելական հերոսի ցանկությունը վերաբերվեց պատշաճ սիրով եւ ուշադրությամբ: Նա հրավիրեց ընդլայնած նիստ՝ շրջանային լիազորների, քաղաքի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների եւ զինվորական շտաբի անդամների մասնակցությամբ: Նիստը Զանգեզուրից գաղթականություն ընդունելու հարցը հանգամանորեն քննության առնելով տեղական հնարավորությունների տեսակետից՝ արձանագրեց, որ թե՛ քաղաքում եւ թե՛ գյուղական բոլոր շրջաններում, բացի Ջրաբերդի մի երկու գյուղերից, հայ բնակչության վիճակը հացի եւ դրամանիշերի ճգնաժամի պատճառով շարունակում է մնալ խիստ ծանր: Ժողովուրդն աննախընթաց օրեր էր ապրում. նա սնվում էր գլխավորապես բույսերով, որի հետեւանքով բազմազան հիվանդություններ էին տարածվել թե՛ գյուղերում եւ թե՛ քաղաքում: Մահացությունը, հատկապես երեխաների մեջ, սարսափելի չափեր էր ընդունել: Այդ պայմաններում, հարկավ, Ղարաբաղը չէր կարող գաղթականություն ընդունել, հակառակ կառավարության եւ ժողովրդի անկեղծ ցանկության: Բացի դրանից, կար մի ուրիշ, ավելի ծանրակշիռ հանգամանք եւս: Բաքվի վիճակը հուսահատական էր: Անգլիացիները, հակառակ իրենց խոստումների, դավադրաբար լքել էին այն եւ ոչնչով չէին նպաստում Բաքվի պաշտպանությանը: Այդ պայմաններում Բաքուն երկար

<sup>52</sup> Հատկապես Գորիսի շրջանի բնակչության:

<sup>53</sup> ՀՊՊԿԱ, ֆոնդ 200, գ. 619թ, թերթ 44-48:



գիմագրել թուրքերին չպիտի կարողանար: Բոլոր նշաններից կարելի էր կռահել, որ Բաքվի անկումից հետո ռազմաճակատը անխուսափելիորեն տեղափոխվելու է Ղարաբաղ: Այդպիսի մոտալուտ իրական տագնապալի հեռանկարը Ղարաբաղի հայության ղեկավարներին չէր կարող չստիպել լրջորեն մտահոգվելու ժողովրդի վիճակով, երեսանների, կանանց եւ զենք կրելու անընդունակ տղամարդկանց հետագա ճակատագրով, որոնց, բացի երկրի սեփական լեռներից, այլ տեղ պատսպարել կամ էվակուացնել կոնվների ընթացքում անհնար էր: Մինչդեռ բացառված չէր, որ նրանք իրենց լեռներում էլ հարձակման չէին ենթարկվի Ղարաբաղի թիկունքում բնակված քրդերի եւ Ագարա գետի հովտի սպառազեն մուսուլմանների կողմից: Թուրքերն ամենուրեք խոթել էին իրենց գարշելի մուսլիմները եւ հայերի դեմ զինել ու նախապատրաստել իրենց ցեղակիցներին ու հավատակիցներին: Այդ հանգամանքը պաշտպանական տեսակետից եւս ուղղակի աննպատակահարմար էր դարձնում համեմատաբար ապահով թիկունքից, ինչպիսին Ջանգեզուրն էր, գաղթականների թեկուզ մի մասի տեղափոխությունը Ղարաբաղ:

Կառավարության հանձնարարությամբ՝ զինվորական գործերի կառավարիչն այդ ամենի մասին հանգամանորեն շարադրել էր Անդրանիկին ուղարկված պատասխան նամակում, թողնելով, այնուամենայնիվ, Անդրանիկի հայեցողության՝ Ղարաբաղ գաղթականություն ուղարկելու հարցի վերջնական լուծումը: Նամակի վերջում խնդրվում էր Ղարաբաղ ուղարկել, որչափ հնարավոր է, զինված ուժեր՝ փորձված սպաների գլխավորությամբ: Խնդրվում էր նաեւ օգնել գնդապետ Մելիք Շահնազարյանին՝ շտապ Ղարաբաղ տեղափոխելու Շուշու գնդի մնացորդները եւ Ջանգեզուր հասցրած զենքն ու զինամթերքը:

Անդրանիկը, պիտի ասել, անբավական էր մնացել այդ նամակից: Բանից դուրս եկավ, սակայն, որ Անդրանիկի նամակաբեւ սուրհանգակը տակավին Շուշի չհասած, արդեն Ջանգեզուրից դուրս էր եկել գաղթականների մի ստվար կարավան, բաղկացած ավելի քան չորս հարյուր ընտանիքներից, եւ սկսել էր շարժվել դեպի Ջաբուղ՝ Ղարաբաղ անցնելու նպատակով: Գաղթականությունը հուլիսի վերջերին հաջողությամբ հասել էր արդեն Ղարաղշլաղ:

Ջաբուղն այդպես անարգել անցնելու հանգամանքների կապակցությամբ այստեղ ավելորդ չենք համարում հաղորդել որոշ մանրամասնու-

### Գրականներ:

Գորիս եկած ղարաբաղցի եւ նույնացի ճակատայիններից 150-ի չափ հայ զինվորներ, որոնց միացել էին Շուշու գնդից մոտ 50 շարքայիններ եւ ապաներ, անզգուշություն էին ունեցել գաղթականությունը մեկնելուց մի քանի օր առաջ Ղարաբաղ անցնելու փորձ կատարել, առանց սակայն, նախապես հետախուզության միջոցով պարզելու Ջաբուղն անցնելու հնարավորությունները<sup>54</sup>: Այդ անառիկ ձորը թուրքական հրամանատարության կողմից արդեն ամրացված էր եւ պահպանվում էր մեծաքանակ զինված ուժերի հսկողության տակ: Փոխանակ մանր խմբերի բաժանվելու եւ Գորիսից Շուշի տանող գաղտնուղիներին լավ ծանոթ մարդկանց առաջնորդությամբ մաս-մաս անցնելու Ղարաբաղ, այդ 200 հոգուց բաղկացած լավ զինված ջոկատն անփութորեն, օր-ցերեկով, առանց նախազգուշական միջոցների ձեռք առնելու, փորձել էր անցնել «արյունոտ ձորը», երեւի հավատացած լինելով, թե թշնամին չի համարձակվի այդպիսի մի ոչ փոքրաթիվ զինված ջոկատի ձեռք տալ: Թուրքերը թույլ էին տվել ջոկատին անարգել հասնելու մինչեւ Ջաբուղի կամուրջը, որով անցնում է Շուշի տանող խճուղին, եւ

<sup>54</sup> Ջաբուղը կամ Ջաբուղի ձորը գտնվում է Ագարա գետի մուսուլմանաբնակ հովտի հյուսիսային մասում, որտեղ Ջանգեզուրի եւ Ղարաբաղի տերիտորիաները մոտենում են իրար՝ բաժանման տարածությունը հասցնելով 5-6 կիլոմետրի: Այդ տարածության միջով է հոսում Ագարա (հնում Աղվան կամ Աղվանու) գետը, որի վրա շինված համանուն (Ջաբուղի) կամրջի վրայով անցնող խճուղին միացնում էր Շուշին՝ մի կողմից Գորիսի եւ Նախիջևանի, իսկ մյուս կողմից՝ Եվլախ կայարանի հետ: Խճուղու այդ ուղեմասի մոտակայքում միշտ վխտացել են ավազակախմբերը, որոնք Ջաբուղով անցնող ճանապարհորդներին կաղուպտելու նպատակով կատարում էին բազմաթիվ սպանություններ: Տուժողները մեծ մասամբ լինում էին, իհարկե, ղարաբաղցի կամ զանգեզուրցի հայ ճանապարհորդները:

1917 թ. վերջերից, եւ հատկապես 1918 թվի սկսած, Ջաբուղը ձեռք էր բերել խիստ կարեւոր ռազմագիտական նշանակություն՝ Ղարաբաղի եւ Ջանգեզուրի փոխադարձ կապի համար: Այդ հանգամանքը չվրիպեց հայության թշնամիների աչքից: 1918 թ. սկզբից Ջաբուղի վրա խիստ հսկողություն էր սահմանել «Քուրդիստանի» միահեծան տերը՝ Սուլթան-բեկ Սուլթանովը (բուն Քուրդիստանը գտնվում էր Արեւմտյան Հայաստանից դեպի հարավ-արեւելք՝ հյուսիսային լայնության 34 եւ 39 աստիճանների ու արեւելյան երկարություն 37 եւ 46 աստիճանների միջև): Իսկ 1918 թ. օգոստոսին թուրքական հրամանատարությունը Կարիազինոյի վրայով Ջաբուղ ուղարկեց օսմանյան ասկերներից բաղկացած մի քանի ջոկատներ, որոնք կազմակերպեցին այդ կետի մշտական ռազմագիտական հսկողությունը եւ պաշտպանությունը՝ խզելով այդպիսով սովորական կապը Ղարաբաղի եւ Ջանգեզուրի հայերի միջև:



ապա, շրջապատելով ամեն կողմից՝ կոտորել էին բոլորին (կարծեմ փրկվել էր միայն մի սպա):

Անդրանիկը տեղեկանալով թուրքերի եւ տեղական քրդերի այդ բարբարոսության մասին, կարգադրում է իր հատուկ զորամասին վրեժխնդիր լինել մաքրելով Զաբուղը թուրքերից: Դեպքից երեք թե չորս օր հետո հատուկ զորամասի ջոկատները, Զանգեզուրի զինված ուժերի մասնակցությամբ, հարձակվում են Զաբուղի վրա: Թուրքերը եւ քրդերը մեծ կորուստներ կրելով նահանջում են: Ճանապարհը մինչեւ Ղարաղլաղ կարճ ժամանակով մաքրվում է եւ ազատվում թշնամու վերահսկողությունից: Դրանից օգտվելով, վերոհիշյալ գաղթական ընտանիքները հաջողում են արագորեն անցնել Զաբուղը եւ հասնել Ղարաղլաղ՝ Գորիս-Շուշի խճուղու մոտ գտնվող՝ Ղարաբաղի առաջին հայկական մեծ գյուղը:

1918 թ. հուլիսի 31-ին, գիշերը, Ղարաղլաղ գյուղից լուր բերին Շուշի, որ Զանգեզուրից մեծ թվով գաղթականներ, մոտ 2500 շունչ, հասել են Ղարաղլաղ՝ Շուշի մեկնելու նպատակով, բայց խճուղին երիզող լեռնային արոտավայրերում տեղավորված մուսուլման քոչվորները, Շուշուց մոտ 18-20 կիլոմետր հեռավորության վրա, արգելում են գաղթականությանն անցնելու Շուշի: Նրանք լեռնային անառիկ բարձունքներից կրակում են խճուղով անցնել փորձող գաղթականների վրա եւ ստիպում նրանց կրկին վերադառնալ Ղարաղլաղ: Գաղթականությունից կային սպանվածներ եւ վիրավորներ: Ղարաղլաղի սուրհանդակը նախազգուշացրեց, որ ոչ միայն գաղթականների, այլեւ տեղացիների վիճակը կարող է խիստ ծանրանալ նրանով, որ մի քանի օրից հետո գյուղում այլեւս ուտելու բան չի մնա: Ղարաղլաղի ղեկավարների անունից նա խնդրեց կառավարությանը՝ արագ միջոցներ ձեռք առնել զսպելու քոչվորներին եւ ապահովելու գաղթականության ճանապարհը դեպի Շուշի: Հարցը անմիջապես մտցվեց Ազգամիջյան կոմիտե: Որոշվեց կոմիտեի մուսուլման անդամներից բաղկացած մի հանձնաժողով ուղարկել լեռները՝ համոզելու քոչվորներին՝ թույլ տալ գաղթականությանը խճուղով անարգել անցնելու Շուշի: Հանձնաժողովի հորդորներն անցան ապարդյուն: Մի քանի օր անընդհատ շարունակվեցին բանակցությունները քոչվորների հետ ուրիշ, ավելի հեղինակավոր մուսուլման գործիչներից կազմված հանձնաժողովների միջոցով, բայց դարձյալ առանց որեւէ դրական արդյունքի: Քոչվորներն ամեն անգամ վճռականորեն մերժում էին բաց թողնել գաղթականությանը, պատճառաբանելով, որ տղա-

նորդիկ այնտեղ զինված են եւ իբր թե կարող են քաղաքում անկարգություններ առաջ բերել: Այդ պատճառաբանությունը բոլորովին ակներեւ դարձրեց, որ քոչվորներն ինքնազուլս չէին գործում եւ, ամենայն հավանականությամբ, ղեկավարվում էին Շուշու մուսուլմանական մասի տաճիկ «կոմիտեանտ» Հասան Բասրի-բեյի կողմից, որը փոխարինում էր լուծարքի ենթարկված նախկին մուսուլմանական Ազգային կոմիտեին: «Հանգույցը» լուծելուն չօգնեց նաեւ Ազգամիջյան կոմիտեի հայ անդամների նախազգուշացումը, որ կառավարությունը կարող է ստիպված լինել դիմելու քոչվորների նկատմամբ զինված ուժի միջամտության: Կուլֆտալի-բեկ Բեհբուդովը, տեսնելով ստեղծված լարվածությունը, մի անգամ եւս փորձեց համոզել իր ցեղակիցներին՝ խաղաղությամբ լուծելու հարցը: Բայց գործադրված նորա-նոր ջանքերը ոչ մի դրական արդյունք չտվին, մինչդեռ Ղարաղլաղից գրեթե յուրաքանչյուր գիշեր շարունակում էին ստացվել տագնապալի լուրեր՝ գաղթականության եւ գյուղացիների հուսահատական վիճակի մասին:

Պահանջվում էին արագ եւ վճռական գործողություններ՝ դրությունը փրկելու համար:

1918 թ. օգոստոսի 5-ի գիշերը կառավարության կարգադրությամբ հաշենից Շուշի ուղարկվեցին լիակատար մարտական պատրաստությամբ երկու հարյուր ընտիր ռազմիկներ՝ իրենց հրամանատարով: Ջոկատին առաջադրություն տրվեց՝ ապահովելու համար նորմալ երթեւեկությունը Ղարաղլաղ գյուղի եւ Շուշու հայկական մասի միջեւ, արագ գործողություններով ազատել խճուղին մինչեւ Ղարաղլաղ՝ մաքրելով այդ տարածության վրա ընկած լեռնային արոտատեղիները քոչվորների զինված ուժերից: Խստորեն կարգադրվեց խուսափել աննպատակ սպանություններից եւ հարվածել միայն դիմադրողներին: Ձեռք առնվեցին բոլոր միջոցները, որպեսզի իր մասշտաբով տեղային բնույթի այդ օպերացիան չծավալվի եւ չվերածվի մեծ հրդեհի, որից ամեն կերպ խուսափում էր կառավարությունը: Օգոստոսի 7-ի վաղ լուսաբացին սկսվեցին գործողությունները զինվորական գործերի կառավարիչի ընդհանուր ղեկավարությամբ: Առաջին եւ հիմնական հարվածն ուղղվեց Գալազորիկանի (Ղալազորիքան) անառիկ սարավանդում տեղավորված քոչվորների զինված ուժերի դեմ: Այդ բարձունքին տիրելով հարվածի տակ էր ընկնում խճուղին երիզող լեռնային զանգվածն ամբողջ տարածության վրա, ուր փոքր խմբերով ցրված տեղավորված էին մնացած քոչվորները՝ ինչպես գիշատիչ անգղներ, որոնք պատարստ էին ամեն ժամ



հարձակվելու եւ հոշոտելու ճանապարհով անցնող ամեն մի հայի: Գիշերային հետախուզությունը ցույց էր տվել, որ քոչվորները կազմակերպած պահպանություն չունեն: Այդ պատճառով հայ մարտիկների շղթաները հնարավորություն ունեցան հարձակման առաջին իսկ վայրկյաններից արագ թռիչքներով մոտենալ քոչվորների վրաններին մոտ 100 մետր տարածության վրա: Նրանք օդում մի քանի համազարկներ տալուց հետո, չհանդիպելով լուրջ դիմադրության, շարունակեցին դանդաղ առաջխաղացությունը՝ քոչվորներին սարից քաշվելու հնարավորություն տալու համար, որոնք, առաջին իսկ համազարկներից հանկարծակիի գալով եւ իրենց շրջապատված տեսնելով երեք կողմից, տագնապահար հավաքեցին վրանները եւ ունեցած-չունեցածը ու սկսեցին հապճեպ քաշվել Սարու-Բաբա լեռան ուղղությամբ: Կարճ ժամանակից հետո Գալազորիկանի վրա արդեն իշխում էին հայ մարտիկները:

Այնուհետեւ կարճ ժամանակամիջոցում մաքրվեց քոչվորների մանրմունքը խմբերից նաեւ ամբողջ լեռնային տարածությունը մինչեւ Ղարաղշլաղ: Ճանապարհը լիովին ապահովվեց քոչվոր բանդիտների հարձակումներից:

Հեծյալների մի խումբ թռավ դեպի Ղարաղշլաղ՝ իմաց տալու, որ ճանապարհն ազատ է, եւ գաղթականությունը կարող է հանգիստ շարժվել դեպի Շուշի:

Մի քանի ժամից հետո ամբողջ խճուղով երկար ձգված հայ գաղթականների կարավանի ծայրն արդեն հասել էր Շուշու «Վերին հանգստարան» կոչված հայկական մեծ գերեզմանատանը, ուր քաղաքի հայ կանանց միությունը լայն պատրաստություն էր տեսել ընդունելու հայ ժողովրդի տանջված, մերկ ու քաղցած զավակներին: Տեսնողին հիացմունքն էր պատճառում, թե ինչպիսի աշխույժով, հայրենանվեր անձնվիրությամբ ու ոգեւորությամբ էին նախապատրաստվել Ոսկեդարի հայ կանանց սրբազան ավանդները ջերմ գուրգուրանքով իրենց բոցավառ սրտերում ամուր պահած մեր սիրելի քույրերը՝ ընդունելու իրենց արյունաքամ եղբայրներին եւ քույրերին...

Բժիշկների մի մեծ խումբ՝ բաղկացած մեծ մասամբ կանանցից, մեկիկ-մեկիկ քննության էր ենթարկում տղամարդկանց, կանանց եւ երեխաներին ու բժշկական օգնություն ցույց տալիս կարիք ունեցողներին: Մանր հիվանդներն իսկույն փոխադրվում էին քաղաքային հիվանդանոց: Նրեխանե-

քի համար ստեղծված էին լողանալու հատուկ հարմարություններ: Նրանց լողացնում եւ ապա հագցնում էին մաքուր սպիտակեղեն եւ հագուստ, որ նվիրել էին քաղաքի հայ ունեւոր խավերը: Հագուստ էր բաժանվում նաեւ կիսամերկ կանանց եւ տղամարդկանց: Այդ ամենից հետո գաղթականներին բաժանվում էր հաց ու եփած միս:

Կեսօրվա մոտ, երբ գաղթականության արագ հոսքը շարունակվում էր տակավին, հանկարծ, անսպասելի կերպով, Գալազորիկանի դիմացի լեռնալանջերին, 3-4 կիլոմետր հեռավորության վրա, երեւաց Սուլթան-բեկի՝ քրդերից բաղկացած սպառազեն ձիավորների մի մեծ խումբ՝ տաճկական զորշակ պարզած: Դա «Քուրդիստանի» թուրք «կոմենդանտի» կազմակերպած մի նոր «համիրի» ջոկատներից էր, որ եկել էր Ղարաբաղի լեռնաշղթայի անցուղիներով, հավանորեն Բաղիրիկանի լեռնանցքով, թյուրք քոչվորներին օգնության: Բայց ուշացել էր: Արդեն ամեն ինչ վերջանալու վրա էր: Այնուամենայնիվ, ձիավորների մի մասը փորձ արեց դուրս գալ խճուղի «Թթու ջրի» ուղղությամբ՝ նպատակ ունենալով կտրել գաղթականության վերջին խմբերի ճանապարհը: Սակայն հանդիպելով այդ կետում հայկական շրջիկ այրուձիի անվրեպ կրակին՝ քրդերը մատնվեցին խուճապի եւ ձիաների գլուխները շրջելով՝ ընկրկեցին ետ, տալով երեք սպանված եւ մի քանի վիրավորներ: Այնուհետեւ, Գալազորիկանի բարձունքներից տրված մի քանի միահամուռ համազարկներով քրդական ջոկատը ցիրուցան արվեց եւ այլեւս չերեւաց:

Շուտով խճուղու վրա դադարեց գաղթականների հոսանքը: Ղարաղշլաղ գյուղում նրանցից էլ ոչ ոք չէր մնացել:

Խճուղին քոչվորների հարձակումներից ապահովելու եւ գաղթականությունը Շուշի փոխադրելու համար ձեռնարկված գործողությունների ընթացքում, որ տեւեց ընդամենը ոչ ավելի, քան 12-13 ժամ, քոչվորները նյութական եւ մարդկային կորուստներ չկրեցին: Փախուստի ժամանակ նրանք չէին կարողացել իրենց հետ տանել գործիքների հայ առեւտրականներից խճուղու վրա կողոպտված մի երկու արկղ ծխախոտը, որը հայ զինվորների եւ սպաների մեծամասնության համար ծառայեց իբրեւ «բացառիկ ռազմական ավար»:

Գործողությունների ժամանակ խաղաղությունն ամենուրեք, թե՛ քաղաքում եւ թե՛ գավառում, ոչնչով չխախտվեց: Այդ օպերացիան նաեւ քաղաքական տեսակետից դրական արդյունք տվեց. կոուֆտալի-բեկի եւ նրա հա-



մախոհների ազդեցությունն ավելի ուժեղացավ թյուրք բնակչության շրջանում, իսկ ագրեսիվ տարրերը, որոնք խմբված էին տաճիկ «կոմենդանտի» շուրջը, համոզվեցին, որ հայերի խաղաղասիրական քաղաքականությունը բնավ չի ապացուցում, թե նրանց դիմադրական կարողությունը կամ մարտական ոգին որեւէ չափով թույլ է, որ այդ խաղաղասիրությունը բխում է երկրում հանգստություն պահպանելու եւ անմիտ ու աննպատակ արյունահեղություններից խուսափելու միանգամայն անկեղծ ձգտումներից:

Օսմանյան բարձր հրամանատարությունը եւ մուսավաթական ղեկավարները այդ դեպքը մատի փաթեթի դարձրին՝ Հայաստանի կառավարությունը բողոքելու, որ Ղարաբաղում հայերն իբրեւ թե սխտեմատիկ հարձակումներ են գործում մուսուլման քոչվորների վրա, թալանում եւ սպանություններ կատարում: Այդ ստահոգ եւ պրովոկացիոն հերյուրանքները Ղարաբաղի հայ գործիչներին ամենեւին զարմանք չպատճառեցին: Նրանք արդեն գիտեին, որ թյուրք-ադրբեջանական ջարդարարներն իրենց մութ պլաններն իրագործելու համար միշտ դիմում են նման խարդավանքներին:

Կառավարությանը կից Գաղթականական կոմիտեն հաջորդ մի քանի օրերում ցուցակագրեց գաղթականներին, բաժանեց գյուղերի վրա եւ հատուկ լիազորների առաջնորդությամբ ուղարկեց տեղերը: Նրեխաների մի մասը տեղավորվեց նոր հիմնված որբանոցներում:

## 12. ԶԻՆԱՄԹԵՐՔԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻՅ ՂԱՐԱԲԱՂ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ՓՈՐՁԻ ԱՆՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ. ՂԱՐԱՂՇԱՂԻ ԱՎԵՐՈՒՄԸ<sup>55</sup>

Բաքվի պաշտպանության եւ քաղաքի ընդհանուր վիճակի մասին զանազան ուղիներով Ղարաբաղ մուտք գործող լուրերը 1918 թ. օգոստոս ամսի երկրորդ կեսից սկսել էին դառնալ ավելի ու ավելի տագնապալի: Անգլիացիների դավաճանությունը հուսալքում էր առաջացրել քաղաքի պաշտպանների եւ հայ բնակչության շրջանում: Հոգնել էին կոլոդները, իսկ նրանց

<sup>55</sup> Ղարաղլաղը Ղարաբաղի մեծ եւ բարեկեցիկ հայկական գյուղերից էր: Նա գտնվում էր Շուշուց դեպի հարավ-արեւմուտք, մոտ 20-25 կիլոմետր հեռավորության վրա, Շուշի-Գորիս խճուղու մոտ, Սաղաթան լեռան լանջին: Մինչեւ Ղարաբաղի խորհրդայնացումը Ղարաղլաղը բաղկացած էր 6-700 տնից: Ներկայումս նրա բնակչության թիվը ավելի չէ 4-500 տնից:

փոխարինելու համար չկային թարմ ուժեր, օժանդակ զորամասեր: Զինամթերքի պակասն ավելի էր սաստկացնում բարոյալքումը ճակատում: Առանձնապես ծանր էր քաղաքի պարենավորման եւ առողջապահության վիճակը:

Եւ թշնամին մեկ դիրք մյուսի ետեւից գրավելով, քայլ առ քայլ մոտենում էր քաղաքի պաշտպանության վերջին բնագծերին:

Այդ ցնցող լուրերն արագորեն տարածվում էին Ղարաբաղում եւ ժողովրդի մեջ առաջ բերում ջղայնություն եւ տագնապ: Շուշու գնդի եւ Գորիս հասցրած զենքի եւ զինամթերքի տեղափոխությունը դարձավ այլեւս օրհասական անհրաժեշտություն: Այդ գունդը, ինչպես ասացինք, կազմակերպվել էր Թիֆլիսում: Դրա համար վճռական նշանակություն էր ունեցել Ղարաբաղցիների Թիֆլիսի հայրենակցական միության եւ Շուշուց 1917 թ. նոյեմբերին հատուկ միսիայով Թիֆլիս գործուղված Հայրապետ Մուսայեյանի միջնորդությունը: Վերջինիս հանձնարարվել էր ամեն կերպ հաջողեցնել Ղարաբաղ ուղարկելու մի կանոնավոր զորամաս՝ օգնելու տեղական իշխանություններին կարգ եւ հանգստություն պահպանելու երկրում:

Այդ այն ժամանակ էր, երբ կազմակերպվեց հայկական կորպուս՝ ռուսական արեւմտյան ճակատից 1917 թ. ընթացքում, մինչեւ հոկտեմբեր, Կովկասում հավաքված 30 հազարից ավելի հայ զինվորներից եւ սպաններից:

Հայկական կորպուսը բաղկացած էր երեք դիվիզիայից, որոնց մեջ էին մտնում նաեւ կամավորական ջոկատները: Կորպուսի հրամանատար էր նշանակվել գեներալ Թոմաս Նազարբեկյանը: Դիվիզիաներից մեկը, որ բաղկացած էր հիմնականում արեւմտահայ զինվորներից, կոչվեց «Հայկական հատուկ հարվածող զորամաս» եւ գրվեց Անդրանիկի հրամանատարության տակ: Բացի հայկական կորպուսից, կազմակերպվեցին երկուական բատալիոններից բաղկացած հատուկ զորամասեր՝ Լոռու, Ախալքալաքի, Ղազախի եւ Շուշու համար:

Շուշու զորամասը, որ սկսեց կոչվել «Շուշու գունդ», կազմված էր Ղարաբաղցի, նուխեցի, շամախեցի, գանձակեցի զինվորներից, թվով մինչեւ 800 մարդ (500 հետեւակ եւ 300 այրուձի): Գնդի հրամանատարն էր գնդապետ Միքայել Օսիպովիչ Մելիք-Շահնազարյանը՝ շուշեցի, իսկ կոմիսարը՝ մի սպա, նույնպես շուշեցի: Գնդապետ Մելիք-Շահնազարյանը մեծ եռանդ գործադրեց գնդի կազմակերպման գործում: Նրան հաջողվեց ստանալ ռուսական ռազմական մթերանոցներից բավականաչափ հրացաններ, երկու միլի-



ոնից ավելի փամփուշտ, «ձեռքի» եւ «Մաքսիմ» սիստեմների մի քանի տասնյակ գնդացիներ, երկու ծանր, բայց հին սիստեմի թնդանոթ եւ մեծ քանակությամբ մարտական հանգերձանք:

Գունդը մեկնեց 1917 թ. նոյեմբեր ամսի վերջերին եւ Ղարաբաղիսայի, Դիլիջանի, Բայազետի, Դարալագյազի եւ Սիսիանի վրայով Գորիս հասավ միայն 1918 թ. հունիս ամսում, այսինքն՝ անցնելով իր լեռնային դժվարահաղթ ճանապարհն ամբողջ յոթ ամիսների ընթացքում: Գունդը Գորիս հասավ ոչ լրիվ կազմով: Դեռեւս Ղարաբաղիսայում եւ Դիլիջանում եղած ժամանակ նրանից բաժանվել եւ լեռներով իրենց ծննդավայրն էին մեկնել գանձակեցի, նուխեցի եւ մասամբ ղարաբաղցի զինվորներն իրենց զենքերով: Մի քանի հարյուր հոգի էլ ցրվել էին Բայազետից մինչեւ Սիսիան եւ Գորիս հասնելը: Այդպիսով Շուշու գնդում, Գորիս հասնելուց հետո, հագիվ մնացել էր 2-300 մարդ:

Արդեն երրորդ ամիսն էր, որ գնդի մնացորդն իր բավականին զգալի պաշարով նստած էր Գորիսի շրջանի Տեղ գյուղում եւ Ղարաբաղ տեղափոխվելու համար աջակցություն չէր գտնում տեղական իշխանությունների եւ կազմակերպությունների կողմից: Գորիսի շրջանի ղեկավարները պարզապես չէին ցանկանում, որ գնդի բերած զինամթերքը իրենց շրջանից դուրս բերվի: Գործի անհաջողությանը նպաստում էին նաեւ գնդի հրամանատարի եւ իր օգնական Հովակ Ստեփանյանի միջեւ գոյություն ունեցող տարաձայնությունները: Բանը հասնում էր նրան, որ գնդապետը եւ իր օգնականը համաձայնության չէին գալիս պատասխանելու Ղարաբաղի կառավարության հարցումներին, թե ինչ կարող է անել Ղարաբաղը գնդի փոխադրության գործը դյուրացնելու համար: Գնդի հրամանատարը փոխանակ սուրհանդակի միջոցով անմիջական կապ հաստատելու Ղարաբաղի կառավարության հետ՝ իրազեկ դարձնելու նրան փոխադրության հետ կապված դժվարություններին եւ պահանջներին, այդ տարաձայնություններից դրդված, դիմում էր անուղղակի միջոցի: Եթե անհրաժեշտ էր որեւէ բան հաղորդել կառավարությանը, կամ վերջինիս գրավոր հարցումներին էր կամենում պատասխանել, նա այդ ամենը կատարում էր ոչ պաշտոնապես, այլ՝ Շուշում ապրող իր եղբորն ուղղած անձնական նամակների միջոցով:

Զինվորական գործերի կառավարիչը, Շուշու գնդի հրամանատարից անուղղակի եղանակով ստացված հատուկ կենտ տեղեկություններին կարելու էր շտաբով, պահանջում էր, որ նա անմիջապես կապվի կառավար-

ության հետ եւ պաշտոնապես հայտնի, թե երբ է մտադիր շարժվելու դեպի Ղարաբաղ եւ դրա հետ կապված ինչ պահանջներ ունի: Սակայն գնդապետը համեցավ հրաժարվել իր մի անգամ ընտրած կապի խոտելի եղանակից: Նա օգոստոս ամսի սկզբներին դարձյալ իր եղբոր՝ Սամսոն-բեկի միջոցով տեղեկացրեց զինվորական գործերի կառավարիչին, որ իբր թե իր մոտ մեն ինչ պատրաստ է, եւ միայն Գորիսի շրջանի ղեկավարությունը չի կամենում աջակցել իրեն անցնելու Ղարաբաղ, որպեսզի զինամթերքը դուրս չբերվի իր շրջանի սահմաններից: Նա հայտնում էր նաեւ, որ իրեն դժվարություններ են պատճառում գնդի ներսում գոյություն ունեցող տարաձայնությունները: Դրանից հետո կառավարությունը մի հատուկ գրությամբ խնդրեց Գորիսի շրջանի ղեկավարությանը՝ աջակցություն ցույց տալ գնդապետ Մելիք Շահնազարյանին՝ կազմակերպելու գնդի տեղափոխությունը Ղարաբաղ:

Վերջապես, 1918 թ. օգոստոսի կեսերին Սամսոն-բեկը հայտնեց կառավարությանը, որ գնդապետը խնդրում է զինամթերքի տեղափոխության համար շտապ Զանգեզուր ուղարկել 300 սայլ, որ նա հույս ունի նույն քանակությամբ սայլեր դուրս բերել Գորիսի շրջանի գյուղերից եւ այդ տրանսպորտով տեղափոխել զինամթերքը Շուշի:

Սակայն եղբորը գրած իր այդ նամակում գնդապետը որեւէ ձեռով չէր շոշափել վճռական նշանակություն ունեցող մի հարց՝ թե գունդը ինչպես պիտի կարողանար իր փոքրաթիվ ուժերով 600 սայլերից բաղկացած խոշոր գումակը, որ բռնելու էր ավելի քան 4-5 կիլոմետր տարածություն, ապահովաբար անցկացնել Զաբուղը, որտեղ, ինչպես ցույց էր տվել հետախուզությունը, վերջին օրերում կենտրոնացված էին զգալի ուժեր՝ բաղկացած տաճկական երկու հրաձիգ վաշտից՝ իրենց լեռնային հրետանիով եւ գնդացիներով, քրդական հեծյալ զորամասից (600 սուսեր) եւ տաճիկ հրահանգիչների միջոցով լավ մարզված եւ կարգապահության սովորած մի քանի հազար տեղական զինված մուսուլմաններից՝ իրենց անսպառ զինամթերքով: Այդ ուժերը կովի ժամանակ կարող էին կրկնապատկվել ի հաշիվ Ագարա գետի հովտի թուրքական զինված բանդաների: Այդպիսի մեծաքանակ եւ լավ սպառազինված ուժերը հաղթահարելու եւ Զաբուղը գեթ ժամանակավորապես գրավելու համար պահանջվում էր լավ ծրագրված եւ նախապատրաստված գործողություններ պատկառելի ուժերի միջոցով: Ընդ որում այդ գործողություններն անհրաժեշտաբար պիտի սկսվեին միաժա-



մանակ երկու կողմից՝ Ղարաբաղի եւ Զանգեզուրի զինված ուժերով, նախապես փոխադարձաբար համաձայնեցվելուց հետո: Բայց, թեպետեւ զնդապետ Մելիք-Շահնազարյանը գիտեր, որ Զանգեզուրի ազգային իշխանությունները մտադիր չեն որեւէ կերպ աջակցել զնդին զինամթերքի տեղափոխության գործում, որ՝ նույնիսկ Ղարաբաղի կառավարության դիմումը դրական ներգործություն չէր արել Զանգեզուրի ղեկավարության վրա, այնուամենայնիվ, վճռել էր դիմել հուսահատական փորձի՝ «մահացու թռիչքի», առանց պատշաճ նախապատրաստության, առանց հետախուզության միջոցով պարզելու, թե Զաբուղով անցնելու համար ինչպիսի եւ ինչ քանակությամբ ուժերի հետ էր ստիպված լինելու բախվել, առանց հաստատապես համոզված լինելու, թե որչափ հուսալի են եւ քանակապես բավարար այն մի քանի հայկական գյուղերի զինված ուժերը, որոնց երերուն, անհաստատ խոստումների վրա հիմնվելով՝ նա մտածում էր գլուխ բերել զնդի տեղափոխությունը Ղարաբաղ:

Զինվորական գործերի կառավարիչը, բոլոր հանգամանքները կշռադատելով, առաջարկեց, նախքան սալերը Զաբուղ ուղարկելը, անհապաղ զնդի հրամանատարության մոտ գործուղել շտաբի սպաներից մեկ կամ երկու հոգու՝ կազմելու օպերացիայի համատեղ պլան, նախապես ստուգելով եւ համոզվելով, որ զնդի հրամանատարությունն ի վիճակի է Գորիսի շրջանից դուրս բերել բավականաչափ կոմպոնենտ՝ ապահովելու համար գործողությունների հաջողությունը, աչքի առաջ ունենալով, որ հարձակման ծանրությունը, բնականաբար, պիտի ընկներ Գորիսի շրջանի կողմից գործող ուժերի վրա: Կառավարիչն իրավացի էր, երբ գտնում էր, որ առանց պատշաճ պլանի եւ նախապատրաստության Զաբուղի դեմ գործողություններ սկսելով ոչ միայն պատահականության քմահաճույքին կարող էին մատնվել Ղարաբաղից ուղարկված մարդկային եւ նյութական միջոցները, այլեւ կարող էր վտանգվել Ղարաղլաղը (Կարադարասին), որն իր աշխարհագրական դիրքով, իր տեղադրությամբ ռազմագիտական խիստ կարեւոր նշանակություն ուներ Հայկական Ղարաբաղի պաշտպանության համար՝ իբրեւ մի անառիկ ամրոց, մի երկրորդ Ասկերան, որի կորուստով վճռական մոմենտներին կարող էր վտանգվել ոչ միայն Ղարաբաղի թիկունքը, այլեւ ճակատի պաշտպանությունը: Բացի դրանից, Ղարաղլաղն անչափ կարեւոր կոմունիկացիոն կետ էր, որով ապահովվում էր կապը Լեռնային Ղարաբաղի եւ Զանգեզուրի միջեւ: Եւ զարմանալի չէ, որ Ղարաղլաղի դեմ սկսել էին ատամ

կրճտացնել օսմանյան «կոմենդանտները»:

Այնուամենայնիվ, կառավարությունը, մի քանի լուրջ նկատառումներով, վճռեց անցնել «Ռուբիկոնը»:

\* \* \*

1918 թ. օգոստոսի 20-ին, 300 սալ եւ 400 ընտիր ռազմիկներ Շուշում կենտրոնանալուց հետո, հաջորդ օրվա վաղ առավոտյան մեկնեցին Ղարաղլաղ:

Ուղարկվող տրասնպորտի եւ նրան ուղեկցող մարտիկների կոմունիկացիան ապահովելու համար ձեռք առնվեցին համապատասխան միջոցներ: Սալերը եւ մարտիկները նույն օրվա երեկոյան հասան Ղարաղլաղ:

Ինչպես երկուստեք պայմանավորվել էին, գիշերը Ղարաղլաղի եւ Զանգեզուրի կողմից մեծ խարույկների միջոցով իրար փոխադարձաբար ազդանշաններ տալուց հետո, լուսաբացին սկսվում է երկու կողմերի գրոհը Զաբուղի ուղղությամբ: Ղարաղլաղ գյուղի կոմպոնենտների մեծ մասը, թվով մինչեւ 700 մարդ, միացան սալերին ուղեկցող մարտիկներին եւ նրանց հետ միասին ճակատ կազմեցին Ղարաղլաղի լեռնալանջերից սկսած մինչեւ Լաչին լեռան հարավային բարձունքները: Հրամանատարությունը, ապահովելով աջ եւ ձախ թեւերի պաշտպանությունը, սկսեց զարգացնել հարձակումը կենտրոնից՝ խճուղու երկու կողմերի լեռնալանջերով դեպի Զաբուղի ձորը:

Թշնամին, որ ամրացած էր գլխավորապես աջ թեւի հանդիպակաց լեռների լանջերին եւ լայնատարած ձորի բարձրագիւր բլուրների գագաթներին, կատաղի դիմադրություն էր ցույց տալիս: Կովի հենց սկզբից միանգամայն ակներեւ դարձավ, որ միայն Գորիսի շրջանի կոմպոնենտների եռանդուն փոխգործողություններով կարելի էր ընկճել հակառակորդի դիմադրությունը եւ նրան դուրս մղել իր գրաված դիրքերից: Այդպիսով միայն Ղարաբաղի կողմից հարձակվող ուժերը կկարողանային առաջանալ դեպի ձորը, բռնել այնտեղով անցնող խճուղու երկու կողմերի բարձունքները եւ գրավել կամուրջը, որից հեծո երկու ճակատների կոմպոնենտները միանալով ձորում իրար հետ, հնարավորություն կտային Ղարաբաղից ուղարկված սալերի գումակին արագ երթով կտրելու անցնելու Զաբուղը եւ Զանգեզուրից տեղափոխելու զինամթերքը: Բայց, դժբախտաբար, Գորիսի շրջանի կոմպոնենտների կողմից թշնամու դիրքերի վրա ոչ մի վճռական հարձակում չկատարվեց, թեեւ եր-



կար ժամանակ հրաձգության ձայները Ջաբուղի ձորի ուղղությամբ եւ Կոռնիձոր գյուղի կողմերից չէին դադարում:

Ղարաբաղի զինված ուժերի հրամանատարության բոլոր ջանքերը՝ կապ ստեղծելու Գորիսի շրջանի կովոդների հետ, անցան ապարդյուն:

Կեսօրվա մոտ տաճկական մեկ վաշտ, տեղացի մուսուլման կովոդների հետ միասին, նպատակ ունենալով շրջանցել զարաբաղցի կովոդների ձախ թեւը, կատաղի գրոհների ձեռնարկեց այդ թեւը պաշտպանող մարտիկների դիրքերի դեմ: Մոտ երկու ժամվա լարված կռիվներից հետո, թշնամին, մեծ կորուստներ կրելով, ստիպված եղավ նահանջել: Գրեթե միաժամանակ ուժեղ հարձակման ենթարկվեց նաեւ աջ թեւը՝ տաճկական սպաների ղեկավարությամբ գործող քրդական զինված ուժերի կողմից: Բայց այդտեղ էլ ուժեղ դիմադրության հանդիպելով, հակառակորդը ստիպված էր ետ քաշվել: Այդ հաջողությամբ խրախուսված՝ Ջաբուղի ուղղությամբ գործող Ղարաբաղի ուժերը առաջ անցան եւ դուրս արին թշնամուն մի քանի կարեւոր եւ խիստ ամրացրած դիրքերից: Իսկ սայլերը խճուղով քայլ առ քայլ հետեւում էին կովոդներին: Երեկոյան դեմ Ջանգեզուրի կողմից մինչ այդ լավող երբեմնակի ուժեղ հրացանաձգությունը հետզհետե թուլացավ եւ ապա բոլորովին դադարեց՝ զարմանք եւ հիասթափություն առաջ բերելով զարաբաղցի մարտիկների շարքերում: Հրամանատարությունը կրկին փորձ արեց կապվել գնդապետի հետ, բայց դարձյալ ապարդյուն: Թշնամին շարունակում էր դարանակալել Ջաբուղի ձորի ամեն քար ու թուփ:

Բոլոր նշաններից երեւում էր, որ թշնամին այս անգամ զգալի ուժեր է կենտրոնացնում զարաբաղցի կովոդների ձախ թեւի դեմ: Գիշերային հետախուզության տվյալներով, Ջաբուղի ձորի շրջանում եւս հակառակորդը նոր ուժեր էր կուտակում: Հրամանատարությունը կարգադրեց ձորի ուղղությամբ առաջացած ուժերին ետ քաշվել, իսկ գումակի ղեկավարին՝ սայլերը ետ քաշել թիկունք: Այնուամենայնիվ, թե՛ հրամանատարությունը եւ թե՛ շարքային մարտիկները հույսեր էին տածում, որ զանգեզուրցիների լուծությունը ժամանակավոր է եւ, հավանորեն, ուժերի նոր վերադասավորման հետեւանք: Ուստի սպասվում էր, որ լուսաբացին կվերսկսվեն գործողությունները Ջանգեզուրի կողմից: Բայց, դժբախտաբար, խաբուսիկ հույսեր էին գրանք:

Ինչ էր կատարվել Ջանգեզուրի ճակատում:

Գնդապետ Մելիք-Շահնազարյանը, գործողությունները Ջաբուղի դեմ

վերադառնալուց առաջ, Ջանգեզուրի ազգային խորհրդից եւ Անդրանիկից աջակցություն չգտնելով, դիմել էր Խնձորեսկի, Տեղի, Կոռնիձորի եւ մի քանի այլ գյուղերի կովոդներին՝ խնդրելով օգնել Ջաբուղի ուղղությամբ նախապատրաստվող գործողություններին, խոստանալով տալ փամփուշտ եւ նույնիսկ հրացաններ: Այդ մեծ եւ փոքր գյուղերի 800-ից ավելի մարտիկները համաձայնել էին եւ գործողությունների սկզբում կռվել մեծ եռանդով եւ արիությամբ: Այդպես, սակայն, շարունակվել էր մի քանի ժամ միայն: Ճակատի աջ թեւում, հրապուրվելով մուսուլմանական գյուղերի հարուստ թալանով, սյունեցի կովոդները մաս-մաս սկսել էին ետ քաշվել՝ լքելով իրենց դիրքերը: Թուրքերը, նկատելով այդ, կարողացել էին արագ կերպով ուժեր կենտրոնացնել եւ եռանդուն գործողություններով շրջանցման վտանգ ստեղծել կենտրոնի եւ ձախ թեւի սակավաթիվ կովոդների համար: Գնդապետը դրանից հարկադրված ետ էր քաշվել, որից հետո ընդմիշտ դադարել էին գործողությունները Ջանգեզուրի կողմից:

Օգտվելով Ջանգեզուրի ճակատի քայքայումից՝ հակառակորդն իր բովանդակ ուժերը նետեց Ղարաբաղի ճակատի կովոդների դեմ: Օգոստոսի 23-ի առավոտյան սկսվեցին թշնամու ուժեղ գրոհներն ամբողջ ճակատում: Հակառակորդը մանեւրում էր եւ ջանքեր գործ դնում շրջանցելու հայ կովոդների ձախ թեւը՝ նպատակ ունենալով թիկունքում գրավել Ղարաղլաղը եւ ապա շրջապատել եւ ոչնչացնել Ղարաբաղի կովոդ ուժերն ամբողջ ճակատում: Ղարաբաղի 1500-ի մոտ մարտիկների դեմ հակառակորդը կուտակել էր ավելի քան 10 հազար կովոդներ: Թուրքական վաշտերի, քրդական ուժերի եւ մուսուլմանական ջոկատների հետ կռվին մասնակցում էին Կուրթաթլուի եւ նրա շրջակա մուսուլմանական գյուղերի զինված խաժամուժը, որի թիվը մեծանում էր ժամ առ ժամ:

Հայ մարտիկների համար այլեւս կասկածից դուրս էր, որ Գորիսի շրջանի կովոդ ուժերը դավաճանել են գնդապետին եւ վերջնականապես ետ քաշվել ճակատից, թողնելով, որ Ագարա գետի մուսուլմանաբնակ հովտի զինված հորդաները, միացած թուրքական կանոնավոր վաշտերին, կրեւորեն պես թափվեն Ղարաբաղի ճակատի սակավաթիվ ռազմիկների վրա:

Ձախ թեւի դեմ ուղղված անընդհատ գրոհները ետ էին մղվում թշնամու համար մեծ կորուստներով:

Օգոստոսի 24-ի ամբողջ ցերեկը շարունակվեցին կատաղի մարտերը երկու կողմերի անհավասար ուժերի միջեւ: Հայ կովոդների մարտապաշարն



արդեն սպառվելու վրա էր: Շուշու արհեստանոցում պատրաստած փամփուշտն իր որակով մրցել չկարողացավ ռուսական գործարանային մարտական փամփուշտների հետ:

Հակառակորդը, չնայելով զգալի կորուստներին, համառորեն շարունակում էր իր ճիգերը՝ շրջանցելու ձախ թեւը: Նա այդ կետում կենտրոնացրել էր մեծ ուժեր եւ իր կատաղի գրոհներով կամենում էր փշրել այդ թեւի պաշտպանների հերոսական դիմադրությունը: Կեսօրվա դեմ, թշնամու գերազանց ուժերի ճնշման տակ, ձախ թեւը պաշտպանող ուժերն ստիպված եղան մի փոքր ետ քաշվել, բայց երեկոյան դեմ, թիկունքից նոր հասած թարմ ուժերի օգնությամբ վերականգնվեց նախկին դասավորությունը:

Թշնամին, սակայն, վճռել էր ինչ գնով էլ լինի գրավել Ղարաղլաղը եւ հարվածել հայ մարտիկներին թիկունքից:

Օգոստոսի 24-ի երեկոյան Ղարաղլաղի ճակատից Շուշում ստացված վերջին հաղորդումը համոզեց կառավարությանը, որ Զաքուղի օպերացիան վերջնականապես ձախողում է կրել, եւ այլեւս Զանգեզուրի կողմից որեւէ գործողություն սպասել ինքնախաբեություն է: Փամփուշտի սակավությունը հրամանատարությանը գրկեց հնարավորությունից ապահովելու Ղարաղլաղի եւ Դեպի Շուշի տանող խճուղու պաշտպանությունը:

Նույն օրվա գիշերը որոշվեց ետ քաշել բոլոր ուժերը ու ամրանալ Ղարաղլաղից մոտ 12 կիլոմետր հյուսիս-արեւելք ընկած լեռնային բնագծերում: Միաժամանակ կարգադրվեց խաչենի եւ Վարանդայի զինված ուժերին՝ անհապաղ բռնել եւ ամրացնել այդ շրջանների հյուսիս-արեւմտյան սահմանների լեռնային անցքերը:

Օգոստոսի 25-ին Զաքուղ ուղարկված կռվողները, Ղարաղլաղ գյուղի զինված ուժերի հետ համատեղ, չորսօրյա հերոսական արյունահեղ լարված մարտերից հետո, տալով 20 սպանված եւ 35 վիրավորներ, ստիպված եղան ետ քաշվել՝ նախապես դատարկելով Ղարաղլաղը, եւ կանանց, երեխաներին ու ծերերին սայլերի վրա ճանապարհելով դեպի Շուշի:

Թշնամին չհամարձակվեց հետապնդել նահանջող մարտիկներին: Նա այդ անել չկարողացավ գլխավորապես այն մեծ կորուստների պատճառով, որ կրել էին նրա լավագույն ուժերը: Դրեթե ամբողջովին շարքից գուրս էին եկել տաճկական երկու վաշտեր, իսկ քրդերը տվել էին մոտ 150 սպանված եւ 200-ից ավելի վիրավորներ: Տեղական մուսուլմանական անկանոն խմբերի կորուստներն անհամեմատ մեծ էին: Չունենալով բուժական կազմ եւ

բժշկականաչափ բուժամիջոցներ, մուսուլման վիրավորները թողնվում էին հակատագրի կամքին, իսկ գյուղական հեքիմների միջամտությունն առավել եւս մեծացնում էր վիրավորների մահացության թիվը:

\* \* \*

Ղարաղլաղի կռիվների ամենատաք շրջանում Զեբրայիլից ուղարկված տաճկական մի գումարտակ, տեղացի մուսուլմաններից հավաքագրված քաղմաթիվ հեծյալների հետ, մոտենալով Զանգեզուրի հարավ-արեւելյան ծայրամասի մատույցներին, հարձակման գործողություններ էր սկսել հայերի դեմ: Թշնամուն հակահարված տալու համար Անդրանիկն ուղարկում է իր հարվածող զորամասի հեծելազորը: Մի քանի ժամվա կատաղի մարտերից հետո թշնամին գլխովին ջախջախվում է եւ խուճապահար դիմում փախուստի՝ տալով մեծ թվով սպանվածներ ու վիրավորներ: Զանգեզուրի դեմ հակառակորդի ձեռնարկած այդ արշավն, իհարկե, չէր կարող խանգարել զանգեզուրցիներին օգնության ձեռք մեկնելու գնդապետ Մելիք-Շահնազարյանին, եթե նրանք այդ անկեղծորեն ցանկանային:

Այդպիսով, իզուր անցան Շուշու գնդի եւ նրա զինամթերքի հետ կապված հույսերը: Դրա հետ միասին խորտակվեցին նաեւ Բաքվին զինված օգնություն ցույց տալու համարձակ պլանները:

Պատմությունը, հարկավ, չի կարող շնչավակել, թե ինչպես ամենածանր տանջանքների գնով Ղարաբաղի համար Գորիս բերված զենքը եւ զինամթերքը հափշտակեց Գորիսի շրջանը՝ թողնելով, որ Ղարաբաղը մերկ ձեռքերով մեն-մենակ դեմ կանգնի տաճկական զորքերին եւ բեկական բազմահազար հորդաներին:

\* \* \*

Երբ ավելի քան չորս հազար շնչից բաղկացած Ղարաղլաղցի փախստականները եւ ապա զինված տղամարդիկ հեղեղի պես հորդեցին Շուշի, քաղաքում ստեղծվեց աներեւակայելի լարված վիճակ: Առանձնապես մեծ էր տագնապը եւ շփոթությունը քաղաքի մուսուլմանական մասի բնակչության շրջանում, ուր սարսափով վայրկյան առ վայրկյան սպասում էին հայերի հարձակմանը թյուրքական քաղաքամասի վրա: Անգամ կուֆտալիբեկ Բեհբուդովը, որը լավ տեղյակ էր, թե քաղաքի հայությունն ինչպիսի անկեղծ վստահություն եւ ջերմ համակրանք էր տածում իր նկատմամբ, մինչեւ իսկ նա, վտանգված համարելով իր եւ իր ընտանիքի կյանքը, հայ-



կական մասից հապճեպ տեղափոխվեց մուսուլմանական մասը: Մեծ էր հուզումը եւ վախը նաեւ քաղաքի հայ բնակչության շրջանում թե շուտով իշխանությունը հայկական մասում կանցնի զինված խուժանի ձեռքը, որը պատուհաս կդառնա քաղաքի հայ հասարակության գլխին եւ տեղիք կտա արյունահեղ եւ կործանարար բախման երկու հարեւան ժողովուրդների միջեւ: Այդ խուճապը, սակայն, քաղաքի երկու հատվածներում երկար չտևեց: Կառավարությունն անմիջապես դիմեց վճռական միջոցների՝ սանձահարելու հայկական մասի արկածախնդիր տարրերին: Հայկական քաղաքամասի պարետին տրվեցին արտակարգ լիազորություններ՝ քաղաքում հասարակական կարգի եւ անդորրության պահպանության ամբողջ պատասխանատվությունը դնելով նրա վրա: Մի երկու օրվա ընթացքում զինաթափ արվեցին քաղաքի բոլոր կասկածելի անհանգիստ տարրերը: Ազգամիջյան Կոմիտեի միջոցով հայ-մուսուլմանական սահմանի պահպանությունը քաղաքում հանձնվեց հայերից եւ մուսուլմաններից խառը կազմված պահապան ջոկատների ձեռքը: Այդպիսով կարճ ժամանակամիջոցում վերականգնվեց կարգն ու հանգստությունը քաղաքում եւ փոխադարձ վստահությունը երկու հարեւան ժողովուրդների միջեւ: Ղարաղլաղցիները տեղավորվեցին Շուշում, Վարանդայի եւ մասամբ Խաչենի գյուղերում: Քաղաքում տեղավորվեցին մեծ մասամբ այն ընտանիքները, որոնք չունեին զգալի թվով անասուններ: Ղարաղլաղցիներին հաջողվել էր գյուղից դուրս բերել ոչ միայն իրենց անասունները, այլեւ գրեթե ամեն անհրաժեշտ տնային իր, գլխավորապես՝ պղնձեղենը, անկողինները, բացի մանր մուկներ իրերից, կահույքից եւ խոր հորերում թաքցրած հացահատիկից: Միայն քաղաքում տեղավորված ընտանիքների պարենավորման կարիքների համար կառավարությունը ֆինանսական սուղ միջոցներից բաց էր թողնում օրեկան 5-6 հազար ռուբլի: Ուժեղացավ հացի վաճառքի սպեկուլյացիան: Հայկական գյուղերից քաղաք մուծվող հացահատիկը, այլուրը կամ թխած հացը հաճախ ընկնում էր շարաշահողների ձեռքը: Այդ երեւույթի դեմ վարչական մարմինների ձեռք առած միջոցները լուրջ արդյունքներ չէին տալիս: Ավելի ծանրացավ քաղաքի հայ բնակչության աշխատավորական տարրերի պարենավորման վիճակը:

Կառավարությունը փախստականներին հեռավոր շրջանների գյուղերում շուգեց տեղավորել՝ հույս ունենալով խաղաղ բանակցությունների միջոցով նրանց շուտով վերադարձնել Ղարաղլաղ:

### 13. ՕՍՄԱՆՅԱՆ ԹՈՒՐԳԵՐԻ ՈՒԼՏԻՄԱՏՈՒՄՆԵՐԸ ԵՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՎՐԱ

Ղարաբաղի հայության ճիգերը՝ փոխադրելու Դորիսի շրջանում գտնվող ռազմապաշարը, անտարակույս, տեղական մուսուլմաններից եւ թուրքական «կոմենդանտներից» գաղտնի մնալ չէր կարող:

Զաբուղի առաջին օրվա կռիվներում, նկատելով թուրքերի դիմադրության վարանոտ բնույթը, կարելի էր ենթադրել, որ թշնամին վստահ չէր, թե կարող է հաղթահարել Ղարաբաղի եւ Զանգեզուրի զինված ուժերի համատեղ գրոհը: Զաբուղի վրա՝ գրավելու այդ ձորով անցնող խճուղին: Բայց Դորիսի շրջանի կռիվների ակներեւ անտարբերությունը փարատեց թուրքերի երկյուղը: Եւ, ինչպես տեսանք, թուրք-ադրբեջանական ուժերին հաջողվեց, թեկուզ մեծ կորուստների գնով, գրավել Ղարաղլաղը (Կարադարասին), ամրանալ Սաղսաղանում ու նրա հարակից լեռնային անմատչելի բնագծերում, որոնք հիանալի ռազմագիտական հարմարություններ էին ընձեռում թուրքերին՝ խափանելու Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայության բոլոր հետագա հնարավոր փորձերը՝ ռազմական փոխգործողությունների միջոցով գրավելու Զաբուղը եւ երկու անառիկ հայկական շրջանների միջեւ վերականգնելու փոխադարձ կապը:

Ղարաղլաղյան պարտությունից հետո, երբ մանավանդ Բաքվի գրավումը թուրքերի համար դարձավ օրերի հարց, Ղարաբաղի սահմանակից շրջաններում կարգված թուրքական «կոմենդանտներն» սկսեցին լկտիանալ եւ համարձակ դիրք ընդունել Ղարաբաղի նկատմամբ: Օսմանցիները տեղյակ էին Ղարաբաղի ծանր տնտեսական կացությանը, իսկ Զաբուղի եւ Ղարաղլաղի կռիվները կարող էին նրանց մեջ լուրջ կասկածներ հարուցել, որ Ղարաբաղը չունի նաեւ բավականաչափ ռազմամթերք: Եւ թուրքերն սկսեցին սպառնալ եւ խոսել Ղարաբաղի հետ ուղտիմատումների լեզվով:

1918 թ. սեպտեմբերի սկզբին Աղդամի թուրք «կոմենդանտը» մի գրությանմբ պահանջեց Ղարաբաղի հայերից՝ «վերջ տալ անիշխանությանը, ետ կանչել Կարադարասի ուղարկված զորամասերը եւ ճանաչել Ադրբեջանի իշխանությունը»:

Օսմանցիների կողմից Ղարաբաղի հայությանն ուղղված առաջին հանդուգն պահանջներն էին դրանք:

Սկզբում վճռվեց անպատասխան թողնել «կոմենդանտի» այդ խորոխտ



պահանջները եւ ընդհանրապէս խուսափել որեւէ հարաբերություն ունենալուց տաճիկների հետ, առավել եւս, որ գրությունը չէր հասցեագրված անմիջապէս կառավարությանը: Բայց հետո, նկատի ունենալով, որ շուտով Ղարաբաղին այսպէս թէ այնպէս վիճակվելու է հարաբերությունների մեջ մտնել անմիջապէս օսմանցիների հետ, անհրաժեշտ համարվեց «կոմենդանտի» ներկայացրած պահանջներին արժանի պատասխան տալ կառավարության անունից:

Պատասխանի մեջ հայտնվում էր «կոմենդանտին» ի գիտություն, որ Ղարաբաղն ունի ժողովրդից ընտրված օրինական կառավարություն, որին օտար ամեն մի իշխանություն կամ պաշտոնյա պարտավոր է հաշվի առնել եւ հարաբերություններ պահել միայն նրա հետ: Ինչ վերաբերում է թուրք պաշտոնյայի երեք պահանջներին, պատասխանում ասվում էր, որ ինչպես անիշխանության վերացման խնդիրը, այնպէս էլ հայկական զինված ուժերի տեղաշարժերը երկրի ներսում դա Ղարաբաղի կառավարության եւ ժողովրդի ներքին գործն է, որին ոչ ոք, առավել եւս օսմանցիները, իրավունք չունեն խառնվելու: Իսկ Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու պահանջին պատասխանվեց, որ Ղարաբաղն ունի իր սեփական իշխանությունը եւ, բացի Հայաստանի հանրապետությունից, օտար ամեն մի կառավարության ակցիա՝ ենթարկելու Ղարաբաղն իրեն, նրա բնակչության կողմից կզիտվի իբրեւ ազդեցիկ՝ ուղղված իր ազգային շահերի եւ գոյության դեմ ու կհանդիպի ամենավճռական դիմադրության:

Այդ պատասխանի առթիվ Ադդամի թուրքական զինված ուժերի հրամանատարը Շուշու մուսուլմանական մասի «կոմենդանտի» միջոցով հայտնեց<sup>56</sup>, որ թուրքական հրամանատարությունն Անդրկովկասում ճանաչում է իբրեւ սուվերեն պետություններ՝ Հայաստանի, Վրաստանի եւ Ադրբեջանի հանրապետությունները: Հետեւապէս նա չի կարող ընդունել Ղարաբաղն իբրեւ առանձին հայկական իշխանություն եւ ճանաչել նրա կառավարու-

<sup>56</sup> Սեպտեմբերի սկզբներին էր, Ղարաղլաղի պարտությունից հետո, երբ տաճկական հրամանատարությունը կապ հաստատեց Շուշու մուսուլմանական մասի կոմենդանտ Հասան Բասրի-բեյի հետ՝ Ադդամից տրվող ազդանշաններով: Դրեթե ամեն օր պարզ գիշերներին, քաղաքի բարձրասիստ տեղերից կարելի էր սովորական աչքով տեսնել, թէ ինչպէս որոշ ժամերի Ադդամից ազդանշաններ էր հաղորդվում կարմիր լապտերի միջոցով Շուշու մուսուլմանական մասին: Քաղաքից հաղորդվող ազդանշանները նկատելի էին միայն Ասկերանից եւ նրա մոտակա հայկական գյուղերից:

թյունը: Կոմենդանտի այդ բացատրությունը Հասան Բասրի-բեյի հանձնաքարությամբ կուֆտալի-բեկ Բեհրուդովը հաղորդեց կառավարությանը: Նա ավելացրեց, որ Ադդամի կոմենդանտը առաջարկել է Հասան-Բասրի-բեյին այդ պարզաբանումը հայտնել հայ ղեկավարներին միանգամայն «զգուշ» եւ «կոռեկտ» ձեւով:

Թուրք զինվորականի այդ անսպասելի փափկանկատությունը տարակուսանք առաջ բերեց շատերի մեջ:

\* \* \*

Սեպտեմբերի 13-ին զինվորական գործերի կառավարիչը Միքայել Արզումանյանից ստացավ 1918 թ. սեպտեմբերի 11-ի թվակիր մի նամակ՝ ուղարկված Գանձակից: Արզումանյանը հայտնում էր, որ Բաքվի անկումն օրերի հարց է: Նա կասկածից դուրս է համարում, որ Բաքուն ընկնելուց հետո, տաճիկները զենքն անմիջապէս պիտի ուղղեն Ղարաբաղի դեմ, ուստի խորհուրդ էր տալիս զգուշանալ: Արզումանյանը չէր մոռացել հաղորդել նաեւ համաշխարհային պատերազմի ընթացքի մասին համառոտ, բայց խիստ հետաքրքրական եւ խրախուսիչ տեղեկություններ:

Նա հայտնում էր, որ Ֆրանսիական ճակատը պատռելու Գերմանիայի անհաջող փորձերը եւ Վերդենի տակ տված մեծամեծ զոհերը, իսկ 1918 թ. օգոստոս ամսվա սկզբներում Ֆրանսիայի Ամյեն քաղաքի մոտ անգլո-ֆրանսիական զորքերից կրած խիստ ծանր պարտությունը, այդ ամենը հյուծել եւ ուժասպառ են արել Գերմանիային:

«Անտանտի» զորքերը, - գրում էր Արզումանյանը, - մեծ հաջողություններ ունեն նաեւ թուրքական ճակատում Միջագետքում, Սիրիայի եւ Պաղեստինի մատուցներում, Արաբիայում եւ Դարդանելի մոտ: Այժմ, - գրում էր նա, - ամենքի համար դարձել է անտարակուսելի, որ ուժերի հարաբերակցության մեջ գերակշռությունը վերջնականապէս շրջվել է Անտանտի օգտին, եւ գերմանական բլոկի մոտալուտ պարտությունը համարվում է անխուսափելի: Շատ բնորոշ է, - հայտնում էր Արզումանյանը, - որ Գանձակում, թուրքական բարձրաստիճան զինվորականների նախկին հոխորտալի, գռեհիկ ու արհամարհական արտահայտություններին փոխարինել են այժմ ընկճվածությունը եւ զուսպ ու նրբանկատ վերաբերմունքը դեպի հայերը...»:

Արզումանյանի հաղորդած տեղեկությունները խիստ հուսադրիչ էին: Կենտրոնական պետությունների բլոկի պարտությունից հետո, պարզ էր, որ



Թուրքերն Անդրկովկասում ամրանալ կամ երկար մնալ չէին կարող: Ուստի այդ անցողիկ ժամանակաշրջանում անհրաժեշտ էր գործել մեծ հեռատեսությամբ, չարել իրադրությունը, խուսափել տաճկական ուժերի հետ ընդհարվելուց՝ ձգտելով ամեն կերպ բոլոր հարցերը լուծել խաղաղ բանակցությունների միջոցով: Բայց միաժամանակ լինելով միշտ պատրաստ՝ հարվածին հարվածով պատասխանելու համար:

Պատմության ընթացքում առաջին անգամ չէր, իհարկե, որ Ղարաբաղի հայությունն ստիպված պիտի լիներ ճակատ առ ճակատ գործ ունենալ տաճկական կանոնավոր բանակների հետ:

Տակավին 18-րդ դարի 20-ական թվականներին Ղարաբաղի հինգ սղնախներում կուտակված հայկական զինված ուժերը երբեմն բացարձակ ճակատամարտերում, կամ դավադրական միջոցներով, կարողանում էին ջախջախել թուրք նվաճողների գերազանց ուժերը եւ փառավոր հաղթանակներ տանել նրանց դեմ: Բայց այդ ժամանակվա պատմական կոնկրետ պայմաններն այլ էին: Էականն այն էր, որ այն ժամանակներում այլ էր տեղական մուսուլմանության իշխող դասի՝ խանների եւ բեկերի վերաբերմունքը դեպի օսմանցիները: Գտնվելով պարսկական պետականության ոլորտում՝ նրանք այնպես գրկաբաց չէին ընդունում թուրքերին, ինչպես մենք այդ տեսանք 1918 թվին, երբ պանթուրքական եւ պանիսլամական պրոպագանդը «ռուսոֆիլ» հայության դեմ ոտքի էր հանել Անդրկովկասի գրեթե ողջ մահմեդականությունը: Սղնախների զինվորական եւ քաղաքական ղեկավարներին ոգեշնչում ու համախմբում էր օսմանցիների դեմ ցարական գործակալների կողմից ազատագրական խաբուսիկ խոստումներով մղվող ժամանակի պրոպագանդը:

Իսկ 1918 թվին, Բաքվի անկումից եւ Զարուղում ու Ղարաղլաղում կրած անհաջողությունից հետո, Ղարաբաղի հայ ղեկավարները կորցրին այլեւս որեւէ տեղից օգնություն ստանալու կամ սեփական ուժերով թուրքական վտանգը ընդմիշտ չեզոքացնելու հույսերը:

#### 14. ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ (պատգամավորական ժողովը)

Ղարաղլաղի տղամարդիկ, զրդված գլխավորապես հացի կարիքից, շարունակում էին վրդովել տեղական հայ բնակչության հանգիստը, իսկ եր-

բեմն էլ իրենց արշավներով սահմանամերձ թյուրքական գյուղերի վրա՝ վտանգ ստեղծում ազգամիջյան բախումների:

Ընդհանրապես, թե՛ քաղաքում եւ թե՛ շրջաններում, օրը-օրին բարդանում էր տնտեսական առանց այն էլ ծանր կացությունը՝ պարարտ հող ստեղծելով արկածախնդրական տարրերի շահատակությունների համար: Իսկ մյուս կողմից՝ Ղարաբաղի հորիզոնում սկսում էր ավելի ու ավելի իրական կերպարանք ընդունել թուրքական վտանգը:

Ստեղծվել էր լուրջ վտանգներով հղի ծանր իրադրություն: Կառավարությունն անհետաձգելի համարեց շտապ հրավիրել ժողովրդական համագումար՝ միջոցներ խորհելու ժողովրդի անդորրությանը եւ անվտանգությանն սպառնացող աղետները կանխելու համար:

Համագումարը բացվեց Շուշում 1918 թ. սեպտեմբերի 15-ին: Որոշվեց հարց հարուցել Ազգամիջյան կոմիտեում՝ օգնել ղարաղլաղցիներին վերադառնալու իրենց բնակավայրը: Դրան Ազգամիջյան կոմիտեի մուսուլմանական ֆրակցիան խուսափողական պատասխան տվեց, հայտնելով, որ այդ հարցը կարող է լուծել միայն Աղդամի Փաշան («կոմենդանտը»):

Համագումարը ղարաղլաղցիների վերադարձի հարցը խաղաղ միջոցներով լուծելու համար, որոշեց այդ նպատակով Աղդամ ուղարկել մի պատվիրակություն՝ բաղկացած հետեւյալ հինգ անձերից. Հայրապետ Մուսայելյան, Դանիել Առաքելյան (համագումարի նախագահ), Աշոտ Մելիք-Հովսեփյան, Արշավիր Քամալյան եւ Գերասիմ Մելիք-Շահնազարյան (Շուշու նախկին քաղաքագլուխ):

Որոշվեց հինգ շրջաններում շտապ ստեղծել հացահատիկի ֆոնդեր՝ գաղթականներին ու չքավոր գյուղացիության օգնելու եւ երկրի պաշտպանության կարիքների համար:

Կառավարության կազմում կատարվեցին փոփոխություններ. նշանակվեցին առանձին կառավարիչներ՝ ներքին եւ արտաքին գործերի (Լեւոն Վարդապետյան եւ Աշոտ Մելիք-Հովսեփյան): Մարկոս Տեր-Աստվածատրյանի փոխարեն ֆինանսների կառավարիչ նշանակվեց դարձյալ Արամ Միքայելյանը:

Համագումարը երեք նիստերից հետո փակվեց: Սեպտեմբերի 16-ի երեկոյան պատգամավորների մեծ մասը մեկնեց տեղերը՝ թողնելով Շուշում համագումարի նախագահ Առաքելյանին եւ մի խումբ պատգամավորներին՝ օգնելու կառավարությանը:



\* \* \*

Սեպտեմբերի 15-ին թուրքերն արդեն գրավել էին Բաքուն: Այդ լուրը առաջին անգամ կառավարությանը հաղորդեց Բեհբուզովը: Շատերն անհավաստի համարեցին այդ տեղեկությունը, որովհետեւ Բեհբուզովին հայտնողը եղել էր նրա ազգականներից մեկը, իսկ վերջինս էլ լսել էր Շուշու թուրք «կոմենդանտի» քարտուղարից: Բայց երբ Կուֆտալի-բեկը կամեցել էր ճշտել՝ հարցնելով անմիջապես Հասան-Բասրի-բեկից, վերջինս ինչ-որ նկատառումներով ժխտել էր, հայտնելով, որ դեռեւս հաստատուն լուրեր չկան:

Բաքուն հիրավի ընկել էր եւ ընկել էր իսկապես սեպտեմբերի 15-ին:

Տաճկական զորքերի հիմնական ուժերը քաղաք էին մտել միայն հաջորդ օրվա երեկոյան, իսկ Ադրբեջանի կառավարությունը քաղաք էր մտել միայն սեպտեմբերի 18-ին: Դա կատարվել էր այն դիտավորությամբ, որ ժամանակ եւ հնարավորություն տրվի մուսուլման ջարդարարներին՝ հայ խաղաղ բնակչության նկատմամբ իրագործելու օսմանյան հրամանատարության եւ անվանի հայակերներ Խան-Խոյսկու եւ Զիվանշիր-խանի ծրագրած կոտորածն ու թալանը: Երեք օր շարունակ, սեպտեմբերի 15-ից մինչեւ 17-ը, Բաքու քաղաքի եւ նրա շրջանի հայերի կյանքը եւ ստացվածքը մատնված են եղել դրսից խուժած մուսուլման հրոսակների եւ քաղաքի զինված տականքների քմահաճույքին: Սպանվել էին 30 հազարից ավելի հայեր, առեւանգվել հազարավոր աղջիկներ եւ կանայք, կողոպտվել տասնյակ միլիարդների հասնող հարստություն:

Բաքվի անկման լուրը Ղարաբաղում տարածվելուց հետո ոչ ոք դեռ հաստատ չգիտեր այնտեղ տեղի ունեցած ահռելի կոտորածի մասին: Լուրերի տարածման սկզբնաղբյուրը տեղացի մուսուլմաններն էին, որոնք սակայն զարաբաղցի հայերից խնամքով թաքցնում էին Բաքվում կատարած խժոժությունները: Կոտորածների մասին հատուկտոր տեղեկություններ Շուշում սկսել էին տարածվել թուրքերի քաղաք մտնելուց հետո միայն<sup>57</sup>:

<sup>57</sup> Թուրք-ադրբեջանական իշխանությունները Բաքվի 1918թ. սեպտեմբերյան հրեշային եղեռնը ցինիկորեն համարում էին վրեժխնդրություն՝ մարտյան դեպքերի համար: Մինչդեռ Բաքվի քաղաքացիական կոիմների ժամանակ (1918 թ. մարտի 30-ից մինչեւ ապրիլի սկզբները) քաղաքարևակ հայերը ցույց էին տվել մուսուլման բնակչության նկատմամբ ջերմ մարդասիրական վերաբերմունք: Ճակատամարտի ամենաթեժ պահին հայերից շատերը, հաճախ ռիսկի ենթարկելով իրենց կյանքը, ազատել, թաքցրել եւ գրկաբաց պատսպարել էին քաղաքի հայկական մասում 20.000-ից ոչ պակաս մուսուլմանների, որոնցից 13

Ոմանք կարծում էին, որ Բաքվի հետ թուրքերի ձեռքն էր անցնում Ադրկովկասի պաշտպանության վերջին պատնեշը, որ իբր՝ Ադրկովկասի բոլոր մասերը, մինչեւ Բաքվի ընկնելը, նվաճված էին արդեն թուրք-գերմանական բլոկի կողմից: Դա ճիշտ չէր: Գյուսիս-արեւելյան Հայաստանի մի կաթնոր մասը՝ Սյունիքը եւ Լեռնային Ղարաբաղը նվաճել եւ Ադրբեջանին ենթարկել թուրքերը չկարողացան ընդհուպ մինչեւ իրենց զորքերի էվակուացիան Ադրկովկասից, Մուղրոսի զինադադարի համաձայն:

Բաքուն գրավելուց հետո, գրեթե անմիջապես, թուրքերն սկսեցին կենտրոնացնել իրենց զորամասերը Ղարաբաղի սահմանների վրա: Իսկ որոշ զորամասեր դրանից առաջ արդեն Աղդամ էին բերված:

\* \* \*

Համագումարից նշանակված պատվիրակությունը սեպտեմբերի 18-ին մեկնեց Աղդամ: Նրան միացավ Կուֆտալի Բեհբուզովը: Վերջինիս նպատակն էր աջակցել պատվիրակությանը՝ անվտանգ տեղ հասնել, եւ ապա Աղդամում ամեն կերպ օգնել, որպեսզի զարաղչաղցիների վերադարձի խնդիրը լուծվի դրականապես:

Պատվիրակությունը, երբ Ասկերանն անցնելով հասավ նրանից մոտ 6 կիլոմետր հեռավորության վրա գտնվող մուսուլմանական գերեզմանատանը, տեղի թուրքական սահմանապահները կամեցան կալանավորել պատվիր-

հազարը՝ զանազան հասարակական շենքերում եւ 7.000-ի չափ՝ մասնավոր բնակարաններում: Քաղաքում լիակատար հանգստություն տիրելուց հետո հայերն այդ բոլոր մուսուլմաններին հանձնել էին պարսկական կոնսուլին, որը հրապարակորեն եւ պաշտոնապես արտահայտել էր հայերին իր շնորհակալությունը մուսուլմաններին ազատելու համար:

Բաքվի մուսուլմանների խոշորագույն ղեկավար Հաջի-Ջեյնալ-Աբդին Թաղիեւը, որին դարձյալ ազատել եւ պահպանել էին հայերը, շրջաբերական հեռագրով, ուղղված Ադրկովկասյան մուսուլմաններին, հայտնել էր, որ մարտ-ապրիլյան դեպքերն ամենեւին չեն կրել հայ-թուրքական ընդհարման բնույթ:

Բաքվի դեպքերի մեջ հիմնական ղեկավար դեր խաղացող մարմինը՝ բոլշևիկական Կովկասյան նրկային Խորհուրդը բաղկացած էր 17 հոգուց, որի մեջ կային երկու թյուրք եւ միայն երկու հայեր:

Հայերի 1918 թ. սեպտեմբերյան կոտորածը, նրանց ստացվածքի կողոպուտը, աղջիկների եւ կանանց առեւանգումները մասնակի կերպով շարունակվել էին մի քանի ամիս եւ դադարել միայն Թուրքիայի պարտությունից հետո: Իսկ շրջաններում հայերի կոտորածները շարունակվել էին նաեւ 1919 եւ 1920 թվերի ընթացքում՝ դաշնակիցների Բաքվում եղած ժամանակ (տես՝ ՀՊՊԿԱ, ք. 200, գ. 849, թերթ 35-36):



րակության անդամներին: Բեհբուդովին դժվարություններ հաջողվեց հասկացնել թուրք սպային, թե ուրքեր են իրենք եւ ինչ միտիայով են գնում Աղդամ:

Պատվիրակությունը Աղդամում վերջնականապես համոզվեց, որ Բաքուն հիրավի ընկել է, եւ թուրքերը Ղարաբաղի վրա արշավելու եռանդուն պատրաստություններ են տեսնում: Աղդամը վերածված էր զինվորական ճամբարի: Արդեն այնտեղ էին գտնվում «Կովկասյան առաջին մուսուլմանական դիվիզիայի» զորամասերը՝ ինչ-որ Զամիլ-Ջայիդ-բեյի հրամանատարությունից տակ:

Այդ Զամիլ-Ջայիդ-բեյը, տեղեկանալով Ղարաբաղից եկած հայ պատվիրակության մասին, կարգադրեց բերել պատվիրակության անդամներին իր մոտ: Ապա հաղթական աքլորի կեցվածք ընդունելով, իր թարգմանչին հրամայեց հայտնել, որ բեյը պատվիրակության անդամներին պահելու է Աղդամում իբրեւ պատանդներ եւ պահանջում է նրանցից նամակով հայտնել ժողովրդին, որ թուրքական հրամանատարությունն առաջարկում է զենքը հանձնել եւ հպատակություն հայտնել Ադրբեջանին:

Պատվիրակության ղեկավար Հայրապետ Մուսայելյանը, տեղեկանալով, որ Զամիլ-Ջայիդ-բեյը բավականաչափ գիտե գերմաներեն, անմիջապես դիմում է նրան եւ, բողոքելով իրենց իբրեւ պատանդներ Աղդամում պահելու որոշման դեմ, ասում է. «Պարոն հրամանատար, պատվիրակությունը Ղարաբաղից այստեղ է եկել խաղաղության միտիայով, որպեսզի փոխադարձ համաձայնությամբ, առանց ուժի դիմելու, հնարավորություն տրվի Ղարաղլաղի հայ գյուղացիներին վերադառնալու իրենց գյուղը եւ վերստին զբաղվելու խաղաղ գյուղատնտեսական աշխատանքով: Դա կօգնի մեզ պահպանելու կայուն խաղաղություն հայ եւ մուսուլման ժողովուրդների միջեւ թե՛ քաղաքում եւ թե՛ շրջաններում: Արդ, թույլ տվեք նախազգուշացնել ձեզ, պարոն հրամանատար, որ ուղտիմատումների լեզվով խոսելը, զինաթափության եւ հպատակության պահանջները չեն կարող ծառայել խաղաղության գործին, այլ կարող են միայն զայրույթ եւ կատաղի գրգռում առաջ բերել Ղարաբաղի ժողովրդի մեջ, իսկ դրա հետեւանքները դժվար չէ նախագուշակել... Դուք, անշուշտ, տեղյակ եք մոտ ժամանակներս Կոստանդնուպոլսում կայանալիք կոնֆերանսին, որտեղ պիտի լուծվի նաեւ Անդրկովկասի երեք հանրապետությունների սահմանների հարցը: Ինչո՞ւ չսպասել այդ կոնֆերանսի վճռին... Իմ խորհուրդն է, պարոն հրամանատար, խոսել Ղարաբաղի հայության հետ խաղաղության եւ բարեկամության լեզվով, իսկ

ձեզ, հետագա բարդություններից խուսափելու համար, ազատ թողեք վերադառնալու Ղարաբաղ»: Բեյը, Մուսայելյանի խոսքերից գրգռված, պատասխանում է. «Մենք վաղուց պատրաստ ենք ձեզ հետ խոսելու զենքի լեզվով: Ինչ վերաբերում է Կարադարասին (Ղարաղլաղ), այն ավերվել է մեր կարգադրությամբ եւ երբեք չի կարող վերականգնվել»: «Պարոն հրամանատար, Ղարաբաղը սովոր չէ վախենալու կամ հնազանդվելու, երբ հակառակորդը սկսում է զենք ճոճել նրա դեմ, - ասում է Մուսայելյանը: - Դա կարող է պատճառ դառնալ մեծ արյունահեղության, որի հետեւանքները կարող են հավասարապես ծանր լինել երկու կողմերի համար: Մի մոռացեք պատմության դասերը. Ղարաբաղի հայությունն առաջին անգամ չէ, որ պատմության ընթացքում հանդիպում է օսմանցիներին իր սահմանների վրա: Եթե չենք մոռացել, Ղարաբաղը երբեք պարտություն չի կրել ձեր զորքերի հետ ունեցած այդ «հանդիպումների» ժամանակ...»: - «Անցյալը թողնենք պատմության, - պատասխանում է Զամիլ-Ջայիդ-բեյը՝ այս անգամ մեղմորեն: - Մեր ուժերն այժմ անպարտելի են: Բաքվի կռիվներում մենք հաղթանակով դուրս եկանք: Այնտեղ էլ մեր դեմ կռվողները մեծ մասամբ ձեր Ղարաբաղցի հայերն էին եւ շարաշար պարտվեցին...»: Այստեղ Կուֆտալի-բեյը միջամտելով, խնդրեց բեյին թույլ տալ հայ պատվիրակներին վերադառնալ Ղարաբաղ՝ զեկուցելու ստեղծված իրադրության մասին: Բեյը մի քանի վայրկյան տատանվելուց հետո համաձայնվեց թույլ տալ վերադառնալու միայն երկու հոգու եւ առաջարկեց պատվիրակության անդամներին ընտրություն կատարել: Հենց այդ ժամանակ բեյի հերթապահ սպան ներս մտավ եւ հայտնեց, որ Կուֆտալի-բեյ անունով մեկին պահանջում են դրսից:

Պահանջողները Կուֆտալիի դահլիճներն էին, հայ եւ մուսուլման ժողովուրդների բարեկամության ռիսերիմ թշնամիները:

Կուֆտալին դուրս եկավ...

Հայ պատվիրակները նրան, հայ եւ թուրք ժողովուրդների համերաշխության անկեղծ պաշտպանին, այլեւս չտեսան<sup>58</sup>:

<sup>58</sup> Ինչպես հետագայում պարզվեց, Աղդամի մուսավաթական բեկերը Կուֆտալին խաբեությանը տարել սպանել էին: Այդ նողկալի ոճիրը քղարկելու համար նրա դահլիճները սուտ լուրեր էին տարածել, որ իբրեւ թե Կուֆտալին սպանվել է հայերի արձակած գնդակից այն ժամանակ, երբ նա սպիտակ գրոշակը ձեռքին իբր կամեցել է մոտենալ հայկական Քյաթուկ գյուղի դիրքերին: Կուֆտալիի թշնամիները նրա դիակը մերժել էին հանձնել նրա հարազատներին:



Պատվիրակության երեք անդամները՝ Քամալյան, Մելիք-Հովսեփյան եւ Մելիք-Շահնազարյան, Շուշի վերադառնալու համար նպատակահարմար գտան առաջարկել թուրք հրամանատարին Մուսայելյանի եւ Առաքելյանի թեկնածությունները, որոնք պատկանում էին ամենաազդեցիկ կուսակցության, որը վերջին հաշվով պիտի լիներ վճռողը՝ պատերազմել կամ խաղաղությանը վերջացնել օսմանցիների հետ:

Ջամիլ-Ջալիլ-բեյը համաձայնեց: Նա առաջարկեց Մուսայելյանին եւ Առաքելյանին տանել եւ ներկայացնել Ղարաբաղի ղեկավարներին իր գրավոր պահանջները: Իսկ Աղզամում իբրեւ պատանդներ կալանքի տակ առնված պատվիրակության երեք անդամներին բեյի հրամանով արգելափակեցին Աղզամի հարավ-արեւելյան ծայրամասում գտնված մի երկհարկանի շենքում: Նրանց վրա հսկելու համար կարգվեց հատուկ պահակախումբ՝ բաղկացած բացառապես աջարացի զինվորներից՝ լավ մարզված եւ կարգապահ: Պահակախմբի պետին կարգադրվեց ուշադիր հսկել «երեք հայերի» ապահովությանը, հետեւելով, որ ոչ-ոք առանց թույլտվության մուտք չգործի նրանց մոտ: Պատվիրակության անդամների նկատմամբ աջարացի զինվորները պահում էին իրենց զուսպ եւ նույնիսկ քաղաքավարի, իսկ երբեմն նաեւ սիրալիր եւ ընդառաջող: Գրեթե յուրաքանչյուր օր Աղբրեջանի գործերի հրամանատարությունը, ի ցույց հայ պատվիրակների, գորաշարժեր կամ զինավարժություններ էր կատարում արգելատան կից տարածություններում, իսկ աջարացի ասկերները ծիծաղում էին աղբրեջանցի զինվորների անշնորհության վրա եւ հայ պատանդներին հանգստացնելու համար ասում. «Այդ «ղարափախավորներից» մի վախեցեք, մենք թույլ չենք տա, որ նրանք ձեզ վնասեն»<sup>59</sup>:

<sup>59</sup> Թուրքերը «ղարափախավոր» էին կոչում արհամարհանքով ոչ միայն Աղբրեջանի բանակի սպաներին եւ զինվորներին, այլեւ յուրաքանչյուր արգրբեջանցու անխտիր: Նրանք կողոպտում էին Աղբրեջանը: Թուրքական գյուղերում օսմանցիք թույլ էին տալիս ամեն տեսակի բռնություններ, մթերքների ռեկվիզիցիաներ: Եւ մուսավաթական ղեկավարներն այդ ամենը համբերատարությամբ կույ էին տալիս հանուն պանթուրքական, պանիսլամական իրենց ցնդարանությունների, հանուն «մեծ Աղբրեջանի», որ նրանք ձգտում էին ստեղծել ի հաշիվ Հայաստանի եւ Վրաստանի տերիտորիաների՝ օգտագործելով թուրքերի «եղբայրական ուժերը»:

\* \* \*

Բաքվից, Գանձակից անընդհատ զորամասեր էին փոխադրվում Աղզամ: Թուրքերը ամեն կերպ աշխատում էին, որ իրենց զինված ուժերը աննկատելի շման պատվիրակության անդամներից: Զորքեր էին կենտրոնանում օսմանցի սպաների ղեկավարությամբ նաեւ մուսուլմանաբնակ Թարթար ավանում, Կարիազինոյում, Զաբուղում եւ Ղարաղջլաղում: Թուրքերի նպատակն էր Ղարաբաղն առնել պաշարման օղակի մեջ, բռնելով ռազմագիտական բոլոր կարեւոր կետերը:

\* \* \*

Հայաստանի հանրապետական կառավարությունը տազնապով հետեւում էր Ղարաբաղի շուրջը տեղի ունեցող իրադարձություններին: Նա հնարավորություն չունեւ կամ վախենում էր օսմանյան հրամանատարությունից՝ անմիջական կապ ստեղծել Ղարաբաղի հետ եւ այնտեղից ստանալ անհրաժեշտ ինֆորմացիա, ուստի ստիպված էր բավականանալ իր զիվանագիտական ներկայացուցիչներից կամ կողմնակի աղբյուրներից ստացած հատուկտոր եւ հաճախ հակասական տեղեկություններով: Այսպես, Հայաստանի հանրապետության Վրաստանի զիվանագիտական միսիայի ղեկավարը 1918 թ. սեպտեմբերին հայտնում էր Հայաստանի արտաքին գործերի մինիստրին, որ «Ըստ լուրերի» Աղբրեջանը եւ թուրքական հրամանատարությունն իրենց հերթական խնդիրն են դարձրել ընկճելու Ղարաբաղը», եւ որ Միքայել Արզումանյանը եւ Մարտիրոս Հարությունյանը, որոնք Թիֆլիս են գնացել Գանձակից, հաստատել են այդ լուրերը: «Ըստ վերջին տեղեկությունների, - հաղորդում էր միսիայի ղեկավարը, - թուրք-աղբրեջանական էշելոնները շարժվում են դեպի Ասկերան, որ գտնվում է հայերի ձեռքին»<sup>60</sup>:

Դիվանագիտական միսիայի այդ կցկտուր ինֆորմացիայից կարելի է եզրակացնել, որ, հիրավի, այդ ծանր պատմական մոմենտին Հայաստանի հանրապետության կառավարությունը որեւէ ճշգրիտ, հավաստի տեղեկություն չէր կարողանում ստանալ Ղարաբաղում տիրող իրադրության մասին, եւ Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող այդ երկրամասը շարունակում էր կտրված, մեկուսացած մնալ արտաքին աշխարհից, հայկական կենտրոններից եւ շրջաններից ու թողնված իր ճակատագրի կամքին:

<sup>60</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, դ. 70, թ... (բնագրում այսպես - խմբ.):



\* \* \*

Թուրքերի եւ Ադրբեջանի եռանդուն նախապատրաստութիւններին Ղարաբաղն անտեղյակ չէր:

1918 թ. սեպտեմբերի 22-ին, կառավարութեան ընդլայնած նիստում, մասնակցութեամբ համագումարի անդամների մի մասի եւ մտավորականութեան ներկայացուցիչների, Մուսայելյանը գեկուցեց Ադդամում թուրք հրամանատարի հետ ունեցած հանդիպման մասին եւ ծանոթացրեց նրա գրավոր պահանջներին:

Հուզումը եւ գրգռումը ժողովականների շրջանում հասավ ծայրահեղ աստիճանի, երբ Մուսայելյանը հաղորդեց, որ պատվիրակութեան մյուս երեք անդամներին թուրքերն առել են կաշանքի տակ եւ պահում են Ադդամում իբրեւ պատանդ: Ժողովը որոշեց պահանջել թուրքական հրամանատարութիւնից անհապաղ ազատել պատվիրակութեան երեք անդամներին: Միայն այդ պայմանով խոստացվում էր բանակցութիւններ վարել թուրքերի հետ՝ նրանց ներկայացրած պահանջների շուրջը:

Ժողովի որոշումը նույն օրը Ազգամիջւան կոմիտեի միջոցով հայտնվեց Հասան-Բասրի-բեյին, որին խնդրվեց հաղորդել անմիջապէս Ադդամ:

Թուրքական ուժերի արագ կենտրոնացումները Ղարաբաղի սահմանների վրա ստիպեցին կառավարութեանը երկիրը հայտարարել վտանգի մեջ եւ ձեռք առնել մի շարք անհետաձգելի պաշտպանական միջոցներ: Սեպտեմբերի 22-ի գիշերը կարգադրվեց շրջանների հրամանատարներին՝ անհապաղ ամրացնել սահմանները եւ 24 ժամյա անընդհատ հսկողութիւն հաստատել ամբողջ սահմանագծի վրա՝ Գյուլիստանից մինչեւ Դիզակ՝ չմոռանալով ամրացնել հսկողութիւնը նաեւ Ղարաբաղի լեռնաշղթայի անցուղիների վրա: Առաջարկվեց միաժամանակ ուժեղացնել հետախուզական աշխատանքը՝ հետեւելու թուրքերի շարժումներին: Կատարվեց ձիաների շուտափութ հավաքագրում: Հրամանատարներն իրենց տրամադրութեան տակ միշտ պատրաստ ունեին անակնկալ հարձակումներից պաշտպանվելու համար փորձված մարտիկներից բաղկացած բավականաչափ հեծյալ ուժեր: Խաչենի եւ Վարանդայի հրամանատարներին կարգադրվեց հոգ տանել թիկունքի պաշտպանութեան համար՝ օսմանյան ուժերի, քրդերի եւ Ազարա գետի հովտի թուրքերի անսպասելի հարձակումներից: Խաչենի հրամանատարը պիտի անհրաժեշտ քանակութեամբ մարտիկներ պահեր քաղաքի մոտակա Ղայբալիքենդ գյուղում, իբրեւ օժանդակ զորամաս, անհրաժեշտութեան դեպ-

քում Շուշու հայկական մասին օգնութեան գնալու եւ «Քուրդիստանի» լեռնային անցուղիների վրա հսկելու համար:

Հրամանատարներին առաջարկվեց հետեւել, որ կռիւների ժամանակ հարեւան խաղաղ մուսուլմանական գյուղերի բնակչութեան վրա հարձակումներ չկատարվեն: Սահմանապաշտպան զինված ուժերի ղեկավարութիւնն ըստ հնարավորութեան լայն ագիտացիա պիտի կազմակերպեր մուսուլման աշխատավորութեան շրջանում՝ ձգտելով ամեն կերպ գիտակցել տալու նրան, որ օսմանյան թուրքերը ոչ միայն հայերի, այլեւ Ադրբեջանի մուսուլման աշխատավորութեան թշնամիներն են, որ՝ նրանք Անդրկովկաս են մտել մուսուլման բեկերի, խաների եւ աղալարների պաշտպանութեամբ՝ հովանավորելու եւ ամրացնելու Ադրբեջանի մուսուլման աշխատավորութեան ճնշողների իշխանութիւնը, որ՝ հայերի պայքարն ուղղված է ոչ թէ թուրք ժողովրդի, այլ օսմանյան բռնակալների եւ նրանց հովանավորութիւնը վայելող ադրբեջանական ամեն կարգի ճնշողների դեմ:

Սեպտեմբերի 23-ի երեկոյան Շուշում ստացվեցին շրջաններից առաջին տեղեկութիւնները, որ պաշտպանական միջոցառումները սկսված են հաջող, որ՝ մարտիկները եւ ժողովուրդը պատրաստ են եւ լի վճռականութեամբ՝ թուրք-ադրբեջանական հորդանների հարվածին պատասխանելու խորտակիչ հակահարվածով:

Նույն օրվա գիշերը դեպի Ասկերան ուղեւորվեց զինվորական գործերի կառավարիչը՝ կառավարութեան երկու այլ անդամների եւ զինվորական կենտրոնական շտաբի պետի հետ՝ տեղում ստուգելու Ասկերանի պաշտպանութեան ձեռնարկումների ընթացքը եւ անելու մի քանի անհրաժեշտ կարգադրութիւններ:

Սեպտեմբերի 24-ի ամբողջ օրը գիշերը ստուգելուց հետո, երբ նրանք հանգստանում էին բժիշկ Բահաթրյանի կալվածքում, գիշերը հայ սահմանապահները բերին եւ հանձնեցին Նուրի փաշայի ուղտիմատումը՝ ուղղված Ղարաբաղցիներին:

Կամենալով ուղտիմատումը տարածել ամենից առաջ Ասկերանի մոտակա հայկական գյուղերում թուրքերն իրենց զինվորական պոստերի միջոցով նրանից մի քանի օրինակ հանձնել էին Ասկերանի հայ սահմանապահներին:

Ուղտիմատումը տպագրված էր կարմրագույն մեծագիր թղթի վրա եւ, որքան հիշում եմ, երեք լեզուներով՝ թուրքերեն, հայերեն եւ ռուսերեն: Այն



սկսվում էր «Ղարաբաղցիներ» կոչականով եւ ուներ մոտավորապես հետեւյալ բովանդակությունը: Նախ գոռոզամիտ եւ հոխորտալի բառերով հայտարարվում էր ղարաբաղցիներին, որ տաճկական հրամանատարությունը Բաքուն գրավելուց հետո իր «հաղթական զորամասերն» է ուղարկել Ղարաբաղի դեմ եւ պահանջում է ղարաբաղցիներից զինաթափվել, ճանապարհ տալ թուրքական եւ ադրբեջանական զորքերին անցնելու Շուշի եւ ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

Վերջնագրին պատասխանելու համար ժամանակ էր տրվում 24 ժամ, որ պիտի վերջանար սեպտեմբերի 26-ի երեկոյան ժամի 7-ին: Եթե այդ ժամանակամիջոցում վերջնագրին դրական պատասխան չտրվեր, ապա Նուրի փաշան սպառնում էր պատերազմական գործողություններ սկսել Ղարաբաղի դեմ: Նա հայտնում էր, որ թուրքերին չեն վախեցնում Ղարաբաղի անառիկ լեռները եւ հիշեցնում էր ղարաբաղցիներին Զեյթունը, Սասունը, որոնք «չդիմացան թուրքական բանակի հարվածներին»: Փաշան վերջացնում էր իր ուլտիմատումը մոտավորապես հետեւյալ խոսքերով. «Ղարաբաղցիներ, եթե դուք այնուամենայնիվ չվճռել եք պատերազմել մեր դեմ, այդ դեպքում տեղափոխեցեք ձեր կանանց, երեխաներին եւ ծերունիներին լեռները, որովհետեւ մենք գործ ունենք միայն կռվողների հետ...»:

Թուրքական հրամանատարության այդ ուլտիմատումը եւս Ղարաբաղի ժողովրդին եւ նրա ղեկավարության ահաբեկել չկարողացավ: Մի ժողովուրդ, որի մեջ չէր մեռել իր նախնիների վառ հայրենասիրությունը, ազատասիրությունն ու նրանց մարտական ոգու ամբողջ աշխուժությունը, որի մեջ չէր մարել ազգային ինքնասիրության եւ արժանապատվության վեհ զգացումը, մի ժողովուրդ, որ իր անառիկ լեռներին ապավինած՝ վիզ չէր ճկել եւ ոչ մի ահեղ բռնակալի առաջ, այդպիսի մի ժողովրդի, հարկավ, հեշտ չէր վախեցնել նման ուլտիմատումներով:

Թուրքերն, անշուշտ, այդ հասկանում էին: Եթե նրանք ղարաբաղցիների վրա ներգործելու համար հիշեցնում էին նրանց ավերած Զեյթունը, Սասունը, ապա օսմանցիները իրենք էլ հավանորեն չէին մոռացել այն ուժգին հարվածները, որ կրել էին հայ-ազատագրական երկարատեւ հերոսամարտերի ընթացքում ոչ միայն զեյթունցիներից ու սասունցիներից, այլեւ ղարաբաղցիներից՝ դեպի արեւելյան Անդրկովկաս ձեռնարկած իրենց երբեմնի արշավանքների ժամանակ: Դրա ուշագրավ վկայությունը ուլտիմատումի սպառնալից եւ հոխորտական տոնի մեջ որոշակիորեն զգացվող երկյուղի եւ

զգուշության նոտաներն էին:

Թուրք հրամանատարությունը Ղարաբաղի նկատմամբ իր նվաճողական նենգ մտադրությունները հավանորեն կամենում էր իրագործել անաղմուկ, խաղաղ միջոցներով եւ կարճ ժամանակամիջոցում: Մինչդեռ պատերազմը Ղարաբաղի հետ կարող էր ձգձգել նրանց մտադրությունների իրագործումը եւ մինչեւ իսկ աղետալի հետեւանքներ ունենալ թուրքերի համար:

Թուրքերի ռազմագիտական պլանների մեջ էր մտնում ամենից առաջ մտնել Շուշի, եւ, այն դարձնելով պլացդարմ, ամբողջ Լեռնային Ղարաբաղը ենթարկել Ադրբեջանին: Այնուհետեւ թուրք-ադրբեջանական ուժերը մտածում էին զինաթափ անել Գանձակի լեռնային մասի հայկական գյուղերը, եւ ապա հավաքագրելով Մուղանի, Ագարա գետի հովտի, Նախիջևանի եւ այլ մուսուլմանաբնակ վայրերի բազմահազար զինված հրոսակներին՝ գրոհել Զանգեզուրի եւ Դարալագյազի վրա: Հանդուկյան դեպքում այդ երկու շրջանները եւս պիտի միացնեին Ադրբեջանին: Դա թուրքերի եւ մուսավաթական ղեկավարների պանթուրքական ծրագրի մի կարեւոր մասն էր, որ նրանք աշխատեցին իրագործել ամեն կերպ, նույնիսկ 1919 թվին, երբ Անդրկովկասում նստած էին հաղթական Անտանտի ներկայացուցիչները՝ անգլիական օկուպանտների գլխավորությամբ:

Ահա թե ինչպիսի դավեր էին մտմտում օսմանցիները եւ նրանց ադրբեջանական սատելիտները՝ նպատակ ունենալով զավթելու հյուսիս-արեւելյան Հայաստանի գոյություն համար վճռական նշանակություն ունեցող հայկական անառիկ լեռնաշխարհը:

Բայց, բարեբախտաբար, հայության ռիսերիմ թշնամիները բավականաչափ ժամանակ եւ միջոցներ չունեցան իրագործելու իրենց դիվային ծրագիրը:

\* \* \*

Նուրի փաշան իր հետ Աղդամ էր բերել Գալիպոլիի թերակղզուց Բաքվի ճակատը փոխադրված դիվիզիայի երկու լավագույն մասեր: Բացի դրանից, ինչպես ասացինք, արդեն բավականաչափ զորքեր էին կենտրոնացված Աղդամում եւ ամբողջ հայ-մուսուլմանական սահմանի երկարությամբ այլեւայլ կարեւոր կետերում իրենց ամեն տեսակի պատրաստությամբ: Նուրի փաշայի պահանջով եւ նրա ուղեկցությամբ, այս անգամ Ղարաբաղ մեկնելու համար Աղդամ էին եկել Գանձակի հայ ղեկավար շրջաններից ուղարկված Սերգեյ Տեր-Իսրայելյանը եւ ոմն Լեւոն վարդապետ, որոնց միսիան կայա-



նում էր նրանում, որ պիտի աշխատեին համոզել Ղարաբաղի կառավարությանը եւ ժողովրդին՝ զենք չբարձրացնել թուրքերի եւ ադրբեջանցիների դեմ, այլ բոլոր հարցերը լուծել փոխադարձ համաձայնությամբ, որպեսզի «Գանձակի եւ նրա լեռնային շրջանի հայության կյանքն ու ստացվածքը նույնպես վտանգի չենթարկվեն...»: Նուրի փաշայի հետ Աղզամ էր եկել նաեւ մի տաճիկ դիպլոմատ՝ քաղաքացիական հագուստով: Նա տեսակցեց Աղզամում իբրեւ պատանդ պահվող հայ պատվիրակների հետ եւ շատ քաղաքավարի, մեղմ եւ ռուսերեն անուշախոս խոսքերով աշխատեց համոզել պատվիրակության անդամներին, որ թուրքերը թշնամի չեն հայերին, որ՝ նրանք որեւէ ագրեսիվ նպատակ չունեն Ղարաբաղի նկատմամբ, որ՝ կռիվը թուրքերի դեմ կարող է պատճառ դառնալ ավելորդ արյունահեղությունների եւ այլն: Թուրք դիպլոմատը հորդորում էր պատվիրակության անդամներին՝ Ղարաբաղ վերդառնալուց ամեն կերպ համոզել ժողովրդին եւ ղեկավարներին՝ զենքի չդիմել եւ խաղաղությամբ լուծել բոլոր հարցերը թուրքական հրամանատարության հետ:

Սեպտեմբերի 25-ին Նուրի փաշայի կարգադրությամբ կալանքից ազատ արձակվեցին պատվիրակության երեք անդամները եւ Գանձակից եկած երկու հայերի հետ ուղարկվեցին Շուշի: Սակայն հայկական ուղեմատում նրանք հանդիպեցին անսկսկալ դժվարության: Ասկերան-Շուշի խճուղու անվտանգության վրա հսկող հայկական հեծյալ ջոկատը ձեռքակալեց նրանց եւ նույնիսկ կամեցավ ինքնադատել իբրեւ «գավաճանների», սակայն ջոկատի պետը կարգադրեց տանել նրանց Ղայթալիքենդ գյուղը՝ խաչենի հրամանատարի մոտ: Վերջինս իսկույն ազատեց բոլորին եւ հատուկ պահակախմբի ուղեկցությամբ ուղարկեց քաղաք: Շուշի վերադարձող պատվիրակներն իրենց հետ տանում էին Նուրի փաշայի ուղտիմատումը՝ Ղարաբաղի կառավարությանը հանձնելու: Սակայն նրանից առաջ կառավարության՝ Ասկերանի շրջանից վերադարձած անդամների զեկուցումից եւ բերած ուղտիմատումի օրինակից կառավարությունն արդեն իրազեկ էր ստեղծված իրադրությանը: Նաեւ հայտնված էր Աղզամ, թուրք հրամանատարությանը, որ ուղտիմատումին իրավազոր է պատասխանելու միայն ժողովրդից ընտրված պատգամավորների ժողովը, եւ պահանջվել էր ժամանակ տալ հրավիրելու այն: Միաժամանակ, առանց տաճիկ հրամանատարության պատասխանին սպասելու, կառավարությունն արդեն ձեռնարկել էր անհապաղ գումարելու Շուշում ժողովրդական արտակարգ համագումար՝ բաղկացած յու-

րաքանչյուր գյուղից ընտրված 2-ական պատգամավորներից:

Սեպտեմբերի 26-ի առավոտյան թուրք հրամանատարությունը հայտնեց իր համաձայնությունը՝ սպասելու պատգամավորական ժողովի որոշման: Իսկ հաջորդ օրվա կեսօրին արդեն ժողովվել էին Շուշում 600-ից ավելի պատգամավորներ, եւ դեռ շարունակում էին գալ, բոլորն առանց բացառության՝ զինված ոտից գլուխ:

## 15. ՂԱՐԱԲԱՂԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՐՐՈՐԴԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ (պատգամավորական ժողովը)

Քաջությունը առանց դիպլոմատիայի  
կորցնում է իր զորության նշանավոր մասը:

ԲԱՅՅԻ

Հայտնելով իր համաձայնությունը՝ ուղտիմատումի պատասխանի համար սպասելու Ղարաբաղի պատգամավորական ժողովի որոշման, օսմանյան հրամանատարությունն այդպիսով կատարում էր առաջին լուրջ զիջումը զարաբաղցիներին: Դա ուշագրավ նահանջ էր, որ ապացուցում էր, թե թուրքերն իսկապես լրջորեն խուսափում էին Ղարաբաղի հետ զինված բախումից:

Սերգեյ Տեր-Իսրայելյանը<sup>61</sup> կառավարության անդամների հետ ունեցած տեսակցության ժամանակ հայտնեց, որ համաշխարհային պատերազմի ճակատներում տիրող իրադրության վերաբերյալ Միքայել Արզումանյանի հաղորդած տեղեկությունները լիովին համապատասխանում են իրականությանը: Նա ավելացրեց, որ Թիֆլիսից գաղտնի ճանապարհով Գանձակում վերջին օրերս ստացված տեղեկությունները ցույց են տալիս, որ կենտրոնական տերությունների բլոկը պատերազմի ճակատներում ամենուրեք լուրջ անհաջողություններ է կրում: Բուլղարիայի եւ Թուրքիայի կապիտուլյացիան համարվում էր օրերի հարց:

Տեր-Իսրայելյանի ինֆորմացիան վերջնականապես համոզեց Ղարաբաղի ղեկավարությանը, որ Թուրքիայի պարտությունը անխուսափելի է մոտ

<sup>61</sup> Գանձակ քաղաքի նախկին «ուպրավայի» անդամ:



ժամանակներում, որից հետո «երիտասարդ թուրքերի» ավանտյուրան Անդրկովկասում, անտարակույս, վերջանալու է խայտառակ կրախով:

Ժամանակը, կնշանակե, գործում էր հայ ժողովրդի օգտին:

Եւ ոգեշնչված մոտալուտ ապագայի հեռանկարով, Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը վճռեց, առանց պատերազմի ավերիչ հրդեհի մեջ նետելու երկիրը, խաղաղությամբ լուծել հարցերը օսմանցիների հետ: Դժվար էր միայն համոզել զայրույթից եւ ատելությունից ինչպես փոթորկահույզ ծով ալեկոծվող պատգամավորական ժողովին, թե պատերազմը թուրքերի հետ անմտություն է, որ պատմական մոմենտի հրամայական պահանջն է՝ օգտվել թուրքերի թեկուզ ժամանակավոր խաղաղասիրական տրամադրություններից եւ աշխատել նվազագույն զիջումների գնով երկիրն ազատել վերահաս աղետներից:

Թեպետեւ մեծ դժվարություններով, այնուամենայնիվ, Ղարաբաղի ղեկավարները կարողացան իրենց հաստատակամ, անձնվեր, եռանդուն ջանքերի շնորհիվ պատվով իրագործել ճակատագրական մոմենտի առաջ քաշած պահանջը:

\* \* \*

Պատգամավորական ժողովի բացումից առաջ գումարվեց կառավարության նիստ, որին մասնակցում էին Աղդամից վերադարձած պատվիրակության անդամները եւ կուսակցությունների առանձին ներկայացուցիչներ: Որոշվեց պատգամավորական ժողովի օրակարգում մտցնել երկու հարց. տաճկական հրամանատարության ուղտիմատումի քննությունն ու պատասխանը եւ պաշտպանական հարցեր: Քննվեց եւ միաձայն ընդունվեց ուղտիմատումի պատասխանի նախագիծը, որ պիտի ներկայացվեր պատգամավորական ժողովի հաստատմանը: Ըստ այդ նախագծի՝ կտրականապես մերժվում էին զինաթափության եւ Ադրբեջանի իշխանությանը ենթարկվելու պահանջները: Մերժվում էր թուրքերի վերջին պահանջը եւս՝ Շուշի գործ մտցնելու վերաբերյալ, մոտավորապես հետեւյալ պատճառաբանությամբ. Ղարաբաղում, թե՛ քաղաքում եւ թե՛ շրջաններում, մինչեւ այժմ էլ հայ եւ մուսուլման բնակչությունն ապրում է հաշտ ու խաղաղ, եւ չի պատահել, որ երկու ժողովուրդների բարիգրացիական հարաբերությունները խախտվեն որեւէ դժբախտ առիթով: Մինչդեռ այդ ժողովուրդներից որեւէ մեկի համակրոն կամ ցեղակից մի երրորդ ուժի ներկայությունը կարող է լարել հա-

րաբերությունները եւ բարդությունների տեղիք տալ երկու դրացի ժողովուրդների միջեւ:

Պիտի ասել, որ ուղտիմատումի այդ վերջին կետի շուրջը տեղի ունեցան երկարատեւ եւ տաք վիճաբանություններ: Աղդամից վերադարձած պատվիրակության անդամների միաձայն կարծիքն այն էր, որ Շուշի գործ մտցնելու հարցում թուրքերը ոչ մի զիջում չեն անի. դրանում նրանք, ինչպես իրենք էին ասում, համոզվել էին դեռեւս Աղդամում տեսնելով գործերի եւ ռազմական միջոցների կենտրոնացման լարվածությունն Աղդամում եւ Ասկերանի հայկական գյուղերի մատույցներում:

Որոշվեց ուղտիմատումի առաջին եւ երկրորդ կետերի նկատմամբ չկատարել որեւէ զիջում: Իսկ երրորդ կետի վերաբերյալ ընդունվեց հետեւյալը. եթե թուրքերը առանց որեւէ վերապահության կհրաժարվեն զինաթափության եւ հպատակության պահանջներից, բայց կպնդեն Շուշի գործ մտցնելու պահանջի վրա, ապա համաձայնություն տալ դրան հետեւյալ վերապահումներով. թույլատրել թուրք հրամանատարությանը Շուշի մտցնել միայն թուրքական կանոնավոր բանակի մի զորամաս՝ բաղկացած ոչ ավելի, քան 800-1000 զինվորներից: Ադրբեջանական զինված ուժ, կանոնավոր կամ անկանոն, չպիտի բերվի Շուշի կամ մուտք գործի Ղարաբաղի սահմաններն ընդհանրապես: Գյուղական շրջանները երբեք թուրքական զորք չպիտի մտցվի: Զորքը քաղաքում պիտի տեղավորվի միայն մուսուլմանական մատում:

Այդ պայմաններով թուրքերի ժամանակավոր իշխանությունը փաստորեն պիտի տարածվեր միայն քաղաքի մուսուլմանական մասի վրա:

Կառավարությունն ընդունեց գաղտնի որոշում ինչքան հնարավոր է ձգձգել ուղտիմատումի պատասխանը եւ ընդհանրապես բանակցությունները թուրքերի հետ, համոզված լինելով, որ համաշխարհային պատերազմի ճակատներում առաջացած վճռական բեկումն ի վնաս կենտրոնական պետությունների բլոկի, ամեն օր եւ ժամ կարող է հանգել Թուրքիայի վերջնական պարտության, որը Ղարաբաղի հայության համար կժառանգեր իբրեւ միակ բարեպատեհ ելք՝ հաջողությամբ դուրս գալու ստեղծված ծանր քաղաքական ճգնաժամից, առանց ենթարկվելու երկիրը վտանգավոր ցնցումների, առանց արյունալի բախումների, որոնք վաղ թե ուշ անխուսափելի պիտի դառնային թուրքերի ներկայության պայմաններում:



\* \* \*

Շուշու հայկական մասն ընդունել էր ռազմական ճամբարի կերպարանք: Շրջաններից եկած պատգամավորների թիվն արդեն անցել էր 700-ից: Եկել էին, առանց բացառության՝ բոլորն էլ զինված: Այդպիսի սպառազեն բազմության ներկայությունը լարված քաղաքական իրադրության մեջ վտանգավոր էր: Քաղաքի հայկական մասում դարձյալ գլուխ էին բարձրացրել արկածախնդիր տարրերը, որոնք աշխատում էին ամեն կերպ օգտագործել մոմենտը՝ անկարգություններ առաջ բերելու համար: Թե՛ այդ եւ թե՛ պաշտպանական եւ այլ բնույթի մի շարք ավելի կարեւոր հանգամանքներ անհրաժեշտ դարձրին պատգամավորների թիվը կրճատել մոտ 3-4 հարյուր հոգով եւ կրճատել հատկապես այն պատգամավորներին, որոնց մշտական ներկայությունը շրջաններում այդ օրերին խիստ անհրաժեշտ էր:

Պատգամավորական ժողովին մասնակցելու համար այդպիսով քաղաքում մնացին գլուղներից եկած 300-ից քիչ ավելի մարդ:

Սեպտեմբերի 27-ի երեկոյան Շուշու ռեալական դպրոցի դահլիճում բացվեց Ղարաբաղի պատգամավորական երրորդ արտակարգ ընդլայնած ժողովը: Բոլոր նիստերին պատգամավորները ներկայանում էին սպառազեն: Նախագահ Հայրապետ Մուսայելյանը ժողովը բաց արեց մի ընդարձակ, խրախուսիչ, ոգեւորված ճառով, որը հաճախ ընդհատվում էր դահլիճի բուռն ծափերով եւ «կեցցե»-ներով: Իր խոսքի վերջում Մուսայելյանը, մեղմացնելով ճառի բարձր եւ ոգեշնչող տոնը, միանգամայն հանգիստ եւ համոզիչ արտահայտություններով հայտարարեց, որ թուրքերի ուլտիմատումը պատճառ չպիտի դառնա պատերազմի, որ՝ պատգամավորական ժողովը հրավիրված է հաշտության որեւէ եզր գտնելու թուրքերի հետ, որ՝ Ղարաբաղի մեկուսացած եւ թշնամի ուժերով օղակված վիճակը, ժողովրդի ծանր տնտեսական դրությունը, գաղթականության ներկայությունը եւ ռազմապաշարի պակասը անհնարին եւ անիմաստ են դարձնում պատերազմը տաճկական կանոնավոր եւ մինչեւ ատամներն սպառազեն բանակի հետ, որին պաշտպանում է կամա թե ակամա ամբողջ տեղական մուսուլմանությունը, որ՝ պատերազմը անխուսափելիորեն արյունահեղությունների եւ ավերածությունների պատճառ պիտի դառնա, որոնցից մեծապես տուժողը լինելու է անկասկած մեր ժողովուրդը:

Մուսայելյանի այդ խոսքերը կարծես մի կայծ էր, որ ընկնում էր վառուդով լի մի ընդարձակ պահեստ... Դահլիճում վայրկենապես բարձրացավ

ցասման մի մոլեգին ալիք, մի աննկարագրելի աղմուկ ու ժխոր, որ տասնապատկվեց եւ դժոխային կերպարանք ընդունեց, երբ՝ «Թուրքերի հետ հաշտվել չենք ուզում, այլ կռիվ, կռիվ...» բացականչություններին միախառնվեցին հարյուրավոր հրացանների կոթերի կատաղի զարկերը դահլիճի տախտակյա հատակին, որից ցնցվում, դահլիճի հետ մեկտեղ երերում էր դպրոցի ամբողջ ամրակառույց շենքը...

Ապարդյուն անցան ժողովի նախագահի, նիստին ներկա գտնվող կառավարության անդամների եւ քաղաքի միլիցիական վարչության ներկայացուցիչների կողմից դահլիճը որեւէ կերպ հանգստացնելու բոլոր ջանքերը: Նախագահն ստիպված եղավ փակել ժողովը: Երկրորդ նիստը նշանակվեց հաջորդ օրվա երեկոյան:

Այդ գիշեր քաղաքի հայկական մասում հայտարարվեց արտակարգ զինվորական դրություն: Արգելվեց զինված շրջագայությունը քաղաքում:

Սեպտեմբերի 28-ի ցերեկվա գրեթե բոլոր ժամերը կլանեց ինտելիգենցիայի ներկայացուցիչների խորհրդակցությունը: Որոշվեց ամեն կերպ աջակցել կառավարությանը՝ պայքարելու անիշխանության դեմ եւ հանդես գալ պատգամավորական ժողովում պաշտպանելու կառավարության մշակած ուլտիմատումի պատասխան-նախագիծը:

Պատգամավորական ժողովի երկրորդ նիստում կառավարության նախագահ Իշխանյանը զեկուցեց նախադժի մասին: Ժողովը միահամուռ փոթորկալի ծափահարություններով ընդունեց զինաթափության եւ Ազրբեջանի իշխանության ենթարկվելու պահանջների կատեգորիկ մերժումը: Բայց երբ Իշխանյանը, ընդարձակ բացատրական խոսքից հետո, կարդաց այն մասը, որ վերաբերում էր Շուշին զորք մտցնելու թուրքական պահանջի նկատմամբ զիջումներ կատարելու առաջարկության, դահլիճը կրկին վայրկենապես փոթորկվեց... Դարձյալ խլացուցիչ ռազմաշունչ բացականչություններ, դարձյալ դժգոհության եւ ցասումի աղմկալից գոշումներ եւ հրացանների կոթերի երկարատեւ զարկերի դժոխային ժխոր...

Պատգամավորների մեծ մասը թողնում է վերջապես դահլիճը եւ խռնվում միջանցքներում: Նիստը կրկին հետաձգվում է հաջորդ օրվան:

Օսմանցիներն, անշուշտ, անտեղյակ չէին հայկական քաղաքամասում եւ պատգամավորական ժողովում տեղի ունեցող անցուդարձին: Նրանք առերեւոյթ համբերատարությամբ սպասում էին, թե երբ վերջապես պատգամավորական ժողովը պիտի բարեհաճի պատասխան տալ իրենց ուլտիմա-



տումին:

Թուրքերի այդ «համբերատարությունը» սակայն, պիտի շուտով տեղի տար սուր ճոճեցնելու թուրքական սովորական քաղաքականությանը: Հակառակորդը, բնական է, չէր կարող հանգուրժել օսմանցու այդչափ նվաստացում, թեկուզ Ղարաբաղի հայության առաջ: Եւ թուրքերը մտածում էին ճնշում գործադրել պատգամավորական ժողովի վրա՝ ստիպելու արագացնել ուլտիմատումի պատասխանը: Չմոռանանք նաեւ, որ օսմանցիներին շարունակ Ղարաբաղի դեմ ագրեսիայի էին մղում Ադրբեջանի կառավարությունը եւ Աղզամում կուտակված բեկական-խանական հայակեր տարրերը:

Մտավորականության լավագույն մասի ճիգերը՝ անձնական տեսակցությունների միջոցով համոզելու պատգամավորներից ամենաազդեցիկներին՝ ընդունելու կառավարության կազմած պատասխանի նախագիծը, անցան անհետեւանք: Պատգամավորները լսել անգամ չէին ուզում թուրքերի հետ հարցերը հաշտությամբ լուծելու անհրաժեշտության մասին: Ամենահավասարակշռված եւ լրջախոհ պատգամավորներն անգամ պահանջում էին թուրքերի ուլտիմատումին պատասխանել ընդհանուր հարձակմամբ՝ առանց լուրջ հաշիվ տալու իրենց ընդհարման անխուսափելի հետեւանքների մասին:

Սեպտեմբերի 29-ի առավոտյան եւ երեկոյան նիստերը դարձյալ անցան անհետեւանք: Նախագիծը քննության դնել չհաջողվեց: Ժողովի նախագահ Մուսայեյլանի, քաղաքից ընտրված պատգամավորներից շատերի եւ մտավորականության ներկայացուցիչների ելույթները՝ համոզելու պատգամավորական ժողովի մեծամասնությանը՝ ընդունելու պատասխանի նախագիծը, դրական արդյունք չտվեցին: Երեկոյան նիստի ժամանակ պաշտոնական տեղեկություն ստացվեց, որ թուրքական հրամանատարությունն այլեւս սպասել չի կարող եւ պահանջում է 24 ժամվա ընթացքում պատասխանել ուլտիմատումին: Նուրի փաշան պահանջում էր նաեւ ետ ուղարկել Գանձակից Աղզամ եկած հայ պատվիրակներին՝ Տեր-Խսրայեյլանին եւ Լեւոն վարդապետին:

Երեկոյան նիստը վերջացավ նրանով, որ պատգամավորները միաձայն ցանկություն հայտնեցին լսել զինվորական գործերի կառավարչի, որն այդ ժամանակ գտնվում էր Խաչենում, զեկուցումը:

Պատգամավորական շրջանում տարածվել էր այն կարծիքը, որ իբր զինվորական գործերի կառավարիչը համաձայն չէ կառավարության մշա-

կած նախագծին եւ առաջարկել է մերժել ուլտիմատումն ամբողջովին: Այդպես տարածել էին քաղաքի ագրեսիվ տրամադրված տարրերը՝ օգտվելով զինվորական գործերի կառավարչի բացակայությունից: Վերջինս սեպտեմբերի 30-ին վերադարձավ շրջանից եւ անմիջապես մեկնեց պատգամավորական ժողովի նիստին: Միջանցքում, դահլիճի մուտքի մոտ, նա հանդիպեց Ալեքսանդր Ռուբենուն, եւ նրանց միջեւ տեղի ունեցավ այսպիսի խոսակցություն: Զինվորական գործերի կառավարիչը զարմանք հայտնեց, որ պատմական այդպիսի պատասխանատու եւ ճակատագրական մոմենտի, երբ հաննիքալը կանգնած է Ղարաբաղի դռների առաջ, ինքը՝ Ռուբենին եւ Սաքո Համբարձումյանը, միանգամայն անտարբեր դիտողներ են Ղարաբաղում տեղի ունեցող լուրջ իրադարձությունների, ոչնչով չեն օժանդակում կառավարությանը՝ դուրս բերելու երկիրը ծանր քաղաքական ճգնաժամից, չեն մասնակցում պատգամավորական ժողովի նիստերին եւ չեն օգնում համոզելու գավառի պատգամավորներին՝ ընդունելու թուրքերի հետ բանակցություններ վարելու եւ խաղաղությամբ հարցերը լուծելու անհրաժեշտությունը:

Ռուբենին այդ խոսքերին պատասխանեց կարճ «Թող երկիրը դուրս բերեն ճգնաժամից այն մարդիկ, որոնք 25 տարի շարունակ տնօրինել եւ տնօրինում են հայ ժողովրդի ճակատագիրը»:

Հասկանալի էր, իհարկե, թե որ քաղաքական հոսանքի կտուրին էր քար նետում Ռուբենին: Նրա այդ խուսափողական, երկշտ պատասխանը, նրա անտեղի ակնարկը չզարմացրեց զինվորական գործերի կառավարչին: Վերջինս այդ խոսքերին պատասխանեց միայն մի դառն եւ հեզնական ժպիտով ու մտավ հուզմունքից եւ զայրույթից եռացող դահլիճը:

Հանդես գալով պատգամավորական ժողովի առաջ, զինգործերի կառավարիչը սկզբից հայտարարեց, որ ինքը լիովին համաձայն է կառավարության առաջարկություններին եւ մշակած պատասխանի նախագծին: «Ժողովրդի ապահովության, նրա անվտանգության շահերը, - ասաց նա, - պահանջում են ընդունել այդ նախագիծը: Պատերազմը թուրքերի հետ կարող է շատ ծանր հետեւանքներ ունենալ շրջապատման մեջ գտնվող մեր երկրի համար: Երեկ երեկոյան դեմ թուրքական մեծաթիվ ուժեր գրոհել են Նախիջեւանիկ, Փիրջամալ եւ Վարազաբույն գյուղերի ուղղությամբ՝ մեր սահմանապահ մարտիկների դիրքերի վրա, բայց մի երկու ժամվա լարված մարտերից հետո ետ են մղվել: Իսկ այսօր, վաղ առավոտյան, եկել էին այդ գի-



քերից եւ... փամփուշտ էին պահանջում: Ռազմապաշարի տեսակետից մեր վիճակը, կարծում եմ, ձեզ ամենքիդ լավ հայտնի է: Եթե Ջանգեզուրը տմարդի չվարվեր եւ մեր 300 սայլերը վերադառնային բարձած զինամթերքով, այժմ դուք լիակատար իրավունքով կարող էին պահանջել մեզնից թուրքերի ուղտիմատումին այլ պատասխան տալ: Թուրքերը կուտակել են մեր դեմ լավ մարզված եւ մարտերում կոփված զորամասեր, որոնք ապահովված են անսպառ զինամթերքով: Նրանց օգնում են Ադրբեջանի բեկերն ու խաները՝ պարենով եւ լավ զինված բազմաթիվ հրոսակներով: Այն մարդիկ, որոնք տարածում են, թե իբր սուտ է Բաքվի անկումը, դրանք ժողովրդին դնում են վտանգավոր մոլորության մեջ: Մեզ, այնուամենայնիվ, չի կարող հուսալքել ստեղծված ծանր իրադրությունը: Ժամանակը, բարեբախտաբար, գործում է մեր օգտին (այստեղ զինվորական գործերի կառավարիչը հրապարակում է Միքայել Արզումանյանից ստացված սեպտեմբերի 11 թվակիր նամակը): Այս նամակից եւ Գանձակից նոր եկած մարդկանց հաղորդած ավելի թարմ տեղեկություններից կարելի է անվիճելիորեն եզրակացնել, որ թուրքերի եւ նրանց դաշնակիցների պարտությունը օրերի հարց է: Իսկ պարտությունից հետո թուրքերն այլեւս Անդրկովկասում մնալ չեն կարող: Մեզ, ուրեմն, անհրաժեշտ է այժմ, այս անցողիկ ժամանակաշրջանում, որ կարող է անսպասելի կերպով կարճ տևել, ամեն կերպ խուսափել արյունահեղությունից: Իսկ եթե թուրքերը մեր խաղաղասիրական տրամադրությունները եւ առաջարկներն ընդունելով թուլության նշան՝ փորձ կանեն զենքի միջոցով ստիպել ընդունելու իրենց բոլոր պահանջները, այդ դեպքում մեզ կմնա դիմել ակտիվ պաշտպանության, այդ դեպքում մենք, բնականաբար, խուսափել արյունահեղությունից չենք կարող:

Արդ, քանի որ թուրքերն իրենք եւս կարծես խուսափում են պատերազմից եւ հակամետ են բանակցությունների միջոցով խաղաղությանը լուծելու հարցերը, անհրաժեշտ է, որ պատգամավորական այս արտակարգ ժողովն իր աշխատանքն ավարտելուց առաջ լիակատար վստահություն հայտնի կառավարությանը, ընդունի նրա ներկայացրած պատասխան-նախագիծը եւ լիազորի նրան իր անունից բանակցություններ վարել թուրքերի հետ՝ սկսելով այդ բանակցությունները որքան հնարավոր է արագ, առանց ավելորդ ժամանակ վատնելու»:

Զինվորական գործերի կառավարչի ելույթից հետո, նախագահ Մուսայելյանը, օգտվելով պատգամավորների մեծամասնության տրամադրու-

թյան մեջ առաջ եկած սուր բեկումից, որ պիտի վերագրել գլխավորապես Արզումանյանի նամակի խրախուսիչ ազդեցությանը եւ կառավարչի հաղորդած մի քանի այլ տեղեկությունների առաջ բերած տպավորությանը, առաջարկեց Իշխանյանին կարգալ կետ առ կետ ուղտիմատումի պատասխանի նախագիծը, որը եւ ժողովի կողմից ընդունվեց աննշան փոփոխություններով:

Պաշտպանական միջոցառումների վերաբերյալ ժողովն ընդունեց զինգործկառավարչի առաջարկությունը՝ օգնել շրջանների հրամանատարներին ժողովարարությունների միջոցով ստեղծելու փամփուշտի որոշ պաշարներ: Պարզվեց, որ շրջաններում հանդիպում են մարդիկ, որոնք տեղերում աշխատում են խանդարել ձիաների հավաքագրման եւ պաշտպանական այլ միջոցառումներին: Ժողովը որոշեց շտապ միջոցներ ձեռք առնել՝ վերացնելու բոլոր դժվարությունները եւ արգելքները, որոնք խանգարում են երկրի պաշտպանության համար ձեռնարկվող աշխատանքներին: Այնուհետեւ ժողովը միաձայն ընդունեց հետևյալ բանաձեւը<sup>62</sup>.

«Ղարաբաղի պատգամավորության արտակարգ ժողովը («Երրորդ համագումարը»), լսելով կառավարության նախագահ Իշխանյանի ղեկուցումը թուրքական հրամանատարության ուղտիմատումի մասին՝ միաձայն ընդունում է այդ առթիվ ներկայացրած պատասխանի նախագիծը: Ժողովը միաժամանակ վստահություն է հայտնում կառավարությանը եւ լիազորում նրան Ղարաբաղի պատգամավորական երրորդ արտակարգ ժողովի անունից վարելու բանակցություններ թուրքական հրամանատարության հետ՝ նպատակադրելով խաղաղությանը եւ փոխադարձ համաձայնությանը լուծելու երկու կողմերին շահագրգռող հարցերը»:

Բանաձեւը քվեարկելուց եւ միաձայն ընդունվելուց հետո պատգամավորական ժողովի աշխատանքները հայտարարվում են վերջացած:

## 16. ԹՈՒՐԲԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՇՈՒՇԻ

Սեպտեմբերի 30-ին թուրքերը հարձակման ձեռնարկեցին նաեւ Զրաբերդի շրջանում:

Մուսուլմանական Թարթար ավանում եւ նրա մոտակա գյուղերում

<sup>62</sup> Տալիս ենք բովանդակությունը՝ մոտավոր ճշտությամբ:



կենտրոնացած թուրք-ադրբեջանական ուժերը, թվով մի քանի հազար, ծավալուն հարձակման անցան Մարգուշեանի ուղղությամբ, 5-6 կիլոմետր ճակատով: Սկզբում նրանց հաջողվեց գրավել Մարգուշեանը: Բայց ջրաբեր գյուղերը, արագորեն վերախմբավորելով իրենց ուժերը, անցան հակահարձակման եւ շեշտակի գրոհներով կարողացան ոչ միայն կազնեցնել հակառակորդի առաջխաղացությունը, այլեւ թիկնանցելով՝ ջարդ տալ թշնամուն եւ ստիպել նրան նահանջելու: Այդ կարճատեւ եւ մասնակի բախումները համոզեցին օսմանյան հրամանատարությանը, որ ճակատ առ ճակատ կռիվը դարաբաղցիների հետ վտանգավոր է եւ կապված է մեծ կորուստների հետ: Ուստի հայերի վրա ճնշում գործելու նպատակով թուրքերը դիմեցին ավելի գործուն միջոցի՝ օգտագործելով իրենց ռազմական տեխնիկայի գերակշռությունը:

Վեց օր անընդհատ շտապալուծ Շուշուց ուլտիմատումի պատասխանը՝ նրանք որոշեցին այս անգամ գործողության մեջ դնել իրենց հրետանային հզոր մարտկոցները: Հոկտեմբերի 1-ի առավոտյան օսմանցիք սկսեցին դաշտային ծանր եւ հեռաձիգ հրանոթներից ռմբակոծել Ասկերանի մոտակա հայկական գյուղերը՝ բարբարոսական ավերածություններ առաջ բերելով այնտեղ: Առանձնապես մեծ վնասներ կրեցին Նախիջևանի եւ Վարազբույն գյուղերը, որտեղ ռմբակոծությունից հիմնովին ավերվեցին կամ հրդեհվեցին շատ բարեկարգ եւ գեղեցկաշեն տներ, որոնք կառուցվել էին երկար տարիների ընթացքում Բաքվում աշխատող նույն գյուղացի բանվորների դառն քրտինքով վաստակած կոպեկներով: Մարդկային զոհեր չեղան, որովհետեւ բնակչությունը սահմանամերձ գյուղերից նախօրոք էվակուացված եւ տեղափոխված էր թիկունք: Զինված ուժերը հակառակորդի հրետանային ռմբակոծությանը կարողացան պատասխանել միայն հրացանային ապարդյուն կրակով:

Հայկական գյուղերի ավերիչ ռմբակոծությունը կարգադրվեց դադարեցնել միայն այն ժամանակ, երբ թուրք հրամանատարությունը հայտնի դարձավ, որ բանակցելու համար Շուշուց Աղզամ է ժամանել հայերի պատվիրակությունը, որը բաղկացած էր այս անգամ երեք հոգուց՝ Հայրապետ Մուսայելյան, Դանիել Առաքելյան եւ Աշոտ Մելիք-Հովսեփյան:

Պատվիրակությանը դարձյալ գլխավորում էր Հայրապետ Մուսայելյանը:

Աղզամ հասնելուց անմիջապես հետո՝ Նուրի փաշան ընդունեց պատվի-

րակությունը եւ լսեց պատգամավորական ժողովի պատասխանն իր ուլտիմատումին: Մերժվում էին բոլոր պահանջները: Նուրի փաշան կատաղեց, սպառնաց, բայց ի վերջո ստիպված եղավ տեղի տալ: Նա հրաժարվեց ժողովրդի ընդհանուր զինաթափման պահանջից, համաձայնեց նաեւ չդնել Ադրբեջանի իշխանությունը ճանաչելու կատեգորիկ պահանջ, բայց ոչ մի կերպ չուզեց հրաժարվել Շուշի գործ մտցնելու մտադրությունից, թեպետեւ Մուսայելյանը ամեն կերպ աշխատեց համոզել թուրք հրամանատարին, որ այդ ակցիան կարող է աննպաստ հետեւանքներ ունենալ հայ-մուսուլմանական հարաբերությունների համար: Պատվիրակության առաջարկությունը՝ ճանաչել Շուշու հայկական կառավարությունը իբրեւ Ղարաբաղի փաստական իշխանություն, մերժվեց այն արդեն հայտնի պատճառաբանությամբ, թե թուրքիան ճանաչում է հայերի միայն մի կառավարություն, եւ դա Հայաստանի հանրապետական կառավարությունն է: Նուրի փաշան, այնուամենայնիվ, համաձայնվեց չխախտել Ղարաբաղում Status quo-ն, մինչեւ, այսպես կոչված, Կ. Պոլսի կոնֆերանսի որոշումը Անդրկովկասի հանրապետությունների վերջնական սահմանների վերաբերյալ: Բայց այդ ամենը թուրքերին հատուկ ստոր խաբեություն էր: Հակառակ պատվիրակության պահանջի՝ թուրքերը հրաժարվեցին երկու կողմերի միջեւ կայացած համաձայնությունը գրավոր ձեւակերպելուց, առաջարկելով բավականանալ «ջենտլմենական խոսքով»: Եւ նրանք պատրաստ էին «ջենտլմենական խոսքով» ամեն տեսակի պարտավորություններ հանձն առնել եւ խոստումներ տալ, միայն թե բաց տեսնեին իրենց առաջ Ասկերանը եւ դեպի Շուշի տանող խճուղին:

Նուրի փաշան համաձայնվեց նույնպես «ղարափափախավորների» (ադրբեջանցիների) զինված ուժ չմտցնել Շուշի, բացի թուրքական կանոնավոր զորամասից: Նա այդ կատարեց: Սակայն պատվիրակների պահանջին՝ երկու հրաձիգ գումարտակից կամ 1000 զինվորից ավելի թուրքական զորք չմտցնել Շուշի՝ պատասխանեց կատեգորիկ մերժումով, առարկելով, որ այդչափ զինվոր կպահանջվի միայն Աղզամ-Շուշի ճանապարհի ապահովության համար: Նա ասաց, որ Ղարաբաղ մուտք գործող զորքը 2-3 հազար զինվորից պակաս լինել չի կարող: Պատվիրակությունը պահանջեց, որ բացի քաղաքից, գյուղական շրջանները զորք չմտցվի: Նուրի փաշան դրան չառարկեց: Նա խոստացավ քաղաքի ադրբեջանական մասում հարմարություններ լինելու դեպքում ասկերներին տեղավորել այնտեղ, հակառակ



դեպքում նա օգտագործելու էր հայկական մասի հարմար շենքերը եւ նախկին ռուսական զորանոցը: Մնացած հարցերի շուրջը նուրի փաշան առաջարկեց համաձայնության գալ Ջամիլ-Ջալիլ-բեյի հետ, որը ներկա էր նուրի փաշայի հետ վարվող բանակցություններին: Հայ ներկայացուցիչները խնդրեցին բանակցությունների շարունակությունը հետաձգել հաջորդ օրվան, հոգնածությունը պատճառ բերելով: Նրանց գիշերելու տեղ տվին շտաբին կից հարմարավետ սենյակում, եւ կարգադրվեց ճաշ տալ հրամանատարության խոհանոցից:

Հաջորդ օրը, հոկտեմբերի 3-ին, բանակցությունները շարունակվեցին Ջամիլ-Ջալիլ-բեյի հետ, որը Շուշի գնացող զորքերի հրամանատար էր նշանակված: Նա պահանջեց Ասկերանի եւ դեպի Շուշի տանող խճուղու երկու կողմերում գտնված հայկական գյուղերի զինաթափում, որպեսզի, ինչպես նա էր պատճառաբանում, տաճկական ուժերը կարողանան վստահորեն եւ ապահով դեպի Շուշի շարժվել: Մուսայելյանը պատասխանեց, որ այդ գյուղերի բնակչությունը վերջին օրերի կռիվների ժամանակ քաշվել է դեպի թիկունք, եւ գյուղերում մնացել են միայն ծերունիները: Թիկունք են քաշվել նաեւ գյուղերի զինված ուժերը: Ուստի հիմքեր չկան կասկածելու, որ թուրքական զորքերի վրա կարող են հարձակումներ տեղի ունենալ ճանապարհի ուղղությամբ: Թուրք սպան, սակայն, շարունակում էր համառել իր պահանջի վրա: Նրան հիշեցրին, որ ընդհանուր զինաթափության պահանջը վճռականորեն մերժված է պատգամավորական ժողովի կողմից, եւ գլխավոր հրամանատարը համաձայնվեց դրան: Ինչ վերաբերում է «մասնակի» զինաթափմանը, որ գնում է բեյը, այդ, իբրեւ նոր առաջադրվող պահանջ, Մուսայելյանը գտավ անհրաժեշտ վերադառնալ Շուշի եւ այդ մասին զեկուցել կառավարությանը: Ջամիլ-Ջալիլ-բեյը, սակայն, գտավ ավելորդ այդ հարցի լուծումը փոխադրել Շուշի եւ խոստացավ բավարարվել միայն Ասկերանի մոտակա խնաբաղ, խրամորթ եւ Քյաթուկ գյուղերի զինաթափությամբ: Պատվիրակները դարձյալ պատասխանեցին մերժումով: Այդ ժամանակ Ջամիլ-Ջալիլ-բեյը սպառնաց վերսկսել սահմանային գյուղերի ռմբակոծությունը հեռաձիգ հրանոթներից եւ «հողին հավասարեցնել» հիշյալ երեք գյուղերը: Հայ ներկայացուցիչները խնդրեցին վերջնական պատասխանի համար խորհրդակցելու ժամանակ տալ: Մի քանի ժամից հետո Մուսայելյանը պատասխանեց, որ իրենք չեն առարկում բեյի պահանջին եւ խնդրեց հնարավորություն տալ պատվիրակներից մեկին ուղարկելու վերոհիշյալ

գյուղերը՝ թուրքական հրամանատարության պահանջի մասին տեղեկացնելու: Ուղարկվեց Դանիել Առաքելյանը, որը նախ պիտի գնար խնաբաղ եւ խրամորթ գյուղերը, որոնք ավելի մոտ էին Աղզամին եւ ապա անցներ Քյաթուկ գյուղը:

Մի քանի օր շարունակ Առաքելյանից ոչ մի լուր չստացվեց: Միայն հոկտեմբերի 7-ի վաղ առավոտյան տասներեք հայ ծերուկ գյուղացիներ, յուրաքանչյուրը մի-մի բարձած էշ առաջն առած, եկան ժողովվեցին ամբողջ քաղաքում Աղզամ, թուրքական շտաբի առաջ:

Ջամիլ-Ջալիլ-բեյին հայտնեցին, որ խնաբաղ, խրամորթ եւ Քյաթուկ գյուղերի հայերը զենքերը բերել են հանձնելու: Բեյը, ուրախացած, աշխույժով դուրս եկավ շտաբից մի քանի սպանների ուղեկցությամբ եւ մոտեցավ հայ գեղջուկների քարավանին: Իջեցնում են զենքերի առաջին բեռները եւ բացում կարկատաններով ծածկված հնամաշ վերմակների, քայքայված ջվալների եւ այլեւայլ լաթերի մեջ խնամքով փաթաթված հրացաններ... Ջամիլ-Ջալիլ-բեյը եւ նրան շրջապատող թուրք սպանները ապշած նայում են մեկ՝ ծերունիներին, եւ մեկ՝ գետին թափված զենքերին եւ կարծես չեն ուզում հավատալ իրենց աչքերին: Դրանք ժամանակակից հրացաններ չէին, այլ ամբողջովին ժանգով ծածկված, գրեթե առանց բացառության՝ հին կայծքարի հրացաններ, որոնք գործածական են եղել Ղարաբաղում միայն 17 եւ 18-րդ դարերում: Երբ ծերունիները փորձում են իջեցնել մնացած բեռները, բեյը զայրացած արգելում է, իսկ արդեն գետին թափված հրացանները մեկ-մեկ վերցնելով, Ջամիլ-Ջալիլ-բեյը խոթում է ծերունիներից յուրաքանչյուրի գիրկը մի-մի հատ, եւ երբ գետնի վրա այլեւս հրացան չի մնում, դիմում է զայրույթով հայ գեղջուկներին եւ գոչում. «Քոպակներ, ո՞ւմ եք կամենում խաբել... Հայդա՛, կորեք աչքիցս ձեր բերած զենքերով...»: Եւ ծերունիները բռնեցին վերադարձի ճամփան՝ Աղզամ տարած «զենքի» բեռներով: Նրանք ամբողջ ճանապարհին աշխույժ զվարճախոսում եւ բարձրաձայն խնդում էին ու հեզանքով ակնարկում, թե ինչպես կարողացան «էջացնել օսմանլուի թուրքերին»... Իսկ թուրքական հրամանատարությունը վերջնականապես համոզվեց, որ անկարելի է Ղարաբաղում թեկուզ մեկ գյուղ զինաթափել: Նպատակահարմար համարվեց խաղաղ միջոցներով իրագործել Շուշի մտնելու ծրագիրը՝ ամեն կերպ խուսափելով զրգոխ պահանջներից եւ բռնի գործողություններից: Դա թուրքերի սիրած գործելակերպն էր՝ երբ վտանգավոր էր համարվում դիմել ուժի քաղաք-



կանության:

\* \* \*

Հոկտեմբերի 7-ին Նուրի փաշան կարգադրեց թուլլատրել Շուշի վերադառնալ հայ պատվիրակության անդամներին՝ Հայրապետ Մուսայելյանին եւ Աշոտ Մելիք-Հովսեփյանին<sup>63</sup>: Վերջիններս պարտավորվեցին զգուշացնել Ասկերանից մինչեւ Շուշի ճանապարհի աջ եւ ձախ կողմերի լեռնային մատուցներում ամրացած հայկական զինված ուժերին՝ ետ քաշվելու ճանապարհի զոնայից 2-3 կիլոմետր, որպեսզի դեպի Շուշի շարժվող թուրքական ուժերի հետ բախումներ տեղի չունենան:

Պատվիրակները Աղդամում ականատես էին եղել, թե ինչպես հոկտեմբերի 6-ից սկսած տեղի էին ունենում թուրքական ուժերի արագ վերախմբավորումներ, որ նշան էր, թե նրանք պատրաստվում են լուրջ արշավի դեպի Շուշի:

Եւ, հիրավի, հոկտեմբերի 8-ի վաղ լուսաբացին թուրքական զորամասերը՝ բաժանված երեք զորասյուների, սկսեցին շարժվել Ասկերանի վրա: Աջ եւ ձախ թեւերի զորասյուների ջոկատները, որոնք իրենց հետ ունեին մեծ թվով թեթեւ գնդացիներ, շղթաների բաժանված, Շելլու եւ Խինդիրլու գյուղերի ուղղությամբ մագլցելով լեռների լանջերով եւ ժայռոտ ուտերով, արագորեն հասան բարձունքները եւ, առանց դիմադրության հանդիպելու, շարժվեցին դեպի Ասկերան: Կենտրոնի զորասյունը հետեւում էր նրանց խճուղով: Կարճ ժամանակամիջոցում աջ եւ ձախ թեւերում արշավող զորասյուների շղթաները ալիք առ ալիք հասան եւ բռնեցին Ասկերանի երկու կողմերի բարձունքները, իսկ ձախ թեւում առաջապահ շղթաները մտան Քյաթուկ գյուղը: Դրանից հետո կենտրոնի զորասյան ջոկատներն անցան Ասկերանը հատող խճուղով եւ արագացրած մարշով շարունակեցին արշավել առաջ:

Հայերի զինված ուժերը, որոնք արդեն քաշվել էին ճանապարհամերձ գոտուց եւ ամրացել պաշտպանության երկրորդ գծի մատուցներում, հեռադիտակներով եւ հետախույզների միջոցով հետեւում էին թուրքական ուժերի առաջխաղացմանը: Կեսօրին թուրքերը գտնվում էին քաղաքից մոտ 7 կիլոմետր հեռավորության վրա, իսկ առաջապահ արդեն հասել էր քաղաքի պարիսպներին: Մի երկու ժամից հետո երեք զորասյուների հիմնական

<sup>63</sup> Դանիել Առաքելյանը մնացել էր Քյաթուկ գյուղում եւ չէր վերադարձել Աղդամ:

ուժերը կենտրոնացան «Սանգյար» կոչված ընդարձակ սարավանդի վրա, որ գտնվում էր Շուշուց դեպի արեւելք՝ մոտ մեկ եւ կես կիլոմետր հեռավորության վրա: Մինչ այդ, «Խանի-բաղ» կոչված վայրում, թուրքական աջ թեւի զորասյունից բաժանվելով, մի ուժեղ ջոկատ, բաղկացած 2-3 հարյուր ասկերներից, մտել էր արդեն Խանքենդի ավանը եւ տեղավորվել նրա զորանոցներում: Դա թուրքերի հետ Աղդամում կնքված «չենտվենական» համաձայնության առաջին խախտումն էր՝ զինված ուժ չմտցնել գյուղական շրջանները (թեպետեւ Խանքենդին գտնվում էր ճանապարհի գոտում): Սանգյարի վրա թուրքական զորամասերին ողջույնի բարձրագույն աղաղակներով դիմավորեցին քաղաքի մուսուլմանական բնակչության բազմաթիվ ներկայացուցիչներ՝ տաճկական դրոշակներ պարզած: Նրանք եկել էին առաջնորդելու թուրքական զորամասերին քաղաք:

Մուսուլմանական թաղի այն փողոցները, որոնցով պիտի անցնեին ասկերների ջոկատները, ծածկված էին թանկարժեք գորգերով, իսկ տների պատշգամբները եւ պատուհանները զարդարված էին թուրքական դրոշակներով, ամեն տեսակի եւ գույնի մեծարժեք կտորներով եւ այլեւայլ գորգերով ու կարպետներով:

Մուսուլմանական մասի նեղ փողոցների երկու կողմերում, տների կտուրների եւ պատշգամբների վրա, հավաքվել էին քաղաքի հարյուրավոր մուսուլման բնակիչներ: Երբ երեւացին ասկերների առաջին շարքերը, մուսուլման ամբոխը ալեկոծվեց եւ ծայրից ծայր բռնկվեց մի աննկարագրելի էնտուզիազմով... Նա իր հավատակիցներին եւ ցեղակիցներին դիմավորում էր գրկաբաց, ներքին բավականությունից հուրհրատող աչքերով եւ անվերջանալի ուրախ բացականչություններով եւ «յաշասուններով»...

Միանգամայն սառը եւ զուսպ վերաբերմունքի հանդիպեցին թուրքերը միայն հայերի կողմից: Եւ դա բնական էր...

\* \* \*

Հոկտեմբերի 7-ի գիշերը Աղդամից նոր վերադարձած Մուսայելյանի եւ Աշոտ Մելիք-Հովսեփյանի մասնակցությամբ կայացած կառավարության վերջին նիստում ընդունված որոշումների համաձայն, բոլոր շրջանների հրամանատարներին կարգադրվեց թուրքերը քաղաք մտնելուց հետո էլ ավելի ուժեղացնել եւ ամրացնել սահմանների պահպանությունը եւ զինված ուժերը միշտ պահել մարտական պատրաստ վիճակում: Խաչենի եւ Քարան-



դայի հրամանատարներին առաջարկվեց Շուշի-Ասկերան գծի վրա մշտական գաղտնի հսկողություն սահմանել եւ հետախուզությունների միջոցով իրազեկ լինել այդ գծի վրա տեղի ունեցող թուրքական զինված ուժերի շարժումներին:

Կառավարությունը պիտի մնար Շուշում: Միայն զինվորական եւ ներքին գործերի կառավարիչները հոկտեմբերի 8-ի առավոտյան մի խումբ հեծյալ մարտիկների հետ անցան գավառ: Քաղաքի զինված ուժերը պիտի մնային տեղում՝ պահելով զենքերը թաքստոցներում, հավանական խուզարկություններից ապահովելու համար:

## 17. ՕՍՄԱՆՑԻՆԵՐԻ ՔՍԱՆԵՐԿՈՒՐՅԱ ՕԿՈՒՊԱՑԻԱՆ ԵՒ ԶՈՐԱՊԱՐՊԸ ՇՈՒՇՈՒՑ

Թուրքերը Ղարաբաղ մտան նուրի փաշայի ուղիմատումից միայն տասնչորս օր անցնելուց հետո:

Ղարաբաղի կառավարության շահած այդ տասնչորս օրերը ավելի քան մեկ երրորդով կրճատեցին թուրքերի օկուպացիայի ժամանակամիջոցը Շուշում: Իսկ այդ, ինչպես շուտով կտեսնենք, խորտակեց թշնամու բացահայտ կամ քողարկված գաղանամիտ դիտավորությունները Ղարաբաղի հայությունից նկատմամբ:

\* \* \*

Երբ թուրքական ուժերը, մինչեւ քաղաք մտնելը, Սանգյարում եւ Շուշու բերդի հաստաբեստ պարիսպների տակ վաշտ առ վաշտ հավաքվում, համախմբվում էին ըստ առանձին մասերի եւ ստորաբաժանումների, քաղաքի մուսուլմանական մասի կոմենդանտ Հասան-Բասրի-բեյը Զամիլ-Ջայիդ-բեյի հրամանով քաղաքի հայկական մասից պահանջեց հանձնել զենքերը: Կառավարությունը նախորդ օրն արդեն գաղտնի կարգադրություն էր արել քաղաքի հայ բնակչությանը՝ թաքցնել զենքերը, իսկ թուրք հրամանատարության պահանջը բավարարելու համար կարգադրվեց պահեստում եղած հին «բերդան» սիստեմի հրացանները տանել, հանձնել կոմենդանտին: Հրացանները, սակայն, սայլին բարձելու ժամանակ քաղաքի հայ երիտասարդների մի խումբ հանկարծակի հարձակվեց սայլի վրա, գրավեց ամբողջ զենքը եւ անհետացրեց: Այդ դեպքին տեղեկանալուց հետո թուրքերն այլևս

անօգուտ համարեցին զենք պահանջել քաղաքի հայերից: Նրանք բավականացան հայտարարելով, որ զենք պահողները խստիվ կպատժվեն:

Մուսուլմանական մասում հարմար շենքեր չգտնելով՝ զորքերի տեղավորման համար<sup>64</sup>, թուրք հրամանատարությունը կարգադրեց գրավել հայկական մասի հարմարավետ շենքերը՝ ռեալական դպրոցի նոր շենքը, հայկական միջնակարգ Օրիորդաց դպրոցը, Ամբրուսյանների տունը եւ նախկին ռուսական զորանոցը՝ տեղավորելով այդ շենքերում սպայական կազմը եւ 1500-ի չափ ասկերների, որոնց թիվը հետագա մի քանի օրերում հասցվեց 2000-ի: Զորանոցի վերածված բոլոր շենքերն իրար հետ կապվեցին դաշտային հեռախոսային ցանցով<sup>65</sup>:

Երբ թուրքական զորքը պատրաստվում էր մտնել հայկական քաղաքամասը, Ղազանչեցոց եկեղեցի եկավ հրամանատար Զամիլ-Ջայիդ-բեյը եւ ընդունելով քահանաների մատուցած «աղուհացը», ասաց. «Մենք չենք մտել այս քաղաքը իբրեւ հայերի թշնամիներ, մենք խաղաղ բնակիչներին բերել ենք խաղաղություն, իսկ ապստամբներին՝ մահ»:

Այդ խոսքերից ընդամենը մի 24-25 օր առաջ Բաքվի 30 հազարից ավելի խաղաղ հայ բնակիչներին խողխողող եւ Արեւմտյան Հայաստանը ավերակների վերածող արյունարբու ելուզակների այդ ներկայացուցչի կեղծավոր խոսքերը ներկաների կողմից ընդունվեցին հեգնանքի եւ կատաղի ատելությունից հազիվ զսպված արտահայտություններով:

Ասկերներին հայկական մասում տեղավորելուց հետո թուրքերը չուզեցին գործ ունենալ Ղարաբաղի կառավարության հետ: Նրանք առաջարկեցին քաղաքի հայ բնակչությանն ընտրել վեց հոգուց բաղկացած մի ներկայացուցչական մարմին՝ թուրք հրամանատարության հետ կապ պահպանելու համար: Ընտրությանն, իհարկե, ժողովուրդը չմասնակցեց, այն կատարեցին քաղաքի մի խումբ «տուգերը»: Ընտրվածներն ամենքը պահպանողական եւ չափավոր տարրերից էին, այն հոսանքներին պատկանողնե-

<sup>64</sup> Առհասարակ բոլոր պետական, քաղաքային, հասարակական, կուլտուրական եւ այլ հիմնարկները Շուշում տեղավորված էին քաղաքի հայկական մասում: Մուսուլմանական մասում գտնվում էր միայն բանտը:

<sup>65</sup> 1918 թվին դպրոցները Ղարաբաղում չէին գործում: Օսմանցիները ռեալական դպրոցը վերածեցին զորանոցի եւ մասամբ՝ հիվանդանոցի: Նրանք ոչնչացրին դպրոցի արքիվը, աշակերտական գործերը եւ հարուստ գրադարանը: Նույն կատարվեց նաեւ Մալիա-Նուկայան օրիորդաց դպրոցի հետ:



րից, որոնք սովորություն ունենին թուրքական բարբարոսությունները հայության նկատմամբ թեթեամտորեն վերագրելու հայ հեղափոխական կազմակերպությունների գործունեությանը:

Անդրանիկի ներկայությունը Ջանգեզուրում շարունակում էր անհանգստություն պատճառել թուրք հրամանատարությանը: Քանի դեռ Անդրանիկը նստած էր Գորիսում իր հատուկ զորամասով, Սյունիքը պիտի անմատչելի մնար օսմանցիների համար. այդպես էր տրամաբանում թուրք հրամանատարությունը: Այդ պատճառով, քաղաքի հայկական մասում ամրանալուց հետո, թուրքերի առաջին գործը եղավ հայերի ներկայացուցչական մարմնից պահանջել շտապ պատվիրակություն ուղարկել Գորիս եւ թուրք հրամանատարության անունից առաջարկել Անդրանիկին՝ հեռանալ Ջանգեզուրից ուր կամենում է՝ խոստանալով արգելքներ չհարուցել նրա առաջ:

Անդրանիկը թուրքական հրամանատարության այդ անպատկառ պահանջին պատասխանեց նրանով, որ անմիջապես զորահավաքի կոչ ուղղեց Ջանգեզուրի հայությանը, եւ մի քանի օրից իր շուրջը ժողովեց մի քանի հազար լավ մարզված եւ կռիվներում կոփված մարտիկներ՝ իրենց զենքերով: Հրավիրեց գյուղացիական համագումար, որն ընդունեց Անդրանիկի առաջարկությունը՝ թուրքերի հարձակման դեպքում անցնել ակտիվ պաշտպանության, իսկ մինչ այդ կովոդներին պարենավորելու պատրաստություններ տեսնել եւ շտապ միջոցներ ձեռք առնել ամրացնելու հայկական շրջանների սահմանները բոլոր ուղղություններով կազմակերպելով աշալուրջ հսկողություն եւ հետախուզություն:

Օսմանցիները եւ նրանց գործակից Ադրբեջանի մուսավաթականները այնպես էին կարծում, թե թուրքական զինված ուժերի մուտքը Շուշի Սյունիքի հայության մեջ առաջ կբերի խուճապ, որի հետեւանքով Անդրանիկը կարող է զրկվել բնակչության պաշտպանությունից եւ ստիպված լինել հեռանալ Սյունիքի սահմաններից, որից հետո, կարծում էին, կհեշտանար թուրքերի համար Սյունիքի գավթումը: Բայց նրանք չարաչար սխալվում էին իրենց հաշիվների մեջ: Ոչ միայն Սյունիքը, այլեւ Ղարաբաղի գյուղացիությունը շենթարկվեց խուճապի, երբ թուրքերը Շուշի մտան: Հայկական զինված ջոկատները հետախուզության համար երբեմն հասնում էին մինչեւ քաղաքի պարիսպների տակ՝ խուճապ առաջ բերելով հենց իրենց՝ թուրքերի մեջ: Այդ ուժերը, եթե պետք լիներ, ամեն վայրկյան կարող էին ոչնչացնել խանքենդի ավանի զորանոցներում տեղավորված թուրքական զորամասը:

ու ճանապարհներին հսկող պահակախմբերը եւ, կրկին գրավելով Ասկերանը, կրակի օղակի մեջ առնել թուրքերին Շուշում<sup>66</sup>:

Դավառը երբեք անձնատուր չեղավ թուրքերին եւ չճանաչեց Ադրբեջանի իշխանությունը: Դա դեռեւս 1918 թվին էր, երբ թուրքական վտանգը զամոկյան սրի պես շարունակվում էր կախված մնալ հայության գլխին:

\* \* \*

Թուրք հրամանատարությունը հենց առաջին օրվանից քաղաքը հայտարարեց պատերազմական դրություն մեջ: Երեկոյան ժամը 8-ից հետո փողոց դուրս գալն արգելված էր: Զինք պահելու համար սահմանվեց մահվան պատիժ: Հայկական մասում թուրքերը կախեցին Սավադ անունով մի մանրավաճառ հայ երտասարդի՝ խանութում հրացան պահելու համար: Դրանից առաջ մուսուլմանական մասում նրանք կախել էին մեկ թե երկու տեղացի մուսուլմանների՝ «անկարգության համար»:

Ամբողջ օր ու գիշեր հայկական եւ մուսուլմանական մասում շրջում էին թուրքական պարեկները, հայկական մասում՝ ավելի ուժեղացված կազմով:

Պիտի խոստովանել, որ թուրք սպանների եւ ասկերների վերաբերմունքը հայ բնակչության եւ առանձնապես կանանց նկատմամբ զուսպ էր եւ նույնիսկ քաղաքավարի: Թուրքերը քաղաք էին բերել իրենց զորքերի համեմատաբար կարգապահ եւ կիրթ ստորաբաժանումներից: Նրանք քաղաք չմտցրին ադրբեջանական զինվորների, որովհետեւ նրանց վրա նայում էին արհամարհանքով:

Քաղաքի հայ բնակչության շրջանում շարունակում էր իշխել վհատ տրամադրությունը, որը սաստկանում էր պարենավորման ճգնաժամի սրվելով: Օսմանցիք քաղաք մտնելուց հետո հայ գյուղացիները դադարեցին հացահատիկ բերել քաղաք վաճառելու: Հացի գները արագ կերպով բարձրացան՝ 90 կոպեկից մինեւ 1,5-2 ռուբլի՝ մեկ ֆունտ (մոտավորապես 400 գրամ) հացի համար:

Դրամանիշների սովը ավելի էր ծանրացնում կացությունը: Թուրքերը սկզբում հայտարարեցին, որ երկրի կարիքների համար շուտով քաղաքը

<sup>66</sup> Իզուր չէ, որ Նուրի փաշան Շուշում եղած ժամանակ, ծանոթանալով ստեղծված իրադրությանը, ասել էր. «Ղարաբաղի ղեկավարները մեզ ճարպկորեն խաբեցին. նրանք նախ երկար ու բարակ ձգձգեցին բանակցությունները եւ ասպա, Շուշի թողնելով սահմանապակ ուժեր, բոլոր կողմերը շրջապատեցին մեզ»:



կստանա 8-10 միլիոն ռուբլի, բայց ոչինչ չստացվեց:

Քաղաքի չքավորության վիճակն անսահմանորեն դառնացավ:

Թուրքերը պահանջեցին հայերից մարդ ուղարկել գավառ՝ համոզելու գյուղացիությանը ճանաչելու Ադրբեջանի իշխանությունը: Բայց այդ նպատակով գավառ ուղարկված քահանաները հազիվ էին կարողացել գլուխներն ազատել վրդովված գյուղացիների ձեռքից:

Գավառի դրությունն սկսեց ավելի եւ ավելի անհանգստացնել ու երկյուղ ներշնչել թուրքերին: Այդ պատճառով նրանք ստիպված եղան իրենց ուժերի որոշ մասը Շուշուց տեղափոխել Խանքենդի՝ քաղաքում թողնելով միայն հազար ասկերներից քիչ ավելի: Խանքենդի ուղարկված ուժերը տեղում եղածների հետ պիտի ծառայեին իբրեւ առաջակալ՝ պաշտպանելու համար քաղաքը եւ Աղդամի հետ քաղաքը կապող խճուղին Խաչենի եւ Զրաբերդի զինված ուժերից, որոնց հետախուզական արշավները դեպի քաղաքի մոտակայքը եւ Ասկերան-Շուշի խճուղին սկսել էին ավելի աշխուժանալ:

Հոկտեմբերի 16-ին Շուշի եկավ Նուրի փաշան: Քաղաքի հայկական մասում սկսեցին լուրեր տարածվել, որ օսմանցիներն ինչ-որ նենգ ծրագրեր են որոճում քաղաքի հայերի դեմ՝ գավառի անհնազանդությունը վերագրելով շուշեցի հայերի սագրանքներին: Այդ լուրերը դրդեցին կառավարության նախագահ Իշխանյանին՝ գաղտնի նամակով շտապ քաղաք կանչել զինվորական գործերի կառավարչին: Նամակում ի միջի այլոց մատնանշվում էր հայկական քաղաքամասի այն զարտուղի մուտքերը, որոնք ազատ էին թուրքերի հսկողությունից:

Հոկտեմբերի 19-ին, գիշերվա մոտ, ծպտյալ քաղաք մտան զինվորական գործերի կառավարիչը եւ ներքին գործերի կառավարիչ Լեւոն Վարդապետյանը: Վերջինս, հակառակ զինվորական գործերի կառավարչի նախադրուշացման, գնաց իր տունը, իսկ զինվորական գործերի կառավարիչը՝ հայկական մասի խուլ անկյուններից մեկում ապրող բարեկամներից մեկի մոտ:

Հենց այդ գիշերը, լուսաբացին, քաղաքում սկսվեցին հայերի ձերբակալություններ: Բռնեցին կառավարության անդամներին եւ հայերից աչքի ընկնող մարդկանց, թվով մոտ 70 անձ: Ձերբակալվեց նաեւ ներքին գործերի կառավարիչ Լեւոն Վարդապետյանը: Զինվորական գործերի կառավարչին տանը չգտնելով՝ բանտ տարան նրա ծնողներին՝ Բահար եւ Գրիգոր Թու-

մյաններին<sup>67</sup>: Ձերբակալությունների սկզբում հայկական քաղաքամասի կոմիսարն անձամբ տեղեկացրեց զինվորական գործերի կառավարչին՝ սկսված ձերբակալությունների մասին եւ առաջարկեց շտապ փոխվել մի ուրիշ, ավելի անվտանգ տեղ: Կառավարիչը, ռեալական դպրոցի աշակերտի գլխարկ ծածկելով, շտապ դուրս եկավ փողոց՝ մտադրվելով թաքնվել իր մի այլ բարեկամի մոտ: Նա պիտի գնար մի կարճ եւ նեղ փողոցով ու ապա անցներ նրա հանդիպակաց մի ուրիշ նույնանման փողոց՝ կտրելով այդ երկու սակավամարդ փողոցները տրամախաչող լայն ճանապարհը: Կառավարչին առաջնորդող պատանին, որ գնում էր նրանից մի 15-20 քայլ առաջ, պիտի ազդանշաներ, եթե նկատեր մոտեցող թուրքական պարեկ կամ որեւէ կասկածելի մեկին: Պատանին հենց ոտ է դնում խաչմերուկում, նրա առաջ է դուրս գալիս աջ թեւի ուղղությամբ դանդաղ առաջացող թուրքական շրջիկ պարեկը: Տղան կորցնում է իրեն եւ, առանց ազդանշանելու, արագ կտրում, անցնում է մյուս փողոցը: Ասկերների մոտիկությունը հնարավորություն չի տալիս թաքնվելու զինվորական գործերի կառավարչին, որին հավանորեն նկատել էին թուրքերը: Կասկածի տեղիք չտալու համար, կառավարիչը հանգիստ քայլերով մոտենում է պարեկին եւ անխռով կանգ առնում խաչմերուկի մայթի վրա, սպասելով մինչեւ որ պարեկի 5-ական ասկերներից բաղկացած վեց շարքերն անցնեն: Պարեկի պետը, երեւի կարծելով, որ ռսկեփայլ կոկարդով երիտասարդը<sup>68</sup> ինչ-որ տեղական նշանավոր պաշտոնյա է կամ գուցե զինվորական, հրամայում է ասկերների վերջին երկու շարքերին կանգ առնել եւ նրան ճանապարհ տալ անցնելու փողոցի հակառակ կողմը: Կառավարիչը ձեռքով «շնորհակալության» նշան է անում թուրք սպային եւ անվրդով անցնելով ասկերների շարքերի միջով, քայլերն ուղղում է դեպի դիմացի նեղ փողոցը, ուր իրեն առաջնորդող պատանին, փողոցի մի անկյունում կծկված, գունաթափ, դիտում էր գաղտուկ, թե ինչով կվերջանա կառավարչի ակամա հանդիպումն օսմանցի ասկերների հետ... Եւ ինչքան մեծ եղավ պատանու զարմանքը եւ ուրախությունը, երբ զինվորական գործերի կառավարիչը բռնեց նրա թեւից եւ ասաց. «Գնանք, քանի ուշ չէ...»:

Անտարակույս, եթե Նուրի փաշան տեղեկանար, թե ում է անզգուշաբար

<sup>67</sup> Գրիգորին եւ Արշավիր Քամալյանին թուրքերը արգելափակեցին միեւնույն բանտախցում:

<sup>68</sup> Ռեալական դպրոցում սովորող աշակերտը հատուկ տարազային գլխարկի վրա կրում էր փայլուն պղնձից պատրաստված մեծ կոկարդ՝ դպրոցի անվան սկզբնատառերով:



բաց թողել ձեռքից թուրքական պահակախումբը, նա երեւի խստորեն կպատժեր նրա պետին՝ անփութության եւ անշրջահայացության համար:

Թուրքերը բոլոր ձերբակալվածներին փակեցին նախկին ռուսական բանտի նեղ, մութ ու կեղտոտ կամերաներում: Սկզբի օրերին թույլ չէր տրվում որեւէ հարաբերություն հարազատների հետ: Նրանց կերակրում էին վատ, զբոսանքի դուրս չէին բերում, կամերաներում օդափոխություն չէր կատարվում: Բանտում պաշտոնավարող մի թուրք սպա բանտարկված հայերից մեկին ասել էր. «Ձեզ շուտով կտանեն հարցաքննության: Եթե դուք ճիշտ ցուցմունքներ չտաք հայերի ունեցած զենքի քանակի մասին եւ շմատ-նանշեք, թե ովքեր են դրդում գյուղացիներին չճանաչելու Ադրբեջանի իշխանությունը, այն ժամանակ դուք ձեզ մեղադրեցեք...»:

Օսմանցիների վաղեմի սիրած մեթոդն էր՝ նվաճված ժողովուրդների ընդվզումները ճնշել՝ նախապես նրաց առաջնորդներին դավով ձերբակալելուց կամ ոչնչացնելուց հետո: Այդ մեթոդով օսմանցիք փորձեցին գործել նաեւ Ղարաբաղում, բայց հանդիպեցին անհաջողության: Ինչո՞ւ: Որովհետեւ ամենից առաջ ժամանակը գործում էր ի վնաս թուրքերի անդրկովկասյան ավանտյուրայի: Ապա, չի կարելի չնշել նաեւ, որ Ղարաբաղի հայությունը օսմանյան ճնշումներին երբեք չէր ենթարկվել եւ թուրքերից չէր վախենում: Քաղաքի հայրենասեր մտավորականությունը բռնելով եւ բանտ նետելով, գավառը դրանով անգլուխ չէր մնում. յուրաքանչյուր շրջան ուներ ժողովրդից ընտրված իր քաղաքացիական եւ զինվորական մարմինները: Շրջանների զինվորական ղեկավարները կապ էին պահում իրար հետ եւ խորհրդակցում թուրքերի հավանական ագրեսիային միացյալ ուժերով դիմադրելու համար:

Թուրքերը շուտով համոզվեցին, որ գավառը գործում է ինքնուրույն, եւ այն հնազանդեցնելու համար անօգուտ է քաղաքի հայ մտավորականներին ճնշումներին ենթարկել:

\* \* \*

Քաղաքի ձերբակալություններից մի քանի օր հետո, հոկտեմբերի 23-ին, Կարիազինոյի փաշան («կոմենդանտը») Շուշու թուրք հրամանատարության կարգադրությամբ պահանջեց Դիզակի շրջանից՝ ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Թուրքերը, այդպիսով, գավառը իրենց ենթարկելու փորձը սկսում էին Դիզակից, անտարակույս, նկատի ունենալով ամենից առաջ Դի-

զակի ռազմագիտական դիրքը: Եթե նրանք փորձեին, ինչպես մտադիր էին, հարձակվել Ջանգեզուր վրա, այդ դեպքում Դիզակի զինված ուժերը, օգտվելով սեփական շրջանի նպաստավոր տեղագրությունից, Վարանդայից եկած ուժերի հետ համատեղ, կարող էին իրենց դիվերսիոն գործողություններով սպառնալ ոչ միայն օսմանյան զորքերի կոմունիկացիաներին, այլեւ թիկունքին:

Դիզակն ուներ մի խիզախ, եռանդուն եւ փորձված հրամանատար՝ Լալայանը, որը միաժամանակ վարում էր Վարանդայի զինված ուժերի հրամանատարությունը: Նա ժամանակին մասնակցել էր պարսկական հեղափոխությանը՝ գործակցելով Եփրեմին: Մասնակցել էր նաեւ կամավորական շարժմանը՝ Անդրանիկի եւ Քեռու հետ:

Լալայանը պատասխանեց փաշային, որ Դիզակը երբեք գլուխ չի խոնարհել թշնամու առաջ, իսկ եթե փաշան վստահ է իր ուժերի վրա, թող փորձի զենքի ուժով նվաճել Դիզակը: Այդ պատասխանից մի քանի օր հետո Լալայանին տեղեկացրին Վարանդայից, որ օսմանցիները Շուշուց Վարանդայի վրայով դեպի Կարիազինո են շարժում մի զորամաս՝ բաղկացած 400 ասկերներից, «շնայդեր» սիստեմի մեկ թնդանոթով եւ մի քանի ձեռքի գնդացիներով: Զորամասին իբրեւ ուղեցույցներ առաջնորդում են ռուսական նախկին գավառապետ Խոսրով-բեկ Ֆուլատովը (ադրբեջանցի) եւ Ղարաբաղի ճանապարհներին քաջածանոթ, նախկին ցարական մի ծառայող: Զորամասը գործելու էր Կարիազինոյի փաշայի հրամանատարության տակ եւ տեղական ուժերի հետ փորձելու էր մտնել Դիզակ ու, հաջողության դեպքում, տեղավորվելու նրա կենտրոնի՝ Հադրութի զորանոցներում:

Լալայանը վճռում է թուրքական այդ զորամասը ոչնչացնել Վարանդայում, նախքան նրա Կարիազինո հասնելը: Զորամասն ինքնին մեծ ուժ չէր ներկայացնում, բայց Կարիազինո հասնելով, նրա ուժը պիտի տասնապատկվեր եւ դառնար չափազանց վտանգավոր ոչ միայն Դիզակի, այլեւ Վարանդայի համար: Լալայանը իր զինակիցներից մեկին՝ Դիզակի Կարմրակուճ գյուղացի Ասլանիկին, մի խիզախ եւ փորձված երիտասարդի, կարգադրում է Դիզակի եւ Վարանդայի զինված ուժերով ջարդել թուրքական ջոկատը:

Ասլանիկը երկու հարյուրից ավելի մարտիկներով մոտենում է Վարանդայի հայկական Մամնա գյուղին, որտեղ հանգստանում էին ասկերները: Տեղեկանալով, թե որ ճանապարհով է մտադիր շարժվել զորամասը, Ասլանիկը



իր մարտիկներով աննկատելիորեն բռնում է գյուղի հարավ-արեւելյան կողմում գտնվող ձորի երկու կողմերի բարձունքերը: Երբ ասկերների զորամասը մտնում է ձորով անցնող ճանապարհը, հանկարծ նրա վրա կարկուտի պես սկսում են գնդակներ տեղալ: Չնայած թուրքերի համար ստեղծված խիստ աննպաստ մարտական իրադրություն, այնուամենայնիվ, նրանք ցույց են տալիս համառ դիմադրություն: Կռիվը տեսնում է մինչեւ մութն ընկնելը: Ասլանիկը նոր օգնական ուժեր ստանալուց հետո միայն հաջողում է ջարդել զորամասը: Ասկերներից ազատվում են քչերը, որոնք Ֆուլատովի առաջնորդությամբ, օգտվելով մութից եւ ձորը նոր կոխած մառախուղից, կարողանում են մի կերպ գլուխներն ազատել: Դրանց հաջողվում է իրենց հետ տանել գնդացիները, իսկ թնդանոթն ընկնում է հայերի ձեռքը<sup>69</sup>:

Թուրքական հրամանատարությունը հայերին պատժելու համար մի գումարտակի չափ զորք ուղարկեց դեպի Վարանդա, բայց զորամասը Տրնավազ գյուղի մոտից վերադարձավ քաղաք, հայտնելով, որ հայերը տասնապատիկ ավելի մեծ ուժեր են կուտակել իրենց դեմ բռնելով շրջանի ռազմագիտական բոլոր կարեւոր կետերը: Թուրքերը պատրաստվում էին Աղզամից եւ Գանձակից զորքեր դուրս բերել Վարանդայի վրա հարձակվելու համար, բայց այդ, բարեբախտաբար, նրանց չհաջողվեց: Օսմանցիները Վարանդայում կրած ամոթալի պարտությունը ստիպված եղան կուլ տալ, որովհետեւ նրանք Շուշում երկար չմնացին: Ջամիլ-Ջայիդ-բեյը հոկտեմբերի 29-ին պահանջեց քաղաքի հայերից մարդ ուղարկել Վարանդա եւ համոզել վերադարձնելու թնդանոթը: Այդ միտիայով ուղարկված Տեր Կարապետ Վարդապետյանը, Գրիգոր Ղարազյոզյանը եւ Անուշավան Տեր-Միքայելյանը վերադարձան ձեռնունայն, հայտնելով, որ գյուղացիները ոչ միայն մերժել են վերադարձնել թնդանոթը, այլեւ իրենցից պահանջել են հայտնել թուրքերին, որ նրանք ինչքան շատ զորք եւ շատ թնդանոթներ ուղարկեն գավառ, դարձյալ հայ մարտիկները պատրաստ են առաջվա պես «դիմաւորելու» նրանց ուրախությամբ:

<sup>69</sup> Պատմաբան Լեոն Թուրքկան այդ զորամասի ջարդը իր մի լրագրական հոդվածում սխալմամբ վերագրել է վարանդեցի Սոկրատ-բեկ Մելիք-Շահնազարյանին, մինչդեռ վերջինս ոչ մի մասնակցություն չէր ունեցել: Սոկրատ բեկը վաղուց հեռացված էր Վարանդայի գինված ուժերի հրամանատարի պաշտոնից: Անգլիացիների օրոք նա դարձավ անգլիացիների լրտեսը եւ գործում էր ի վնաս Ղարաբաղի հայության շահերի:

\* \* \*

Հոկտեմբերի 26-ից թուրքերն սկսել էին բոլոր ձերբակալվածների հարցաքննությունը: Նրանք յուրաքանչյուրից պահանջում էին հայտնել հայերի մոտ եղած զենքի քանակը, այլեւ այն մարդկանց անունները, որոնք հորդորում են գավառին՝ չհնազանդվել Ադրբեջանին: Ոչ ոք, բնականաբար, չէր կարող թե՛ մեկ եւ թե՛ մյուս հարցին բավարար պատասխան տալ: Երբ ձերբակալված զինվորականներին սկսեցին շատ նեղել զենքի քանակության վերաբերյալ տեղեկություններ ստանալու, նրանք կամ ուռճացած թվեր էին ասում թուրքերին երկյուղ ներշնչելու նպատակով եւ կամ հայտնում էին, որ այդ թվերին տեղյակ է միայն զինվորական գործերի կառավարիչը՝ խրախուսվելով այն բանից, որ զինվորական գործերի կառավարիչը թուրքերի ձեռքը չէր ընկել:

Հարցաքննության ժամանակ թուրքերը խոշտանգել էին երկու հոգու՝ կառավարության նախագահ Իշխանյանին եւ իրավաբան Ստեփան Մանգինյանին, անկասկած, տեղական բեկերի թելադրանքով:

Հոկտեմբերի 28-ին հարազատներին թույլատրվեց տեսակցել բանտարկյալների հետ, իսկ հաջորդ օրը, անսպասելի կերպով, բանտից ազատ արձակվեցին բոլոր բանտարկյալները: Այդ օրը թուրքերը պահանջեցին հայերից 100 հազար ռուբլի: Շուշեցի հայ ունեւորներն ստիպված եղան այդ գումարը իրենց մեջ հավաքել եւ հանձնել: Օսմանցիները, սակայն, դրանով չբավականացան: Նրանք յուրաքանչյուր հայ ընտանիքից պահանջեցին նաեւ մի-մի ձեռք սպիտակեղեն եւ մեկական դուլ: Այդ էլ հավաքեցին ու հանձնեցին:

Չպիտի կարծել, որ թուրքերն այդ պահանջներով կամեցան հայերից մի տեսակ փոխհատուցում կորզել գավառում կորցրած իրենց 350-ից ավելի ասկերների արյան եւ կորցրած զենքի համար: Ոչ: Օսմանցի փաշան առհասարակ սովորություն ունի ամեն պատեհ առիթից օգտվելով՝ կողոպտել, կողոպտել անգամ սեփական ժողովրդին:

Թուրքերն իրենց հետ Շուշի էին բերել Խոսրով-բեկ Սուլթանովին եւ նշանակել նրան Ղարաբաղի գավառապետ՝ տալով մի հայ օգնական: Բայց որովհետեւ գավառը երբեք չենթարկվեց ո՛չ օսմանցիներին եւ ոչ էլ Ադրբեջանին, իսկ Շուշում իշխանությունը անբաժան կերպով իր ձեռքում էր պահում թուրքական հրամանատարությունը, այդ պատճառով Սուլթանովի գավառապետական իրավունքները վեր էին ածվել ֆիկցիայի: Նա Շուշում



անելիք չունենր, իսկ գավառ դուրս գալ չէր համարձակվում, որովհետեւ հայ գյուղացիները նրան իսկույն կհռչակեին: Սուլթանովը միայն 1919 թվին, անգլիացիների հովանավորությամբ եւ նրանց ակտիվ աջակցությամբ, դարձավ այս անգամ Ղարաբաղի նահանգապետ, թեպետեւ ո՛չ քաղաքի հայկական մասը, ո՛չ էլ գավառը դարձյալ չճանաչեց Ադրբեջանի իշխանությունը եւ Սուլթանովին՝ իբրեւ նահանգապետ: Դա տեւեց մինչեւ Ղարաբաղի հայության 7-րդ համագումարը: Այդ ծանր եւ երկարատեւ պայքարի մասին մենք հանգամանորեն խոսելու ենք այս աշխատության երկրորդ մասում:

\* \* \*

Օսմանյան կառավարության Անդրկովկասյան գլխավորապետական ներկայացուցիչ Աբդուլ-Քերիմ-փաշան դեռեւս 1918 թ. հոկտեմբերի 12-ին թե 13-ին Պոլսից հեռագիր էր ստացել՝ Անդրկովկասում գտնված թուրքական զինված ուժերը ետ քաշելու դեպի Բրեստի պայմանագրով որոշված սահմանագիծը: Դա բացատրվում էր մի կողմից՝ Թուրքիայի դաշնակից Գերմանիայի ժխտական դիրքով օսմանցիների Անդրկովկասյան ավանտյուրայի նկատմամբ, ապա՝ այն ծանր պարտություններով, որ կրում էր Թուրքիան համաշխարհային պատերազմի ճակատներում:

Սակայն Նուրի փաշան այդքան շուտ չենթարկվեց կ. Պոլսի կարգադրությանը: Թուրքական զինված ուժերը թե՛ Բաքվում եւ թե՛ Շուշում դեռ շարունակում էին մնալ իրենց տեղերում: Թուրքական հրամանատարությունը չէր կամենում Ադրբեջանը ձգել բախտի քմահաճույքին: Օսմանցիները տարված էին Ադրբեջանի սահմանների ընդարձակման եւ ապահովության հարցերը արագորեն լուծելու մտահոգությամբ եւ ապա միայն քաշվելու արելյան Անդրկովկասից: Այդ սահմանային հարցերի մեջ առաջնակարգ տեղ էր գրավում Լեռնային Ղարաբաղի եւ Զանգեզուրի հայաբնակ գավառները Ադրբեջանին կցելու հարցը:

Բայց օսմանցիներին այդ չհաջողվեց:

\* \* \*

Թուրքերն սկսեցին իրենց ուժերը մաս-մաս դուրս բերել Շուշուց եւ Խանքենդի ավանից, աշխատելով, որ զորքերի այդ տեղաշարժը հայերը չնկատեն: Հոկտեմբերի 29-ին նրանք Շուշում ունեին ընդամենը ոչ ավելի, քան 200 ասկերներ, որոնք, պարեկային խմբերի բաժանված, շարունակում էին զորապարտի քողարկման համար շրջել հայկական քաղաքամասի

գլխավոր փողոցներով: Իսկ Խանքենդի ավանում տեղավորված զորքերը, գիշերները, հայերից աննկատելիորեն, արդեն տեղափոխվել էին Աղդամ:

Ադրբեջանում գտնված թուրքական զորքերին փոխարինելու համար օսմանյան հրամանատարությունը զորահավաք հայտարարեց տեղական մահմեդական բնակչության շրջանում: Զինվորական ծառայության անսովոր լինելով մուսուլման բնակչությունը մեծ անբավականությամբ ընդունեց զորահավաքի կոչը: Օսմանցի սպաները եւ ասկերների ավագներն սկսեցին «ղարափափափավորներին» մեծ եռանդով վարժեցնել ռազմական գործին: Վարժեցման մեթոդները, սակայն, այնքան դաժան էին, որ ադրբեջանցի զինվորներից շատերը չդիմանալով՝ փախչում եւ թաքնվում էին իշխանություններից:

Հոկտեմբերի 29-ին Շուշու մուսուլման ինտելիգենցիայի նախաձեռնությամբ կազմակերպվեց բանկետ՝ «ի պատիվ Ղարաբաղի հայ գործիչներին»: Ներկա էին բանտից նոր ազատվածներից շատերը: Բանկետում առաջինը խոսեց Հասան-Բասրի-բեյը՝ Շուշու թուրքական մասի կոմենդանտը: Նա երկար ու բարակ գովեց «հայ ժողովրդի բարեմասնությունները», նրա «ազնվությունը, քաջությունն ու հայրենասիրությունը», համարեց «թյուրիմացության արդյունք» հայ գործիչների բանտարկությունը եւ ոմանց վրա կատարված բռնությունները, ու ցանկություն հայտնեց, որ այնուհետեւ եւս շարունակվեն բարի հարեւանական հարաբերությունները հայերի եւ տեղական մուսուլմանների միջեւ: Երկու ժողովուրդների համերաշխության նշանակության վերաբերյալ «տաք» ճառեր ասացին նաեւ քաղաքի մուսավաթականների ներկայացուցիչները:

Բանտի դաժան ռեժիմից նույն օրն ազատված Շուշու հայ մտավորականների առաջ կատարվող թուրք-ադրբեջանական այդ կեղծ ռեկոնստրուկցիայի պատճառը, մի երկու օր առաջ նրանց ծաղրուծանակի եւ խոշտանգումների ենթարկող մարդկանց կողմից, միանգամայն հասկանալի էր:

\* \* \*

1918 թ. սեպտեմբերին դաշնակիցներին անձնատուր էր եղել Բուլղարիան: Իսկ հոկտեմբերի երկրորդ կեսում թուրքական բանակը, մի շարք ջախջախիչ հարվածներ կրելուց հետո, վճռական պարտության էր մատնվել անգլո-ֆրանսիական միացյալ բանակների կողմից Միջագետքում, Սիրիայի եւ Պաղեստինի ճակատներում, Դարդանեղում եւ Մակեդոնական ճակատում:



Հոկտեմբերի 30-ին, Լեւոնոս կղզու Մուդրոս նավահանգստում, անգլիական «Ագամեմնոն» հաժանավի վրա, Անտանտի զորքերի հրամանատարության եւ սովթանական կառավարության միջեւ կնքվեց զինադադար, որի 11-րդ հոդվածը պարտավորեցնում է Թուրքիային անմիջապես դուրս բերել իր զորքերն Օսմանյան կայսրության արաբական մարզերից եւ Անդրկովկասի գրաված մասերից: Դաշնակից զորքերն իրավունք ունեին օկուպացիայի ենթարկելու Թուրքական զորքերից 1918 թվին գրավված Բաթումը եւ Բաքուն, այլեւ՝ հայկական վեց վիլայեթները, միայն «այն դեպքում, եթե նրանցից որեւէ մեկում անկարգություններ ծագեն»<sup>70</sup> (ընդգծումները մերն են - Հ. Թ.):

1918 թ. հոկտեմբերի 31-ից սկսվեց Թուրքական զորքերի պարպումն Անդրկովկասից: Միայն 1919 թ. ապրիլին Թուրքերը վերջնականապես մարբեցին նաեւ Կարսի շրջանը՝ մինեւ 1914 թ. սահմանը:

Զինադադարով պահանջվում էր գորացրել Թուրքական բանակը<sup>71</sup>: Օգտվելով դրանից՝ Ադրբեջանում մնացին եւ շարունակեցին նրա բանակը կազմակերպել եւ գլխավորել շատ Թուրքական սպաներ եւ ավագ զինվորներ՝ Նուրի, Քյազիմ եւ Խալիլ փաշաների գլխավորությամբ:

Թուրքերի հեռանալուց հետո Անդրկովկաս մտան անգլիացիները՝ ծառայած հայության բարեկամի դիմակի տակ:

(1960-1962 թթ.)

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԱՆԳԼԻԱՅԻՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

<sup>70</sup> Դաշնակիցներին եւ ամենից առաջ անգլիացիներին շատ լավ հայտնի էր, որ օսմանցիները հայկական վիլայեթներում այլեւս հայ չէին թողել, նրանց կամ կոտորել կամ քշել էին Արարիայի անապատները: Ուրեմն էլ ի՞նչ «անկարգությունների» մասին կարող էր խոսք լինել: Պարզ էր. դաշնակիցներին ձեռնտու չէր օկուպացնել հայկական նահանգները: Ծովերից հեռու եւ ցամաքային կանոնավոր ճանապարհներից դուրի, ավերված ու ամայի Արեւմտյան Հայաստանը ինչո՞վ կարող էր հրապուրել անգլիական գաղութային գիշատիչներին: Նրանց պետք էր նավթով հարուստ Բաքուն, Միջագետքը, նրանց պետք էր Բաթում-Բաքու երկաթուղին՝ Անդրկովկասյան երկրները գավթելու համար:

<sup>71</sup> Պիտի ասել, որ դաշնակիցները չպահանջեցին զորացրել Թուրքական ամբողջ բանակը, եւ նրանք այդ կատարեցին նախամտածված: Օրինակ, Արեւմտյան Հայաստանում չգորացրվեց 3-րդ բանակը, որը հետո զորավիգ դարձավ քեմալական շարժման:



## 1. ԱՆԴՐԱՆԻԿԸ ԳՐԱՎՈՒՄ Է ԶԱԲՈՒՂԸ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԱՐՇԱՎԵԼՈՒ ՇՈՒՇԻ

... Անգլիացիները մուսուլմանական աշխարհի հետ կապված չափազանց մեծ շահեր ունեն եւ երբեք չհավատաւ, որ Անգլիան կարող է պաշտպան կանգնել հայերին:

ԲԵՔՍՏՈՆ<sup>72</sup>

Օսմանյան թուրքերի հավանական ագրեսիային հակահարված տալու համար Անդրանիկը կարգի էր բերում Զանգեզուրում հավաքագրած ուժերը՝ բաժանելով նրանց վաշտերի, գումարտակների եւ գնդերի:

Ապահովության համար որոշվեց ռազմամթերք եւ զինվորական այլեւայլ պիտույքները, որոնք կուտակված էին Գորիսում եւ շրջակա գյուղերում, անհրաժեշտության դեպքում տեղափոխել Սիսիան, որը թիկունքում գտնվելով, ավելի ապահով էր եւ իր բնական ամրություններով ավելի դժվարամատույց, քան Գորիսի շրջանը:

Անդրանիկն զբաղված էր հիշյալ պատրաստություններով, երբ լուր ստացվեց Ղարաբաղից, որ թուրքերը Շուշուց դուրս են բերել եւ Աղզամ տեղափոխել իրենց հիմնական ուժերը, թողնելով միայն մանր-մունր զորախմբեր՝ ցրված Ղարաբաղի շրջակա մուսուլմանական բնակավայրերում: Անդրանիկին խնդրում էին իր զորամասով շտապ անցնել Ղարաբաղ, ու միանա-

<sup>72</sup> Անգլիայի Համայնքների պալատի անդամ: Բնարանը (էպիգրաֆ) քաղված է 1914-1918 թվերի Համաշխարհային պատերազմի նախօրյակին բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ Բեքստոնի ունեցած զրույցից: Տես՝ ՀՍՍՌ Պետական պատմական կենտրոնական արխիվի ֆոնդ 223, գործ 72, թ. 27:



լով տեղական մեծաթիվ զինված ուժերին, ամրանալ այնտեղ՝ Ղարաբաղը եւ Սյունիքը Ադրբեջանի նվաճողական նկրտումներից ապահովելու համար:

Թուրքերի հեռանալու մասին Ղարաբաղից ստացված լուրերը հաստատվեցին նաեւ այլ, ավելի հավաստի աղբյուրներից:

Անդրանիկն իսկույն զինվորական խորհրդի նիստ գումարեց՝ հրավիրելով նիստին նաեւ Շուշու շարաքաստիկ գնդի հրամանատար գեղապետ Միքայել Մելիք-Շահնազարյանին եւ զարաբաղցի մի շարք այլ սպաների՝ իմանալու նրանց կարծիքը դեպի Ղարաբաղ արշավելու նպատակահարմարության մասին: Բոլորը միաբերան հավանություն հայտնեցին եւ խնդրեցին Անդրանիկին որքան կարելի է շուտ սկսել գործողությունները՝ հայտարարելով, որ զարաբաղցի սպաներն իրենց գնում են Անդրանիկի տրամադրության տակ, միշտ պատրաստ կատարելու նրա բոլոր հրամանները:

Անդրանիկն արշավանքի բոլոր նախապատրաստական աշխատանքներն ավարտեց 1918 թ. նոյեմբերի 28-ին (ն. տ.), իսկ նոյեմբերի 29-ի վաղ առավոտյան սկսվեց հարձակումը Ջաբուղի ձորի ուղղությամբ: Մարտիկների շղթաները, չհանդիպելով լուրջ դիմադրության, արագ թռիչքներով մտան ձորը եւ բռնեցին Ագարա գետի աջափնյա պաշտպանական բլուրները եւ ժայռերը: Թշնամին գործողությունների հենց սկզբից հասկացավ, որ Անդրանիկը մտադրություն ունի գրավել Ջաբուղի ձորը եւ դեպի Շուշի տանող խճուղին ազատել թուրք-ադրբեջանական ուժերի հսկողությունից: Անհուսալի համարելով գետի աջափնյա դիրքերի պաշտպանությունը, հակառակորդը քաշել էր այդտեղից իր ուժերը եւ ամրացել ձախափնյա բարձունքներում, որտեղից սկսեց հրացանային եւ գնդացրային ուժեղ կրակ տեղալ հայերի գրաված դիրքերի վրա:

Կեսօրվա մոտ քրդական բազմաթիվ ուժեր, ձիավոր եւ հետեւակ, Սուլթան-բեկ Սուլթանովի ղեկավարությամբ դիրքեր գրավեցին գետի վերին հոսանքի շրջանում Ավդալար-Լաչինի անառիկ լեռնալանջերին, Մարքիզի բարձունքների վրա, պաշտպանելու «Քուրդիստանի» մատույցները եւ խճուղու այդ շրջանով անցնող ուղեծրաւ:

Նոյեմբերի 29-ի ամբողջ օրն անցավ գետի աջ եւ ձախ ափերի բնագծերում եւ Ջաբուղի հովտում ամրացած երկու հակառակորդ կողմերի միջեւ տեղի ունեցող փոխհրաձգությամբ եւ հետախուզական բախումներով:

Նոյեմբերի 30-ի վաղ լուսաբացին Անդրանիկի «Հատուկ հարվածող զորամասի» հեծելազորի ջոկատները Ջաբուղի ձորում ամրացած հայ մար-

տիկների եռանդուն փոխգործողություններով սրարշավ անցան Ագարա գետը եւ ապա ճեղքելով թշնամու ձախափնյա պաշտպանության գիծը՝ արագ ու վճռական գործողություններով սկսեցին թեւանցել հակառակորդին, որը հանկարծակիի գալով, կարճատեւ հուսահատական դիմադրությունից հետո, սկսեց խուճապահար նահանջել գետի հովտով եւ լեռնալանջերով դեպի հարավ թողնելով մեծ թվով սպանվածներ եւ վիրավորներ: Չորում գործող հայկական ուժերը հնարավորություն ստացան գրավելու Ջաբուղի կամուրջը: Նրանց մի մասը բռնեց քիչ առաջ թշնամու լքած ձախափնյա դիրքերը, իսկ մի մասն էլ հրաման ստացավ միանալու թիկունքից նոր հասած ջոկատներին եւ արագորեն առաջանալու խճուղով եւ նրա աջ եւ ձախ կողմերի լեռնալանջերով դեպի Ավդալար-Լաչին-Մարքիզ գիծը, որտեղ ամրացած քրդերն սկսել էին ուժեղ դիմադրություն ցույց տալ հայկական հեծյալ ջոկատների կատաղի գրոհներին:

Ջաբուղի ձորը եւ կամուրջը հակառակորդի ուժերից մաքրելուց հետո, Անդրանիկը մի խումբ սպաների ուղեկցությամբ անցավ Ջաբուղը եւ, բարձրանալով դեպի քրդական ճակատը, տեղավորվեց ճակատի մոտ գտնվող մի փոքր սարավանդի վրա, ու, կանգնած ամբողջ հասակով, այդտեղից սկսեց ղեկավարել մարտերը՝ ակնդետ հետեւելով նրանց ընթացքին: Քիչ անց թշնամու դիրքերից նկատեցին Անդրանիկին եւ, հավանորեն, ինչ-որ նշաններից կռահելով նրա ուղիքը, կրակեցին... Գնդակը սակայն վրիպեց եւ մահացու կերպով խոցեց Անդրանիկին կողք-կողքի կանգնած կապիտան Ստեփան Սարգսյանին, որը տեղնուտեղը մահացավ<sup>73</sup>: Սպաների թախանձանքով Անդրանիկը փոխադրվեց ապահով տեղ: Սարգսյանի կորուստը նրան խորապես վշտացրեց<sup>74</sup>:

<sup>73</sup> Ստեփան Սարգսյանը, որը հայտնի էր Ստեսար կեղծանունով, բնիկ զարաբաղցի էր: Նա միջնակարգ կրթություն ստացել էր Գեղարքյան ճեմարանում, իսկ բարձրագույնը՝ Պետերբուրգի գյուղատնտեսական ինստիտուտում: Սարգսյանը երկար ժամանակ աշխատակցել էր Թիֆլիսի եւ Շուշու հայկական թերթերին՝ Ստեսար ստորագրությամբ: Նա իր համեստ եւ ազնիվ բնավորությամբ, իր անձնվեր հայրենասիրությամբ ու քաջությամբ հարգված ու սիրված էր ամենքի կողմից:

<sup>74</sup> Անդրանիկի՝ բազմաթիվ հերոսական սխրագործությունների ղեպքերով հարուստ կյանքի մի քանի այդպիսի բախտավոր դիպվածներն առիթ էին ծառայել հյուսելու նրա «անխոցելիության» լեգենդը, որը հավանորեն ծագելով իր զինակիցների շրջանում, այնուհետեւ տարածվել էր հայ ժողովրդի մեջ եւ նույնիսկ անցել հարեւան ժողովուրդներին՝ Թուրքերին, քրդերին եւ ռուսներին: Պատմում են, օրինակ, այսպիսի մի գեպ: Երբ 1917 թվին



Նրբ քրդերի դեմ կռվի մեջ մտան Զանգեզուրից նոր եկած հետեւակ եւ հեծյալ օժանդակ ուժերը՝ միացած ձորի կռվողների հետ, քրդերն այլեւս կորցրին Մարքիզը իրենց ձեռքում պահելու վերջին հույսերը: Նույնների 30-ի երեկոյան, դեռ մութը չկոխած, հայ մարտիկները գրոհով վերցրին Ավդալարը: Դա ստիպեց Սուլթան-բեկ Սուլթանովին անձնատուր լինել: Նա բանագնացներ ուղարկեց Անդրանիկի մոտ եւ հաշտութիւն խնդրեց. «Քո հեծյալ ջոկատների նժույգների սմբակների տակ տրորվեցին մեր անառիկ դիրքերը եւ նրանց քաջ պաշտպանները, - գրում էր Սուլթան-բեկը Անդրանիկին: - Քուրդիստանի մատուցներն այժմ քո ձեռքումն են, քո ձեռքումն են նաեւ Զաքուղի անմատչելի դիրքերը. ճանապարհը դեպի Շուշի այլեւս բաց է քո առաջ: Տա՛ր քո անպարտելի մարտիկներին ուր կամենում ես, միայն թե, խնդրում եմ, ձեռք չտալ Քուրդիստանին»: Անդրանիկը բանագնացներին պատասխանեց, որ նպատակ չունի հարձակվելու «Քուրդիստանի» վրա, այլ կամենում է, որ քրդերը դադարեն Ադրբեջանի եւ օսմանյան թուրքերի ձեռքում գործիք ծառայել հայերի դեմ եւ չփակեն այլեւս Գորիս-Շուշի ճանապարհը հայերի առաջ:

Անդրանիկն այդ օրը գիշերեց Ավդալարում, պատրաստվելով հաջորդ օրը՝ դեկտեմբերի 1-ին արշավելու դեպի Շուշի:

## 2. ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԳԵԼՈՒՄ Է ԱՆԴՐԱՆԻԿԻՆ ՄՏՆԵԼ ՂԱՐԱԲԱՂ

Բայց մի անակնկալ դեպք, որը վճռական նշանակություն ունեցավ Ղարաբաղի ամբողջ հետագա ճակատագրի համար, խանգարեց հայ ժողովրդի

Անդրանիկը գտնվում էր Հյուսիսային Կովկասի Արմավիր քաղաքում, նրան այցելության են գալիս Դոնի կոզակներ, որոնք առաջին համաշխարհային պատերազմում, Կովկասյան ճակատում, Անդրանիկի կամավորական ջոկատների հետ մասնակցել էին թուրքերի դեմ մղված կռիվներին: Կոզակները հենց որ տեսնում են Անդրանիկին, լռքում են նրա առաջ, համբուրում հագուստի փեշերը եւ խոր գլուխ տալիս: Նրբ արմավիրցի ռուսները հարցնում են, թե ինչն ստիպեց նրանց այդ ձեռով տեսակցել մի հայ զինվորականի հետ, դրան կոզակները պատասխանում են. «Անդրանիկը ոչ միայն հերոս է, այլեւ սուրբ մարդ է. պատերազմի ահեղ մարտերում, երբ նա սուրը մերկացրած սլանում էր իր նժույգի վրա դեպի թշնամին, նրա վրա կարկուտի պես գնդակներ էին տեղում, բայց ապարդյուն, ոչ մեկը նրան չէր խոցում ...»:

քաջամարտիկ հերոսին, իր երկօրյա լարված հաղթական մարտերից եւ զգալի մարդկային կորուստներից հետո, մուտք գործել Ղարաբաղ:

1918 թվի դեկտեմբերի 1-ին, երբ Անդրանիկը եռանդուն պատրաստութիւնների մեջ էր՝ իր մարտիկների ջոկատով դեպի Շուշի սլանալու համար, Շուշուց ուղարկված մի տարեց ձիավոր հայ, շտապ ծոցից հանելով մի ծրար, հանձնեց Անդրանիկին: Դա Շուշու նախկին քաղաքագլուխ Գերասիմ Մելիք-Շահնազարյանի անունով Բաքվից ստացված հեռագիր էր՝ ոմն անգլիական գեներալ-մայոր Թոմսոնի ստորագրությամբ, որն իրեն համարում էր Անդրկովկասի անգլիական զորքերի հրամանատար:

Հեռագրի մեջ Մելիք-Շահնազարյանից պահանջվում էր անհապաղ հայտնել Անդրանիկին դադարեցնել անմիջապես զորաշարժը դեպի Շուշի՝ մինչեւ Թոմսոնի Բաքվից ուղարկված զինվորական ներկայացուցիչների գալը Անդրանիկի մոտ:

Հեռագիրն Անդրանիկի եւ նրա զինակիցների մեջ առաջ բերեց կատաղի դայրույթ: Ղարաբաղցի սպաներն առաջարկեցին չհավատալ հեռագրին, կասկած հայտնելով, որ այն սարքված է Ադրբեջանի կառավարության կողմից՝ խափանելու Անդրանիկի մուտքը Ղարաբաղ եւ պահանջեցին շարունակել զորաշարժը դեպի Շուշի: Բայց հեռագրում բերված սպառնալիքը, թե՛ «... զորաշարժի դադարեցման պահանջը չկատարելու դեպքում հայերի գործողությունները կդիտվեն իբրեւ թշնամական ակտ Մեծ Բրիտանիայի կայսրության դեմ», ստիպեց Անդրանիկին ավելի զգույշ լինել եւ որոշ ժամանակ սպասել Ավդալարում անգլիական ներկայացուցիչների գալուն:

\* \* \*

Անգլիացիների մուտքն Անդրկովկաս առանձին խանդավառությամբ ընդունվեց հայերի կողմից: Եւ դա հասկանալի էր: Կարծում էին, որ կենտրոնական պետությունների դեմ դաշնակիցների տարած վճռական հաղթանակով ապահովվում էր հայության մնացորդների ֆիզիկական գոյությունը կոտորածների վտանգից: Բացի դրանից, հուսալի հեռանկարներ էին բացվում շարաքաստիկ «Հայկական հարցի» լուծման համար:

Ղարաբաղի հայության եւ առանձնապես նրա մտավորականության կողմից նույնպես անգլիացիների երեւալը Բաքվում ընդունվեց խորին բավականությամբ: Հույսեր էին տածում, թե անգլիացիների գալով կվերանա թուրքական վտանգը, որ՝ Ղարաբաղը կազատվի կղզիացումից, որ՝ կբաց-



վեն եւ անվտանգ կդառնան ճանապարհները, կվերսկսվեն բարիգրացիական հարաբերությունները հարեւան մուսուլմանների հետ, երկրում կհաստատվի կայուն խաղաղություն, ժողովրդի պարենային ծանր վիճակը կթեթեւանա եւ, վերջապես, Ղարաբաղի՝ Հայաստանին վերամիավորվելու հարցը կլուծվի դրականորեն:

Սակայն քչերը գտնվեցին, որոնք տակավին չէին մոռացել պատմության ու մոտիկ անցյալի դասերը եւ քաղաքական իրադրության մեջ տեղի ունեցած այդ առերեւոյթ նպաստավոր փոփոխությունը գնահատեցին ավելի զգաստ:

Անգլիացիները չէին, որ դեռեւս 18-րդ դարից սկսած հենարան էին դարձել օսմանյան անարգ բռնակալությանը ու թուրքական լծի տակ հեծող մանր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի կատաղի թշնամին: Այդ դեռեւս անցյալում: Իսկ վերջին ամիսներում անգլիացիները չէին, որ գավով ու խաբեութեամբ տապալել տվին Շահումյանի կառավարությունը եւ այդպիսով նպաստեցին Բաքվի անկմանն ու տեղական հայերի կոտորածին: Այդ նույն անգլիացիներն էին 1918 թվի սեպտեմբերի 20-ի ոճրագործության հեղինակները: Իսկ Անդրանիկի արշավը դեպի Ղարաբաղ կասեցնելու համար Բաքվի անգլիական հրամանատարության հեռագիրը չէր ապացուցում արդյոք, որ անգլիացի ծովահենները Բաքու մուտք գործելու առաջին իսկ վայրկյանից ստանձնել են այդ երկրի ռեակցիոն բեկական-կալվածատիրական կառավարության նվաճողական հավակնությունների հովանավորությունը ընդդեմ Ղարաբաղի բազմատանջ հայության, դառնալով այսպիսով օսմանյան թուրքերի քաղաքականության հետեւողական շարունակողներն Ադրբեջանում: Գիտակցելով այդ ամենը՝ միթե կարող էր լավ բան սպասել Ղարաբաղը խորամանկ Ալեքոնի ներկայացուցիչների մոտքից: Իհարկե, ո՛չ: Եւ Ղարաբաղի գործիչներից ավելի զգոն տարրերը անհրաժեշտ համարեցին առնել իսկույն Մելիք-Շահնազարյանի ձեռքից անգլիական հրամանատարության հեռագիրը, որպեսզի նա չկարողանա այն ուղարկել Անդրանիկին: Բայց, ինչպես տեսանք, այդ չէր հաջողվել. Մելիք Շահնազարյանը կարողացել էր շտապ մարդ գտնել ու հեռագիրն արագ տեղ հասցնել: Նույն մարդիկ միաժամանակ ուռաջարկեցին «ժողովրդական կառավարության» նախագահ Իշխանյանին՝ անհապաղ հանդես գալ ժողովրդին ուղղված մի դեկլարացիայով, թե Ղարաբաղի կառավարությունը վերստին անցնում է իշխանության գլուխ եւ վերսկսում է իր ժամանակավո-

րապես ընդհատված աշխատանքը, թե՛ ձեռնարկված է շտապ հրավիրելու ժողովրդական համագումար՝ նոր կառավարություն կազմելու համար:

«Ժողովրդական կառավարության» անմիջապես իշխանության գլուխ անցնելու կենսական անհրաժեշտությունը հանգամանորեն պատճառաբանվեց եւ հիմնավորվեց Շուշու «Ապառաժ» թերթի 1918 թ. դեկտեմբերյան մի շարք համարներում:

Կրկին իշխանության գլուխ անցած Ղարաբաղի կառավարության առաջին գործնական քայլն այն պիտի լիներ, որ նա արագ միջոցներ պիտի ձեռք առներ՝ Ղարաբաղի զինված ուժերով բռնելու Ասկերանը՝ արգելելու համար ադրբեջանական եւ այլ թշնամի ուժերի մուտքը Ղարաբաղ:

Կասկածից միանգամայն դուրս է, որ անգլիական հրամանատարության մուսուլմանասեր քաղաքականության վտանգը Ղարաբաղի նկատմամբ չեզոքացնելու միակ խելացի միջոցառումն այն կարող էր լինել, որ Ասկերանում հայերի հետ առաջին իսկ հանդիպման ժամանակ անգլիական հրամանատարության ներկայացուցիչները տեսնեին Ղարաբաղում պատկառելի կազմակերպվածությունը եւ ժողովրդի ինքնորոշման իրավունքը պաշտպանելու իրական ուժ եւ աներեր վճռականություն:

Սակայն կույր հավատը եւ վստահությունն անգլիական օկուպանտների նկատմամբ դարձրել էին մարդկանց թուլամորթ, անհեռատես եւ անվճռական, ջլատել էին իրադրությունը ճիշտ հասկանալու եւ գնահատելու կարողությունը:

\* \* \*

Անգլիական հրամանատարությունը Անդրանիկին երկար սպասել չտվեց: Դեկտեմբերի 2-ին Թոմսոնի կողմից Բաքվից ուղարկված երկու անգլիական սպաները հասան Շուշի՝ ընդունվելով հայ բնակիչներից ուրախության անկեղծ ցույցերով: Նրանք կարճատես հանգստից հետո շարունակեցին իրենց ճանապարհը Ավդալար:

Անդրանիկն անգլիացի սպաներին ընդունեց զուսպ զայրույթով եւ շատ սառը: Նա հայտնեց իր զարմանքը, որ ստիպում են իրեն կրկին վերադառնալ Գորիս, մինչդեռ ինքը գտնվում է Հայաստանի տերիտորիայում եւ հետեւապես ազատ է շարժվելու ուր կամենա: Նա հատկապես վշտացած էր այն բանից, որ իրեն վերադառնալ ստիպողները հայերի «դաշնակից» համարված անգլիացիներն են:



Սպաններն իրավունք չհամարեցին, ավելի ճիշտ, չհամարձակվեցին պատասխանել Անդրանիկին՝ տեսնելով նրա գայրույթից հուրհրատող սպանալից աչքերը, այլ, կեղծ ակնածանքով, հանձնեցին նրան Թոմսոնի նամակը:

Նամակում դաշնակից բարձր հրամանատարության անունից պահանջվում էր դադարեցնել զորաշարժը դեպի Շուշի եւ վերադառնալ Գորիս: Այնուհետեւ, գրեթե բառացի, կրկնվում էր նույն սպառնալիքը, ինչ ասված էր նախորդ օրն ստացած հեռագրում, եթե Անդրանիկը հրաժարվեր կատարել Թոմսոնի պահանջը:

Անդրանիկը տեղի տվեց եւ զորամասով վերադարձավ Գորիս՝ կատարելով այդպիսով ճակատագրական մեծ սխալ:

Մի քանի օրից հետո կրկին Անդրանիկի մոտ եկան Թոմսոնից ուղարկված երկու կապիտաններ՝ մի անգլիացի եւ մի ֆրանսիացի:

Այս անգամ Թոմսոնը պահանջում էր Անդրանիկից՝ հորդորել Ղարաբաղի հայերին «դադարեցնելու ռազմական գործողությունները մուսուլմանների դեմ», չնայած որ այդպիսի գործողություններ առհասարակ տեղի չէին ունենում հայերի կողմից, մանավանդ՝ օսմանյան թուրքերի քաշվելուց հետո:

Միանգամայն պարզ էր, որ Ադրբեջանի ղեկավարները պրովոկացիոն լուրեր էին տարածել հայերի մասին, թե Ղարաբաղում անիշխանություն է, եւ հայերն իբրեւ թե ակտիվ կռիվներ են մղում ադրբեջանցիների դեմ, իսկ Թոմսոնը չէր բարեհաճել նախապես ստուգել իրողությունը՝ հավատ ընծայելով ադրբեջանցիների սուտ հավաստիացումներին:

Ադրբեջանի կալվածատերերի այդ ճարպիկ դավերը հայերի դեմ կատարվում էին մի նպատակով՝ հետագայում արդարացնելու արդեն նախապատրաստվող հարձակումները հայկական բնակավայրերի վրա:

Անգլիական խորամանկ գեներալին այս անգամ էլ հաջողվեց իր կամքը թելադրել Անդրանիկին, որը կազմեց եւ Գորիսի տպարանում տպագրել տվեց հետեւյալ հրամանը, որը հետո տարածվեց Ղարաբաղում<sup>75</sup>:

«Հայկական հատուկ հարվածող զորամասի պետ

նո. 640, 1918թ.

Գեներալ Անդրանիկի հրամանը

<sup>75</sup> Ջետեղում ենք անփոփոխ, իսկականից մեքենագրած օրինակից, որ պահվել էր ընկեր Արշավիր Քամալյանի մոտ - Հ. Թ.

Վարանդայի, Դիզակի, Խաչենի եւ Ջիվանշիրի զինվորական հրամանատարներին, բոլոր կոմիսարներին եւ հայ ազգաբնակչությանը.

Այս հրամանը ստանալուն պես անհապաղ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները թյուրքերի եւ տաճիկների դեմ: Դաշնակիցները մեզանից պահանջում են անհապաղ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները: Ինձ մոտ են եկել անգլիական եւ ֆրանսիական մի-մի կապիտան եւ հայտարարել են, որ արդեն որոշված է կովկասում յիշույալ տեղի պատերազմելու: Տաճիկական զորքերը պետք է հեռանան: Բաքուն եւ Բաթումը գտնվում են անգլիացիների ձեռքում, եւ նրանք շարժվում են դեպի Թիֆլիս: Բոլոր հարցերը պետք է որոշվեն խաղաղարար կոնգրեսում: Դաշնակիցների ներկայացուցիչների ձեռքով ինձ հանձնված նամակի մեջ անգլիական գլխավոր հրամանատար Թոմսոնն զգուշացնում է, որ այսուհետեւ ամեն թշնամական գործողություն կարող է վատ անդրադառնալ հայկական հարցի լուծման վրա:

Գեներալ-մայոր ԱնԴՐԱՆԻԿ»

### 3. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀՐՈՍԱԿՆԵՐՆ ՍԿՍՈՒՄ ԵՆ ԱՆՊԱՏԻԺ ԱՎԵՐԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐԸ

Անդրանիկի՝ Ղարաբաղ անցնելու արգելքը եւ ապա նրա հրամանը, բնականաբար, չէր կարող բացասաբար շանդրադառնալ Ղարաբաղի հայ բնակչության տրամադրության վրա:

Հիասթափությունը փոխվեց հուսահատության, երբ Ադրբեջանը, անգլիացիների միջոցով Անդրանիկի մոտքը Շուշի ձախողելուց հետո, իր իշխանությունը Ղարաբաղի վրա տարածելու համար բոլորովին ազատ համարեց իր ձեռքերը դիմելու տեղորի եւ ջարդերի քաղաքականության:

Անդրանիկի հրամանը Ղարաբաղում տարածվելուց հետո, Կարիազինոյի, Ջերբայի, Թարթարի եւ Ղարաբաղի սահմանակից այլ վայրերի մուսուլմանները Ադրբեջանում ապաստան գտած թալեաթական սպանների ղեկավարությամբ սկսեցին կատաղի արշավանքներ գործել հայկական գյուղերի վրա՝ թալանելով եւ կոտորածի ենթարկելով բնակիչներին:

1919 թվականի հունվարի սկզբներին Շուշում կազմված Ղարաբաղի ժամանակավոր Ազգային խորհուրդը նույն ամսի 12-ին այդ վայրագությունների առթիվ անգլիական հրամանատարությանն ուղղած գրության մեջ հայտնում էր. «... Առաջին անգլիական միսիայի (Շուշի) գալուց հետո Բաքվում գտնվող դաշնակից զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնը



հրամանով բոլոր ռազմական գործողությունները մեր (հայերի) կողմից դադարեցվեցին, ինչպես այդ մասին շատ անգամ բանավոր հայտնված է ձեռք: Մինչդեռ Ադրբեջանի զորքերը կազմակերպված բանդաների հետ միասին մինչև օրս շարունակում են կործանել հայկական գյուղերը, սպանել անպաշտպան հայերի, բռնաբարել կանանց, քշել անասունները եւ թալանել հայ գյուղերի ունեցվածքը: Բրիտանական միսիայի Շուշի գալուց հետո<sup>76</sup>, 1918թ. դեկտեմբերի 22-ին եւ 23-ին Ալիանլու գյուղի մուսուլմանները հարձակվեցին Արփա-Գյաղուկ, Թեզիսարաբ, Սպիտակ-շեն, Պետրոսաշեն եւ Խծաբերդ գյուղերի վրա՝ ավերելով եւ կողոպուտի ենթարկելով դրանք: Այդ հարձակումների ժամանակ սպանվեցին 30-ի շուրջ հայ գյուղացիներ: Դեկտեմբերի 22-ին Ղաջար գյուղի մուսուլմանները հարձակվեցին Մաշադիքենդ գյուղի վարուցանքով զբաղված հայ գյուղացիների վրա, սպանեցին երկուսին եւ քշեցին անասունները: Դեկտեմբերի 24-ին Յաղաքենդ գյուղի մուսուլմանները հարձակվեցին հայկական Սոս գյուղի վրա եւ քշեցին 2 ձի եւ 4 գոմեշ:

1919 թ. հունվարի 2-ին ալիանլուցի մուսուլմանները կրկին հարձակում գործեցին Խծաբերդի վրա, սպանեցին երկու հայերի, վիրավորեցին շատերին, հրդեհեցին գյուղի հարդանոցները եւ քշեցին անասունների մի մասը:

Հունվարի 5-ին Մալիբեկլի գյուղի մուսուլմաններն սպանեցին երկու հայ գեղջկուհիների Ֆարման կոչված վայրում: Հունվարի 6-ին ադրբեջան-

<sup>76</sup> Խոսքն անգլիական այն միսիայի մասին է, որ գեներալ Թոմսոնը Շուշի ուղարկեց ոմն մայոր Մոնկ-Մեզոնի գլխավորությամբ, Անդրանիկին Ալդալարից Գորիս վերադարձնելուց հետո: Այդ միսիայի կազմի մեջ էր մտցված, իրրեւ թարգման, բայց իրապես Ադրբեջանի գործակալ ու լրտես, մուսուլմանական նախկին «ղիկայա դիվիզիայի» ռուս սպա Մասլեննիկովը: Միսիայի առաջի գործն այն եղավ, որ սկսեց իր պրոպագանդական քաղաքականությունն օժանդակողների հավաքագրում կատարել հայ կոչվող տականքներից եւ նրանց միջոցով գաղտնի պրոպագանդ մղել եւ հետախուզական աշխատանք կատարել Ղարաբաղում: Եւ, դժբախտաբար, քիչ չէ տնվեցին դավաճաններ, ինչպես Սոկրատ-բեկ Մելիք-Շահ-նազարյանը, միլիցիայետ Միքայելյանը եւ այլք, որոնք փաստորեն դարձան ադրբեջանական ազենտ Մասլեննիկովի գործիքը՝ վնասելու իրենց գաղտնի եւ բացահայտ դավերով Ղարաբաղի հայության ազատագրական պայքարին, սիստեմատիկ տեղեկություններ հաղորդելով անգլիական միսիային՝ Ղարաբաղի զինված ուժերի, զինամթերքի վիճակի, երկրի տնտեսական դրության, ժողովրդի տրամադրության, այս կամ այն գործի եւ նրա գործունեության վերաբերյալ եւ այլն:

ցիների եւ օսմանյան թուրքերի ձեռքով ավերված Ղարաղշլաղ գյուղի գյուղացիներից 30 մարդ, որոնք գնացել էին այդ գյուղը թաքցրած հորերից ցորեն բերելու, ենթարկվեցին մուսուլմանների հարձակման. Ղարաղշլաղցիներից մի հոգի վիրավորվեց, իսկ 15 հոգի իրենց բեռնակիր անասուններով գերի տարվեցին, որոնց վիճակը հայտնի չէ մինչև օրս:

Նույն հունվարի 6-ին ադրբեջանական ջոկատները, դուրս գալով Կարի-ազինոյից, գիշերը շրջապատեցին հայկական Դուդուկլի գյուղը եւ ապա ներխուժելով տները, սպանեցին 5 մարդ, վիրավորեցին շատերին, հրդեհեցին հարդանոցները եւ քշեցին տավարը:

Հունվարի 8-ին ադրբեջանական զինված ուժերը տաճկական ասկերների հետ, տաճիկ սպա Իսմայիլ-Փեհրի-բեյի գլխավորությամբ հարձակվեցին հայկական Ճարտար գյուղի վրա, բայց ետ մղվեցին:

Հունվարի 9-ին եւ 10-ին ադրբեջանական ուժերը, դարձյալ տաճկական ասկերների եւ այս անգամ նաեւ ալիանլուցիների հետ, թվով մի քանի հազար մարդ, կրկին հարձակվեցին հայկական Խծաբերդ եւ Խանձաձոր գյուղերի վրա: Այդ հարձակման ժամանակ հայերից սպանվեց 5 մարդ, հրդեհվեցին գյուղերի հարդանոցները եւ քշվեցին անասունները...»<sup>77</sup>:

Ազգային խորհուրդը երկու օր հետո, հունվարի 14-ին, լրացուցիչ հայտնում է Շուշու անգլիական միսիային. «Ասկերանի Բերդի շրջանում Ադրբեջանի զորքերը քանդել եւ ոչնչացրել են հայերի 16 ջրաղացներ եւ հալիշտակել այնտեղ գտնված հացամթերքները, այդպիսով այդ շրջանի հայ բնակչությանը զրկելով հացահատիկը ալյուրի վերածելու հնարավորությունից:

Ադրբեջանի զինված բանդաները շարունակում են թալանել հացահատիկի պաշարները եւ քշել անասունները Ասկերանի շրջանի հայկական գյուղերից:

Ադրբեջանի զորքերը, միացած Ադրբեջանում ապաստան գտած օսմանյան ասկերներին եւ տեղական բանդաներին, տաճկական սպաների ղեկավարությամբ սկսել են հարձակումներ գործել այս անգամ Կարիազինոյի գավառի հայկական գյուղերի վրա:

Ադրբեջանական զինված ջոկատները, մուտք գործելով հայկական Ղարաբաղի տերիտորիան, բանդիտական ազատ գործողություններ են ծավալում Ասկերանի եւ Խանքենդու (ներկայիս Ստեփանակերտի - Շ. Թ.) միջև:

<sup>77</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 223, գ. 86, թերթ 52:



ընկած խճուղու երկարությամբ<sup>78</sup> :

\* \* \*

Հայերի բողոքներն ադրբեջանական եւ տաճկական միացյալ զինված ուժերի հարձակումների առթիվ նվազագույն ուշադրության իսկ չէին արժանանում անգլիական հրամանատարության կողմից: Գեներալ Թոմսոնը ոչ մի միջոց ձեռք չէր առնում ստիպելու Ադրբեջանի կառավարությանը՝ վերջ դնելու հայերի սպանություններին ու գյուղերի ավերումներին: Մինչդեռ հայերի դեմ ուղղված Ադրբեջանի ամեն մի հերյուրած, միտումնավոր, ստահոգ գանգատն արժանանում էր ամենամեծ ուշադրության եւ առիթ ծառայում նույն անգլիական հրամանատարության համար՝ ուղղելու հայերի հասցեին անհաշիվ հանդիմանություններ ու սպառնալիքներ:

Ժողովուրդը տեսնում էր եւ համոզվում, ու «գաշնակից» եւ «բարեկամ» հորջորջվող անգլիացիների օրոք եւս Ղարաբաղի դրությունը գեպի լավը փոխվել չի կարող: Ընդհակառակը, քանի գնում, այնքան սրվում էր իրադրությունը եւ տագնապը սաստկանում:

Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1919 թ. հունվարի 15-ին Բաքվի հայոց ազգային խորհրդին ուղղած իր նո. 144 գրության մեջ ի միջի այլոց հայտնում էր. «... Մենք, որ տաճիկների տիրապետության օրերին պաշտպանել ենք մեր երկիրը, մեր պատիվն ու մեր ժողովրդի ֆիզիկական գոյությունը, անգլիական միսիան ալստեղ ժամանելուց հետո մեր ամբողջ հույսը դնելով նրա վրա, դիմել ենք խաղաղ կյանքի, հաստատ հավատացած լինելով, որ մեր կյանքի դեմ ոչ մի դավ չէ նյութվելու: Բայց երեւում է, որ այդպես գործելով շարաշար պիտի պատժվենք ու հիմնահատակ կործանվենք շնորհիվ մեր վստահության»:

Դժբախտաբար, այդ «վստահության» կորստաբեր լինելու բավականաչափ ուշ արթնացած գիտակցությունը փոխանակ խթանելու Ազգային խորհրդին՝ հրաժարվելու իր թուլամորթ, երկրի համար կործանարար, Ղարաբաղի հնօրյա պայծառ համբավն արատավորող գործողության դատապարտելի եղանակից եւ կտրուկ շրջադարձ կատարելու իր քաղաքականության մեջ անգլիացիների նկատմամբ, նա չէզոքեց մի անգամ ընտրած կորստաբեր ուղուց՝ շարունակելով «վստահության» իր ստրկամիտ քաղաքականությունը:

<sup>78</sup> Նույն տեղում, թ. 54:

Սակայն շարունակենք ծանոթանալ Ազգային խորհրդի հուսաբեկ գանգատին, որից կարելի է բավականաչափ հստակ պատկերացում կազմել Ղարաբաղի ընդհանուր վիճակի մասին այդ ծանր օրերին<sup>79</sup>.

«Եվլախի ճանապարհը միանգամայն անապահով է հայերի համար, գրում է Ազգային խորհուրդը, - ավելի եւս՝ երկաթուղիներում: Մյուս կողմից՝ բոլոր հեռագրատները Ադրբեջանի իշխանության ներքո են: Ուստի ոչ մի հնարավորություն չունենք մեր կրիտիկական դրությունը հանդես բերել Բաքվում եւ մեր վիճակը տնօրինելու միջոցներ առաջարկել:

... Մենք ներկայումս ավելի անելանելի դրության մեջ ենք գտնվում, քան նույնիսկ առաջ... Շուշու անգլիական միսիան մեզ պարզապես հայտնել է, որ ինքն անուժ է թուրքերի հարձակումների առաջն առնելու կամ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը պահպանելու: Ինչո՞ւլ բացատրել գեներալ Թոմսոնի լռությունը. չէ՞ որ Ղարաբաղի հայությունը օր չի լինում, որ հարձակման չենթարկվի: Ճանապարհները կտրված են, եւ մենք շրջապատվում ենք ամեն կողմից: Այդ ամենի մասին Շուշու անգլիական միսիան հեռագրով եւ նամակներով հայտնում է գեներալ Թոմսոնին, բայց վերջինս, չհավատալով նույնիսկ իր սպանների այդ զեկուցումներին, միանգամայն անուշադրության է մատնում 200 հազար հայության կրիտիկական վիճակը: ... «Ազերբայջան» պաշտոնական թերթի մեջ տպագրվում են հազար տեսակ ստահոգ լուրեր Ղարաբաղի հայերի ապստամբության մասին, եւ ոչ ոք մեզնից հնարավորություն չունի հերքելու. քանի հեռագրատները նրանց (թյուրքերի) ձեռքին են, մեր բողոքը տեղ չի հասնում:

... Մինչեւ օրս մենք պաշտպանվել ենք տաճկական զորքերի եւ տեղական մահմեդականների դեմ եւ ինքներս մեզ կառավարել ենք առանց դրսից որեւէ օգնություն ստանալու: Մի ամբողջ տարի մենք տարել ենք հազար ու մի տանջանք, բայց մեր ազատության եւ անկախության վրա թույլ չենք տվել ոչ ոքի բռնանալու: Ներկայումս էլ մեզ համար ցանկալի է, որ անգլիական միսիան ինքը կառավարե Ղարաբաղի հայությունը, մինչեւ մեր վիճակը կորոշվի խաղաղարար վեհաժողովում: ... Որպեսզի պարզ լինի մեր ներկա վիճակը, կարելու է, որ համարում հայտնել, որ հունվարի 5-ից (1919թ.) սկսած, Ադրբեջանի զորքերը, Ղարաբաղում մնացած թուրքական ասկերները եւ զանազան մուսուլման խմբեր տաճիկ սպանների գլխավորու-

<sup>79</sup> Բերում ենք որոշ հապավումներով:



թյամբ զինվորական շտաբ են կազմակերպել Աղզամուտ, բերել են տվել մեծ քանակությամբ ռազմամթերք, թնդանոթներ, գնդացիորներ, մի քանի հազար մարդից բաղկացած բանակ ուղարկել Զաբուղի ձորը, կրկին գրավել են Ասկերանը եւ նոր գործ ուղարկել հանքենդի:

Այդ ամենից երեւում է, որ մեզ շրջապատում են թե՛ ճակատից եւ թե՛ թիկունքից... իսկ մենք ճշտությամբ կատարելով անգլիական միսիայի պահանջները, ոչ մի միջոց չենք ձեռնարկում դրա առաջն առնելու, ուրիշ խոսքով՝ մենք մեր ձեռքով փորում ենք Ղարաբաղի հայության գերեզմանը<sup>80</sup>:

Միանգամայն ճշմարտացի խոստովանությունն էլ որակում սեփական կարճատես, թուլամորթ եւ հանցավոր քաղաքականության:

Ժողովրդի ծանր նյութական վիճակի մասին Աղզային խորհուրդը հայտնում է. «Ժողովուրդը նյութական ծանր դրության մեջ է: Տնային բոլոր իրերը, անկողինը եւ մինչ իսկ շորերը շուկա է հանվել ծախելու՝ մի կտոր հաց ձեռք բերելու համար»<sup>81</sup>: Այդ խոսքերը վերաբերում էին գլխավորապես քաղաքի հայ բնակչության տնտեսական դրությանը, թեեւ գավառի բնակչության մեծ մասի պարենային վիճակը նույնպես նախանձելի չէր:

Նամակի վերջում Աղզային խորհուրդը խնդրում էր նյութական (գրամական) օգնություն:

Ադրբեջանի կառավարության կազմակերպած հարձակումների առաջն առնելու համար անգլիական հրամանատարությունը, ինչպես ասացինք, չդիմեց որեւէ միջոցի՝ հակառակ Ղարաբաղի եւ Բաքվի ազգային խորհուրդների բազմիցս արված բողոքների: Զգիմեց որեւէ միջոցի, որովհետեւ այդ հարձակումները ծրագրված էին համատեղ՝ գեներալ Թոմսոնի հետ: Դա չափազանցություն չէ: Այդ անհերքելիորեն ապացուցվեց, երբ մի քանի ամիս հետո քաղաքի հայկական մասը, Շուշու անգլիական միսիայի խորհուրդով եւ Բաքվի անգլիական հրամանատարության գիտությանը ենթարկվեց Սուլթանովի բանդիտների գնդակոծման, իսկ մի օր շանցած՝ Շուշու մերձակա մի շարք հայկական գյուղեր սկսեցին ավերվել եւ կոտորածի ենթարկվել նույն ադրբեջանցի բանդիտների ձեռքով՝ Շուշու անգլիական միսիայի եւ Բաքվից եկած անգլիական սպաների աչքերի առաջ: Եւ այդ բոլոր չարագործությունները կատարվում էին անգլիական հրամանատարության սադրա-

<sup>80</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 223, գ. 86, ք. 46:

<sup>81</sup> Նույն տեղում:

նքներով, ունենալով մի նպատակ՝ ստիպել Ղարաբաղի հայությանը ենթարկվելու Ադրբեջանին:

Գեներալ Թոմսոնն այնքան էր հղիացել Ադրբեջանի կառավարության առատաձեռն «նվերներով» եւ լկտիացել անգլիական գլխավոր հրամանատարության խրախուսանքներով, որ գործում էր համարձակ, առանց քաշվելու անգամ դաշնակից Ֆրանսիացիներից, որոնց ներկայացուցիչը Թիֆլիսում բացարձակ դեմ էր արտահայտվել անգլիացի սպաների՝ Ադրբեջանում վարած թյուրքոֆիլ քաղաքականությանը: Նա ասել էր, որ այդ քաղաքականությունը «բնավ չի համապատասխանում այն խնդիրներին, որոնք դրվում են դաշնակիցների կողմից: Դա ըստ երեւոյթին զինվորականների քաղաքականությունն է, որոնք, ինչպես երեւում է, լավ յուրացրել են հնդկական եւ պարսկական գաղութային քաղաքականության պրիոմները»<sup>82</sup>:

Ֆրանսիացին, իհարկե, սխալվում էր, ենթադրելով, թե անգլիական զինվորականները արեւելյան Անդրկովկասում գործում են ինքնագլուխ, առանց անգլիական կենտրոնական իշխանությունների սանկցիայի, դեկավարվելով լոկ գաղութային երկրներում «յուրացրած» քաղաքականության «պրիոմներով»: Հիրավի, ճիշտ չէր լինի եւ կհակասեր պատմական իրողության, եթե անգլիացիների վարած քաղաքականությունը հայկական Ղարաբաղի նկատմամբ վերագրենք լոկ նրանց տրադիցիոն «գաղութային քաղաքականության պրիոմներին», նրանց մուսուլմանասիրության կամ անհատական ընչաքաղցության եւ կամ թե միայն անգլիական զինվորականների քմահաճ եւ ինքնագլուխ գործողություններին: Ոչ: Անգլիացիների ցանկությունն էր վերածել Անդրկովկասը մի ապահով պլացդարմի՝ ոչ միայն Անդրկասպյան մուսուլմանական երկրները նվաճելու եւ գաղութների վերածելու համար, այլեւ Անդրկովկասն ապահովելու ռուսների վերագրավումից եւ դարձնելու հակաբոլշևիկյան պայքարի կռվան՝ օգտագործելով նրա հարուստ նյութական ռեսուրսները:

Իդուր չէ, որ 1919թ. Անդրկովկասում գտնված անգլիական ներկայացուցիչներից մեկը (գեներալ Բիչը) մասնավոր խոսակցության ժամանակ ասել է. «Սա պատմության մեջ չէ՞ որ միակ դեպքն է, երբ կարելի է Ռուսաստանին քշել Անդրկովկասից»<sup>83</sup>:

<sup>82</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 213, գ. 72, թ. 21:

<sup>83</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 45, գ. 33, թ. 5:



Եւ անգլիական այդ նեղմիտ սալդաֆոնները ռուսների վերադարձը Անդրկովկաս ընդմիջող խափանելու համար աշխատում էին ամեն կերպ ուժեղացնել այնտեղ հակառուսական ռեակցիոն ուժերը եւ, ընդհակառակը՝ ձգտում թուլացնել «ռուսասիրական» տարրը: Անգլիական հրամանատարությունը ամենահետեւողական հակառուսական ուժ Անդրկովկասում համարում էր Ադրբեջանը՝ իր բեկական-կալվածատիրական ռեակցիոն ղեկավարությամբ: Բաքվի՝ 1918 թվի մարտ-ապրիլյան քաղաքացիական կռիվները բավականաչափ պերճախոս ապացույցներ էին տվել այդպիսի լիովին իրական համոզմունք կազմելու համար:

Ադրբեջանի ղեկավարները մեծ դյուրագագացություն հանդես բերին հենց սկզբից ըմբռնելու համար անգլիական քաղաքականության ուղղությունը: Նրանք անգլիացիների Բաքու ուղք դնելու սկզբի վայրկյանների առաջ բերած տագնապից իսկույն զգաստացան եւ արեւելյան ամենախորամանկ ու նրբին «պոլիտիկայով» կարողացան իրենց ձեռքի մեջ հավաքել թոմսոններին՝ անգլիական գաղութային այդ գամիսներին, եւ թելադրել նրանց իրենց կամքը: Անդրանիկի արշավանքը դեպի Ղարաբաղ անգլիական գեներալի միջոցով ձախողելուց հետո, մինիստր-նախագահ Խան-Խոյսկին հայկական Ղարաբաղը խժեղելու համար Ադրբեջանի տերիտորիալ պահանջը Թոմսոնի մոտ «հիմնավորեց» ռազմագիտական մոտիվներով, այն է՝ Ադրբեջանի համար Ղարաբաղի ընդհանուր վտանգավոր աշխարհագրական դիրքով<sup>84</sup>: Այս տեսակետից Հայաստանն, անշուշտ, շատ ավելի լուրջ առարկություն կարող էր կատարել՝ Ղարաբաղի խնդիրը կապելով ոչ միայն նրա միաձույլ հայ բնակչության ինքնորոշման անառարկելի իրավունքի, այլեւ հայկական միջնաշխարհի պաշտպանությունն ապահովելու կենսական անհրաժեշտության հետ... Այնուամենայնիվ, Խան-Խոյսկու տեսակետը անգլիական հրամանատարությունն առանց վերապահության ընկալեց եւ, ինչպես տեսնում ենք, մեծ եռանդով իր պաշտպանության տակ առավ Ադրբեջանի գավթողական ձգտումները հայկական հողերի նկատմամբ:

Գեներալ Թոմսոնը, որ միաժամանակ համարվում էր դաշնակից հրամանատարության ներկայացուցիչն Անդրկովկասում, իրեն այնքան լավ էր զգում Ադրբեջանում, որ երկար ժամանակ չէր բարեհաճում այցելել Հայաստան: Այդ առթիվ գեներալ Նազարբեկյանի «Զինվորական ակնարկների»

<sup>84</sup> Նույն տեղում, թերթ 18:

մեջ կարդում ենք. «...Թոմսոնը չէր շտապում այցելել Երեւան, մինչդեռ Հայաստանի կառավարությունը հատուկ նրան էր սպասում իբրեւ Համաձայնության պետությունների ներկայացուցչի, արգարացիորեն կարծելով, որ հայ ժողովուրդը, որը մինչեւ վերջ հակառակորդի դեմ մարտնչել էր եւ դաշնակիցների հանդեպ պահպանել իր հավատարմությունը, թվում էր, թե իրավունք ուներ արժանանալու դաշնակիցների կողմից մի առանձին ուշադրության: Գեներալ Թոմսոնի հետ ունեցած առաջին հանդիպման ժամանակ Մինիստրների խորհրդում Քաջազնունին նրան բացահայտորեն հայտնեց այդ: Իսկ Թոմսոնը դրան բավականին կոպիտ ձեւով առարկելով պատասխանեց, թե իրենք ավելի կարեւոր գործեր են ունեցել, քան կարող էր լինել համակրանքի պարզունակ արտահայտությունը»<sup>85</sup>:

Գեներալ Թոմսոնի եւ իր համհարզների այդ «կարեւոր գործերին» մենք բավականաչափ ծանոթացանք եւ դեռ պիտի շարունակենք ծանոթանալ՝ հայերի այդ «բարեկամների» իսկական դեմքը ճանաչելու համար:

#### 4. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1919 թ. փետրվարի 10-ին գումարվեց Շուշում Ղարաբաղի հայության 4-րդ համագումարը՝ հայտարարելու ժողովրդի վճիռը Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկելու անգլո-ադրբեջանական ճիգերի նկատմամբ եւ ընտրելու նոր Ազգային խորհուրդ:

Մինչեւ փետրվարի 20-ը տեղի ունեցած նիստերում համագումարը լսեց Ղարաբաղի նախկին կառավարության եւ ապա ժամանակավոր Ազգային խորհրդի զեկուցումները: Մի քանի օր անընդհատ բուռն վիճաբանություններ տեղի ունեցան հայկական Ղարաբաղի վերաբերյալ մուսավաթական կառավարության նվաճողական մտադրությունների եւ նրանց իրագործման համար գործադրվող անլուր բռնությունների շուրջը: Բոլոր ճառախոսների կողմից առանձնապես դատապարտվեց եւ պարսավանքի խստագույն արտահայտություններով որակվեց անգլիական հրամանատարության ներկայացուցիչ Թոմսոնի դիրքը, որն ընդառաջելով Ադրբեջանի կառավարության ապօրինի տերիտորիալ պահանջներին, ցույց էր տալիս ամեն աջակցություն ու պաշտպանություն եւ նույնիսկ քաջալերում նրան Ղարաբաղի

<sup>85</sup> Նույն տեղում, թ. 3:



հայությանն ընկճելու համար հայկական բնակավայրերի վրա բանդիտական հարձակումներ կազմակերպելու:

Փետրվարի 19-ին համագումարը միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը՝ հետեւելով այն կտրուկ հրահանգին, որ ժողովուրդը տվել էր պատգամավորներից յուրաքանչյուրին:

**«ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԶԵԻՐ ՂԱՐԱԲԱՂԸ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԻ ՄԱՍԻՆ**

Կանգնած լինելով ժողովրդի ինքնորոշման սկզբունքների վրա՝ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը հարգանքով է վերաբերվում դեպի հարեւան թյուրք ժողովրդի ինքնորոշման իրավունքը եւ դրա հետ միաժամանակ վճռականորեն բողոքում է ամբողջ աշխարհի առաջ ադրբեջանական կառավարության փորձերի դեմ, որոնցով նա ցանկանում է ոչնչացնել այդ սկզբունքը հայկական Ղարաբաղի նկատմամբ, որը երբեք չի ընդունելու եւ չի ընդունում իր վրա Ադրբեջանի իշխանությունը: Համագումարը պնդում է իր իրավունքների պաշտպանության վրա՝ թե՛ Կովկասում գտնված դաշնակից պետությունների ներկայացուցիչների եւ թե՛ Եւրոպայի խաղաղարար համագումարի առաջ:

Այս բողոքն ուղարկվում է նաեւ Բաքվի՝ դաշնակից պետությունների հրամանատարությանը, գեներալ Թոմսոնին, Ադրբեջանի կառավարությանը եւ Եւրոպայի խաղաղարար համագումարի հայ պատգամավորներին:

Համագումարի նախագահ՝ Ա. Շահնազարյան  
Քարտուղար՝ Առստամյան<sup>86</sup>»

Փետրվարի 20-ին համագումարն ընտրեց նոր Ազգային խորհուրդ եւ գրանով վերջացած համարելով իր աշխատանքը, ցրվեց: Բանաձեւը հեռագրով հաղորդվեց Բաքու՝ Խան-Խոսյկուն, գեներալ Թոմսոնին եւ առանձին գրությամբ՝ Շուշու անգլիական միսիային:

Ազգային խորհուրդը, իհարկե, կառավարություն, այսինքն պետական իշխանության մարմին չէր, այլ սովորական ազգային ներկայացուցչական մի օրգան, ճիշտ այնպիսին, ինչպիսին գոյություն ուներ այդ խռովահույզ ժամանակներում Անդրկովկասի այլ վայրերում՝ Թիֆլիսում, Գանձակում, Բաքվում, այլեւ Հյուսիսային Կովկասում, անգամ Մոսկվայում եւ ընդհան-

րապես բոլոր այն վայրերում, ուր ապրում էին միասին քիչ թե շատ զգալի թիվ կազմող հայեր: Ազգային խորհուրդների նպատակն էր՝ հայկական այդ համեմատաբար փոքրաթիվ համայնքների շահերի պաշտպանությունը, նրանց կարծիքները եւ պահանջները ներկայացնել տեղական իշխանություններին եւ բավարարում խնդրել, այլեւ վճռել այդ խառը ժամանակներում համայնքի շրջանակում ծագած այլեւայլ հարցերը: Նման ազգային խորհուրդներ ունեին նաեւ մյուս ազգային խմբերն Անդրկովկասում եւ այլուր:

Ճիշտ կլինեք եւ նպատակահարմար, որ 200 հազարից ավելի հոծ հայություն ունեցող Լեռնային Ղարաբաղը, որը կուլի դաշտ դուրս բերել կարող էր առնվազն մինչեւ 20-25 հազար ընտիր մարտիկներ, իր համագումարի միջոցով ոչ թե ընտրեք գործունեության նեղ շրջանակների համար միայն պիտանի, իրավունքներով սահմանափակ եւ մանավանդ չափավոր եւ մեծ մասամբ թուլամորթ տարրերից բաղկացած այնպիսի մի մարմին, ինչպիսին Ազգային խորհուրդն էր, այլ կազմեք ժամանակավոր կառավարություն՝ երկրի գործուն, ձեռնհաս ու խիզախ տարրերից, նման նախկին ժողովրդական կառավարության, որը 1918 թվին, այդ դաժան ու ահավոր վտանգներով լի տարում, դարձել էր արդեն հեղինակավոր պետական իշխանություն, եւ իր վճռական ու համարձակ գործունեությամբ, իր հեռատես ու անձնվեր քաղաքականությամբ կարողացավ երկիրը դուրս բերել բոլոր վերահաս փորձանքներից՝ պահպանելով եւ էլ ավելի բարձրացնելով հայկական Ղարաբաղի վաղեմի դիրքն ու հմայքը:

Մեր կարծիքով դա կլինեք երկրորդ լուրջ քայլը՝ փրկելու Ղարաբաղը անգլիական եւ ադրբեջանական դավերից:

**5. ՀԱՅԿԱԿԱՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՍՏՐԿԱՑՄԱՆ ԱՆԳՈՒՄԻՐԲԵՋԱՆԱԿԱՆ «ՆԱԽԱԳԻԾԸ»**

Համագումարի փակվելուց երկու օր հետո, 1919 թ, փետրվարի 22-ին, Շուշու անգլիական միսիան մայրո Մոնկ Մեզոնի ստորագրությամբ դիմեց Ղարաբաղի նորընտիր Ազգային խորհրդին, ներկայացնելով հետևյալ «նախագիծը», որն, ըստ Մոնկ Մեզոնի, հայերից ընդունվելու դեպքում միայն պիտի հրապարակվեք ու գործադրվեք:

«Բրիտանական միսիայից: Պաշտոնական հաղորդում:

<sup>86</sup> «Արեւ» (Բաքու), 1919 թ., նո. 17 (բերում ենք անփոփոխ):



Բրիտանական հրամանատարությունը հայտարարում է բոլոր բնակիչներին պարտադիր կատարման համար հետևելը:

Բրիտանական հրամանատարության համաձայնությամբ ժամանակավոր գեներալ-նահանգապետ է նշանակված Ջանգեզուրի, Շուշու, Զիվանշիրի եւ Զեբրայիլի գավառների համար գոկտոր Խոսրով-բեկ Սուլթանովը:

Նրա քաղաքացիական մասի օգնականը լինելու է հայ: Գեներալ նահանգապետին կից կառավարելու համար հիմնվելու է խորհուրդ՝ բաղկացած 3 հայերից եւ 3 մուսուլմաններից: Խորհրդում իբրեւ բրիտանական հրամանատարության ներկայացուցիչ մասնակցելու է մի սպա:

Ձորքերի բոլոր տեղաշարժերը կատարվելու են բրիտանական միսիայի գիտությամբ<sup>87</sup>: Գեներալ-նահանգապետության բոլոր պաշտոնյաների պահպանության համար միջոցներ բաց պիտի թողնվեն դաշնակիցների գիտության եւ համաձայնությամբ:

Բրիտանական միսիան հարկավոր է համարում կրկին անգամ հաստատել, որ հիշյալ մարզերի պատկանելիությունը այս կամ այն պետական միավորին պիտի որոշվի խաղաղության կոնֆերանսում:

Սրանով բրիտանական միսիան հայտարարում է, որ գեներալ-նահանգապետության եւ նրա մարմինների բոլոր հրամանները պիտի կատարվեն ամենքի կողմից անխափան: Ընդդիմությունը պիտի պատժվի ամենավճռական միջոցներով<sup>88</sup>:

Ղարաբաղի, Ջանգեզուրի եւ հարակից դաշտային մուսուլմանական շրջանների կառավարման համար գեներալ-նահանգապետություն հիմնելու անգլո-ադրբեջանական այդ պլանը, թեեւ Շուշու անգլիական միսիան ներկայացնում էր Ղարաբաղի Ազգային խորհրդին իբրեւ «նախագիծ», որը իբրեւ թե հայերից ընդունվելու դեպքում միայն կարող էր ուժի մեջ մտնել եւ հրապարակվել, կազմվել էր եւ ընդունվել իբրեւ վերջնական ծրագիր դեռեւս հունվարի սկզբներում անգլիական հրամանատարության եւ Ադրբեջանի կառավարության կողմից համատեղ: Դրանից հետո, նույն հունվար ամսի 15-ին, գոկտոր Խոսրով-բեկ Սուլթանովը, այդ համիսլամական եւ հայերի կատաղի թշնամին, արդեն անգլիացիների համաձայնությամբ նշանակվել էր գեներալ-նահանգապետ՝ ցարական ժամանակաշրջանի վարչական բաժանմամբ անցյալում գոյություն ունեցող Շուշու, Զեբրայիլի, Ջանգեզուրի եւ Զիվանշիրի գավառների վրա, որոնց մեջ էր բաժանված վարչա-

<sup>87</sup> Ընդգծումները բոլոր դեպքերում մերն են. - Հ. Թ.

<sup>88</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 252, գ. 1, թերթ 4-5:

կանոններ տրոհված Լեռնային Ղարաբաղի տերիտորիան, առանց հաշվի առնելու նրա էթնիկական, կուլտուր-պատմական, տնտեսական եւ աշխարհագրական անբաժանելի, միաձուլ պայմանները, որոնք խստորեն տարբերվում են այդ գավառների մեջ մտնող դաշտային զոնայից, ուր ապրում են, գրեթե առանց բացառության, մուսուլմաններ՝ մեծամասնություն կազմելով այդ երբեմնի գավառներում:

Ադրբեջանն աշխատում էր հենց այդ վարչական բաժանում էլ վերականգնել. չէ՞ որ այն շատ էր նմանվում Արեւմտյան Հայաստանի համիդյան միտումնավոր վարչական բաժանմանը, որի առանձին վիլայեթներում հայերը ցույց էին տրված իբրեւ բացարձակ փոքրամասնություն...

1919 թ. հունվարի երկրորդ կեսում Խոսրով-բեկ Սուլթանովն անգլիական մեքենայով եւ անգլիական սպաների ու զինվորների պաշտպանության տակ արդեն փոխադրվել էր Շուշու որոշ քանակությամբ ասկերների հետ: Իսկ «նախագիծը» Ազգային խորհրդի կողմից քննարկվելուց մոտ մի ամիս առաջ ադրբեջանական զինված ուժերը անգլիացիների համաձայնությամբ եւ նրանց «սիպահիների» ուղեկցությամբ արդեն Աղդամից շարժվել եւ եկել բռնել էին Ասկերանը ու Խանքենդու (ներկայիս Ստեփանակերտի) զորանոցները:

Այդ ամենից կարելի էր եզրակացնել, թե խաբեական «նախագիծում» ինչ արժեք ուներ կատարված պնդումը, որ իբրեւ թե «հիշյալ մարզերի (այսինքն՝ Ղարաբաղի եւ Ջանգեզուրի) պատկանելիությունը այս կամ այն պետական միավորին պիտի որոշվի խաղաղության կոնֆերանսում»: Մինչդեռ ամեն ինչ արվում էր հենց այդ «խաղաղության կոնֆերանսը» կանգնեցնելու կատարված փաստի առաջ:

Նորընտիր Ազգային խորհրդի համար լիովին ակներեւ էր անգլո-ադրբեջանական այդ շանտաժը, եւ նա քննեց «նախագիծը» իբրեւ արդեն գործողության մեջ մտած ծրագիր եւ ուղարկեց Շուշու անգլիական միսիային հետեւյալ պատասխանը.

«Շուշու Մեծ Բրիտանական միսիային.

Ղարաբաղի հայության Ազգային խորհուրդն իր ամբողջ կազմով, Ղարաբաղի բոլոր շրջանների հրամանատարների հետ, քննելով Ադրբեջանի կառավարության կողմից Ղարաբաղում գեներալ-նահանգապետ նշանակելու փաստը, եկավ այն եզրակացության, որ հայկական Ղարաբաղը չի կարող հաշտվել նման փաստի հետ, որովհետեւ կախումն Ադրբեջանի կառավարությունից,



ինչպիսի ձեռով էլ նա արտահայտվելու լինի»<sup>89</sup> Ղարաբաղի հայությունը համարում է անընդունելի, շնորհիվ այն բռնությունների եւ իրավունքների ոտնահարման, որին սիստեմատիկորեն ենթարկվել է մինչեւ վերջին ժամանակներս հայությունը Ադրբեջանի կառավարության կողմից ամենուրեք, որտեղ նա կապել է իր վիճակը այդ կառավարության հետ: Հայկական Ղարաբաղն ամբողջ աշխարհին ցույց է տվել, որ նա փաստորեն չի ճանաչել եւ չի ճանաչելու իր սահմաններում Ադրբեջանի կառավարության իշխանությունը, ինչպես այդ վճռեց նորերս Ղարաբաղի հայության համագումարը:

Ելնելով նրանից, որ հայկական Ղարաբաղը ճանաչված է բրիտանական հրամանատարությունից այնպիսի մի տերիտորիա, որը մինչեւ խաղաղության կոնֆերանսի որոշումը չի ենթարկված որեւէ պետության, հետեւապես եւ առանձնապես Ադրբեջանին, Ազգային խորհուրդը հայկական Ղարաբաղի կառավարության համար միակ ընդունելի ձեւը համարում է անգլիական գեներալ-նահանգապետի նշանակումը, որի մասին եւ խնդրում է միսիային միջնորդել անգլիական բարձր հրամանատարության առաջ:

Խորհրդի նախագահ (Ստորագրություն)

Քարտուղար (Ստորագրություն):<sup>90</sup>

Ձեռնրանանք Ղարաբաղի Ազգային խորհրդի այդ պատասխանի մեջ բերված պատճառաբանության միակողմանիության կամ, ավելի ճիշտ, անսկզբունքայնության եւ Ղարաբաղում անգլիական գեներալ-նահանգապետություն հիմնելու անիրագործելի առաջարկության վրա:

Ուշագրավն այդ պատասխանի մեջ, մեր կարծիքով, միայն այն էր, որ ոչ միայն անընդունելի էր համարվում «Ադրբեջանի կառավարության կողմից Ղարաբաղում գեներալ-նահանգապետ նշանակվելու փաստը», այլեւ «առհասարակ կախումը Ադրբեջանի կառավարությունից, ինչպիսի ձեռով էլ նա արտահայտվելու լինի»:

Այս միակ հաջող ձեւակերպումը կարող էր համարվել Ղարաբաղի հայության վերջնական եւ բացարձակ պատասխանը՝ ուղղված բոլոր ժամանակների եւ կարգերի համար նրանց, որոնք այս կամ այն շարժառիթներով կաշառապան են կամ կընդառաջեն Ադրբեջանին ստրկության շղթաներով կաշկանդելու հայկական Ղարաբաղի ազատությունը...

Ազգային խորհրդից մերժում ստանալով, անգլիական միսիան նույն օրը

<sup>89</sup> Ընդգծումները մերն են. - Հ. Թ.:

<sup>90</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 252, գ. 1, Թ. 4-5:

եւեթ առանձին նամակով դիմեց «հայկական զորամասերի հրամանատարներին»՝ առաջարկելով նրանց ընդունել «նախագիծը», շնայելով, որ Ազգային խորհրդի որոշմանը մասնակցել էին նաեւ հրամանատարները: «Նախագիծն» ընդունել տալու այդ նոր մանեւրը անգլիական միսիայի կողմից ինքնին ցույց էր տալիս, թե որչափ մեծ նշանակություն էին տալիս անգլիացիները Ղարաբաղի հայության զինված ուժերի դիրքին: Չէ՞ որ միայն այդ ուժերն էին ընդունակ իրական սպառնալիք ստեղծել՝ տապալելու համար անգլո-ադրբեջանական դավերը Ղարաբաղի դեմ: Հենց այդ սպառնալիքը չեղոքացնելու համար դա մի փորձ էր խորամանկ Ալբիոնի ներկայացուցիչների կողմից՝ զրկել Ազգային խորհրդին Ղարաբաղի զինված ուժերի պաշտպանությունից՝ պառակտում առաջ բերելով ղեկավար ուժերի միջեւ:

Հրամանատարները պատասխանեցին, որ իրենք միանում են Ազգային խորհրդի որոշմանը<sup>91</sup>:

Պառակտում մտցնելու այդպիսի փորձ պիտի համարել նաեւ գեներալ Թոմսոնի նամակը, որ նա ուղարկել էր Բաքվից, փետրվարի 20-ին թե 21-ին, Շուշու անգլիական միսիային՝ հանձնելու Սոկրատ-բեկ Մելիք-Շահնազարյանին, մի ինքնակոչ դավաճանի, որն օգտվելով նպաստավոր պայմաններից, հավաքել էր իր շուրջը մի խումբ իր նման բախտախնդիրների եւ ներկայացել իբրեւ Վարանդայի զինված ուժերի հրամանատար: Նամակը, սակայն, անսպասելիորեն, ընկել էր Ազգային խորհրդի ձեռքը: Նամակի մեջ Թոմսոնը հայտնում էր, որ ինքը համաձայն է եւ ցանկալի է համարում հիմնել վերոհիշյալ շրջա գավառներում Ադրբեջանի գեներալ-նահանգապետություն եւ խնդրում էր Սոկրատ-բեկի աջակցությունը՝ ընդունելու տալու այդ նաեւ մյուս հրամանատարներին:

\* \* \*

Ազգային խորհուրդը տեսնելով, որ հայկական Ղարաբաղում անգլիական գեներալ-նահանգապետություն հիմնելու առաջարկն ընդունելություն չի գտնում անգլիացիների կողմից, այս անգամ մշակեց եւ ներկայացրեց Շուշու անգլիական միսիային հայկական Ղարաբաղի ինքնավարության մի նախագիծ: Ըստ այդ նախագծի՝ բրիտանական միսիայի հսկողության տակ առաջարկվում էր կազմել «հայկական Ղարաբաղի ինքնավարություն», «երկու ժողովուրդների մասնակցությամբ, համեմատական ներկայացուց-

<sup>91</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 252, գ. 1, Թ. 4-5:



չության սկզբունքով», մինչև խաղաղության կոնֆերանսի վերջնական վճիռը Ղարաբաղի ճակատագրի վերաբերյալ: Ղարաբաղը պիտի կառավարվեր «մարզային խորհրդի» ձեռքով՝ բաղկացած յոթ հայերից եւ երեք մուսուլմաններից: Խորհրդի կազմի մեջ «հատուկ համաձայնությամբ» պիտի մտնեին մեկական ներկայացուցիչներ Հայաստանի եւ Ադրբեջանի կառավարություններից: Խորհրդի մեջ պիտի մտներ նաեւ Բրիտանական Շուշու միսիայի պետը, որը պիտի օգտվեր վետոյի իրավունքով եւ այլն:

Այդ նախագիծն Ազգային խորհուրդն իր ներկայացուցիչների միջոցով ուղարկեց նաեւ Բաքու՝ գեներալ Թոմսոնին, նրա հետ միաժամանակ ուղարկելով մի ընդարձակ հուշագիր, որը կարելու էր համարում մեջբերել այստեղ քաղվածաբար.

«... Հայկական Ղարաբաղը, որը գեներալ ձեռքին միշտ պաշտպանել է իր ազատությունը եւ իրավունքը անկախ գոյության, ոչ մի դեպքում չի կարող համաձայնվել ենթարկվելու Ադրբեջանի իշխանությանը, ինչ ձեռով էլ նա արտահայտվելու լինի:

... Ընդառաջելով Ձեր դիմումին՝ ուղղված Ղարաբաղի ժողովուրդներին, Ղարաբաղի հայությունը հրաժարվեց ռազմական գործողություններից, գորաշարժերից: Սակայն հակառակ Ձեր դիմումի, դաշնակից միսիայի գալուց հետո, Ադրբեջանի կառավարությունն իր զորքերը կենտրոնացրել է կարելու ռազմագիտական կետերում՝ Ասկերանում, Խանքենդում, Ջաբուլում, Շուշում եւ Կարիազինոյում: Բացի դրանից, Ղարաբաղի սահմաններում շարունակում են գործել թուրքական (օսմանյան) ջոկատներ՝ տաճիկ սպանների ղեկավարությամբ<sup>92</sup>:

Այդ ամենն ապացուցում է, որ Ադրբեջանը Ղարաբաղի դեմ ագրեսիա է նախապատրաստում: Հայտնելով այդ մասին, Ազգային խորհուրդը խնդրում է միջոցներ ձեռք առնել հեռացնելու Ղարաբաղի սահմաններից թուրքադրբեջանական զինված ուժերը:

... Անդրկովկասի հատուկ կոմիտեն<sup>93</sup> զեմստվոյի հարցը լուծելու ժամանակ գտել էր, որ հայկական Ղարաբաղը, իր 90 տոկոս հայ բնակչությամբ խստորեն բաժանվում է մուսուլմանական (դաշտային Ղարաբաղի) գոնայից»:

<sup>92</sup> Ընդգծումները ամենուրեք մերն են, - Հ. Թ.

<sup>93</sup> Խոսքը հավանորեն ռուսաստանի ժամանակավոր կառավարության ստեղծած «Անդրկովկասյան կոմիտեի» մասին է:

Այդ աչքի առաջ ունենալով, Ազգային խորհուրդը Ջանգեզուրի, Շուշու, Կարիազինոյի եւ Զիվանշիրի գավառների սահմաններում գեներալ-նահանգապետություն հիմնելու առթիվ հայտնում է Թոմսոնին.

«... Այդպիսի խառը վարչություն ի մի ձուլելով հայկական եւ մուսուլմանական Ղարաբաղի երկու տարբեր մարզերը, տեղական կյանքի ներկայումս ստեղծված ռեալ պայմաններում փաստորեն անհնարին կլինի, եւ յուրաքանչյուր քայլում պիտի առաջ բերի անցանկալի շփումներ եւ տարաձայնություններ»:

Դիմումի վերջում Ազգային խորհուրդը խնդրում է Թոմսոնին այդ «միջնորդությունը հասցնել բրիտանական բարձր հրամանատարությանն ի գիտություն»<sup>94</sup>:

Ղարաբաղի Ազգային խորհրդի այդ դիմումը եւս նախորդների պես անհետեւանք թողնվեց անգլիական հրամանատարության կողմից, քանի որ այն, ինչ կատարվում էր Ադրբեջանի կառավարության կողմից՝ ուղղված Ղարաբաղի հայության դեմ, առանց գեներալ Թոմսոնի գիտության եւ համաձայնության չէր:

Գեներալին նույնիսկ շատ լավ հայտնի էր օսմանյան սպանների եւ շարքային զինվորների ներկայությունն Ադրբեջանում եւ անգամ նրանց գործուն մասնակցությունը հայկական բնակավայրերի վրա կատարվող հարձակումներին: Սակայն ոչ մի միջոց ձեռք չառնվեց ստիպելու նրանց վերադառնալ Թուրքիա՝ համաձայն Մուդրոսի պայմանագրի: Ընդհակառակը, Թոմսոնը Բաքվում անձամբ տեսակցել էր Նուրի-փաշայի հետ եւ նրան հանձնել քաղաքի կարգապահության պատասխանատվությունը<sup>95</sup>, այն Նուրի-փաշային, որի թույլտվությամբ այդ նույն քաղաքում 30 հազարից ավելի հայ էր ջարդվել օսմանյան ասկերների եւ քաղաքի մուսուլմանական տականքների ձեռքով եւ դեռ շարունակվում էր հայերի մասնակի կոտորածները Ադրբեջանի գավառներում:

Գեներալ Թոմսոնը կտրականապես մերժեց նաեւ Ղարաբաղի Ազգային խորհրդի նախագիծը հայկական Ղարաբաղի ինքնավարության մասին: Նա պահանջում էր հայերից անվերապահորեն ճանաչել Սուլթանովին իբրեւ Ղարաբաղի գեներալ-նահանգապետ:

<sup>94</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 252, գ. 1, թ. 6-7:

<sup>95</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 691, թ. 1-2:



Բայց Ղարաբաղը վերստին շարունակում էր համառել՝ հրաժարվելով խոնարհել իր հպարտ գլուխը Ադրբեջանի առաջ:

\* \* \*

Ստեղծված փակուղուց դուրս գալու համար անգլիացիներն այս անգամ փորձեցին Ղարաբաղի նկատմամբ գործադրել գաղութային երկրներում ազատագրական շարժումները ճնշելու իրենց փորձված մեթոդները: Նրանք կամեցան դավով ձերբակալել Ազգային խորհրդի առավել ազդեցիկ եւ գործուն անդամներին՝ իբրեւ երկրի անհնազանդության դրդիչներ: Սակայն վախենալով այդ կատարել անմիջապես Շուշում անգլիացիները մտածեցին խաբեության միջոցով: Բաքու տանել նրանց եւ այնտեղ ձերբակալել: Այդ նպատակով Շուշու բրիտանական միսիան 1919 թ. մարտի 9-ին գեներալ Թոմսոնի առաջարկությամբ պահանջեց Ղարաբաղի Ազգային խորհրդից Բաքու ուղարկել վեց ներկայացուցիչներ՝ գեներալին ներկայանալու համար: Ազգային խորհուրդը հաջորդ օրը ներկայացրեց մի ցուցակ՝ վեց հոգու անուններով, որոնցից միայն մեկն էր Ազգային խորհրդի անդամ, մնացածը՝ քաղաքի եւ գավառի գործիչներից էին: Բայց որովհետեւ ցուցակում նշածների մեջ բացակայում էին Ազգային խորհրդի հեղինակավոր եւ ազդեցիկ անդամների անունները, այդ պատճառով միսիան պահանջեց ցուցակի մեջ մտցնել Ազգային խորհրդի նախագահին եւ նրա երկու տեղակալներին<sup>96</sup>:

Ազգային խորհուրդը, սակայն, զլխի ընկնելով անգլիացիների դավը, մերժեց կատարել միսիայի առաջարկությունը, ներկայացնելով, այնուամենայնիվ, վեց ներկայացուցիչների մի նոր ցուցակ, որը դարձյալ մերժվեց Մոնկ-Մեզոնի կողմից, որովհետեւ այնտեղ կրկին բացակայում էին նրա պահանջած մարդիկ: Դրանից հետո անգլիացիներն այլեւս անօգուտ համարեցին մարդիկ պահանջել «Թոմսոնին ներկայանալու համար»:

\* \* \*

1919 թ. մարտի 13-ին Ղարաբաղի Ազգային խորհուրդն, այս անգամ Թիֆլիսի հայոց ազգային խորհրդին ուղղած մի նամակով, հանգամանորեն նկարագրելով անգլիացիների Բաքու մտնելուց հետո Ղարաբաղում ստեղծված ծանր քաղաքական ճգնաժամը, խնդրում էր պաշտպանել Ղարաբաղի հարցը դաշնակիցների Կովկասյան գլխավոր հրամանատարության առաջ:

<sup>96</sup> ՀՊՊԱԱ, ֆ. 252, գ. 1, թ. 8-10:

Նամակում, ի միջի այլոց, բողոք էր հայտնվում, որ՝ «գեներալ Թոմսոնը գործում է Ղարաբաղի հայություն արդար պահանջների դեմ», որ՝ «անգլիացիները կարծեք եկել են մեր՝ մինչեւ այժմ պահպանած անկախությունը եւ ազատությունը ոտնահարելու եւ բռնի կերպով մեզ ենթարկելու Ադրբեջանին...»<sup>97</sup>:

Ղարաբաղի Ազգային խորհրդի այդ նամակի առթիվ գումարվեց Թիֆլիսում ապրող Ղարաբաղցիների բազմամարդ ժողով, որը որոշեց մի հիմնավորված գրությամբ, կցելով նրան Ղարաբաղից ուղարկված նամակի պատճենը, դիմել դաշնակից պետությունների Թիֆլիսի եւ Բաքվի ներկայացուցիչներին՝ հայկական Ղարաբաղի խնդիրը լուծելու հօգուտ հայերի: Վեց հոգու ստորագրությամբ այդ դիմումն ուղարկվեց միայն երկու ամիս հետո, 1919 թ. մայիսի 9-ին: Թե ինչու այդքան ուշ, դժվար է բացատրել: Ուղարկվեց Ֆրանսիական Թիֆլիսի միսիայի պետին եւ Բաքու՝ անգլիական զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնին: Վերջինիս ուղղված դիմումի մեջ հայրենակցական ժողովը խնդրում էր՝ «1. վերացնել Ղարաբաղում ադրբեջանական գեներալ-նահանգապետ նշանակելու հրամանը, 2. Հայկական Ղարաբաղը կառավարելու համար, մինչեւ հարցի վերջնական որոշումը, նշանակել անգլիական գեներալ-նահանգապետ»: Դիմումի վերջում խնդրվում էր. «Եթե այդ հարցը մեզ ցանկալի ուղղությամբ չի կարող այստեղ, տեղում վճռվել, ապա խնդրում ենք ներկա գրագրությունը ներկայացնել ձեր կառավարությանն ի քննություն»<sup>98</sup>:

Ղարաբաղի հարցի վերաբերյալ Թիֆլիսից դիմումներ են ուղարկվել նաեւ Անտանտի (դաշնակից) պետությունների ժողովուրդներին եւ խաղաղության կոնֆերանսի հայկական դելեգացիայի նախագահ Պողոս-Նուբար փաշային<sup>99</sup>:

Այդ բոլոր դիմումները, սակայն, մնացին «ձայն բարբառոյ յանապատի»:

Ղարաբաղի փրկության համար ոչ պակաս եռանդուն աշխատանք է կատարվել նաեւ պարսկահայության շրջանում: Բաքվից Ղարաբաղի Ազգային խորհրդի ներկայացուցիչ Հ. Բահաթյանը մարտի 14-ի թվակիր նամակով հայտնում էր Ղարաբաղցիների եւ զանգեզուրցիների Թիֆլիսի հայրենակ-

<sup>97</sup> Նույն տեղում, թ. 15-16:

<sup>98</sup> Նույն տեղում, թ. 38-40:

<sup>99</sup> Նույն տեղում, թ. 56, 58:



ցական միությունը, որ «Թեհրանից ստացված տեղեկություններն ասում են, թե ֆրանսիական միսիան եռանդուն բողոք է ուղարկել Փարիզ՝ ընդդեմ Ղարաբաղում Ադրբեջանի գեներալ-նահանգապետ նշանակելուն»<sup>100</sup>:

Ըստ մի քանի այլ տվյալների կարելի է եզրակացնել, որ անգլիացիների քաղաքականությունն արեւելյան Անդրկովկասում ընդհանրապես չէին բաժանում նրանց դաշնակիցները՝ ոչ միայն Ֆրանսիան, այլեւ ԱՄՆ-ը, Իտալիան<sup>101</sup>: Եւ այնուամենայնիւ, գեներալ Թոմսոնը անխռով շարունակում էր Ղարաբաղի եւ Սյունիքի հայության համար իր կործանարար աշխատանքը՝ ամեն կերպ աջակցելով Ադրբեջանի կառավարությանը՝ զավթելու հյուսիս-արեւելյան Հայաստանի հողերն իրենց բազմահազար հայ բնակչությանը:

Ասացինք, որ անգլիական գեներալն ինքնագլուխ չէր գործում, եւ չէր էլ կարող գործել: Նա, ճիշտ է, խորամանկ էր, ինքնահավան, իր անձնական համակրանքներով մոտուլմանասեր եւ մանավանդ՝ «նվերների» եւ բանկետների սիրահար, ինչպես սովորաբար անգլիական զինվորականները, բայց չէ՞ որ նա հետեւողականորեն ղեկավարվում էր իր իշխանություններից նախապես հրահանգված քաղաքականության սկզբունքներով: Դրանով պիտի բացատրել, որ նա վայելում էր իր կառավարության եւ բարձր հրամանատարության վստահությունն ու հովանավորությունը: Ահա թե ինչու հեշտ չէր թոմսոնների քաղաքականության վրա դրական ազդեցություն գործել հոգուտ Ղարաբաղի ո՛չ «մեմորանդումներով», ո՛չ բողոքներով, ո՛չ միտինգներով եւ դիմումներով եւ ո՛չ էլ, մանավանդ, Ղարաբաղի Ազգային խորհրդի անմտության հասնող պասիվ դիմադրությամբ:

## 6. ԽՈՐՀՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՒԱՆՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՅԻՆ

1919 թ. մարտ ամսի 28-ին երեւանում, մինիստր-նախագահ Խատիսյանի մոտ տեղի ունեցավ խորհրդակցություն գեներալ Թոմսոնի մասնակցությամբ, նվիրված Ղարաբաղի հարցին<sup>102</sup>: Մինիստրը հանգամանորեն բացատրեց գեներալին Հայաստանի կառավարության տեսակետը Ղարաբաղի

<sup>100</sup> Նույն տեղում, թ. 17:

<sup>101</sup> «Համաձայնության» պետությունների քաղաքականության տոն տվողը հիմնականում Անգլիան էր:

<sup>102</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 691, թ. 1-3:

հարցի վերաբերյալ՝ առաջ քաշելով այն բոլոր ծանրակշիռ եւ անհերքելի հիմքերը, որոնք իրավունք էին տալիս Հայաստանի կառավարությանը հայկական Ղարաբաղը համարելու Հայաստանի անկապտելի սեփականությունը: Այդ առթիվ մինիստր-նախագահն առանձին բացատրագրով գրավոր թոմսոնին է ներկայացնում Ղարաբաղի վերաբերյալ «Հայաստանի կառավարության դրույթները»<sup>103</sup>:

Խորամանկ անգլիացին իր պատասխանի ժամանակ աշխատում էր իրեն անկեղծ ցույց տալ, բայց իրապես կեղծում էր, ստում: Նա ամեն կերպ աշխատում էր Հայաստանի կառավարությունից թաքցնել Ղարաբաղում գոյություն ունեցող սուր քաղաքական իրադրությունը, որ ստեղծվել էր անգլիացիների խտրական քաղաքականության շնորհիվ: Թոմսոնը մինչեւ վերջ ոչինչ չասաց ադրբեջանական զինված ուժերի սանձարձակությունների եւ այն խոր դժգոհության մասին, որ գոյություն ունեւ հայկական Ղարաբաղում անգլիացիների քաղաքականության նկատմամբ: Լպիրշ գեներալը ճգնում էր այնպես ցույց տալ, որ իբրեւ թե ինքը շահագրգռված է գաղթականության օգնության հարցով, մինչդեռ նա մինչ այդ ոչնչով ցույց չէր տվել, որ, հիրավի, հետաքրքրվում է գաղթականների վիճակով: Անգամ Բաքվում, ուր Թոմսոնը Նուրի-փաշայի հետ գրկախառն անց էր կացնում իր երջանիկ ու անհոգ ժամերը ադրբեջանական կալվածատերերի սարքած օրգիաներում, անգամ այդ քաղաքում կոտորածներից սարսափելի տուժած հայությանը որեւէ օգնություն ցույց տալու համար նա մինչեւ վերջ մատր մատին չխփեց:

Թոմսոնը չբաշվեց բացահայտ կերպով ստել, որ Խոսրով-բեկ Սուլթանովն իբրեւ թե աշխատանք է կատարում գաղթականության օգնության գծով ցույց տալու համար Հայաստանի կառավարությանը, որ իրեն կողմից իսկ իբրեւ «պանիսլամիստ եւ Թուրքիայի կողմնակից» ճանաչված Սուլթանովը մի հեղ եւ խաղաղասեր աղավնի է, որն սկսել է արդեն բարիքներ գործել Ղարաբաղի հայության համար՝ իր հավանությամբ նշանակված լինելով գեներալ-նահանգապետ: Մինչդեռ իրապես Սուլթանովը մատնված էր անգործության, որովհետեւ չէր համարձակվում Շուշու մոտուլմանական մասից մի քայլ անգամ կատարել դեպի հայկական մասը, սպասելով, թե երբ այդ անելու հնարավորություն կտան անգլիացիները: Գեներալ Թոմսոնը

<sup>103</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, թ. 59:



ստում էր նույնպես, հավատացնելով, որ իբրեւ թե գեներալ Մեհմանդարովը պատասխանատու է կարգված Շուշի-Եվլախ խճուղու ապահովության համար, մինչդեռ խճուղու այդ ուղեմասը, ինչպես օսմանյան թուրքերի ժամանակ, այնպես էլ թոմսոնների օրոք, ապահովված չէր հայերի երթեւեկության համար: Թոմսոնը հավատացնում էր կեղծավորաբար, թե քանի որ Շուշուց դեպի Երեւան ճանապարհներ չկան, այդ պատճառով նա չի դիմել հայերին (այսինքն Հայաստանի կառավարությանը) առաջարկելով կառավարել Ղարաբաղը: Թոմսոնը Զանգեզուրը նույնպես կտրված էր համարում Երեւանից:

Այդ խոսքերն իրենց՝ անգլիացիների հակահայ քաղաքականությունը սքողելու ճարպիկ մանյովը էր: Կասկածից դուրս է, որ Հայաստանը միջոց եւ հնարավորություններ կստեղծեր Ղարաբաղը կառավարելու համար, եթե միայն անգլիական գիշատիչները՝ Ադրբեջանին հաճոյանալու եւ ամեն կերպ սիրաշահելու քաղաքականությունն ըստ ամենայնի չնպաստեր անդրկովկասյան այդ փոքրիկ թյուրքիային՝ կլանելու հայ ժողովրդի դարավոր սեփականությունը կազմող Արցախը: Անկասկած, Հայաստանի կառավարությունը միշտ էլ Ղարաբաղը կառավարելու ճանապարհ կգտներ, ճիշտ այնպես, ինչպես նա այդպիսի ճանապարհ գտավ Զանգեզուրում վարչություն կազմակերպելու եւ այդ գավառը Ադրբեջանի նվաճողական ագրեսիայից փախչուն կերպով պաշտպանելու համար:

Ինչպե՞ս է, որ Անգլիան կարողանում է իրեն թշնամաբար տրամադրված եւ մի քանի հազար կիլոմետր հեռավորության վրա գտնվող, ճանապարհներից զուրկ եւ անգլիական մետրոպոլիայից մի քանի անգամ մեծ երկրները բռնություն հափշտակել եւ գաղութների վերածելով «կառավարել», իսկ Հայաստանը չէր կարող հայերով հոծ բնակված եւ միշտ դեպի մայր հայրենիքը ձգտող սեփական երկրամասը, որ հեռու էր Երեւանից ոչ ավելի, քան 180-200 կիլոմետր, միջոցներ գտնել կառավարելու:

Անգլիական գեներալի փաստարկման անհեթեթությունն ակներեւ էր:

«Մուսուլմաններին կառավարելու գործի մեջ քաշելը չի կանխորոշում այդ շրջանների ապագա ճակատագիրը», - ասում էր Թոմսոնը: Եթե հիրավի անկեղծ էին այդ խոսքերը, հապա ինչո՞ւ նա ոչ մի կերպ չէր համաձայնվում մուսուլմանների փոխարեն իրենց՝ հայերին «գործի մեջ քաշել»՝ սեփական երկիրը գեթ ժամանակավորապես կառավարելու համար, մանավանդ, որ Ղարաբաղի հայերը իրենց կուլտուրական մակարդակով անհամեմատ

բարձր էին Ադրբեջանի մուսուլմաններից եւ իրենց երկիրը կառավարելու երկարատեւ եւ հաջող փորձ ունեին:

Անգլիական գեներալն աշխատում էր թաքցնել Հայաստանի կառավարությունից նաեւ ադրբեջանական զորքերի տեղաշարժերի ագրեսիվ նպատակը Ղարաբաղի եւ Սյունիքի նկատմամբ, հայտարարելով, որ՝ այդ «տեղաշարժերի լուրերը չափազանցած են», որ՝ ադրբեջանական զինված ուժերը իսկապես չեն իբրեւ թե նպատակ ունեն «խստորեն հետեւել Անդրանիկի շարժումներին»:

Երբ իսան-խոյսկու պահանջով Թոմսոնն արդեն խափանել էր Անդրանիկի մուտքը Ղարաբաղ, եւ Գորիսի անգլիական միսիան ինքն արդեն «հսկում էր» նրա շարժումներին, էլ դրանից հետո Ադրբեջանի ղեկավարներին ի՞նչ վախ կարող էին ունենալ Անդրանիկից, որ կարիք զգային «խստորեն հետեւելու» նրա զինված ուժերի շարժումներին: Եթե Անդրանիկը չկատարեր դեկտեմբերի 2-ի (ն. տ.) սխալը եւ շարունակեր իր հաղթական զորաշարժը դեպի Շուշի, Ադրբեջանը նրա դեմ կռվի ելնելու դեպքում անզոր պիտի լիներ պահելու իր ձեռքում անգամ սեփական գավառները՝ սկսած Աղդամից դեպի Երեւան, հյուսիս եւ հարավ: Միայն եւ միայն անգլիացիների շնորհիվ եւ նրանց օգնությամբ Ադրբեջանը կարողացավ փրկվել Սյունիքի եւ Արցախի միացյալ մարտական ուժերի արեղ գրոհից...

Այդ խորհրդակցության ժամանակ էր, որ Թոմսոնը չքաշվեց հայտնել Նուրի-փաշայի Բաքվում գտնվելու «գաղտնիքը»՝ հուսալով, որ «դրա մասին չի հայտնվի այդ տան պարիսպներից դուրս»: Ալբիոնի այդ նենգ գավառը երեւի վախենում էր, որ օսմանյան բարձրաստիճան սպաների ներկայությունն Ադրբեջանում, եթե այն բացահայտվեր, կարող էր խոր դժգոհությունների առիթ ծառայել դաշնակիցների շրջանում անգլիական զինվորականների Անդրկովկասում վարած նողկալի քաղաքականության դեմ...

Կարելի էր սպասել, որ Հայաստանի մինիստր-նախագահն իր ամփոփման խոսքում խստորեն կմերկացներ ու կդատապարտեր Բաքվի անգլիական հրամանատարության եւ մասնավորապես Թոմսոնի ակնհայտ դիսկրիմինացիոն քաղաքականությունը հայերի նկատմամբ Ադրբեջանում ու Ղարաբաղում եւ կտրուկ կերպով կպահանջեր վերջ տալ Ղարաբաղի հայության վրա գործադրվող բռնություններին եւ նրա դեմ լարվող անվերջ դավերին: Բայց արդ չարվեց: Խատիսյանը երեւի չուզեց կոռեկտուրայի սահմաններից անցնել եւ կոպտել «դաշնակից» Անգլիայի ներկայացուցչին: Նա



միայն հայտնեց, որ Ղարաբաղի նկատմամբ Հայաստանի կառավարությունը մնում է իր տեսակետին, իսկ Թոմսոնի տեսակետն «ընդունվում է ի գիտություն»:

Հայաստանի կառավարության կազմակերպած այդ հատուկ խորհրդակցությունը Ղարաբաղի վիճակի թեթեւացմանը չնպաստեց:

Ապրիլ ամսվա սկզբին Թոմսոնը նշանակվեց բրիտանական անդրկովկասյան հրամանատարության գլուխ, հակառակ այն բազմաթիվ գրավոր բողոքների, որ հայկական մի շարք կազմակերպություններ ուղղել էին բրիտանական եւ դաշնակից կառավարություններին ու անգլիական գլխավոր հրամանատարությանը՝ Թոմսոնի Ադրբեջանում վարած քաղաքականության դեմ:

Իր նոր պաշտոնում Թոմսոնի առաջին գործն այն եղավ, որ կարգադրեց Կարսի ծանր թնդանոթների եւ ռումբերի մի զգալի մասը տեղափոխել Ադրբեջան՝ իբրեւ թե գեներալ Բիչերախովին հանձնելու համար: Գեներալ Սիլիկովի փորձը՝ այդ թնդանոթներով բարձած զնացքը բռնելու Ալեքսպոլում, առաջ բերեց անգլիացիների կատաղի զայրույթը<sup>104</sup>...

Թոմսոնը Բաքվում իր ներկայացուցիչ նշանակեց ռմբ գնդապետ Շատելվորտի՝ իբրեւ «Բաքվի բրիտանական զորախմբի հրամանատար»<sup>105</sup>: Շատելվորտը ապրիլի 3-ին արձակած իր հրամանում ուղղված Շուշու, Զանգեզուրի, Զեբերայիլի եւ Զիվանշիրի հայ բնակչությանը, պահանջում էր «առանց այլեւայլության» ենթարկվել գեներալ-նահանգապետ Սուլթանովի հրամաններին: Բայց Ղարաբաղի հայ բնակչությունն այս անգամ եւս արհամարհանքով վերաբերվեց անգլիական նոր սալդաֆոնի պահանջին եւ ոչ մի զենով չուզեց ճանաչել Ադրբեջանի իշխանությունը Ղարաբաղի վրա: Իսկ Հայաստանի արտաքին գործերի մինիստրը Շատելվորտի հրամանի առթիվ հայտարարեց, որ՝ «Հայաստանի կառավարության կարծիքը եւ որոշումը մնում է անփոփոխ, այսինքն՝ Զանգեզուրի եւ Ղարաբաղի հայ բնակչությանը չի կարելի ստիպել ենթարկվել Ադրբեջանին»<sup>106</sup>:

1919 թ. ապրիլի սկզբից Ղարաբաղում խիստ սրված քաղաքական իրադրությունը ստիպեց Ազգային խորհրդին շտապ համագումար հրավի-

<sup>104</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 45, գ. 33, թ. 11:

<sup>105</sup> Անգլիացիները շատ զորքեր չէին բերել Անդրկովկաս: Նրանց զորքերը ընդհանուր քանակը 7-8 գումարտակից ավելի չէր (տե՛ս նույն տեղում):

<sup>106</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, թ. 68:

րել՝ «Իրագեկ դարձնելու Ղարաբաղի հայությունը բանակցությունների (անգլիացիների հետ վարվող) ընթացքին, նոր ցուցմունքներ ստանալու եւ ապա անգլիական հրամանատարությանը ծանոթացնելու երկիր տրամադրություններին»<sup>107</sup>:

Որոշվեց համագումար հրավիրել ապրիլի 23-ին (1919 թ.):

Մինչեւ համագումարը, Շուշում քաղաքացիների նախաձեռնությամբ տեղի ունեցավ համաժողովրդական մեծ ցույց՝ ուղղված անգլիացիների հակահայ քաղաքականության դեմ: Ապրիլի 19-ին, ցերեկվա ժամը 2-ին, Շուշում փակվեցին բոլոր խանութները, ամենուրեք դադարեցին աշխատանքները, եւ ժողովուրդը հոծ խմբերով հավաքվեց անգլիական միսիայի շենքի առաջ: Քաղաքացիների հետ հավաքվել էին այդտեղ նաեւ գավառից եկած բազմաթիվ գյուղացիներ: Ժողովրդի միջից դուրս եկան ճառախոսներ, որոնք խստորեն դատապարտեցին անգլիացիների պրոպոկացիոն ու խտրական քաղաքականությունը եւ պահանջեցին անգլիական միսիայից՝ վերջ տալ հայության դեմ ուղղված գործողություններին, հեռացնել Շուշուց Սուլթանովին եւ Ադրբեջանի մյուս գործակալներին:

Ցույցը, սակայն, վիժեց շնորհիվ Ազգային խորհրդի ապիկարության, որը չկարողացավ օգտագործել ժողովրդի մեջ ծառացած զայրույթը եւ կազմակերպված բնույթ տալ ցույցին: Իսկ քաղաքի միլիցիապետ եւ անգլիական լրտես Միքայելյանի առաջնորդությամբ ցույցի վայրը եկած հնդկացի զինվորների մի ջոկատ պրոպոկացիոն հրաձգությամբ ստիպեց անդեն ժողովրդին ցրվել: Այդպիսով այդ բազմամարդ ժողովրդական ցույցն անցավ անհետեւանք:

## 7. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1919 թ. ապրիլի 23-ին (ն. տ.) Շուշում բացվեց Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը, որին մասնակցում էին 69 պատգամավոր:

Բաքվի անգլիական զորախմբի հրամանատար Շատելվորտը, հանդես գալով առաջին օրվա ոչ պաշտոնական նիստում, առաջարկեց ընդունել Ադրբեջանի կառավարության մշակած ու անգլիական հրամանատարությունից ընդունված եւ հաստատված ծրագիրը Ղարաբաղի վարչական կազ-

<sup>107</sup> Նույն տեղում:



մակերպության մասին: Համագումարին մոլորության մեջ դնելու համար Շատելվորտը չքաշվեց դիմել խաբեության՝ հայտարարելով, որ իբրեւ թե Հայաստանի կառավարությունն արդեն համաձայնություն է հայտնել ճանաչելու Ղարաբաղը իբրեւ Ադրբեջանի մի մասը: Սակայն նիստին ներկա գտնվող Հայաստանի ներկայացուցիչները՝ Միքայել Արզումանյանը եւ Հովսեփ Արզումանյանը, տեղն ու տեղը հերքեցին այդ սուտը:

Շատելվորտի ներկայացրած ծրագիրը, որ նույնն էր, ինչ որ ներկայացրել էր դրանից առաջ Թոմսոնը Ազգային խորհրդին իբրեւ «նախագիծ», համագումարը քննեց իր հաջորդ օրվա պաշտոնական նիստում եւ այդ առթիվ միաձայն ընդունեց հետևյալ բանաձևը.

«Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը, լսելով 1919 թ. ապրիլի 23-ին անգլիական հրամանատարության ներկայացուցիչ գնդապետ Շատելվորտի առաջարկությունը Ղարաբաղի ժամանակավոր վարչական կազմակերպության մասին եւ քննելով այդ հարցը ապրիլի 24-ի իր պաշտոնական նիստում, որոշեց.

1. Անպայման կողմնակից լինելով Ղարաբաղում կարգ ու խաղաղություն հաստատելուն եւ ամեն միջոցով ձգտելով դրան,

2. Անկեղծ կերպով եւ ամբողջ հոգով ընդառաջ գնալով անգլիական հրամանատարության առաջարկին՝ հարեւան թյուրք ժողովրդի հետ խաղաղ ու բարեկամական հարաբերություններ պահպանելու մասին, մի բան, որ Ղարաբաղի հայությունը մինչեւ այդ էլ իրագործել է,

3. Նկատի առնելով, որ տերիտորիալ հարցերը, ինչպես եւ Ղարաբաղի սահմանների վերաբերյալ խնդիրները, համաձայն հենց գնդապետ Շատելվորտի հայտարարության, իրենց վերջնական լուծումը պետք է ստանան Վերսալի կոնֆերանսում, որ՝ այդ հայտարարությունը համապատասխանում է Ղարաբաղի հայության ցանկությանն ու կենսական շահերին, Ղարաբաղի հայության, որ իր պատվիրակներին համագումար է ուղարկել եւ նրանց գրավոր իմպերատիվ մանդատներ տվել,

նկատի ունենալով այդ ամենը՝ համագումարն անընդունելի է համարում ամեն մի վարչական ծրագիր, որը որեւէ կապ է հաստատում Ադրբեջանի հետ, իսկ այդպիսի ծրագրի բռնի գործադրությունը, համագումարի կարծիքով, լուրջ ազգամիջյան կոիվներ ու արյունահեղություն կառաջացնի, որի համար Ղարաբաղի հայության հիմնական համագումարը ոչ մի դեպքում չի կարող պատասխանատու լինել»:

Ղարաբաղը Ադրբեջանին ենթարկելու ծրագրի «բռնի գործադրություն»

փորձը, ինչպես գիտենք, կատարվել եւ կատարվում էր, առանց, սակայն, լուրջ դիմադրության հանդիպելու Ղարաբաղի հայության կողմից, շնորհիվ ոչ միայն Ազգային խորհրդի երկշտ ու անվճռական գործելակերպի, այլեւ գլխավորապես Ղարաբաղի զինված ուժերի այդ ժամանակվա ապիկար ու թուլամորթ դեկավարներին:

Դեռ չենք ասում, որ դավաճաններն էլ իրենց սեւ գործն էին կատարում սեփական ժողովուրդը թշնամու ձեռքը մատնելու համար:

Երկրի կարեւոր ռազմական նշանակություն ունեցող մատույցներն արդեն Ադրբեջանի ձեռքում էին, եւ թշնամին գերակշռություն ուներ թե՛ քաղաքում եւ թե՛ գավառում՝ անցնելու վճռական հարձակման Ղարաբաղը ընկճելու համար, որը եւ տեղի ունեցավ 5-րդ համագումարից շատ շանցած: Հետեւապես համագումարի նպատակը՝ իր բանաձևի միջոցով հակառակորդին երկյուղ ներշնչել «ծրագրի բռնի գործադրության դեպքում» «լուրջ ազգամիջյան կոիվների» հեռանկարով, Ղարաբաղի Ազգային խորհրդի թղթե բողոքներում բազմիցս արտահայտված դատարկ ու անզոր շաղակրատության մի կրկնություն էր, որ ոչ ոքի վախեցնել չէր կարող եւ չվախեցրեց:

Ապրիլի 25-ին Սուլթանովը մի գրություն մե առաջարկեց համագումարին միասին քննել մի քանի հարցեր: Համագումարը պատասխանեց մերժումով, նկատի ունենալով «որ անընդունելի է համագումարի համար Ադրբեջանի կառավարության իշխանությունը, ինչ ձեռով էլ նա արտահայտված լինի»<sup>108</sup>...

Համագումարի այդ մերժմանը Սուլթանովը պատասխանեց նրանով, որ 1919թ. մայիսի 28-ին 1000-ի չափ թյուրք «կամավորների» (զինված խուժանի) եւ ասկերների միջոցով հարձակում կազմակերպեց Խժաբերդ գյուղի վրա: Մի քանի ժամվա կատաղի մարտից հետո թշնամին թեւեւ պարտություն կրեց, բայց գյուղն էլ զգալի կորուստներ ունեցավ:

Շատելվորտը համագումարի առաջ էր դրել նաեւ քոչի խնդիրը եւ պահանջել՝ առանց որեւէ արգելքի բաց թողնել մուսուլման քոչվորներին դեպի հայկական լեռնային արոտավայրերը: Համագումարը շառարկեց քոչի բարձրացման դեմ: Բայց, անցած տարիների դառը փորձը նկատի առնելով, կամեցավ, որ քոչը կատարվի կազմակերպված, որ՝ քոչվորներն իրենց ճանապարհին բարդություններ չառաջացնեն: Իր հատուկ բանաձևում համա-

<sup>108</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, թ. 128:



գումարը ցանկություն հայտնեց, որ քոչվորներն անցնեն յայլաները «միայն անգլիական հրամանատարության երաշխավորությամբ եւ բրիտանական զորամասերի հսկողության տակ», որպեսզի քոչվորների եւ հայերի մեջ ընդհարումներ տեղի չունենան, այլեւ՝ «այն պայմանով, որ քոչվորներն անպատճառ անգնեն անցնեն», որովհետեւ անցյալի փորձը ցույց է տվել, որ զինված քոչվորները լեռներում հաճախակի հարձակումներ են գործում հայկական գյուղերի վրա, թալանում տները, քշում անասունները եւ սպանություններ կատարում։ Նրանք կտրում են հայկական գյուղերի ճանապարհները եւ անապահով վիճակ ստեղծում երթեկության համար։ Քոչը արոտավայրերը բարձրանալիս երկու կողմերին հասած վնասները որոշելու եւ հատուցելու համար համագումարը առաջարկում էր կազմել ազգամիջյան կոմիտե՝ հայերից եւ քոչվորներից, որի որոշումները երկու կողմերի կրած վնասների հատուցման վերաբերյալ պետք է գործադրվեին առանց առարկության։

Քոչի մասին համագումարի այդ որոշումից Շատելվորտը գոհ չմնաց։ Նա ցանկանում էր, որ հայերը քոչը բաց թողնեն առանց որեւէ նախնական պայմանի, մինչդեռ քոչի ճանապարհների մոտ գտնվող հայկական գյուղերի բնակիչները իրավացիորեն պահանջում էին, որ հսկողություն սահմանվի եւ վնասները հատուցվեն, այլապես հրաժարվում էին քոչը բաց թողնել։

## 8. ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳԱԶԱԶԱԾ «ԲՈՒԼԴՈՎԸ»

Համագումարից մի քանի օր հետո Շատելվորտը գրավոր զեկուցում ներկայացրեց Թիֆլիս՝ Թոմսոնին։ Այդ զեկուցումը կարգացվեց մայիսի 3-ին (1919 թ.) Հայաստանի մինիստր-նախագահ Նախիջևանի ներկայությամբ, որ եկել էր Թիֆլիս՝ անգլիական միսիայի հետ բանակցելու Նախիջևանի եւ Ղարաբաղի վերաբերյալ<sup>109</sup>։ Թոմսոնի մոտ ներկա էին նաեւ գեներալներ՝ Բիշ, Բրաֆ, Դեւի, իրենց շտաբերի պետերով։

Շատելվորտի զեկուցումն ամբողջովին ուղղված է Ղարաբաղի հայության եւ նրա Ազգային խորհրդի դեմ։ Զեկուցման մեջ բերված փաստերը մեծ մասամբ ստահոգ, միտումնավոր ու պրովոկացիոն բնույթի էին եւ հե-

<sup>109</sup> Դաշնակից պետությունների միախառնումը մինչ այդ համաձայնություն էին հայտնել, որ հայկական զորքերի հետ դեպի Նախիջևան շարժվեն Նախիջևանի շրջանի հայ գաղթականները, թվով 18 հազար։

տապնդում էին մի նպատակ՝ զրգռել Թոմսոնին չէ թե միայն Ղարաբաղի հայության, այլեւ Հայաստանի հանրապետության դեմ։ Շատելվորտը հայտնում էր Թոմսոնին, որ Ղարաբաղի հայկական զինված ուժերի գլուխ են կանգնած Հայաստանից ուղարկված սպաներ, որ՝ Շահմազյանը Ղարաբաղում զորք է կազմակերպում Հայաստանի կառավարության անունից։ Շատելվորտի այդ տեղեկություններն, իհարկե, հերյուրանք էին եւ չէին համապատասխանում իրականությանը։ Նա ասում էր, որ Ազգային խորհուրդը իբրեւ թե մերժել է քոչը բաց թողնել, որ՝ «քոչվորներին չի կարելի զինաթափ անել, այլապես հայերը նրանց կկոտորեն», որ՝ Սուլթանովը հայտնել է իրեն (Շատելվորտին), թե հայերը «ուրախ կլինեն ճանաչել Ադրբեջանի իշխանությունը եւ ամեն բան խանդարում է դաշնակցությունը», որ՝ «Սուլթանովի կյանքը վտանգված է (իմա՝ հայերից)», որ՝ Սոկրատ-բեկ Մելիք-Շահնազարյանն էլ ասել է, թե գործին խանդարում է Ազգային խորհուրդը, որ համագումարի պատգամավորները հայտնել են գրավոր իրենց անհամաձայնությունը՝ ճանաչելու Ադրբեջանի իշխանությունը եւ որ նրանք (պատգամավորները) չեն վախենում սպառնալիքներից եւ այլն։

Թոմսոնը, անգլիական գազազած այդ «բուլդոզը», Շատելվորտի զեկուցումը կարգալուց հետո, հայտնում է. «Զեկուցումից երեւում է, որ Հայաստանի իր միջամտությամբ Ղարաբաղի գործերին կարծես պատերազմ է հայտարարում Անգլիային։ Սուլթանովն իրեն կոռեկտ է պահում։ Բնակչությունն ապրում է խաղաղ, եւ գրգռողը միայն Հայաստանի կառավարության ագենտներն են։ Այդ ամենը, - շարունակում է Թոմսոնը, - մեզ ստիպեց դադարեցնել հայկական զորքերի շարժումը փախստականների հետ դեպի Նախիջևան։ Այդ շարժումը հնարավոր է միայն հետեւյալ պայմանները կատարելու դեպքում.

ա) Պիտի թուուցիկ բաց թողնվի Հայաստանի կառավարության անունից Ղարաբաղի մասին, որի մեջ պիտի ցույց տրվի, որ ամեն տեսակի ընդդիմություն Ադրբեջանի կառավարությանն անթույլատրելի է եւ, եթե հայերը շարունակեն ընդդիմանալ, ապա կտուժեն (Նախիջևանի) փախստականները։

բ) Քոչվորներին պիտի բաց թողնել»։

Թոմսոնը վերջացնում է իր ուլտիմատիվ պահանջները հետեւյալ խոսքերով. «Այս պայմանները կատարելուց հետո միայն զորքերը (Հայաստանի) կշարժվեն դեպի Նախիջևան»։

Հայաստանի մինիստր-նախագահը հայտնում է, որ Հայաստանի կառավարությունը...



վարությունը Ղարաբաղը համարում է Հայաստանի անբաժան մասը, բայց մինչև Փարիզի խաղաղության կոնֆերանսի վճիռը անհրաժեշտ է համարում մարզի կառավարությունը հանձնել անգլիական զենեքալ-նահանգապետի, հայերից եւ մուսուլմաններից կազմված ազգային խորհուրդների հետ միասին: Հայաստանի կառավարությունն ունի պաշտոնական ներկայացուցիչներ. Ղարաբաղում Արզումանյան եւ Արղունյան, իսկ Զանգեզուրում՝ Խահմաղյան: Մինիստր-նախագահը հայտարարում է, որ անգլիական հրամանատարության ստեղծած պայմաններում Հայաստանի կառավարությունը չի կարող պատասխանատու լինել Ղարաբաղի ղեկավարի համար, քանի որ նա այնտեղ չունի վարչական մարմիններ: «Թույլ չտալ, - ասում է մինիստրը, - նախիջեւանի փախստականներին վերագառնալ նախիջեւան՝ կապելով հարցը Ղարաբաղի հետ, հավասարազոր է օսմանյան քաղաքականության. մեղավոր ճանաչել անմեղ մարդկանց մի երրորդ կողմի գործողությունների համար, տվյալ դեպքում Հայաստանի կառավարության կարծեցյալ գործողությունների համար, անհեթեթություն է: Նախիջեւանի 18.000 հայ գաղթականներից արդեն մեռել են 8000...»: Մինիստրը կտրականապես մերժում է ստորագրել Ղարաբաղի հայությանն ուղղված այնպիսի կոչ, ինչպիսին առաջարկում է զենեքալ Թոմսոնը: «Մեր արժանապատվությունը թույլ չի տալիս այդ, - ասում է նա: - Այդ պատճառով մենք կենթարկվենք ձեր կարգադրությանը՝ չշարժվել դեպի նախիջեւան, բայց նման կոչ չենք ստորագրի...»:

Խատիսյանի խոսքից հետո Թոմսոնը խորհրդակցում է մյուս զենեքալների հետ: Այդ խորհրդակցությունից հետո Թոմսոնը հայտնում է Խատիսյանին, որ ինքը, իբրեւ թե «կշռադատել է ամենը եւ վճռել, որ Խատիսյանի պատասխանները համապատասխանում են իրականությանը», եւ իր պահանջը՝ չշարժել հայկական զորքերը փախստականների հետ դեպի նախիջեւան՝ «ես է վերցնում»<sup>110</sup>:

Միանգամայն ակներեւ էր, որ գազազած կոլեգային խոհեմության եւ չափավորության էին հորդորել խորհրդակցության մասնակից զենեքալները, այլապես Թոմսոնն այդպես հապճեպ «ես չէր վերցնի» իր տմարդի որոշումը՝ մահվան ճիրաններում թաքտացող նախիջեւանի հայ փախստականների վերաբերյալ:

<sup>110</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, ք. 77-79:

## 9. ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԳՐԵՍԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ: ԵՐԵՔ ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ

Ադրբեջանը կամաց-կամաց սեղմում էր օղակը Ղարաբաղի շուրջը: Իր նվաճողական ձեռնարկումների ասպարեզում ամեն օժանդակություն ստանալով Բաքվի անգլիական հրամանատարությունից եւ Շուշու միսիայից, Ադրբեջանի ղեկավարությունը բանդիտական զինված հորդաներով հեղեղել էր Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջիվանշիրի եւ Գյուլիստանի սահմանները եւ ուժեղացրել իր զորամասերը Կարիազինոյում, Ջեբրայիլում եւ Զաբուղում:

Թոմսոնի պահանջով Հայաստանի կառավարությունը ետ էր կանչել Ղարաբաղից իր ներկայացուցիչներին՝ Միքայել Արզումանյանին եւ իշխան Հովսեփ Արղունյանին: Հայաստանի կառավարության հսկողությունը եւ ազդեցությունը Ղարաբաղում, բնականաբար, ձեռնադրվում էր կարող հավասարապես թե՛ Ադրբեջանին եւ թե՛ Թոմսոններին: Չէ՞ որ վերջիններս սովոր էին «ազատ ձեռքերի» քաղաքականության, երբ անհրաժեշտ էր անարգել իրագործել Ալբիոնի հանցավոր մտադրությունները:

Ադրբեջանում վերստին ուժեղ տնտեսական բոյկոտ էր հայտարարված հայերի դեմ: Ոչինչ չէր վաճառվում հայ հարեւաններին թե՛ քաղաքում եւ թե՛ գավառում:

Հայկական Ղարաբաղի հարավ-արեւելյան սահմանակից վայրերում հայ գյուղացիները դաշտային աշխատանքի դուրս գալ չէին կարող, որովհետեւ մուսուլմանական զինված խմբերը շրջում էին սահմանների վրա եւ ահաբեկում այգիներում ու դաշտերում աշխատող գյուղացիներին:

Խոսքով-բեկ Սուլթանովը ադրբեջանական զինված ուժերի քանակը բավականաչափ մեծացրել էր նաեւ Շուշուում ու Խանքենդում: Գավառից Շուշի մուտք գործող բոլոր ճանապարհները նա առել էր հսկողության տակ: Քաղաքի մոտակա վայրերում գիշեր-ցերեկ շրջում էին կասկածելի զինված խմբեր՝ բաղկացած քրդերից, որոնք առաջներում երբեք չեն համարձակվել երեւալ հայկական բնակավայրերի մոտակայքում: Իսկ Շուշու անգլիական միսիան հնդիկ զինվորների թիվը հասցրել էր 300-ի՝ մեծ մասամբ մուսուլմաններ, հավանորեն, դարձյալ հայերի վրա ճնշում գործադրելու նպատակով:



վարությունը Ղարաբաղը համարում է Հայաստանի անբաժան մասը, բայց մինչև ֓արիզի խաղաղության կոնֆերանսի վճիռը անհրաժեշտ է համարում մարզի կառավարությունը հանձնել անգլիական զենեերալ-նահանգապետի, հայերից եւ մուսուլմաններից կազմված ազգային խորհուրդների հետ միասին: Հայաստանի կառավարությունն ունի պաշտոնական ներկայացուցիչներ: Ղարաբաղում Արզումանյան եւ Արղուիյան, իսկ Զանգեզուրում՝ Խահմազյան: Մինիստր-նախագահը հայտարարում է, որ անգլիական հրամանատարության ստեղծած պայմաններում Հայաստանի կառավարությունը չի կարող պատասխանատու լինել Ղարաբաղի զեպքերի համար, քանի որ նա այնտեղ չունի վարչական մարմիններ: «Թույլ չտալ, - ասում է մինիստրը, - նախիջեւանի փախստականներին վերադառնալ նախիջեւան՝ կապելով հարցը Ղարաբաղի հետ, հավասարազոր է օսմանյան քաղաքականության. մեղավոր ճանաչել անմեղ մարդկանց մի երրորդ կողմի գործողությունների համար, տվյալ զեպքում Հայաստանի կառավարության կարծեցյալ գործողությունների համար, անհեթեթություն է: Նախիջեւանի 18.000 հայ գաղթականներից արդեն մեռել են 8000...»: Մինիստրը կտրականապես մերժում է ստորագրել Ղարաբաղի հայությանն ուղղված այնպիսի կոչ, ինչպիսին առաջարկում է զենեերալ Թոմսոնը: «Մեր արժանապատվությունը թույլ չի տալիս այդ, - ասում է նա: - Այդ պատճառով մենք կենթարկվենք ձեր կարգադրությանը՝ շարժվել զեպի նախիջեւան, բայց նման կոչ չենք ստորագրի...»:

Խատիսյանի խոսքից հետո Թոմսոնը խորհրդակցում է մյուս զենեերալների հետ: Այդ խորհրդակցությունից հետո Թոմսոնը հայտնում է Խատիսյանին, որ ինքը, իբրեւ թե «կշռադատել է ամենը եւ վճռել, որ Խատիսյանի պատասխանները համապատասխանում են իրականությանը», եւ իր պահանջը՝ շարժել հայկական զորքերը փախստականների հետ զեպի նախիջեւան՝ «ետ է վերցնում»<sup>110</sup>:

Միանգամայն ակներեւ էր, որ գազազած կոլեգային խոհեմության եւ չափավորության էին հորդորել խորհրդակցության մասնակից զենեերալները, այլապես Թոմսոնն այդպես հապճեպ «ետ չէր վերցնի» իր տմարդի որոշումը՝ մահվան ճիրաններում թպրտացող նախիջեւանի հայ փախստականների վերաբերյալ:

<sup>110</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, Բ. 77-79:

## 9. ԱԴԻԲԵՋԱՆԻ ԱԳՐԵՍԻՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ: ԵՐԵԲ ՀԱՅ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱՐՏԱՔՍՈՒՄԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ

Ադրբեջանը կամաց-կամաց սեղմում էր օղակը Ղարաբաղի շուրջը: Իր նվաճողական ձեռնարկումների ասպարեզում ամեն օժանդակություն ստանալով Բաքվի անգլիական հրամանատարությունից եւ Շուշու միսիայից, Ադրբեջանի ղեկավարությունը բանդիտական զինված հորդաներով հեղեղել էր Դիզակի, Վարանդայի, Խաչենի, Ջիվանշիրի եւ Գյուլիստանի սահմանները եւ ուժեղացրել իր զորամասերը Կարիագինոյում, Ջեբրայիլում եւ Զաբուղում:

Թոմսոնի պահանջով Հայաստանի կառավարությունը ետ էր կանչել Ղարաբաղից իր ներկայացուցիչներին՝ Միքայել Արզումանյանին եւ իշխան Հովսեփ Արղուիյանին: Հայաստանի կառավարության հսկողությունը եւ ազդեցությունը Ղարաբաղում, բնականաբար, ձեռնառու լինել չէր կարող հավասարապես թե՛ Ադրբեջանին եւ թե՛ Թոմսոններին: Չէ՞ որ վերջիններս սովոր էին «ազատ ձեռքերի» քաղաքականության, երբ անհրաժեշտ էր անարգել իրագործել Ալբիոնի հանցավոր մտադրությունները:

Ադրբեջանում վերստին ուժեղ տնտեսական բոյկոտ էր հայտարարված հայերի դեմ: Ոչինչ չէր վաճառվում հայ հարեւաններին թե՛ քաղաքում եւ թե՛ գավառում:

Հայկական Ղարաբաղի հարավ-արեւելյան սահմանակից վայրերում հայ գյուղացիները դաշտային աշխատանքի դուրս գալ չէին կարող, որովհետեւ մուսուլմանական զինված խմբերը շրջում էին սահմանների վրա եւ ահաբեկում այգիներում ու դաշտերում աշխատող գյուղացիներին:

Խոսքով-բեկ Սուլթանովը ադրբեջանական զինված ուժերի քանակը բավականաչափ մեծացրել էր նաեւ Շուշում ու Խանքենդում: Գավառից Շուշի մուտք գործող բոլոր ճանապարհները նա առել էր հսկողության տակ: Քաղաքի մոտակա վայրերում գիշեր-ցերեկ շրջում էին կասկածելի զինված խմբեր՝ բաղկացած քրդերից, որոնք առաջներում երբեք չեն համարձակվել երեւալ հայկական բնակավայրերի մոտակայքում: Իսկ Շուշու անգլիական միսիան հնդկի զինվորների թիվը հասցրել էր 300-ի՝ մեծ մասամբ մուսուլմաններ, հավանորեն, դարձյալ հայերի վրա ճնշում գործադրելու նպատակով:



Մոնկ-Մեզոնը Արզումանյանի եւ Արղուիթյանի՝ Ղարաբաղի սահմաններից հեռանալուց հետո փորձեց իր մոտ «հրավիրել» երկու երիտասարդ հայերի՝ Ազգային խորհրդի նախագահ Իշխանյանին եւ Ղարաբաղի նախկին կառավարության զինվորական գործերի կառավարչին՝ նպատակ ունենալով նրանցից ստորագրություն առնելու՝ թե չպիտի խանգարեն Սուլթանովի ձեռնարկումներին եւ առհասարակ չպիտի զբաղվեն քաղաքականությամբ։ Սակայն այդ անել չէր հաջողվել Մոնկ-Մեզոնին։ Միսիա էր ներկայացել միայն Իշխանյանը, որը հրաժարվել էր այդպիսի ստորագրություն տալուց։

Լարված իրադրությունը Ղարաբաղում, առանց, սակայն, որեւէ աչքի ընկնող բարդությունների, տեւեց մինչեւ 1919թ. հունիսի 3-ը ներառյալ։

\* \* \*

Հունիսի 4-ին, ցերեկվա ժամը 10-11-ին, Սուլթանովի հրամանով եւ Մոնկ-Մեզոնի գիտություններ ու համաձայնությամբ, հանկարծ կատաղի հրացանաձգություն սկսվեց Շուշու թյուրքական քաղաքամասի սահմանի ամբողջ երկարությամբ՝ ուղղված հայկական քաղաքամասի դեմ։ Նպատակ ունենալով ահաբեկել հայ խաղաղ բնակչությանը, թյուրքերը կրակում էին «դում-դում» փամփուռներով։

Հայկական մասում խուճապ առաջացավ, աղմուկով փակվեցին խանութները, ամենուրեք դադարեց նորմալ կյանքը։ Քաղաքի հայության զինված ուժերն անմիջապես բռնեցին հայկական մասի սահմանները եւ սկսեցին ուժեղ փոխհրաձգությամբ պատասխանել մուսուլմանական մասի կրակին՝ մի երկու կեսում գրոհելով եւ դուրս մղելով դիրքերից Ադրբեջանի ասկերներին, որոնք խուճապահար փախուստի գիմելով, շրջանցման վտանգ ստեղծեցին մուսուլմանական ճակատի ձախ թեւի շրջանում։

Սուլթանովին անմիջապես օգնության հասան անգլիացիները։

Կովի տաք ժամանակ, երբ սկսել էր ուժեղանալ խուճապը թյուրքական դիրքերում, հնդկական զինվորների շղթաներն արագ երթով մոտենալով հայկական պաշտպանական կետերին թիկունքից, հայ մարտիկներին ստիպեցին հեռանալ դիրքերից։ Հայերի պաշտպանության ամբողջ գիծը գրավվեց անգլիական զինված ուժերի կողմից։ Այդ ժամանակ մուսուլմանական մասից սկսեց սաստկանալ կրակը։ Կրակում էին ոչ «սիպահիների» գրաված դիրքերի վրա, այլ հայկական մասի տների վրա՝ բոլոր ուղղություններով։ «Դում-դում» գնդակների անախորժ պայթյունները նյարդային ծայրահեղ

լարված վիճակ ստեղծեցին հայ բնակչության շրջանում։

Քաղաքի հայկական զինված ուժերը խմբվեցին նախկին զինվորական գործերի կառավարչի շուրջը։

Կարգադրվեց անմիջապես բռնել հայկական քաղաքամասից դեպի գավառ տանող ուղիները՝ անհրաժեշտության դեպքում քաղաքի հայ բնակչության էվակուացիան ապահովելու նպատակով, որովհետեւ չկար ոչ մի երաշխիք, որ անգլո-ադրբեջանական «կոալիցիան» քաղաքում հայկական կոտորածներ առաջ չէր բերի, ինչպես այդ տեղի ունեցավ հաջորդ օրը գավառում։ Մի երկու տասնյակ մարտիկներ ուղարկվեցին քաղաքի մոտակա վայրերում թափառող զինված քրդական հրոսակներին հալածելու եւ ըստ կարելիության իմաց տալու իսաչենի հրամանատարին՝ բռնելու «Քուրդիստանի» անցուղիները<sup>111</sup>։ Իսկ Ասլանիկի (Մամնայի հերոսի) միջոցով, որ Դիզակից եկել էր տեղեկություններ տանելու քաղաքի անցուղարձի մասին, նամակ ուղարկվեց Լալայանին՝ շտապ հավաքելու Դիզակի ու Վարանդայի ընտիր մարտիկներից մինչեւ 2000 մարդ եւ ամեն կերպ աշխատել հունիսի 5-ի գիշերը մտնել քաղաք։ Գործողության պլանը մանրամասնորեն հայտնվեց Ասլանիկին՝ Լալայանին բանավոր տեղեկացնելու համար։ Հիմնական նպատակն այն էր լինելու, որ անգլիական միսիայի վրա ճնշում պիտի գործադրվեր ընդունել տալու Ազգային խորհրդի առաջարկած՝ Ղարաբաղի ավտոնոմիայի ծրագիրը եւ հարկադրելու Սուլթանովին իր ուժերով հեռանալ Ղարաբաղի սահմաններից։ Ընդ որում նկատի էին առնված այդ գործողության բոլոր հետեւանքները։

Քաղաքում առաջացած սուր ճգնաժամն ստիպեց հայ մտավորականությանը շտապ գումարել ընդհանուր խորհրդակցությունը՝ ստեղծված դրությունից ելք գտնելու համար։

Կարճ ժամանակամիջոցում բժիշկ Բահաթրյանի ընդարձակ այգում ժողովվեց մի ստվար բազմություն՝ բաղկացած Շուշու հայկական մասի բոլոր քաղաքական հոսանքներին պատկանող մտավորականներից։ Այդտեղ էր նաեւ Ղարաբաղի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը։ Նա տեղեկացրեց խորհրդակցությանը, որ ինքը քիչ առաջ եղել է անգլիական միսիայում, ուր գնացել էր խնդրելու, որպեսզի միջոցներ ձեռք առնվեն

<sup>111</sup> Դեպի իսաչեն եւ Զրաբերդ տանող բոլոր ճանապարհները փակված էին Սուլթանովի բանդաների կողմից։



վերջ տալու հրացանաձգությունը, այլեւ մուսուլմանական մասում աշխատող հայ արհեստավորներին անգլիական զինվորների միջոցով տեղափոխելու հայկական մասը<sup>112</sup>։ Մոնկ-Մեզոնը ադրբեջանական ագենտ Մասլեննիկովի բերանով պատասխանել էր եպիսկոպոսի աղերսանքներին, որ երբեք չի կարող դադարել քաղաքում հրացանաձգությունը եւ հայերը չեն տեղափոխվի մուսուլմանական մասից այնքան ժամանակ, մինչեւ անգլիական միսիա չներկայանան հայերի երեք գործիչները՝ Ազգային խորհրդի նախագահ Իշխանյանը, դաշնակցության Ղարաբաղի կոմիտեի նախագահ Ավետիսյանը եւ զինվորական գործերի նախկին կառավարիչը։ Ընդ որում՝ անգլիական միսիայի պետը սպառնացել էր, որ այդ պահանջը չկատարվելու դեպքում ինքը չի կարող երաշխավորել, որ մուսուլմանական զինված բանդաները չեն ներխուժի հայկական մասը եւ այնտեղ էքսցեսներ առաջ չեն բերի։ Եպիսկոպոսի այն հարցին, թե ինչ է մտադիր անելու անգլիական միսիան այդ երեք գործիչների հետ, Մոնկ-Մեզոնը պատասխանել էր. «խորհրդակցելու նրանց հետ կարգը երկրում վերականգնելու միջոցների մասին եւ ապա երեքին էլ ազատ թողնելու...»։

Եպիսկոպոսը, որ չէր կռահել անգլիացիներ դավը, առաջարկեց հավաքված բազմությանը համոզել պահանջված երեք անձանց ներկայանալ իր ուղեկցությամբ անգլիական միսիա։ Իշխանյանը եւ Ավետիսյանը, որոնք ներկա էին ժողովին, չմերժեցին ներկայանալ, թեեւ կասկած հայտնեցին անգլիացիների իսկական մտադրության նկատմամբ։ Սակայն ժողովին ներկա չէր նախկին կառավարիչը։ Երբ նրան կանչեցին, նա մերժեց ներկայանալ ժողովին՝ ոչինչ լավ բան չսպասելով ահաբեկված մարդկանց հավաքույթից։ Բայց ի վերջո ստիպված եղավ տեղի տալ բազմության եւ մոտիկ անձանց թախանձանքներին։ Եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը հայտնեց նրան անգլիական միսիայի պահանջը։ Նախկին կառավարիչը կտրականապես մերժեց ներկայանալ անգլիական միսիա՝ հայտնելով, որ անգլիացիները գործում են Սուլթանովի թելադրանքով, եւ իրենց երբեք բաց չեն թողնի, որի հետեւանքը կարող է աղետաբեր լինել Ղարաբաղի համար, որ՝ անգլիացիները դաշնակցած Սուլթանովի հետ դավ են նյութում Ղարաբաղի հայության դեմ։ Հավաքվածները, սակայն, սկսեցին աղերսել՝ «խնայել ժողովրդին, որին

<sup>112</sup> Սուլթանովի բանդաները հայ արհեստավորներից արդեն սպանել էին 17 մարդու, մինչդեռ հայկական մասում գտնված մուսուլմաններին հայերը հնարավորություն էին տվել ապահովաբար անցնելու մուսուլմանական մասը։

սպառնում է կոտորած...»։ Նախկին կառավարիչը պատասխանեց, որ այդ կոտորածը կարող է տեղի ունենալ հենց իրենց ձեռքակալությունից հետո, որ՝ չպիտի վախենալ էքսցեսներից, որովհետեւ շուտով շրջաններից քաղաքին օգնության կգան մեծաթիվ զինված ուժեր։ «Անգլիական միսիայի պետը կամենում է միայն երեքիդ հետ խորհրդակցել, - ասում է Տեր-Գրիգորյանը, - ես հավաստիացա, որ նրանք մտադիր չեն ձեզ ձերբակալել կամ վնասել, խնայեցեք ժողովրդին...»։ «Անգլիացիների հավաստիացումներին երբեք չպիտի հավատալ», - պատասխանում է նախկին կառավարիչը։ Այստեղ եպիսկոպոս Վահանը այլեւս չկարողանալով իրեն զսպել՝ հուզմունքից սկսեց արտասվել ու աղերսել...

«Գնանք, ես համաձայն եմ...»։

Եւ եպիսկոպոսի ու հավաքվածներից մի քանի տասնյակ մարդկանց ուղեկցությամբ երեք երիտասարդները ներկայացան անգլիական միսիա։

\*\*\*

Հաջորդ օրը, հունիսի 5-ին, առավոտյան վաղ, հարազատների եւ հավաքված բազմաթիվ քաղաքացիների ներկայությամբ, երեք անգլիական զինվորական «պիկապ» մեքենաների վրա, անգլիացի սպաների եւ հնդիկ զինվորների ուղեկցությամբ Ղարաբաղից վտարվեցին Իշխանյանը, Թումյանը եւ Ավետիսյանը։

## 10. ՂԱՅԲԱԼԻՔԵՆԴ ԳՅՈՒՂԻ ԿՈՏՈՐԱԾԸ ԵՒ ՄԻ ՔԱՆԻ ԱՅԼ ԳՅՈՒՂԵՐԻ ՈՒ ՄԵՏԱՔՍԱՄԱՆՄԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՎԵՐՈՒՄՆԵՐԸ

Երբ երեք մեքենաներն անհետացան մուսուլմանական տափաստանի մշուշապատ հորիզոնում, Սուլթանովն անցավ տենդային գործունեության։

Քաղաքի թյուրքական մասում տեղավորված ադրբեջանական զորքը, անգլիական զինվորների ու սպաների ուղեկցությամբ, առանց դիմադրության հանդիպելու անցավ հայկական մասով եւ գրվեց քաղաքի հյուսիսարեւմտյան բարձունքի վրա գտնված նախկին ռուսական զորանոցի շենքերը՝ դուրս վանելով այնտեղից արեւմտահայ եւ Ղարաղլաղ գյուղացի փախստական ընտանիքներին։ Հայկական մասից մուսուլմանական մասը տեղափոխվեց փոստ-հեռագրատունը եւ գանձարանը (казначейство) —



ռանց ուշադրության առնելու քաղաքի հայերի բողոքները:

Տիրելով այդպիսով քաղաքի հայկական մասին՝ Սուլթանովի եւ անգլիացիների կարծիքով հեշտանում էր այլեւս գավառի հնազանդեցման գործը: Անհրաժեշտ էր միայն գավառում ծայր առած տազնապը, շփոթությունն ու հուսալքումը խորացնելու եւ ժողովրդի կամքը վերջնականապես բեկելու համար համիդյան եղանակով հայ գյուղացուց արյուն հոսեցնել: Եւ Սուլթանովն իր առաջին համիդյան հարվածն ուղղեց Ղարաբաղի բարեկեցիկ գյուղերից մեկի՝ Ղայբալիքենդի դեմ:

Այդ գյուղը տեղավորված է Ղարաբաղի լեռնաշղթայի դեպի արեւելք ձգված ոստերից մեկի լայնահաստ լանջին, Շուշի քաղաքից 5-6 կիլոմետր հեռավորության վրա, նրա հյուսիսակողմի խոր եւ ընդարձակ ձորի հակառակ եզրին: Ղայբալիքենդը Ղարաբաղում միակ խոշոր գյուղն է, որտեղ ապրում էին հայ եւ թյուրք խառը: Մեծամասնություն էին կազմում հայերը՝ մոտ 140 տուն: Հարձակումից մի քանի ժամ առաջ թյուրք ընտանիքները, նախազգուշացված լինելով, քաշվել էին մոտակա Խալիֆալլու մուսուլմանական գյուղը՝ հայտնելով հայ հարեւաններին, որ իբրեւ վախենում են շրջակա հայկական գյուղերի հարձակումից:

Եւ ահա 1919 թ. հունիսի 5-ին, Սուլթանովի ազդանշանով, քաղաքի մուսուլմանական մասում եւ Խալիֆալլու գյուղում հավաքված սպառազեն քրդերը, միացած տեղական թյուրք բնակչության տականքների հետ, մեծ ուժերով հարձակվում են Ղայբալիքենդ գյուղի վրա, եւ, հանկարծակիի բերելով բնակիչներին, հրդեհում ու թալանի եւ կոտորած ենթարկում գյուղը, որի 700 շունչ հայ բնակիչներից հազիվ կարողանում են ազատվել 11 տղամարդ, 87 կին եւ երեխա<sup>113</sup>:

Ականատեսների պատմածներով, քաղաքի հյուսիսակողմի բերդի պարիսպների վրա կանգնած անգլիական սպաները, գեներալ Մոնկ-Մեզոնի գլխավորությամբ, ծխում ու հանցավոր անտարբերությամբ դիտում էին հանդիպակաց լեռան լանջին տեղի ունեցող եղեռնը, լսում կանանց ու երեխաների վայնասունն ու օգնության հուսահատ աղաղակները...

Խորամանկ Ալբիոնի սառնասիրտ ճետերը բավականաչափ ուժ եւ ազդեցություն ունեին, իհարկե, ճնշում գործադրելու Սուլթանովի վրա՝ դադարեցնել տալու կատաղած խուժանի անլուր շարագործությունները: Բայց

<sup>113</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, թ. 99:

այդ նրանք ոչ միայն շարեցին, այլեւ կարգադրեցին իրենց մուսուլման զինվորներին ամեն կերպ խափանել զինված հայերի խմբերի փորձը՝ օգնության ձեռք մեկնելու իրենց դժբախտ արյունակիցներին:

Հաջորդ օրը, հունիսի 6-ին, ջարդարարների նույն խուժանը, այս անգամ կրկնապատկված ուժերով եւ մոլեգնությամբ, հարձակվեց Խանքենդի ավանի շրջանում գտնվող Ջամիլու, Փահլու, Կրկժան եւ Դաշուշեն գյուղերի վրա: Հրդեհվեց գյուղերի տների մի մասը եւ քշվեց անասունները: Բնակիչներին վնասել չկարողացան՝ շնորհիվ շրջակա հայկական գյուղերի ցույց տված օգնության:

Թալանվեցին ու կրակի մատնվեցին Դավիթ Ներսիսյանի եւ Դանիել Ահարոնյանի մետաքսաթելի եւ մետաքսամանման գործարանները, որոնք սարքավորված էին ժամանակի եւրոպական կատարելագործված տեխնիկայով եւ տնտեսական խոշոր նշանակություն ունեին տեղական հայ բնակչության ապրուստի համար<sup>114</sup>: Կտրել ապրուստի բոլոր եկամուտների աղբյուրները եւ ստիպել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը լքելու իր հարազատ երկիրը եւ ապրուստի միջոցներ փնտրելու օտար հորիզոնների տակ՝ այդ էին համարում միակ հուսալի ճանապարհը հայկական Ղարաբաղը նվաճելու եւ թյուրքացման ենթարկելու համար Ադրբեջանի ղեկավարները:

Հունիսի 7-ին, սակայն, երբ մարդասպանների եւ կողոպտիչների արյունարբու բանդաները, շփացած իրենց անպատիժ շարագործություններով եւ տարված նոր, առավել ահալոր ոճիրներ գործելու մոլուցքով, կենտրոնացրին բոլոր ուժերը եւ հարձակում սկսեցին քաղաքի հարավակողմի ձորում գտնվող հայկական Քարի-Տակ խոշոր գյուղի վրա, այս անգամ արդեն նրանց չհաջողվեց նախորդ օրերի պես անպատիժ կողոպուտի եւ կոտորածի ենթարկել հայ բնակիչներին: Քարի-Տակ գյուղի երիտասարդությունն սկսեց քաջաբար պաշտպանվել, մինչեւ օգնության հասան Սղնախ գյուղում հավաքված Դիզակի եւ Վարանդայի զինված ուժերը, որոնց հաջողվեց նախապես կտրել կատաղած թշնամու նահանջի բոլոր ճանապարհները եւ մի

<sup>114</sup> Մետաքսագործական արհեստին հայկական Ղարաբաղում առաջին անգամ ծանոթացրել է մի արեւմտահայ վարպետ, բրուսացի, որ Ղարաբաղ էր եկել 1856 թվին: 1912 թ. տվյալներով Ղարաբաղում եղել է 40 մետաքսաթելի գործարան: Բոլոր գործարանները պատկանել են հայերին: Ստացված թելը արտահանվել է Մոսկվա եւ Մարսել (Հայկ. հոկտ. ռեւ. սոց. շին. Պետ. կենտ. արխիվ, ֆ. 113, գ. 56, թ. 245-246):



այնպիսի ջարդ տալ արյունոտ խուժանին, որի առաջ նվաստանալ կարող էր անգամ այդ իսկ խուժանի ձեռքով կատարված Ղայթալիքենդ գյուղի անմեղ հայերի կոտորածը:

Հայկական զինված ուժերը քաշվեցին Սղնախ գյուղի բարձունքները միայն այն ժամանակ, երբ քարատակերին կամ թփերում թաք կացած եւ կամ մահվան սարսափից զլուխները չախկալների բների մեջ կոխած քրդերի եւ նրանց զինակից տեղական մուսուլմանների մնացորդները փշեցին իրենց վերջին շունչը հայ վրեժխնդիր մարտիկների սրերի անողոք հարվածների տակ: Այդպիսով եռապատիկ լուծվեց Ղայթալիքենդ գյուղի տներում եւ փողոցներում կոտորված հայ կանանց, երեխաների, ծերերի եւ անզեն տղամարդկանց վրեժը: Քարի-Տակ գյուղի ամբողջ ձորը եւ լեռնալանջերը ծածկվել էին մուսուլման մարդասպանների հարյուրավոր դիակներով:

Այդ ջարդի հաջորդ օրը, հունիսի 8-ին, հայ մարտիկները Սղնախից մարդ ուղարկեցին Շուշի՝ հայկական մասին տեղեկացնելու, որ Դիզակի եւ Վարանդայի զինված ուժերը պատրաստ են օգնության գնալու քաղաքի հայ բնակչությանը, եթե այն անհրաժեշտ համարվի: Շուշուց խնդրեցին «հանգիստ մնալ»: Որոշել էին «լեզու գտնել Սուլթանովի հետ»:

## 11. ԱՆԳԼԻԱՅԻՆԵՐՆ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՆ ԱՂԱՎԱՂԵԼ ՓԱՍՏԵՐԸ. ԲՈՂՈՔԻ ԺՈՂՈՎՆԵՐ ԵՒ ՄԻՏԻՆԳՆԵՐ ՀՈՒՆԻՍՅԱՆ ՎԱՅՐԱԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՎ

1919 թ. հունիսի 10-ին Վրաստանի՝ Հայաստանի հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը զեկուցում է ուղարկում արտաքին գործերի մինիստրին, որի մեջ տեղեկացնում է, թե անգլիական զենեռալ Կորին<sup>115</sup> հայտնել է իրեն, որ Ղարաբաղի դեպքերը չափազանց ուռցրած են: «Իրոք, տեղի է ունեցել անկարգություն,- ասել է Կորին, - որի հետեւանքը եղել է այն, որ երկու կողմից տուժել են 15 անձ, որի ընթացքում սպանվել է նաեւ մի անգլիացի զինվոր, իսկ երկուսը վիրավորվել»: Գեներալ Կորին հայտնել է նաեւ, որ Ղարաբաղում տեղի ունեցած անցքերը քննելու համար նա այնտեղ է ուղարկել սպա Կիշբենիին, որը, իբրեւ թե, երեւան պիտի հա-

<sup>115</sup> Գեներալ Թոմսոնը ետ էր կանչվել Անգլիա եւ նրա փոխարեն նշանակվել էր ոմն գեներալ-մայոր Կորի, իբրեւ Անգրկովկասի բրիտանական զինված ուժերի պետ:

նի հանցավորներին՝ «որոնք անգլիական հրամանատարությունից հրամանով կենթարկվեն խիստ պատժի»<sup>116</sup>:

Կորիի հաղորդած սուտ ինֆորմացիան «երկու կողմից» տուժածների քանակի եւ անգլիացիների կրած կորուստների վերաբերյալ բխում էր, իհարկե, Շուշու անգլիական միսիայի հերյուրած միտումնավոր հաղորդումներից: Մոնկ-Մեզոնը ձգտել էր թաքցնել իրողությունը՝ քողարկելու համար իր շարամիտ, պրովոկացիոն դիրքը դեպքերի ժամանակ, աշխատել էր հանդես բերել անգլիացիներին իբրեւ մինչեւ իսկ տուժած կողմ՝ վերագրելով անգլիական զինվորների շեղյալ սպանությունը կամ վիրավորվելը... հայերին:

Փաստ այն էր, որ հունիսյան իրադարձությունների ժամանակ անգլիական եւ ոչ մի զինվոր չէր տուժել: Ստոր խաբեություն էր նաեւ Կորիի խոստումը, որ հանցավորները երեւան կհանվեն ու կպատժվեն: Քրդերի վայրագությունների սադրիչ Սուլթանովը եւ նրա անգլիական խորհրդատուներն ու հովանավորողները՝ Մոնկ-Մեզոնն իր գործակիցներով, ոչ միայն չպատժվեցին, այլեւ շարունակեցին մնալ իրենց պաշտոններում<sup>117</sup>:

Սուլթանովի եւ անգլիական Շուշու միսիայի հանցանքը հունիսյան դեպքերում անհերքելի փաստերով ապացուցվեց Ադրբեջանի պառլամենտի նշանակած հատուկ հանձնաժողովի կողմից Շուշում կատարված քննություն<sup>118</sup>: Շուշեցի Զուլֆուգար Ախունդովը Ադրբեջանի պառլամենտականներին ցուցմունքներ տալու ժամանակ հայտնել էր, որ կոտորածների ամբողջ պրովոկացիան բխել է անգլիացիներից: «Անգլիացիները, - ասել էր Ախունդովը, - հունիսի 4-ին ետ են դարձրել դպրոց գնացող մեր երեխաներին, ասելով, թե հայերը ձեզ կկոտորեն... նրանք (անգլիացիները) գիտեին, թե ինչ պիտի լինի եւ եթե ցանկանային, կարող էին կանխել»<sup>119</sup>: Ախունդովի ցուցմունքի միակողմանիությունը նրանում էր, որ նա, հավանորեն վա-

<sup>116</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, թ. 18:

<sup>117</sup> Հունիսյան դեպքերի հանցավորների հետ անգլիացիները վարվեցին այնպես, ինչպես վարվել էին 9-10 ամիս առաջ, Պոլիսը գրավելուց հետո, հայ մարտիրոսության մասնակից թուրք մարդասպանների հետ: Նրանք հայերի ձեռքից առել էին 120-ր չափ արյունոտ զազանների խոստանալով տանել Մալթա կղզին եւ բոլորին խստորեն պատժել, բայց հետո ամենքին ազատ էին թողել:

<sup>118</sup> Հանձնաժողովը նշանակվել էր պառլամենտի հայ անդամների պահանջով:

<sup>119</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, թ. 122:



խից, խուսափել էր մատնանշել նաեւ ոճրագործությունների փաստական կազմակերպչին եւ ոգեշնչողին՝ դոկտոր Սուլթանովին: Հարցաքննության ենթարկված բազմաթիվ անձերից (հայ եւ մուսուլման) միայն Ադրբեջանում ծառայող երկու ծախված ռուս սպաներ՝ Ալեքսանդր Պավլովիչ Մաքսիմով եւ Դմիտրի Ալեքսանդրովիչ Շտոր, ցուցմունքներ էին տվել հայերի դեմ՝ մեղադրելով նրանց նույնիսկ իբրեւ հարձակվող կողմ: Պառլամենտական կոմիսիան շուշեցի հայերից ստացել էր 40-ից ավելի դիմումներ՝ քաղաքի մուսուլմանական մասում իրենց հարազատների սպանության կամ ճանապարհներին ասկերների, քոչվորների եւ առանձին զինված մուսուլմանների կողմից բռնությունների ենթարկվելու մասին:

Հունիսյան վայրագությունները Ղարաբաղում խոր զայրույթ էին առաջ բերել նաեւ Ղարաբաղից դուրս հայ հասարակական շրջաններում: Բողոքի բազմամարդ միտինգ տեղի ունեցավ Թիֆլիսում՝ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի նախագահությամբ, ուր ելույթներ ունեցան նաեւ Ղարաբաղից արտաքսված գործիչները: Բողոքի մի շարք ժողովներ ու միտինգներ տեղի ունեցան նաեւ Երևանում, իսկ Ղարաբաղցիների ու զանգեզուրցիների Թիֆլիսի հայրենակցական միությունը հունիսյան դեպքերի առթիվ դիմեց Անդրկովկասի բրիտանական զինված ուժերի հրամանատարին՝ բողոքելով ադրբեջանական զորքերի եւ բանդաների վայրագությունների դեմ ու մեղադրելով բրիտանական ներկայացուցիչներին այդ դեպքերի համար: «Այդ հարձակումն անսպասելի չէր եւ հետեւանք էր Ադրբեջանի կառավարության՝ Ղարաբաղը նվաճելու համար վարած պրովոկացիոն քաղաքականության», - ասված էր դիմումի մեջ: Ապա խնդրվում էր գեթ դրանից հետո կարգադրել՝ դուրս բերելու Ղարաբաղից ադրբեջանական զինված ուժերը եւ անգլիական զենքերալնահանգապետություն հիմնել Ղարաբաղում<sup>120</sup>:

Այդ բողոքները, սակայն, անցան ապարդյուն: Դաշնակից պետությունները որեւէ միջոցի չդիմեցին թեթեւացնելու հայկական Ղարաբաղի վիճակը, զսպելու Ադրբեջանի բացահայտ զավթողական էքսպանսիան կամ գեթ վերջ դնելու Ղարաբաղում եւ Բաքվում գործող անգլիական հրամանատարության ներկայացուցիչների հակահայ գաղտնի կամ ակնհայտ պրովոկացիոն սանձարձակություններին: Ընդհակառակը, ավելի ու ավելի ծանրացավ Ղարաբաղի ընդհանուր վիճակը: Վտանգվեց նաեւ Սյունիքի հայաշատ

<sup>120</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, ք. 86:

գավառների դրությունը, որոնց նկատմամբ Ադրբեջանը, օսմանցիների թելադրանքով, դարձյալ լուրջ նվաճողական նպատակներ էր հետապնդում:

Հայաստանի հանրապետության կառավարությունը կամեցավ Ղարաբաղում անգլիական միսիային կից ունենալ իր մշտական ներկայացուցիչը իբրեւ կապի սպա՝ ճշգրիտ ինֆորմացիա ստանալու համար Հայաստանի այդ ընդարձակ գավառում տեղի ունեցող իրադարձությունների մասին: Գնեբրալ Կորին, սակայն, մերժեց՝ «նկատի ունենալով առաջարկված թեկնածուի անհաճո քաղաքական համոզմունքները...»:

Սուլթանովի կարծեցյալ հաջողությունները Ղարաբաղում մեծ ոգեւորություն էր առաջ բերել Բաքվի կառավարության եւ ընդհանրապես թյուրքական շրջաններում: Ահա ինչ էր գրում այդ առթիվ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչն Ադրբեջանում՝ Վրաստանի հայկական ներկայացուցչին իր 1919թ. հունիսի 26-ի գրության մեջ. «... Թյուրքերի տրամադրությունը շատ բարձր է. ըստ երեւույթին Ղարաբաղի հարցը նրանք վերջնականապես լուծված են համարում: Լուրջ նախապատրաստություններ են տեսնվում Զանգեզուրի դեմ եւ, ինչպես վկայում են պառլամենտի հայ անդամները, Սուլթանովն անգամ Հայաստանի կառավարության դեմ ռազմական գործողություններ սկսելուց չի խուսափել, որպեսզի մի անգամ ընդմիշտ վերջ տա Ղարաբաղի կնճռոտ հարցին: Սուլթանովի այս ռազմատենչ տրամադրությունը ղեկավարող շրջաններում կողմնակիցներ եւ դրվատողներ ունի... Ներկա պայմանները նրանք իրենց համար նպաստավոր են համարում»<sup>121</sup>:

Հայաստանի արտաքին գործերի մինիստր Ս. Տիգրանյանը Փարիզի հայկական պատվիրակությանն ուղարկած հուշագրում ասում էր. «Անդրկովկասի թրքությունը այժմ, բրիտանական զորահրամանատարության օրով, ավելի նպաստավոր պայմանների մեջ է գտնվում, քան գերմանա-տաճկական հաղթական օկուպացիայի ժամանակ... Ամեն կողմից մեզ շրջապատել է թրքական վտանգը՝ սպառնական եւ հանդուգն: Մեր քաղաքական ծրագրին հակառակ՝ Թուրքիան առաջ է տանում իր ծրագրերը Հայաստանի վերաբերմամբ, որոնց մեջ հայ տարրի ֆիզիկական բնաջնջումը հիմնական եւ էական կետն է հանդիսանում, եւ մենք ոչինչ գրավական եւ վստահություն չունենք, թե անգլիական հրամանատարությունը ցանկություն ունի մեզ փրկելու այդ

<sup>121</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, ք. 103:



վտանգից, որը, կրկնում եմ ու պնդում, այսօր էլ իրական է եւ սպառնական ոչ պակաս, քան ամիսներ առաջ»<sup>122</sup>:

Եւ, հիրավի, Ադրբեջանի ագրեսիվ նվաճողական գործողությունների համար ստեղծվել էին շատ ավելի նպաստավոր պայմաններ, քան մի տարի առաջ էր, 1918 թվին, օսմանյան թուրքերի ժամանակ: 1919 թվին հանգամանքները փոխվել էին. հայերի «դաշնակից» թոմսոններն այս անգամ կանգնած էին ոչ միայն Ադրբեջանի, այլ առհասարակ ամբողջ Անդրկովկասի մուսուլմանություն թիկունքում:

Եւ օսմանյան արյունարբությունների ոգով եւ ներշնչմամբ գործող Ադրբեջանի նորաթուխ քաղաքագետները դարձել էին այնքան լկտի, որ մտորում էին հարձակվել նույնիսկ Հայաստանի հանրապետության վրա՝ «միանգամընդմիջտ վերջ տալու Ղարաբաղի կնճռոտ հարցին» եւ, հաջողության դեպքում, զավթելու նաեւ Հայաստանի հարավ-արեւելյան բոլոր լեռնային գավառները մինչեւ Վարդենիսի լեռնաշղթան:

Պիտի խոստովանել, որ այդպիսի հանդուգն տերիտորիալ էքսպանսիայի համար Ադրբեջանն ուներ նյութական ամեն կարգի միջոցներ. անսպառ քանակությամբ հաց եւ այլ մթերքներ, առատ զենք ու զինամթերք՝ կողոպտված կամ զնված ռուսական էշերոններից կամ թողնված թուրքերից՝ 1918 թվին Անդրկովկասը զորապարպելու ժամանակ, ուներ հանդերձանք ու պատերազմի համար անհրաժեշտ այլ կարգի պիտույքներ, ուներ մեծաքանակ մարդկային ռեսուրսներ, որից մուսավաթական կառավարությունը կարողացավ կարճ ժամանակամիջոցում կազմակերպել բավականաչափ մարդկանց՝ Բաքուից Ադրբեջանում ապաստան գտած ռուս սպաների ու բազմաթիվ օսմանցի զինվորների, սպաների ու ենթասպանների հրահանգչական եւ կազմակերպչական լարված աշխատանքների շնորհիվ: Իրենց զինվորական բարձր պատրաստությամբ եւ դիվանագիտական փորձով Ադրբեջանին մեծ օգնություն էին ցույց տալիս ադրբեջանական զինվորական համագեւորված ծախված Նուրի, Քյազիմ եւ Խալիլ փաշաները ու Թուրքիայի պարտությունից հետո Ադրբեջան սողոսկած էմիր փաշան, որը թաքնված էր Ջիվանշիրի մուսուլմանական մասում եւ այնտեղից ծածկաբար ղեկավարում էր Հայաստանի եւ հայկական գավառների դեմ ուղղված գործողությունները<sup>123</sup>:

<sup>122</sup> Բժ. Իսահակ Տերտերյան, «Հայկական գոյամարտը», 1957թ., Թեհրան, էջ 361:

<sup>123</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 850, թ. 1-4:

Ինչպես տեսնում ենք, Ադրբեջանը մենակ չէր: Եւ միայն անգլիացիները չէին, որ նրան թեւ ու թիկունք էին դարձել: Իսկ այդ ամենը համարձակություն եւ հաջողության վստահություն էին ներշնչում նրա ղեկավարներին՝ Ղարաբաղում ունեցած վերջին օրերի հաջողություններից հետո հետզհետե ընդարձակելու իրենց զավթողական գործողությունները Ջանգեզուրի ուղղությամբ:

Առաջին հարձակումը կատարվեց Ղափանի ուղղությամբ, 1919 թ. հունիսի 28-ին: Երեք հազարի չափ թուրք-ադրբեջանական ասկերներ, Քյազիմ փաշայի հրամանատարությամբ, առավոտյան վաղ հարձակում սկսեցին Ղափանի ուղղությամբ՝ հայկական Ղարաբաղ, Ագարակ եւ Նդվարդ գյուղերի վրա: Սկզբում հակառակորդին հաջողվեց գրավել Ղարաբաղան, որը թալանվելուց հետո հրդեհվեց: Կրակի մատնվեցին նաեւ դաշտերում քաղած ցորենի խուրձերը եւ խոտի դեզերը: Ագարակ գյուղը թշնամին գրավել չկարողացավ շնորհիվ գյուղի մարտիկների հերոսական դիմադրության, որոնք ոչ միայն կարողացան իրենց փոքրաթիվ ուժերով մի քանի անգամ հետ մղել հակառակորդի կատաղի գրոհները, այլեւ խլեցին նրանցից մեկ գնդացի եւ շատ փամփուշտ: Հաջորդ օրը, հունիսի 29-ին, Նդվարդ գյուղի մոտ վճռական պարտության մատնելով թշնամուն, ղափանցի մարտիկներն անցան հակահարձակման: Ասկերները փախչելիս աղաղակում էին. «Հայեր, սպասեցեք, մենք դարձյալ կգանք մեծ ուժերով եւ թնդանոթներով»: Այդ կռվում թուրք-ադրբեջանական ագրեսորների հանցանքով ավերվեցին թուրքական Հայդարա, Խաշտապ, Եմազլու, Հաջի-Կուրբանլար, Սարալու եւ Աղբիս գյուղերը:

Գերի ասկերները պատմեցին, որ Քյազիմ փաշան հրամայել էր՝ ինչ գնով էլ լինի գրավել Ղարաբաղան, Ագարակը եւ Նդվարդը, որպեսզի հեշտ լինի մտնել պղնձահանքերը:

Այդ կռվում հայերի ձեռքն ընկավ 3 գնդացի, 120 հրացան եւ 15 ձիաբեռ փամփուշտ<sup>124</sup>:

Քյազիմ-փաշայի կրած անհաջողությունից հետո Ադրբեջանը մինչեւ 1919 թ. սեպտեմբեր ամիսը, այսինքն՝ մինչեւ առաջին լուրջ հարձակումը Ջանգեզուրի վրա, նոր գործողությունների չձեռնարկեց Սյունիքի դեմ: Այդ ժամանակամիջոցում Ադրբեջանը զբաղվեց հայկական Ղարաբաղի գյուղա-

<sup>124</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 612, թ. 219:



կա՛ն շրջանները եւս իր իշխանությանը ենթարկելու հարցով միաժամանակ շարունակելով տենդային նախապատրաստությունները Զանգեզուրի վրա արշավելու համար:

## 12. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՅԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Հայկական գյուղերի ավերածություններից եւ Ղարաբաղի կոտորածից հետո երկրում ստեղծված ծայրահեղորեն լարված դրությունը ստիպեց շտապ հրավիրել Ղարաբաղի հայ բնակչության ներկայացուցիչների համագումար՝ Ադրբեջանի հետ համաձայնության որեւէ եզր գտնելու համար՝ նպատակ ունենալով վերջ դնելու ընդհարումներին եւ վերականգնելու նորմալ փոխհարաբերությունները երկու դրացի ժողովուրդների միջեւ:

Սկզբում որոշվել էր համագումար հրավիրել 1919 թ. հունիսի 20-ին, սակայն դաշտային լարված աշխատանքները ստիպեցին հետաձգել մինչեւ նույն ամսի 28-ը: Համագումարի աշխատանքի վայրը նախատեսված էր Շուշին, սակայն գավառից ընտրված պատգամավորների կամքով գումարվեց Շուշու գյուղում, Սուլթանովի ազդեցությունից ազատ ոլորտում<sup>125</sup>:

Համագումարը կամենալով հենց առաջին նիստում դրական քայլեր անել Ղարաբաղի հարցի շուրջը համաձայնության հասնելու Ադրբեջանի հանրապետության եւ անգլիական միսիայի հետ, հրավիրեց նրանց ներ-

<sup>125</sup> Պատգամավորների մեջ բացարձակ մեծամասնություն էին կազմում Վարանդայից եւ Դիզակից եկածները: Շատ քիչ էին եկել խաչնից եւ Զրարերդից: Պատճառը ոչ միայն դաշտային եռուն աշխատանքներն էին, այլեւ այդ շրջանների համեմատաբար հեռավորությունը Շուշուց: Ճանապարհի անապահովությունը եւս պակաս նշանակություն չէր ունեցել: Ադրբեջանին հաջողվել էր, ռազմագիտական նկատառումներով, իր զինված ուժերի վերահսկողության տակ առնել ամբողջ Ասկերան-Շուշի խճուղին: Այդ ճանապարհի ամբողջ երկարությամբ վիստում էին հեծյալ ու հետեակ զինված մուսուլմանների խմբերը, եւ հեշտ չէր հայերի համար կտրել, անցնել այդ գիծը մեկ կամ մյուս կողմի վրա: Ադրբեջանի համանախարարության համար Աղդամ-Ասկերան-Շուշի-«Քուրդիստան» ճանապարհը այժմ ծառայում էր իրրեւ կարեւոր կոմունիկացիոն գիծ՝ ադրբեջանական զորքերի դասավորության տեղերի հետ թիկունքի կապը ապահովելու համար, որ համարվում էր անհրաժեշտ՝ մանավանդ Զանգեզուրի գեմ գործողություններ ծավալելու ժամանակ: Այդ գծի վրա կամ նրան մոտիկ գտնված Ղարաբաղի կամ մյուս հայկական գյուղերի ավերումը նաեւ նպատակ ուներ հնարավորին չափ ազատել կոմունիկացիան հայկական տարրից:

կայացուցիչներին հունիսի 28-ին լինել Շուշու գյուղում: Բայց նրանք ոչ միայն նշանակված օրը, այլեւ մինչեւ 30-ը չեկան, չնայելով, որ թե՛ Ադրբեջանը եւ թե՛ Մոսկ-Մեզոնը հայտնել էին իրենց համաձայնությունը:

Համագումարն ստիպված եղավ հունիսի 30-ի երեկոյան ցրվել՝ ընտրելով Ազգային խորհուրդ եւ ընդունելով հետեւյալ որոշումը (բերում ենք անփոփոխ. Հ. Թ.).

«Ղարաբաղի հայ բնակչության ներկայացուցչությունը հավաքվել է 6-րդ համագումարի՝ գլխավոր նպատակ ունենալով բանակցությունների միջոցով մշակելու Ղարաբաղի հարցի խաղաղ որոշման պայմաններ, մինչեւ նրա (հարցի) վերջնական որոշումը համաշխարհային կոնֆերանսում: Ընդառաջ գնալով այն ամենին, ինչ-որ կարող է նպաստել բարի դրացիական հարաբերությունների ամրանալուն, Ղարաբաղի հայ ժողովուրդը ողջունում է Ղարաբաղում խաղաղ ճանապարհով ժամանակավոր համաձայնության հաստատելու ամեն մի փորձ: Համագումարը ցանկանում էր այդ հարցը վերջացնել հունիսի 28-ի նիստում, այն պայմանով, եթե Ադրբեջանի հանրապետության եւ անգլիական (միսիայի) ներկայացուցիչները ներկա լինեին: Անհայտ պատճառներով, նշանակված օրը հիշյալ ներկայացուցիչները չեկան համագումարին, ուստի եւ համագումարը զրկվեց իր հիմնական նպատակն իրագործելու հնարավորությունից: Իր ցանկության հակառակ, շնորհիվ դաշտային աշխատանքների հրատապ շրջանի, համագումարը հնարավորություն չունի ավելի սպասելու ներկայացուցիչների գալուն: Հայտնելով իր խորին ափսոսանքը այս անհաջողության առթիվ, համագումարը Ղարաբաղի հարցի խաղաղ լուծման համար անհրաժեշտ է համարում ձեռք առնել իրենից կախված բոլոր միջոցներն այդ հարցը խաղաղությամբ լուծելու հետեւյալ համագումարում, որը կարելի է հրավիրել միայն դաշտային աշխատանքները վերջանալուց հետո: Այս նպատակով համագումարը պարտավորեցնում է հայկական Ղարաբաղի սահմաններում գործող բոլոր կազմակերպություններին ու պաշտոնական անձանց՝ աշխատել տեղերում պահպանելու բարի-դրացիական հարաբերություններ եւ նորմալ փոխհարաբերություններ ստեղծել:

Համագումարը ենթադրում է, որ մինչեւ հետեւյալ համագումարը այս ուղղությամբ համապատասխան քայլեր կարվեն, որ Ադրբեջանի հանրապետության իշխանությունն ամեն մի ջանք կգործադրի հայերի եւ թյուրքերի մեջ խաղաղ հարաբերությունները վերականգնելու համար, մանավանդ՝ սահմանակից շրջաններում, որտեղ չեն թույլատրվում դաշտային աշխատանքներ կատարել: Այս ուղղությամբ անհրաժեշտ է մատնանշել Ասկերանի շրջանի (Փիրջամալի եւ Խանքենդու մոտիկ) ավերված գյուղերի բացառիկ դրությունը,



որոնք բոլորովին զրկված են որեւէ բերք հավաքելու հնարավորությունից:

Միաժամանակ համագումարը բողոք է հայտնում Ադրբեջանի զորքերի քաղաքում կազմակերպած ընդհարման, հինգ հայկական գյուղերի ոչնչացման եւ Ղալբալիքենդի կոտորածի առթիվ եւ պահանջում է հետաքննել այդ դեպքերը՝ հանցավորներին գտնելու, նրանց պատասխանատվության ենթարկելու եւ վնասները հատուցանելու համար, որովհետեւ նման դեպքերը զրկում են հիմնական հարցի խաղաղ լուծման հնարավորությունից:

Նախագահ Ե-րդ համագումարի (ստորագրություն)

Քարտուղար (ստորագրություն)

30 հունիսի, 1919 թ., Շոշիքենդ գյուղ»:

Պատգամավորների ցրվելուց մի քանի օր հետո համագումարի հետ համաձայնության բանակցություններ վարելու համար Շոշու գյուղը եկան Ադրբեջանի կառավարության եւ անգլիական հրամանատարության ներկայացուցիչները եւ խնդրեցին կրկին գումարել համագումարը: Սակայն պատգամավորները չեկան: Նրանք չհամաձայնեցին վերանայել համագումարի որոշումը, հնարավոր չգտան թողնել դաշտային աշխատանքները:

Ղարաբաղի հայ գյուղացիությունն իրեն պարտված չէր համարում, թեեւ անկեղծորեն ձգտում էր երկրում վերականգնել խաղաղությունը. չէ՞ որ ազգամիջյան պառակտումներից ամենից շատ տուժողն ինքը՝ Ղարաբաղի հայ բնակչությունն էր: Նա սրտանց կամենում էր խաղաղության համաձայնություն կնքել Ադրբեջանի կառավարության հետ՝ թեկուզ ժամանակավորապես նրա իշխանությունը ճանաչելու գնով, լիահույս, որ Փարիզի խաղաղության կոնֆերանսն ի վերջո կվճռի Ղարաբաղի հարցը հօգուտ Հայաստանի:

Եւ այն ժամանակ (երազում էր յուրաքանչյուր հայրենասեր Ղարաբաղցի) հայկական Ղարաբաղը կծաղկի ու կշենանա, իսկ հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների միջեւ կվերահաստատվեն ու կամրանան բարի-դրացիական փոխհարաբերությունները: Այն ժամանակ հայկական Ղարաբաղը կկարողանա իր ստեղծագործական ջանքերն ու կորույր միացնել Մայր Հայրենիքի վերաստեղծման գործին, որպեսզի մի գեղեցիկ օր պատմական հայրենիքում միավորված եւ հզորացած ազատ հայ ժողովուրդը փայլի ու շողշողա ազգերի եղբայրական մեծ ընտանիքում համամարդկային քաղաքակրթության գանձարանը մուծած իր հանճարի մեծարժեք գրոհներով...

\* \* \*

Նորընտիր Ազգային խորհուրդը, որի նախագահն էր նախկին կազմի փոխնախագահ Ասլան Շահնազարյանը (կադետ), իրեն աշխատանքի վայրը տրեց անգլիական միսիայի եւ Սուլթանովի ազդեցության շրջանից դուրս գտնվող Վարանդայի Տրնավազ գյուղը՝ Շուշուց մոտ 15 կիլոմետր հեռավորության վրա: Խորհրդի երկու եռանդուն անդամների՝ Լեւոն Վարդապետյանի եւ Ներսես Նասիբյանի նախաձեռնությամբ եւ ջանքերով Ղարաբաղի գինված ուժերի նախկին շտաբը վերակազմվեց եւ տեղավորվեց նույն գյուղում:

Խորհրդի տրամադրության տակ կային Բաքվից ու Թիֆլիսից ուղարկված բավականաչափ դրամական միջոցներ՝ կազմակերպելու եւ պահպանելու համար Տրնավազ գյուղում փորձված մարտիկներից բաղկացած մի ջոկատ՝ հայ-ադրբեջանական սահմանի մոտ գտնված հայկական գյուղերի պաշտպանությանն օժանդակելու համար: Բայց եւ այնպես Ազգային խորհուրդը չկարողացավ իր ջոկատի եւ տեղական ուժերի միջոցով ապահովել սահմանամերձ հայկական գյուղերի բերքահավաքը մուսուլմանական բանդաների մշտական հարձակումներից: Նա չկարողացավ նաեւ որեւէ դրական գործ կատարել՝ օգնելու համար Դիզակին, երբ 1919 թ. հուլիսի 20-ին թուրք-ադրբեջանական կանոնավոր զորքերը գնդացիներով եւ թնդանոթներով հարձակվեցին Դոլանլար եւ Բունյաթլու գյուղերի վրա, թալանեցին ու հրդեհեցին այդ գյուղերը: Բայց երբ իր առաջին հաջողություններից լկտիացած թշնամին փորձեց հարձակվել նաեւ Առաքյալ գյուղի վրա, տեղական ուժերը, որոնք արդեն կարողացել էին համախմբվել ու կազմակերպվել, ետ մղեցին հարձակումը եւ ստիպեցին ասկերների ջոկատներին եւ «պարտիզանների» բանդաներին նահանջել: «Սուլթանովը ոչ մի միջոցի առաջ կանգ չի առնում Ղարաբաղը գրավելու, - ասել էին Բաքվի ազգային խորհրդում իրենց զեկուցման մեջ Շուշուց նոր վերադարձած պառլամենտի անդամներ Չուբարյանը եւ Խոջոյանը: - Նրա (Սուլթանովի) կարծիքով այդ հարցը սպառված պիտի համարել, որովհետեւ Դիզակը, Շուշին, Զիվանշիրը (Ջրաբերդը)... շրջապատված են թյուրքական ուժերով, այնպես որ՝ ընդհարման դեպքում հայերի համար դրսից օգնություն ստանալու ոչ մի հնարավորություն չկա: Այժմ Սուլթանովը, - հայտնել էին Ադրբեջանի պառլամենտականները, - իր ուժերը կենտրոնացնում է Զանգեզուրի սահմանի



վրա, որովհետեւ Ղարաբաղի գրավման հարցը նա վերջացած է համարում...»<sup>126</sup>։

Վաղաժամ էր, իհարկե, Սուլթանովի այդ պարծենկոտ լավատեսությունը։ Ղարաբաղցի մարտիկը դեռ իր վերջին փամփուշտը չէր կրակել, թեեւ, ի մեծ դժբախտություն իր եւ իր երկրի, նա շատ չնչին պաշար ուներ դրանից։

Ղարաբաղցուն մտահոգություն պատճառողն իր երկրի պաշարված վիճակը չէր. վերջին բոսնիան նա կապաստաններ իր անառիկ լեռներում։ Նրան քիչ էր մտահոգում նույնպես սահմանամերձ գոտում բերքահավաքի համար թշնամու ստեղծած արգելքները, կամ դրսից օգնություն ստանալու դժվարությունը։ Ղարաբաղցուն խոր մտահոգություն էր պատճառում մի բան միայն, որ իր ունեցած փոքրաքանակ զինամթերքը սպառվելուց հետո նրա պաշտպանության միակ հենարանը պիտի մնային իր լեռները եւ սառը զենքը՝ իր դաշույնը, թուրը եւ սվինը։ Ղարաբաղցին թնդանոթ, գնդացի չէր պահանջում, նրան պետք էր միայն փամփուշտ, իսկ մնացածը նա ձեռք կբերեր՝ խլելով ջախջախված թշնամուց։

Ազգային խորհուրդը երբեք այդ կենսական հարցով լրջորեն չզբաղվեց, թեեւ նա իր տրամադրության տակ եղած նյութական միջոցներով, անշուշտ, կարող էր փամփուշտի որոշ պաշար նախապատրաստել։

### 13. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՅՈԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԿՆՔՈՒՄԸ ԱՆՐԲԵՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

1919 թ. ամբողջ հուլիս ամիսն անցավ դաշտային եռուն աշխատանքների մեջ։ Սահմանամերձ գյուղերը մեծամեծ դժվարություններով հազիվ կարողացան իրենց բերքի մի աննշան մասը հավաքել։ Մուսուլմանական բանդաները գիշերները գաղտնաբար մոտենում եւ հրդեհում էին խորձերը եւ դեռեւս չհնձած արտերը, իսկ ցերեկը հեռվից կրակ էին բացում դաշտերում աշխատող հայ գյուղացիների վրա։

Օգոստոսի 13-ին, երբ բավականաչափ մեղմացել էին բերքահավաքի դաշտային աշխատանքները, Ազգային խորհրդի հրավերով Շոշու գյուղում գումարվեց Ղարաբաղի հայության ժողովրդական 7-րդ համագումարը,

<sup>126</sup> ՀՊԳԱ, ֆ. 200, գ. 612, թ. 111-112։

որին վճռական ձայնի իրավունքով մասնակցում էին 135 պատգամավոր։ Սուլթանովն այս անգամ չէր խանգարել խաչենի, Զրաբերդի եւ Գյուլիստանի պատգամավորներին մասնակցելու համագումարին։ Օրակարգի չորս հարցերի մեջ առաջին ու հիմնական հարցը հայկական Ղարաբաղի եւ Ադրբեջանի փոխհարաբերությունների հարցն էր, որի առթիվ արտահայտվեցին 30-ից ավելի պատգամավորներ։ Խոսողների ճնշող մեծամասնությունը պահանջում էր որեւէ համաձայնություն չկնքել Ադրբեջանի հետ եւ պատերազմել, եթե Ադրբեջանը կփորձի բռնությամբ փաթաթել իր իշխանությունը Ղարաբաղի հայության վրին։ Իսկ համեմատաբար չափավոր տարրերը գտան, որ պատերազմելու համար Ղարաբաղը չունի բավականաչափ զինամթերք եւ առաջարկում էին Ադրբեջանի հետ բանակցություններ վարել ժամանակավոր համաձայնություն կնքելու համար, մինչեւ Փարիզի միջազգային կոնֆերանսը կվճռի Ղարաբաղի ճակատագիրը։ Մտքերի խիստ հուզումնալից փոխանակությունից հետո որոշվեց ընտրել մի հանձնաժողով՝ Ղարաբաղի զինվորական մարմնի (շտաբի) հետ միասին պարզելու, թե Ղարաբաղը պատերազմի դեպքում կկարողանա՞ արդյոք զենքի ուժով ստիպել Ադրբեջանին ճանաչելու իր ինքնորոշման իրավունքը։

Մանրակրկիտ քննությունը ժխտական պատասխան տվեց այդ հարցին։ Դրանից հետո համագումարն իր 4-րդ նիստում որոշեց բանակցություններ վարել Ադրբեջանի հետ՝ ընտրելով Արշավիր Քամալյանի նախագահությամբ մի հանձնաժողով՝ համաձայնության պայմանները մշակելու համար։ Իսկ հաջորդ (5-րդ) նիստում ընդունեց հետեւյալ բանաձեւը, որին ստորագրեցին 124 պատգամավոր։

«Բանաձեւ, ընդունված Ղարաբաղի հայության 7-րդ համագումարի կողմից 1919 թ. օգոստոսի 15-ին։

Ղարաբաղի հայությունը միշտ կողմնակից է եղել խաղաղ դրացիական հարաբերությունների հարեւան թյուրք ժողովրդի հետ եւ այն ձգտել է իրականացնել կյանքի մեջ անկեղծ ու սրտանց՝ բոլոր պայմաններում, հատկապես վերջին երկու տարիների ընթացքում։

Ղարաբաղի հայությունն անթիվ զոհաբերություններով ու դերագույն ճիգերով կարողացել է փրկել դրությունը, թույլ չտալով մասսայական կոտորածներ ու ավերումներ։

Այժմ, կանգնած լինելով նույն հիմնական տեսակետի վրա, որ բոլոր պայմաններում երկու հարեւան ժողովուրդները պետք է խաղաղ բարեկամական



հարաբերություններ պահպանեն իրար հետ, եւ նկատի առնելով այն հանգամանքը, որ Ղարաբաղի վերաբերյալ վիճելի հարցերը պետք է իրենց վերջնական լուծումն ստանան խաղաղարար կոնֆերանսի կողմից, Ղարաբաղի 7-րդ համագումարը, քննելով ստեղծված լուրջ դրությունը, որ հավասարապես կորստաբեր կարող է լինել երկու ժողովուրդների համար, ընդառաջ է գնում Ադրբեջանի կառավարության առաջարկին՝ բանակցությունների միջոցով խաղաղ ճանապարհով լուծելու ներկա ճգնաժամային խնդիրն իրեն հավասար կողմեր եւ որոշում է պաշտոնական բանակցությունների մեջ մտնել այդ նպատակով:

Նախագահ Ա. Հովհաննիսյան

Քարտուղար՝ Հ. Աբրահամյան

(124 պատգամավորների ստորագրություններ):

Համագումարի աշխատանքների դեռեւս երրորդ օրն էր, բայց Սուլթանովը համակվել էր անհամբերությամբ: Նրան թվաց, թե համագումարը շատ է ձգձգվում եւ կարող է Ադրբեջանի համար անհաճելի արդյունքներով վերջանալ: Լրտեսներն, անկասկած, նրան արդեն հաղորդել էին սկզբի երեք նիստերում պատգամավորների մեծամասնության մեջ գերիշխող մարտական տրամադրությունների մասին: Բացի դրանից, Ադրբեջանից գաղտնի մնալ չէր կարող, որ Հայաստանի հանրապետական կառավարության վարչական եւ զինվորական մարմիններն արագորեն թափանցում են Զանգեզուր, իսկ հայկական կանոնավար զորքերի մոտքը՝ Նախիջևան եւ նրանց հետ միատեղ այդ շրջանի հայ փախստականների վերադարձը, այդ ամենը ոչ մի կասկած չէին թողնում, որ Սյունիքի ու Ղարաբաղի նկատմամբ նախատեսված թուրք-ադրբեջանական նվաճողական պլանների իրագործման համար խիստ վտանգավոր արգելքներ են ստեղծվում: Ուստի անհրաժեշտ էր շտապել լուծելու Ղարաբաղի հարցը եւ ապա բոլոր ուժերն ուղղելու Զանգեզուրի դեմ, քանի դեռ Հայաստանի կառավարությունը այնտեղ չէր ամրացել:

Եւ օգոստոսի 14-ին գեներալ-նահանգապետ Սուլթանովը ռազմական պատրաստության մեջ դրեց Շուշու եւ Խանքենդի ավանի զորամասերը եւ ապա կազմեց համագումարին ուղղված վերջնագիր, ուր պահանջում էր 48 ժամվա ընթացքում պատասխանել, թե Ղարաբաղը ճանաչում է Ադրբեջանի իշխանությունը, թե ոչ: Վերջնագիրը համագումար բերեց Վահան եպիսկոպոսը օգոստոսի 15-ին: Պատգամավորներին չգրգռելու եւ համաձայնու-

թյան գործին չվնասելու համար նպատակահարմար համարվեց չհրապարակել այն համագումարի նիստում:

Նույն օրը համագումարը քննեց եւ ընդունեց համաձայնության նախագիծը: Ապա ընտրվեց մի հանձնաժողով՝ Ադրբեջանի ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելու եւ համաձայնությունը ստորագրելու համար: Օգոստոսի 17-ին հանձնաժողովը նորընտիր Ազգային խորհրդի անդամների<sup>127</sup> եւ քսանի չափ պատգամավորների հետ մեկնեց Շուշի եւ հանձնեց Ադրբեջանի գեներալ-նահանգապետին համաձայնության նախագիծը: Համագումարի նախնական համաձայնությամբ նահանգապետը մի քանի նոր կետեր մտցրեց նախագծի մեջ եւ վերջնական ձեւով երկու կողմերից ընդունվելուց հետո՝ 1919 թ. օգոստոսի 22-ին այն ստորագրվեց համագումարից լիազորված տասնհինգ պատգամավորների կողմից: Իսկ Ադրբեջանի կառավարության անունից նահանգապետը առանձին դեկլարացիայով բոլոր 26 կետերի վերաբերյալ մեկ առ մեկ հայտնեց իր համաձայնությունը եւ վավերացրեց սեփական ստորագրությամբ:

Այդպիսով, հայկական Ղարաբաղը երկար ու ծանր պայքարից հետո ստիպված եղավ, իհարկե, ժամանակավորապես, ճանաչելու Ադրբեջանի կառավարության իշխանությունը:

Համաձայնությունն իր թերություններով հանդերձ, իբրեւ պատմական փաստաթուղթ, զուրկ չէ հետաքրքրությունից, ուստի ավելորդ չհամարեցինք այն մեջբերել ամբողջությամբ՝ գետեղելով ռուսերեն տեքստից կատարված հայերեն թարգմանությունը:

#### «ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նկատի ունենալով,

- որ Ղարաբաղի լեռնային մասի վիճակի խնդիրը պիտի որոշվի խաղաղարար կոնֆերանսում,
- որ՝ յուրաքանչյուր ընդհարում կորստաբեր է Ղարաբաղում բնակվող ազգությունների համար,

<sup>127</sup> Համագումարն իր 6-րդ նիստում անրավարար էր համարել նախկին Ազգային խորհրդի գործունեությունը եւ ընտրել էր նոր Ազգային խորհուրդ՝ բաղկացած 6 անդամից եւ 2 անձնափոխանորդից: Հատկապես խիստ քննադատության էր ենթարկվել Ազգային խորհրդի նախագահ Ասլան Շահնազարյանը:



որ՝ ինչպես էլ լուծվելու լինի Ղարաբաղի խնդիրը, հայերը եւ թյուրքերը պիտի ապրեն միասին,

Ղարաբաղի հայության 7-րդ համագումարը որոշեց Ադրբեջանի հանրապետության կառավարության հետ կանգ առնել ժամանակավոր համաձայնության հետեւյալ պայմանների վրա.

1. Նրկու կողմերն էլ ընդունում են ժամանակավոր համաձայնությունը, մինչեւ այս խնդրի որոշումը խաղաղարար կոնֆերանսում, որի որոշումը հավասարապես պարտադիր է երկու կողմերի համար:

2. Ղարաբաղը, այն է՝ Շուշու, Զիվանշիրի եւ Զեբրայիլի գավառների լեռնային մասը (Դիզակը, Վարանդան, Խաչենը եւ Զրաբերդը), որտեղ բնակիչները հայեր են, ժամանակավորապես համարում է իրեն Ադրբեջանի հանրապետության սահմաններում:

3. Շուշու, Զիվանշիրի եւ Զեբրայիլի գավառները շարունակում են մնալ որպես Ղարաբաղի գեներալ-նահանգապետության առանձին ադմինիստրատիվ միավորներ այնպիսի ներքին կազմակերպությամբ, որ լեռնային հայկական շրջանում վարչությունը (ադմինիստրացիան) նշանակվում է հայերից եւ փոքրամասնության իրավունքները պաշտպանվում են:

4. Ղարաբաղի լեռնային մասում (Դիզակում, Խաչենում, Վարանդայում ու Զրաբերդում) վարչական պաշտոնական անձինք նշանակվում են Խորհրդի հայ անդամների առաջարկությամբ:

5. Ղարաբաղի գեներալ-նահանգապետության կից կազմակերպվում է Խորհուրդ՝ 6 հոգուց բաղկացած՝ երեք հայերից եւ երեք մուսուլմաններից:

6. Խորհրդի հայ անդամներին ընտրում է լեռնային Ղարաբաղի հայ բնակչության համագումարը: Համագումարն իրավունք ունի վերընտրություն կատարելու:

7. Ազգամիջյան բնույթի բոլոր սկզբունքային հարցերը չեն կարող կիրառվել կյանքում, առանց նախապես խորհրդի քննության ենթարկվելու:

8. Խորհուրդը նախաձեռնության իրավունք ունի գեներալ-նահանգապետության կարգավորման եւ կառավարման խնդիրների նկատմամբ:

9. Խորհուրդը հսկողության եւ ստուգման իրավունք ունի գեներալ-նահանգապետության վարչության (ադմինիստրացիայի) վերաբերմամբ, առանց սակայն վարչության գործողություններին միջամտելու իրավունքի:

10. Հիմնվում է գեներալ-նահանգապետի օգնականի պաշտոն՝ քաղաքացիական մասի վերաբերմամբ, եւ այդ պաշտոնում նշանակվում է հայ:

11. Գեներալ-նահանգապետի քաղաքացիական մասի օգնականի պաշտոնի համար հայկական համագումարը Ադրբեջանի կառավարությանը ներ-

կայացնում է երկու թեկնածու, որոնցից մեկը հաստատվում է:

12. Ղարաբաղի հայերը օգտվում են կուլտուրական ինքնորոշման իրավունքով:

13. Կուլտուրական ինքնորոշման իրավունքն իրագործվում է Ղարաբաղի Ազգային խորհրդի միջոցով, որն ընտրվում է Ղարաբաղի հայերի պարբերաբար հրավիրվող համագումարներում: Համագումար հրավիրում է Ազգային խորհուրդը:

14. Ադրբեջանի հանրապետության կառավարությունը հսկում է Հայոց ազգային խորհրդի գործունեությանը հայ լիազորների միջոցով:

15. Զինվորական մասերը տեղավորվում են Շուշում եւ Խաչենիում՝ խաղաղ ժամանակի կազմով:

16. Ղարաբաղի, այսինքն՝ Շուշու, Զեբրայիլի եւ Զիվանշիրի գավառների լեռնային շրջանում, ուր բնակվում են հայեր, զինվորական մասի յուրաքանչյուր տեղափոխություն կատարվում է խորհրդի անդամների 2/3 համաձայնությամբ:

17. Քաղաքական համոզմունքների համար ոչ ոք չի կարող ենթարկվել հալածանքի ո՛չ դատական եւ ո՛չ էլ վարչական կարգով:

18. Բոլոր այն հայերը, որոնք ստիպված են եղել հեռանալ քաղաքական նկատառումներով, իրավունք ունեն վերադառնալու իրենց տեղերը:

19. Ղարաբաղում հայ եւ թյուրք բնակչության զինաթափումը զաղարեցվում է, մինչեւ Ղարաբաղի հարցի որոշվելը խաղաղարար կոնֆերանսում:

**ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.** Որովհետեւ ամբողջ Ադրբեջանում հայտարարված է զինաթափում, խոսք կարող է լինել միայն նրա զաղարեցման մասին Ղարաբաղում:

20. Ադրբեջանի կառավարությունը ցույց է տալիս նյութական ու բարոյական աջակցություն Ղարաբաղի բնակչությանը՝ արագորեն վերականգնելու հայկական եւ թյուրքական ավերված գյուղերը:

21. Ազգամիջյան հարաբերությունները լավագույն կերպով կանոնավորելու համար Խորհուրդը պարբերաբար հրավիրում է ընդհանուր եւ տեղական հայ-մուսուլմանական համագումարներ:

22. Տրվում է միությունների, խոսքի եւ մամուլի լիակատար ազատություն: Իսկ ժողովները, նկատի ունենալով, որ ամբողջ Ադրբեջանում զինվորական դրություն է հայտարարված, գումարվում են միայն վարչության թույլատուությամբ:

23. Մասնավոր եւ պաշտոնական անձանց յուրաքանչյուր հանցանք պետք է հետամտել դատական կարգով, բացառությամբ այն դանցանքների ու հան-



ցավոր զործողությունների, որոնք Ադրբեջանի հանրապետության Պետական պաշտպանության կոմիտեի 1919 թ. հունիսի 11-ի պարտադիր որոշման համաձայն այլևս ենթակա չեն ընդհանուր դատի:

24. Մինչև այժմ տեղի ունեցած ազգամիջյան ընդհարումների մասնակիցները հալածանքի չեն ենթարկվում:

25. Սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ղարաբաղի հայկական յոթերորդ համագումարի կողմից ընդունվելու մոմենտից:

26. Սույն համաձայնությունը ուժի մեջ է մնում թե՛ պաշտոնական եւ թե՛ զինվորական եւ թե՛ այլ դրությունների ժամանակ:

Ստորագրել են. 1. Դանիել Առաքելյան, 2. Աբրահամ Կիսիբեկյան, 3. Սիմոն Պողոսյան, 4. Սմբատ Բալայան, 5. Բենյամին Բաբաքելյան, 6. Իսրայել Ղուլիբեկյան, 7. Աբրահամ-բեկ Իշխանյան, 8. Բաշխի Մուրադյան, 9. Հովհաննես Աբրահամյան, 10. Ստեփան Ստեփանյան, 11. Հակոբ Բալասանյան, 12. Տիգրան Մելիք Դասպարյան, 13. Ավանես Դասպարյան, 14. Լեւոն Վարդապետյան, 15. Արսեն (Արսո) Հովհաննիսյան:

Շուշի, 22 օգոստոսի, 1919 թ.<sup>128</sup>:

«Համաձայնությունը» խորապես վրդովեց Հայաստանի հանրապետության ղեկավարներին:

Արտաքին գործերի մինիստրը 1919 թ. օգոստոսի 28-ին Փարիզի հաշտության կոնֆերանսին ուղարկած գրությամբ բողոքեց «Ղարաբաղի ազգային 7-րդ ժողովի» եւ Ադրբեջանի միջեւ կայացած վերոհիշյալ համաձայնության առթիվ, որով Ղարաբաղն ստիպված էր ժամանակավորապես ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, մինչեւ խաղաղության կոնֆերանսի վերջնական որոշումը:

Այսպես թե այնպես, Ադրբեջանին կարծես հաջողվեց իրագործել իր նպատակը՝ թեկուզ ժամանակավորապես ենթարկելով Լեւոնային Ղարաբաղին իր իշխանությանը: Ղարաբաղից դուրս նույնպես, հայ պետական ու հասարակական շրջաններում, տակավին շարունակվում էին հույսեր փայփայել, որ մի գեղեցիկ օր (եւ հեռու չէր թվում այդ օրը) Փարիզի հաշտության կոնֆերանսը կպատուի «ժամանակավոր համաձայնությունը» եւ հայկական Ղարաբաղի ճակատագիրը կտնօրինի նրա հայ բնակչության իղձերի համաձայն: Բայց զուր սպասելիքների էին դրանք:

<sup>128</sup> «Համաձայնության» հայերեն թարգմանությունը տրամադրել է ինձ ընկ. Արշավիր Քամալյանը. - Հ. Թ.

Առհասարակ Անդրկովկասի վերաբերյալ հարցերով Փարիզի կոնֆերանսը երբեք չզբաղվեց: Փարիզում հավաքված իմպերիալիստական անգղաներից յուրաքանչյուրն ամենից առաջ տողորված էր պարտված թշնամիներից սեփական երկրի օգտին ավելի շատ գլխելու ձգտումներով:

\* \* \*

Համաձայնությունից հետո մի որոշ ժամանակ կյանքը Ղարաբաղում կանոնավորվեց: Բարելավվեցին ազգամիջյան հարաբերությունները, տնտեսական բոյկոտը վերացվեց, բացվեցին ճանապարհները: Սակայն այդ երկար շտեկեց: Ադրբեջանի կառավարությունը շուտով սկսեց խախտել համաձայնությունը՝ վերածելով այն մի դատարկ թղթի կտորի:

Համաձայնությամբ Ադրբեջանը պարտավոր էր վերականգնել մուսուլմաններից ավերված հայկական գյուղերը, բայց այդ նպատակով ոչ միայն պետք եղած միջոցները չտրամադրվեցին, այլև թույլ չտվեցին նույնիսկ, որ հայ գյուղացիներն իրենք իրենց միջոցներով վերականգնեն ավերված գյուղերը եւ ապրեն այնտեղ:

Ազգային խորհուրդը պահանջ ներկայացրեց միջոցներ տալ դպրոցների, հիվանդանոցների ու որբանոցների պահպանության համար, բայց այդ եւս մերժվեց Սովթանովի կողմից:

Ադրբեջանը պարտավորվել էր Շուշում ու Խանքենդում պահել խաղաղ ժամանակվա նորմալ կայազորներ: Սակայն «Համաձայնությունից» չանցած մի ամիս՝ այդ երկու բնակավայրերը վերածվեցին ռազմական ճամբարների, որտեղ խոշոր ուժեր կուտակվեցին Զանգեզուրի վրա արշավելու համար: Իսկ ամբողջ հոկտեմբեր ամսվա ընթացքում Ադրբեջանը Շուշու վրայով եւ հայկական Ղարաբաղի այլ կետերով անընդհատ, գիշեր ու ցերեկ զորքեր էր շարժում դեպի Զանգեզուրի սահմանները:

Համաձայնության այդ բոլոր խախտումների առթիվ նահանգապետին կից խորհրդի հայ անդամների ու Ղարաբաղի Ազգային խորհրդի բողոքները թողնվում էին անհետեւանք: Եւ դա բնական էր: Ադրբեջանի համար «Համաձայնությունը» իսկապես մի թղթի կտորից ավելի արժեք չուներ: Նրան միայն հարկավոր էր, որ Զանգեզուրի դեմ արշավելիս իր զորքերի թիկունքը Ղարաբաղի կողմից սպառնալիքի չենթարկվեր:



#### 14. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՐՁԱԿՎԵԼՈՒ ԶԱՆԳԵՋՈՒՐԻ ՎՐԱ. ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՄՈՒՍՈՒԼՄԱՆՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև Զանգեզուրի դեմ գործողություններ սկսելը, Ադրբեջանը կազմակերպեց Շարուրի եւ Նախիջեւանի ապստամբությունները: Այդ վայրերի զինված մուսուլմանները թուրք խալիլ-բեյի ղեկավարությամբ պիտի հարձակվեին Դարալագյազի վրա եւ այնտեղից աշխատեին հարվածել Զանգեզուրի պաշտպանների թիկունքից, երբ սկսվեր ադրբեջանական զորքերի գրոհը Զանգեզուրի դեմ:

1919 թ. օգոստոսի սկզբներին Ադրբեջանի կառավարությանը հաջողվեց Նախիջեւանի խաների միջոցով այդ քաղաքի եւ նրա շրջանի մուսուլմաններին ոտքի հանել հայկական փոքրամասի դեմ, որը դաշնակից պետությունների ներկայացուցիչների համաձայնությամբ գրավել էր Նախիջեւանը դեռեւս 1919 թ. մայիսին:

Նախիջեւանի անգլիական ներկայացուցիչը, որը իբրեւ թե Հայաստանի կառավարության շահերի պաշտոնական պաշտպանն էր հանդիսանում, ոչ միայն ոչինչ չարեց կանխելու արյունահեղությունը, այլեւ ապստամբության պահին բացահայտորեն բռնեց խռովարարների կողմը: Հայկական զորքերի եւ ապստամբների միջեւ տեղի ունեցած մարտերի ժամանակ անգլիական միսիան գտնվում էր քաղաքի մուսուլմանական մասում, Բոյուկ-խանի տան մեջ, ուր տեղավորված էր նաեւ... ապստամբների շտաբը:

Կուլի ժամանակ անգլիական միսիայի պետն իր մեքենայով եկավ հայկական ջոկատի շտաբը եւ պահանջեց անմիջապես դադարեցնել ռազմական գործողությունները եւ հանձնել զենքը տեղի թյուրքական խուժանի ներկայացուցիչներին:

Այդ լկտի առաջարկությունը ոչ միայն մերժվեց հայկական զինված ուժերի հրամանատար Մամաջանյանի կողմից, այլեւ վերջինս կտրուկ կերպով պահանջեց անգլիական միսիայի պետից՝ իսկույն թողնել քաղաքի մուսուլմանական մասը եւ գնալ քաղաքից դուրս գտնվող զորանոցները, որովհետեւ որոշված էր թնդանոթային կրակով ավերել Բոյուկ-խանի տունը: Մամաջանյանի այդ պահանջը միսիայի պետը հրաժարվեց կատարել:

Թնդանոթային մի քանի հարվածով ավերվեց Բոյուկ-խանի տունը, ուր սպանվեց նաեւ անգլիական միսիայի աշխատակիցներից մեկը: Դրանից հետո անգլիական միսիայի պետը հեռացավ Նախիջեւանից իր ուղեկցորդների

հետ եւ գործ հարուցեց Մամաջանյանի դեմ մեղադրելով նրան «ապօրինի գործողությունների եւ միսիային վիրավորելու մեջ»: Բաշ-նորաշեն ավանից հեռացավ նաեւ անգլիական կես վաշտը<sup>129</sup>:

Այնուհետեւ հայկական զորքը, որ ապստամբների գործողությունների շնորհիվ կտրված էր Նրեւանից, ի վերջո ստիպված եղավ թողնել Նախիջեւանը եւ 1919 թ. օգոստոսի կեսերին անցնել Վայոց Ձոր (Դարալագյազ)՝ իր հետ տանելով մեծամիջի գաղթականություն:

Դրանից հետո Նախիջեւանի փաստական տերերը դարձան թուրք-մուսավթական տարրերը: Թուրքիայից Նախիջեւան անցան բազմամիջի թուրք սպաներ՝ Ադրբեջանի բանակում ծառայելու համար: Նախիջեւանում էին նաեւ խալիլ-փաշան եւ խալիլ բեյը: Այդ վիճակը շարունակվեց մինչև 1920 թ. գարունը, երբ կրկին Նախիջեւանն իր ամբողջ շրջանով գրավվեց հայկական բանակի կողմից:

\* \* \*

Բայց չկարծեք, թե միայն անգլիական ընչաքաղց զինվորականներն էին, որ սատարում էին հայության արյունախում թշնամիներին՝ շարունակելու հոշոտել մեր տարաբախտ ժողովրդի ուժասպառ մարմինը: Չի կարելի մոռացության տալ նաեւ Ադրբեջանի բանակում ծառայության մտած եւ զգալի թիվ կազմող ռուս սպաների՝ հայությանը վնասելու նողկալի արարքները, որոնց նպատակն էր այլեւայլ շահատենչ ակնկալություններով ձեռք բերել թյուրք իշխանավորների համակրանքն ու վստահությունը: Հիշենք դրանցից բարձրաստիճան մեկին՝ գեներալ-լեյտենանտ Սուլկեւիչին, որն այդ ժամանակներում գրավում էր Ադրբեջանի բանակում գլխավոր շտաբի պետի պաշտոնը: Տեսեք, թե այդ ռուսական գեներալն ինչ էր առաջարկում Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Սուլթանովին իր 1919 թ. սեպտեմբեր 7, նո. 4007 թվակիր գաղտնի գրությամբ<sup>130</sup> (ընդգծումներն ամեն տեղ մերն են. - Հ. Թ.).

<sup>129</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 45, գ. 33, թ. 17-18:

Թուրքերը Մուգրոսի զինադադարի պայմանագրով պարպել էին Կարսը, Արդահանը, Սարիղամիշը, Կաղզվանը եւ այլն, բայց զորապարպից առաջ տեղական մուսուլմաններից նրանք կազմակերպել էին ներքին կառավարություն՝ «շուրայե-մելի» անունով, որը չէր ճանաչում հայերի իշխանությունը: Անգլիացիները շատ լավ գիտեին թուրքերի սարքած այդ դավը, բայց ոչ մի միջոց ձեռք չառան: Նրանք այդտեղ էլ վարում էին երկերեսանի քաղաքականություն:

<sup>130</sup> Բերում ենք ռուսերեն պատճենից թարգմանաբար:



«Ղարաբաղի հարցի խաղաղ լուծումը<sup>131</sup> ստիպում է մտածել, որ Զանգեզուրի գավառի միացումը կկատարվի առանց զինված պայքարի, որովհետև նրա (Զանգեզուրի) հայ բնակչությունը նախիջեւանի ջարդից հետո<sup>132</sup> զրկված է այժմ երկու կրակի մեջ եւ հազիվ թե ուսկ անի մեզ հակահարված տալու՝ չունենալով իր թիկունքում առաջվա պաշտպանությունը: Այնուամենայնիվ, անդորրություն պահպանությունը (հայկական) Ղարաբաղում եղել է եւ պիտի կազմի մեր մշտական հոգսը (ռուսական) կամավորական բանակի եւ նրա բնական ու մշտական դաշնակցի-Հայաստանի հետ ընդհարվելիս:

Ներկայիս պայմաններում Հայաստանը մեզ համար վտանգավոր չէ: Բայց այսպիսի բարեհաջող իրադրությունը չի կարող մշտապես շարունակվել, եւ մենք պիտի պատրաստվենք վատագույնին: Հայերը Ղարաբաղի մշտական կորուստի հետ հաշտվել չեն կարող եւ, անկասկած, պիտի ձգտեն օգտագործել ամեն հնարավորություն՝ կորցրածը ետ բերելու համար: Այդ ամենը կպահանջի մեզանից զորահավաքի ժամանակ կայազորներ թողնել Խանքենդում, իսկ ապագայում նաեւ Գորիսում հայերի վրա հսկողություն ունենալու համար:

Այդպիսով Ղարաբաղը կարող է խլել խիստ զգալի ուժեր մեր փոքրաթիվ կանոնավոր բանակից: Սակայն հնարավորություն կա Ղարաբաղի հսկողության համար ոչ միայն չթուլացնել դաշտային զորքերը, այլեւ հենց նրա (Ղարաբաղի) խորքերից առաջ քաշել դեպի ճակատ կենդանի ուժ թողնելով բավականաչափ կայազորներ Ղարաբաղի գեներալ-նահանգապետության շրջանում, կարգի պահպանության համար:

Եւ հենց այդ նպատակով հարկավոր է միայն օգտագործել այն մարտական նյութը, որ ներկայացնում են քրդերը<sup>133</sup> կազմակերպելով նրանցից հեծելազոր եւ հետեւակազոր «Համիդիեի» օրինակով, որի կազմակերպման գործնական արժեքը ստուգված է թուրքերի կողմից վերջին պատերազմի փորձով:

Փոքրասիական, պարսկական ու Միջագետքի ռազմաճակատներում տեղի ունեցած կռիվների մեջ քրդական զնդերի («համիդիե») մարտական

<sup>131</sup> Խոսքը վերաբերում է Ղարաբաղի եւ Ադրբեջանի միջեւ կայացած օգոստոսյան համաձայնությունը:

<sup>132</sup> «Նախիջեւանի ջարդ» է համարում Սուլեյմա Նախիջեւանի մուսուլմանների ապստամբության հաջողությունը Հայաստանի դեմ:

<sup>133</sup> Նկատի ունի Լաչինի եւ Քելրաջարի շրջանի քրդերը:

փառապանծ գործելակերպի մասին են վկայում միաձայն պատերազմի բոլոր մասնակիցները»<sup>134</sup>:

Սուլեյմին այնուհետեւ հայտնում է, թե քրդական կադրերից ինչ մասեր է նախատեսվում կազմել եւ որքան: Դրանցից քանիսը պիտի առանձնացվեն ճակատի համար եւ քանիսը թողնվեն Ղարաբաղի կայազորում «հայերի վրա հսկողություն ունենալու համար»:

Դրության վերջում Սուլեյմին խնդրում էր Սուլթանովին հայտնել, թե հեծյալ եւ հետեւակ ինչքան կռվողներ կարող են տալ քրդերը, որպեսզի հնարավոր լինեն արագորեն քրդական մասերի կազմակերպման ձեռնարկել:

Թե ինչ է պատասխանել Սուլթանովը Սուլեյմին, մեզ անհայտ է: Գիտենք միայն, որ «Քուրդիստանի»<sup>135</sup> քրդերից հետագայում իսկապես կազմակերպվել է մի հեծյալ դիվիզիոն՝ ռոտմիստր Սելիմ-բեկ Սուլթանովի (գեներալ-նահանգապետի եղբայրը) հրամանատարությամբ՝ բաղկացած 600 սուսերից, 4 թնդանոթով: Այս դիվիզիոնը Ղարաբաղի 1920 թ. մարտ-ապրի-

<sup>134</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 691, թ. 41:

<sup>135</sup> Ինչու՞ Ադրբեջանի «Սովետական Սոցիալիստական Հանրապետության» կառավարությունը 1959 թվին մարդահամարի տվյալներում ցույց չի տվել Լաչինի եւ Քելրաջարի շրջաններում ո՛չ «Քուրդիստան» եւ ո՛չ էլ քրդեր, այլ ցույց է տվել միայն թյուրքեր: Մինչդեռ ըստ 1915 թ. «Кавказский календарь»-ի ոչ լրիվ տվյալների՝ 1914 թվին հիշյալ երկու շրջաններում քուրդ բնակչությունը կազմել է 6803 շունչ: Իսկ Բուլղինի տվյալներով երկու շրջաններում եղել են 1931 թվին 15 բնակակետեր՝ 4325 շունչ քուրդ բնակչությամբ (Букиши А. Азербайджанские курды Баку 1932) Այդ երկու շրջանների քուրդ բնակչության թվի վերաբերյալ գրեթե ճշգրիտ տվյալներ պիտի համարել 1922 թվին Թիֆլիսում հրապարակված «Свод статистических данных о населении Закавказского края»-ի մեջ 1886 թվի վիճակագրական տեղեկությունները, ըստ որոնց Քելրաջարի շրջանում եղել է 13 բնակիչ 5310 շունչ քուրդ բնակչությամբ, իսկ Լաչինում 39 բնակիչ կետեր 13.759 շունչ քուրդ բնակչությամբ: Ուրեմն, պետք է, որ 1959 թվին այդ երկու շրջաններում, որտեղից քրդերի արտագաղթ երբեք չի եղել, 30 հազարից ավելի քուրդ բնակչություն լիներ, որը սակայն ցույց չի տրված:

Նպատակը պարզ է, եթե նկատի ունենանք նաեւ, որ այդ երկու շրջաններում գործում են բացառապես թյուրքական դպրոցներ, այլ կերպ ասած՝ գոյություն չունի քրդական եւ ոչ մի դպրոց: Այո, սա բացահայտ ասիմիլատորական քաղաքականություն է, որ սազական է միայն օսմանյան թյուրքերին, բայց ոչ երբեք իրենց կոմունիստ հորջորջող Ադրբեջանի ղեկավարներին:

(Վերոհիշյալ տվյալները վերցված են ընկ. Խ. Ավդալբեկյանից):



լյան ապստամբության ժամանակ մասնակցել է հայերի դեմ մղված կռիվներին:

Սուլկեւիչի հիշյալ պաշտոնական գրությունից «բուրում է է» նրա անձնական խոր ատելությունը դեպի հայն ու Հայաստանը: Ուշագրավ է նույնպես ռուսական զենեքալի նվիրվածությունն ու հավատարմությունը Շամխորի ջարդի հեղինակների հանդեպ, մինչ այն աստիճան, որ նա մեծ հոգատարությամբ կամենում էր նախապատրաստել ադրբեջանական բանակն այն օրվան, երբ ռուսական «կամավորական բանակի» եւ նրա «բնական ու մշտական դաշնակից» Հայաստանի հետ Ադրբեջանն առիթ կունենա ընդհարվելու:

Սուլկեւիչը ռուսական այն զենեքալներից էր, որ մասնակցել է Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Կովկասյան ճակատի կռիվներին՝ լինելով մեկը հայակեր Յուդենիչի մոտիկ զինակիցներից: Հայտնի է, որ ռուսական բանակի կողմից գրավված Արեւմտյան Հայաստանում զենեքալ Յուդենիչն իր ճակատամասում կազմակերպում էր անսպասելի սիստեմատիկ նահանջներ՝ խսպառ ոչնչացման մատնելու համար կոտորածներից մի կերպ փրկված հայ բնակչության մնացորդներն այն վայրերում, որոնց հայ բնակիչները, ռուսական զորքին ապավինելով, հավաքվել եւ իրենց ավերված օջախներն էին ուզում շենացնել:

Յուդենիչ-Սուլկեւիչները հասան իրենց նպատակին:

Ռուսական ռեակցիոն զենեքալների կազմակերպած այդ դավաճանական նահանջների հետեւանքով դեռեւս 1915-1916 թվերին մի շարք շրջաններ բոլորովին ամայացան հայերից:

Մեր տարաբախտ ժողովրդի վերջին բեկորների մի մասը, ճիշտ է, փրկվեց շնորհիվ հայ կամավորական ջոկատների հերոսական ջանքերի, բայց շատերն էլ զոհվեցին քրդական «համիդիե» կոչված հրոսակների ձեռքով, որոնց գործած բազմաթիվ շարագործությունները հայերի դեմ այնքան խոր հիացմունք էին պատճառել սուլկեւիչներին...

## 15. ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀԱՐՁԱԿՈՒՄԸ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՎՐԱ ԵՒ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Զանգեզուրն անպատրաստ չդիմափորեց ադրբեջանական զորքերի հարձակումներին: Հայաստանի կառավարությունը վաղուց սկսել էր պատ-

րաստվել պետական իշխանություն հաստատելու Զանգեզուրում:

Միայն 1919 թվի ամռանը, երբ հայտնի դարձավ ադրբեջանական զինված ուժերի տեղաշարժերի բուն նպատակը, ժամանակը հասունացած համարվեց Զանգեզուրի տեղական բնակչությունից արագորեն կազմակերպելու զորամասեր, այն է՝ մեկ հետեւակային գունդ եւ մեկ հեծյալ դիվիզիոն՝ երկու մարտկոցներով: Դրա համար Երեւանից Զանգեզուր գործուղվեց գնդապետ Ղազարյանը՝ 10-12 սպաների հետ: Ուղարկվեց նաեւ մեկ լեռնային մարտկոց՝ լիակատար անձնակազմով: Դրանց հետ միասին Զանգեզուր մեկնեցին մի քանի մարդ՝ տեղում քաղաքացիական վարչություն կազմելու համար:

Ղազարյանը բավականաչափ զգալի աշխատանք կատարեց՝ կազմակերպելով սկզբնական շրջանում տերիտորիալ կոմպլեկտավորման կիսամիլիցիական զորամասեր<sup>136</sup>: Բացի Երեւանից իր հետ տարած սպաներից, Զանգեզուրում գտնված տեղացի եւ դարաբաղցի սպաները եւս մեծ աջակցություն ցույց տվեցին Ղազարյանին՝ տեղական ուժերը շտապ կազմակերպելու աշխատանքներում:

\* \* \*

Զանգեզուրը նվաճելու առաջին քայլերին Ադրբեջանը ձեռնարկեց 1919 թ. սեպտեմբեր ամսի 20-ին, երբ կանոնավոր բանակի ջոկատները, միացած մուսուլմանական բազմահազար զինված խաժամուժի հետ, Ջերբայիլի գավառի կողմից Արաքս գետի հովտում եկան կուտակվեցին Զանգեզուրի մատուցներում եւ ապա, ուժերը ծավալելով, մեծ գոռում-գոռումով հարձակվեցին Խոզնավար, Բայանդուր եւ Տեղ գյուղերի վրա: Հանդիպելով, սակայն, հայերի կազմակերպված խորտակիչ հակահարվածին, մեկօրյա կատաղի կռիվից հետո թուրք-ադրբեջանական զինված ուժերը շարաշար պարտություն կրեցին՝ տալով մարդկային եւ նյութական խոշոր կորուստներ: Սպանվածների վրա գտնված փաստաթղթերը ցույց էին տալիս, որ Ադրբեջանը մտադիր էր զենքի ուժով գրավել Զանգեզուրը եւ միանալ Նախիջեւանի եւ Շարուրի մուսուլմանական ապստամբներին<sup>137</sup>:

Այդ անհաջողությունից հետո Ադրբեջանն սկսեց լրջորեն նախապատ-

<sup>136</sup> Տեղեկությունները վերցված են զենեքալ Նազարբեկովի «Զինվորական ակնարկներից» (ՀՊՊԿԱ, ֆ. 45, դ. 33):

<sup>137</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, դ. 691, թ. 71-72:



րաստվել նոր արշավանքի: Նա Շուշում եւ Խանքենդի ավանում կուտակեց զգալի թվով կանոնավոր զորամասեր, որոնք հետո արագ կերպով տեղափոխվեցին Ջաբուղի մոտակա շրջանը:

Այդ զորամասերը բաղկացած էին՝ 1-ին Ջիվանշիրյան գնդից, երկու հեծյալ գնդերից, Ջաքաթալայի գնդի երկու համահավաք գումարտակից, երկու լեռնային թնդանոթային դիվիզիոնից, 4 հատիքիցից եւ մեկ սապյորային վաշտից: Ընդամենը թվով մինչեւ 6000 հետեւակ, 800 սուսեր, 400 հեծյալ քրդեր, 8 թեթեւ եւ 4 ծանր թնդանոթներ, անսպառ զինամթերք ու այլ պաշարներ:

Եթե նկատի ունենանք, որ Ադրբեջանը դեռեւս չունեւ իր բնակչության թվին համապատասխան բանակ, այդքանը պիտի համարել ուժերի այն մաքսիմումը, որ կարող էր դուրս բերել Ադրբեջանն այդ ժամանակ, եւ այն էլ այնպիսի մի փոքր շրջանի հայ բնակչության դեմ, ինչպիսին Ջանգեզուրն էր:

Երկրորդ հարձակման համար զորքերի հրամանատար էր նշանակվել 1-ին հետեւակային դիվիզիայի պետ, գեներալ Շիրսլինսկին: Իսկ զորքերի պարենավորման պատասխանատու էր կարգվել Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Սուլթանովը:

Գեներալ Շիրսլինսկուն հրահանգվել էր որոշակի խնդիր՝ միացնել Ադրբեջանին ոչ միայն Ջանգեզուրը, այլեւ Շարուր-Գարալագյազը Նախիջևանի հետ միասին եւ ապա միանալ Թուրքիայի հետ. «Որոշելով ամեն կերպ հպատակեցնել Ջանգեզուրը, Ադրբեջանը ձգտում էր միանալ թուրքական զորքերի եւ համիսլամական ու համաթուրքական շարժման ղեկավարների հետ: Այն ժամանակ, երբ վերջիններս իրենց գործակալների միջոցով էրզրումից էին ղեկավարում ամբողջ մուսուլմանական աշխարհը, Ադրբեջանի ղեկավարողն էր անմիջապես էնվեր փաշան: Ադրբեջանը ձգտում էր միանալ թուրքական զորքերի հետ, որոնք գտնվում էին 1914 թվականի սահմանների վրա: Այդ միացումը հնարավորություն կտար Ադրբեջանին ուժեղանալ ամենից առաջ թուրք հրամանատարության խոստացած տեխնիկական սպառազինությամբ, որն ազատորեն պիտի ուղարկվեր Ադրբեջան Ջանգեզուրի վրայով, իսկ այնուհետեւ՝ անպայման նաեւ թուրքական զորքերով:

Ադրբեջանը մամուլի միջոցով համառորեն եւ ճարպկորեն նախապատրաստում էր հասարակական կարծիք՝ իր զորքերի առաջիկա գործողու-

թյունների համար...»<sup>138</sup>:

\* \* \*

1919 թ. հոկտեմբերի 29-ին, ցերեկվա ժամը 2-ին, Ջաբուղի ձորն է մտնում ադրբեջանական զորքերի մի սպա՝ 30 հեծյալ ասկերներով: Նա պահանջում է Ջանգեզուրի Տեղ գյուղից ներկայացուցիչներ: Ուղարկվում են երեք մարդ: Սպան նրանց հանձնում է ռուսերեն գրված մի թուղթ եւ առաջարկում երեք օրվա ընթացքում պատասխանն ուղարկել Ավդալար:

Թուղթը գրված էր ադրբեջանական զորքի առաջավոր ջոկատի պետի կողմից եւ ուներ հետեւյալ բովանդակությունը.

«Ես, առաջավոր ջոկատի պետս, գտնվում եմ Ավդալարում: Խնդրում եմ հաղորդել ինձ՝ կամենո՞ւմ եք ապրել խաղաղ՝ ճանաչելով Ադրբեջանի իշխանությունը, թե՞ մտադիր եք պատերազմել: Ձեր պատասխանը ես պիտի ուղարկեմ մեր գեներալին:

Առաջավոր ջոկատի պետ, ռոտմիստր Իբրահիմբեկով»:

Ջանգեզուրցիներն այդ լակոնական երկտողը թողեցին անպատասխան:

Դրանից յոթ օր հետո, նոյեմբերի 5-ին, գեներալ Շիրսլինսկին, կենտրոնացնելով զորքերը երեք կետերում, անցավ հարձակման Ջանգեզուրի դեմ: Բախումը տեղի ունեցավ Գորիսի հյուսիսակողմի շրջանում, Խոզնավար գյուղի, Քաշալ-դաղի եւ հարակից բարձրությունների մատուցներում:

Առաջին օրը ադրբեջանական զորքերին հաջողվեց գրավել Խոզնավար, Բայանդուր եւ Տեղ գյուղերը եւ Քաշալ-դաղ լեռը: Միաժամանակ ադրբեջանական ուժերը ճակատից շարունակում էին հարձակումը Գորիսի ուղղությամբ:

Ձնայելով, սակայն, հակառակորդի գերազանց ուժերին եւ գործ դրած գերմարդկային ջանքերին՝ հայ մարտիկները կարողացան մեծ արիությունը եւ տոկունությամբ դիմանալ թշնամու բոլոր կատաղի գրոհներին, եւ հաջորդ օրը, նոյեմբերի 6-ին, անցնել հակահարձակման ամբողջ ճակատի վրա: Զորսօրյա արյունահեղ կատաղի մարտերից հետո թշնամու կանոնավոր զորամասերը ջախջախվեցին եւ դուրս մղվեցին իրենց գրաված բոլոր դիրքերից:

Թյուրքերի հեծյալ Ղարաբաղյան երկրորդ գունդը, որը գործում էր նրանց զորքերի ձախ թեւում, Կոռնիձոր գյուղի մոտ, գրեթե ամբողջովին

<sup>138</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 691, թ. 384-386 (ընդգծումներն իմն են, - Հ. Թ.):



ոչնչացվեց զանգեզուրցիների կրակով:

Մեծ կորուստներ կրեց նաեւ քրդական հեծյալ ջոկատը: Թշնամուց վերցվեց 13 գնդացիր, 1 թնդանոթ, 150 գերի, շատ ուղղամթերք, հացի եւ շաքարի մեծ պաշար<sup>139</sup>:

Թողնելով պատերազմի դաշտում բազմաթիվ վիրավորներ եւ սպանվածներ, որոնց մեջ կային նաեւ ռուս սպաներ, ադրբեջանական զորքի մնացորդները նահանջեցին դեպի Ղարաբաղ, որտեղ կողոպտում եւ սպանում էին ճանապարհին հանդիպած հայ անպաշտպան գյուղացիների: Զանգեզուրում կրած իրենց ամոթալի պարտության վրեժն առնելով նրանցից:

Գնեքալ Շիխլինսկու զորքերի գործողությունների հետ միաժամանակ սկսել էին գործել նաեւ Շարուրի եւ Նախիջևանի ապստամբ մուսուլմանները, որոնք միանալով Դարալագյազի նախապես կազմակերպված զինված մուսուլմաններին, օսմանցի խալիլ-բեյի առաջնորդությամբ հարձակվել էին Դարալագյազի հայկական Սուլթան-բեկ, Փաշալու եւ այլ գյուղերի վրա՝ նպատակ ունենալով կտրել Դարալագյազը Զանգեզուրից եւ, հաջողության դեպքում, հարվածել Զանգեզուրի պաշտպաններին թիկունքից<sup>140</sup>:

Բայց խալիլ-բեյը, հանդիպելով Դարալագյազի հայերի կազմակերպված հակահարվածին, անհաջողություն էր կրել ու պատճառ դարձել մուսուլմանական շատ գյուղերի ավերման:

\* \* \*

Զանգեզուրի վրա հարձակվելու Ադրբեջանի նախապատրաստությունները չէր կարող գաղտնի մնալ վրացական կառավարությունից: Վերջինս, նկատի ունենալով, որ Զանգեզուրի դեպքերը կարող են բախման առիթ ծառայել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ, մի գրությամբ, ուղղված երկու հանրապետությունների Վրաստանի դիպլոմատական ներկայացուցիչներին, առաջարկում էր կանխել դեպքերը Զանգեզուրում: Նա խորհուրդ էր տալիս խաղաղությամբ եւ համաձայնությամբ լուծել տերիտորիալ վիճելի հարցերը, «այլապես, - գրում էր արտաքին գործերի մինիստր Գեգեկորին, - քաղաքակիրթ աշխարհի առաջ ցույց կտրվի, որ Անդրկովկասյան հանրապետությունները ինքնուրույն քաղաքական կյանքի համար կենսունակ

<sup>139</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 179-180:

<sup>140</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 227, գ. 3, թ. 2-5:

են»<sup>141</sup>:

Բայց կարելի՞ էր անկեղծ մղումներից բխած համարել վրաց կառավարության այդ դիպլոմատական «բարի-հարեւանական» դեմարշը: Իհարկե՞ չէ: Մի՞թե կարելի էր մոռանալ 1918 թվի վերջին տեղի ունեցած այն բռնի տերիտորիալ զավթումները, որ հենց ինքը՝ վրաց կառավարությունը կառարկեց Լոռում եւ Ախալքալաքում՝ հակառակ Հայաստանի կառավարության առաջարկության՝ «տերիտորիալ հարցերը լուծել խաղաղությամբ եւ համաձայնությամբ»:

Հայաստանի հանրապետական կառավարությունը Զանգեզուրի դեպքերից առաջ, 1919 թ. նոյեմբերի 20-ին Ադրբեջանի կառավարությանը նույնպես առաջարկել էր գումարել հայ-ադրբեջանական կոնֆերանս՝ լուծելու վիճելի տերիտորիալ հարցերը: Բայց Ադրբեջանի կառավարությունը ձգձգել էր պատասխանը: Միայն Զանգեզուրում պարտություն կրելուց հետո նա դարձավ «խաղաղասեր»:

1919 թ. նոյեմբերի 23-ին Թիֆլիսում համաձայնություն կնքվեց Հայաստանի եւ Ադրբեջանի արտաքին գործերի մինիստրներ միջեւ հետեւյալի մասին.

1. Հայաստանը եւ Ադրբեջանը պարտավորվում են դադարեցնել տեղի ունեցող ընդհարումները եւ այլեւս չդիմել զենքի իրար դեմ:

2. Երկու կողմերը համաձայնվում են բոլոր վիճելի հարցերը լուծել խաղաղ բանակցությունների ճանապարհով:

3. Համաձայնվում են ռեալ միջոցների դիմել կանոնավորելու դեպի Զանգեզուր տանող ճանապարհները:

4. Որոշվում է դեկտեմբերի 2-ին Բաքվում գումարել հայ-ադրբեջանական կոնֆերանս, որը դեկտեմբերի 10-ին պիտի շարունակի իր աշխատանքը Թիֆլիսում:

5. Զանգեզուրն առաջվա պես կառավարվում է Ազգային խորհրդի կողմից:

Համաձայնությունը ստորագրել են խառնաշառն եւ Ուսուբբեկովը<sup>142</sup>:

Այնուամենայնիվ, Ադրբեջանի ղեկավարները չէին դադարում գործել նենգաբար ու ամեն տեսակի մեքենայություններով աշխատում էին իրա-

<sup>141</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 691, թ. 11-12:

<sup>142</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 691, թ. 80:



գործել իրենց զավթողական նկրտումները:

Համաձայնությունից մի քանի օր հետո Բաքվում հրատարակվող պաշտոնական «Азербайджан» թերթի 30 նոյեմբերի համարում հրապարակվում է ներքին գործերի մինիստրի որոշումը՝ համարել **Ջանգեզուրի գավառի բոլոր բնակիչներին Ադրբեջանի հանրապետության քաղաքացիներ**<sup>143</sup>: Իսկ արտաքին գործերի մինիստրի օգնական Խան-Տեկինսկին գաղտնի հրահանգ է պատրաստում Ջանգեզուրի շրջան ուղարկելու օսմանցի սպաներ եւ ասկերներ՝ կազմակերպելու տեղական մուսուլմաններին՝ հարվածելու Ջանգեզուրին թիկունքից, երբ ադրբեջանական զորքերը նոր փորձ կանեն հարձակվելու Ջանգեզուրի վրա:

Այս փաստերն ինքնին խախտում էին նոյեմբերի 23-ի համաձայնությունը եւ ավելորդ դարձնում նախատեսված կոնֆերանսը՝ խորամանկ, խարդախ, նենգ միջոցներով քաղաքականություն վարող այնպիսի մի պետության հետ, ինչպիսին մուսավաթական Ադրբեջանն էր, որը պատրաստ էր ամեն անգամ դրժելու պայմանագրերով եւ առանձին համաձայնագրերով հանձն առած պարտավորությունները:

Ավելորդ չենք համարում հիշատակելու այստեղ եւս մի երկու փաստ՝ իբրեւ մուսավաթական ղեկավարների նենգ գործելակերպի բնորոշ նմուշներ:

Ջանգեզուրում խայտառակ պարտություն կրելուց անմիջապես հետո Ադրբեջանի կառավարությունը հայտնում է Անդրկովկասի բարձրագույն կոմիսարի տեղակալ Ռեյխին (ամերիկյան գնդապետ), որ **Ջանգեզուրի հայերը բոլշևիկներ են եւ ճնշում են մուսուլմաններին**, որ Հայաստանն այնտեղ զորք է պահում եւ այլն<sup>144</sup>: Միաժամանակ այդ կառավարությունը բողոքում է Բաքվի անգլիական ներկայացուցչին Հայաստանի կառավարության դեմ, որ իբրեւ թե Հայաստանն է թյուրքերի վրա հարձակումներ կազմակերպողը: Անգլիական ներկայացուցիչը, որը, իհարկե, հակամետ էր հավատալու Ադրբեջանի սուտ բողոքներին, Ուորդոպի (անգլ.) եւ Ռեյխի միջոցով պահանջեց Հայաստանի կառավարությունից «դադարեցնել հարձակումները թյուրքերի վրա»:

Շատ բնորոշ է Հայաստանի կառավարության՝ 1919 թ. նոյեմբերի 14-ի այդ առթիվ Թիֆլիսի իր ներկայացուցչին հղած հետեւյալ հեռագիրը.

<sup>143</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 691, թ. 126:

<sup>144</sup> Նույն տեղում, թերթ 280:

«Միսս Արմեն Եւանգուլյանին.

Ուորդոպի եւ Ռեյխի հեռագրերը՝ դադարեցնելու ռազմական գործողությունները Ջանգեզուրում եւ Դարալագյազում, մեծ զարմանք առաջ բերին:

Մենք չէ, որ հարձակվել ենք, այլ Ադրբեջանը, մենք միայն պաշտպանվում ենք:

Խնդրվում է շտապ հայտնել (Ուորդոպիին եւ Ռեյխին), որ մենք կատեգորիկ կերպով խնդրում ենք նրանց երաշխավորել մեզ (Ադրբեջանի) հարձակումներից եւ մաքրել Դարալագյազը եւ Ջանգեզուրը թյուրքերից՝ ուղարկելով իրենց ներկայացուցիչներին, որոնք տեղում կհամոզվեն, թե ճշմարտությունը որի կողմն է...»<sup>145</sup>:

Մի փաստ եւս:

1919թ. հոկտեմբերի վերջերին, հենց այն օրերին, երբ գնեբրալ Շիխլինսկին եւ Սուլթանովը զբաղված էին ադրբեջանական գնդերը հապճեպ դեպի Ջանգեզուրի մատույցները փոխադրելով, Ադրբեջանի կառավարությունը, թաքցնելու համար դաշնակիցների անդրկովկասյան ներկայացուցիչներից իր ազդեցիկ մտադրությունները Սյունիքի նկատմամբ, Բաքվի անգլիական ներկայացուցչի միջոցով բողոքում է գլխավոր կոմիսար Ուորդոպիին, որ իբրեւ թե Հայաստանը զորքեր է փոխադրում Ջանգեզուր՝ Ադրբեջանի վրա հարձակվելու համար:

Այդ փաստերը ցույց են տալիս, որ Ադրբեջանի ղեկավարությունը, իր ներշնչումը ստանալով Թալեաթի արյունարբու զինակիցներ Նուրի, Խալիլ, Քյազիմ եւ Էնվեր փաշաներից, կարողանում էր դաշնակիցների աչքի առաջ իր պանթուրքական նվաճողական պլանների իրագործման համար ոչ միայն բացահայտ հարձակումներ կազմակերպել հայերի դեմ եւ անգամ կոտորածներ սարքել, այլեւ իր կատարած բոլոր շարագործությունների հանցանքը շուռ տալ եւ բարդել հայերի վզին՝ մեղադրելով նրանց մուսուլմանության դեմ ուղղված ազդեցիկ գործողությունների մեջ:

Հարկավոր է մի անգամ եւս շեշտել, որ այդ շարագործությունները եւ դիվանագիտական նենգ խաղերը հաջողվում էին Ադրբեջանին միայն նրա համար, որ նա վաշելում էր Բաքվում եւ Թիֆլիսում նստած անգլիացիների հովանավորությունը, ճիշտ այնպես, ինչպես մեր օրերի «սոցիալիստական», «եղբայրական» Ադրբեջանը ճգնում է իր բոլոր հայկական Ղարաբա-

<sup>145</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 691, թերթ 280:



ղը, օգտվելով մուսուլմանական աշխարհի նոր բարեկամների հովանավորությունից...

## 16. ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԴԵՊՔԵՐԻՅ ՀԵՏՈ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ ԿՐԿԻՆ ՍԿՍՈՒՄ Է ԲԱՐԴԱՆԱԼ

Կարելի էր ենթադրել, որ Զանգեզուրում պարտություն կրելուց հետո Ադրբեջանի կառավարությունը, ելնելով իր կենսական պետական շահերից, այնքան շրջահայաց եւ հեռատես կգտնվեր, որ Ղարաբաղի հետ մեծ դժվարություններով ձեռք բերված «համաձայնությունը» լուրջ գնահատելով կաշխատեր այդ ազատասեր եւ ըմբոստ լեռնաստանում կարգ եւ հանգստություն պահպանելու համար կիրառել մեղմ, բարեկամական քաղաքականություն: Բայց Ադրբեջանի քաղաքագետներն այդքան խելացի չգտնվեցին: Նրանք առհասարակ տրամադիր կամ, ավելի ճիշտ, ընդունակ չէին քաղաքակիրթ եւ խաղաղասեր երկրների պետականության սկզբունքներով վարելու ներքին քաղաքականությունը: Շարունակելով հետեւել օսմանցի հայակերների թելադրանքներին, Ադրբեջանի ղեկավարները նորից սկսեցին դիմել ահաբեկման եւ ջարդերի քաղաքականության:

Հայերի առաջ դարձյալ փակվեցին բոլոր ճանապարհները: Ամբողջ սահմանակից շրջաններում տնտեսական բոյկոտ հայտարարվեց Ղարաբաղի հայության դեմ: Նրկրում խորացավ անիշխանությունը: Խանքենդի ավանում եւ Ասկերանում տեղավորված զորամասերի ասկերները, գողերը եւ ավազակները օրը ցերեկով կողոպտում էին խաղաղ բնակիչների տները, սպանում կանանց, տղամարդկանց ու երեխաներին: Իսկ դրա դեմ իշխանությունները միջոցներ ձեռք չէին առնում, հանցավորները չէին պատժվում: Մի քանի օրերի ընթացքում Խանքենդում, Ասկերանում եւ Շուշի-Նվախ խճուղու վրա Ադրբեջանի զորքերը եւ կազմակերպված բանդաները կոտորեցին 400-ից ավելի անմեղ հայերի:

Ադրբեջանի ներքին գործերի մինիստր Հաջինսկին 1920 թ. հունվարի 24-ի իր գաղտնի գրությամբ հրահանգեց Ղարաբաղի գեներալ-նահանգապետ Սուլթանովին՝ կազմակերպել «տեղական մուսուլման բնակչությունից պարտիզանական ջոկատներ՝ օգնելու զորամասերին»<sup>146</sup>: Եւ կարճ ժամա-

<sup>146</sup> Ադրբեջանի ՍՍՌ Պետ. արխիվ, գործ 157:

նակամիջոցում Ղարաբաղում ժողովվեցին քրդերից ու թյուրքերից բաղկացած խոշոր բանդաներ՝ օսմանցի սպաների ղեկավարությամբ:

Ադրբեջանի կառավարությունը, նրա գործակալները եւ առանձին պաշտոնյաներն ու հիմնարկությունները վարում էին բացահայտ խտրական քաղաքականություն: Հայը դարձել էր իրավագուրի, իսկ մուսուլմանը ամեն իրավունքներից օգտվող:

Սուլթանովը 1920 թ. փետրվարի 19-ին պահանջեց Ղարաբաղի Ազգային խորհրդից հպատակվել վերջնականապես Ադրբեջանի իշխանությանը եւ թույլ տալ զորքերը մտցնել գյուղական շրջանները: Նպատակը պարզ էր. պայմաններ ստեղծել գինաթափելու Ղարաբաղը եւ ապա ջարդերի միջոցով ոչնչացնելու կամ վտարելու հայ տարրն իր հայրենիքից եւ բնակեցնել Ղարաբաղը թյուրքերով<sup>147</sup>: Ազգային խորհուրդը պատասխանեց Սուլթանովին, որ ինքն իրավասու չէ լուծելու նման հարցերը եւ այսպիսով մերժեց օգոստոսյան համաձայնությունը ոչնչացնող նրա լիտի պահանջները:

Վերստին նոր ժողովրդական համագումար հրավիրելու անհրաժեշտություն ծագեց, մի համագումար, որը պիտի ամփոփեր իր նախորդի կնքած համաձայնության տխուր արդյունքները եւ հայտարարեր ի լուր աշխարհի, որ հայը թուրքական ցեղերի ձեռքի տակ, լինի այդ Թուրքիայում, թե Ադրբեջանում, մատնված է ֆիզիկական ոչնչացման, ասիմիլացիայի կամ բռնի վտարման իր հայրենիքից:

\* \* \*

Ղարաբաղում կրկին ծայր առած բռնությունները նորից մեծ զայրույթ առաջ բերին տեղական հայ բնակչության եւ Ղարաբաղից դուրս հայ հասարակայնության շրջաններում:

Տեղի ունեցող սպանությունները եւ բռնությունները ոչ միայն Ղարաբաղում, այլեւ Գանձակում եւ նրա լեռնային մասի հայկական գյուղերում, Նախիջևանի հայերի կոտորածներն ու գյուղերի հրդեհումը, 1919 թ. դեկտեմբերին տեղի ունեցած Ազուլիսի անողոք կոտորածը օսմանցի սպաների ղեկավարությամբ, անտարակուսելի դարձրին, որ տակավին շարունակվում են դավերը Անդրկովկասի հայության գոյության դեմ եւ պիտի շարունակ-

<sup>147</sup> Թյուրքիզացիայի այդ պլանը, ինչպես տեսանք, գոյություն ունի եւ գործադրվում է առայժմ մեծ հաջողությամբ նաեւ «սոցիալիստական» Ադրբեջանի կողմից Ղարաբաղի եւ Զանգեզուրի սահմանակից քրդական շրջաններում:



վեն, քանի որ հայ ժողովուրդը պաշտպանություն չի գտնում ոչ ոքի կողմից:

Սպասում էին, որ անգլիացիները կհեռանան Անդրկովկասից եւ նրանց փոխարինելու կգան իտալացիները կամ ֆրանսիացիները, որից հետո դաշնակիցների քաղաքականությունը հայերի նկատմամբ թերեւս կփոխվի դեպի լավը: Բայց ապարդյուն հույսեր էին դրանք: Ընդհուպ մինչեւ Անդրկովկասի խորհրդայնացումը այնտեղ պատասխանատու պոստերում շարունակեցին մնալ անգլիական բարձրաստիճան զինվորականները:

Մնում էր հայության համար փրկության մի ելք, որ Հայաստանն ինքք մոբիլիզացնեի իր սուղ միջոցները, միացնեի ժողովրդի ջանքերը՝ ապահովելու հայ բնակչության գոյությունը գեթ այն գավառներում, որոնք սահմանակից կամ մոտ էին Հայաստանին եւ ուր հայությունը կազմում էր հոծ բազմություն:

Այդպիսին էր հայկական Ղարաբաղը, որը բացի հայաշատ լինելուց, իբր աշխարհագրական դիրքով ուներ եւ մեր պատմական անցյալում Հայաստանի հյուսիս-արեւելյան սահմանների պաշտպանության համար ունեցել է կենսական ռազմագիտական նշանակություն: Եւ քանի նա շարունակեք մնալ Ադրբեջանի ճիրաններում, ոչ միայն նրա 200 հազարից ավելի հայ բնակչության կյանքը, այլեւ Հայաստանի հարավ-արեւելյան գավառները եւ բուն իսկ Հայաստանի գոյությունը պիտի շարունակեք մնալ սպառնալիքի տակ: Այդ համոզումն ամրապնդվեց ոչ միայն հակահետախուզության միջոցով ձեռք բերված, այլեւ Զանգեզուրի դեպքերի ժամանակ սպանված եւ գերի ընկած մոսկովման սպանների մոտ գտնված մի շարք կարեւոր փաստաթղթերով, որոնք լիովին բացահայտում էին ադրբեջանական ղեկավարների շատ հեռու տանող նվաճողական պլանները, որոնց իրագործման համար հայկական Ղարաբաղը պիտի ծառայեր իբր պլացդարմ:

Մեզ արդեն ծանոթ գեներալ Սուլկեւիչը վատ ռազմագետ չէր, որպեսզի հասկանար, թե ինչ մեծ նշանակություն ունի Ղարաբաղը Հայաստանի համար: Հենց դրա համար էլ նա նախազգուշացնում էր Ադրբեջանի ղեկավարներին, որ՝ «Հայերը Ղարաբաղի մշտական կորուստի հետ հաշտվել չեն կարող եւ անկասկած պիտի ձգտեն օգտագործել ամեն հնարավորություն կորցրածը ետ բերելու համար»:

Ղարաբաղն, իհարկե, դեռ Հայաստանի համար կորած չէր: Ադրբեջանին չէր հաջողվել տակավին վերջնականապես դնելու իր ավերիչ թաթը Ղարաբաղի վրա: Սուլթանովը դեռեւս չէր համարձակվում զորք մտցնել Ղարաբա-

ղի գյուղական շրջանները, բացի Շուշուց եւ Շուշի-Ասկերան խճուղու նեղ շերտի սահմաններում եղած երկու կետերից, որ հաջողվել էր նրան միայն անգլիացիների ակտիվ աջակցությամբ:

Սուլթանովը մի վարանոտ փորձ արեց Ջրաբերդի (Ջիվանշիրի) շրջանի հայ բնակչության անջատ համաձայնությունն առնել՝ զորք մտցնելու Ավան-Յուզբաշյանի կալվածքը՝ Մարգուշեան: սակայն 1920 թ. փետրվարի 11-ին այդ շրջանի հայկական գյուղերի 86 ներկայացուցիչները հավաքվելով Մարդակերտում, միաձայն որոշում ընդունեցին մերժել Ադրբեջանի այդ պահանջը, «որը խախտում էր 7-րդ համագումարի հետ կնքված համաձայնության 16-րդ կետը»:

Այդ մերժումից հետո Ադրբեջանը Ջրաբերդի սահմանում կենտրոնացրեց նոր ուժեր: Զորքերի նոր համալրումներով ուժեղացվեցին նաեւ Ասկերանի, Խանքենդի ավանի, Շուշու եւ Ղարաբաղի սահմանակից կետերի՝ Կարիազինոյի, Ջեբրայիլի եւ Աղդամի զորամասերը: Զորքերի այդ կենտրոնացումները, հարկավ, բարի նպատակներ չէին հետապնդում, եւ ժողովուրդն այդ լավ հասկանում էր: Գրգռումը եւ տագնապը ժողովրդի մեջ հասավ ծայրահեղ չափերի: Տղամարդիկ առանց զենքի տնից չէին հեռանում:

Հայաստանի կառավարությունը, որ տեղյակ էր Ադրբեջանի ձեռնարկումներին եւ Ղարաբաղում ստեղծված ծանր դրությանը, ժամանակը հասունացած համարեց զբաղվելու Ղարաբաղի վերամիավորման հարցով:

Դաշնակից պետությունների ներկայացուցիչների շրջանում գծող հայացքների առիթներ չստեղծվելու համար՝ որոշվեց գործել անաղմուկ:

Տեղական ուժերը կազմակերպելու համար սպայական կազմից պիտի Ղարաբաղ ուղարկվեին ձեռնհաս մարդիկ: Այս բոլոր նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո հարմար մոմենտին պիտի ապստամբություն բարձրացվեր Ադրբեջանի դեմ, որից հետո «Զանգեզուրի զորքերը պիտի մտնեին Ղարաբաղ՝ բնակչությանն ազատելու եւ Ղարաբաղը Հայաստանին միացնելու համար»<sup>148</sup>:

Աշխատանքի կազմակերպման ընդհանուր ղեկավարության համար 1919 թ. նոյեմբեր ամսի վերջերքին Զանգեզուր գնաց Դրոն՝ ընդարձակ լիազորություններով: Նրան առաջադրված էր առաջին հերթին հոգալ՝ երկրային կայուն կապ ստեղծելու Զանգեզուրի եւ Ղարաբաղի միջև: Այդ

<sup>148</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 45, գ. 33, թ. 18-19:



խնդիրն իրագործելու համար Դրոյի տրամադրության տակ էր դրված էքսպեդիցիոն զորամաս՝ բաղկացած մեկ համահավաք գումարտակից, այրուծիի մեկ էսկադրոնից, որը հետո Ղարաբաղում տեղական ուժերով պիտի վերածվեր դիվիզիոնի, եւ մի դասակ լեռնային հրետանի: Կազմակերպվեց զորամասի շտաբ՝ կապիտան Միրիմանյանի գլխավորությամբ, որին տրվեց բեռնակիր ռադիոկայան:

Այդ էքսպեդիցիոն զորամասը պիտի կազմեր մի տեսակ կորիզը Զանգեզուրի գինված ուժերի<sup>149</sup>:

Ադրբեջանին արդեն հաջողվել էր օսմանցի դինվորական հրահանգիչների միջոցով Ագարա գետի հովտի մուսուլման բնակչությունից կազմակերպել բազմաթիվ լավ սպառազինված եւ մարզված ջոկատներ, որոնք գինված էին նաեւ գնդացիներով<sup>150</sup>:

Այնուամենայնիվ, Դրոյի առաջին խնդիրը՝ ապահովել տերիտորիալ հաստատուն կապ Զանգեզուրի եւ Ղարաբաղի միջեւ, իրագործվեց հաջողությամբ<sup>151</sup>:

Հենց այդ ժամանակ էլ կազմակերպչական աշխատանքների համար Ղարաբաղ անցան նշանակված մարդիկ: Դրանց մի մասն անցավ Զանգեզուրից, իսկ մի մասն էլ՝ Բասարգեշարից դեպի Ղարաբաղ տանող ուղիներով (Քյալբաջարով):

Դրոն 1919 թ. դեկտեմբերին մեկնեց Երեւան՝ Զանգեզուրի եւ Ղարաբաղի զորքի եւ բնակչության համար հաց եւ փամփուշտ ուղարկելու<sup>152</sup>:

## 17. ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՈՒԹԵՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Ադրբեջանի կատեգորիկ պահանջը՝ վերջնականապես ենթարկվելու իր իշխանությունը եւ այդ հողի վրա երկրում շարունակվող բռնությունների եւ ահաբեկման քաղաքականությունն ստիպեցին Ղարաբաղի Ազգային խորհրդին 1920 թ. փետրվարի 28-ին հրավիրել ժողովրդական համագումար՝ քննելու ստեղծված դրությունը եւ ելք որոնելու երկիրը ծանր ճգնաժամից դուրս բերելու համար:

<sup>149</sup> Նույն տեղում:

<sup>150</sup> Նույն տեղում:

<sup>151</sup> Նույն տեղում:

<sup>152</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 45, գ. 33, թ. 20:

Համագումարի վայր թեեւ նշանակված էր Շուշին, սակայն այնտեղ հավաքվել էին Դիզակի եւ Ջրաբերդի շրջանների որոշ մասերից եկած 8-10 բոլշևիկ եւ ոչ-բոլշևիկ պատգամավորներ միայն: Պատգամավորների ճնշող մեծամասնությունը՝ բաղկացած 96 պատգամավորից, որոնք եկել էին Գյուլիստանի, Ջրաբերդի, Խաչենի, Վարանդայի եւ Դիզակի շրջաններից, գտնելով, որ անհնարին է գեներալ-նահանգապետ Սուլթանովի ազդեցության ոլորտում նորմալ աշխատանքը եւ չի կարելի երաշխավորված համարել անգամ պատգամավորների անձի անվտանգությունը, նպատակահարմար համարվեց Շուշու փոխարեն հավաքվել Շուշու գյուղում՝ իբրեւ միանգամայն ապահով եւ հանգիստ վայր համագումարի աշխատանքների համար:

Քաղաքում ապրող մի քանի բոլշևիկ եւ էսէն կոչված անձնավորություններ, որոնք իրենց շատ լավ էին զգում նահանգապետ Սուլթանովի իշխանության ստեղծած կոշմարալին մթնոլորտում, Շուշում հավաքված փոքրաթիվ պատգամավորներին չթողեցին գնալ Շուշու գյուղը՝ մասնակցելու համագումարի աշխատանքներին, այլ նրանց միջոցով շարունակում էին պահանջել, որ համագումարը տեղի ունենա քաղաքում: Նպատակն ակնհայտ էր՝ համագումարի վզին փաթաթել իրենց կապիտուլիանտական նկրտումները եւ այդպիսով, պառակտում առաջ բերելով ժողովրդի մեջ, իրագործել Ղարաբաղը Սուլթանովի ոտքերի տակ փռելու իրենց հանցավոր մտադրությունը:

Սակայն պատգամավորների բացարձակ մեծամասնությունը մնաց անսասան իր որոշման մեջ եւ շարունակեց աշխատանքը Շուշու գյուղում:

8-րդ համագումարի աշխատանքը, որ տեւեց մինչեւ մարտ ամսի 4-ը, ամբողջովին կլանեց նախորդ համագումարի եւ Ադրբեջանի կառավարության միջեւ կնքված համաձայնության աղաղակող ոտնահարումների փաստերի քննությունը, այլեւ հայերի դեմ գործված բռնությունների, անիրավությունների եւ անլուր ոճիրների բազմաթիվ դեպքերի արձանագրումը, դեպքեր, որ տեղի ունեին ամենուրեք, ուր մոլեռանդ մուսուլմանը կարող էր թյուրք իշխանությունների աջքի առաջ անպատիժ կերպով բռնանալ հայի վրա եւ նույնիսկ կողոպտել ու սպանել նրան:

1920 թ. մարտի 4-ին համագումարը միաձայն ընդունեց հետեւյալ հուշագիրը երկրի քաղաքական դրության վերաբերյալ՝ ուղղված դաշնակից պետությունների եւ Անդրկովկասի հանրապետությունների ներկայացուցիչ-



ներին.

«1919թ. օգոստոսի 15-ին Ղարաբաղի հայության ներկայացուցչությունը 7-րդ համագումարում մանրամասն քննելով Ղարաբաղի քաղաքական վիճակը, կանգնած էր այն իրավական հողի վրա, թե վիճելի երկրամասերի այս կամ այն պետությանը վերջնականապես կցելու խնդիրը կապված է վեհաժողովի որոշումից եւ հետեւապես իդուր արյունահեղության տեղիք չտալու եւ հարեւան ժողովրդի հետ խաղաղ կենակցելու համար անհրաժեշտ է կյանքի այնպիսի ճանապարհ գտնել, որ երկու ժողովուրդներն էլ հանգիստ ու համերաշխ ապրեն:

Այդ հիման վրա Ղարաբաղի հայության 7-րդ համագումարը Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչների հետ որոշ համաձայնության գալով, մշակեց 26 կետից բաղկացած ժամանակավոր համաձայնության մի կանոնագիր: Հայ ժողովրդի ներկայացուցչությունը այն հույսն ուներ, թե այդ համաձայնությամբ երկու ժողովուրդներն էլ հաշտ ու համերաշխ կկենակցեն՝ առանց իրար վնասելու եւ կառավարությունն էլ (Ադրբեջանի) առանց աշառության երկու ժողովուրդներին համահավասար վերաբերմունք ցույց կտա եւ կարգ ու կանոն կպահպանե:

8-րդ համագումարի Շոշու գյուղում հավաքված պատգամավորներս, դժբախտաբար, ստիպված ենք մատնանշել այն տխուր եւ միանգամայն ցավոտ հանգամանքը, որ համաձայնություն կայացնելուց հետո մինչեւ այսօր Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կարգ ու կանոն չկարողացավ պահպանել Ղարաբաղում, այլ, ընդհակառակը, առիթ եղավ անիշխանության: Անցյալում ոչ մի ժամանակ հայերը զոհերով եւ թե տնտեսական այնքան կորուստներ չեն կրել, որքան համաձայնությունը կայանալուց հետո՝ շնորհիվ կառավարության աշառու քաղաքականության եւ թուլության:

Ակնհայտնի մարդասպաններն ու գողերը օրը-ցերեկով սպանում, թալանում են խաղաղ ժողովրդին, եւ դրա դեմ ոչ մի միջոց ձեռք չի առնվում, մեղավորները մնում են անպատիժ: Կանոնավոր բանակի ասկերները թալանում են խաղաղ ժողովրդի տները, կոտորում տղամարդկանց, կանանց ու երեխաներին:

Ավերված հայկական գյուղերի բնակիչները մինչեւ այսօր էլ թափառում են այս ու այն գյուղերում եւ Ադրբեջանի կառավարությունը, հակառակ իր խոստման, դրանց չի բնակեցրել իրենց վայրերում:

Ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը միանգամայն խախտված են Ադրբեջանի կառավարության կողմից:

Առաջին կետը պարզ ասում է. «Երկու կողմերն էլ ընդունում են այս ժամանակավոր համաձայնությունը, մինչեւ այս խնդրի որոշումը խաղաղաբար կոնֆերանսում, որի որոշումը հավասարապես պարտագիր է երկու կողմերի համար»: Մինչդեռ Ղարաբաղի ժամանակավոր գեներալ-նահանգապետն իր սույն տարվա (1920 թ.) փետրվարի 19-ի նո. 1927 գրությամբ, ուղղված Շոշու Ազգային խորհրդին, հայտնում է հետեւյալը.

«... Այնուհետեւ, ծրագրի (համաձայնության) առաջին կետում, Ղարաբաղի քաղաքական հարցի վերաբերյալ, խնդրում եմ քննության առնել հետեւյալ սկզբունքային հարցը՝ Ղարաբաղի Ադրբեջանի մեջ վերջնականապես մտնելը իբրեւ նրա անխզելի տնտեսական մաս»:

Բացի դրանից, Ղարաբաղի ժամանակավոր գեներալ-նահանգապետ Սուլթանովը սույն տարվա փետրվարի 14-ին Ղարաբաղի Ազգային խորհրդի, իր խորհրդին կից հայ անդամների եւ հայ ինտելիգենցիայի ներկայացուցիչների պաշտոնական խորհրդակցության մեջ պարզ կերպով արտահայտվեց այն մտքով, որ «(դաշնակիցների) կոնֆերենցիա այլեւս գոյություն չունի, եւ մենք ինքներս պիտի դուրս գանք այս աննորմալ վիճակից»:

Այս խոսքերից պարզ հասկանալի է, որ Սուլթանովը մինչեւ իսկ ոչ մի արժեք չի տալիս վեհաժողովի որոշումներին, որին մենք, երկու կողմերս էլ, ժամանակավոր համաձայնությամբ պարտավորվել ենք ենթարկվել, հետեւապես նա (Սուլթանովը) խախտում է մեր համաձայնության հենց առաջին կետը:

Համաձայնության 7-րդ կետում ասված է. «Ազգամիջյան բնույթի բոլոր սկզբունքային հարցերը չեն կարող կիրառվել կյանքում, առանց նախապես խորհրդի քննության ենթարկվելու»: Մինչդեռ փետրվարի 19-ի գրությամբ ժամանակավոր գեներալ-նահանգապետ Սուլթանովը Ազգային խորհրդին առաջարկում էր քննության ամենագլխավոր պրինցիպիալ հարցեր՝ Ղարաբաղի վիճակը կապել ընդմիշտ Ադրբեջանի հետ: Նախ՝ Ազգային խորհրդին չէ վերապահված ոչ մի քաղաքական հարց քննելու իրավունք, եւ երկրորդ՝ համաձայն 7-րդ կետի, այսպիսի սկզբունքային խնդիրը նախ պետք է քննության առնվի նահանգապետին կից խորհրդում եւ ապա առաջարկվի համագումարին, հետեւապես խախտված է համաձայնության նաեւ 7-րդ կետը:

Համաձայնության 15-րդ կետը հետեւյալն է. «Զինվորական մասերը տեղավորվում են Շուշում եւ Խանքենդում խաղաղ ժամանակի կազմով»: Բայց ամբողջ վեց ամսվա ընթացքում այդ կետը չի պահպանված: Զանգեզուրի դեմ երկու անգամ արշավելու ժամանակ թե՛ Խանքենդի եւ թե՛ Շուշի են մտել մի քանի զնդեր, որոնք եկել էին Գանձակից, Բաքվից, Զաքաթալայից՝ մեծ հու-



զույժ առաջ բերելով Ղարաբաղի ժողովրդի մեջ:

Ձանգեզուրից վերադարձող զորքը մինչև իսկ Մազի-կամուրջի վրա սպանել է 15 հայ աշխատավոր գյուղացիների եւ երկու ուսուցչի:

Համաձայնության 16-րդ կետում ասված է. «Ղարաբաղի, այսինքն Շուշու, Զեբրայիլի եւ Զիվանշիրի գավառների լեռնային շրջանում, ուր բնակվում են հայեր, զինվորական մասերի յուրաքանչյուր տեղափոխություն կատարվում է նահանգապետի խորհրդի անդամների 2/3-ի համաձայնությամբ»: Այս կետը եւս հիմնովին խախտված է՝ սկսած 1919 թ. հոկտեմբեր ամսից մինչև այժմ: Ադրբեջանը հոկտեմբեր ամսին մոտ 12 հազար զորք է անցկացրել Ասկերանից, Խանքենդուց եւ Շուշուց դեպի Ձանգեզուր՝ առանց նույնիսկ խորհրդի անդամների կարծիքը հարցնելու: Մինչդեռ այդպիսի մի կարեւոր խնդիր պետք է քննության առնվեր (նահանգապետին կից) խորհրդում եւ որոշվեր ձայների 2/3-ի համաձայնությամբ:

Բացի դրանից Ադրբեջանի կառավարությունը պաշտոնապես առաջարկել է Ազգային խորհրդին եւ Զիվանշիրի (Զրաբերդի) հայության՝ Ավան-Յուզբաշյանի կալվածքում զորք կենտրոնացնելու իր մտադրության մասին, մի հանգամանք, որ միանգամայն խախտում է ամբողջ ժամանակավոր համաձայնությունը:

Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը, քննության առնելով Ղարաբաղի ներկա քաղաքական վիճակը եւ մանրամասն ծանոթանալով բոլոր վերոհիշյալ փաստերի հետ, հանգեց հետեւյալ եզրակացության.

**«8-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱԶԵՎԸ ՂԱՐԱԲԱՂԻ ՔԱՂԱՔԱՆԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Լեռնային Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը (բաղկացած 96 պատգամավորներից՝ Գյուլիստանի, Զիվանշիրի, Խաչենի, Վարանդայի եւ Դիզակի շրջաններից), որ տեղի ունեցավ Շուշու գյուղում 1920 թ. փետրվարի 28-ից մինչև մարտի 4-ը, մանրամասն եւ բազմակողմանի քննության առնելով Լեռնային Ղարաբաղի ներկա քաղաքական դրությունը, գտնում է, որ 7-րդ համագումարից հետո (22 օգոստոսի 1919 թ.) Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է ժամանակավոր համաձայնության գլխավոր կետերը: 8-րդ համագումարը, համաձայն ժողովրդի տված մանդատի, հետեւյալ որոշումները կայացրեց.

ա. Ադրբեջանի կառավարությունը պարբերաբար խախտել է Ղարաբաղի ժամանակավոր համաձայնության գլխավոր կետերը:

բ. 1920 թ. փետրվարի 22-ին Խանքենդում, Ասկերանում եւ Շուշի-Եվլախ տրակտի վրա կառավարության զորքերի եւ ազենտների ձեռքով ակնհայտնի նպատակով կոտորել են մի քանի հարյուր հայերի, թալանել Խանքենդի ավանի հայերի բնակարանները:

գ. 8-րդ համագումարը հաստատ մնալով 7-րդ համագումարի որոշումներին եւ երկուստեք ստորագրված ժամանակավոր համաձայնության, մինչև վեհաժողովի վերջնական որոշումը Ղարաբաղի եւ առհասարակ Անդրկովկասյան հանրապետությունների սահմանների վերաբերյալ, պահանջում է Ադրբեջանի կառավարությունից «ժամանակավոր համաձայնության» կետերի ամբողջական կիսողումը կյանքում:

դ. Վճռականապես բողոքում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ Խանքենդում, Ասկերանում եւ Շուշի-Եվլախ տրակտի վրա տեղի ունեցած անլուր կոտորածի առթիվ եւ կոչ է անում կուլտուրական աշխարհի խղճին՝ վերջ տալու Ադրբեջանի կառավարության նման քաղաքականությանը:

ե. Հայտնում է, որ դեպքերի կրկնությունը կստիպի Լեռնային Ղարաբաղի հայության իր կյանքի ու պատվի պաշտպանության համար դիմել համապատասխան միջոցներին:

զ. Միաժամանակ ութերորդ համագումարը կոչ է անում Ադրբեջանի թյուրք գյուղացիությանն իր բողոքի ձայնը միացնելու Լեռնային Ղարաբաղի հայության բողոքին, ինչպես նաեւ դիմում է անում մամուլին:

է. Որոշում է այս բանաձեւի պատճենն ուղարկել դաշնակից պետությունների Անդրկովկասի ներկայացուցիչ Հասկելին, դաշնակից պետությունների զինվանագիտական եւ զինվորական ներկայացուցիչներին, Անդրկովկասյան երեք հանրապետություններին եւ Ղարաբաղի ժամանակավոր գեներալ-նահանգապետին:

Նախագահ Ղարաբաղի հայության 8-րդ համագումարի՝ Դ. Առաքելյան<sup>153</sup>  
1920 թ. մարտի 5»:

8-րդ համագումարի այս դիմումի հիման վրա Հայաստանում եւ Վրաստանում ապրող ղարաբաղցիների հայրենակցական միությունների նախագահներ Ա. Բաբայանն եւ պատմաբան Լեոն, հիմնվելով համագումարի ներկայացրած փաստերի վրա, մի հուշագիր են ներկայացնում դաշնակից պե-

<sup>153</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 29-35:



տույթյունների Անդրկովկասյան ներկայացուցիչներին՝ Օ. Ուորդրոպին, գնդապետ Հասկելին, մայոր Դ. Նոնանկուրին, գնդապետ Գաբբին, հելլենական ներկայացուցիչին, այլև Վրաստանի արտաքին գործերի մինիստր Գեգեկորուն եւ Հայաստանի մինիստր-նախագահին, որի մեջ խնդրում են «հայտնել դաշնակիցների բարձր շրջաններին՝ ճշշում գործադրելու Ադրբեջանի շովինիստական շրջանների վրա, վերջ տալու Ղարաբաղում սկսված ավանտյուրային, որը կարող է վերջանալ կատաստրոֆայով»։ Խնդրվում էր նաեւ Ադրբեջանից հեռացնել օսմանյան թուրքերի գործակալներին, «որոնք խանգարում են հանգիստ ապրել երկու ժողովուրդներին»։ Պահանջում են Ադրբեջանից անհապաղ վերականգնել օգոստոսի 22-ի համաձայնությունը։

Դիմումի մեջ վստահություն էր հայտնվում, որ դաշնակից պետությունների բարձր ներկայացուցիչները ձեռք կառնեն պետք եղած միջոցները<sup>154</sup>։

Ապարդյո՞ւն ջանքեր...

(1958-1961թթ<sup>155</sup>.)

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

### 1920 թ. ՄԱՐՏ-ԱՊՐԵԼՅԱՆ ԿՌԻՎՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

<sup>154</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 175-176:

<sup>155</sup> Երկրորդ մասը շարադրված է Ա եւ Դ մասերից առաջ, արխիվային փաստաթղթերին ծանոթանալուց անմիջապես հետո:



Զանգեզուրում կրած պարտութիւնից հետո, ինչպես տեսանք, իրադրութիւնը Ղարաբաղում կրկին ծանրացավ նրանով, որ Ադրբեջանը վերջնականապես պատռեց 1919 թ. օգոստոսի 22-ի համաձայնութիւնը եւ սպանութիւնների, տնտեսական բոյկոտի եւ այլ բռնութիւնների դիմելով, կամեցավ ահաբեկել Ղարաբաղի հայ բնակչութիւնը՝ երկիրը վերջնականապես իրեն ենթարկելու համար:

Լուրջ տվյալներ կային, որ Ադրբեջանը մտադիր էր, եթե հանգամանքները բարենպաստ դասավորվեին, ընդարձակ ռազմական գործողութիւնների ձեռնարկել Ղարաբաղի դեմ՝ նրան զինաթափելու եւ ապա կոտորածների եւ բռնի տեղահանումների միջոցով երկիրը պարպելու հայ տարրից՝ այն համատարած թյուրքացման ենթարկելու նպատակով: Դրա համար մուսավաթականներին խրախուսողը Արեւմտյան Հայաստանի հայ բնակչութիւնն անարգել ֆիզիկական բնաջնջման օսմանյան հաջողված փորձն էր:

Հայաստանի կառավարութիւնը, որ արդեն կարողացել էր ամրանալ Զանգեզուրում, բնականաբար, անտարբեր նայել չէր կարող Ադրբեջանի այդ ոճրամիտ ձգտումներին:

Կառավարութիւնն հանձնարարութեամբ Ղարաբաղի հարցով սկսեց զբաղվել ռազմական մինիստր Ռուբեն Տեր-Մինասյանը, որին զիրեկտիվներ էին տրված՝ ամենից առաջ լրջորեն ուսումնասիրել իրադրութիւնը Ղարաբաղում եւ զբաղվել ժողովրդի ինքնապաշտպանութիւնի գործի կազմակերպման հարցերով՝ պահպանելով խիստ զգուշավորութիւն: Տեր-Մինասյանն այդ աշխատանքների համար Ղարաբաղ պիտի ուղարկեր լուրջ, շրջահայաց, փորձված գործիչներ: Նա պարտավոր էր նույնպես բոլոր անհրաժեշտ նախապատրաստական միջոցները ձեռք առնել, Ադրբեջանի կողմից Ղարաբաղի վրա ընդհանուր հարձակում տեղի ունենալու դեպքում անհապաղ զինված օգնութիւն ցույց տալ Ղարաբաղին Զանգեզուրի վրայով եւ նրա զինված ուժերի մասնակցութեամբ: Սակայն, հետագայում միայն պարզվեց, որ Տեր-Մինասյանն ունեցել է գործողութիւնների իր՝ կործանարար ծրագիրը, որը նա աշխատել էր թաքցնել ղեկավար մարմիններից:

Տեր-Մինասյանի անմիջական նպատակների մեջ չէր մտնում Ղարաբաղի միացումը Հայաստանին: Նա ծրագրել էր 1920 թվի գարնանը գրավել Նախիջեւանը: Բայց Տեր-Մինասյանը գիտեր, որ Ադրբեջանը, որի քաղաքակ-



նության ղեկը գտնվում էր Նուրի, Խալիլ եւ Քյազիմ փաշաների ձեռքում, չէր կարող անտարբեր հանդիսատես լինել՝ թույլ տալով, որ թուրք-ադրբեջանական նվաճողական նպատակների համար կարեւոր ռազմագիտական նշանակություն ունեցող մի վայր, ինչպիսին Նախիջեւանն է իր շրջանով, անցնի Հայաստանի ձեռքը: Եւ, Նախիջեւանի ուղղությամբ իր առաջիկա գործողությունների ազատությունը Ադրբեջանի անխուսափելի ռազմական միջամտությունից ապահովելու համար, Հայաստանի ռազմական մինիստրը մտածեց օգտագործել Ադրբեջանի եւ Հայկական Ղարաբաղի միջեւ ստեղծված լարված հարաբերությունները եւ Ղարաբաղի հայության զինված ուժերը նետել Ադրբեջանի դեմ առանց նախապես ապահովելու այդ ուժերը զինամթերքով եւ պարենով:

Տեր-Մինասյանը կարեւորություն չէր տվել նույնիսկ խորհրդակցելու Ղարաբաղի վիճակին քաջատեղյակ նրա արտաքսված գործիչների հետ, որոնք այդ ժամանակ գտնվում էին Երեւանում: Ընդհակառակը, նա ամեն կերպ արգելքներ էր հարուցում, որ այդ գործիչները չկարողանան Ղարաբաղ վերադառնալ՝ լավ գիտենալով, որ նրանք պիտի վճռականորեն դեմ կանգնեին նրա գործակալների արկածախնդրական ձեռնարկումներին: 1919 թ. վերջերքին Զանգեզուրի եւ Բասարգեչարի վրայով Ղարաբաղ անցած սպաները եւ քաղաքացիական աշխատողները, որոնց հանձնարարված էր կազմակերպել տեղական ուժերը, ամենքը Տեր-Մինասյանի ընտրած եւ նրանից նշանակված մարդիկ էին: Տեր-Մինասյանն էր նշանակել նաեւ Արսեն Միքայելյանին (Տեր-Հովհաննիսյան) ղեկավարելու աշխատանքները Ղարաբաղում: Նրան էր հրահանգված իրագործելու այն ծրագիրը, որ Տեր-Մինասյանն իբրեւ գաղտնիք վստահել էր նրան եւ առաջարկել անպայման զլուխ բերել գարնանը Ղարաբաղում, որին հետեւելու էր հայկական կանոնավոր ուժերի հարձակումը Նախիջեւանի ուղղությամբ: Ռազմական մինիստր Տեր-Մինասյանն իր հախուռն, լրջորեն չկշռադատված ծրագրի իրագործման ղեկավարությունը Ղարաբաղում այդպիսով հանձնարարել էր Հյուսիսային Ամերիկայից նոր վերադարձած մի մարդու, որը ոչ միայն բան չէր հասկանում զինվորական գործերից, այլեւ լուրջ անձ չէր: Նա թեթեւ էր բնավորությամբ, մակերեսային էր, մեծամիտ եւ ինքնահավան: Հետեւապես որեւէ երաշխիք չի եղել չէր կարող, որ այդպիսի մեկը իր արկածախնդրական-թեթեւամիտ գործողություններով ծանր փորձությունների պատճառ չէր դառնա դժբախտ Ղարաբաղի համար:

## 2.

Ղարաբաղի շուրջը տարվող աշխատանքները Երեւանում պահվում էին խստորեն գաղտնի: Այդուամենայնիվ, կարծեմ, 1919թ. դեկտեմբերի սկզբներին էր, որ «Հառաջ» թերթում լույս տեսավ մի զգուշավոր հաղորդում՝ բաղկացած ընդամենը մի քանի տողից, որով հայտնվում էր, թե Հայաստանի կառավարությունը զբաղվում է Ղարաբաղի հարցով, եւ որ այդ ուղղությամբ որոշ նախապատրաստական գործնական քայլեր արդեն կատարված են: Հաղորդումը հավանորեն հրապարակվել էր հանգստացնելու համար հայկական շրջաններում ամենուրեք տիրող վրդովմունքը Ղարաբաղում տեղի ունեցող բռնության դեպքերի առթիվ:

Որ Հայաստանի պաշտոնական շրջաններում իրոք սկսել էին զբաղվել «Ղարաբաղի հարցով», ոչ ոք այլեւս չէր տարակուսում: Եւ տարօրինակ էլ ոչինչ չկար, որ Հայաստանը մտադիր էր գործնական քայլեր անել հոծ հայության բնակեցված եւ իր անկապտելի սեփականությունը կազմող երկրամասի փրկության համար: Գիտակցելով, սակայն, որ Արսեն Միքայելյանի գործունեությունը Ղարաբաղում կարող է աղետաբեր լինել նրա ժողովրդի համար, «Հառաջում» գետեղված հիշյալ հաղորդման վրա հիմնվելով, Ղարաբաղի երկու նախկին գործիչները՝ Աշոտ Մելիք-Հովսեփյանն եւ տողերիս հեղինակը 1919թ. դեկտեմբերին մի պատճառաբանված գրություն մղեցինք Հայաստանի պառլամենտի բոլոր ֆրակցիաներին՝ խնդրելով պահանջել ռազմական մինիստրից՝ անմիջապես հետ կանչել Ղարաբաղից Միքայելյանին եւ Ղարաբաղում վարել շատ զգուշավոր եւ մտածված քաղաքականություն: Բայց, դժբախտաբար, Միքայելյանին հետ կանչելու այդ եւ մի շարք այլ փորձերը հաջողություն չունեցան, եւ նա շարունակեց մնալ Ղարաբաղում՝ Տեր-Մինասյանի դիրեկտիվներն իրագործելու համար:

Ինչպես գիտենք, 1919թ. նոյեմբերին Դրոն Զանգեզուր էր գործուղվել հատուկ էքսպեդիցիոն զորամասով, որը «պիտի կազմեր Զանգեզուրի զինված ուժերի կորիզը»: Այդ ուժերով Դրոն պիտի օգնության գնար Ղարաբաղին, եթե այնտեղ ընդհարումներ սկսվեին Ադրբեջանի զինված ուժերի հետ: Տեղեկանալով, սակայն, որ Ղարաբաղում եւ Զանգեզուրում կարիք է զգացվում հացի եւ զինամթերքի, Դրոն դեկտեմբերին մեկնում է Երեւան՝ «Ղարաբաղի եւ Զանգեզուրի զորքի եւ բնակչության համար փամփուշտ եւ հաց



ուղարկելու»<sup>156</sup> հանձնելով էքսպեդիցիոն զորամասը իր օգնականին՝ փոխգնդապետ Թարվերդյանին: Բայց փոխադրական եւ այլ դժվարությունների պատճառով Դրոն ստիպված էր նստել Երեւանում ամբողջ շորս ամիս եւ Զանգեզուր վերադառնալ մոտավորապես ապրիլի 10-ին, այն ժամանակ, երբ 12-օրյա հերոսական պաշտպանությունից հետո ընկել էր Ասկերանը, եւ Ղարաբաղն օրհասական կռիվ էր մղում նաեւ երկրի ներքին մատուցներում: Ում վրա է ծանրանում դրա մեղքը. իհարկե, Տեր-Մինասյանի եւ նրա զրաժո Արսեն Միքայելյանի վրա, որոնք արագացրին դեպքերը եւ այդպիսով զրկեցին Ղարաբաղին գեթ նվազագույն չափով նախապատրաստվելու հնարավորությունից:

### 3.

Ղարաբաղից ստացվող լուրերը հուզում էին առաջ բերում Հայաստանում, առանձնապես ղարաբաղցիների շրջանում: Երկրորդ գնդի ղարաբաղցի զինվորները խնդրեցին կառավարությունը թույլատրելու իրենց գնալ Ղարաբաղ՝ օգնելու հայրենակիցներին: Բայց նրանց հանգստացրին՝ հայտնելով, որ «ամեն ինչ կարվի Ղարաբաղի փրկության համար»:

Ղարաբաղում ամենուրեք սկսված էին ինքնապաշտպանության բացահայտ նախապատրաստական աշխատանքներ: Կազմակերպվել էր «Ղարաբաղի պաշտպանական կենտրոնական մարմին»: Նույնպիսի մարմինների կային նաեւ յուրաքանչյուր շրջանում: Այդ մարմինների ծրագրով եւ ղեկավարությամբ կատարվում էին զորախաղեր, վարժական հրաձգություններ: Իսկ այդ ամենին լավ տեղյակ էին ադրբեջանական իշխանությունները: Նրանք իրենք էլ անգործ չէին նստած: Աննկատելիորեն զորամասեր եւ զինամթերք էին կենտրոնացվում Աղդամում, Թարթարում, Կարիազինոյում, «Քուրդիստանում» եւ Ղարաբաղի սահմանակից այլ ռազմագիտական կետերում:

Սուլթանովը ճնշում էր գործում Ղարաբաղի Ազգային խորհրդի, նահանգապետին կից խորհրդի հայ մտավորականության ներկայացուցիչների վրա՝ պահանջելով վերջ դնել «Հայաստանից ուղարկված էմիսարներին» գործունեությունը, սպառնալով հակառակ դեպքում լուրջ միջոցների դիմել:

Ամպերն արդեն բավականաչափ խտացել էին Ղարաբաղի երկնականա-

րում, երբ տողերիս հեղինակը Ղարաբաղիսայից (ներկայիս Կիրովական) մեկնեց Թիֆլիս, իսկ այնտեղից ծալտյալ անցավ Ղարաբաղ: Դա 1920թ. մարտ ամսի սկզբին էր, Ղարաբաղի 8-րդ համագումարից հետո: Շուշում նա հանդիպում ունեցավ Ալեքսանդր Ռուբենու եւ բժիշկ Սաքո Համբարձումյանի հետ, որոնք խիստ դժգոհ էին Արսեն Միքայելյանի գործունեությունից: Նրանք տեղեկություններ ունեին, որ մոտ ժամանակներում Կարմիր բանակը շարժվելու է դեպի Անդրկովկաս եւ գրավելու է Բաքուն, ռուսի գտնում էին, որ անմոտություն է բախումը Ադրբեջանի զինված ուժերի հետ, որը կարող է ավելորդ արյունահեղության եւ ավերածությունների պատճառ դառնալ: Բայց երբ Ռուբենուն եւ Ս. Համբարձումյանին առաջարկվեց դուրս գալ շրջան եւ այդ ամենի մասին խոսել եւ իրազեկ անել ժողովրդին ու ղեկավար աշխատողներին, նրանք հրաժարվեցին դրանից: Այդպես վարվել էին նրանք մի քանի օր առաջ, 8-րդ համագումարի ժամանակ: Երբ համագումարի պատգամավորների բացարձակ մեծամասնությունը որոշել էր նիստերը գումարել շրջանում, Սուլթանովի ազդեցության ոլորտից հեռու, քաղաքում բազմած էսէռներից ու բոլշևիկներից եւ ոչ մեկը արիությունը չունեցավ գնալու շրջան ու այնտեղ հանդիպելու ու խոսելու ժողովրդի պատգամավորների հետ երես առ երես, ծանոթացնելու նրան Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող ռազմական իրադրության լուրջ փոփոխություններին եւ զգուշացնելու համագումարին հախուռն, կորստաբեր, անիմաստ գործողություններից: Նրանք բավականացան միայն նրանով, որ պահեցին գավառից Շուշի եկած 8-10 բոլշևիկ եւ ոչ-բոլշևիկ պատգամավորների ու կազմեցին եւ հրապարակեցին նրանց անունից փքուն լեզվով կազմված մի ճապաղ, հակասություններով լի անմիտ «բանաձեւ», որը որեւէ իրական ազդեցություն չունեցավ կանխելու Ղարաբաղի հետագա արյունալի դեպքերը:

Կարմիր բանակի մոտալուտ արշավանքի լուրերը համառորեն շրջում էին նաեւ Թիֆլիսում: Աղբյուրը, ինչպես մատնանշում էին, վրացական հետախուզության եւ «գաշնակից միսիանների» ունեցած տեղեկություններն էին:

Երեւանում եւս անտեղյակ չէին Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող ռազմա-քաղաքական տեղաշարժերին: Ղեկավար շրջաններում շատերն էին գիտակցում, որ այդ տեղաշարժերին անխուսափելիորեն հետեւելու է Ադրբեջանի եւ վերջին հաշվով նաեւ ամբողջ Անդրկովկասի գրավումը Կարմիր բանակի կողմից:

<sup>156</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 45, գ. 33, թ. 20:



## 4.

Արսեն Միքայելյանի շուրջը խմբված տեղական մի քանի աշխատողների գաղտնի խորհրդակցություն հրավիրվեց Շուշում: Խորհրդակցության հրավիրվածներն ասում էին, որ ժողովուրդը ծայրահեղորեն զայրացած է Ադրբեջանի անվերջ բռնություններից ու սպանություններից եւ վճռել է պատերազմել՝ հույսը դնելով Հայաստանի օգնության վրա: Նրանք գտնում էին, որ, միեւնույնն է, Ղարաբաղը կամա թե ակամա պիտի պատերազմի Ադրբեջանի դեմ, որովհետեւ «հաստատուն» տեղեկություններ կան, որ Ադրբեջանի զինված ուժերը, կանոնավոր թե անկանոն, պատրաստվում են «նուիրուզ-բայրամի» գիշերը (մարտ ամսի 23-ին) ընդհանուր հարձակում գործել Ղարաբաղի վրա՝ ամբողջ հայ-ադրբեջանական սահմանի երկարությամբ:

Այդտեղ մեր կողմից ապարդյուն փորձ կատարվեց համոզելու շրջանի աշխատողներին՝ ամեն կերպ խուսափել Ադրբեջանի զինված ուժերի հետ բախվելուց: Նրանց հիշեցվեց, որ մոտակա անցյալում եղել են ավելի վտանգավոր պահեր, երբ ժողովուրդը խելահեղորեն կամեցել է նետվել պատերազմի հորձանուտի մեջ, բայց այն ժամանակ նրա գործիչները ետ են պահել ժողովրդին կորստաբեր քայլերից: Եւ հետագա դեպքերը հաստատեցին, որ դա եղել է միակ ճիշտ եւ խելացի քաղաքականությունը: Ադրբեջանի անլուր կամայականությունները հուսահատության աստիճանին են հասցրել ժողովրդին, այդ տեսնում են ամենքը: Բայց կուլելու համար Ղարաբաղը դարձյալ չունի ո՛չ հաց եւ ո՛չ էլ զինամթերք, իսկ եթե Հայաստանից սպասվող օգնությունն էլ ուշանա, որ միանգամայն հնարավոր է՝ դրան նպաստող բազմաթիվ դժվարությունները նկատի առնելով, այն ժամանակ պատերազմը կարող է անհաջող վախճան ունենալ Ղարաբաղի համար, պատճառ դառնալով մեծամեծ աղետների: «Անժխտելի է,- ասացի ես,- որ Ադրբեջանը ձգտում է զենքի ուժով նվաճել ամբողջ Ղարաբաղը, զինաթափել ու ապա աստիճանաբար թյուրքացման ենթարկել այն: Բայց դրա համար ներկայումս Ադրբեջանի ներքին, ինչպես եւ արտաքին քաղաքական իրադրությունը նպաստավոր չէ: Ամենից առաջ պիտի նկատի ունենալ մի կարեւոր հանգամանք, որը չի կարող չհորդորել Ադրբեջանի կալվածատերերին զգուշանալ ներկայումս հայկական Ղարաբաղի դեմ ռազմական գործողություններ ձեռնարկելու մտադրությունից: Զանգեզուրում կրած զգալի մարդկային կորուստները, կառավարության անվերջ բռնազրավումների եւ ճնշումների քաղաքականությունը ստիպում են թյուրք գյուղացիությանն այս կամ այն

կերպ դիմադրել Ադրբեջանի կալվածատերերի ռազմական ձեռնարկումներին: Մասնավորապես՝ դասալքությունը բանակից դարձել է առօրյա երեւոյթ: Զորակոչը չի տալիս սպասած արդյունքը. գյուղացի երիտասարդներից շատերը խուսափում են ներկայանալ զորակոչին, նրանք թաքնվում են, փախչում կամ բանդիտական խմբեր կազմելով՝ անիշխանություն ստեղծում երկրի այլ եւ այլ շրջաններում: Զպիտի մոռանալ մի հանգամանք եւս. դա դաշնակից պետությունների միսիանների ներկայությունն է Թիֆլիսում եւ առանձին հանրապետություններում, որն այս կամ այն չափով զսպող ազդեցություն է գործում այդ հանրապետությունների կառավարությունների վրա՝ ստիպելով նրանց խուսափել ագրեսիվ բնույթի մասսայական հարձակողական գործողություններից: Վերջապես չի կարող սանձահարող ազդեցություն չգործել Ադրբեջանի կառավարող կլիկի վրա Կարմիր բանակի հաջողությունները Հարավային Ռուսաստանում՝ Ուկրաինայում եւ Հյուսիսային Կովկասում, որ, անկասկած, լավ հայտնի են Ադրբեջանի ղեկավարներին եւ չեն կարող չթելադրել նրանց մոտավոր ապագայում զգուշանալու ռուսների կողմից առաջին հերթին Ադրբեջանը վերագրավելու անխուսափելի փորձերից: Երբ այդպիսի իրական վտանգ է կախված Ադրբեջանի վրա, նա կարո՞ղ է իր թիկունքում վտանգավոր ընդհարումների եւ խժոժությունների օջախ ստեղծել, մանավանդ՝ Զանգեզուրում կրած ծանր եւ ամոթալի պարտությունից հետո: Բայց մեր կողմից տրված առիթը Ադրբեջանը կարող է ամեն կերպ օգտագործել եւ, եթե հանգամանքները թույլ տան, կոտորածի ենթարկել եւ ավերել Հայկական Ղարաբաղը»:

Դժբախտաբար, այդ եւ հետագա հորդորներն անցան ապարդյուն: Եւ հայկական Ղարաբաղը շարունակեց պատրաստվել «մահացու թռիչքի»:

## 5.

1920թ. մարտ ամսվա առաջին կեսում Երեւանից ինձ մոտ՝ Վարանդայի Աշան գյուղը եկավ Ղարաբաղ գործուղված Ղազար (Միքայել) Բադալքոխյանը: Նա հարցրեց. «Ինչո՞ւ ես քաշվել մի կողմ Ղարաբաղի համար լուրջ վտանգներով հղի այս ծանր պահին»: «Ես դրա համար էլ վերադարձել եմ Ղարաբաղ: Իմ ցանկությունն է կանխել արյունահեղությունը, - պատասխանեցի ես: - Մենք չունենք ոչ փամփուշտ եւ ոչ էլ հաց: Ասում են, որ կռիվների դեպքում օգնության կգան Հայաստանի եւ Զանգեզուրի միացյալ ուժերը: Ես գալիս եմ Հայաստանից, եւ դրական չեն իմ ստացած տպավորությունները:



Օգնել Ղարաբաղին այժմ Հայաստանը չի կարող ո՛չ զինամթերքով եւ՝ ոչ էլ, մանավանդ, հացով: Իսկ Զանգեզուրի օգնությունը ֆիկցիա է, դրանում մեզ համոզում է ոչ հեռավոր անցյալի դառն փորձը»: «Ես էլ նույն կարծիքի եմ, - հարեց Ղազարը, - ինքս էլ անժամանակ եւ վտանգավոր եմ համարում ներկայումս պատերազմ սկսել Ադրբեջանի դեմ: Բայց ես եկա, որովհետեւ պահանջեցին գալ: Իմ մասին ես կարող եմ միայն ասել՝ որտեղ էլ ինձ վիճակվի կռվել, ես կկռվեմ մինչեւ վերջին շունչս: Համոզված եղեք, որ թշնամին իմ դիակի վրայով միայն կարող է ոտք դնել Ղարաբաղ»: «Բայց դու քո հերոսական մահով չես կարող փրկել Ղարաբաղը, եւ ժողովուրդը կարող է կոտորածի մատնվել», - նկատեցի ես: - «Ի՞նչ կարող եմ անել... Ասում են, որ Նախիջևանը այս դարնանը պիտի գրավվի, եւ Ղարաբաղը պիտի օգնի օպերացիայի հաջողությանը: Նախիջևանը հարկավոր է սոված Հայաստանին ամենից առաջ ներկայիս թշնամի շրջապատումից դուրս գալու համար: Արտաքին աշխարհի հետ կապ ստեղծելու, հաց ու այլ կենսամթերքներ ստանալու միակ ապահով եւ կարճ ճանապարհը Զուլֆա - Թավրիզ երկաթգիծն է, որ կարող է կապել Հայաստանը բարեկամ Պարսկաստանի հետ: Բացի դրանից, Նախիջևանի գրավումը ռազմագիտական անհրաժեշտություն է հենց Ղարաբաղի ազատագրման համար: Բայց Ղարաբաղի հայությունն այժմ անպատրաստ է նետվելու պատերազմի հրդեհի մեջ. ես այդ տեսնում եմ, թեեւ Ադրբեջանի անվերջ բռնությունները, եկվոր հայերի անընդհատ սպանությունները Եվլախ - Շուշի խճուղու վրա, տնտեսական բոյկոտը, առօրյա երեւոյթների շարքն անցած բանդիտական հարձակումները սահմանակից հայկական գյուղերի եւ դաշտերում աշխատող հայ գյուղացիների վրա, այդ ամենը ժողովրդին հասցրել են հուսահատության աստիճանի»: - «Այնուամենայնիվ, - ասացի ես, - խիստ կարեւոր է հաշվի առնել ժողովրդի անպատրաստ վիճակը եւ այս անցողիկ ժամանակաշրջանում բարդություններ չստեղծել: Լրջորեն պիտի նայել Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող տեղաշարժերին: Դժբախտաբար, ժողովրդի մեջ կռվի հակառակորդ գործուն ուժերը սակավ են եւ ցրված, իսկ քաղաքում շաղակրատող վախկոտները չեն ուզում գավառ դուրս գալ: Իհարկե, ներքին կռիվների ցնցումներին ենթարկել երկիրը կլինի մի այլ ճակատագրական սխալ, դրանից կարող էր օգտվել միայն թշնամին»: - «Հավատացեք, արդեն ուշ է, - ասաց խոսակիցս անսքող ամսոսանքով: - Ամեն ինչ վերջացած է, մնում է ընդամենը մի քանի օր: Անօգուտ է այլեւս փորձ անել կանխելու բախումը:

Իսկ այս վճռական օրերին մեր շեզոք մնալը չի կարող օգտակար լինել ժողովրդին»:

Ղազարը մեկնեց:

## 6.

1920 թ. մարտի 23-ի գիշերը զինված հարձակումներ կատարվեցին թյուրքական պահականոցի վրա Ասկերանում եւ զորանոցների վրա՝ Խանքենդում եւ Շուշում: Ղարաբաղի ժողովրդական զինված ուժերն այդպիսով «անցան Ռուբիկոնը»: Սկսվեց կյանքի ու մահվան պատերազմ Ադրբեջանի դեմ:

Այդ նույն գիշերը, լուսադեմին, երկու հեծելակներ նամակ բերին ինձ Ասկերանից: Ղազարը հայտնում էր, որ կռիվներն սկսված են, եւ Ասկերանի պաշտպանների անունից խնդրում էր գնալ Ասկերան եւ ստանձնել շտաբի պետի պարտականությունները:

Երբ դարանակալ թշնամին առիթ էր փնտրում ոչնչացնելու Լեռնային Ղարաբաղի հայությունը, այդ օրհասական պահին հրաժարվել գործել, նշանակում էր փոքրոգություն հանդես բերել, դավաճանել ժողովրդին եւ նպաստել թշնամու դժոխային մտադրությունների իրագործմանը: «Ով հրաժարվում է գործել ցնցումների օրերին, նա հեշտացնում է գործն այն հանցավոր տարրերի, որոնք ձգտում են ավերածությունների», - ասել է մի նշանավոր ֆրանսիական քաղաքական գործիչ:

\* \* \*

1920թ. մարտ ամսի 24-ից ուժեղ կռիվներ սկսվեցին Ղարաբաղի հարավային եւ արեւելյան սահմանի ամբողջ երկարությամբ՝ Դիզակից մինչեւ Դյուլիստան: Առանձնապես կատաղի էին մարտերը Ասկերանի ճակատում: Աղդամում նախապես կուտակված ադրբեջանական կանոնավոր եւ բազմաթիվ անկանոն ուժերը, այսպես կոչված «կամավորական» ջոկատները, մուլեզին գրոհների ձեռնարկեցին 15 կիլոմետր ճակատով սկսած Վարազաբունից մինչեւ Քարազուխ: Սակայն, ամեն անգամ ջախջախիչ հարված կրելով, թշնամին ետ էր շարտվում մեծ կորուստներով<sup>157</sup>:

Մարտի 25-ին եւ 26-ին կռիվներն Ասկերանի ճակատում շարունակվեցին նույն լարվածությամբ: Թշնամին ապարդյուն ճիգեր էր գործ դնում

<sup>157</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, ց. 563, թ. 100:



ճեղքելու Ասկերանի ճակատը եւ արշավելու դեպի Շուշի ու Խանքենդի: Բայց դրա համար հակառակորդի կենդանի ուժերը դեռեւս անբավարար էին: Առաջին մի քանի օրերը նա չկամեցավ բավականաչափ ուժեր կենտրոնացնել եւ օգտագործել իր տեխնիկական գերակշռությունը: Միայն մարտ ամսի 27-ին թշնամին ճակատ նետեց նոր համալրումներ եւ երկու հրետանային մարտկոց՝ 8 ծանր հրանոթներով:

Ասկերանի պաշտպանների դիրքերը եւ թիկունքը կատաղի ռմբակոծության ենթարկելուց հետո հակառակորդի ուժերը մեծ աղմուկով անցան գրոհի: Կենտրոնից, խճուղու ուղղությամբ գրոհում էին կանոնավոր զորքի ջոկատները, իսկ թեւերից՝ «կամավորների» բազմաթիվ խուժանը: Հայ մարտիկները, որ խրամատային պաշտպանության հիանալի փորձ ունեին, հաջողությամբ ետ մղեցին թշնամու բոլոր կատաղի գրոհները եւ, երեկոյան դեմ հակահարձակման անցնելով, ստիպեցին հակառակորդին անկանոն կերպով նահանջել: Այդ կովում Ադրբեջանի զինված ուժերը տվեցին 60 սպանված եւ 200-ից ավելի վիրավորներ: Իրենց դիրքերը վերադառնալիս հայ կովողները ասկերների փախուստի ուղիներից հավաքեցին մեծ քանակությամբ ռուսական եռագծյան հրացանի փամփուշտ, որի կարիքը նրանք զգում էին դեռեւս կռիվը սկսվելու վայրկյանից:

Մարտի 27-ի լույս 28-ի գիշերը Ասկերանի պաշտպանության պահանջով Քյաթուկ գյուղը բերվեց 1918 թվին Վարանդայում օսմանցիներից խլված «Շնեյդեր» սիստեմի լեռնային հրանոթը, որ ուներ ընդամենը 60 արկ: Ճանապարհի դժվարության պատճառով հրանոթը բերվել էր առանց լաֆետի, մի քանի արկերի հետ՝ փորձված հրետանավոր Գասպարի ղեկավարությամբ: Գասպարը գյուղում նույն գիշերվա մեջ տեղական վարպետների օգնությամբ լաֆետի փոխարեն պատրաստեց մի տախտակյա պրիմիտիվ պատվանդան, եւ երբ լուսաբացին թշնամին սկսեց մեծ թափով պատրաստվել գրոհի, հրետանային նախապատրաստության համար անփութորեն կողք-կողքի դասավորելով հրանոթների մարտկոցները՝ Աղդամի մոտակա բաց դաշտում, Գասպարը, հրանոթի այդ առասպելական նշանառուն, իր ձեռակերտ «լաֆետի» վրա ամրացրած հրանոթից արձակած երրորդ դիպուկ արկով, որ ավերիչ ուժով պայթեց հակառակորդի մարտկոցների ուղիղ շարքերի մեջ, ստիպեց թշնամու հրետանավորներին խուճապահար փախչել մարտկոցների:

Այդ հարվածը հակառակորդի համար անակնկալ էր եւ շջմեցուցիչ: Ադր-

բեջանի հրամանատարությունը երեւի մտածեց, որ գործ ունի Լեռնային Ղարաբաղի լուրջ կազմակերպված եւ հրետանիով զինված ապստամբական ուժերի հետ: Դրությունը հավանորեն համարվեց անչափ տագնապալի, որովհետեւ Ադրբեջանն սկսեց մեծ լարվածությամբ նոր ուժեր փոխադրել ճակատ Բաքվից, Գանձակից եւ այլ վայրերից: Նույն օրվա գիշերը բնակիչներից դատարկվեց Աղդամը, թյուրք կալվածատերերի այդ արյունոտ որջը, եւ հայկական Ղարաբաղի սահմանամերձ մի շարք այլ մուսուլմանական խոշոր բնակավայրեր:

1920 թ. մարտ ամսի 30-ին Ադրբեջանի հրամանատարությունը Ղարաբաղի ճակատում արդեն կենտրոնացրել էր իր կանոնավոր ուժերի գրեթե 70-80 տոկոսը եւ բազմահազար «կամավորական» խաժամուժ: Ադրբեջանական զնդերի սովորաբար սակավամարդ կազմը Ղարաբաղի կռիվների ժամանակ զգալի չափերով մեծացվեց օսմանցի ասկերներով, Դաղստանի լեռնեցիներով եւ տեղական մուսուլմաններից հավաքագրված մարդկանցով: Ադրբեջանի կանոնավոր ուժերից Աղդամ էին բերվել 1-ին Զիվանշիրյան հետեւակային գունդը, Գանձակի 3-րդ գունդը, 1-ին թաթարական, 2-րդ ղարաբաղյան եւ 3-րդ Շեքեյան հեծյալ զնդերը, ռոտմիստր Սելիմ-բեկ Սուլթանովի 600 սուսերից բաղկացած քրդական հեծելազորը, մեծաքանակ ծանր ու թեթեւ հրետանի, զնդացիներ եւ անսպառ զինամթերք: Կռիվների վերջին օրերում Ղարաբաղի դեմ հանված ադրբեջանական կանոնավոր եւ անկանոն զինված ուժերի ընդհանուր թիվը, առանց չափազանցության, կազմում էր ոչ պակաս, քան 80 հազար մարդ:

\* \* \*

Կռիվների արդեն 9-րդ օրն էր, բայց Հայաստանից խոստացված օգնությունը չկար ու չկար, մինչդեռ Ադրբեջանը ժողովում էր իր վերջին ուժերը՝ հայկական Ղարաբաղը քարտեզից ընդմիշտ ջնջելու համար:

## 7.

1920թ. մարտի 23-ի գիշերը, բացի Ասկերանից, ինչպես ասացինք, հարձակումների կատարվեցին Խանքենդու եւ Շուշու կայազորների վրա: Բայց երկու դեպքերում էլ հարձակումը ձախողվեց եւ պատճառ դարձավ մեծա-մեծ աղետների: Խանքենդու 500-ի մոտ ասկերներից բաղկացած կայազորի վրա հարձակում կատարելու նպատակով ղեկավար էր նշանակվել մի հին



պարտիզան, որը թեև կոխներ ձեռք էր եւ համարձակ, բայց անհուսալի մեկն էր նման ռազմական լուրջ խնդիր ինքնուրույնաբար գլուխ բերելու համար: Խաչենցիների զգալի ուժերով նա շրջապատեց զորանոցները եւ սկսեց գնդակոծել: Երբ ադրբեջանական կայազորի հրամանատարը համոզվեց, որ դիմադրությունը շարունակել անօգուտ է, որովհետեւ չորս կողմից հայերի ստվար ջոկատներով պաշարված կայազորը չէր կարող հույս գնել դրսի օգնության վրա, ստիպված է լինում հրամայել՝ անձնատուր լինելու նշան տալ զորանոցներից «թասի՛ լմ», «թասի՛ լմ» բացականչություններով: Ապստամբների խեղեկավարը, փոխանակ անմիջապես արձագանքելու եւ համապատասխան միջոցառումներով արագորեն զինաթափելու ու գերի վերցնելու անձնատուր եղած կայազորը, կարգադրում է ոչ ոքի գերի չվերցնել, այլ անխնա ոչնչացնել բոլորին:

Ասկերները, հասկանալով պաշարողների մտադրությունը, սկսում են հուսահատական կատաղությամբ դիմադրել զորանոցների պատուհաններից եւ դռներից: Հարձակվողները տալիս են մեծ թվով սպանվածներ եւ վիրավորներ: Սպանվում է նաեւ նրանց «քյալլագյոզ» ղեկավարը, որից հետո, անհուսալի համարելով դրությունը, հայ կռվողները ետ են քաշվում: Այդ ժամանակ ասկերները հաղթական բացականչություններով դուրս են թափվում զորանոցներից եւ, բաժանվելով փոքր խմբերի, ցրվում են ավանում եւ սկսում ավերածություններ կատարել, սպանել ու թալանել Խանքենդում մնացած հայ բնակիչներին, որոնք ժամանակ չէին գտել փախչելու հարեւան գյուղերը:

Հայկական մասի համար ավելի սարսափելի ու կործանարար հետեւանքներ ունեցավ Շուշու քաղաքի ադրբեջանական կայազորի վրա կատարված անհաջող հարձակումը: Այդ հարձակման ղեկավար էր նշանակվել մի բոլորովին անկարող մարդ՝ Մավաս գյուղացի Աղապարոն Դանիելբեկյանը, որը հիանալի սիրող էր գյուղական բեմերի վրա, բայց մարտական գործերում ապիկար եւ անհուսալի մարդ էր: Արսեն Միքայելյանը թեթեւամտորեն կարգադրել էր նրան հավաքել Վարանդայից 50 զինված մարդ եւ գիշերը հարձակվել քաղաքի ադրբեջանական կայազորի վրա, որը բաղկացած էր լավ սպառազինված 400-500 ասկերներից:

Ջնայելով գիտակ մարդիկ խորհուրդ էին տվել Աղապարոնին կտրականապես հրաժարվել Շուշում առհասարակ որեւէ հարձակում կատարելու մտադրությունից եւ հանգիստ թողնել քաղաքը՝ նրա հայկական մասի ավե-

րածություն պատճառ չդառնալու համար, այնուամենայնիվ, Աղապարոնը տեղի էր տվել եւ ի վերջո համաձայնվել կատարել Միքայելյանի պահանջը: Նա առանց լուրջ նախապատրաստություն, առանց նախագգուշացնելու քաղաքի հայկական մասի ժողովրդական զինված ուժերին, մարտի 23-ի գիշերը մի քանի տասնյակ զինված մարդկանց հետ մտնում է քաղաք եւ, մոտենալով հայկական մասում տեղավորված զորանոցների շարքին, մի քանի կետերից սկսում է անկանոն հրացանաձգություն: Ասկերներն սկզբում սկսում են դիմադրել ներսից, բայց քիչ հետո քաջալերվելով հարձակվողների անվճռականությունից եւ սակավթիվ լինելուց, նրանց մեծ մասը դուրս է գալիս զորանոցներից, դիրքեր գրավում շրջապատում ու սկսում կռվել: Հարձակվողները մատնվում են խուճապի եւ, քաշվելով զորանոցների մոտից, գնում բռնում են քաղաքի հայկական մասից դեպի Քարի-տակ գյուղը տանող լեռնային ճանապարհը:

Քաղաքի հայկական մասի բնակիչները հրացանի պայթյունների ձայներից քնաթաթախ վեր թռչելով անկողիններից, սկզբում տարակուսանքի մեջ, չգիտեին, թե ինչ է կատարվում, բայց երբ լուր է տարածվում, որ ասկերները սպաների ղեկավարությամբ հարձակվում են հայերի տների վրա, սպանում բնակիչներին եւ նավթ լցնելով հրդեհում տները, հայկական մասի բոլոր թաղերում սկսվում է մի աննկարագրելի խուճապ: Ձենք ունեցողներից շատերը նույնիսկ ժամանակ չեն գտնում զինվելու եւ պաշտպանելու իրենց տուն ու տեղը, այլ տազնապահար մտածում են միայն՝ քանի ուշ չէ, թողնելով ամեն ինչ, փախցնել ընտանիքները քաղաքից...

Քաղաքի հայկական մասում սկսվում է համատարած հրդեհ ու կոտորած: Հաջորդ օրերում նույն վայրագություններ շարունակվում է Շուշու հայկական մասի կործանումը: Քաղաքի մուսուլմանական մասի տականքները խուժելով հայկական մասը, սկսում են անպատիժ սպանել, թալանել եւ հրդեհել տները: Այդ խժոժությունները տեսնում են երկար: Քաղաքացիներից սպանվում են մինչեւ 500 տղամարդ, կին եւ երեխա: Կողոպտվում է հայերի միլիարդների հասնող հարստությունը:

Այդ ժամանակ Թիֆլիսում լույս տեսնող ռուսերեն «Слово» թերթի 1920թ. ապրիլի 16-ի համարում զետեղված է սեփական թղթակցի նույն ամսվա 11-ին «Ուղեւոր» ստորագրությամբ գրած հետեւյալ թղթակցությունը Եվլախից՝ «Շուշու ավերածությունը» վերնագրով. «Շուշուց եկողների պատմելով, քաղաքի հայկական մասում չի մնացել քարը քարի վրա: Մու-



սուլմանական խուժանը մարտի 24-ին ներս է խուժել այդ մասը եւ սկսել սպանել եւ թալանել հայ բնակիչներին: Մտնում էին տները, սպանում տան տերերին, հափշտակում բոլոր արժեքավոր իրերը եւ ապա տունը հրդեհում: Քաղաքի հայկական մասը մարտի 24-ի երեկոյան իրենից ներկայացնում էր կրակի մի ծով: Ամենուրեք լսվում էին ճիչեր, հառաչանքներ ու լաց: Յուրաքանչյուր քայլափոխում հանդիպում էին սարսափ ազդող պատկերներ: Մարդկային զոհերը շատ էին: Հրդեհի զոհ է գնացել ոստիկանական մասի պետ Տեր-Ղուկասյանը, սպանվել է բժիշկ Յարամիշյանը... Հայկական մասից ոչինչ չի մնացել, ամենուրեք լիակատար ավերածություն է, երեւում են միայն հրդեհված տների ցցված պատերը: Ճանապարհներին փռված են սպանվածների դիակներ: Շատ դիակներ կան տների ավերակներում: Երբ խուժանի հանցավոր կրքերը մեղմացան, նա սկսեց կողոպտել տների տանիքները, պատուհանների շրջանակները, դռները եւ կրակից զերծ մնացած այլ մասերը...»:

«СЛОБО» թերթի նույն օրվա համարում հայերեն «Նոր աշխատավոր» թերթից թարգմանաբար բերված է. «Մի վստահելի անձ, որը դուրս է եկել Շուշուց ապրիլի 6-ին եւ ականատես է եղել այնտեղ կատարված կոտորածին, պատմում է, որ Շուշու հայկական մասը բոլորովին ավերված է... Շուշում սպանված են մոտ 500 հայեր: Նույն անձը ականատես է եղել, թե ինչպես եղբայրական գերեզմանում թաղել են 378 հայերի դիակներ: Սպանվածների թվում է Վահան եպիսկոպոսը: Ինչպես սպանվածները, այնպես էլ կենդանի մնացածները, մեծ մասամբ կանայք են, երեխաներ եւ ծերունիներ»<sup>158</sup>:

Հետաքրքրական է Ադրբեջանի զինվոր Իսմայիլ Ալմարդանբեկովի նամակի հետեւյալ տողերը, որ նա գրել է Շուշուց Բաքվում գտնվող իր եղբորը. «Տեսածդ էրմենիստանը (խոսքը վերաբերում է Շուշու հայկական մասին - Հ. Թ.) այրված է: Հինգ կամ տասը տուն պահեցին: Հազարից ավելի հայեր գերի բռնվեցին: Տղամարդկանց բոլորին կոտորեցին, մինչեւ անգամ խալիֆին (եպիսկոպոսին - Հ. Թ.), բոլոր մեծամեծ մարդկանց... նշանավոր հայերին սպանելուց հետո, գլուխները կտրած բազարներում պատեցնել էին տալիս... Այս կողմերում (քաղաքում) այլեւս ոչ մի հայ չեք գտնի եւ ոչ էլ այնպիսի թյուրքի կարող եք հանդիպել, որը հարյուր հազարից պակաս թա-

լան բերած լինի: Այնպիսի մարդ կա, որ մեկ միլիոնից ավելի ապրանք է բերել: Բոլորը եղան մեկ դասակարգի, էլ ոչ հարուստ կա, ոչ չունեւոր, բոլորը հավասարվեցին... Հայերի ողջ հարստությունը քաղաքի բնակիչ մուսուլմանները թալանեցին: 18 ռաջաբ»<sup>159</sup> (1920թ. 7 ապրիլի):

Պատմում են, որ երբ պատմաբան Լեոն Թիֆլիսում լսում է Շուշում կատարված ավերածությունների մասին, ասում է. «Մի քաղաք, որի հիմքը դրվեց դավաճանությունով, մոտ օրերում դավաճանությունով էլ կործանվեց...»:

Շուշում կատարված անլուր եղեռնագործությունների եւ ավերածության խրախուսողն ու ոգեշնչողն իր հայակեր քաղաքականությամբ մեզ արդեն հայտնի «Ղարաբաղի նահանգապետ» Խոսրով-բեկ Սուլթանովն էր՝ օսմանյան այդ գործակալը եւ կատաղի մուսավաթականը: Դա, իհարկե, բնական էր եւ հասկանալի: Բայց ինչպես շնչավակել այդ շարագործությունների ականատես՝ քաղաքի մուսուլմանական մասի առաջավոր ինտելիգենցիայի եւ այլ խաղաղասեր տարրերին՝ նրանց անգործության եւ անտարբերության համար: Նրանք որեւէ փորձ չարին զսպելու կամ գեթ մեղմելու մուսուլմանական խուժանի հանցավոր բնազդները: Ամբողջ օրերով նրանց աչքերի առաջ կողոպտվում եւ կրակի էին մատնվում հայկական մասի հազարավոր բարեշնչ տները, խողխողվում նրանց բնակիչները, եւ ոչ մի փորձ այդ տարրերի կողմից՝ որեւէ կերպ հակազդելու սանձարձակ խուժանի վայրագ գործողություններին... Չմոռանանք, որ այդպիսի ավերածության սպառնալիք 1918 թվին երկու անգամ կախված է եղել Շուշու մուսուլմանական մասի վրա, եւ այն կարող էր հեշտությամբ գրավվել եւ սոսկալի նախճիրների ասպարեզ դառնալ, եթե Ղարաբաղի հայ գործիչները եւ քաղաքի հայ բնակչության խաղաղասեր մասը չարեին իրենց բովանդակ ուժերը՝ կանխելու վերահաս դժբախտությունը: Բայց մարդասիրական ամենատարրական վերաբերմունքի չհանդիպեց քաղաքի հայ բնակչությունը թյուրք կրթված մասի կողմից, երբ մուսուլման բաշիբոզուկները սկսել էին անպատիժ ավերել, հրդեհել, կոտորածի ու թալանի մատնել հայկական մասը:

Դժբախտությունը, սակայն, միայն Շուշու հայկական մասի ոչնչացումով չվերջացավ: Մենք դեռ կտեսնենք, թե հայերով բնակեցված վայրերում ուրիշ ինչպիսի բարբարոսական ավերածություններ, համատարած թալաններ եւ կոտորածներ սարքեց Ադրբեջանի մուսավաթական ղեկավարությու-

<sup>158</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 66:

<sup>159</sup> Նույն տեղում, թ. 135-141:



նր Ղարաբաղի 1920 թվականի դեպքերի ժամանակ:

## 8.

Ադրբեջանի հրամանատարությունը դեռևս 1920թ. մարտ ամսի կեսերից սկսել էր զորքեր փոխադրել նաև դեպի Զաքուղ եւ «Քուրդիստան»՝ Ղարաբաղի ուղղությամբ հայերի ենթադրյալ հարձակումը Զանգեզուրի կողմից կասեցնելու համար: Այդ նպատակով ադրբեջանական զինված ուժերը, Ագարա գետի հովտի մուսուլման բնակչության գործուն աջակցությամբ, մարտի 25-ին, Ղարաբաղի կռիվների երրորդ օրը, ակտիվ գործողությունների անցան Զանգեզուրի դեմ Մինքենդի կողմից Գորիսի, իսկ Ջեբրայիլի կողմից Ղափանի ուղղությամբ: Ետ մղելով բոլոր հարձակումները՝ մարտի 26-ին զանգեզուրցիներն անցան հակահարձակման եւ գրավեցին Ղարաբաղի եւ Զանգեզուրի միջեւ ընկած մուսուլմանական տարածության մեծ մասը, որի շնորհիվ վերականգնվեց կապը Զանգեզուրի եւ Ղարաբաղի հծաբերգ գյուղի միջեւ<sup>160</sup>: Անտարակույս, եթե այդ հաջողությունը զանգեզուրցիներն ուզենային զարգացնել, նրանք կկարողանային միանալ Ղարաբաղի կողմից Մուսուլմանլարի ուղղությամբ գործող հծաբերգի հայկական թիկունքային պաշտպանողական ուժերին եւ, գրավելով Զաքուղը՝ այդ ռազմագիտական կարեւոր կետը, օգնության հասնել Շուշուն եւ գավառին: Բայց հակառակ Զանգեզուրի գեներալ-կոմիսար Մելիք Յուլյանի կոչերին՝ շուտափույթ օգնության ձեռք մեկնել Ղարաբաղին, զանգեզուրցիները եւ հատկապես Գորիսի շրջանի զինված ուժերը չշարժվեցին տեղից եւ մինչեւ վերջ էլ չհրաժարվեցին իրենց եսամուլ, գավառասիրական նեղմիտ ընթացքից:

## 9.

Ասկերանի պաշտպանության դեմ Ադրբեջանի հրամանատարությունը կենտրոնացրել էր ոչ միայն հետեւակի, այլեւ հեծելազորի խոշոր ուժեր: Մոտ երկու հազարի հասնող հայ ռազմիկների դեմ, որոնք 8-օրյա լարված կռիվների եւ անքնության հետեւանքով նեղվում էին արդեն հոգնածությունից, թշնամին միայն այդ ճակատ էր նետել 30 հազարից ոչ պակաս կանոնավոր եւ անկանոն ուժեր: Ասկերանի պաշտպանության համար օժանդակ ուժեր թիկունքից քիչ էին ստացվում, որովհետեւ զենք կրելու ընդունակ

գրեթե բոլոր տղամարդիկ կռվում էին այս կամ այն ճակատամասում՝ 300 կիլոմետրից ավելի երկարություն ունեցող սահմանի ամբողջ տարածության վրա: Զրաբերգի շրջանից Ասկերան ուղարկված 160 զինվորները շտապ վերադարձան ետ՝ Մարգակերտի շրջանի գյուղերի վրա «կամավորական» հորդանների նոր սկսած գրոհների պատճառով: Զանգեզուրում գտնվող երեւանյան հայկական սակավաթիվ կանոնավոր զորամասից լուրջ օգնություն սպասել չէր կարելի, թեեւ հծաբերգից արդեն զորամասի հրամանատարությունը հայտնված էր Ղարաբաղի հուսահատական վիճակի մասին: Զինամթերքի սուր կարիքն էր, որ առանձնապես ծանրացնում էր դրությունը: Թիկունքի գյուղերից գրեթե յուրաքանչյուր օր հատուկ մարդկանց միջոցով հավաքված եւ ճակատ ուղարկված փամփուշտը խիստ սակավ էր եւ չէր կարող բավարարել չափազանց լարված կռիվների պահանջներին: Դրությունն այդ տեսակետից մոտավոր կերպով պատկերացնելու համար բավական է ասել, որ թշնամու հրացանային հարյուր կրակոցին հազիվ հնարավոր էր լինում պատասխանել 5-10 կրակոցով: Շատ հաճախ, երբ փամփուշտներն արդեն սպառված էին, հայ մարտիկները թշնամու կատաղի գրոհները հետ էին մղում նետովելով սվինամարտի:

Այդպիսին էր ընդհանուր վիճակը Ասկերանի ճակատում, երբ մարտ ամսի 30-ի լուսաբացից սկսվեցին վճռական գրոհները հակառակորդի ուժերի կողմից:

Գեներալ Սելիմովի հրամանատարությամբ գործող զորքերի մի ուժեղ խումբ կեսօրվա մոտ շրջանցման փորձ կատարեց Ասկերանի պաշտպանության ձախ թեւում, Քարագլուխ եւ Խրամորթ գյուղերի շրջանում՝ մի պահ սուր վիճակ ստեղծելով այդ մասում ամրացած հայ ռազմիկների համար: Բայց ստեղծված սպառնալիքը հարվածային ջոկատների կայծակնային օգնությամբ իսկույն վերացվեց, եւ շուտով հակառակորդի գործող ուժերն իրենք ընկան հայերի կողմից շրջապատման վտանգի մեջ ու ստիպվեցին խուճապահար նահանջել՝ չդիմանալով հայ մարտիկների սվինային հարվածին եւ թողնելով նրանց ձեռքում երկու թեթեւ զնդացիր եւ բավականաչափ փամփուշտ:

Ադրբեջանական կանոնավոր զորքերի այդ գործողություններին զուգընթաց թյուրք «կամավորների» հազարավոր խուժանը օսմանցի հրահանգիչների առաջնորդությամբ բարձրագույն ազդակներով ու անկանոն հրաձգությամբ կատաղաբար մի քանի անգամ գրոհեց ասկերանցիների աջ

<sup>160</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 44:



թեւի դիրքերի վրա, բայց ամեն անգամ մեծ կորուստներ կրելով ստիպւած էր նահանջել:

Այդ օրը Ասկերանի պաշտպանութեան կենտրոնի դիրքերի դեմ թշուրքերը հարձակողական լուրջ գործողութիւններ չձեռնարկեցին:

Գիշերը հաշենի եւ Վարանդայի շրջաններից օգնութեան եկան 80-ի չափ կռիւողներ:

Հաջորդ օրը, մարտի 31-ին, վաղ արշալույսին, կատաղի կռիւները վերսկսվեցին այս անգամ Ասկերանի ամբողջ ճակատում: Հրետանային կարճատեւ նախապատրաստութիւնից հետո հակառակորդն անցավ ընդհանուր հարձակման: Նա ապարդշուն գրոհներով ճիգ էր թափում խճուղու ուղղութեամբ պատռել ճակատը, որի պաշտպանութեան անմիջական ղեկավարն էր Ղազարը: Սակայն, այդ օրը եւս մեծ կորուստներ կրելով, թշնամին երեկոյան դեմ ստիպվեցավ ետ քաշվել: Ասկերանցիները տվեցին 16 սպանված եւ 70-ի չափ վիրավոր, իսկ հակառակորդի մարդկային կորուստները, սպանված եւ վիրավոր, հասնում էին մոտ 500-ի:

Գիշերը Ասկերանի հրամանատարութեանը տեղեկացրին, որ Զանգեզուրից գործողութիւններ են սկսված հայկական էքսպեդիցիոն գումարտակի կողմից, եւ շուտով Ղարաբաղ կմտնեն եւ Ասկերանի պաշտպաններին օգնութեան կհասնեն թարմ օժանդակ ուժեր՝ մեծաքանակ ռազմամթերքով: Այդ լուրն, ինչ խոսք, թռավ դիրքից դիրք եւ աննկարագրելի ոգեւորութեան աղբյուր դարձավ հայ մարտիկների շրջանում, որոնք տասներորդ տազնապալից գիշերն էր, որ լուսացնում էին անքուն, դրսից օգնութիւն ստանալու վարդազույն հույսերով: Իսկ ժողովուրդը թիկունքում չգիտեր ինչպես արտահայտի իր ցնծութիւնը այդ լուրերի առթիւ: Գիշեր-ցերեկ, հանգստութիւնից զրկված, նա զոհաբերում էր ամեն բան՝ հոգալու համար կռիւողների կարիքները, տալիս էր իր վերջին կտոր հացը, տան մնացած վերջին փամփուշտը, տալիս էր ամեն ինչ՝ մոտալուտ հաղթանակի վառ հույսերով: Տաս օր անընդհատ նրա զավակները անհավասար պատերազմ էին մղում թվով եւ սպառազինութեամբ անհամեմատ ուժեղ թշնամու դեմ, առանց, սակայն, արտաքին որեւէ օգնութեան: Բայց ժողովուրդն այս անգամ հավատացած էր, որ փրկութիւնը մոտ է, որ այդ օգնութիւնը շուտով կհասնի, եւ գավառը ոտից կոխան չի դառնա, ինչպես դարձավ Շուշին:

Ապրիլի 1-ին թշնամին Ասկերանի ճակատում հարձակման անցավ կրկնապատկված ուժերով: Գիշերվա ընթացքում Աղդամ էին հասել մեծաքա-

նակ համալրումներ: Ղարաբաղի թերմոպոլիսը գրավելու համար հակառակորդը նրա աննկուն պաշտպանների դեմ նետել էր իր վերջին կենդանի ուժերը եւ ռազմական մեծ տեխնիկա: Ադրբեջանական զորքերի կատաղի գրոհները ճակատի բոլոր հատվածներում ետ էին մղվում մեծ մասամբ ձեռնամերձ կռիւներով: Ադրբեջանական ասկերները, որոնք շունեին ընդհանրապես զինվորական անհրաժեշտ հմտութիւնը եւ մարտական փորձ, չդիմադրելով հայերի սվինային հարվածին, սարսափահար ետ էին ընկրկում: Ապարդշուն էին անցնում նրանց հետ կողք-կողքի կռիւղ օսմանցի հրահանգիչների եւ զինվորների խրախուսանքները, սպառնալիքները: Հայ մարտիկները, հատկապես այդ օրվա կռիւներում, ցուցաբերեցին խիզախութեան, անձնուրաց քաջութեան, հերոսական աննման սխրագործութիւնների բազմաթիւ փայլուն օրինակներ: Թշուրքական զորքերի անընդհատ մոլեգին գրոհներն Ասկերանի ճակատում այդ անգամ եւս վերջացան նրանց համար ամոթալի պարտութեամբ, թշնամին կորցրեց հազարից ավելի մարդ՝ սպանված եւ վիրավոր: Անկարելի է չնշել, որ Ասկերանի պաշտպանութեանը մեծապես նպաստում էր մարտիկների պարենավորման գործի հիանալի կազմակերպվածութիւնը, որը գլխավորում էր Մարտիրոս Արզումանյանը<sup>161</sup>:

Գեներալ Սելիմովը Ասկերանի տակ կրում էր պարտութիւն պարտութեան ետեւից: Այդ հողի վրա թշուրքական բանակի շարքերում ծայր էին առել ուժեղ դժգոհութիւններ: Դադստանցի սպաները մեղադրվում էին հրամանատարութեանը, որ նա հայերի դեմ կռիւ ամենավտանգավոր տեղերն էր ուղարկում լեռնցի զինվորականներին, իսկ ադրբեջանցիներին՝ հովանավորում<sup>162</sup>:

Ադրբեջանական զորքերի կրած լուրջ պարտութիւնները Ասկերանի տակ ստիպեցին գլխավոր հրամանատարութեանը հեռացնել գեներալ Սելիմովին եւ նրա փոխարեն նշանակել օսմանցի հալիլ-փաշային<sup>163</sup>: Այդ փոփո-

<sup>161</sup> Ներկայիս գրական-հասարակական Աշոտ Արզումանյանի հայրը:

<sup>162</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 158:

<sup>163</sup> Նույն տեղում: Տե՛ս նաեւ Իսմայիլ Ալմարզանբեկովի վերոհիշյալ նամակի հետեւյալ տողերը, որ մենք նամակից կատարված նախորդ քաղվածքում մեջ չենք բերել. «Այս ժամիս զորքը, թնդանոթները, գնդացիները, հալիլ բոլորն այստեղ են»: (ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թերթ 135): Նամակի հեղինակը փաշա տիտղոսը չի գործածել հավանորեն գիտակցելով, որ Բաքվում ապրող ադրբեջանցիներին արդեն հայտնի էր հալիլի ով լինելը, կամ, թե-



խուլթյունը հայտնի էր Ասկերանի հրամանատարությանը: Ղազարի հետախույզները գիշերը խճուղու մոտակայքում բռնել էին 1-ին թաթարական հեծյալ գնդից հետախույզության եւ տեղադիրտումների ուղարկված մեկ սպայի եւ երկու ասկերների, որոնցից իմացել էին խալիլ փաշայի նշանակման մասին: Թյուրք հետախույզները տեղեկություններ էին տվել նաեւ խճուղու ուղղությամբ ադրբեջանական խոշոր ուժերի, գլխավորապես հեծելազորի, կենտրոնացման մասին:

## 10.

1920 թ. ապրիլի 1-ին Դրոյի էքսպեդիցիոն զորամասից մի ջոկատ՝ մոտ 50 հոգուց բաղկացած, Ղարաբաղի խժաբերդ գյուղի շրջանում գործող ժողովրդական զինված ուժերի ակտիվ աջակցությամբ Հարարից խժաբերդ էր անցել՝ բերելով իր հետ երկու լեռնային հրանոթ եւ չորս գնդացի՝ իրենց սպասակազմերով: Միաժամանակ, Վարանդայի եւ Դիզակի շրջանների գյուղացիության տրամադրած ձիաներով եւ ջորիներով, խժաբերդ էին փոխադրվել 300-ի չափ հրանոթային արկեր եւ բավականաչափ փամփուշտ, դժբախտաբար, մեծ մասամբ պիտանի միայն ֆրանսիական «լեբել» հրացանի համար, մինչդեռ Ղարաբաղում հայերի մոտ գործածական հրացանները բացառապես «երեք գծանի» էին, որոնց «լեբելի» փամփուշտները հարմարվել չէին կարող: Այդ նշանակում էր, որ կռիվների միայն տասներորդ օրը Ղարաբաղ ուղարկված փամփուշտի շատ չնչին մասը միայն իրական արժեք ունեւ կռիվների համար, որոնք Ադրբեջանի մինչեւ ատամները զինված մեծաքանակ ուժերի դեմ կյանքի ու մահվան պատերազմ էին մղում:

Երբ արդեն գրեթե բոլորովին դատարկվել էին փամփուշտակալները, եւ թշնամու կողմից շարունակվող կատաղի գրոհները ետ մղելու համար թիկունքից անգամ մի հատ փամփուշտ ստանալու այլեւս հույս չմնաց, հայ ռազմիկը դարձյալ չհուսահատվեց. նա այս անգամ եւս անսասանորեն կառլեց իր հրացանի սվինին, իր դաշույնին, որոնք քիչ չէին օգնել նրան հաղթանակելու վերջին օրերի արյունահեղ մարտերում: Ասկերանի հերոս պաշտպանները թույլ էին տալիս թշնամու զորասյուներին մոտենալ իրենց դիրքերին 15-20 քայլերի վրա եւ ապա՝ հրացաններին ամրացված սվիններով

րեւս, չի կամեցել զաղտնիքը երեւան հանել:

եւ մերկացրած սրերով դուրս էին թռչում դիրքերից, խուժում թշնամու շարքերի մեջ եւ սկսում կատաղորեն հարվածել աջ ու ձախ: Ադրբեջանցի ասկերները հենց առաջին վայրկյանից լքում էին շարքերը եւ սարսափահար փախչում: Մնում էին սակավաթիվ օսմանցի եւ դաղստանցի կռվողները, որոնց իսկույն շրջապատում էին հայ մարտիկները եւ տեղն ու տեղը ոչնչացնում:

Ապրիլի 2-ի վաղ լուսաբացին, երբ դեռ չէին վերսկսվել կռիվները Ասկերանի ճակատում, Քյաթուկ գյուղի վրայով ճակատ մեկնեցին էքսպեդիցիոն զորամասից ուղարկված գնդացորդներն իրենց հրամանատարով եւ չորս գնդացիներով: Նրաց տեղավորեցին խճուղին պաշտպանող ջոկատների դասավորության երկրորդ գծի վրա՝ ինքնաբաղի եւ Ղիչբաղի լեռնալանջերի խրամատներում: Գնդացորդների ներկայությամբ ոգեշնչեց Ասկերանի անվհեր պաշտպաններին՝ հակառակորդի նորանոր գրոհները կրկին հաղթականորեն ետ մղելու աներեր հավատով: Ոգեւորությունն այնչափ մեծ էր, որ հայ մարտիկները նույնիսկ մտածում էին հակառակորդի ուժերը մղել դեպի Աղդամ եւ այնտեղ շրջապատելով՝ ոչնչացնել: Բայց դա, դժբախտաբար, անիրագործելի մի պատրանք էր: Դրա համար սակավաթիվ էին ոչ միայն կենդանի ուժերը, այլեւ բացակայում էին տեխնիկական եւ այլ տեսակի ռազմական անհրաժեշտ ռեսուրսներ, իսկ ամենակարեւորը՝ զինամթերքը:

Ապրիլի 2-ի կռիվները Ասկերանի ճակատում իրենց թափով եւ կատաղությամբ գերազանցեցին նախորդ օրերի կռիվներին: Թշնամին վճռել էր՝ ինչ գնով էլ լինի գրավել Ասկերանը: Խալիլ-փաշան թե՛ հրետանավորների կազմի մեջ եւ թե՛ հետեւակի եւ հեծելազորի զորամասերն էր մտցրել փորձված օսմանցի սպաներ եւ ասկերներ: Բացի դրանից, Ասկերանի դեմ գործող զորքերի խմբավորումն ավելի էր ուժեղացվել ճակատի այլ հատվածներից բերած համալրումներով: Կրկնապատկվել էր ծանր հրետանիի թիվը: Ձնայելով, սակայն, այդ բոլոր ձեռնարկումներին, ապրիլի 2-ի կռիվները խալիլ-փաշային հաջողություն չբերեցին: Չորս իրար հաջորդող ահեղ գրոհները՝ մեծաքանակ ասկերներից բաղկացած զորասյուներով, ետ մղվեցին թշնամու համար ծանր կորուստներով: Ասկերանի պաշտպանների կենտրոնի դիրքերի դեմ ուղղված գիշերային ուժգին գրոհները եւս ետ մղվեցին հաջողությամբ:

Միայն հաջորդ օրը, 1920 թ. ապրիլի 3-ը դարձավ ապստամբ Ղարաբաղի համար անհաջողության սեւ օր: Այդ օրը Ասկերանի ճակատը ճեղքելու



համար խախտված փառանքի կարողացավ հմտորեն օգտագործել Ասկերանի լեռնային եւ դաշտային ամբողջ տարածությունը թեւակոխած գարնանային անթափանց մառախուղը, որ սովորական երեւոյթ էր Ղարաբաղում գարնան եւ աշնան ամիսներին:

Ապրիլի 3-ի լուսաբացից թշնամին հայկական խրամատների եւ թիկունքի ուժեղ եւ անընդհատ ռմբակոծություն սկսեց հաուրիցային մարտկոցներից: Ապա, օգտվելով մառախուղի ստեղծած թույլ տեսանելիությունից, հակառակորդը մեծ ուժերով աննկատելիորեն մոտեցավ Ասկերանի պաշտպանության ձախ թեւի դիրքերին եւ երկարատեւ կատաղի ձեռնամարտից հետո հաջողեցավ գրավել խրամորթ գյուղը եւ շրջանցել հայ կռվողների ձախ թեւը: Դա ստիպեց խճուղին պաշտպանող ճակատի ուժերին հապճեպ նահանջել: Օգտվելով դրանից, թշնամին իսկույն առաջ նետեց խճուղով իր հեծյալ գնդերը դեպի Շուշի:

\* \* \*

Կենտրոնի դիրքերից դեպի խնաբաղ եւ Քյաթուկ նահանջող խմբերի հետ չէր նրանց անվեհեր հրամանատարը: Ստեղծված իրադրության անհուսալիությունը ստիպել էր Ղազարին նահանջի հրաման տալ իր մարտիկներին: Նա նույնիսկ ատրճանակով սպառնաց իր օգնական գնդապետ Զախար Մեսյանին եւ նահանջել չկամեցող մյուս մարտիկներին՝ անմիջապես թողնել դիրքերը, բայց ինքը չհետեւեց նրանց: Եւ երբ թշնամու զորասյուները վարանոտ երթով եւ անկանոն հրաձգությամբ մոտեցան հայ մարտիկների առաջին գծի դիրքերին, նրանց «մաուզեր» ատրճանակի կրակոցներով դիմավորեց միայն Ղազարը. նա գնդակների անվրեպ հարվածներով տապալեց առջեւից ընթացող օսմանյան սպային եւ երեք ասկերների, իսկ վերջին գնդակն ուղղեց իր քունքին...

Թուրքական հորդաներին հատուկ փոքրոգությամբ եւ դաժանությամբ՝ ադրբեջանական հեծյալ գնդերի առաջապահ նիզակակիր «թաթարական հեծյալ գունդը» կտրեց մեռած հերոսի գլուխը եւ նիզակի ծայրին տարավ դեպի Շուշի:

## 11.

Ասկերանի անկմանը, նրա տասներկուօրյա հերոսական հաղթական պաշտպանությունից հետո, նպաստեցին ոչ միայն եղանակի աննպաստ փո-

փոխությունը, թանձրամած մառախուղը, այլեւ մարտիկների գերհոգնածությունը եւ զինամթերքի բացակայությունը: Ասկերանի գրավումը հնարավորություն տվեց թշնամուն, կրկին ներթափանցելով Ղարաբաղի սիրտը, տիրել խճուղին ընդհուպ մինչեւ Զաբուղ՝ փրկելու պաշարման վիճակի մեջ գտնվող Շուշու մուսուլմանական բնակչությանը, քաղաքի եւ խանքենդու կայազորներին, ամրանալու Շուշում, եւ այդպիսով ճեղքելով հայերի պաշտպանության միասնական ճակատը իր վճռական կետում՝ տրոհել հայկական Ղարաբաղի տերիտորիան երկու մասերի՝ մեկում՝ Վարանդան եւ Դիզակը, իսկ մյուսում՝ Խաչենը, Զրաբերդը եւ Գյուլիստանը:

Ադրբեջանի զորքերի հրամանատարությունը կարծեց, որ այլեւս հեշտանում էր իրարից բաժանված հայկական շրջանների զինված ուժերի զատ-զատ ջախջախումը, եւ նա որոշեց օգտագործել բարենպաստ առիթը՝ իրազործելու Ղարաբաղի հայության բնաջնջման կամ դեպորտացիայի իր փայփայած ծրագիրը եւ այդ միջոցով ընդմիշտ լուծելու Ղարաբաղի թյուրքացման հարցը: Բացի դրանից, մուսավաթական ղեկավարները մտորում էին, որ Ղարաբաղի նվաճումը հնարավորություն կտա իրենց հետագայում զավթելու նաեւ Զանգեզուրը, իսկ Կարմիր բանակի արշավանքի դեպքում՝ ամրանալու Ղարաբաղում եւ հայկական լեռնաստանի այլ մասերում ու վրացական զինված ուժերի հետ համատեղ պաշտպանվելու բոլշևիկներից: Բայց, ինչպես շուտով կտեսնենք, Ադրբեջանի կալվածատերերը չարաչար սխալվեցին իրենց հաշիվներում:

## 12.

Ասկերանն ընկնելուց հետո Ադրբեջանի ռազմական մինիստր եւ զլխավոր հրամանատար գեներալ Մեհմանդարովը հրամայեց զորքին՝ չխնայել ո՛չ հայկական գյուղերը եւ ո՛չ էլ նրա բնակիչներին<sup>164</sup>:

Խաչենը հիմնահատակ կործանելու եւ նրա հայ բնակիչներին ոչնչացնելու համար այդ շրջանի դեմ Ադրբեջանը մեծ ուժերով ձեռնարկեց հարձակողական գործողությունների, բայց հարձակվողներն ընկան խաչենցի ռազմիկների ծուղակը, շրջապատվեցին եւ ցաքուցրիվ արվեցին:

Լեռնային պայմաններում հայերի փոքրաթիվ ուժերը կարողանում էին հաջողությամբ դիմադրել հակառակորդի խոշոր ուժերին եւ հաղթանակել:

<sup>164</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 71:



Պիտի ասել, որ լեռնային կռիվների ղեկավարության համար Ադրբեջանը գրեթե չունեւ հմուտ եւ հուսալի սպաներ: Եղածն էլ կամ օսմանցիներ էին (թուրքեր) եւ կամ Դաղստանի լեռնաբնակներ, որոնց ենթակա տեղացի ասկերները կամ «կամավորները» անհուսալի էին, կռվի վճռական թուլեաներին նրանք կորցնում էին իրենց գլուխները եւ, հարմար առիթից օգտվելով, լքում դիրքերը:

Թյուրքական «կամավորական» ուժերը փորձեցին հարձակվել նաեւ Վարանդայի սահմանամերձ նորշեն գյուղի վրա, բայց, ուժեղ դիմադրության հանդիպելով եւ զգալի կորուստներ կրելով, ստիպված եղան ետ քաշվել:

Ադրբեջանի հորդաներին, այնուամենայնիվ, հաջողվեց ավերել Գյուլիստանի դաշտային եւ նախալեռնային շրջանների մի շարք գյուղեր, որոնց բնակիչների մեծ մասը կարողացել էր ժամանակին քաշվել անտառները կամ թիկունքի հայկական գյուղերը: Օսմանցի Քյազիմ-բեկի հրամանատարությամբ գործող ադրբեջանական բանդաների ձեռքով թալանվեցին եւ հրդեհվեցին Գյուլիստան, Ազատ, Արմավիր, Ղարաչինար, Սուլուկ, Մանաշեն, Խարխապուտ, Վերին եւ Ներքին Աղջաղալաներ, Էրքեջ, Արջախ, Ղարաբուլաղ, Ղարադաղու, Պարիս, Մանասբեկ գյուղերը: Թալիշ գյուղը մի քանի օր քաջաբար պաշտպանվելուց հետո, թյուրքական մեծաթիվ ուժերի ճնշման տակ, բայց գլխավորապես փամփուշտի սակավության պատճառով ստիպվեց քաշվել լեռները:

Գետաշենից դեպի արեւմուտք ընկած հայկական գյուղերին ադրբեջանական զորքերը վնասել չկարողացան շնորհիվ այն ծանր պարտության, որ կրեցին նրանք ապրիլի 11-ին եւ 12-ին Գետաշենի տակ:

Գանձակի հայությունը հայտարարվեց ռազմագերի: Մահվան սպառնալիքի տակ արգելվեց հայերին բացել խանութները, առեստուր անել, հարաբերություն ունենալ մոտակա հայկական գյուղերի հետ: Հայկական մասը շրջապատվեց զորքերով եւ բոլորովին կտրվեց արտաքին աշխարհից<sup>165</sup>:

Նուխու եւ Արեշի գավառների 36 հայկական գյուղերի 49.200 շունչ հայ բնակիչներից ինչքան կենդանի էին մնացել 1916 թվին տեղի ունեցած կոտորածից, գրեթե գլխովին ջարդվեցին: Նիժը, Վարդաշենը եւ Զալուտը կո-

տորածի մատնվեցին եւ հրդեհվեցին<sup>166</sup>:

Նուխուում մարտի 26-ի գիշերը սպանվեցին շատ հայեր եւ թալանվեցին հայերի տներն ու խանութները: Կազմակերպվեց կառավարական հանձնաժողով, որն սկսեց բռնագրավել հայերի մի քանի տասնյակ միլիոնների հասնող գույքը<sup>167</sup>:

Բաքվի հայությունը եւս զերծ չմնաց մարդկային զոհերից: Ծիշտ է՝ 1918 թվի սեպտեմբերյան համատարած կոտորածներն այնտեղ չկրկնվեցին, բայց օր չէր անցնում, որ հայերից, գլխավորապես գիշերները, 5-10 մարդ չսպանվեին:

Հայերի սպանություններ եւ թալան տեղի ունեցան նաեւ Ադրբեջանի այն փոքր ու մեծ վայրերում, ուր ապրում էին ոչ մեծաթիվ հայ արհեստավորներ, առեստրականներ եւ այլ զբաղմունքի տեր մարդիկ:

Այդպիսով, Ղարաբաղի 1920թ. մարտ-ապրիլյան դեպքերի ժամանակ թուրք ադրբեջանական մարդասպաններն ամեն կերպ աշխատեցին իրագործել իրենց վաղեմի հրեշային ծրագիրը - ոչնչացնել հայ տարրն այնտեղ, որտեղ այդ հնարավոր էր, կամ հայերին այնպես քայքայել տնտեսապես, որ նրանք ստիպված լինեն հեռանալ Ադրբեջանի սահմաններից:

### 13.

Ղարաբաղի կռիվները մեծ վրդովմունք առաջ բերեցին Վրաստանի կառավարության եւ դաշնակիցների շրջանում: Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող դեպքերը շարունակում էին երկյուղ ներշնչել, որ Կարմիր բանակը, զարգացնելով իր հաջողությունները, շուտով կարող է արշավել դեպի Ադրբեջան եւ գրավել Բաքուն: Դաշնակիցները մեծ հույսեր ունեին, որ անդրկովկասյան հանրապետությունների միացյալ զինված ուժերը նրանք կարող են ուղղել Կարմիր բանակի դեմ՝ կասեցնելու նրա հարձակումը Ադրբեջանի վրա, մինչդեռ Ղարաբաղի դեպքերը տակնուվրա էին անում նրանց պլանները: Ոմանք նույնիսկ կապ էին գտնում Ղարաբաղի հայերի ազատագրական պայքարի եւ Հյուսիսային Կովկասի բոլշևիկյան զինված ուժերի առաջխաղացման միջեւ<sup>168</sup>:

<sup>166</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 69, 74:

<sup>167</sup> Նույն տեղում, էջ 69:

<sup>168</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 14, 62, 99:

<sup>165</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 73:



Ապրիլի 1-ին Թիֆլիսում գտնվող «գաշնակից երկրների բարձր կոմիսարները» դիմեցին անդրկովկասյան երեք հանրապետությունների արտաքին գործերի մինիստրներին՝ հորդորելով խաղաղություն պահպանել Անդրկովկասում եւ անհապաղ լուծել Ղարաբաղի եւ այլ մարզերի հարցերը, այլապես, հայտնում էին նրանք, բախումները կարող են շատ ծանր հետեւանքներ ունենալ բոլոր հանրապետությունների համար:

Իսկ դրանից առաջ, 1920 թ. մարտի 27-ին, վրաց կառավարության նախագահ Ժորգանիան հրավիրել էր իր մոտ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի «բարձր կոմիսարներին» եւ, ծանոթացնելով Ղարաբաղում տեղի ունեցող անցքերին, խնդրել նրանց միջամտել եւ վերջ դնել արյունահեղությանը, որովհետեւ «ներկայիս պայմաններում, - հայտնել էր Ժորգանիան, - առանձնապես, երբ հյուսիսից սպառնալիք է ստեղծված անդրկովկասյան հանրապետությունների անկախության նկատմամբ, Ղարաբաղի դեպքերը կարող են կործանարար ազդեցություն ունենալ երեք նորաստեղծ հանրապետությունների ճակատագրի համար»<sup>169</sup>:

Թիֆլիսում ապրիլի 5-ին «գաշնակից կոմիսարների» պահանջով տեղի ունեցավ անդրկովկասյան երեք հանրապետությունների կոնֆերանս՝ խաղաղությունը Ղարաբաղում վերականգնելու համար, բայց ապարդյուն: Կոիվները նույն կատաղությամբ շարունակվեցին ընդհուպ մինչեւ 1920 թ. ապրիլի 13-ը:

#### 14.

Ադրբեջանի հրամանատարությունն իր զորամասերը Հայաստանի սահմանակից շրջաններից նույնպես քաշել բերել էր Ղարաբաղի դեմ, ուստի վախեցավ, որ Հայաստանը կարող է օգտագործել իր նպաստավոր դրությունը եւ Դիլիջանի կողմից գործողություններ սկսել Ղազախի ուղղությամբ: Հնարավորություն չունենալով այդ շրջանը հայերի հավանական հարձակումից իր կանոնավոր ուժերով քիչ թե շատ հուսալի կերպով ապահովելու, Ադրբեջանը դիմեց խորամանկության: Նա Ղազախի շրջանի մուսուլմանների զինված ուժերով կազմակերպեց դեմոնստրատիվ հարձակում Կոթի գյուղի եւ Շամշադինի շրջանի մի քանի հայկական գյուղերի վրա: Եւ երբ հայերի տեղական ուժերը, ետ մղելով մուսուլմանների հարձակումը,

<sup>169</sup> նույն տեղում, էջ 67:

տեղ-տեղ անցան սահմանը, Ադրբեջանի կառավարությունը մեղադրեց Հայաստանին «գաշնակից երկրների կովկասյան բարձր կոմիսարներին» առաջ՝ ադրբեջանական գյուղերի վրա հարձակում կատարելու մեջ: Հայաստանի կառավարությունն իր հերթին աշխատեց ամեն կերպ հավատացնել գաշնակից պետությունների ներկայացուցիչներին, որոնք առանց այն էլ խիստ դժգոհ էին հայերից Ղարաբաղում տեղի ունեցող կոիվների համար, որ Հայաստանը երբեք ցանկություն չի ունեցել եւ չունի հարձակվելու Ադրբեջանի տերիտորիայի վրա: Անշուշտ, եթե Ռուբեն Տեր-Մինասյանը Ղարաբաղի պաշտպանության համար ձեռնարկեր այդպիսի հարձակման, Ադրբեջանը ստիպված պիտի լիներ Ղարաբաղի դեմ գործող իր կանոնավոր ուժերի մի զգալի մասը նետել Ղազախի ճակատը, որով կթեթեւանար Ասկերանի վրա կատարվող ճնշումը:

Ի դեպ է ասել, որ Ղարաբաղի կոիվների ընթացքում Հայաստանի զինված ուժերի հիմնական մասը զբաղված էր Նախիջևանը գրավելու գործողություններով: Վեդին վերցնելուց հետո, հայկական զորամասերը մտել էին Նախիջևանի տերիտորիան եւ կարճ ժամանակամիջոցում գրավել ամբողջ շրջանը՝ Նախիջևան քաղաքով: Մուսուլման բնակչությունը փախել էր Պարսկաստան: Արաքսի վրայով Պարսկաստան էին փախել նաեւ Ագարա գետի հովտի ավերված մուսուլմանական գյուղերի բնակիչները: Նրանք դիմել էին Թեհրան՝ դեսպաններին, կառավարությանը եւ Ռզա շահին՝ խնդրելով պաշտպանել իրենց հայերից: Թավրիզում գտնվող թագաժառանգը նույնիսկ խոստացավ զինված ուժ անցկացնել Արաքսի ձախ ափը՝ պայքարելու հայերի դեմ, սակայն Ռզա շահը խստորեն կարգադրեց թույլ չտալ հայերի նկատմամբ որեւէ թշնամական գործողություն եւ հրամայեց զինաթափ անել Պարսկաստան անցած բոլոր փախստական մուսուլմաններին<sup>170</sup>:

<sup>170</sup> ՀՊՊԱ, ֆ. 223, գ. 72, թ. 38:

Երբ 1920 թ. ապրիլի 28-ին Կարմիր բանակն առանց դիմադրությունը հաղիպելու գրավեց Բաքուն, նրա հրամանատարությունը զորք մտցրեց Նախիջևան եւ պահանջեց հայկական զորքերի հրամանատարից քաշվել երեւան՝ հայտարարելով Նախիջևանն իր շրջանով Ադրբեջանի սեփականություն: Դա կատարվեց հավանորեն այն պահանջի հիման վրա, որ Աթաթուրքի պատվիրակ Պեքիր Սամին ներկայացրել էր Լենինին մոսկվայում: (Տե՛ս «Զորթոնք», նո. 78, 28 դեկտ., 1968 թ. «Մոսկվայի թուրք-խորհրդային բանակցությունները» հոդվածը, էջ 2):



## 15.

Ասկերանը գրավելուց հետո, ադրբեջանական հեծելազորի առաջապահը՝ «թաթարական հեծյալ գունդը» մտավ Շուշի: Նրա առաջին «սխարգործությունն» այն եղավ, որ հարձակվեց բանտի կամերաներում արգելափակված մի քանի հարյուր շուշեցի հայերի վրա, մեծ մասամբ արհեստավորներ եւ մտավորականներ, ու թրերի հարվածներով ջարդեց ամենքին: Մուսավաթական Ադրբեջանի ասկերները, իրենց ցեղակից օսմացիների նման, «անպարտելի» էին, երբ գործ ունեին անգեն եւ անպաշտպան տղամարդկանց, կանանց եւ երեխաների հետ:

Ապրիլի 5-ից ուժեղ կռիվներ սկսվեցին Վարանդայի ներքին բնագծերում Դաշուշեն եւ Շուշու գյուղերի մատույցներում: Խանքենդու զորամասը, որ բավականաչափ ուժեղացված էր Աղդամից նոր եկած հետեւակի համալրումներով, ձեռնարկեց ուժեղ գրոհների հիշյալ գյուղերի վրա: Թշնամին ամեն ջանք գործ էր դնում թափանցելու Վարանդայի թիկունքը՝ կազմալուծելու Ղարաբաղի այդ մեծ եւ բազմամարդ շրջանի պաշտպանությունը, խուճապ առաջ բերելու եւ ոչնչացնելու Վարանդան, որից հետո, հակառակորդի կարծիքով, կհեշտանար նաեւ Դիզակի գրավումը եւ ոչնչացումը: Բայց այդպիսի ծրագրի իրագործման համար Ադրբեջանի ուժերն անբավարար էին եւ անհուսալի: Դաշուշեն եւ Շուշու գյուղերի մատույցներում տեղի ունեցող գրոհները հետ էին մղվում հաջողությամբ: Թշնամին կրում էր զգալի կորուստներ: Ապրիլի 12-ին այդ երկու գյուղերի տակ հայերի ձեռնարկած եռանդուն հակազորոհին չդիմացան ադրբեջանական վաշտերը եւ խուճապահար նահանջեցին դեպի Խանքենդու: Նախիջեւանիկ-Փիրջամալ-Վարազաբույն-Աղբուլազ գծի վրա «կամավորական» բազմաթիվ ջոկատների համառ գրոհները շարունակվեցին մինչեւ ապրիլի 13-ը ներառյալ, բայց հակառակորդի համար առանց որեւէ դրական արդյունքի: Զախողվեց նաեւ ադրբեջանական ուժերի Խանքենդու խմբավորման նոր գրոհները Դաշուշենի եւ Շուշու գյուղերի ուղղությամբ: Այդ խմբավորման հրետանին ապրիլի 12-ի գիշերվանից սկսել էր ուժեղ ուժակոծության ենթարկել երկու գյուղերի մատույցները պաշտպանող մարտիկների դիրքերը: Բայց Զանգեզուրից փոխգնդապետ Թարվերդյանի հետ անցած հրետանու դասակը Տրնավազ գյուղի մոտից սկսեց պատասխանել եւ մոտ երկու ժամ տեւող հրետանային կատաղի մենամարտում ստիպեց լռել հակառակորդի մարտկոցները:

Ապրիլի 12-ի գիշերը Ադրբեջանի զորքերի հրամանատարությունը, մեծ

ուժեր կենտրոնացնելով այս անգամ Վարանդայի Սղնախ գյուղի մատույցներում, հաջորդ օրը, ապրիլի 13-ի լուսաբացին, վճռական հարձակում սկսեց քաղաքի բարձունքներից տեղացող հրետանային ուժեղ կրակի պաշտպանության տակ:

Հակառակորդը Խանքենդու ուժերի մի զգալի մասը նույնպես նետել էր Սղնախի ճակատը: Նա մտադիր էր ինչ գնով էլ լինի գրավել Սղնախը՝ Վարանդայի եւ Դիզակի թիկունքային պաշտպանության համար այդ խիստ կարեւոր ռազմագիտական կետը: Կռիվը Սղնախի տակ տեւեց մինչեւ մութն ընկնելը: Այդ կռիվն իր լարվածությամբ կարող էր համեմատվել միայն Ասկերանի վերջին օրերի կռիվներին, թեեւ Սղնախի կռիվը տեւեց ընդամենը մի ամբողջ օր: Թշնամուն, երեկոյան դեմ, մեծ զոհերի գնով հաջողվեց մտնել գյուղի հյուսիսային ծայրամասը եւ հրդեհել մարագները, բայց այդտեղից նա այլեւս առաջանալ չկարողացավ:

\* \* \*

Կռիվը Սղնախի տակ եւ նրա գրավման հավանականությունը խուճապ առաջ բերեց շատերի մեջ, որոնք սկսեցին պատրաստությունների տեսնել անցնելու Զանգեզուր:

Սղնախի ճակատամարտը ահաբեկեց նաեւ փոխգնդապետ Թարվերդյանին: Վախենալով, որ այդ գյուղը գրավելուց հետո թշնամին կարող է բռնել Քիրսի բարձունքները եւ Ղարաբաղի լեռնաշղթայի այդ մասով շրջանցել Վարանդան եւ Դիզակը ու խզել նրանց կապը Խժաբերդի վրայով Զանգեզուրի հետ՝ Թարվերդյանն ապրիլի 13-ի գիշերն առավ իր հետ հրետանու դասակը, գնդացրորդներին եւ իր փոքրաթիվ ջոկատը ու հապճեպ ուղեւորվեց դեպի Խժաբերդ՝ Զանգեզուր անցնելու մտադրությամբ: Թարվերդյանի «նահանջը» տազնապ առաջացրեց Վարանդայի թիկունքային գյուղերի բնակչության մի մասի շրջանում: Ապրիլի 13-ի գիշերը բնակչության այդ մասը հավաքվել էր Խժաբերդ տանող ճանապարհի վրա գտնված գյուղերում մտադիր լինելով հաջորդ օրը, ապրիլի 14-ին, անցնել Զանգեզուր: Խուճապի չենթարկվեց եւ չշարժվեց իր տեղից Վարանդայի գյուղերի մեծագույն մասը, իսկ սահմանամերձ գյուղերից եւ ոչ մեկը, որոնց տղամարդիկ շարունակում էին նույն համառությամբ եւ անձնվիրությամբ պաշտպանվել մուսուլմանական խուժանի հարձակումներից:

Սղնախի օրհասական վիճակը երկյուղ չառաջացրեց նաեւ Դիզակում,



հծաբերդում եւ նրա մոտակա գյուղերում: Տումեցի, խծաբերդցի կովոդներին հաջողվեց համոզել Թարվերդյանին՝ հրաժարվել Ղարաբաղը լքելու մտադրությունից: Նրան հավաստիացրին, որ Վարանդան եւ Դիզակը թշնամին հեշտությամբ հաղթահարել չի կարող, եւ Ադրբեջանի զորքերին չի հաջողվի, անգամ Սղնախը գրավելու դեպքում, առաջանալ դեպի Վարանդայի խորքերը կամ այն շրջապատել եւ կամ գրավել ու ամրանալ Քիրսի բարձունքներում, որոնք պաշտպանվում էին հուսալի ուժերով:

## 16.

1920 թ. ապրիլի 14-ի լուսադեմին, երբ հարվածային ջոկատների երկու մեծ խումբ փորձեց սրընթաց գրոհով դուրս վանել Սղնախի հյուսիսային ծայրամասում ամրացած ասկերներին, հայ մարտիկները զարմանքով տեսան, որ թյուրքերի դիրքերը բոլորովին դատարկ են: Փութով կազմակերպված հետախուզությունը բոլոր ուղղություններով պարզեց, որ նախորդ օրը ադրբեջանական զորքերով բռնված ամբողջ տարածությունը ապրիլի 13-ի լույս 14-ի գիշերը բոլորովին դատարկվել է թշնամու զինված ուժերից: Դա աներեւակայելի եւ ապշեցուցիչ իրողություն էր: Նախորդ օրվա կռիվներում գերի վերցված ասկերների մանրակրկիտ հարցաքննությունից պարզվեց, որ գլխավորապես գյուղերից հավաքագրած ասկերները, որոնք ադրբեջանական զորքի բացարձակ մեծամասնությունն էին կազմում, հայերի դեմ կռվում էին ակամա եւ հարմար վայրկյան փնտրում խույս տալու կովից. «Եթե ասկերները համոզված լինեն, - ասում էին գերիները, - որ հայերը գերիներին չեն սպանի, շատերը գերի կհանձնվեն: Ապրիլի 13-ի կռվում, Սղնախի տակ, մենք շատ սպանվածներ ունեցանք, առանձնապես շատ էր վիրավորների թիվը, որոնցից շատերը մեռան վատ կազմակերպված բուժօգնության պատճառով: Բայց, հավանորեն, խուճապին զարկ են տվել եւ նպաստել ճակատի վերջնական կազմալուծմանը մեր զորքերի շրջանում պատվող համառ լուրերը, թե Զանգեզուրից հայկական մեծաթիվ զինված ուժեր են անցել Ղարաբաղ եւ շուտով ընդհանուր հարձակում պիտի կատարվի հայերի կողմից բոլոր ճակատներում»: Գերիները համոզված էին, որ ամբողջ զորքը ցրվել է, եւ ասկերները փախել են իրենց գյուղերը:

Քսաներկու օրվա անընդհատ լարված կռիվներից հետո, ապրիլի 14-ին, առաջին անգամ, Ղարաբաղի ճակատներում խոր լռություն էր տիրում, չէր լսվում հրացանի եւ ոչ մի կրակոց: Միայն Շուշում գտնվող ասկերների փոք-

րաթիվ զորամասը դաշտային հրանոթներից երբեմնակի կրակ էր բացում քաղաքի բարձունքներից Վարանդայի հայկական գյուղերի ուղղությամբ, երեւի նախազգուշացնելու հայ մարտիկներին, որ դեռեւս քաղաքում են գտնվում հալիլ փաշան եւ հայկական մասի ավերածություն հեղինակ Սուլթանովը՝ ադրբեջանական քայքայված բանակի մնացորդներով:

\* \* \*

Ղարաբաղի դեմ գործող ադրբեջանական զորքերի անակնկալ բարոյալքումը, ճակատի կատարյալ մերկացումը, որ տեղի ունեցավ զարմանալի կերպով մեկ գիշերվա ընթացքում, կտրուկ շրջադարձ առաջ բերին ստեղծված ծանր ճգնաժամային իրադրության մեջ: Վարանդայի եւ Դիզակի շրջանցման սպառնալիքը բոլորովին վերացավ, միանգամից դադարեցին կռիվները երկրի գրեթե բոլոր ճակատներում: Խուճապի մատնված գյուղերի բնակիչները վերադարձան իրենց տները: Տեղ-տեղ սկսվեցին նույնիսկ դաշտային աշխատանքները: Ստեղծվեց կառավարչական մի փոքր մարմին, որի առաջին գործը եղավ Շուշու 15 հազարից ավելի փախստականների օգնության կազմակերպումը: Այդ մարմնի տրամադրության տակ դրվեց Հայաստանի կառավարության ուղարկված մեծաքանակ մի գումար՝ բաղկացած հայկական չեքերից, որոնք արագ շրջանառության մեջ մտան ամբողջ Ղարաբաղում: Ժողովուրդը մի առանձին բավականության եւ սիրով էր ընդունում «Հայաստանի փողը»՝ համարելով այն խորհրդանիշ Ղարաբաղի վերամիավորման իր մայր հայրենիքի՝ Հայաստանի հետ:

## 17.

Հայաստանի ղեկավար շրջաններում Ղարաբաղի ծանր վիճակը մեծ վրդովմունք էր առաջ բերել Ռուբեն Տեր-Մինասյանի ինքնագլուխ գործողությունների դեմ: Այդ շրջանների պահանջով Դրոն նրեւանից շտապ մեկնեց դեպի Ղարաբաղ: Նա Նոր-Բայազետի եւ Վայոց Ձորի զորամասերով դուրս եկավ Քիշիշքենդից եւ արագացրած երթով ապրիլի 14-ին հասավ Գորիս: Ապրիլի 18-ին նա հաջողությամբ անցավ Ագարա գետը եւ հծաբերդ գյուղի վրայով մտավ Ղարաբաղ: Գրեթե միաժամանակ Ղափանից Դիզակ անցավ Նժդեհը՝ Ղափանի զինված ուժերի երկու գումարտակով: Հայկական Ղարաբաղը այդպիսով փաստորեն գրավվեց Հայաստանի կանոնավոր ուժերի կողմից: Ղարաբաղում հայտարարվեց թե՛ հետեւակի եւ թե՛ այրու-



ձիի շտապ զորահավաք:

\* \* \*

Անդրկովկասյան երեք հանրապետությունների՝ Թիֆլիսում գումարված կոնֆերանսը որոշել էր դադարեցնել կռիվները Ղարաբաղում: Այդ նպատակով կազմվել էր երեք հոգուց բաղկացած մի հանձնաժողով, որ պիտի մեկնեի Ղարաբաղ՝ դադարեցնելու թշնամական գործողությունները<sup>171</sup>: Ադրբեջանի կառավարությունը, սակայն, ձգձգում էր եւ թույլ չէր տալիս հանձնաժողովին մուտք գործել Ղարաբաղ: Այդ առթիվ Ադրբեջանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչն ապրիլի 15-ին տեսակցություն է ունենում արտաքին գործերի մինիստր խոյսկու հետ եւ ցանկանում է իմանալ, թե ինչպես է վերաբերվում Ադրբեջանի կառավարությունը անդրկովկասյան հանրապետությունների կոնֆերանսի որոշումներին եւ արդյոք մտադիր չէ՞ Ադրբեջանի կառավարությունը Ղարաբաղից ետ կանչել իր զորքերը: «Խոյսկին, - գրում է դիվանագիտական ներկայացուցիչը Հայաստանի արտաքին գործերի մինիստրին, - բավական հուսահատ եւ դառնությամբ պատասխանեց ինձ, թե ցավն էլ հենց այդ է, որ մենք, այժմ Ղարաբաղից զորքեր դուրս բերել չենք կարող, որովհետեւ վստահություն չունենք, թե հայերի կողմից հարձակում չի լինի: Մեր պետության համար, - ասում է խոյսկին, - ստեղծվել է այժմ մի շատ տագնապալի մոմենտ. այս վայրկյանին մենք մեր բոլոր զորքերն ուղարկել ենք Ղարաբաղ եւ ձեռներս ծալած նստել: Ղարաբաղի անցքերը սոսկալի դաշույնի հարված էր մեր այսպես ծանր կացության ժամանակ»: Ապա խոյսկին խնդրում է հայտնել Հայաստանի կառավարությանը, որ նա իր բոլոր ազդեցությունը գործ դնի, մարդիկ ուղարկի Զանգեզուր եւ հրահանգներ տա, որ Ադրբեջանի վրա հարձակումներ տեղի չունենան<sup>172</sup>:

Հայակեր խոյսկու վախը հայերի հարձակումից բնական էր՝ նկատի ունենալով ապրիլի 13-ից հետո Ղարաբաղում հայերի համար ստեղծված նպաստավոր ռազմական իրադրությունը: Հասկանալի էր նաեւ այն, թե ինչու էր խոյսկին խնամքով թաքցնում Հայաստանի ներկայացուցչից ադրբեջանական զորքերի բարոյալքման եւ ճակատի մերկացման փաստը: Հետաքրքրականն այստեղ խոյսկու խոստովանությունն էր, որ՝ «Ղարաբաղի

անցքերը մի մահացու դաշույնի հարված էր» նրանց համար, որովհետեւ այդ անցքերը ստիպել էին ադրբեջանական բոլոր զինված ուժերը ուղարկելու Ղարաբաղի դեմ եւ «ձեռքերը ծալած նստել»՝ ստեղծված «ծանր կացության ժամանակ», այսինքն՝ երբ Ադրբեջանի վրա կախված էր բոլշևիկյան զինված ներթափանցման սպառնալիքը: Մինչդեռ, եթե չլինեին Ղարաբաղի անցքերը, Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ նախապես կնքված համաձայնությունամբ, երկու կողմերը միացյալ ճակատ պիտի կազմեին պայքարելու համար Հյուսիսային Կովկասից շարժվող Կարմիր բանակի ուժերի դեմ<sup>173</sup>: Եւ բացառված չէր, որ այդ դեպքում կարող էին հանդես գալ նաեւ Անտանտի իմպերիալիստական գիշատիչները (եւ հատկապես Անգլիան, Ֆրանսիան եւ Ամերիկան) գործուն աջակցություն ցույց տալու կոալիցիային՝ խափանելու համար Կարմիր բանակի մուտքն Անդրկովկաս:

## 18.

Կամավորական բանակը Հյուսիսային Կովկասում վճռական պարտություն էր կրել: Դեռեւ 1920 թ. ապրիլի 5-ին այդ բանակի Պետրովսկի զորամասը գեներալ Դրացենկոյի ղեկավարությամբ հասել էր Բաքուն՝ բերելով իր հետ մեծ քանակությամբ զենք, զինվորական գույք, զինամթերք, այլեւ նավատորմ՝ բաղկացած 32 զանազան տեսակի նավերից: Այդ ամբողջ գույքը Դրացենկոն հանձնել էր Ադրբեջանի կառավարությանը՝ ստանալով որոշ դրամական վարձատրություն<sup>174</sup>: Իսկ նույն ապրիլ ամսի 28-ին, առանց դիմադրության հանդիպելու, Բաքու մտան բոլշևիկյան 11-րդ բանակի զորամասերը: Տապալվեց մուսավաթական կառավարությունը, որի անդամների մի մասը փախավ Իրան, իսկ շատերն էլ Վրաստանի վրայով անցան Թուրքիա: Մուսավաթականների հիմնական մասը թաքնվեց Գանձակում, Բաքվում եւ թյուրքական ու քրդական գյուղերում:

Բաքվում կազմակերպվեց ռեւկոմ եւ բանվորական խորհուրդ:

Այդ իրադարձություններին Ղարաբաղը տեղեկացավ միայն 1920 թվի մայիս ամսի սկզբներին, երբ Սուլթանովը, ազատվելով գերության մեջ գտնվող մի մեծ խումբ շուշեցի հայերի, նրանց միջոցով հայտնեց Վարանդա, թե Բաքուն արդեն գրավված է Կարմիր բանակի կողմից եւ վերջինիս հրամա-

<sup>171</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 113, 116:

<sup>172</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 155:

<sup>173</sup> Նույն տեղում, թ. 99:

<sup>174</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 119:



նատարությունն առաջարկությունն իր՝ Սուլթանովի նախագահությանը Շուշում կազմակերպված է «ռեկոմ»: Սուլթանովը միաժամանակ «զգուշացնում էր» դարաբաղցիներին՝ կռիվները դադարեցնել:

Գավառը սկզբում չհավատաց Սուլթանովի հաղորդմանը՝ համարելով այն թյուրքերի սովորական միտումնավոր խաբեություն: Բայց երբ շուշեցի հայ գերիների մի ուրիշ խումբ Վարանդա գալով հայտնեց, որ շատերն իրենցից տեսել են սեփական աչքով Բաքվից Շուշի եկած ռուս զինվորների եւ Կարմիր բանակի ղեկավար մարդկանց, որոնց մեջ եղել են նաեւ հայեր, Բաքվի գրավման լուրերի հավաստիության նկատմամբ ծագած կասկածները փարատվեցին: Ջրաբերդից Վարանդա եկած հայ բոլշևիկները եւս հավաստեցին, որ, իսկապես, Բաքուն գրավված է 11-րդ բանակի զորամասերի կողմից:

Մայիսի 14-ի լուսաբացին Քյաթուկ գյուղի շրջանում երեւացին ռուս հետախույզներ, որոնք ետ շարտվեցին հայ սահմանապահների կողմից<sup>175</sup>: Իսկ մայիսի 19-ին Դրոյի մոտ, Վարանդայի Ղարաբուլաղ գյուղը եկան Շուշուց ուղարկված բոլշևիկների ներկայացուցիչները՝ Կովկասյան ճակատի ռազմական խորհրդի լիազորներ Սահակ Տեր-Գաբրիելյանը, Կայդարովը եւ Պերնանին, որոնք «գլխավոր լիազոր» Օրջոնիկիձեի անունից հայտնեցին Դրոյին, որ մտադիր են Կարմիր բանակից զորամաս մտցնել Լեռնային Ղարաբաղ, որովհետեւ որոշված է, որ մինչեւ Ազարա գետը Ղարաբաղը պիտի կազմի Խորհրդային Ադրբեջանի տերիտորիայի մի մասը: Տեսնելով, որ «բոլշևիկների մտադրությունների տակ թաքնված է հին Ադրբեջանը», Դրոն, իրավասու չհամարեց իրեն լուծելու նման հարցերը, առաջարկեց բոլշևիկների ներկայացուցիչներին դիմել Հայաստանի կառավարությանը: Նա, միաժամանակ, միանգամայն իրավացիորեն, նկատեց, որ «լիազորների» պահանջները չեն համապատասխանում բոլշևիկների հայտարարած ժողովուրդների ինքնորոշման սկզբունքներին<sup>176</sup>:

Եւ, հիրավի, տասնյակ տարիներ շարունակ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատները, հայ, թե ռուս, իրավացիորեն դատապարտում էին հայ ազգային հեղափոխական կուսակցությունների քաղաքականությունը՝ կռվան դարձնելով, որ նրանք հայ ժողովրդի ազատագրության հարցի դրական լու-

<sup>175</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 119:

<sup>176</sup> Նույն տեղում, թ. 184:

ծումը կապում են իմպերիալիստական պետությունների միջամտության հետ, մինչդեռ, նրանց կարծիքով, հայ ժողովրդի ազատության, նրա ինքնորոշման հարցերի հետեւողական լուծողը կարող է լինել միայն Ռուսաստանի հեղափոխության հաղթանակից հետո ստեղծված իշխանությունը: Այժմ, երբ Ռուսաստանում հաղթանակել էր արդեն պրոլետարիատը, սոցիալ-դեմոկրատական կուսակցության ձախ թեւի (բոլշևիկների) գլխավորությամբ, եւ այդ հաղթանակող պրոլետարիատի բանակը գրավել էր արդեն Ադրբեջանը, գրավել էր անարյուն շնորհիվ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության անձնվեր պաշտարի, որը չէր կամենում ենթարկվել Ադրբեջանի իշխանությանը, ինչպիսի պիտակի տակ էլ նա հանդես գալու լինեք, այժմ այդ բանակի ղեկավարներն այլ երգ են երգում չկամենալով ճանաչել Ղարաբաղի 200 հազարից ավելի հայության ինքնորոշման իրավունքը:

Ինչպես տեսնում ենք, Անդրկովկաս ոտ դնելու հենց առաջին օրերից, բոլշևիկների ընդգրկած քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ, ըստ էության, ոչնչով չէր տարբերվում անգլիական գաղութարարների, թոմսոնների ու շատելվորտների քաղաքականությունից:

Ինչպես էլ տքնեն արդարացնել ազգերի ինքնորոշման սրբազան իրավունքի այդ ակնհայտ ոտնահարումը, այնուամենայնիվ, պատմությունը չի կարող չնշավակել նրա հեղինակներին՝ այդ կարճամիտ, ռիսակալ եւ խտրական քաղաքականության համար:

\* \* \*

1920 թ. ապրիլի 29-ին, երբ արդեն գրավված էր Բաքուն Կարմիր բանակի զորամասերից, Մարդակերտում տեղի ունեցավ Խաչենի, Ջրաբերդի եւ Գյուլիստանի հայ գյուղացիության համագումար, որին ներկա էին 70 հայկական գյուղերից օրինական մանդատներով 62 պատգամավոր: Համագումարն իր միաձայն ընդունած բանաձեւում մի անգամ եւս վճռականորեն անընդունելի համարեց «Ադրբեջանի հակահայկական տիրապետությունը Ղարաբաղի հայության վրա»<sup>177</sup>:

## 19.

Հայաստանի արտաքին գործերի մինիստրը, 1920 թ. մայիսի 31-ին,

<sup>177</sup> ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 563, թ. 191-192:



## 20.

1920 թ. հունիս ամսում, Նուրի-փաշայի եւ ադրբեջանական զինվորականների գլխավորությամբ տեղի ունեցավ Ադրբեջանի զինված ուժերի ծավալուն ապստամբություն՝ ուղղված նոր հաստատված խորհրդային իշխանության դեմ: Ապստամբները ցրեցին Գանձակում եւ Շուշում տեղավորված Կարմիր բանակի մասերը եւ պատրաստվեցին մեծ ուժերով դուրս գալու Բաքվից դեպի Գանձակ շարժվող 11-րդ բանակի էշելոնների դեմ:

Կարմիր բանակի զորմասերի համար Ադրբեջանում ստեղծված այդ խիստ վտանգավոր եւ կրիտիկական պահին դարձյալ օգնության հասան լեոնաբնակ հայերը: Գանձակի լեոնային մասի եւ Գյուլիստանի հայկական գյուղերի զինված ուժերը, բաղկացած մի քանի հազար փորձված ռազմիկներից, Բանանց գյուղացի Նգոր Տեր-Ավետիքյանի եւ Բուզլուխ գյուղացի Մնացական (Յական) Հովհաննիսյանի հրամանատարությամբ հարձակվեցին Գանձակ քաղաքի վրա, որտեղ գտնվում էին թյուրք ապստամբների գլխավոր ուժերը: Հայ մարտիկները շրջապատեցին եւ երկու օրվա արյունահեղ մարտերում ջախջախեցին մուսուլման ապստամբների բազմահազար բանդաները եւ այդպիսով հնարավորություն տվեցին Կարմիր բանակի էշելոններին ազատորեն մտնելու Գանձակ եւ վերականգնելու կարգը քաղաքում ու ապստամբությանը հարած մուսուլմանական շրջաններում:

Ադրբեջանի ղեկավարների եւ օսմանյան փաշաների համատեղ կազմակերպած հակախորհրդային (ավելի ճիշտ՝ հակառուսական) խժդժությունների բուռն շրջանում Ղարաբաղի հեղկոմի նախագահ Սաքո Համբարձումյանը, վախենալով, որ ապստամբ ուժերը Ադրբեջանում կարող են հաղթանակել, Գորիս ուղարկեց ուսուցիչ Գրիգոր Ղարաբաղյանին եւ նրա միջոցով խնդրեց Դրոյին՝ չհեռանալ Զանգեզուրից, որովհետեւ իրադարձությունները Ադրբեջանում կարող էին ծավալվել եւ այնպիսի վտանգավոր ընթացք ընդունել, որ Դրոն ստիպված լիներ կրկին վերադառնալ Ղարաբաղ: Բայց Նգոր Տեր-Ավետիքյանի եւ Յական Հովհաննիսյանի փայլուն հաղթանակը Նուրի փաշայի ապստամբ հրոսակների դեմ՝ արդեն վճռել էր ադրբեջանա-

կան վանդեայի բախտը<sup>180</sup>:

1963-1964թթ.

<sup>180</sup> Ա. Ն. Մնացականյանը, խոսելով այդ ապստամբության մասին, 1961 թվին լույս տեսած իր աշխատության մեջ (գլ. 5-րդ), գեթ մի քանի խոսքով չի հիշատակում այն անգնահատելի ծառայությունը, որ մատուցել են հայկական Ղարաբաղի եւ Գանձակի շրջանի լեոնաբնակ հայերի միացյալ զինված ուժերը ապստամբ բանդաների հիմնական ուժերի ջախջախման գործում: Անժխտելի պատմական փաստ է, որ լեոնաբնակ հայ աշխատավոր գյուղացիության քաջարի զավակների աննման հաղթական սխրագործություններն էին, որ հնարավորություն տվեցին 11-րդ Կարմիր բանակի զորամասերին վերականգնելու ապստամբներից մեծ կորուստներ կրած իրենց ստորաբաժանումները եւ ձեռարկելու ադրբեջանական վանդեայի տակավին չուժարված առանձին փոքր օջախների լրվիդացիային: Պատմության կարեւոր փաստերը անտեսել «բարի» կամ «չար» նպատակներով, կամ թեկուզ հենց փառաբանելու համար «Ադրբեջանական, Հայկական, Վրացական եղբայրական սովետական ռեսպուբլիկաների փառապանծ քառասնամյակը», վայել չէ լուրջ պատմաբանին, այդ հակազիտական, անազնիվ, հակալեոնիսյան գործ է: «Եղբայրությունը» գովի, ինչքան քեֆի կուզի, թեկուզ այդ «եղբայրությունը» լինի կեղծ, հիմնված «ամենասակավազոր» հաշվին ձեռք բերված կողոպուտի վրա, բայց անտեսել պատմական կարեւոր իրադարձությունները կամ ազավաղել անվայել է մանավանդ կոմունիստ պատմաբանին (տե՛ս Ա. Ն. Մնացականյան, Ռեւոլյուցիան Անդրկովկասում եւ Ռուսաստանի պատմությանը, Հայ պետհրատ, 1961 թ., էջ 128-138):



## ՎԵՐՋԱԲԱՆ

Եւ գրեթե կես դար մայր հայրենիքից անջատ իր ողորմելի գոյութիւնը քարշ տալուց հետո հայկական Ղարաբաղը մի վայրկյան միայն զգաստացաւ՝ գիտակցելով իր դառը վիճակի ամբողջ ողբերգականութիւնը, իր «բարեկամների» ստոր խաբէութիւնը, նրանց դավը, զգաց իր վաճառված ղեկավարների անարգ դավաճանութիւնը, ծառացաւ եւ Ադրբեջանի, եւ իր ղեկավարների դեմ եւ ուղղեց բազմահազար ստորագրութիւններով հետեւյալ բողոքը Մոսկվային.

*Սովետական Միութեան Մինիստրների սովետի նախագահ  
եւ Կոմունիստական կուսակցութեան քարտուղար ընկեր Ն. Ս. Խրուշչովին.*

Մենք, ներքո ստորագրողներս՝ Լեոնային Ղարաբաղի Ավտոնոմ մարզի կոլխոզնիկներս, բանվորներս, ծառայողներս եւ Շամխորի, Խանլար, Դաշքեսանի, Շահումյանի շրջանների հայ բնակիչներս, մեր կյանքի ծանր պայմանների շնորհիվ հասած լինելով հուսահատութեան աստիճանի, որոշեցինք սրանով դիմել Ձեզ՝ հայցելով Ձեզնից արդարութիւն եւ պաշտպանութիւն:

Անհիշելի ժամանակներից մեր երկիրը, որ ընկած է Քուռի, Արաքսի եւ Սեւանա լճի միջեւ եւ հայտնի է պատմութեան մեջ «Արցախ» անունով, միշտ կազմել է Հայաստանի անբաժան մասը: Թուրք-մոնղոլական ցեղերի արշավանքի ժամանակ հայերը դուրս մղվեցին դաշտային մասերից, ոչնչացան մեր ծաղկած քաղաքներն ու գյուղերը եւ վերածվեցին քոչվորական արոտավայրերի: Հայերին հաջողվեց ամրանալ միայն Ղարաբաղի լեռնային եւ նախալեռնային շրջաններում եւ պաշտպանել իրենց ֆիզիկական գոյութիւնը: Ռուսաստանին միանալուց հետո վերացաւ Ղարաբաղի հայ բնակչութեան ֆիզիկական գոյութեան սպառնալիքը, թեպետեւ հայութիւնը ստիպված էր կրելու ցարական իշխանութեան ծանր ճնշումները:

1905-1906 թվերին, պաշտպանելու համար Անդրկովկասը օր-ավուր ծավալվող հեղափոխական շարժումներից, ցարական կառավարութիւնը սուր թշնամութիւն սերմանեց եւ արյունահեղ ընդհարումներ առաջ բերեց երկու հարեւան ժողովուրդների՝ հայերի եւ ադրբեջանցիների միջեւ: Առաջին իմպերիալիստական պատերազմի ժամանակ, մինչեւ ազգային հանրապետութիւններ ստեղծվելը եւ դրանից հետո, Ադրբեջանի մուսավաթական կառավարութիւնը մեկուսացրեց Ղարաբաղի հայկական շրջանները արտաքին աշխարհից եւ սկսեց ոչնչացնել հայերին ամենուրեք, որտեղ այդ հնարավոր էր: Ուժերի մեծագույն լարումով Լեոնային Ղարաբաղի հայութեան հաջողվեց չենթարկվել Ադրբեջանին. նա կարողացաւ հերոսական ջանքերով պաշտպանել իր անկախութիւնը եւ ինքնակա կյանքը: Այդպիսին է եղել Ղարաբաղի հայութեան տանջանքների եւ աղետների անընդհատ շղթան, եւ միայն խորհրդային իշխանութիւնը 1920 թ. ապրիլին վերջ դրեց այդ ամենին:

Մենք չսխալվեցինք, կարծելով, որ լեռնային ազգային քաղաքականութիւնը կհաղթանակի եւ հայերով բնակեցված Ղարաբաղի տերիտորիան կտրվի խորհրդային Հայաստանին: Եւ, իսկապէս, Հայաստանի խորհրդայնացումից հետո, Ադրբեջանի խորհրդային կառավարութիւնն ընդունեց Ղարաբաղը եւ Նախիջեւանը Հայաստանին հանձնելու ղեկավարացիա, որը ստորագրված եւ հռչակված էր 1920թ. դեկտեմբերի 1-ին Ն. Նարիմանովի կողմից Բաքվի խորհրդի հանդիսավոր նիստում: Բայց այդ ճշմարտացի եւ իսկական եղբայրական որոշումը չիրագործվեց: 1921թ. մարտ ամսին Թուրքիայի հետ Մոսկվայում կնքված պայմանագրով Նախիջեւանը մտցվեց Ադրբեջանի մեջ, իսկ 1923 թվին Լեոնային Ղարաբաղին տրվեց ինքնավարութիւն Ադրբեջանի սահմաններում: Ինչ վերաբերում է Շամխորի, Խանլարի, Դաշքեսանի, Շահումյանի շրջաններին, որտեղ հայերը կազմում են բացարձակ մեծամասնութիւն (մինչեւ 90 տոկոս), նրանք պարզապէս մտցվեցին Ադրբեջանի մեջ: Այդպիսով Ղարաբաղի հայութիւնն անջատվեց խորհրդային Հայաստանից, իսկ ինքնավար Ղարաբաղը չընդգրկեց բոլոր հայկական շրջանները: Ղարաբաղի ինքնավար մարզի իրավունքները աստիճանաբար կրճատվեցին, իսկ ներկայումս այդ իրավունքները հասցված են զրոյի:

Ադրբեջանի ԽՍՀ մեջ ապրող հայ բնակչութեան նկատմամբ կիրառվում է սահմանափակումների զուտ ազգայնական քաղաքականութիւն եւ ստեղծվում առավելագույն չափերով կյանքի անբարենպաստ պայմաններ: Եթե ինքնավարութեան ստեղծման առաջին ժամանակամիջոցում որեւէ բան կատարվում էր արդյունաբերութեան եւ գյուղատնտեսութեան զարգացման ուղղութեամբ, ապա հետագա տարիներում բոլոր սկսված ձեռնարկումներն արգե-



լակվում էին, նախատեսվածները վերացվում կամ տրվում ադրբեջանական շրջաններին, իսկ պետական պարտավորությունները ավտոմատ մարզից պահանջվում էին չափազանց բարձր եւ ուժից վեր նորմաներով. իբրեւ օրինակ հիշենք միայն այն դեպքերը, երբ բրդի պարտադիր հանձնման ժամանակ Լեռնային Ղարաբաղի հայ գյուղացիների տներն էին մտնում եւ բռնությամբ դուրս թափում ու գրավում ներքնակների, վերմակների, բարձերի բուրդը: Բացի այդ քողարկված միջոցներից, որոնց նպատակն էր վատթարացնել մարզի հայ բնակչության տնտեսական դրությունը եւ ստիպել նրան լքելու իր բնակավայրը, այդ նպատակին էին ուղղված նույնպես մի շարք վնասարարական եւ հակահեղափոխական գործողություններ: Ժողովրդի թշնամի Բաղիրովը բնակեցրեց Հայաստանից գաղթեցված ադրբեջանցիներին ավտոմատ մարզի Մարտունու եւ այլ շրջանների հայկական գյուղերում սուր տարաձայնություններ առաջ բերելով եկվորների եւ տեղացիների միջեւ, մինչդեռ գաղթեցված մուսուլմաններին կարելի էր տեղավորել Ադրբեջանի մյուս շրջաններում, որտեղ կային ազատ, ընդարձակ եւ ոռոգելի շատ հողեր:

Բաղիրովի հաջորդներն ըստ երեւոյթին չեն մոռացել նրա դիրեկտիվները: Անվերջ եւ սխառեմատիկորեն արհամարհելով հայ բնակչության շահերը, ծաղր ու ծանակի ենթարկելով հայ աշխատավորությանը, նրանք իրենց անհանդուրժելի վնասարարական գործողություններով ձգտում էին լիկվիդացնել ոչ միայն ավտոնոմիան, այլեւ վտարելու Ղարաբաղից հայ բնիկներին: Բերենք մի քանի փաստեր.

1. Ստեփանակերտի հացի գործարանը ենթարկել են Աղդամին, որը ադրբեջանական շրջանային կենտրոն է եւ հեռու է Ստեփանակերտից 40 կիլոմետր: Այդ նշանակում է, որ Աղդամը պիտի տնօրինի Ստեփանակերտի հացի մատակարարումը՝ պլանավորի ալյուրի բացթողումը, հաց թխելը եւ հացի տեսակայնությունը:

2. Մարզային առողջապահության բաժինը ենթարկված է դարձյալ Աղդամին, որտեղից նշանակում եւ հեռացնում են մարզի առողջապահության աշխատողներին: Աղդամը իբրեւ թե պիտի ապահովի հիվանդանոցները եւ այլ հիմնարկները անհրաժեշտ գույքով եւ դեղորայքով, որը սակայն չի կատարվում: Մարզի դեղատները նույնպես Աղդամին են ենթարկված, եւ այնտեղից են նշանակվում նրանց աշխատողները, ստացվում դեղորայքը եւ այլ ապրանքներն ու իրերը:

3. Ստեփանակերտի շինարարական վարչությունը ենթարկված է Մինգեչաուրին, որը հեռու է Ստեփանակերտից 120 կիլոմետր: Դրա անմիջական արդյունքն այն եղավ, որ լավագույն մեքենաները եւ մեխանիզմները ուղարկվե-

ցին Մինգեչաուր, իսկ դրանց փոխարեն Ստեփանակերտ ուղարկվեցին անպետք եւ հնացած տեխնիկա: Ստեփանակերտի շինարարական պարկի զխավոր աշխատողները ազատվեցին աշխատանքից եւ նրանց փոխարեն նշանակվեցին ադրբեջանցիներ:

4. Մարզի մետաքսի կոմբինատը, միակ ուժեղ ձեռնարկությունը մարզում, որն ունի մինչեւ 3000 բանվոր, ենթարկել են Ստեփանակերտից 160 կիլոմետր հեռավորության վրա գտնված Նուխի քաղաքի համապատասխան սակավազոր ձեռնարկությանը, իսկ ներկերի գործարանը փոխադրել են Նուխի, որի հետեւանքով նվազեցրել են աշխատավարձի ֆոնդը եւ իջեցրել բանվորների աշխատավարձը Ստեփանակերտում: Մի շարք գյուղերում՝ Խնձորեստանում, Սեյդիշենում, Ղշաղում եւ այլ վայրերում փակել են մետաքսաթելի գործարանները:

5. «Սոյուզպեչատի» մարզային բաժինը փոխադրել են Աղդամ (1962 թ. մայիսից): Այդ նշանակում է, որ Աղդամը պիտի պլանավորի, թե մենք ինչ պիտի կարգանք, իսկ «Սոյուզպեչատի» Ստեփանակերտի աշխատակիցը մնացել է անգործ:

6. Ցեմենտ-բետոնի գործարանը Ստեփանակերտում ենթարկել են Բարդայի շրջանին, որ հեռու է մեզնից 60 կիլոմետր եւ բացարձակապես ոչնչով կապված չէ այդ գործարանի հետ:

7. Թարթարգէսի շինարարության պրոբլեմը մտցված էր հետպատերազմյան հնգամյակը, բայց մինչեւ այժմ չի իրագործված լիովին: Այդ գէսը պիտի լուծեր էներգետիկայի եւ ոռոգման հարցերը մարզի լեռնային եւ նախալեռնային գոտիներում: Մինգեչաուրի շինարարությունը իբրեւ թե պատճառ էր դարձրել Թարթարգէսի սիստեմի կառուցման կոնսերվացիայի, մինչդեռ Մինգեչաուրը չի կարող լուծել մարզի այն խնդիրները, որ կարող է լուծել Թարթարգէսը:

8. Մարզի այն բազմաթիվ օբյեկտները, որոնք մտցված են վերջին հնգամյակի մեջ, չեն իրագործված: Ներկայումս նույնպես ոչինչ չի ձեռնարկվում, թեպետեւ այդ օբյեկտները մտցված են յոթնամյա պլանի մեջ (հրուշակեղենի կոմբինատը, գինու գործարանը Կուրոպատկինոյում եւ այլն):

9. Ստեփանակերտի յոթնամյա պլանով նախատեսված ավտո-նորոգման գործարանը, չնայելով բազայի եւ որակյալ կադրերի առկայությանը, կառուցել են Կիրովաբադում:

10. Անցած քառասուն տարում չի շինված հայկական գյուղերի եւ մարզային կենտրոնի միջեւ մի կիլոմետր ճանապարհ եւ չեն բարեկարգված եղած ճանապարհները:



11. Ոչինչ լուրջ եւ հիմնավոր աշխատանք չի կատարված մարզում գյուղատնտեսության զարգացման ասպարեզում: Նկատելի աճ չի կատարվել այգիների, տեխնիկական կուլտուրաների եւ հացաբույսերի տարածությունների ընդարձակման եւ բերքատվության մեջ: Անասնապահությունն ընկած է: Ոռոգման հարցերն անուշադրության են մատնված ղեկավարության կողմից: Լեռնային Ղարաբաղի մի շարք գետերի վրա ոռոգման համար ջրապահեստներ են կառուցված, բայց ջրից օգտվում են միայն ագրոէջանական գյուղերը, Լեռնային Ղարաբաղի կոլխոզնիկները զրկված են իրենց սեփական գետերի ջրից օգտվելու իրավունքից: Դեռեւս հին ժամանակներից հայկական Ղարաբաղը հռչակված էր իր թիթենու այգիներով, որոնք հաճախ աճեցված էին ծանր աշխատանքով, լեռների քարքարոտ լանջերում: Այդ այգիներն օգտագործվում էին սպիրտի, գոշարի պատրաստման համար, այլեւ իբրեւ շինանյութ եւ վառելիք: Դրչի մի շարժումով, հաշվի չառնելով ժողովրդի բողոքները, արգելել են սպիրտի պատրաստումը եւ առաջարկել օգտագործել թիթենու այգիները միայն շերամի համար: Դրա հետեւանքով ոչնչանում են այգիները, մերկանում քարքարոտ լեռնալանջերը: Մարզը, նրա հողա-կլիմայական պայմանները չեն ուսումնասիրված, գոյություն չունի միկրոռայոնների մասնագիտացում: Մարգուշեանի ընդհանուր փորձակայանը ենթարկված է Բաքվին: Նրեւում է, որ մարզի գյուղատնտեսական հարցերը եւ հատուկ տեղական նշանակություն ունեցող տնտեսական եւ այլ հարցերի լուծումը չեն հետաքրքրում ղեկավարությունը:

12. Կուսավորությունը եւ կուլտուրան ընկած են: Դպրոցները վատ են աշխատում, որը առանձնապես արտահայտվում է Հայաստանի Սոց. խորհրդային Հանրապետության բարձրագույն դպրոցների ընդունելության քննությունների ժամանակ: Ստեփանակերտում գոյություն ունեցող երկամյա ուսուցչական ինստիտուտը լիկվիդացված է, փակված է երաժշտական ուսումնարանը: Ստեփանակերտի թատրոնը մեծ կուլտուրական նվաճում է, որը սակայն ձեռք է բերված Բաքվի հայկական թատրոնի լիկվիդացիայի գնով, մի քաղաք, որտեղ հայ բնակչությունը կազմում է շուրջ 300 հազար մարդ:

Ավտոնոմ մարզի եւ նրա հայ բնակչության վերաբերյալ ապօրինի եւ վնասարարական կարգադրությունների եւ գործողությունների թվարկումը կարելի էր շարունակել, բայց այստեղ բերված տվյալներն ինքնին բավականաչափ բնորոշում են այն աննորմալ եւ ծանր դրությունը, որի մեջ ստիպված է ապրել եւ աշխատել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը: Դա պարզապես ծաղրանք է ավտոնոմիայի նկատմամբ, ոտնահարում մարզի սովետական քաղաքացիների իրավունքների, ծաղրանք, ուղղված լենինյան ազգային քաղաքա-

կանություն դեմ:

Միանգամայն հասկանալի է, թե ինչ նպատակ էր հետապնդվում մի քանի տասնյակ տարիների ընթացքում, որը ներկայումս իրագործվում է. Լեռնային Ղարաբաղին պատկանող ձեռնարկությունների եւ հիմնարկների վերանախարկումը ագրոէջանական շրջանների համապատասխան ձեռնարկություններին, որոնք գտնվում են 40-ից մինչեւ 160 կիլոմետր հեռավորության վրա (Աղդամ, Բարդա, Մինգեչաուր, Կիրովաբադ, Նուխի եւ այլն), մարզի ձեռնարկությունների եւ հիմնարկների տեղափոխումը Աղբրեջանի ԽՍՀ շրջանները, մարզի պլանում նախատեսված անհրաժեշտ արդյունաբերական եւ այլ ձեռնարկությունների պլանից հանելը: Այդ ամենը հասցրին նրան, որ լիովին կազմալուծվեց եւ քայքայվեց ավտոնոմ մարզի վարչատնտեսական գործունեությունը:

Հենց այդ միակողմանի վնասակար ձեռնարկումները զրկեցին մարզի հայ բնակիչներին աշխատանքից եւ ապրուստից, ստիպեցին շատերին թողնել հայրենի տունը եւ գաղթել այլ վայրեր: Ահա թե ինչով պիտի բացատրել այն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը 25 տարիների ընթացքում ոչ միայն չի աճել, այլեւ 1920 թվի համեմատությամբ մեծ չափով պակասել է: Հայ տարրի այդ արտադաղթին զուգընթաց Լեռնային Ղարաբաղը բնակեցվում է ագրոէջանիներով: Այդպիսով տեղի ունի ազգային-շովինիստական-պանթյուրքական քաղաքականություն, որը թեպետեւ անհեթեթություն է խորհրդային իշխանության պայմաններում, բայց ինչպես երեւում է, ձեռնառու է Աղբրեջանի խորհրդային հանրապետության ղեկավարներին:

Այդ հակահայկական քաղաքականությունը ավտոնոմ մարզից դուրս գտնվող Շամխորի, Շահումյանի, Խանլարի, Դաշքեսանի շրջաններում ընդունել է ավելի զազրելի ձեւեր եւ չափեր:

Ստեղծված է անհանդուրժելի դրություն. ազգային խտրականություն ամենուրեք եւ ամեն բանում: Մեր վիճակն ավելի վատթար է, քան եղել է 1918-20 թվերին, թուրք-մուսավաթական եւ անգլիական օկուպանտների ժամանակ: Այժմ էլ կատարվում է նույնը, բայց «բարեկամության» եւ «եղբայրության» քողի տակ: Մենք առաջ եւս բողոքել ենք, որ գոյություն չունի ավտոնոմ մարզ: Փորձեցին պարզել այդ անբավականության պատճառները՝ գործադրելով դրա համար անթույլատրելի մեթոդներ: Օրինակ, Բաղիրովը Ստեփանակերտում հրավիրեց կուսակալի ժողով եւ առաջարկեց. «Ով ճիշտ չի համարում Ղարաբաղի միացումը Աղբրեջանին, թող հեռանա ժողովից»: Պարզ է, թե ինչով կարող էր վերջանալ կուսակալի ժողովից հեռացողի ճակատագիրը...

Մյուս զեպքը տեղի է ունեցել մոտ ժամանակներս, երբ Ղարաբաղի հայությունը բողոքների պատճառները պարզելու համար հարցաքննում էին միայն



մարզի ղեկավարության անդամներին եւ այն էլ Բաքու քաղաքում (Մուխիդդինով):

Ճնշման եւ խտրականության քաղաքականությունը առաջ է բերել արդարացի ատելություն դեպի Ադրբեջանի հանրապետությունը եւ մարզի ղեկավարությունը:

Յավալին այն է, որ այդ հողի վրա ծագում են ազգամիջյան անախորժ փոխհարաբերություններ:

Այն օրերին, երբ անցնում ենք կոմունիզմի կառուցման, մենք չենք կարող նման պայմաններում ապրել: Մեզ անհնարին եւ անկարելի էր թվում նման գոհնիկ ազգային-շովինիստական քաղաքականությունը, բայց այժմ այլեւս կասկածել չի կարելի, մեզ վերջնականապես համոզեցին դրանում Ադրբեջանի ղեկավարության 1962 թվականի սկզբի կարգադրությունները:

Մենք խնդրում ենք Ձեզ անհետաձգելի կերպով վճռել Լեռնային Ղարաբաղը եւ հարակից հայկական շրջանները Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանը միացնելու հարցը եւ կամ մտցնել Ղարաբաղը Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության կազմի մեջ:

Մենք խնդրում ենք միայն գործադրել Լեռնային ազգային քաղաքականությունը նաեւ Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ:

1962թ.

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

### Ա

Ա.ԲԴՈՒԼ-ՔԵՐԻՄ-ՓԱՇԱ, 120, 180  
 Ա.ԲՐԱՀԱՄՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 242, 246  
 Ա.ԲՈՒԼՅԱՆ-ԲԵԿ, 68  
 Ա.ԴԻԳՅՈՋԱԼԲԵԿՈՎՆԵՐ, 43  
 ԱԼՄԱՐԴԱՆԲԵԿՈՎ ԻՍՄԱՅԻԼ, 286, 291  
 Ա.ԽՈՒՆԴՈՎ ԶՈՒԼՖՈՒԳԱՐ, 231  
 ԱՀԱՐՈՆՅԱՆ ԴԱՆԻԵԼ, 229  
 ԱՀՄԵԴ ԱՂԱ, 43  
 ԱՂԱԵԻ, 82  
 ԱՄԲԸՐՈՒՄՅԱՆՆԵՐ, 171  
 ԱՄԻՐՈՎ ԱԶԱՏ, 53  
 ԱՅՎԱԶՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ, 103  
 ԱՆԴՐԱՆԻԿ, 35, 81, 94, 115-122, 124, 129, 135, 137, 172, 177, 185-187, 189-194, 200, 215  
 ԱՌԱՔԵԼՅԱՆ ԴԱՆԻԵԼ, 143, 148, 164, 167, 168, 246  
 ԱՌՍԱՄՅԱՆ ԶԱՎԱԴ, 202, 308  
 ԱՍԼԱՆԻԿ, 177, 225  
 ԱՍԿՎԻՏ ՀԵՐԲԵՐՏ ՀԱՆՐԻ, 83  
 ԱՎԱՆ-ՅՈՒԶԲԱՇՅԱՆՆԵՐ, 43, 263, 268

ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆ Խ., 251  
 ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՍԾԱՏՈՒՐ, 51, 75, 226, 227  
 ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ԱՇՈՏ, 291  
 ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ, 291  
 ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ, 89, 106-108, 116, 141, 149, 155, 162, 163, 218, 222-224  
 ԱՐՂՈՒԹՅԱՆ ՀՈՎՍԵՓ, 218, 222-224

### Բ

ԲԱԲԱԼՅԱՆ Ա., 269  
 ԲԱԲԱԶԱՆՅԱՆ, 76  
 ԲԱԲԱՔԵԻԽՅԱՆ ԲԵՆՅԱՄԻՆ, 246  
 ԲԱԴԱԼՔՅՈՒՅԱՆ ՂԱԶԱՐ (ՄԻՔԱՅԵԼ), 279-281, 290, 292, 294  
 ԲԱԼԱՅԱՆ ՍՄԲԱՏ, 246  
 ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ՀԱԿՈՒՐ, 65, 246  
 ԲԱԽՇԻ-ԲԵԿ, 47, 57  
 ԲԱԿՈՒՆՑ ԱՐՍԵՆ, 75  
 ԲԱՀԱԹՐՅԱՆ, 151, 225  
 ԲԱՀԱԹՐՅԱՆ Հ., 211  
 ԲԱՂԻՐՈՎ, 314, 317



Բեռնոյնով ԼՅՈՒՑՏԱՆԻ-ԲԵԿ,  
62, 63, 65, 66, 79, 112, 125,  
127, 137, 141, 144-147  
Բեռնոյնով Քերտ-Բեկ, 53  
Բեռն-ՄԱՄԻԿՈՆՅԱՆ (գնդապետ),  
85  
Բեքսոն, 185  
Բիջ (գեներալ), 199, 220  
ԲիջերԱհով (գեներալ), 88, 216  
Բոնոնի-ԽԱՆ, 248  
ԲՐԱՖ, 220  
Բոնիշին, 251

## Գ

ԳԱԲԲԻՆ, 270  
ԳԱՍՊԱՐ, 282  
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՎԱՆԵՍ, 246  
Գեգեզյան, 256, 270

## Դ

ԴԱՆԻԵԼԲԵԿՅԱՆ ԱՂԱՊԱՐՈՆ,  
284, 285  
Դենեսերովի (գեներալ), 97  
Դեի, 220  
ԴՈԼՈՒԽԱՆՈՎՆԵՐ, 43  
ԴՈՎԼԱԹՅԱՆ ՍԱՀԱԿ, 308  
ԴՐԱՅԵՆԿՈ, 305  
ԴՐՈ, 263, 264, 275, 276, 292,  
303, 306, 309, 310

## Ե

ԵՓՐԵՄ, 177  
ԵՂՈ, 57  
ԵՍԱՅԱՆ ՄԵԼԻՔՍԵԹ, 51, 64, 65,  
76, 103  
ԵԻԱՆԳՈՒԼՅԱՆ ԱՐՄԵՆ, 259

## Զ

ԶԱԽԱՐԲԵԿՈՎ ԿՈԼՅԱ, 47  
ԶԱՔԱՐՅԱՆ ՄՈՒՇԵՂ, 73, 74

## Ի

ԻՆՎԵՐ, 234, 254, 259

## Թ

ԹԱԼԵԱԹ, 97, 259  
ԹԱԽՏԱԶՅԱՆ ԱՐՄԵՆ, 57  
ԹԱԽՏԱԶՅԱՆ ԼԵՒՈՆ, 57, 58  
ԹԱՂԻԵԻ ՀԱՋԻ-ԶԵՅՆԱԼ-ԱԲԴԻՆ,  
145  
ԹԱՐՎԵՐԴՅԱՆ  
(փոխգնդապետ), 276, 300-  
302  
ԹՈՄՍՈՆ, 189, 191-194, 196-  
202, 207-209, 211-216, 218,  
220-223, 230  
ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 185,  
232  
ԹՈՒՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ, 51, 75,  
103, 106, 227  
ԹՈՒՄՅԱՆ ԲԱՀԱՐ, 174  
ԹՈՒՄՅԱՆ ԳՐԻԳՈՐ, 174

## Ժ

ԺՈՐԴԱՆԻԱ, 59, 298

## Ի

ԻԲՐԱՀԻՄԲԵԿՈՎ, 255  
ԻՇԼԵՄԵԶՅԱՆ, 118  
ԻՇԽԱՆՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ-ԲԵԿ, 246

ԻՇԽԱՆՅԱՆ ԵՂԻՇԵ, 51, 53, 75,  
103, 159, 163, 174, 179, 190,  
224, 226, 227  
ԻՍԱԽԱՆՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ, 51-53,  
75  
ԻՍՄԱՅԻԼ-ՓԵՀՐԻ-ԲԵՅ, 195

## Լ

ԼԱԼԱՅԱՆ, 177, 225  
ԼԵՆԻՆ, 94, 95, 97  
ԼԵՈ, 178, 268, 287  
ԼԵՒՈՆ ՎԱՐԴԱՊԵՏ, 153, 160  
ԼԼՈՅԴ ԶՈՐԶ ԴԱՎԻԹ, 80

## Խ

ԽԱԼԻԼ-ԲԵՅ, 248, 249, 256, 259  
ԽԱԼԻԼ-ՓԱՇԱ, 118, 120, 182,  
234, 249, 274, 291, 292-294,  
303  
ԽԱՀՄԱԶՅԱՆ, 222  
ԽԱՆ-ԽՈՅՍԿԻ, 144, 200, 202,  
215, 304  
ԽԱՆ-ՏԵԿԻՆՍԿԻ, 258  
ԽԱԶԱՏՐՅԱՆ ՄԵԼԻՔՈՒՄ, 53  
ԽԱՏԻՍՅԱՆ, 212, 215, 220, 222,  
257  
ԽՈՋՈՅԱՆ, 239  
ԽՐՈՒՇՉՈՎ Ն. Ս., 312

## Ս

ՍԱՏՈՒՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 51

## Կ

ԿԱՅԴԱՐՈՎ, 306

ԿԱՐԱՆԻ, 308  
ԿԻՇԲԵՆԻ, 230  
ԿԻՍԻԲԵԿՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ, 246  
ԿՈՔԵԵ ԶՈՍԻՖ ԻԼԱՐԻՈՆՈՎԻՉ,  
52  
ԿՈՐԻ (գեներալ), 230, 231, 233

## Հ

ՀԱՄԱՍՓՅՈՒՌ ԽՈՐԵՆ, 89  
ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ ՍԱՔՈ, 76,  
161, 277, 310  
ՀԱՋԻՆՍԿԻ, 260  
ՀԱՍԱՆ ԲԱՐԻ-ԲԵՅ, 125, 140,  
141, 144, 150, 170, 181  
ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆՆԵՐ, 43  
ՀԱՍԿԵԼ, 269, 270  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՄԱՐՏԻՐՈՍ,  
89, 149  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՇՈՏ, 39, 242  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ  
(ԱՐՄՈ), 75, 101, 103, 246  
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄՆԱՅԱԿԱՆ  
(ՅԱԿԱՆ), 310

## Ղ

ՂԱԶԱՐՅԱՆ, 253  
ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ, 51,  
76, 308  
ՂԱՐԱԳՅՈՋՅԱՆ ԳՐԻԳՈՐ, 178,  
310  
ՂՈՐՂԱՆՅԱՆ (գնդապետ), 85  
ՂՈՒԼԻՔԵԻՆՅԱՆ ԻՍՐԱՅԵԼ, 246

## Մ

ՄԱԼԵՍՈՆ, 98  
ՄԱԼԻՆՅԱՆ, 78  
ՄԱԼԽԱՍՅԱՆ ԱՐՇԱԿ, 60



- ՄԱՀՄՈՒԴԲԵԿՈՎ, 111  
 ՄԱՄԱԶՆՅԱՆ, 248, 249  
 ՄԱՆԴԻՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ, 179  
 ՄԱՍԼԵՆՆԻԿՈՎ, 194, 226  
 ՄԱՔՍԻՄՈՎ ԱԼԵՔՍԱՆԴՐ  
 ՊԱՎԼՈՎԻՉ, 232  
 ՄԵԼԻՔ-ԲԵԳԼԱՐՈՎՆԵՐ, 43  
 ՄԵԼԻՔ-ԳԱՍՊԱՐՅԱՆ ՏԻԳՐԱՆ,  
 246  
 ՄԵԼԻՔ-ՀՈՎՍԵՓՅԱՆ ԱՇՈՏ, 51,  
 53, 75, 79, 143, 148, 164,  
 168, 169, 275  
 ՄԵԼԻՔ-ՀՈՎՍԵՓՅԱՆ ՀՈՒՓՍԻՄԵ,  
 51  
 ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ  
 ԳԵՐԱՍԻՄ, 40, 143, 148, 189,  
 190  
 ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԳԵՒՈՐԳ  
 (տե՛ս նաեւ ՇԱՀՆԵՆ), 89  
 ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ  
 ՄԻՔԱՅԵԼ ՕՍԻՊՈՎԻՉ  
 (զնդապետ), 71, 72, 78, 122,  
 129, 131, 132, 134, 137, 186  
 ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ  
 ՍՈԿՐԱՏ-ԲԵԿ, 178, 194, 207,  
 221  
 ՄԵԼԻՔՈՒՄՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, 51  
 ՄԵՀՄԱՆԴԱՐՈՎ, 66, 112, 214,  
 295  
 ՄԵՍՅԱՆ ԶԱԽԱՐ, 294  
 ՄԻՆԱՍԲԵԿՈՎ ԳՐԻԳՈՐ-ԲԵԿ, 53  
 ՄԻՐԶԱ ԶԱՄԱԼՈՎ ՀՈՒՍԵԻՆ-  
 ԲԵԿ, 53  
 ՄԻՐԶԱ ԶԱՄԱԼՈՎ ՄԱՀՄԵԴ-  
 ՀԱՍԱՆ-ԲԵԿ, 53  
 ՄԻՐԶՈՅԱՆ ԼԵՒՈՆ, 308  
 ՄԻՐԻՄԱՆՅԱՆ, 264  
 ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (միլիցիապետ),  
 194, 217  
 ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ, 51  
 ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐԱՄ, 34, 51, 53,  
 75, 78, 143  
 ՄԻՔԱՅԵԼՅԱՆ (ՏԵՐ-  
 ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ) ԱՐՄԵՆ,  
 274-277, 284, 285  
 ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ Ա. Ն., 311  
 ՄՈՆԿ-ՄԵԶՈՆ, 194, 203, 224,  
 226, 228, 231, 237  
 ՄՈՒԽԻԴԴԻՆՈՎ, 318  
 ՄՈՒՍԱՅԵԼՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ, 39,  
 51-53, 63, 71, 73-75, 91,  
 101, 103, 129, 143, 146-148,  
 150, 158, 160, 162, 164-166,  
 168, 169  
 ՄՈՒՐԱԴՅԱՆ ԲԱԽՇԻ, 246  
**Յ**  
 ՅԱՐԱՄԻՇՅԱՆ, 286  
 ՅՈԼԶՅԱՆ ՄԵԼԻՔ, 288  
 ՅՈՅՅԵ, 95,  
 ՅՈՒԴԵՆԻՉ, 252,  
**Ն**  
 ՆԱԶԱՐԲԵԿՅԱՆ ԹՈՄԱՍ, 129,  
 200, 253  
 ՆԱՍԻՔՅԱՆ ՆԵՐՍԵՍ, 239  
 ՆԱՐԻՄԱՆՈՎ Ն., 313  
 ՆԵՍԱՆ, 47  
 ՆԵՐՍԻՍՅԱՆ ԴԱՎԻԹ, 229  
 ՆԵՐՈՒԶԵԻ, 41  
 ՆԺԴԵՀ, 303, 309  
 ՆՈՆԱՆԿՈՐ, 270  
 ՆՈՒՐԻ-ՓԱՇԱ, 101, 107, 111,  
 113, 117, 120, 151-154, 160,

164-166, 168, 170, 173-175,  
 180, 182, 209, 213, 215, 234,  
 259, 274, 310

**Շ**

ՇԱՀՆԵՆ (տե՛ս նաեւ ՄԵԼԻՔ-  
 ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԳԵՒՈՐԳ), 89  
 ՇԱՀՄԱԶՅԱՆ, 221  
 ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ ԱՍԼԱՆ, 202,  
 239, 243  
 ՇԱՀՈՒՄՅԱՆ ՍՏԵՓԱՆ, 58, 72,  
 75, 93-95, 97-100, 115, 190  
 ՇԱՏԵԼՎՈՐՏ, 216-221  
 ՇԵԻՔԻ-ՓԱՇԱ, 85  
 ՇԻԽԼԻՆՍԿԻ, 254-256, 259  
 ՇՏՈՐ ԴՄԻՏՐԻ  
 ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ, 232

**Չ**

ՉԻՉԵՐԻՆ, 308, 309  
 ՉՈՒԲԱՐՅԱՆ, 239

**Պ**

ՊԵՏՐՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, 75  
 ՊԵՏՐՈՎ, 99  
 ՊԵՐՆԱՆԻ, 306  
 ՊՈՂՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ, 246  
 ՊՈՂՈՍ-ՆՈՒԲԱՐ, 211  
 ՊՈՏՏՈ (զեմետալ), 81

**Ջ**

ԶԱՄԻԼ-ԶԱՅԻԴ-ԲԵՅ, 146-148,  
 166, 167, 170, 171, 178  
 ԶԱՖԱՐՈՎ, 117  
 ԶԻՎԱՆՇԻՐ-ԽԱՆ, 144

**Ռ**

ՌԵՅ (զնդապետ), 258, 259  
 ՌԶԱ ՇԱՀ, 299  
 ՌՈՒԲԵՆԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ  
 (ԾԱՏՈՒՐՅԱՆ), 76, 101, 161,  
 277  
 ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆ, 97

**Ս**

ՍԱԼՄԱՆ, 66  
 ՍԱՄՍՈՆ-ԲԵԿ, 131  
 ՍԱՄՎԵԼՅԱՆ ԽԱԶԻԿ, 39  
 ՍԱՎԱԴ, 173  
 ՍԱՐԳՍՅԱՆ ՍՏԵՓԱՆ (ՍՏԵՍԱՐ),  
 35, 187  
 ՍԵԼԻՄՈՎ, 289, 291  
 ՍԵԻԴՈՎ, 82  
 ՍԵՅՐԱՆՅԱՆ Գ., 42  
 ՍԻԼԻԿՈՎ, 216  
 ՍԻՄՈՆ, 92, 93, 94, 107, 108  
 ՍՏԱԼԻՆ, 95, 97  
 ՍՏԵՓԱՆՅԱՆ ԱՄԾԱՏՈՒՐ, 53  
 ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀՈՎԱԿ, 130  
 ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՏԵՓԱՆ, 246  
 ՍՈՒԼԹԱՆՈՎ ԽՈՍՐՈՎ-ԲԵԿ, 79,  
 179, 204, 205, 213, 223, 287  
 ՍՈՒԼԹԱՆՈՎ ՍԵԼԻՄ-ԲԵԿ, 251,  
 282  
 ՍՈՒԼԹԱՆՈՎ ՍՈՒԼԹԱՆ-ԲԵԿ  
 (նահանգապետ), 79, 123,  
 127, 180, 186, 198, 209, 216,  
 217, 219, 221, 224-228, 230-  
 233, 236, 239-242, 247, 249,  
 251, 254, 259-263, 265, 276,  
 303, 305, 306  
 ՍՈՒԿԵՆԻՉ, 249-252, 262, 267



**Վ**

ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ, 61, 109  
 ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ԼԵՒՈՆ, 39, 50, 51, 53, 75, 143, 174, 239, 246  
 ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ ՏԵՐ-ԿԱՐԱՊԵՏ, 178  
 ՎԵԼԻՔԵԿՈՎՆԵՐ, 43  
 ՎԵՀԻՔ-ՓԱՇԱ, 86

**Տ**

ՏԵՐ-ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ ՄԱՐԿՈՍ, 103, 114, 143  
 ՏԵՐ-ԱՎԵՏԻՔՅԱՆ ԵԳՈՐ, 310  
 ՏԵՐ-ԳԱՔՐԻԵԼՅԱՆ ՍԱՀԱԿ, 306  
 ՏԵՐ-ԳԱՍՊԱՐՅԱՆ ՌՈՒԲԵՆ, 75  
 ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՀԱՆ, 225-227, 242, 286  
 ՏԵՐ-ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ՍԵՐԳԵՅ, 153, 155, 160  
 ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ (տե՛ս ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՐՄԵՆ)  
 ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹԵՈԴՈՐՈՍ, 101  
 ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՅԱՆ, 286  
 ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ ՌՈՒԲԵՆ, 273, 274, 276, 299, 303  
 ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ, 178  
 ՏԵՐ-ՄՈՎՍԻՍՅԱՆ (կապիտան), 85, 86

ՏԵՐՏԵՐՅԱՆ ԻՍԱՀԱԿ, 86, 234  
 ՏԻԳՐԱՆՅԱՆ Ս., 233  
 ՏՈՆՈՅԱՆ ԱՐԱՄ, 35

**Ր**

ՐԱՖՖԻ, 155

**Ռ**

ՌԻՈՐԴՐՈՊԻ, 258, 259, 270  
 ՌԻՍՈՒՔԲԵԿՈՎ, 82, 83, 257

**Ք**

ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐՇԱՎԻՐ, 56, 103, 143, 148, 175, 192, 241, 246  
 ՔԱՋԱՋՆՈՒՆԻ ՀՈՎՀԱՆՆԵՍ, 120, 201  
 ՔՅԱՋԻՄ-ՓԱՇԱ, 182, 234, 235, 259, 274, 296  
 ՔԵՌԻ, 177  
 ՔԵՐԻՄՈՎ ԹԱՂԻ, 53

**Օ**

ՕՀԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ, 72  
 ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ՀԱՄՈ, 309  
 ՕՐՋՈՆԻԿԻՋԵ, 306, 308

**Ֆ**

ՖՈԼԱՏՈՎ ԽՈՍՐՈՎ-ԲԵԿ, 53, 177, 178  
 ՖՈՆ ԿՐԵՍ, 113, 120

**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ****Ա**

ԱԳԱՐԱ զեւո, 94, 122, 123, 131, 135, 150, 153, 186, 187, 264, 288, 299, 303, 306, 308  
 ԱԳԱՐԱԿ, 235  
 ԱԳՈՎԻՍ, 261  
 ԱԴՐԲԵՋԱՆ, 33, 42, եւ այլուր  
 ԱԶԱՏ, 296  
 ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ (տե՛ս նաեւ ԳՅՈՒՄՐԻ, ԼԵՆԻՆԱԿԱՆ), 84, 87, 216  
 ԱԼԻԱՆԼՈՒ, 194  
 ԱԽԱԼՔԱԼԱՔ, 129, 257  
 ԱՂԲԻՍ, 235  
 ԱՂԴԱՄ, 43, 45-47, 55, 79, 89, 90, 94, 101, 107, 111, 112, 114, 139-141, 143, 145, 146-150, 153, 154, 156, 157, 160, 164, 165, 167-169, 174, 178, 181, 185, 198, 205, 215, 236, 263, 276, 281-283, 290, 293, 300, 314, 317  
 ԱՂՈՂԱՆ, 79  
 ԱՂՍԱՑԱՑ, 58-60, 117  
 ԱՂՍՈՒ, 88  
 ԱՂՎԱՆ (ԱՂՎԱՆՈՒ) զեւո (տե՛ս նաեւ ԱԳԱՐԱ), 123

ԱՂՎԱՆՔ, 78  
 ԱՄԵՐԻԿԱ (ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ), 274  
 ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ, 212, 305  
 ԱՄՅԵՆ, 141  
 ԱՆԳԼԻԱ (տե՛ս նաեւ ՄԵՐ ԲՐԻՏԱՆԻԱ), 97, 185, 212, 214, 215, 221, 230, 305  
 ԱՆԴՐԿՈՎԿԱՍ, 40-42, 46, 49, 58-60, 64, 66, 69, 75, 81-83, 86, 87, 95-98, 100, 101, 104, 109, 113, 117, 119, 140, 142, 145, 146, 151-153, 162, 165, 180, 182, 189, 199, 200, 202, 203, 208, 212, 215, 230, 232-234, 247, 258, 261, 262, 265, 269, 277, 298, 305, 307, 311, 313  
 ԱՇԱՆ, 308  
 ԱՇԽԱՔԱԴ, 98  
 ԱՊԱՐԱՆ, 85  
 ԱՊՇԵՐՈՆՅԱՆ ԹԵՐԱԿՂՋԻ, 99  
 ԱՊՐԱԿՈՒՆԻՍ, 115  
 ԱՌԱՔՅԱԼ, 239  
 ԱՍԿԵՐԱՆ, 45, 47, 55, 64, 79, 90, 91, 111, 132, 140, 145, 149, 151, 154, 157, 164, 165, 166, 168, 173, 174, 191, 195,



- 198, 205, 208, 236, 237, 260,  
263, 268, 269, 276, 281-283,  
288-295, 299-301  
ԱՍՏՐԱԽԱՆ, 94  
ԱՎԴԱԼԱՐ, 186-189, 191, 194,  
255  
ԱՎՍՏՐԻԱ, 96  
ԱՐԱՔԻԱ, 141, 182  
ԱՐԱԳԱՄ, 85  
ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏ, 85  
ԱՐԱՔՍ, 78, 115, 253, 299  
ԱՐԴԱՀԱՆ, 82, 249  
ԱՐԵՇ, 296  
ԱՐՄԱՎԻՐ, 35, 188, 196  
ԱՐՋԱԽ, 296  
ԱՐՋԱԶՈՐ, 56  
ԱՐՑԱԽ (տե՛ս նաև ՂԱՐԱՔԱՂ),  
214, 215, 312  
ԱՐՓԱ-ԳՅԱԴՈՒԿ, 194
- Բ**
- ԲԱԶԻՐԻԿԱՆԻ ԼԵՌՆԱՆՅՔ, 127  
ԲԱԹՈՒՄ, 86-89, 96, 182  
ԲԱԼՈՒՋԱ, 67, 79  
ԲԱՂԴԱԴ, 93, 97  
ԲԱՅԱԶԵՏ, 130  
ԲԱՅԱՆԴՈՒՐ, 253, 255  
ԲԱՅԲՈՒՐԴ, 81  
ԲԱՇ-ՆՈՐԱՇԵՆ, 249  
ԲԱՍԱՐԳԵԶԱՐ, 264, 274  
ԲԱՐԴԱ, 94, 315, 317  
ԲԱՔՈՒ, 41, 46, 59, 65, 71-76,  
83, 84, 87-96, 98-102, 107-  
109, 111, 115-117, 120, 121,  
128, 137, 139, 141, 142, 144-  
147, 149, 152, 153, 162, 164,  
171, 180, 182, 189-191, 193,  
196, 198, 200, 202, 207-211,  
213, 215, 216, 223, 233, 239,  
257-259, 268, 277, 283, 286,  
297, 305-307, 313, 316, 318  
ԲԵԼՈՒՈՒՍԻԱ, 96  
ԲԵԼՈՒՋԻՍՏԱՆ, 98  
ԲԵՌԼԻՆ, 95, 97  
ԲՈՆԱԿՈԹ, 74  
ԲՐԵՍՏ, 81, 82-84, 87, 95, 96,  
180  
ԲՈՒՂԱՐԻԱ, 155, 181  
ԲՈՒՆՅԱԹԼՈՒ, 239
- Գ**
- ԳԱՅԼԱԳՈՐԻԿԱՆ (տե՛ս նաև  
ՂԱԼԱԳՈՐԻՔԱՆ), 125-127  
ԳԱՆՁԱԿ, 44, 47, 55, 56, 58-62,  
69-72, 79, 84, 88-91, 94, 100,  
106, 109, 114, 117, 141, 149,  
153-155, 160, 162, 178, 202,  
261, 268, 283, 296, 305, 311  
ԳԱՆՁԱՍԱՐԻ ՎԱՆՔ, 79  
ԳԵՏԱՇԵՆ, 102, 111, 296  
ԳԵՐՄԱՆԻԱ, 84, 95, 96, 97, 120,  
141, 180  
ԳՅՈՒԼԻՍՏԱՆ, 75, 102, 109, 114,  
223, 241, 256, 268, 295, 296,  
307, 309  
ԳՅՈՒՄՐԻ (տե՛ս նաև  
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ,  
ԼԵՆԻՆԱԿԱՆ), 84  
ԳՈԼԻՊՈԼԻ ԹԵՐԱԿՂՋԻ, 153  
ԳՈՐԻՍ, 54, 71, 72, 78, 115, 118-  
120, 123, 124, 128-135, 137,  
139, 172, 185, 191, 192, 194,  
215, 250, 255, 288, 303

**Դ**

- ԴԱՂԱՏԱՆ, 296  
ԴԱՇԲՈՒԼԱՂ, 67, 68  
ԴԱՇՈՒՇԵՆ, 229, 300  
ԴԱՇՔԵՍԱՆ, 312, 313, 317  
ԴԱՐԱԼԱԳՅԱԶ (տե՛ս նաև  
ՎԱՅՈՅ ԶՈՐ), 115, 130, 153,  
248, 249, 254, 256, 259  
ԴԱՐԴԱՆԵԼ, 141, 181  
ԴԻԶԱԿ, 42, 43, 45, 48, 75, 109-  
111, 176, 177, 193, 223, 225,  
229, 230, 239, 244, 265, 268,  
281, 292, 295, 300-303, 309  
ԴԻԼԻՋԱՆ, 50, 84, 85-87, 115,  
130, 239, 298  
ԴՈԼԱՆԼԱՐ, 239  
ԴՈՆ, 188  
ԴՈՒԴՈՒԿՋԻ, 195
- Ե**
- ԵՂՎԱՐԴ, 235  
ԵՄԱԶԼՈՒ, 235  
ԵՐԶՆԿԱ, 81  
ԵՎԼԱԽ, 41, 45-47, 54, 88, 89,  
107, 123, 197, 214, 260, 269,  
280, 285  
ԵՐԵՒԱՆ, 50, 74, 82, 84, 85, 87,  
120, 201, 212, 214, 232, 249,  
253, 264, 274, 275, 277, 279,  
303  
ԵՐՈՊԱ, 97, 202
- Զ**
- ԶԱԲՈՒՂ, 78, 94, 101, 122-124,  
131-136, 139, 142, 149, 185-  
188, 198, 208, 223, 254, 255,  
288, 295  
ԶԱՆԳԵԶՈՒՐ, 63, 70, 73, 74, 77,  
94, 115-119, 121-124, 128,  
131-137, 139, 153, 162, 172,  
177, 180, 185, 188, 204, 205,  
209, 214, 216, 222, 233, 235,  
236, 239, 242, 247, 248, 250,  
252-260, 262-264, 268, 273-  
276, 278, 279, 288, 289, 290,  
295, 300-302, 304, 309  
ԶԱՐԱԼՈՒ, 111  
ԶԱՔԱԹԱԼԱ, 254, 268  
ԶԵՅԹՈՒՆ, 152
- Ի**
- ԻԶՄԻԱՄԻՆ, 87  
ԻՐԶՐՈՒՄ, 83, 254  
ԻՐՔԵՋ, 296
- Լ**
- ԼՆԶԵԼԻ, 98  
ԼՐԶՐՈՒՄ, 81
- Թ**
- ԹԱԼԻՇ, 56, 62, 296  
ԹԱՂԱՎԱՐԴ, 114  
ԹԱՎԳՅԱԴՈՒԿ, 111  
ԹԱՎՐԻՋ, 280  
ԹԱՐԹԱՐ, 43, 47, 79, 94, 101,  
111, 149, 163, 193, 276  
ԹԵԶԽԱՐԱՔ, 194  
ԹԵՀՐԱՆ, 86, 212  
ԹԹՈՒ ԶՈՒՐ, 79  
ԹԻՖԼԻՍ, 34, 41, 42, 46, 59, 62,  
63, 71, 82, 84, 117, 129, 149,  
155, 187, 193, 199, 202, 210,



211, 220, 232, 239, 251, 257-  
259, 277, 279, 285, 287, 298,  
304

ԹՈՒՐԲԻԱ (տե՛ս նաև  
ՕՍՄԱՆՅԱՆ

ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆ), 76, 81-83,  
87, 96, 145, 155, 157, 165,  
180, 182, 209, 213, 233, 234,  
249, 254, 261, 305, 313

## Ի

ԻՐԱՆ, (տե՛ս նաև  
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ), 305

ԻՏԱԼԻԱ, 212, 298

## Լ

ԼԱԶԻՆ (լեռ), 133, 186, 187

ԼԱԶԻՆԻ ՇՐՋԱՆ, 250, 251

ԼԵՀԱՍՏԱՆ, 96

ԼԵՄՆՈՍ, 182

ԼԵՆԻՆԱԿԱՆ (տե՛ս նաև  
ԳՅՈՒՄՐԻ,

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ), 85

ԼԵՆԻՆՔՈՐԱՆ, 108

ԼՈՌԻ, 129, 257

## Խ

ԽԱԼԻՖԱԼԼՈՒ, 228

ԽԱՆԻ ԲԱՂ, 68, 169

ԽԱՆԼԱՐ, 312, 313, 317

ԽԱՆՁԱԶՈՐ, 195

ԽԱՆՔԵՆԴԻ (տե՛ս նաև

ՍԻԵՓԱՆԱԿԵՐՏ), 110, 114,

115, 169, 172, 174, 180, 181,

195, 198, 205, 208, 215, 223,

229, 237, 242, 245, 247, 250,

254, 260, 263, 267, 268, 269,  
281-284, 295, 300, 301

ԽԱՇՏԱՊ, 235

ԽԱՋԵՆ, 42, 43, 45, 48, 56, 67,  
75, 109, 110, 125, 136, 138,

150, 154, 160, 169, 174, 193,

223, 225, 241, 244, 265, 268,

290, 295, 307, 309

ԽԱՐԽԱՊՈՒՏ, 296

ԽԻՆԴԻՐԼՈՒ, 168

ԽԾԱԲԵՐԴ, 194, 195, 219, 288,  
289, 292, 301-303

ԽՆԱԲԱԴ, 166, 167, 293, 294

ԽՆՁՈՐԵՍԿ 135

ԽՆՁՈՐԵՍՏԱՆ, 315

ԽՈՋՆԱՎԱՐ, 253, 255

ԽՈՋԱԼՈՒ, 67, 68

ԽՈՆԱՇԵՆ, 79

ԽՐԱՄՈՐԹ, 166, 167, 289, 294

## Կ

ԿԱՂՋՎԱՆ, 249

ԿԱՍՊԻՅ ԾՈՎ, 94, 98

ԿԱՐԱԴԱՐԱՍԻ (տե՛ս նաև

ՂԱՐԱՂՇԼԱՂ), 132, 139, 147

ԿԱՐԱՄԱՐՅԱՆ, 88

ԿԱՐԻԱԳԻՆՈ, 47, 63, 94, 101,

111, 120, 123, 149, 176, 177,

193, 195, 208, 209, 223, 263,

276

ԿԱՐՄՐԱԿՈՒՃ, 177

ԿԱՐՍ, 59, 81, 82, 84, 87, 90,

182, 216, 249

ԿԻՐՈՎԱԲԱԴ, 315, 317

ԿԻՐՈՎԱԿԱՆ (տե՛ս

ՂԱՐԱՔԻԼԻՍԱ)

ԿՅՈՒՐՋԵՒԱՆ, 88

ԿՈԹԻ, 298

ԿՈՌՆԻՋՈՐ, 134, 135, 255

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ (տե՛ս նաև  
ՊՈԼԻՍ), 146, 165, 180

ԿՈՎԿԱՍ, 104, 113, 193, 202

ԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵՌՆԵՐ, 64

ԿՐԱՍՆՈՎՈՂԻՍԿ, 98

ԿՐԿԺԱՆ, 229

ԿՈՒԲԱԹԼՈՒ, 135

ԿՈՒՍԱՊԱՏ, 47, 56

ԿՈՒՐՈՊԱՏԿԻՆՈ, 315

## Հ

ՀԱԴՐՈՒԹ, 110, 114, 177

ՀԱՅԱՍՏԱՆ, 33-35, 78, 82, 86-

89, 96, 113, 115, 117-120,

140, 148, 149, 165, 191, 200,

201, 208, 212, 214, 215, 216,

218, 220-222, 230, 233, 234,

238, 242, 248, 250, 252, 256-

259, 262, 263, 269, 270, 273,

275, 276, 278-280, 283, 298,

299, 303, 304, 306, 308, 309,

312-314, 316, 318

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԵՒԵԼՅԱՆ, 76

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԵՒՄՏՅԱՆ, 59, 81,

84, 116, 117, 171, 182, 205,

252, 273

ՀԱՅԱՍՏԱՆ ՀՅՈՒՍԻՍ-

ԱՐԵՒԵԼՅԱՆ, 83, 116

ՀԱՅԴԱՐԱ, 235

ՀԱՋԻ-ԿՈՒՐԲԱՆԼԱՐ, 235

ՀԱՍԱՆ-ՌԻՋԱ, 309

ՀԱՐԱՐ, 292

ՀԻՆԴԱՐԻ, 66

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ, 97,

188, 202, 277, 279, 280, 297,

305

ՀՈՒՌՈՒԹԱՂ, 56

## Ղ

ՂԱԶԱՆ, 84, 87, 129, 298, 299

ՂԱԶԱՆՁԵՑԻՈՑ ԵԿԵՂԵՑԻ, 171

ՂԱԼԱԳՈՐԻՔԱՆ (տե՛ս նաև  
ԳԱՅԼԱԳՈՐԻՔԱՆ), 125

ՂԱՅՔԱԼԻՔԵՆԴ, 150, 154, 227,  
230, 236, 238

ՂԱԶԱՐ, 194

ՂԱՐԱԲԱԲԱ, 235

ՂԱՐԱԲԱՂ (ԼԵՌՆԱՅԻՆ), 33, 34,  
35, 41 (եւ այլուր)

ՂԱՐԱԲԱՂ (ԳԱՇՏԱՅԻՆ), 45,  
112

ՂԱՐԱԲՈՒԼԱՂ, 296, 306, 309

ՂԱՐԱԴԱՂԼՈՒ, 296

ՂԱՐԱՂՇԼԱՂ (տե՛ս նաև

ԿԱՐԱԴԱՐԱՍԻ), 120, 122,

124-128, 132, 133, 135-140,

142, 146, 147, 149, 195, 227

ՂԱՐԱՋԻՆԱՐ, 296

ՂԱՐԱՔԻԼԻՍԱ, 84, 85, 86, 87,  
130, 277

ՂԱՓԱՆ, 115, 120, 235, 303

ՂԼԻՋԲԱՂ, 293

ՂՈՒԲԱ, 88

## Ճ

ՃԱՐՏԱՐ, 195

## Մ

ՄԱԶԻ-ԿԱՄՈՒՐՋ, 268

ՄԱԼԹԱ, 231

ՄԱԼԻԲԵԿԼԻ, 67, 194

ՄԱՄԱԽԱԹՈՒՆ

ՄԱՆԱՇԵՆ, 296

ՄԱՆԱՍԲԵԿ, 296



ՄԱՇԱԴԻՔԵՆԴ, 194  
 ՄԱՎԱՍ, 284  
 ՄԱՐԳՈՒՇԵԻԱՆ, 164, 263, 316  
 ՄԱՐԴԱԿԵՐՏ, 56, 94, 263, 289, 307  
 ՄԱՐՍԵԼ, 229  
 ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆ (ԼՂ), 314  
 ՄԱՐՔԻԶ, 186, 187, 188  
 ՄԵՇԵԴ, 98  
 ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ (տե՛ս նաև ԱՆԳԼԻԱ), 189, 205, 298  
 ՄԵԾՇԵՆ, 56, 57, 110  
 ՄԵՀՏԻՇԵՆ, 67  
 ՄԻՆԳԵՉԱՌԻՐ, 314, 315, 317  
 ՄԻՆՔԵՆԴԻ, 288  
 ՄԻՋԱԳԵՏՔ, 84, 96, 141, 181, 182, 250  
 ՄԻՋԻՆ ԱՍԻԱ, 97, 98  
 ՄՈԼԼԱ-ՆԱՍՐԵԴԻՆ (գյուղ), 111  
 ՄՈՒՐԱԹԱՂ, 56  
 ՄՈՍԿՎԱ, 82, 202, 229, 308, 312, 313  
 ՄՍՄՆԱ, 177, 225  
 ՄՈՒԴՐՈՍ, 145, 182, 209  
 ՄՈՒՂԱՆ, 47, 153  
 ՄՈՒՍՈՒԼՄԱՆԼԱՐ, 288

### Յ

ՅԱՂԱՔԵՆԴ, 194  
 ՅԱՅՋԻ, 115

### Ն

ՆԱԽԻՋԵՆԻԱՆ, 84, 87, 100, 115, 123, 153, 161, 220-222, 242, 248-250, 253, 254, 256, 261, 274, 280, 299, 313  
 ՆԱԽԻՋԵՆԻԱՆԻԿ, 164, 300

ՆԵՐՔԻՆ ԱՂՋԱՂԱԼԱ, 296  
 ՆԵՐՔԻՆ ԹԱՂԱՎԱՐԴ, 110  
 ՆԻԺ, 296  
 ՆՈՐՇԵՆ, 296  
 ՆՈՐ ԲԱՅԱՋԵՏ, 303  
 ՆՈՒԽԻ, 296, 297, 315, 317

### Շ

ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ՇՐՋԱՆ, 312, 313, 317  
 ՇԱՄԱԽԻ, 88  
 ՇԱՄԽՈՐ, 58-60, 252, 312, 313, 317  
 ՇԱՄՇԱԴԻՆ, 298  
 ՇԱՐՈՒՐ, 248, 253, 254, 256  
 ՇԵԼԼՈՒ, 168  
 ՇՈՇՈՒ (ՇՈՇԻՔԵՆԴ), 236-238, 240, 265, 266, 268, 300  
 ՇՈՒՇԻ, 35, 39-41, 43-46, 48-50, 53-57, 62-64, 67, 70-74, 76, 78-80, 89-94, 101, 107, 109-112, 114, 117, 120, 122-130, 133, 136-138, 140, 143, 144, 150, 152, 153-159, 163-174, 176-181, 185-189, 191-195, 197, 198, 201-205, 207-210, 213-217, 224, 225, 228, 230, 231, 236, 239, 242-247, 254, 260, 263, 265, 267-269, 277, 280, 281-288, 294, 295, 300, 302, 303, 306, 308  
 ՇԱՊԻՆ-ԳԱՐԱՀԻՍԻԱՐ, 115

### Չ

ՉԱՅԼՈՒ, 94  
 ՉԱՆԱԽՋԻ, 111

### Պ

ՊԱՂԵՍՏԻՆ, 141, 181  
 ՊԱՐԻՍ, 296  
 ՊԱՐՍԿԱՍՏԱՆ (տե՛ս նաև ԻՐԱՆ), 92, 97, 98, 115, 280, 299  
 ՊԵՏԵՐՔՈՒՐԳ, 187  
 ՊԵՏՐՈՍԱՇԵՆ, 194  
 ՊՈԼԻՍ (տե՛ս նաև ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ), 96, 97, 180, 231

### Ջ

ՋԱԼԱԼՈՂԼԻ, 84-86  
 ՋԱԼՈՒՏ, 296  
 ՋԱՄԻԼՈՒ, 229  
 ՋԱՅՆԱԹԱՂ, 56  
 ՋԵՐՐԱՅԻԼ, 43, 47, 137, 193, 204, 216, 223, 244, 245, 253, 263, 268, 288  
 ՋԻՎԱՆՇԻՐ, 44, 63, 75, 109, 193, 204, 209, 216, 223, 234, 239, 244, 245, 263, 268, 309  
 ՋՐԱԲԵՐԴ, 42, 47, 55-58, 75, 109, 110, 121, 163, 174, 225, 236, 239, 241, 244, 263, 265, 268, 289, 295, 306, 307, 309  
 ՋՈՒԼԱՄԵՐԻԿ, 92  
 ՋՈՒԼՖԱ, 115, 280

### Ռ

ՌՈՒՐԻԿՈՆ, 281  
 ՌՈՒՍԱՍՏԱՆ, 46, 49, 51, 59, 69, 75, 81, 95, 96, 98, 99, 101, 104, 115, 199, 279, 306, 307, 311, 312, 318

### Ս

ՍԱԼՅԱՆ, 88  
 ՍԱՂՍԱՂԱՆ, 79, 128, 139  
 ՍԱՆԱՀԻՆ, 59  
 ՍԱՆԳՅԱՐ, 169, 170  
 ՍԱՍՈՒՆ, 152  
 ՍԱՐԱԼՈՒ, 235  
 ՍԱՐԱՏՈՎ, 98  
 ՍԱՐԴԱՐԱՊԱՏ, 85, 86, 87  
 ՍԱՐԻՂԱՄԻՇ, 249  
 ՍԱՐՈՒ-ԲԱԲԱ, 126  
 ՍԱՐՈՎ, 44  
 ՍԵԻԱՆԱ ԼԻՃ, 312  
 ՍԻՍԻԱՆ, 71, 78, 130, 185  
 ՍԻՐԻԱ, 141, 181  
 ՍՂՆԱԽ, 229, 230, 301, 302  
 ՍՅՈՒՆԻՔ, 101, 116, 117, 120, 145, 172, 186, 212, 215, 232, 235, 242, 259  
 ՍՊԻՏԱԿ-ՇԵՆ, 194  
 ՍՈՍ, 194  
 ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 312  
 ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ (տե՛ս նաև ԽԱՆՔԵՆԴԻ), 195, 205, 314-317  
 ՍՈՒԼԹԱՆԲԵԿ, 256  
 ՍՈՒԼՈՒԿ, 296  
 ՍՈՒՐՄԱԼՈՒ, 87

### Վ

ՎԱՅՈՑ ՋՈՐ (տե՛ս նաև ԴԱՐԱԼԱԳՅԱՋ), 74, 249, 303  
 ՎԱՐԱՋԱԲՈՒՅՆ, 161, 164, 281, 300  
 ՎԱՐԱՆԴԱ, 43, 45, 47, 75, 92, 109, 110, 136, 138, 150, 188, 177, 178, 193, 207, 223, 225



|                                                                                                            |                                                                          |
|------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------|
| 229, 230, 236, 239, 244, 265,<br>268, 279, 282, 284, 290, 292,<br>295, 296, 300-303, 305, 306,<br>308, 309 | ՓԱՐԻՋ, 212, 233, 238, 241, 246,<br>247                                   |
| ՎԱՐԴԱՇԵՆ, 296                                                                                              | ՓՈՔՐ ԿՈՎԿԱՍՅԱՆ                                                           |
| ՎԱՐԴԵՆԻՍ, 234                                                                                              | ԼԵՌՆԱՇՂԹԱ, 114                                                           |
| ՎԵՐԴԵՆ, 141                                                                                                | ՓՐՋԱՄԱԼ, 161, 237, 300                                                   |
| ՎԵՐԻՆ ԱՂՋԱՂԱԼԱ, 296                                                                                        | <b>Ք</b>                                                                 |
| ՎԵՐՍԱԼ, 218                                                                                                | ՔԱԶԱԼ-ԴԱՂ, 255                                                           |
| ՎՐԱՍՏԱՆ, 87, 96, 113, 117,<br>120, 140, 148, 149, 230, 233,<br>256, 269, 270, 297, 305                     | ՔԱՐԱԳԼՈՒԽ, 281, 289                                                      |
| <b>Տ</b>                                                                                                   | ՔԱՐԻ ՏԱԿ, 229, 230, 285                                                  |
| ՏՈՂ, 79                                                                                                    | ՔԵԼԲԱՋԱՐ, 250, 251                                                       |
| ՏԵՂ, 130, 135, 253, 255                                                                                    | ՔԵՐԱՐ, 88                                                                |
| ՏՐՆԱՎԱՋ, 178, 239, 300, 308                                                                                | ՔԻՐՍ, 301                                                                |
| <b>Յ</b>                                                                                                   | ՔՅԱԹՈՒԿ, 147, 166-168, 282,<br>293, 294, 306                             |
| ՅԱՐԻՑԻՆ, 95, 97                                                                                            | ՔՅԱԼԲԱՋԱՐ, 264                                                           |
| <b>ՈՒ</b>                                                                                                  | ՔՅՈՒՐԴԱՄԻՐ, 88                                                           |
| ՈՒԿՐԱԻՆԱ, 96, 279                                                                                          | ՔՅՈՒԼՈՒՋԱ, 88                                                            |
| ՈՒՏԻՔ, 78                                                                                                  | ՔՈՒՌ, 78, 88, 107, 312                                                   |
| ՈՒՐՄԻԱ, 115                                                                                                | ՔՈՒՐԴԻՍՏԱՆ, 123                                                          |
| <b>Փ</b>                                                                                                   | «ՔՈՒՐԴԻՍՏԱՆ», 79, 123, 127,<br>151, 186, 188, 225, 236, 251,<br>276, 288 |
| ՓԱՀԼՈՒ, 229                                                                                                | <b>Օ</b>                                                                 |
| ՓԱՇԱԼՈՒ, 256                                                                                               | ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄՐՈՒԹՅՈՒՆ<br>(տե՛ս նաեւ Թուրքիա), 84                         |
|                                                                                                            | <b>Յ</b>                                                                 |
|                                                                                                            | ՅԱՐՄԱՆ, 194                                                              |
|                                                                                                            | ՅՐԱՆՍԻԱ, 212, 298, 305                                                   |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                                                                                                   |     |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| ԽՄԲԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԱՆ .....                                                                                                            | 7   |
| Հեղինակը .....                                                                                                                    | 7   |
| Ժամանակը .....                                                                                                                    | 9   |
| Աշխատանքը .....                                                                                                                   | 13  |
| Հավաստիությունը եւ գաղափարական անկաշկանդությունը .....                                                                            | 17  |
| Հիմնական պատկերացումներն ու սկզբունքները .....                                                                                    | 22  |
| ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ .....                                                                                                             | 33  |
| ԱՌԱՋԻՆ ՄԱՍ .....                                                                                                                  | 39  |
| 1. Ռուսական պետական ապարատի քայքայումը.<br>Անիշխանություն .....                                                                   | 39  |
| 2. «Կուսակցությունների ազգային-հեղափոխական բլոկ».<br>«միջկուսակցական բյուրո» .....                                                | 48  |
| 3. Իշխանության մարմինների կազմակերպումը տեղերում:<br>Պայքար անիշխանության եւ բանդիտիզմի դեմ: .....                                | 54  |
| 4. Համերաշխության միտինգներ. Օկրուգային խորհուրդ.<br>Ինքնապաշտպանության միջոցառումներ .....                                       | 61  |
| 5. Կոմիսարների խորհուրդ. Ժամանակավոր հեղափոխական<br>տրիբունալ .....                                                               | 73  |
| 6. Թուրքերը մտնում են Անդրկովկաս, սաստկանում են կռիվները<br>Բաքվի նակատում .....                                                  | 80  |
| 7. Ղարաբաղը փորձում է կապ հաստատել Բաքվի հետ .....                                                                                | 88  |
| 8. Անգլիական դավերը եւ Ստեփան Շահումյանի<br>կառավարության անկումը .....                                                           | 94  |
| 9. Ղարաբաղի հայության առաջին համագումարը,<br>«Ժողովրդական կառավարություն». Բաքվի հետ կապ<br>ստեղծելու փորձի անհաջող վախճանը ..... | 100 |
| 10. Ղարաբաղի նորընտիր ժողովրդական կառավարության<br>միջոցառումները .....                                                           | 108 |
| 11. Անդրանիկը Ջանգեզուրում .....                                                                                                  | 115 |
| 12. Զինամթերքը Ջանգեզուրից Ղարաբաղ տեղափոխելու փորձի<br>անհաջողությունը. Ղարաղջլաղի ավերումը .....                                | 128 |
| 13. Օսմանյան թուրքերի ուլտիմատումները եւ<br>նախապատրաստությունը հարձակվելու Ղարաբաղի վրա .....                                    | 139 |
| 14. Ղարաբաղի ժողովրդական երկրորդ համագումարը<br>(պատգամավորական ժողովը) .....                                                     | 142 |



|                                                                                                                           |     |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----|
| 15. Ղարաբաղի ժողովրդական երրորդ արտակարգ համագումարը .....                                                                | 155 |
| 16. Թուրքերի մուտքը Շուշի .....                                                                                           | 163 |
| 17. Օսմանցիների քսաներկուօրյա օկուպացիան եւ զորապարպը Շուշուց .....                                                       | 170 |
| ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ .....                                                                                                         | 183 |
| Անգլիացիները Ղարաբաղում .....                                                                                             | 183 |
| 1. Անդրանիկը գրավում է Ջաբուղը եւ պատրաստվում է արշավելու Շուշի .....                                                     | 185 |
| 1. Անգլիական հրամանատարությունը արգելում է Անդրանիկին մտնել Ղարաբաղ .....                                                 | 188 |
| 3. Ադրբեջանական հրոսակներն սկսում են անպատիժ ավերել հայկական գյուղերը .....                                               | 193 |
| 4. Ղարաբաղի հայության 4-րդ համագումարը .....                                                                              | 201 |
| 5. Հայկական Ղարաբաղի ստրկացման անգլո-ադրբեջանական «նախագիծը» .....                                                        | 203 |
| 6. Խորհրդակցությունը Երեւանում, նվիրված Ղարաբաղի հարցին .....                                                             | 212 |
| 7. Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը .....                                                                              | 217 |
| 8. Անգլիական գազազած «բուլդոզը» .....                                                                                     | 220 |
| 9. Ադրբեջանի ագրեսիվ գործողությունները Շուշում: Երեք հայ գործիչների արտաքսումը Ղարաբաղի սահմաններից .....                 | 223 |
| 10. Ղալալիքենդ գյուղի կոտորածը եւ մի քանի այլ գյուղերի ու մետաքսամանան գործարանների ավերումները .....                     | 227 |
| 11. Անգլիացիներն աշխատում են աղավաղել փաստերը. Բողոքի ժողովներ եւ միտինգներ հունիսյան վայրագությունների առթիվ .....       | 230 |
| 12. Ղարաբաղի հայության ժողովրդական 6-րդ համագումարը .....                                                                 | 236 |
| 13. Ղարաբաղի հայության ժողովրդական 7-րդ համագումարը. Ժամանակավոր համաձայնության կնքումը Ադրբեջանի կառավարության հետ ..... | 240 |
| 14. Նախապատրաստություն հարձակվելու Ջանգեզուրի վրա. Նախիջեւանի մուսուլմանների ապստամբությունը .....                        | 248 |
| 15. Ադրբեջանական զորքերի հարձակումը Ջանգեզուրի վրա եւ պարտությունը .....                                                  | 252 |
| 16. Ջանգեզուրի դեպքերից հետո իրադրությունը Ղարաբաղում կրկին սկսում է բարդանալ .....                                       | 260 |
| 17. Ղարաբաղի հայության 8-րդ համագումարը .....                                                                             | 264 |
| ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ .....                                                                                                         | 271 |
| 1920 թ. Մարտ-ապրիլյան կռիվները Ղարաբաղում .....                                                                           | 271 |
| ՎԵՐՋԱԲԱՆ .....                                                                                                            | 312 |
| Անձնանունների ցանկ .....                                                                                                  | 319 |
| Տեղանունների ցանկ .....                                                                                                   | 325 |



ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՄՅԱՆ

# ԴԵՊՔԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ

1917-1920թթ.

պատմական ակնարկ



«Անտարես» հրատարակչատուն  
Երևան-0009, Մաշտոցի 50ա/1  
Հեռ.՝ +(374 10) 58 10 59, 56 15 26  
Հեռ./ֆաքս՝ +(374 10) 58 76 69

[antares@antares.am](mailto:antares@antares.am)

[www.antares.am](http://www.antares.am)